Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

2747

85
U-25

1365

p 190

D-11

2003

1365

ԱՂԵՔՍԱՆԴՐԻ ՄԱՆՉՈՆԵԱՅ

ԽՕՍԵՑԵԱԼՔ

85
Մ-25

ԱՂԵՔՍԱՆԴՐԻ ՄԱՆԹՈՆԵԱՑ

ԽՕՍԵՑԵԱԼՔ

Թարգմանեալ ՚ի ձեռն

ՀՈՎՀԱՆՆԷՍ ՀԻՒՐՄԻՒԶԵԱՆ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՇԻՐԱԿԱՑ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԻՆ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՍ

1875

2981

ՑԻՇԱՏԱԿ

ՄԱՂԱՓԵԱՆ ՏՈՀՄԻՆ

2961
39



Ա. ՄԱՆԶՈՆԻ

Printed in Turkey

ՅԱՌԱՋԱԲԱՆ ԹԱՐԳՄԱՆՉԻՆ

Աղեքսանդր Մանզոնի, գրեթէ ժամանակակից մեր, ծնաւ ի Մեդիոլան քաղաքի յամին 1785. ուսաւ զբանասիրութիւն և զգիտութիւնս ի վարժարանի Սոմասքեան կրօնաւորաց և ապա Բառնաբեանց։ Ի տիս պատանեկութեան երևեցոյց յանձին առաւելապէս զհանճար իւր բանաստեղծական, որ ապա զարգացաւ ի նմա, և դասեցոյց զնա ընդ երևելի քերթողս թատերգական և քնարական տաղից։ Այս ի ճանաչել զգեղարգոյն հանճար նորա ի քնարականին՝ չատ է ընթեռնուլ զտաղ նորա անուանեալ Հինգ մայիսի ի մեծն Նափոլէոն, որոյ թարգմանութիւն՝ անթարգմանելի բնագրին՝ հրատարակեալ է ի Բազմավիպիս վերում Հատոր Իդ, 132։

Այլ երևելագոյն յերկասիրութիւնս իւր, որ անմահացոյց զանուն նորա, է առաջիկայս մատեան՝ զոր ընծայեմք ազգիս։ Մինչ չև էր մատեանս այս ի լոյս ելեալ ի բարե-

կամաց ոմանց մատենագրին՝ որոց ընթերցեալ էր զայն ձեռագիր՝ հաշակեցաւ այնպիսի գրուածոյ, զի գժուարին յոյժ թուէր գրչին հատուցանել այնուհետև՝ ակընկալութեան հատարակաց. վասն որոյ վայելչապէս հանճարեաց գյաւելուածն զայն ի վերջկոյս վիպասանութեանս, ուր յետ հաշակելոյ գեղեցկութեանն Լուչիայի՝ անհաճոյ թուէր նա բնակչաց գեղջն յերևել իւրեամ՝ անդ, ի սրտաբեկութիւն առն իւրոյ Ռէնցոյի:

Զտարերս պատմական մասին վիպասանութեանս եկիր մատենագրին ի ձեռագրի ուրեք անանուն պատմագրի, զոր և յիշատակէ ատէպ. այլ ընդ ամենայն բովանդակութիւն պատմութեան Մեղիոլանու ժէ. դարուն, և յարակից այնորիկ իրաց հմտութիւն կարգաբանութիւն և ճարտարութիւն բանից, գրուցատրութիւնք բնականք, այլովքն հանդերձ մատամբք հանճարոյ՝ որ այսպէս զուարճալի և հետաքրքրելի զսովորական գէպան կացուցանեն, են մատենագրին:

Գովասանք և պարտաւադէտք մատենիս կազմեցին ի սկզբան ճակատս կրկին ընդդիմամարտս. այլ ժամանակն և հատարակացանքողոքելի առեան զայս իբրև ունայն. և համարի սա արդ զլուխ գործոց մատենագրին, և գեղեցկագոյն ի վիպասանութիւնս: Ի սմա յորժամանակէ խորազնին հետազօտութիւն սրտի և ներհուն ճանաչումն մարդկային կրից, և բացատրութիւն նոցին. յարատևութիւն բնաւորութեան անձին իւրաքանչիւր, որ ի վէպս յայս երևեալ. անսպառանաց յարափոփոխ զանազանութիւն, ոգեբուխ և սոսկալիք, սրատաուչք և գորովականք, ճարտարութեամբ յաջորդեալ իրերաց: Զբազի ընթերցողն ի տեսիլ նոցին, այլ միշտ ելից իրացն ըղձակիցս:

Ի գտանել ի սմա և ամենայն կարդաց մարդկան խրատ զգուշութեան և օրինակ նմանութեան, եկեղեցականաց և աշխարհականաց, եպիսկոպոսաց և քահանայից, կրօնաւորաց և կուսանաց, սրանց և կանանց, այնչափ առատել ազդուրագոյն, որչափ զի արդիւնք իրաց զգովիլն և զպարտաւորել յանդիման առնեն աչաց, առատել քան զամենայն ճարտարախօսութիւն. վերծանութիւն մատենիս՝ ամենայնի այսօրիկ վկայեսցէ:

Եւ վախճանեցաւ Մանծոնի անդէն ի Մեղիոլան ի 22 մայիսի յամին 1873. և զդրդեցոյց մահ նորա ոչ միայն զքաղաքն, այլ և զիտալիա համօրէն, ամենայն ուրեք ի սուգ ինչ վայրկենի հեռագրեալ:

ԱՂԵՔՍԱՆԴՐԻ ՄԱՆՏՈՆԵԱՅ

ԹՕՍԵՑԵԱԼՔ

ԳԼՈՒԽ Ա.

Լշին Քոմոյն սահէն այն՝ որ չեզն յարեգ ելոյս ընդ երկուսաւեք շղթայաշաւ գօսիս լե֊ռանց, և ըստ պատուիրից նոցին ծոցս և խնճոյս գործէ, յանկարծ ելին ապա ամենեքին, զհոսա֊նայ գետոյ լերկրել զդէմս. հրուանդան յալ֊մէ, գետ ընդարձակ՝ի հանգիստ, և կամուրջ՝ որ կցորդէ անդ զերկոսին ափունս՝ առաւել ևեն զգալն առնէ աչաց, և ցուցանէ զվայրն՝ ուր լինն դադարէ, և սկսանի անդրէն Ատտա գետ, կոչումն այնուհետև ընկալեալ լշի, ուր գետ֊ափունք անդրէն հեռացեալ՝ Թողուն ջուրց ծաւալել վերսաին և գործել այլ ծոցս և խորշս:

Գետն այն խառնեալ յերից մեծամեծ ուղ֊ղից, լինանէ առ ստորոտովք լերանց՝ յորոց մին կոչի սրբոյն Մարտինեայ, միւսն Ռնէնկա, որ՝ի

բարբառ լսմնարտասցն նշանակիչ պղծ, ՚ի յո-
գոմնց գագաթանց լերինն կարգաւ սեպացելոց
առեալ զանուանն, զի արդարև զմաշարաց բե-
րեն զնմանութիւնն. որպէս զի որ ՚ի հանդիպել
տեսանէ զայն, օրինակ լինի՝ ՚ի հիւսիսակողմն
մահարձանաց պարսպացն Մ՚ելանու, զանազա-
նէ յայսմանէ նշանաւ երկայնաձիգ սեպացն անտի
լերանց՝ որ չեն նշանաւոր, այլ ՚ի ձև սովորա-
կան:

Ոչ սուզ ինչ վայր գնայ գետն այն ընդ զառ
՚ի վեր՝ համակ դիւրին, և ապա ընդ երևելի կո-
հակաց և ձորակաց, գաշտակաց և բլրակաց,
ըստ դրից լերանցն երկոցունց, և ըստ ալեացն
հորդելոյ իւրեանց ուրդս: Զյարմնն ՚ի ստո-
րոտից անտի, հատեալ յականէ ուղևիցն, ծածկեն խիճք և քարունք դրեթէ առհասարակ. իսկ
զայլս՝ անդաստանք և այգեստանք, գաշտք և
հնձք, և վանկոնք համասփիւռ. ուրեք ուրեք
և անտառք, որ ձգին երկայնին մինչև ՚ի վեր
ընդ լերինս: Գլխաւորն ՚ի գաշտացն անտի Ալէք-
քոյ, յորմէ երկիրն անուանակոչի, կայ սուզ
ինչ հեռի ՚ի կամրջէն՝ առ եզերբ ձորն. ծածկի
ևս ըստ մասին ՚ի ձորէն՝ ՚ի յորդել նորա. և է
արդ աւան մեծ, որ ընդարձակի տակաւ ՚ի
քաղաք:

Յորում ժամանակի պատահեցին դէպք, զոր
առնուամ պատմել, աւանն այն էր նշանաւոր, և
դղեակ ՚ի նմա՝ փառաւորեալ բնակութեամբ
զօրապետի, ունելով միշտ զօր պահակական
սպանելացի, որք վարժէին ևս զաղջկունս և ըզ-
կանայս երկրին ՚ի համեստութիւն. երբեք եր-

բեք ծեծէին ևս գգուանօք զթիկունս կանամբ
բեաց ոմանց և զհարց. և ՚ի վերջկոյս ամառայ-
նոյ ոչ վերջանային սիրել յայգեստանս, ա-
նօսրել զխտութիւն ողկուզաց, և թեթևել
զերկս մշակաց յայգեկութս:

Էին և են յերկրի անդ ոչ սակաւք յանդոց
յանդս, բլրոց ՚ի բլուրս, և ՚ի բարձանց յա-
փուռնս, զառ ՚ի թափք և զառ ՚ի վայրք, գիւրք
խորաձորք, և ՚ի մէջ երկուասեռք որմոց ուղիք
նրբաձածանք, ուստի ելանէ ՚ի վեր առեալ՝ մանն
ինչ հեռի զերկինից և տեսանել, և ծայրս միայն
զլերանց ոմանց: Են ուրեք ուրեք և հողակոյաք
անարդելք, ուստի աչք ընդարձակին յառա-
ւել և ՚ի նուազ տեսարանս, ձոխս միշտ, և միշտ
զանազանեալս ըստ այլ և այլ մասանց շրջա-
կայից վայրաց, և ըստ սէգսէգս փայլման և
նուազման, երևելոց և ծածկելոց նոցա հետ-
զհետէ, գործելով ուրեք զայս ինչ, և այլուր
այլ տեսարան, և այլ ուրեք ձիգ ընդ երկայն
լայնատարած և այլակերպ հայելի ջրեղէն: Ասա
լեռ սպառեալ, կամ մանաւանդ կորեալ ՚ի
լերանցամէջս ազամոզս, և տակաւ ՚ի մէջ այլոց
լերանց ՚ի վեր երևեալ, որք մի ըստ միոջէ գան
յերևան, և ալիք զնոսա կախեալս գլխիվայր
ընդ ափինածիր չէնս ընծայեն աչաց: Ասա ջրա-
գործ բաղուկ գետոց, որ ապա լճէ, և ապա
գետ, լուսափայլ սահելմամբ գնայ կորնչի ՚ի
լերինս, որք ընդ նմին զուգահետ տակաւ խո-
նարհեալ՝ անհետանան լճին և ինքեանք ընդ ո-
լորս:

Վայրն, ուր ՚ի զինն տեսլեանցն կաս, գործէ

և ինքն ամենուստ տեսարան. և լեառնն, զորոյ
սորոտուելքն ձեմիս, պարզէ 'ի վեր զգագաթն,
և սարս բարձունս շուրջանակի յարափսփոխս,
'ի յայտ ածելով զնուրս գահաւանդս՝ որ սուզ
ինչ յառաջ մի ևեթ լեառն երևէր. և սարք՝ որ
կողք լերինն Թուխին՝ երևին գագաթունք, և
յընտանի զբօսանս ստորոտիցն քաղցրախառ-
նեն տեսիլ վայրենի, զբոլորից տեսարանացն
գեղազարդեալ զնեսմութիւն:

Ընդ մի յուղեաց ասի դառնայր 'ի ձեմելոյ
յուշիկ 'ի տուն ընդ երեկս եօթնեբորդի ա-
ւուր նոյեմբերի, յամին 1628, տէր Աստուածատուր
Ժողովրդապետ միոյ յասացելոցս չնինչ: Ի գըր-
չագիր մատենին, ուստի 'ի կիր առնուաք զառա-
ջինսյս վէպ, ոչ աստ և ոչ այլուր գտանի նշա-
նակեալ, ոչ չինին անուն, և ոչ Ժողովրդապե-
տին մականուն: Կատարեր նա հանգարտաքայլ
զժամակարգութիւն, և երբեք երբեք յաւարտ
սաղմոսաց վակեալ զժամագիրս՝ ունէր զցու-
ցամանն աջոյ նշանակ 'ի ներքս, և խառնեալ
զաչ ընդ ձախոյ ձեռին 'ի յերակոյս, յառաջ
վարէր զճանապարհն, ուշ եդեալ ընդ երիկիր,
յորմէ կոյս մէջտով զքարտինս՝ խոչ ընդ ոտն ան-
կեալս 'ի շաւղին: Ի վեր էառ զգէմն, և զաչս
շուրջ ածեալ, կայր ակնկառոյց 'ի մի 'ի լերանց,
ուր 'ի մուտս արեգական՝ ճառագայթք ընդ
պատառուածս հանդիսակաց լերին այսր անդր
ցոլացեալ 'ի սեպս, երդուսնէին զնոսա որպէս
ծուէնք ծիրանւոյ ստուարք և այլայլասփիք:

Բացեալ անդրէն զժամագիրս, և մատն ի այլ
ընթերցեալ, եհաս 'ի գարձ ուղւոյն՝ ուր սո-

վոր էր բառնալ զաչս 'ի ժամագրոց, և հայել
յառաջ, որպէս և արարն յայնժամ: Անդ յեր-
կուս բաժանէր ուղին խիսնլտնաձև. աջակող-
մեանն ածէր ընդ լեռնակողմն յեկեղեցատուն
անդր. միսն լջանէր 'ի հովիտն, մինչև 'ի հե-
ղեղատ անդր. և ասսի կուսէ ցգարձս ուղևո-
րին հասանէր որմն: Երկոցունց ուղեացն որմք
նեղքինք, փոխանակ կաղմելոյ անկիւն, յան-
դէնն մատրանաձև. և նկարեալ կային անդ
ձկք ինչ, 'ի վերկոյս սողոսկելով 'ի շէշտ ան-
կեալք՝ որք 'ի միոս նկարչին և յաչս չըջակայ
բնակչաց որպէս թէ բոցք էին, և 'ի մէջ բո-
ցաձևին այլ ինչ տիպք՝ զորս էէր մարթ գու-
շակել, բայց համարձակին հոգիք քաւարանի.
հոգիքն և բոցք էին 'ի գոյն թըծեալ աղեւսոյ
'ի մերթաշրթի յատակի, թափեալ ատտ անդ
ծէվին 'ի բաց:

Ժողովրդապետին չեղեալ յաչ, և որպէս սո-
վորն էր՝ 'ի մատուռն անդր հայեցեալ, տեսանէ
յանկարծ դժպհին ինչ. զի կային անդ արք երկու
ընդդէմ միմեանց նըստ 'ի կնոյս ուղևոյն. մին աշ-
տանակեալ յորմին խոնարհ՝ միով յոտիցն ար-
տաքս 'ի կախ, միսսոնն 'ի կոխ յուղին. իսկ ըն-
կեր նորա կայր յոտին չեց յորմին անդր, բա-
զուկ զբաղկաւ 'ի կուրծս ածեալ: Չանգերձք
նոցա և կերպարան, և գէմք նոցա՝ որչափ ինչ
մարթ էր Ժողովրդապետին դիտել 'ի տեղւոյ-
ջին՝ ուր կայր, աներկբայելի առնէին զարուեստս
նոցա: Երկոցուն ևս ածեալ էր 'ի գլուխ փա-
կէղն ցանցակերպ կանաչագոյն, որ աւարտէր
'ի վերջաւոր թաւ զուսուվք, թողեալ արտաքս

'ի ձակատուն խոսոսպ անձուկն. ընչացք երկայն՝ 'ի սերևեչաս սլաքեալս, գօսի մաշկիզկին լուսափայլ լինդ մէջ՝ բերելով առձանակս կըրկին, և եղջիւր վառօդով՝ մանեկաձև կախեալ զկրծովք. գաշնակ ոտիւք՝ որոց երախակալ եղևեր 'ի վերուստ և ծայր 'ի ներքուստ գրպանն լայն և ուռուցիկ վարտեացն, և վաղակաւոր 'ի պատեան մեծ՝ գրուագեալ 'ի զարդ պղընձի ողորկ և փայլուն, ոսկին ձանաչէր զնոսա յաղթ ֆաջին կոչեցեալոց:

Աղգն այն, զարդիս սպառեալ, յաճախեր զայնու ժամանակաւ 'ի Լոմպարտիա: Որոց էին ցեղն տեղեակ աղգին, ածեմք վկայութիւնս վաւերականս՝ ուստի կարացին առնուլ ըստ բաւականին 'ի միտ զնկարագիրս նոցա, զնիւթն եչմանաց առ 'ի սպառել զնոսա, և զբարդաւաճել նոցա յայնժամ ըստ արկածից:

Կարոլոս Աբակոնեան, քաղաքապետ Միլանոյ, քաջ տեղեկացեալ անտանելի թշուառութեան՝ յորում կայր քաղաքն յերեսաց ֆաջային այնոցիկ և սրնկայից, արար հրովարտակ յ8 ապրիլի, յամին 1583, յորում զերկայնաձիգ շաբ եչմանական անուանցն իւրոց յեռեալ, յաւելու ասա. « Յայս առնեմք և սահմանեմք հրովարտակաւս այսուիկ ֆաջայ առհասարակ և սրնկայից, որ եկք և որ բնիկք, որոց էիցեն ինչ երք 'ի քաղաքիս, կամ չպարապեն 'ի գործ, որոց էիք Թոշակ, կամ Թոշակաւ յարեալ եցեն յասպետս ոք կամ յազատս, յաւագ կամ 'ի վաճառականի, կալ նոցա 'ի Թիկունս կամ օգնել, և կամ արդարե՝ որպէս կարծիք են

զնոցանէ՝ գարան գործել այլոց, և հրամայեմք մերինել նոցա 'ի քաղաքիս 'ի վեց աւուրս. և պաշտօնեից ամենեցուն արդարութեան տալք ամենազօր և անպայման իշխանութիւն առ 'ի կատարուածն հրովարտակիս »:

Եւ 'ի միւսում ամի, յ12 ապրիլի, գիպացեալ իշխանին՝ զի էր ֆաջային բազմութեամբ ֆաջոյ, որ զնոյն պատաճչին ևնանն վարեին, անչեղիւ 'ի բարսն, առանց նուազելոյ բազմութեան նոցա, եհան միւս ևս հրովարտակ սասակագոյն և նշանաւոր, յորում ընդ այլ պատուիրս սահմաներ. « Որ ոք 'ի քաղաքիս, բնիկ կամ հիւր, ցուցցի երկոքումբք վկայիւք, կամ ըստ հասարակաց կարծեաց ընդ ֆաջս համարեսցի, թէպէտև չիցէ նորա երեսն ինչ գործեալ, ըստ համարմանն ևեթ ընդ ֆաջս՝ առանց այլոց հաւատառեաց՝ ոսկի 'ի գաւառորաց 'ի խոշտանգանս հարցափորձի. և 'ի չառնուլ խակ նորա յանձն զմեզանս, յղէսցի զերեսաւ 'ի Թիւ, վասն համարեցոյ ևեթ նորա և անուանելոյ ընդ ֆաջս »:

Ի լուր հրամանիկ հզօր իշխանին, և մեծասաստ սպառնալեացն, աներկբայելի թուէր անհետանալ ֆաջային ամենեցուն. բայց վախճուն այլոց ուրուք իշխանի, ոչ ինչ նուազ աւադի, զհակառակն ցուցանէ: Յոհաննէս Ֆերնանտէզ Վելասկեան, քաղաքապետ և նա Միլանոյ, և ոչ ինչ պակաս մեծապանաց անուամբք փառաւորեալ, 'ի 5 յունիսի, յամին 1593, փոչ փեղեկացեալ փոխ ընտաիր և 'ի խրճանուն էին ֆաջն այնոքիկ և սրնկայք, և փոխ ալեարհաւերժ՝ ծաղր կացուցանելով զարդարութիւն, հրամայէ գար-

ձեալ՝ ի վեց աւուրս սրբել զերկիրն ի նոցա-
նէ, երկրորդելով զկրօվարսակ նախորդին իւ-
րոց, գրեթէ նովին ապառնալեօք: Եւ առա՛ջ ի
23 մայիսի, յամին 1598, գիպացեալ նովին սրպո-
սաւուքեամբ՝ պի օր ըստ օրէն ածէր այնպիսեացն ամբոխ, ե
պշայգ ե ղեներէկ լսելի լինէին հարաւածք՝ գաւով ի նո-
ցանէ գործեցեալք, պանուրիանք ե գողնք, ե այլ պզիր
պզիր եղեռնաւորիանք՝ յորս նոքա եաս յաճախէին, հասպ
պղինձոնս արարեալ ի գլխաւորս ե ի համախոհս իւ-
րեանց, սահմանէ գալձեալ զնոցն գեղոցայս՝ չա-
փոյն յաւելուածով, որպէս ի յամսոս հիւան-
դութիւնս ե սովորութիւն. և այսպէս կնքէ
զկրօվարսակն. «Ամենայն ոք, ամենայն իրօք,
զգուշասցի՝ չհակառակել և մասին իմիք հրո-
վարտակիս, զի մի փոխանակ գթութեան իշ-
խանին՝ անկցի ընդ սասիս և ընդ ցասմամբ
նորին, զի վերջին և վճռական սահմանի յայ-
տարարութիւնս այս »:

Այլ այս եւս ոչ բաւական Թուեցաւ Պետրո-
սի Էրզրկուէղ իշխանին, քաղաքապետի երե-
ելին Ամլանու, ւասն հզօր պատճառաց: Քանզի
փոշ պեղէյացեալ ազիպէ՝ յորում էայր փոպոն ե երիր
Ամլանու ներքսոյ բաղմութիւնն Քաջոյն յաճախէրոյ անդ,
և հաստատեալ անձեռ առնել զազգն ինքսա-
կոր, հրատարակէ այլ հրովարտակ ի 5 դեկ-
տեմբերի, յամին 1600, զի սասիկ ապառնա-
լեօք, կատարել զոյն վաղընդվոյթ, առանց
յուսոյ Թողութեան:

Բայց պարտ է ասել, զի ի կատարումն ըս-
պառնալեացն ոչ ի կիր էարկ զոյն ամենայն
բարեսէր կամ՝ որովք վարեցաւ ի նիւթել

դաւ, և յարուցանել Թշնամիս ընդդէմ ոսե-
րիմ ոսոխ իւրոյ Հէնրիկեայ Դ. քանզի վկայեն
վէպք որպէս ի մասնս յայսմիկ յաշողեցաւ
զննուորել ընդդէմ նորա զդուքան Սաւոյեայ՝
որում էտ կորուսանել ոչ սակաւս ի քաղա-
քաց, և որպէս յաշողեաց նմա առնել դաւա-
կից զդուքան Պիրոնի՝ մինչև անկանել նմա ի
մոաց: Այլ եղեռնաւոր ձեռ Ֆաջայն, յայտ է,
զի անդադար վերընձիւղէր մինչև ի 22 սեպ-
տեմբերի 1612 ամին: Ի սմին աւուր Յոհան Մէն-
տոյեան քաղաքապետ Մելանու խորհեցաւ կա-
կասէս ընաջինք առնել զնոսա, և առաքեաց
առ Փանտոլֆոյ և առ Մարքոյ մակառնաւանեալս
Մալաթէսթա, արքունի ատգրատպետս, զսո-
վորական հրովարտակն հանդերձ յաւելուա-
ծովք և փոփոխութեամբք, ի լոյս ընծայել
զոյն առ ի սպառսպուռս բարձումն ազգին:
Այլ կացին նոքա տակաւին, և ընկալան ի 24
դեկտեմբերի, յամին 1618, այլ և հարուածս
սասակագոյնս ի Ֆիկուէրեան Սուարեզէ քա-
ղաքապետէ: Եւ զի այնու և ոչ սպառեցան,
հարկ եղև Ռոթուվեան Ֆերնանտեզի կոնծա-
լեայ քաղաքապետի, առ որով պատահեաց ու-
ղևորութիւն Պողովոդապետի, վե-
րըսին այլովք և փոփոխութեամբք հանել
զսովորական հրովարտակն ի 3 հոկտեմբերի
յամին 1627, այս ինքն յետ տարւոյ մոյ և ամ-
սոյ և աւուրց երկուց արժանի յիշատակի ու-
ղևորութեանն:

Եւ ոչ այս վերջին հրատարակութիւն էր հրո-
վարտակի. այլ մեք ոչ արժան համարիմք յիշա-

տակել զհրատարակեալսն այնուհետև, զի մի արտաքոյ առաջարկութեանս ելանիցեմք: Զմի ևեթ յայնցանէ նշանակեացուք, յորում Սուա րէզ Ֆիկուերեան՝ երկրորդ անգամ կացեալ քաղաքապետ, ազդ առնէ զծանրագոյն եղե նագործութիւնս կոչեցելոցն Քաջաց. և այս շատ է առ՝ի յայտ առնել զի՝ի ժամանակին՝ զորմէ մեր բանքս են՝ կային տակաւին Քաջքն:

Սրդ երկոցունցն այնոցիկ Քաջաց սպասել առ որմովքն՝ անցանելոյ ուրուք ընդ այն, քա ջայայտ էր. այլ գառնագոյն ևս Թուրեցաւ ժո ղովրդապետին գուշակել՝ի չարժմանդ լինչ նո ցին, զի սպասեալն՝ի նոցանէ՝ ինքն լակ էր: Զի յերևել իւրում անդ, վերառեալ նոցա զդէմս՝ հայէին յերեսս, և՝ի ձեռ չարժման նոցա՝ի միտ առնուլ էր՝ զի ասէին ցմիմեանս Նա ինչ է: Որ զորմովքն հեծեալ կայր, արկ զոտն՝ի վայր յուղղ անգր, և միւսն՝ի բաց չարժեցաւ յոր մոյ անսկ. և երկոքին ևս գային ընդ առաջ ժողովրդապետին: Նա զժամադիրսն բաց ու նելով առաջի, և որպէս թէ ընթեռնլով, դի տէր զդիմեցուսն նոցա. և տեսեալ զի դեպ ու ղիղ գային ընդդէմ նր, անկաւ՝ի բիւր վա րանս: Խնդրէր՝ի տագնապ ժամուն գտանել էր վախսակ յաջ կամ յահեակ, այլ ետես՝ զի չէր. արար հայձեալ քննութիւն թէ գուցէ յանցուցեալ լինչ էր ուստք՝ի հզօրաց կամ յո խակալաց, և՝ի յոյզս անդ սրտի՝ խիղճ մտաց նորա աներկևան առնէր զնա: Իսկ նոքա յա ռաջ մատչէին լինքն ակնկատոյց. նա զգուշա մատն ձախոյ ձեռին և զմիչնամատն մուծեալ



'ի փողպատն՝ երբ առ 'ի յարդարել զայն, և ղերկոսին մատուցանն զուլամբն հոլովելով, զե- րեսս յերս դարձուցեալ, և թեքեալ զբերան, ծայրիւք ատցն դիտեր հասանելոյ ուրուք ան- դըր, այլ չտեսանէր և ոչ զոք: Հայեր յորմ անդր և յանդաստանս, և չէր ոք. մեղմով ինն հայեցուած ընդ ուղին, և ոչ զոք բայ 'ի ֆա- ջաց անտի տեսանէր: Զինչ առնել էր. յերս դառնալ, այլ տարաժամ էր. 'ի վախճաստ ձե- պել, այլ էր այն ձայն տալ նոցա զհետ իւր, և չար էա: Ոչ կարացեալ խոսել 'ի վտանգէն, ընթացաւ ընդ առաջ նմին. այնպէս դառնիք վայրկեանքն այնոքիկ էին, զի կարճել ևեթ զայնս խնդրէր: Արագէ զբայլս, արտասանէ զնի 'ի ոտից սաղմոսին 'ի ձայն լսելի, յարդա- րէ զդէմս խաղաղ և զուարթ՝ որպէս կարէին, ձգնի 'ի ժպիտ. և ասելով 'ի մոի ախ ոչ ծա- նեջ, մերձ հասեալ առաքինեացն՝ զկայ առ- նու:

Յայնժամ մի յերկոցունցն պչուցեալ ընդ երեսս նորա, ասէ. « Տէր Հայր »:

Եւ Ժողովրդապետն 'ի վեր առեալ զաչս 'ի ժամագրոցն՝ որ կային 'ի ձեռս նորա բայ որ- պէս 'ի գրակալի, պատասխանէ. « Ինչ կը հրամմես »:

Նա ցասուցեալ և սպառնալից, որպէս ոք զի յանցաւորի 'ի վերայ հասանիցէ, ասէ. « Վաղը պահիմն պիտոր երկեր Ռէնցոյ Թրամալինոն Լուչիա Մոնտէլլային հետ »:

Պատասխանէ Ժողովրդապետն. « Ինչ ըս- տեմ... այս ինքն... այս ինքն... դուք աչերքի

փորձ էք, դիտէք որ ասանկ բաները կը հանդիպին. խեղճ ժողովրդապետը անանկ խառնա-վնդոր գործքերու մէջ մաս չունի. ինչու որ... ինչու որ... անոնք սեղան երթալու պէս կուգան մեզի, ու մենք... ու մենք պէտք է որ իրենց ծառայենք »:

Յայնժամ նա գոչէ յոնկանէ ժողովրդապետին մեծաստաց. « Չի պահակես պիտոր զինքը, գիտէս. ոչ վազը, և ոչ երբեք »:

Պատասխանէ ժողովրդապետն ձայնիւ, որպէս ոք զի քաղցրութեամբ դուն գործիցէ համոզել զանժոյժ ոք. « Բայց պարոններ, հնուքը ըրէք, իմ տեղս եղիք. Թէ որ իմ ձեռքս ըլլար... գիտէք որ առիկէց ինծի շահ մը չկայ »...

Իսկ Գաջէն երձաւաւալ զնոսս նորա, ասէ. « Այս վուշ խօսքերը մէկդի Թող. Թէ որ առնցմով բան ըլլիներ, զմեզ կրնայիր խաբիր. բել. ոչ գիտենք, և ոչ կուզենք գիտնալ այս բաներըր. զգուշաւոր եղիր... կիմանաս ըսածս »:

Ժողովրդապետն ասէ. « Տեսըք իմ, դուք խելքով ու արդարասէր անձինք էք »...

Յայնժամ ընկերն՝ որ ցայնկոյս լուռ ևեթ կայր, 'ի վերայ ածէ. « Պիտոր չըլլայ պահակը, հասկըցա՞ր » — աստանօր յիշոյ համեմատ — « Թէ որ չէ, պահակողը կը զրկայ » — միւս այլ յիշոյ: —

Յաւելու ձարտարախօսն առաջին. « Մի, մի. տեր Հայրը աշխըքես վարմունքէն կը հասկընայ, գիտէ որ դէշ մարդիկ չենք, չենք ուզեր

ինասել իրեն՝ Թէ որ աղէկ վարուի: Տէր Հայր, Ռոտրիկ իշխանը սիրով իր յարգութիւնը կընէ հրամանքիդ »:

Լուռ անուան իշխանին եղև ժողովրդապետին որպէս փայլակն, որ՝ի գիշերախառն ուժգին մրրկի՝ հարևանցի և ընդ աղօտ լուսաւորեալ ղհամագոյս, յաւելու զսոսկումն: Խոնարհեցոյց յարգութեամբ մեծաւ զգլուխ իւր, և ասէ. « Թէ որ կարենայիք խորհուրդ տալ ինծի »...

Այլ Գաջէն ոչ տուեալ տեղի խօսիցն, և անշնորհ ինն ժպտեալ, ասէ. « Ի՞նչ կըսես խորհուրդ տալ քեզի. գուն գրաբառ աղէկ գիտես. քեզի կիյնայ մտածել. մանաւանդ՝ չըլլայ Թէ բերնէդ հանես, ինչ որ քու բարեյոգ համար ըսինք. Թէ որ չէ... հը... պահակը ըրածի պէս կըլլաս: Չիմայ ըսէ մեզի. Ռոտրիկ իշխանին ինչ ըսենք քու կողմանէդ »: —

« Իմ խոնարհ յարգութիւնս »: —

« Բայց աւելի որոշ պատասխան մը կուզէ»: —

« Պատրաստ եմ... միշտ պատրաստ իրեն ծառայելու »: Այլ յասելն զայս չխմանայր և ինքն՝ Թէ խոստանայր ինչ, կամ Թէ պատուիրական բանք էին ասացեալքն: Այլ նոքա ընկալան որպէս բովանդակութեամբ ասացեալ ղբանն, կամ այնպէս կէղծէին. և մի՝ի նոցանէ՝ի մեկնէն իւրեանց ասէ.

« Աղէկ է, աղէկ. գիշեր բարի, տէր Հայր »:

Իսկ ժողովրդապետն, որ սուղ ինչ յառաջ մտագիւր զմի յայցին տայր առ՝ի զերծանել յերեսաց նոցա, յանկայր արդ յերկարել ընդ

նոցա զնաւսս, և պայմանել դաշինս. վասն որոյ խրեալ երկոքեանքն ձեռաւք զժամագիրսն, ասէ.

« Պարտիմեր »...

Այլ նոքա ոչ էս ունկն մատուցեալ, մեկնեցան ընդ ուղին՝ ընդ որ նա ինքն էր եկեալ, և հեռանային երգելով ցուցս, զոր չիամիմ ածել առա:

Եկաց մնաց հէք ժողովրգաղեան վայրիկ մի բերանաբաց՝ որպէս ապշեալ, և ապա կալաւ զմի յերիկոյսունց ուղեացն՝ որ ածէր ի տուն նոր, հնանդաքայլ ոտն յոտանէ փոխելով, որ Թմրեալ Թուէին: Իսկ Թէ զինչ ի նեղքս կրէր նա յանձին, լաւ ևս լսցի ի միտ առնուլ՝ ի խօսել մերում զընաւորութենէն նորա, և զժամանակէն՝ յորում կեայր:

Որ ընթեռնուն, ինքնին իսկ հասու լեալ լցէ ցայտվայր, զի Տէր Ալտնոխոս չէր արիասիրտ ոք, և անգամն ի մանկութենէն խեղամուտ լեալ էր, զի զայնու ժամանակօք յոռեգոյն պայման այնոցիկ էր ի կենդանեաց՝ որք անձինքան և անժանի ծնանէին. սակայն ջօժարէր ևս անկանել առաւ ժանեաց: Զօրութիւն օրինաւոր ոչ պաշտպանէր լաւաց, որք ոչ ունէք մեղանչէին. այլ չէին ևս նոցա հնարք երկիւղալի գոլոյ այլոց: Իբր ոչ եթէ զի չիայնի օրէնք և պատուհասք ընդդէմ բռնութեան. նա աւանիկ հեղեղէին յայնժամ օրէնք, ի համար ածեալ զձիրս և մանրապատում նշանակեալ, և պատիժք անխոհականագոյնս ծայրայեղեալ, և ի չբաւել սահմանելոցն՝ յաւելուին վիրաքանչիւր իսկ դէպս ըստ հաճոյս օրէնսդրին և

բիւրուց այլոց զօրինաց կատարելեաց, և փուրսիչք մեծաւ խուզիւ հարցափորձեալ, առ ի բանալ ևէթ զամենայն խոչ և զնոութ՝ տալոց դատաւորին համարձակ զվճիռ դատապարտութեան: Չատուածք հրովարտակաց, զորս ի վեր այսր ածաք, ընծայեն առ այս սակաւ ինչ՝ այլ սոյգ ճաշակ:

Հանդերձ այսու ամենայնիւ, մանաւանդ Թէ ի պատճառս այսր ամենայնի, հրովարտակքն՝ կրկին և երեքկին և խատագոյնս հետզհետէ ի քաղաքապետաց հրատարակեալք՝ ոչ առ այլ ինչ օգնէին, բայց առ ի վկայել ճոռոմաբար ապիկարութեան հրատարակողացն: Եւ եթէ զօրէին ևս առ ժամն, արդասիք նոցին էին հարըստահարել առաւել ևս զխաղաղասէրս և ըզտկարս ընդհարեալս ի խռովչաց, և յաճախել զբռնութիւն և զնենգութիւնս սոցա: Ազատութիւն ի պատուհասից այնպէս յերկիւղեալ էր և ի խոր արմատացեալ, զի հրովարտակաց զօրութիւն չհասանէր անդր, և ոչ խախտել կարէր զայն: Այնչափ էին ապաստանք, և այնպիսի արատնութիւնք դատաց ոմանց, ընկալեալք ըստ մասին և յօրինաւոր իշխանութենէ, և ըստ մասին թողացուցեալք ի յաչաղկոտ լռութենէ, կամ ժխտեալք ի թարմատաւ բողբոջ՝ այլ երօք կացեալ ինացեալ, և ի կարգաց անտի պաշտպանեալ տգիտութեամբ շահախնդիր և վտառասէր նախանձու:

Արդ ապերասան աղատութիւնս այս, ըստպատճառեալ և ոտնհաս լեալ՝ այլ ոչ ի բաց բարձեալ հրովարտակաքն, նորանոր ձիրս և հնարս

ընդդէմ ամենայն սպառնալեացն և ոտնհարու-
Թեան գործէը հարկաւ ՚ի պահպանուԹիւն
իւր, որպէս և գործեաց խակ: Զի ՚ի հրատա-
րակել նոցին առ ՚ի նուաճել զբռուսն, սոքա
խիստ էս զբռուԹեամբն իւրեանց այլ հնարս
խնդրէին պատեհագոյնս յարատեւելոյ ՚ի նոյն,
զոր հրովարտակքն արգելուին: ՄարԹ էր հրո-
վարտակացն այնոցիկ խափանել յամենայն
ոտնձգս և նեղել զնոսա որբերն անզօր և ան-
պաշտպան. զի ձեռն արկանելով յամենեսին՝
առ ՚ի խափանել կամ պատուհասել զչարիս,
զամենայն շարժմունս լաւաց մատնէին ՚ի հա-
ճոյս կամաց պաշտօնէիցն արդարուԹեան: Այլ
որոց նախ քան զեղեռն պատրաստեալ էր իւ-
րեանց ապաստան ՚ի վանս ուրեք կամ յասպա-
րանս՝ ուր նուիրակաց առենին էր օրէն մուտ
նել, և որք առանց խոչ այլոց զգուշուԹեանց
կրէին հանդերձ նշանաւոր, որում՝ փառասի-
րուԹիւն կամ խնդիր շահու աղքատութեան ու-
րուք հզօրի կամ ժողովոյ՝ պաշտպան կայր, ա-
զատք էին ՚ի գործել ոճիրս, և զամենայն բռնա-
մունս հրովարտակաց ծաղր առնել:

Յայնցանէ խակ, որ ոտնիկան կարգեալ էին
կատարման հրովարտակացն, կէսք ազատաղ-
դիք՝ զարտուղուԹիւնս իւրեանց ՚ի կիր արկա-
նէին, այլք ընդ հովանեաւ նոցա պատսպա-
րէին. և ամենեքեան ըստ դասակարգուԹեան, ըստ անձանց օգտի, ըստ սովորուԹեան,
և ըստ նմանողուԹեան, հեռանէին իմաստից նո-
ցին, և ոչ կամէին վասն ԹերԹի միոյ յանկիւնս
գործոյ մածուցելոյ՝ ինեաս հատուցանել նոցա:

Իսկ որոց պարան էր կատարել զայնոսիկ, եԹէ
ձեռներէցք խակ որպէս զգիւղացուն էին,
եԹէ հնազանդք որպէս զվիանձուն, և եԹէ
պատրաստք ՚ի փոխանակել զանձինս որպէս
նահատակք, սակայն չկարէին յաջողել, զի էին
նուազագունք Թուով քան զայնոսիկ՝ զորս պարտ
էր նոցա հնազանդեցուցանել, և զի դարձեալ
կարի հաւանական էր ինալ նոցա անօգնական,
և մատնիլ խակ յայնցանէ բրք անդործ և
դադարեալ ինն տեսական պատուէրս տալոյն ՚ի
կատարումն. և զի դարձեալ պատուիրակքս
այսոքիկ էին սովորաբար ՚ի սինքերոց և յա-
պիրատից ժամանակին, և պատուէրքք նոցա
արհամարհք այնոցիկ խակ՝ որոց պարան էր
երկինչել ՚ի նոցանէ, և նախատեալն անուն նո-
ցա: Վասն որոյ փոխանակ վտանգելոյ զան-
ձինս, և յանդգնաս ձեռնարկելոյ, բնաւորա-
պէս վաճառէին հզօրաց զանդործուԹիւն իւ-
րեանց, Թէ արգելօք և զգործակցուԹիւն.
և անգ միայն զգաստին իշխանուԹիւն իւ-
րեանց և զիթարմատաբ զբռուԹիւն ՚ի կիր
արկանէին, ուր չէր ինչ վտանգ, խմա յընկճել
և ՚ի հարստահարել զխաղաղասէրս և զանօգ-
նականս:

Այր եղեռնագործ, և որ յար յերկիւղի կայ
յերեսաց եղեռան, նեցուկս խնդրէ իւր հար-
կաւ և պաշտպանս. վասն որոյ ամենայն ոք յա-
ռաւրան յայնոսիկ խնդրէր յօգնական՚ի կաշառս,
կամ նորանոր ժողովս կազմել. և ամենայն ոք
գուն գործէը զօրացուցանել զժողովն՝ որում
ինքն պատկանէր: Եկեղեցականք հսկէին՝ ան-

4961
35

նուաղելի ունել զաղտուածոյն խրատից և ընդարձակել. ազատանին զարտուղութիւնս խր, զինուորականք զիւրեանցին. վաճառականք և ձեռագործք յընկերութիւնս և յերկրագործութիւնս գրեին. իրաւագիտք կազմիչն գաղնակցութիւն, և բժիշկք միաբանութիւն: Իւրաքանչիւրոյ 'ի սահմանափակութեանց ասի էր ինքնուրոյն և յատուկ զօրութիւն, և իւրաքանչիւր ումեք առաւելութիւն քան իւրումն առաքինութեան և ճարտարութեան՝ վարձոյ յօգուտ անձին զգօրութիւն համախմբեալ 'ի բազմաց: Լաւք ևս 'ի պաշտպանութիւն անձանց վարձին նոցին առաւելութեամբ. խակ նենգամիտք և ընդհանուրք 'ի կիր առնուին զայն 'ի կատարումն անօրինութեանց, յորս ոչ բաւէին հնարք իւրեանց յապահովութիւն: Բայց զօրութիւնք միաբանութեանցս այսոցիկ չէին հաւասար, մանաւանդ 'ի գիւղօրէս, ուր բռնութիւնք և ճոխք շուրջ պատեալ 'ի բազմութենէ ֆրաջաց, և չինականաց՝ որք ընտանի աւանդութեամբ, 'ի խնդիր շահու, կամ առ բռնութեան, համարձին հպատակք և որպէս զօրք սերտանցն իւրեանց, վարձին իշխանութիւն՝ որոյ դժուարաւ ոք այլք 'ի միաբանութեանց կարէին զդէմ ունել:

Տէր Ալտնտիոս ոչ յաջնուականաց ոք էր, և ոչ 'ի ճոխից. առաւել ևս վերջացեալ յարմարութենէ. որպէս պի չէ 'ի սիս խոհականութեան հասեալ՝ խելամուտ էր հարկին, պի յայն հանգամանս պարտ էր նմա որպէս անօթ խեցեղէն ընդ անօթս երկաթիս ուղևորել. վասն որոյ յօժարութեամբ յանձն էառ պիտոյ ծնողացն, որ կամէին զնա եկեղեցական: Արդարև էր նորա քաջ զմտաւ ածեալ զպարտս և զպիտոյս ուսման կէտ պաշտամանն՝ զոր յանձն առնոյր, և թուէին նմա առաւել քան զբազականն՝ պատճառք ընտրութեանն, շահել զպարտս՝ բաւականապէս հանգստեամբ, և մնանել 'ի դասակարգ արդոյ և զօրաւոր:

Բայց որոյ և իցէ միաբանութեան սահմանաւոր է պաշտպանութիւն և ապահովութիւն, և ոչ մի 'ի նոցանէ անօրինել ունէ՝ ունել իւր օրէն առանձին: Տէր Ալտնտիոս 'ի հանգիստ իւր խորհէր հանապազ, և ոչ ինչ հոգայր զբաղութեաց՝ վասն որոյ պարտ է վաստակել, և 'ի վաստակիդ անդ խակ երբեմն արկանել զանձն: Օրէն անձին սահմանեալ էր՝ խոսել յամենայն ընդդիմութեանց, և 'ի չկարելն խոսել՝ տեղի տալ այնոցիկ. անմէս 'ի մի կողմն, զինքնակէց յամենայն պատերազմունս՝ որ զիւրև յառնէին, խոյս տայր 'ի վճռից՝ որ 'ի ժամանակին յայնմիկ յաճախէին ընդ եկեղեցական և ընդ աշխարհական իշխանութիւնս, և 'ի հակառակութեանց՝ որ սակս պատահէին ընդ զինուորս և ընդ քաղաքացիս, ազատ ընդ ազատ, և չինականի խակ ընդ չինականի, 'ի բանակութենէ 'ի կռիւ հարսնութիւն և 'ի զէն դրդռեալ: Եթէ հարկ խակ լինէր նմա մնանել 'ի մէջ երկուց ընդդիմեանս դրդռելոց, ունէր զկողմն հզօրագունեն, այլ աչք 'ի թիկունս, և կամելով յայտ առնել միւսումն՝ զի ակամայ զդէմ ունէր նմա, և դադարէս լինն ասելով ցնա. Ասա՛, զի չես հը-

զօրագոյն, զի կուսականից լինէի քեզ: Հեռի կա-
լով ’ի գոռոզից, անառես առնելով զհարևանցի
և զյանկարծական բռնութիւնս նոցա, իսկ ըղ-
ջարամոցն և զջարանիւթից խոնարհ կորանօք
զառաջս կալեալ, և զօրութեամբ յարգանաց
զկարի իսկ գժնեացեալս ’ի հանդիսելէն նոցա
սակսելով զուարթ դէմք ’ի ժպիտ, յաջո-
ղեալ էր նմա հասանել վաթնամեայ, առանց
մեծի ինչ մրրկի:

Բայց և նորա էր ինչ լեզի ’ի սրտի. և ’ի հա-
նապազօր վշտամբերութենէ, ’ի տալոյ ամենե-
ցուն իրաւունս, և ’ի կշռելոյ լուութեամբ պա-
տառս դառնս, այնպէս և ինքն էր դառնա-
ցեալ, զի եթէ երբեմն երբեմն ոչ թափէր ըզ-
կիրան ’ի դուրս, կորուսանէր անեղկեցեալս
զառողջութիւն: Էին յերկրին, և ’ի մերձաւորս
իսկ նորա, անձինք քաջածանօթք նմին, զորոց
ոչ կասկածէր, և կարէր երբեմն յայտնել նո-
ցա զկիրս իւր նուաճեալս ընդ երկար, և յա-
դեցուցանել առ վայր մի զօրամութենէն իւր,
և սաստել ընդ վայր: Էր իսկ խնամ դառաւոր,
որոց ոչ ըստ իւրուն եղանակի վարելին, և ուր
ուրեք կարէին անվտանգ առնել դառաստան:

Զգանահարեալն, եթէ ոչ աւելի ինչ, գո-
նեա յանդուգն համարէր. իսկ զսպանեալն,
խռովարար. որ իշխէրն պաշտպան կալ սպա-
նելոյն ընդդէմ հզօրի, սէր Ապոնասոս դառ-
նէր միշտ սգաւոր ինչ ’ի նմա, և չէին ինչ զար-
մանք. զի ոչ երբեք իրաւն և անիրաւ այնպէս
ընդ մէջ հատանին, զի նցեն երկաքանչիւր ան-
մասն ’ի միմեանց: Ի վերայ ամենայնի բացա-

դանչէր ընդդէմ այնոցիկ ’ի վիճակակցաց իւ-
րոց, որք ’ի վտանգ զանձինս արկանէին՝ առ ’ի
պաշտպանել տկարի հարստահարելոյ ’ի հզօրէ,
և համարէր զայն՝ որպէս թէ գնել պատրաստ
դրամաւք վիշտս անձին, և երագել զոտս շանց ’ի
խածուած. և սահմանէր իսկ խոտիւ, թէ չէր
օրէն սրբոյ պաշտաման խառնել յիրս արատ-
քինս. և ընդդէմ այնպիսեաց ձարտարաբա-
նէր, այլ միշտ առանձինն կամ յանդին սա-
կաւուց. և այնչափ սաստկութեամբ՝ որչափ
ձանաչէրն զնոսա հեռի ’ի գժկամակելոյ ընդ-
բանս՝ որ հայհոյին ’ի նոսա: Էր և սիրելի յոյժ
նմա վճիռ ինչ, որով կինքեր միշտ զբանս իւր,
Թէ Աւտն լաւ՝ որ յանդն նկնի հայի, և ’ի լափս խոտոմ
կայ, ալ պատահէն արիածք լաւ:

Ի միտ առցեն արդ ընթերցօղք իմ, Թէ գտա-
նելոցն, որպիսի ազդեցութիւն արարեալ էցէ՝
որ լինչ պատմեցաք՝ ’ի սիրտ եղկելոյն. սուս-
կուսին ’ի խոժոռ դիմաց անտի և ’ի յինջոցաց,
սպառնալիք խշմանին որ ոչն սպառնայր ’ի զուր,
կորուստ խաղաղասէր կենաց՝ զոր բազմամեայ
ճգամբ և համբերութեամբ էր ստացեալ, և որ
վեր ’ի վայր վրդովեալն էր պատահարիւն յորմէ
չգիտէր ո՛րպէս զերծանել, այս ամենայն ազմը-
կելն չընչմամբ զաեւտն Ապոնասոյ զգլուխն կո-
րացեալ, և ասէր. Եթէ մարթէր լինչ արձա-
կել զՈՒՆցոյ ալիս միով ’ի խաղաղութիւն,
դիւրին էր. այլ նա զլսան էրն խնդրեացէ, և
զինչ կարիցեմ տալ պատասխանի. և... և...
այնպիսին, որ գտան Թուի՝ ցորչափ չմեղկցէ ոք
նմա, այլ եղծուկ որ հակառակի: Եւ ևս յիմա-

բեալ է նա ՚ի սէր օրհորդին Լուչիայ, և հա-
բեալ ՚ի սէր արուեստ... մանկտի անսասան, առ
անդործութեան տարիքին միմեանց, ամուսնա-
նալ կամին, այլ ինչ ոչ խորհին. չէ ինչ նոցա
փոյթ ընդ տագնապն, յոր զեղկելի ժողովուրդ-
դասեան արկանէին. աւաղ հիքս, պարբա էր
ինչ խոժոռադիմացն այնոցիկ արձանանալ կալ
յօղոզ լամուտ, և ընդ նա հակառակել. ղի կայ
իմ և նոցա. մի թէ ես իցեմ, որ ամուսնանալ
կամիցիմ. ընդէր ոչ գնան իսկել ընդ... ահ տէ-
սէք ղիմ դժնեայ Ջակատագրիս, ղի խորհուրդք
կարևորք տարաժամ միշտ ինձ ՚ի յոչ գան.
եթէ էր իմ յառաջադոյն զմտաւ ածեալ՝ թէ-
լադրեի նոցա ասել ցիշխանն...

Այլ յասելն զայս ՚ի միտս եղև, ղի ամպարըշ-
տութիւն մեծ էր տարբնակ՝ ընդ չլինել իւր
թելադիր և գործակից անիրաւութեան, և
զամենայն զայրոյթ իւր չղջեաց ընդդէմ իշնա-
նին՝ որ խռովէր զհաղաղութիւն իւր: Ջհանա-
չէր նա զԼուսարիկ, բայց ՚ի տես և ՚ի լուր. և ոչ
երբ ինչ լեալ էին իւր ընդ նմա, բայ ՚ի հար-
կանելոյ առաջի նորա զծնօտս ընդ կուրծս, և
զծայր գլխարկին ընդ գետին, ՚ի հանդիպելն
նմա երբեմն զճանապարհայն: Դէպ լեալ էր
նմա ոչ գուն ուրեք պաշտպանել համբաւոյ
նորա ընդդէմ այլոց՝ որք անիծանէին ՚ի մրմունջ
զգործս ինչ նորա՝ զաչս յերկինս ամբարձեալ
հառաչանօք, և յամառն ուրեք ասացեալ էր
զնմանէ՝ զի մի ՚ի մեծարոյ ասպետաց էր: Այլ
յայնժամ ոյժ նմա ՚ի սրտէ զամենայն դրուա-
տանուն, զորս չէր նորա լուեալ յայլոց. և

ոյժ՝ արագ արագ չարայարեալ, առանց ընդ-
հատելոյ զպնս միջարկութեամբք:

Ի յոյզս խորհրդոցս այսոցիկ՝ եհաս ՚ի տուն
իւր, որ ՚ի խորս գեղջն կայր, արկ հասպնեալ
յեմն ղբանալին, զոր վաղ հանեալ՝ ունէր ՚ի
ձեռին. եբաց, եմուտ և դարձեալ ամրափա-
կեաց, և կամեցող խօսել մտերմաբար, ձայնէր
Փէրէնէռա, Փէրէնէռա, դիմեալ ՚ի սրահ անդր՝
ուր անտարակոյս պատրաստէր Փէրփէթուա
զսեղան յընթրիս: Եւ էր Փէրփէթուա, որ-
պէս ամենայն ուժիւք է դուշակել, ազախին ժո-
ղովրդապետին, մտերիմ և հաւատարիմ, որ
դիտէր հնազանդել նմա և հրամայել ըստ ժա-
մանակին, համբերել զրթմինչանաց նորա և
ժպտօհութեանց ՚ի դէպս, և տալ նմա համբե-
րել խրոցն՝ որ օր ըստ օրէ յաճախէին յեա
անցանելոյ սիրական հասակի նորա զբառաս-
նամենիս, և մնալոյ աւասրդ, մերժելով զնշար-
սանիս առաջարկեալս իւր, որպէս ինքն ասէր,
կամ ոչ դատնելով զոք՝ որ յերեսս իւր հայհո-
յի, որպէս բարեկամութիւնք իւր ասէին:

Այդ պատասխանեաց նա բարձրաձայն ՚ի
նեղբուստ. Հա՜ Եմ, խոգամ. բայց դնելով հան-
դարտաբար ՚ի վերայ սեղանոյն ՚ի սովորական
տեղւոջն զսպակեակ գինւոյն հաճոյագունի
ժողովրդապետին: Զև եղեալ նորա ընդ սեամս
սրահին, եմուտ անդր աէր Ասպռնոխոս՝ այնպէս
դժուարաքայլ, այնպէս այլայլեալ դիմօք և
ընտուցեալ, ղի էնին ինչ պէտք փորձ աչաց ա-
ղախնոյն առ ՚ի դուշակել, ղի անսովոր ինչ
դէպք պատահեալ էին նմա: Տէր Ասպռնոխ գո-
չեաց ազախինն, և ասէ ցժողովրդապետն.

« Ի՞նչ ուներս, տէր ։ » ։ —

Պատասխանէ տէր Աստուածոս. « Բան չկայ, բան չկայ ». և արկանէ զանձն 'ի Թիկնաթոռ նը ։ —

Աղախինն ասէ. « Ինչպէս բան չկայ, ինծի՛ կը հասկըցընես առ խօսքը, առանկ պլլայլած դէմքով. մեծ բան անցած պիտոր ըլլայ գըշ խեղ » ։ —

« Ո՛հ, հոգիդ սիրես. երբոր բան չկայ կըսեմ, կամ չկայ, կամ թէ որ կայ ալ՝ չեմ կըրնար ըսել » ։ —

« Ինչ, ինծի՛ ալ չես կրնար ըսել. ո՞վ է գքեզ հոգացողը, ո՞վ է քեզի խորհուրդ տուողը »... —

« Թող տուր հիմայ, բան մ'ըսեր ու րիշն. ուրիշ բան ալ մի պատրաստեր ուտելու, գաւաթ մը իմ գինիէս տուր » ։ —

« Եաքը կըսես որ բան չկայ » ։ Եւ լցեալ աղախնոյն զբաժակն, ուշի 'ի ձեռն, որպէս թէ ոչ կամելով տալ զայն նմա՝ մինչև յայտնեացէ զոր խնդրէրն Թախանձանաւք ։ —

Իսկ Ժողովրդապետն, « Տուր ինծի, տուր ինծի » ասելով, առեալ զբաժակն դողդոջ ձեռամբ, ըմպէ զայն հապճեպ որպէս զեղ ։ —

Աղախինն ասէ. « Ուրիշ կուզես որ՝ ասդիս անդին լչնիմ, ուրիշներուն հարցընեմ որ ախրոջս գլուխը ինչ է եկեր » ։ Եւ արձանացեալ եկաց առաջի նորա, զձեռան շրջուն զկողուքն կալեալ, և զարմիկունս ցցուեալ, ակնկառոյց յերեսս նորա, որպէս թէ կամելով ծծել յաչէջ նորա զդաղանիսն ։ Իսկ նա ասէ.

« Հոգիդ սիրես, փուճ խօսքերը մեկդի ձգէ,

մի պռատար. կենաց վտանգ կայ հոս՝ գիտէս, կենաց վտանգ » ։ —

« Կենաց վտանգ » ! —

« Հապա՝ կենաց վտանգ » ։ —

« Տէր իմ, գիտես որ ինծի մեր մամբաբար ըսած բաներդ՝ ամենևին »... —

« Ապրիս, ինչպէս երբոր... —

Յայնժամ 'ի միտ առեալ աղախնոյն՝ զի եդ զմտան 'ի վերկ, փոխեաց զդաշնակ, և ողորմ ձայնիւ ասէ.

« Բայց միշտ սիրասէր եղած եմ, տէր իմ. հիմայ ալ որ կուզեմ գիտնալ, ջանալէս է որ՝ կարենամ օգնել քեզի, քեզի խորհուրդ տալ, զքեզ մխիթարել » ։

Եւ լսեալ զայն եղեն՝ զի տէր Աստուածոս, որ Թերևս այնչափ ցանկայր մերկանալ զդատն դաղանիսն՝ որչափ աղախինն գիտեալ զայն, յետ մերժելոյ՝ այլ միշտ նուաղագոյն զօրութեամբ՝ զնորանոր և զյոգնաթախանձ խնդիրն նորա, և յետ բաղում անգամ երդմնի զնա առնելոյ 'ի լուսնթիւն, հուսկ ապա ստեպ ընդհատմամբ խօսիցն հառաչանօք, պատմեաց նմա զաղետալի արկածան ։ Իսկ 'ի հասանել 'ի սոսկալի անուն նշանակին, Հարկ եղև աղախնոյն երդնուլ միւսանգամ երդումն մեծ, և ապա տէր Աստուածոս ասաց զայն, և անկաւ 'ի Թիկունս աթոռոյն, զձեռս 'ի վեր ամբարձեալ՝ յոգւոց հանելով. և 'ի ձև աղերսական հրամանի ասէ. « Աստուածոյ սիրոյն համար ըլլայ »...

« Ողորմած Աստուած », աղաղակեաց աղախինն, և յաւել. « Ո՛հ, ինչ անզգամ մարդ,

ինչ բանաւոր մարդ, Աստուածմէ չվախնար»...

«Մի պռաւար, ատանկ խօսքեր մի ըսեր, կոր-ծանումս կուգես»։ —

«Մենակ ենք, մարդ չկայ եր. խեղճ տէրս. ինչ կը մտածես հիմայ»։ —

«Ա՛ա ալ նոր»։ ասկ տէր Ալոմսիոս զայրա-նալով լմն. «ինծի խորհուրդ տուողը նայեցեք, ինծի կը հարցընէ որ ինչ կը մտածեմ հիմայ. կարծես թէ ինքը նեղը ինկեր է, ու ինծի կնայ մտածել, խորհուրդ տալ երեն»։ —

«Կուտայի ես իմ խեղճ խորհուրդս, բայց եառքը»... —

«Ի՞նչ եառքը, լսենք»։ —

«Իմ խորհուրդս աս է. քաղքիս եպիսկոպո-սը սուրբ անձ մըն է ու զօրաւոր, ամենքը կը վկայեն, մեկէն չվախնար. ու ժողովրդապետ մը պաշտպանելու համար՝ երբոր կը տեսնէ մեծ մը իր պարտքէն դուրս ելլելը, շատ կուրա-խանայ։ Հիմայ ես կըսեմ որ աղէկ նամակ մը գրես ու խնայընես երեն՝ ինչպէս, ինչ կերպով»... —

«Ա՛ա է տուած խորհուրդդ, ատանկ բան մտքէդ ալ մ՚անցըներ. հապա, Աստուած պա-հէ, աւրձանակ մը պարպուելու որ ըլլայ եաե-ւէս, եպիսկոպոսը կրնայ զիս յարուցանել»։ —

«Ինչ կրսես աւրձանակ. կապարէ գնտակը՝ շաքարէ գնտակներու պէս գլուրաս կ՚ինեաուելը. վայ էր մեղի, Թէ որ ամեն հաշիշ ջունը զմեզ խածնէր. փորձած եմ, ով որ ակռաները կը ցուցընէ, ակնածել կուտայ երմէն. միշտ ուրիշ նեղուն իրաւունք տալէդ աս ատոիճան հասեր էնք՝ որ ամենքը մեր վրայ կուգան համարձակ, որպէս զի»... —

«Ատանկ խօսքեր մի ըսեր»։ —

«Ջեմ ըսեր, բայց ստոյգ է՝ որ երբոր ամեն-քը կխմանան մեկուն ամեն անգամ ուրիշի տե-ղիք տալը»... —

«Ալ ձայնդ քաշէ, ափեղցըմիզ խօսելու տաեն չէ»։ —

«Հերիք է, աս գիշեր կը մտածես. բայց հի-մակուց մի սկսիր առողջութեանդ վնասելու, պատառ մը բան կեր»։

Պատասխանի եա ժողովրդապետն. «Կը մը-տածեմ, տարակոյս չկայ, պէտք է որ մտա-ծեմ»։ Եւ յարեաւ, ասելով. «Բան մը չեմ ուզեր ուտել, իմ ուզածս ուրիշ բան է. ես ալ գիտեմ որ պէտք է մտածել. կարծես որ ինծի պահուտած էր»... —

«Գոնէ սա կաթիլ մը գինին ալ խմէ»։ յա-ւել աղախինն մատուսակելով. «Գիտես որ աղէկ կընէ ստամոքսիդ»։

Ժողովրդապետն հառաչելով ասէ. «Ո՛հ, ու-րիշ բան հարկաւոր է հիմայ, ուրիշ բան, ու-րիշ բան»։ Եւ առեալ զձրագն, քրթմնջելով ընդ ինքն, «Կարծես որ թեթեւ բան է... ինծի պէս զգուշաւոր մարդու... վազը նայինք ինչ պիտոր գայ գլխընիս», և այլ այսպիսի բանս, ելանէր՝ի սենեակ իւր։ Հասեալ առ սեամն սե-նեկին, զինչ էառ. և դարձեալ յաղախինն կոչս, եդ մատն՝ի շրթունս, և գաշն ձայնիւ, այլ՝ի ձև հրամայական ասէ. «Հոգիդ սիրես, մի խօսիր»։ և մտեալ՝ի ներքս, եղև անտես։

ԳԼՈՒԽ Բ.

Պատմեն՝ զի իշխանն Փոնտէ, յերեկոյէ ճա-
կատամարտին Խաբրուայի, ննջէր խոր՝ ի քուն.
այլնախ՝ զի յոյժ էր խոնջ. և երկրորդ անգամ՝
զի առաւել էր նա զամենայն պատուհաս կա-
րևորս պատերազմին: Իսկ տէր Ալպոնսոս չև
ևս այլ ինչ գիտէր զվաղուէն, բայց զի էր օր
ճակատամարտի. վասն որոյ զմեծ կէս մասն գի-
շերայն եհան՝ ի խորհուրդս մտայոյզս: Անփոյթ
առնել զժանտ հրամանն և զսպառնալիս, և
օրհնել զսպաին, էր այնպիսի ինչ յոր և ոչ
խորհել կամէր. յայտնել Ռէնցոյի զերան, և
խնդրել ընդ նմա հնարս... Տէր պահեսցէ: Յի-
շէր զբան մի՛ յերկոցունց Գաշաց անուն,
« Բերնէդ չելլէ, ապա թէ ոչ... հը՛ »: Գանկցա
այն հէ յուշ լինէր տէր Ալպոնսոսի, ոչ թէ
անցանել զսպառնալից պատուէրսն, այլ

սարջանայր և ընդ ասացեալսն առ աղախինն, և ասէր՝ի մոլ. «Կարելի՞ է արդեօք փախչել... բայց ո՞ւր ալ փախչել... քանի՞ արդելքներ կելլեն դիմացդ... քանի՞ հաչիւ ալ սկեսր կըլլայ տալ»։ և առ մի մի՝ի խորհրդոց՝ զնոսս մեր-ժէր, Թաւալէր եղկելին՝ի մահճի։

Խորհուրդ՝ որ նմա լաւագոյն Թուէցաւ քան ամենայնի, կամ դէթ նուազագոյն՝ի չարեաց, էր յապաղել և շահել ժամանակ. յիշեաց՝ զի ընդհուպ դադարելին աւուրքն հարսանեաց, և ասէ ընդ միտս. «Թէ որ կարենամ ուշացընել Ռինցոն, երկու ամիս շուրջ կառնեմ, ուր ան մի-ջոցին հազար բան կրնայ հանդըպիլ»։ Որոճայր՝ի մոլ պատճառանս սկսապէս՝ առաջի գնել պա-տանւոյն. որք Թէպէտ Թուէին անզօրք, այլ քաջալերէր զանձն՝ ժողովրդապետական իշխա-նութեամբն տալ այնոցիկ զօրութիւն բաւա-կան, և բազմամեայ փորձովք իշխել՝ի վերայ անուս պատանւոյն, և ասէր յանձին. «Բանին էութը տեսանիք. ինքը նշանածը կը մոռնայ, իսկ ես կեանքս. իմ մոռնալիւնս աւելի զօրաւոր է, Ճարպկութիւն ալ չունիմ չէ։ Սիրելի, Թէ որ դուն կարգաւիլ կուզես, չեմ գիտեր ինչ ըսեմ. բայց ես ալ կենալ վառնդի չեմ ուզեր գնել»։

Եւ հաստատեալ յայս խորհուրդ, կարաց անագան փակել զաչս. այլ որպիսի՛ քուն, որ պիսի՛ երազ. երևութականացն նմա Փաչքն, իշ-խանն Ռոտրիկ, պատանին Ռինցոյ, ուղիք շի-նին, ժայռք, վիսուսաս, հեռամուտք, աղա-ղակ, ատրճանակք, այլովքն հանդերձ։ Նախ-

ևին սթափուն՝ի քնոյ շնորհս արկածից և տագ-նապական պատահարաց՝ կարի դառն է. միաք այն ինչ զդաստացեալ դիմեն՝ի խորհուրդ ա-ռաջնոյ խաղաղութեանն. այլ նորոյ պատահա-րացն սիպք գժնեայք՝ի վերայ հասեալ, դառ-նագոյն ևս լինին զդալն։ Տէր Աստուածոս հնա-րէր ամենքեւ զայնս՝ զդիշերայնին խորհուրդն ա-ծելով՝ի միտ. զոր վերստին հաստատեալ և պատրաստեալ՝ յարեաւ, և սպասէր գալստեան պատանւոյն՝ երկիւղահառն անձկութեաք։

Ոչ յառաջ Ռինցոյ, զի այսպէս կոչէին ամե-նեքեան զպատանին Լորենցիոս։ Այն ինչ՝ի գեալ Թուէցաւ նմա կարել՝ առանց անխոր-հուրդ երևելոյ՝ յանդիման լինել ժողովրդապե-տին, եւ առ նա պատանեկան զուարթի ձեռով, որպէս է իսկ բնական քաստամբին հանդերձ-ելոց սպակիլ առաքին ընդ խօսեցելոյն։ Ի աղա-ւոց որք մնացեալ էր նա՝ի ծնողաց. և էր մեսաքսագործ հայրենի արուեստիւ, որ գրե-թէ բովանդակ ազգատոհմին էր արուեստս, շա-հաբեր երբեմն՝ այլ յայնժամ անկեալ. սա-կայն տակաւին ճարտար ոք կարէր կեալնովաւ վայելչապէս։ Նուազեր օր ըստ օրէ գործ ա-րուեստին. այլ գործատուրայ հանապազօր չու-՝ի մերձաւոր ոտիմանս՝ ձգեալ՝ի խոստմանց և յարտունութեանց, և յառաւելագոյն վար-ձուց, Թողեալ մնացելոց յերկրին վաստակ ան-պակաս։ Ջանգերձ այսու՝ էր Ռինցոյի և կա-լուած փոքրիկ, զոր տայր գործել, և ինքն ևս՝ ՝ի դադարել մանուցային մեսաքսի՝ վաստակէր անդ, և էր նա յիւրաքանչիւր պայմանի բարեկեցիկ։

Բայց Թէպէտ և ամն այն էր նուագուԹեան քան զայլ ամս, և սկսանէր սպառսպուռ պատկասուԹիւն մեռաքսի, սակայն պատանին յորմէ հեռէ հարեալ էր ’ի սէր օրիորդին Լուչիայ՝ ձեռն արկեալ էր և ’ի միջնորդուԹիւն վաճառաց, և էր նորա սպրսուսա բաւական առ ’ի ձակատել ընդդէմ քաղցի։

Արդ յանդիման եղև նա ժողովրդապետին, զգեցեալ սպրկիկ, փետուրք երփնագոյն ’ի գլխարկի, դաշնակ ընդ մէջ յերախակալ դէղեցիկ, կերպարանօք հրճուանաց և քաջուԹեան, որպէս սովոր էին յայնժամ և արք խաղազասէրք։ ԸնդունելուԹիւն ժողովրդապետին տարաժամ և խորախորհուրդ, էր նորանշան լինն հակադրուԹիւն ընդ հրճուալից և պատրաստ կերպի պատանւոյն։ Զգաց պատանին զոյգս մտաց նորա, այլ անփոյթ արարեալ՝ ասէ.

« Տէր Հայր, քանիմն կը հրամմես հրամանքիդ հանգստեամբը, որ ժամը տեսնուինք »։—

« Ո՞ր օրուան քանիմն »։—

« Այս օրուան. միաքդ չէ՞ որ աս օրուան համար որոշուած էր »։—

« Այս օրուան! » որպէս Թէ նախկին նուագդ էր այն լսելոյ զայնմ օրէ, և կրկնէր և երեքկնէր. « Այս օրուան! աս օրուան! ԹողուԹիւն կընես, աս օր չեմ կրնար »։—

« Ինչո՞ւ, ինչ նոր բան հանդիպեցաւ »։—

« Նախ որ անհանգիստ եմ, կը տեսնես »...—

« Կը ցաւիմ անհանգստուԹեանդ վրայ. բայց կարճ է հանդէսը, աշխատանքը Թեթև »։—

« Երկրորդ որ... երկրորդ որ »...

« Երկրորդը ինչ է նայինք »։—

« Երկրորդ որ պաճուճ բան եղաւ գիմացնես »։—

« Պաճուճ բանը որն է, ինչ պաճուճ բան կըընայ ըլլալ »։—

« Պէտք էր իմ տեղս ըլլայիր՝ որ գիտնայիր ինչ արգելքներ կելլեն ժողովրդապետի մը գիմաց, քանի պատասխան ունի տալու. ես բարեսուԹեամբ կը ջանամ արգելքները վերցընել, ամեն բան գիւրացընել, ուրիշներուն ուզածը ընել՝ պարտքս ալ չկնայելով, ու եռքը յանդիմանուԹիւն ալ կը լսեմ, անկէց գէշն ալ »։—

« Պարզ խօսէ, գիս մտմտուքի մէջ մի ձգեր, յայտնի ըսէ ինչ բան կայ »։—

« Գիտես որ պատկէն առաջ ինչ բաներ կան ընելու, որպէս զի կանոնաւոր ըլլայ »։—

Ձայրանալ սկսաւ պատանին, և ասէ. « Ալ պէտք է որ գիտնամ. աս օրերս հոգիս հանեցիր, դեռ չկրցինցաւն ըլլուելու բաները. ինչ որ ըսիր՝ ամեն բան եղաւ »...—

« Ամեն բան! դուն տասնկ կը կարծես... կայնէ... բայց յանցանքը, իմս է. ուրիշներուն խնայելու համար՝ ես իմ պարտքս կը պակսիմ. ես գիտեմ ինչ կը քաշեմ. ժողովրդապետականները, այսինքն մենք, սալն ու ուռան մէջ ենք. դուք ալ քիչ մը համբերել չէք գիտեր. բայց կը խղճամ վրանիդ. մեկալ գիշեր ալ մեծաւորները... հերիք է, ամեն բան չքսուիր. մեր գլուխը կը ցաւի »։—

« Բայց ըսէ մէյմը, դեռ ուրիշ ինչ կայ ընելու, ըսէ որ մէկէն ընեմ, լմննայ » : —

« Գիտես որ ինչ արգելքներ կան, որ պահակը կը քակէն » : —

« Ի՞նչպէս կուզես որ գիտնամ » : —

« Վրիպակ, պայման, ուխտ, ազգակցութիւն, եղեռն, կրօն, անհատաստութիւն, բռնութիւն, կարգ, և այլն և այլն » :

Եւ երբեմն զայրոյթէ տեր Ալոնսոս 'ի վերայ ծայրից մտաանցն 'ի համար ածէր 'ի դրոց բարբառ, կրճատեալ պատանին զխօսս նորա, և ասէ.

« Ծաղը կընես զիս, ես գրաբառ չեմ հասկընար » : —

« Թէ որ չես հասկընար, ես ինչ ընեմ, հասկըցօղի մը հարցուր » : —

« Շուտ ըսէ նայինք » : —

« Կամայ, սիրելի Լորենցիկս, մի բարկանար. պատրաստ եմ ընելու ինչ որ կրնամ, կուզեմ ուրախացընել զքեզ, ուզածդ ընել : Ո՛հ... երբ չանկի էիր, ինչ կը պահէր քեզի, ուսկից միտքդ ինկաւ սա կարգադրիլը » ... —

« Այո ինչ խօսք է, համբերութիւնս կը հատ ցընես, տէր Հայր » : —

« Խօսքի համար ըսի. կուզեմ դոհ ընել ըզքեզ » : —

« Ո՛րբեմն » : —

« Ո՛րբեմն, սիրելի որդեակ, յանցանքը նմա չէ, օրէնքը ես չեմ դնողը. պահակն առաջ խել մը բաներ կան քննելու. ատոր գիտնալու է որ արգելք մը չըլլայ մէջ տեղը » : —

« Հոգիդ սիրես՝ Թող ատ խօսքերը, ըսէ մէյմը՝ ինչ արգելք դուրս ելաւ » : —

« Թողութիւն ըրէ, երկու ոտքի վրայ ըսելու բաներ չեն. յուսամ որ բան մը չըլլայ, բայց պէտք է քննել. օրէնքը յայտնի է. Մինչև հրապարակել զգեստն » ... —

« Ըսի հրամանքիդ որ գրաբառ չեմ ուզեր լսել » : —

« Բայց կը մեկնեմ քեզի » : —

« Դեռ չիքննեցիր » : —

« Նորէն ըսել կուտաս, դեռ ամեն քննութիւն չըրի՝ ինտոր որ պէտք էր » :

« Ինչո՞ւ առաջ իր ատենին չըրիր, ու ամեն բան պատրաստ է կըսեիր. ինչո՞ւ եռքի վայրկեն նեին Թողուցիր » : —

« Չիմայ եկուր տես. քու բարիքդ ուզելուս համար՝ յանդիմանութիւն ալ կը լսեմ քեզմէ. ամեն գժարութիւններու յաղթելի՝ քեզի ծառայելու համար. բայց հիմայ բաներ դուրս եկան. կ'օգտե. իմ գիտնալու բանս է » : —

« Հիմայ ինծի ան ըսէ, ինչ կուզես որ ընեմ » : —

« Կուզեմ որ քանի մը օր համբերես. քանի մը օրը չկըմննար չէ, համբերէ որդիս » : —

« Բայց ինչուան երբ » : —

Յայնժամ Տէր Ալոնսոս ասելով 'ի մոի՝ « Փառք աստուծոյ, նաւահանգիստը հասանք », և վայրկ մի զկայ առեալ 'ի խորհել, ասէ ապա բարեձեւութեամբ լմն.

« Տանը հինգ օրուան մէջ կը ջանամ լմնցընել, կը փորձեմ » ... —

« Տաւնը հինգ օր ! ասս ալ նոր բան. առաջ ինչ որ ըսիր՝ ըրինք. պահկին օրը որոշուեցաւ, և կաւ հասաւ, հիմայ կուգես որ տասնըհինգ օր ալ դեռ սպասենք » : Աստանօր ցասմամբ և դոչիմամբ, « Տասնըհինգ օր, հա՞ », ասելով, 'ի վեր էառ ղբաղուկն, և կուռւի ընդ օդս ամբարձեալ, ո՞ գիտէ ինչ պատրաստեր առնել. բայց Ժողովրդապետին փութացեալ կալեալ զմիւս ձեռանէն նորա ահ ընդ ահ, ողբերը վնա գգուանօք. « Մի այլայլիր, սիրելի որդեակ, կը ջանամ շաբթուան մը մէջ լմնցնել Թէ որ կարելի է » : —

« Հապա Լուվիային ինչ պիտի ըսեմ » : —

« Յանցանքը իմ վրաս ձգէ » : —

« Հապա ամենուն խօսքին » : —

« Ըսէ ամենուն՝ որ ես սխալեցայ արտորնօք, խիստ բարեսրտութենէս. իմ վրաս ձգէ բոլոր յանցանքը. ասկէց պարզ կրնամ խօսել. շաբաթ մըն է քեզմէ ուզածս, եօթը օր » : —

« Բայց եռքը ուրիշ արգելք մըն ալ չելլէ դուրս » : —

« Ըսէ քեզի » : —

« Ակէկ է. շաբաթ մըն ալ կը համբերեմ. բայց ակէկ միտքդ պահէ, շաբթէ մը եռքը՝ ալ առանկ փուշտումուշտ խօսքեր չեն անցնիր » : Եւ զայս ասացեալ՝ եղ'ի բաց, ողջունելով զտէր Աստնտիոս, բայց նուազ քան զօրէն հանապազ զօր խոնարհեալ զգլուխ, և 'ի դար հայելով 'ի նա՝ քան ակնածութեամբ : Եւ եղեալ դնայր 'ի տուն խօսեցելոյն, գժուարաքայլ զայս նախ կէն նուագ, և սրտառուչ. յուշ լինէր նմա խո-

սակցութիւն Ժողովրդապետին, և ևս քան զևս Թուէր նմա անտեղի. ցուրտ ընդունելութիւն նորա, բռնաղբօս և խռովեալ բանք, դարձեալ զայն բոլոյն անդադար այսր անդր 'ի խօսքին տատանել՝ խնթալով ինն ընդ բանսն եղեալս 'ի շրթանցն, յանդգնս լինել ժամադրելոյ աւուր պահկին, և մնանաւանդ ակնարկել նորա 'ի ծանր լինչ զոր չիմաց ասել յայտնապէս, այս ամենայն ապրին կասկածել պատանւոյն՝ զի էր այլ լինչ 'ի պատճառանաց Ժողովրդապետին խորհուրդ 'ի նեղբոյ, և կայր պատանին 'ի տարակուսի, դառնալ յետս և 'ի նեղ արկանել զնա՝ յայտնագոյնս խօսելոյ : Այլ զաչս 'ի վեր առեալ՝ տեսանէ զաղախին նորա, զի մտաներ 'ի պարտէզ ուրեք փոքրիկ մերձ 'ի տուն անդր. ձայնեաց զնա, և երագեալ զքայլս՝ եհաս զհետ նորա. կալաւ զնա 'ի սեամն անդ, և առ 'ի հետաւորել որոշ լինչ 'ի բերանոյ նորա՝ զկայ էառ խօսել ընդ նմա. ասէ. « Բարի լոյս, Փերփիքթուա, կը յուսայի որ այսօր մեզի հետ ուրախանայիր պիտոր » : —

« Բայց Աստուած տանի ուզեց, խեղճ Լուբենցկիս » : —

« Սա ընդհարք ըրե ինձի. օրհնած Ժողովրդապետը քանի մը պատճառներ կարկըտաց՝ որ չկրցայ ակէկ մը հասկընալ. ըսէ ինձի, ինչո՞ւ չկրնար, կամ չուզեր, այսօր պահկիլ մեզ » : —

« Կը կարծեմ որ ես իմ սիրոյնս գաղտնիքը գիտեմ » : —

« Իմացայ որ տակը գաղտնիք մը կայ », ասէ Ռիչցոյ 'ի մոի, և առ 'ի ձգել զայն 'ի լոս՝ յա-

ւելու։ « Այս լեզուն մի բաներ լինծի հետ, փէր-
փէթուա, բարեհամ ենք, ըսէ ինչ որ դիտես,
խեղճ ոբբի մը օգնէ »։ —

« Աղքատ ծնած ըլլալը դէշ բան է, սիրելի
Լորենցիկս »։ —

« Իրաւ է », ասէ պատանին՝ առաւել ևս հաս-
տատեալ 'ի կասկածանս իւր, և խնդրելով մե-
ծել 'ի խնդիր իւր՝ ասէ. « Իրաւ է, բայց
պէտք է որ եկեղեցականները աս կերպով վա-
րուին աղքատներուն հետ »։ —

« Մանկ ըրէ, Լորենցիկ. ես բան մը չեմ կըր-
նար բերնէս հանել, ինչու որ... բան մը չեմ
դիտեր՝ բայց այսչափը կրնամ ըսել քեզի ասա-
հով, որ իմ տէրս չուզեր անկրաւութիւն ընել,
ոչ քեզի, և ոչ ուրիշի, յանցանքը իրը չէ »։ —

« Ողբերն որմ՞ունն է », ասէ պատանին անհո-
գութեամբ լեալ, այլ վարանեալ արտիւ և պա-
տրաստ լսելեաց։ —

« Երբոր կըսեմ որ բան չեմ դիտեր... բայց
տէրս պաշտպանելու համար՝ այսչափ միայն
կրնամ ըսել. վասն զի խիստ դէշ կըլլամ, եր-
բոր տէրս կը մեղադրեն՝ իբրև թէ ուրիշներուն
դէմ ըրած ըլլայ. խեղճը անգլիի ծայրը կանցնի
իր չափազանց բարեսրտութեամբը. աշխրքիս
վրայ շատ անզգամ ու բռնաւոր մարդիկ կան,
Աստուածմէ չվախցող »։ —

Յայնժամ խորհելով պատանեւոյն՝ զի շա՜ տ
պզտիկ ու բռնաւոր մարդիկ չէր մարթի ազախինոյն ա-
սել զմեծաւորաց, և ծածկելով զյոյզս մտացն՝
որ յառելուն, ասէ. « Քեզ նայիմ, քեզ նայիմ,
ըսէ ով ենատ անզգամ մարդիկը »։ —

« Ա՛խ, դուն կուզես խօսել տալ ինծի, բայց
ես չեմ կրնար խօսիլ, ինչու որ... բան մը չեմ
դիտեր. երբոր բան մը չեմ դիտեր, նոյն բանն
է որ երդում ըրած ըլլայի՝ մարդու չբսնելու.
տանջանքի ալ դրուելու ըլլամ, բերնէս բան
չելլեր։ Ա՛նաս բարով, երկուքնուս ալ պարապ
տեղը տաճն կորսընցընել է »։

Զայս ասացեալ, եմնատ Ճեզով 'ի պարտէզ
անդր, և փակեաց զդուռնն։ Եւ պատանին ըն-
կալեալ զոզջոյն նորա, գառնայր յետս յօշտիկ՝
առ 'ի չտալ նմա դիտել ուր դիմեալ երթայր։
Այլ իբրև հեռացաւ այնչափ՝ զի ոչ ևս կարէր
ազախինն լսել, Ճեզեաց մեծաքայլ, եհաս իս-
կայն 'ի դուրս տան ժողովրդապետին. եմնատ
անդր, չոգաւ 'ի սրահն՝ ուր Թոզեանն էր զնա-
եդիտ զնա անդ, դիմեաց առ նա խիզախելով և
ահարկու աչօք։ —

Ասէ ժողովրդապետն. « Է՛, է՛. ի՞նչ կայ »։ —

« Ո՞վ է տատ բռնաւորը մարդը », ասէ Ուհնոյ
տատիս որպէս ոք՝ որոյ 'ի մոխ եզեալ էջ տա-
նուլ յայտնի պատասխանի. « ով է նայիմ տատ
բռնաւորը, որ չուզեր՝ որ ես առնեմ Լու-
էնան »։ —

« Ի՞նչ, ի՞նչ, ի՞նչ »... Թոզեովէ հէք ժողո-
վրդապետն՝ յանկարծ 'ի նեղ անկեալ, հատա-
նի գոյն երեսաց նորա անդէն, և լքանի Թու-
լացեալ որպէս ցնցոտի 'ի մխրաշրոյ այն ինչ
հանեալ. և քրթմնջելով ընդտտ 'ի Թիկնաթո-
ռոյն գիմե 'ի գուռն. այլ պատանեւոյն՝ որ մնայրն
պատրաստ՝ զի մի տացէ խոչ, լինքն նախ եհաս
շրջեաց զբանալին, և արկեալ զոյն 'ի գրպան

իւր, ասէ. « Հէ՛, հէ՛, կըսես հիմայ տէր Հայր. ամենքը բայ ինծմէ գիտեն ինծի եղածը, ես ալ կուզեմ գիտնալ. Տարիաւ ալիտոր ըսես, անուն նը ի՞նչ է »:

« Ինչնոյ Ինչնոյ, Հոգիդ սիրես, մոռածէ ըրածդ, Հոգիդ մոռածէ »: —

« Կը մոռածեմ. հիմայ չուտ մը ալիտոր ըսես »: Եւ յասէն զայս, Թերևս յանդգնասիրէ, արկ զձեռն յերեսակալ դաշնակին՝ որ ի վեր երեւէր ի գօտւոյն:

Աղաղակեաց Ժողովրդապետեան կերկերաձայն. « Ողորմէ »: —

« Կուզեմ գիտնալ »: —

« Ո՞վ ըսաւ քեզի »... —

« Փուճ՝ խօսքեր չեմ ուզեր լսել, չուտ ու յայտնի ըսէ »: —

« Մեռնիլը կուզես »: —

« Կուզեմ գիտնալ, երաւունք ունիմ գիտնալու »: —

« Բայց ըսելս ինծի մահ է. կեանքս ոսկի տակի կուզես որ առնեմ »: —

« Ուրեմն ըսէ »: Եւ ը֊ր֊ճ֊ զայն այնու սասպիս արտաբերեր, և տեսիլ պատանւոյն այնպես վառեր սպառնալից, զի անհրաժեշտ ըզհարկն համարեալ տէր Ապտնիոս, ասէ.

« Խօսք կուտամ ինծի, երդում կընես մէկու մը չբսելու անոր անունը »: —

« Խօսք կուտամ՝ որ չընելու բան մը կընեմ, Թէ որ հիմայ չուտ մը չըսես անունը »:

Ցայն վերայն բռնադատութիւն տէր Ապտնիոս պլպլեալ դիմօք և աչօք՝ որպես որ զաք-

ցան առաջնակիլ ի բերանի ունելոյ, սկսաւ յօդել. « Իչս... իչնանը »... —

« Իչնանը »· Երկներ Ինչնոյ, որպէս Թէ օգնելով տագնապելոյն արտաբերել զնացորդ վանկս անուանն, և կայր կորացեալ ունկն ի չրթունս Ժողովրդապետին, երկայնեալ ղբազդուկս, սեղմեալ յեակոյս ղբառունս: Իսկ նա բռնադատեալ, դրդուազելով ինն զանուն իչնանին, և արագելով զվանկս, երկայնելով ըզբազաձայնս, և զսակաւ ինչ միայեալ ուշ մոռացն Ժողովելով յերաւախոհութիւն երկիւղի ընդ երկիւղ, և կամելով ինն կերպարանափոխ առնել զանունն առ Հարկի, ասէ. « Իչնանը Ոսրիկ »: —

« Այն չէ՞նը », գոչէ Ինչնոյ. « Ի՞նչ ըրաւ, ի՞նչ ըսաւ. հիմայ կը տեսնէ »...

« Ի՞նչ հիմայ կը պտնէ »· յաւել տէր Ապտնիոս զայրացեալ. զի յետ մեծի զոհին՝ համարեր ուրնել երաւունս ի վերայ պատանւոյն: « Ի՞նչ հիմայ կը պտնէ: Կուզէի որ քեզի հանգիստած ըլլար ինչ որ իմ գլուխս եկաւ, առանց յանցանքի. ան առտեն երաշտնէ միտքդ չէր իյնար »...:

Եւ ասա արար սոսկալի ինն նկարագիր, զդժպատիժ անցեալն. և ի պատմելն ևս քան զևս զայրանայր ի նմա ցասումն, որ ցայնվայր ընկճեալ և ծածկեալ կայր յերկիւղի. և տեսեալ ևս՝ զի պատանին ընդ զայրոյթ և ընդ ամօթ ի գլուխս կայր անշարժ, յաւել Համարձակ.

« Ակռկ ծառայութիւն մը ըրիր ինծի. ատանկ վրաս յարձակիլ! պատուաւոր անձի մը վրայ! Ժողովրդապետիդ վրայ! իր տունը! սրբազան

աեղ ! մեծ քաջութիւն. բերնէս առնել կու-
զէիր գլուսս եւ ածը, քու փորձանքդ, որն որ
ես խոհեմութեան համար, քու բարեյոյս հա-
մար կը ծածկէի: Կուզէի սեռնել որ ինծի...
հոգիդ կը սիրես, թեթեւ բան մի կարծեր. աս
իրաւունք կամ անիրաւութիւն պնտռելու բան
չէ. ուժի գէմ պատերազմ է: Ա՛ս առաու քեզի
ալեկ խորհուրդ մը տալու առենս... գուն մե-
կէն հատղեցար. ինծի համար ալ, քեզի համար
ալ էր՝ խելք բանեցընելու. բայց ինչ օգուտ.
գոնէ սա գուռը բաց, բալւիքը ինծի տուր »: –

« Կրնամ սխալած ըլլալ », պատասխանեաց պատանին քաղցրութեամբ առ ժողովրդապե-
ան, այլ 'ի քաղցրութեան անգ զգացուցանէր զղայրոյթ իւր ընդդէմ յայտնի ստիճին. « Կրը-
նամ սխալած ըլլալ. բայց ձեռքդ կուրծքիդ վրայ դիր, ու մտածէ՝ որ ան իմ դիտաւորութիս
մէջ »... ասելով Եհան զբանալին 'ի գրպանէն, և գնայր բանալ զդուռնն: Չհետ Եհան աչք
Ա՛պենեհոս, և 'ի չոքել նորա զբանալին՝ մեր-
ձեալ 'ի նա, ծանր գիմօք և ակերսանաւք՝ ինն ամ
բարձեալ առաջի աչաց նորա զերեսին մատուռս
աջոյ ձեռին՝ իբր առ 'ի մատուցանել նմա օգ-
նութիւն, ասէ. « Գոնէ երգուամ մը ըրէ »...

Իսկ նա. « Կրնայ ըլլալ որ սխալած ըլլամ,
Թողութիւն կրնես », ասելով բանայր զդուռնն,
եւ անել 'ի բայ:

Կրկնէ աչք Ա՛պենեհոս. « Երգուամ ըրէ կը-
սեմ». և ոնգի զբաղիկ նորա գողոջման ձե-
ռամբ:

Կրկնէ Ռինոյ. « Կրնամ սխալած ըլլալ », և

զերծեալ 'ի ձեռանէ նորա՝ մեկնի շտապաւ,
կրճատեալ զվիճն՝ որ հանդոյն բանասիրական
և իմաստասիրական և այլոց խնդրոց կարէր եր-
կարատեւել անդադար, երկաքանչիւրոց կողմանց
զպատճառս իւրեանց յար կրկնելով:

Ժողովրդապետն 'ի զուր ձայնեալ յետս ըզ-
փախստեայն, կոչէ ապա զնաղանինն, Փէրթէ-
ռոա, Փէրթէռոա: Փերփէթուա ոչ պատասխա-
նէ. ոչ ևս գիտեր աեր Ա՛պենեհոս ուր կայցն:

Դէպ եղև երբեմն արանց աւագապետնէց
յոյժ քան զնա, անկանել յոչնախի անհնա-
րինս. և 'ի վարանս տարակուսի՝ միայն հնարս
գտանէին կալ 'ի մահիճն՝ որպէս թէ ջերմամբ:
Ա՛ւանց խնդրելոյ ժողովրդապետին զոյս հը-
նարս, ինքնին ընդ առաջ եղև նմա ջերմին. տա-
պատեալ և այլայլեալ անկաւ 'ի թիւինաթոռ
իւր, և տարտուռ զտակերթքն գայր. գիտեր զե-
զընդունան, և երբեք երբեք գողդոջ և զայրա-
գին ձայներ, Փէրթէռոա, Փէրթէռոա: Ա՛նագան
ուրեմն եկն Փերփէթուա, կազմեալ ստուար
ընդ անթով, պարզերեալ՝ որպէս թէ չէր ինչ
պատահեալ: Խնայեմատաչքնեցողն, չտալա-
կացուցանել զնա 'ի ձեռս արանցնոց ժողո-
վրդապետին, և յաւելցուածեան բանից ա-
զանոյն, բողոքոյ միոյն, և միւսոյն զանձն ար-
դարացուցանելոյ, յանգիմանելոյ նորա զազա-
խինն՝ թէ Դուն գիտն կընայիր խօսքը դուրս հանել, և
սորա պատասխանելոյ՝ թէ Ես բերնես բան չեմ հա-
նած: Լռեալ ատա զերկայն բանակռուածեան
նոցա, չատ է ասել՝ զի հուսկ ապա աեր Ա՛պեն-
ոհոս պատուէր ետ նմա դնել զնիզ գրանն, և

մի ևս բանալ ուժեք, մի և մի երկիք աղագաւ. և որոց բաղխեցեն՝ տալ պատասխանի, զի ժողովրդապետեան 'ի մահիճս կայ տենդիւ: Եւ ինքն քրիստիկէլով Աղաւ վրյ՛ մը առէ՛, եւ ընդ սանդուղս 'ի սենեակ իւր, և առաւօտիւ անկաւ 'ի մահիճս. անդ թողցուք զնա առ այժմ:

Յայնմ վայրի Ներսոյ զայրագին ձեռով զբօնայր 'ի առն, չև սահմանեալ որ ինչ պարան էր առնել, այլ 'ի մոլ եղեալ առնել ինչ նորանշան և սոսկալի: Որք միանգամ գրգռէին և հարցս առարեն զայլս, և ամենեքեան իսկ՝ որք անխրաւին իւիք այլոց, պարտաւորք էն՝ ոչ միայն չարեացն զոր գործեն, այլ և եղերանցն՝ յորս մղեն զոգիս հարատահարելոցն: Ներսոյ էր պատանի խաղաղասէր, և սոսկայր յարենէ, պատանի անկեղծ՝ թշնամի նենգութեան. այլ յայնժամ սիրտ նորա ոչ այլ ինչ ցանկայր՝ բայց սպանութիւն, և 'ի գաւառանութիւն մտաբերեր: Կամէր գիմել 'ի առն Խոսրիկ իշխանին, ուսնել զնա զիսոցին և.... այլ յուշ եղև նմա՝ զի էր առն նորա՝ իբրև. ամրոց, պահեալ ներքուստ 'ի Քաջաց, և զգուշացեալ արտաքուստ. բարեկամք ևեթ և սպասաւորք մտանէին անդր քաջածանօթք, այլք առհասարակ՝ զննեալք յառնոյ ցկըցուս. և որպէս կարէր ձեռնարկուստ ոք անծանօթ մտանել անդր՝ առանց խնդրոյ քննութեան, մանաւանդ զի... Թերևս կարի խիստ ծանուցեալ էր ինքն: Խորհէր առնուլ զնրազէն իւր, և դարանամուտ լինել 'ի ցանկս ուրեք, սպասել եթէ երբեք գայցէ անդր իշխանն. և խորասուզեալ 'ի խորհուրդս յայս, ցնորեր

լսել ոտնաձայն. 'ի վեր առնոյր լռելեայն ըզգեղս իւր առ 'ի ձանաչել զեկեղեցասուրն, ուղղել 'ի նա զնրազէն, տատապատ արկանել զնա 'ի մահ, արձակել անհծս 'ի նա, և գիմել յերս սահմանաց՝ առ 'ի կալ յակառամանի: — Ա՜յլ Լուչնա. — Ա՜յն ինչ անուն այս 'ի մէջ խոտորնակ խորհրդոցն անկեալ 'ի միտս նորա, խորհուրդք լաւագոյնք՝ յորս սովորեալ էին միաք իւր՝ խուռն գարձան 'ի նա: Յիշեաց զվերջին խրատս ընտանեաց իւրոց, յիշեաց զԱստուած, զսիրամարյրն, և զամենայն սուրբս, խորհեցաւ 'ի միխթարութիւնն՝ յոր սակս վայելէր զերծ 'ի խղճէ չարեաց, և 'ի սոսկումն՝ զոր յաճախ զգայեալ էր 'ի լուր սպանութեանց, և զարթեաւ յերազէզ անտի զարիւն զարհուրանօք և խղճիւ, և ուրախութեամբ էա՝ վասն չառնելոյ իւրոյ ինչ չար, բայց 'ի մտաբերելոյ յայն: Բայց յիշատակ օրիորդին քանի՛ այլ խորհուրդս զինք առեալ բերէր. այնչափ ակնիալութիւնք, այնչափ խոստումունք, սպագայ ցանկալի սպասուհեալ, և օրն՝ որում ըղձիւք հասանէր. և որպէս, և որովք բանիւք յայտնել զայն օրիորդին, զի՞նչ հնարս խորհել, որպէս ժառանգել զնա ընդդէմ բռնութեան հզօրին: Հանդերձ սոքիմբք և կասկած լինն անհիմն, այլ տանջողական անկանէր 'ի միտս նորա, թէ գուցէ բռնութիւն իշխանին չարժէր 'ի մղեգին լինն տափանաց ընդ Լուչիայ: Այլ օրիորդին և ըստուերաբար ինչ պատճառս տալ առ այն, չկար և ոչ տեղի գտանել 'ի միտս պատանւոյն. այլ գիտէր արգելօք օրիորդն զայն. կարէր իշ-

խանն 'ի վառ կերան ըմբռնել, առանց զգալոյ ջան օրհորդին. կարէր ցոյնակայր խելագնել, առանց փորձ ինչ փորձելոյ. և Լուչիայի չէր ինչ երբեք ասացեալ զայնմանէ խօսեցելուն:

Յուզեալ 'ի խորհուրդս յայսոսիկ՝ անցանէր զառաջեաւ ատն իւրոյ, որ էր 'ի շինամիջն. և ոչ մտեալ անդր, չոգաւ 'ի տուն օրհորդին, որ կայր 'ի ծայր շինին, փոքր մի ևս արտաքոյ: Ատաղձ անակին էր գաւթի փոքրիկ, որ անջրպետէր զայն յուշոյն՝ պատեալ փոքրիկ որմով: Եմուտ Ինդոյ 'ի բակն, և լսէր չշունչ ինչ խառնաձայն և անընդհատ, 'ի սենեկէ ուստեք 'ի վերուստ. խորհեցաւ զի էին Թերևս կնքամարք և բարեկամուհիք յայց եկեալք օրհորդին, և ոչ կամեցաւ մտանել 'ի ժօնավաճառ անդր լսուիլ այնուհետ՝ որ գրաւէր զմիտս նորա և զդէմս: Դատրկ մի, որ էր 'ի գաւթին, դիմաց ընդ առաջ նորա գոչելով. « Փեսան է, փեսան է »: — Իսկ նա ասէ. « Զայն մի հաներ, Եղսաբեթիկս, ձայն մի հաներ. եկուր հոս. վեր գնա Լուչիան մեկդի կանչէ, ըսէ ականջին... բայց ուրիշը չլսէ, չնկատածի... ըսէ որ բան մը ունիմ իրեն զուրցելու, հոս վարի խուցը կը սպասեմ, շուտ մը Թող գայ »:

Եւ գտաբերին ձեռով ընդ անդուզան, գոհ և խրոխտ ևս ընդ գաղանի պատգամաւորութեանն: Յայնմ վայրի ելանէր Լուչիա, զարգացեալ և պաճուճեալ 'ի մօրէն. բարեկամուհիք նորա յափշտակէին զնա 'ի միմեանց, և ուժգին կամէին տեսանել զնա. իսկ ինքն անցանէր դնայր հանդուրժեամբ գեղջիկաւ, փոքր մի վհատ

նուաղականաւ, ասպար զարմուհին գործելով առ 'ի ծածկել զդէմն, և գլուխ 'ի վայր 'ի լանջսպասնային խոնարհեալ, կկզեալ զսեաւ և զերկայն չգնան. այլ շրթունք նորա բացեալ 'ի ժպտելոյ: Զսևաթոյր գալարահեր գիսակն բաժանէր 'ի ձախատուն ատեղն նուրբ փայլատակ, և ծալ 'ի ծալ պատեալ վարսիցն շուրջ զգլխով՝ անկանէին յետակուսէ խոպոպիք, և փողշուիկք շուրջանակի երկայնք յօրինէին ձաւադայթս հանգոյն պսակի սրբոյ, որպէս վարեն ցարդ գեղջկուհիք երկրին Միլանու: Կրէր 'ի պարանոցի մանեակ 'ի վանդակագործ հատից յեռեալ ընդ մեղեսիկ. լանջպատնակ գեղջիկ յոսկեթել ծաղկեայ գիպակէ, և Թեզաներիք ուրոյն կցորդեալք ընդ նմին երփնագեղ նարօտիւք. շրջազգեստ հանգուցն մեռաքսեայ խորշկէն 'ի խիտ և 'ի նուրբ փոթորատծ, գուրպայք կամբերփեան, և մուճակք մետաքսեայք ասլնեգործք: Բայ 'ի հարսանեկան զարգուց ատսի՝ էր հանատպազօրեայն նորա գեղ պարկեշտ, և պայծառացեալ յայնժամ 'ի պէսպէս կրից՝ որ նկարէին 'ի գէմն իւր, զուարթուեալ Թիւն քաղցրախառնեալ 'ի Թեթև ինչ յուզմանէ սրտի, և տխրութիւնն խաղալ՝ որ երբեք երբեք երևի յերեսս հարսանց, և առանց եղծանելոյ զգեղ նոցա՝ շնորհս ինն յատուկ յաւելուլ 'ի նոսա: Եմուտ Եղսաբեթիկն 'ի կանանն, մտաեաւ առ Լուչիա, ծանոյց զգուշութեամբ՝ զի ունէր ինչ ասել նմա, և ասաց ցնա յունկանէ քաղցրիկ բարբառովն:

Եւ Լուչիա ասէ ցկանանին. « Ինչ մը կեր-

թամ, շուտ մը կը դառնամ». և ինչպէս ձեռով առ Ռէնեյոյ. և՝ ի տեսանելն զնա այլայլեալ և խռովեալ, չարադուշակ եմն երկիւղիւ հարեալ նէ. « Ի՞նչ կայ » : —

Պատասխանէ Ռէնեյոյ. « Լուչիա, այսօր չըլլար պսակը, ու Պատուած գիտէ ե՛րբ կըլլայ » :

« Ինչո՞ւ », ասէ Լուչիա. և պատմէ նմա պատանին զանցս առաւօտուն : Իսկ նա ունկն դնէր տագնապալեալ. և երբեմն լուսաւ զանուն Պօտրիկ իշխանին, զգոյշանի հարկաւ և շառագունեալ գոչեաց. « Ինչուան հո՛ս, հա՞ : — Ոչ՛ւեմն գիտէիր դուն », ասէ պատանին : — Պատասխանէ Լուչիա. « Գիտէիր ըսեն ալ խօսք է··· բայց ինչուան հոս չէի գիտեր » : —

« Ինչուան ո՞ր գիտէիր » : —

« Կը խնդրեմ, հիմայ խօսել մի տար ինծի, մի լացընէր զիս. շուտ մը երթամ կանչեմ մայրս, ու հինկները ձամբեմ, պէտք է որ մինակ խօսինք » :

Եւ՝ ի մեկնել նորա՝ գանգատեր պատանին, թէ « Ինչո՞ւ ինծի բան մը չըսիր » : Իսկ օրիորդն առանց դէպ առնլոյ՝ գարձաւ վայրկ մի՝ ի պատանին և « Ո՛հ Ռէնեյոյ » ասելով մեկնեցաւ՝ ի բաց :

Զգայ Ռէնեյոյ յեղանակէ խօսիցն և ձայնին, և՝ ի կոչելոյ զինքն յանուանէ, զոր ինչ կամէրն ասել՝ զի սուրբ և իրաւացի պատճառք էին իւր լռելոյ, և զի զարմանայր ընդ կասկածանս իւր :

Յայնմ վայրի մայր օրիորդին Ագնէս, կասկածելով ընդ բանն յուշկանէ ասացեալ, և

ընդ գտեր դիմել՝ ի վայր, էջ առ՝ ի գիտել զնոսն : Եթող զնա Լուչիա ընդ պատանւոյն, և ինքն եւ առ կանանին. և յարդարեալ զդէմս և զբարբառ ըստ կարի, ասէ. « Ծողովրդապետը հիւանդ է եղեր, այսօր պսակը չկրնար ընել » : Եւ փութանակի ողջունեալ զնոսա, էջ անդրէն : Նոքա մեկնեալ մի ըստ միոջէ, սիրեցան պատմել զդէպսն. և երիւս գամ երեք՝ ի նոցանէ չոգան՝ ի գուրսն ժամանան, ստուգել՝ թէ արդարև հիւանդացեալ էր ժողովրդապետն :

Պատասխանի եւս աղախինն՝ ի պատուհանէն. « Սաստիկ ջերմը բռնեց » . և տխուր բարբառ նորա անցեալ բերան՝ ի բերան, խափանեաց զդուշակութիւնս՝ որ սկսանէին խլըտել՝ ի միտս նոցա, և զիկտուր բանս նոցա ընդ քօղով :

Գ. ԼՈՒԽ Գ.

Եմուա Լուչիա՝ ի սենեակն վայրապարկ՝ ի պատմել պատանւոյն հառաչանօք զիրսն՝ ի լուր Աքնեասի, որ ուշին գներ վշտագին: Երկոքին՝ ի միասին դարձուցին զաչս՝ առ որ աւելի ինչ գիտեր, և յորմէ ինայեն յայտնութեան աղետիցն, և՝ ի վիշտս անդ այլևայլ սիրոյն՝ որով երկաքանչիւր սիրէին զՈւչիա, տխրութիւն այլ և այլ կրեին՝ ի սրտի վասն լսելոյ նորա ինչ յինքեանց, և այնպիսի ծանր ինչ: Աքնէաս, թէպէտև ցանկայր լսել խօսելոյ դառերն, սակայն չկարաց ժոյժ ուշել՝ ի յանդիմանելոյ զնա, և ասէ. « Ապրիս, մօրմէդ ալ կը ծածկես ասանկ բան »:

Պատասխանէ Լուչիա, սրբելով զերկնակաւոր զարտասուս.

« Չիմա ամեն բան կը պատմեմ ձեզի »: —

« Պատմէ, պատմէ »։ աղաղակեցին երկոքեան ՚ի միասին, մայրն և պատանին։ —

Օրիորդն ասէ. « Սիւրբ աստուածածինն, ով կը կարծէր՝ որ բանը լինչուան հոս հասնի »։ Եւ կերկերաձայն յարտասուաց՝ պատմեաց թէ որ պէս աւուրքը յառաջ ՚ի դառնայն ՚ի մանուկ, յեսկզբան միացեալ էր յընկէրացն. և իշխանին հանդիպեալ նմա ընդ այլոց ուժեին, կամեցեալ էր զբանիւք անկանել ընդ իւր. և որպէս լինքն ասէր խօսք նեթել ինծի։ Այլ լինքն չլսելոյն արա՛ բեալ և երագեալ զընթացս, հասեալ էր ըզ հետ ընկերացն, այլ լուեալ զքրքիջ միւսոյն, և զիշխանին ասել ցնա. Ջ փարաւոխիր. վաղը կը գեա՛ նաս։ Եւ ՚ի վաղիւ անդր կայեր նոքա առ ձանա՛ պարհաւն, և Լուչիայ յանցանել ընդ ընկերան՝ աչք ՚ի խնարհ՝ լուեալ էր գարձեալ զիւրսոյն ծիծաղել բարձրաձայն, և զիւորիկեալ ասել. կը գեա՛նաս, կը գեա՛նաս։ Եւ յառաջ ածեալ օրիորդին զպատմութիւնն, ասէ. « Այսուհած աուաւ որ՝ ան օրը էաքն օրն էր մանոցը երթալնուս. չուտ մը պատմեցի »... —

« Որո՛ն պատմեցիր նայինք », ցասմամբ լինի ՚ի վերայ էած մայրն՝ ՚ի լուր անո՛ւան մտերմա դուհին նմա քան զինքն։ —

Պատասխանեաց դուստրն քաղցրութեամբ. « Խոսովանահօրս, մարիկ, Հայր Բրիստափո րին. անոր ամեն բան պատմեցի էաքն անգամն որ մեկտեղ վանքին ժամը գացինք. ու ան առաւոտ, կը յիշես որ կուշանայի անտնալով, որ պէս զի գեղէն ուրիշ գացողներ ալ ըլլային դէպ ՚ի նոյն ճամբան՝ որ մեկ տեղ էրթայի.

վասն զի ան բանը պատահելէն էաքը՝ խիստ կը վախնայի ան ճամբանէրէն մինակ էրթալու »։ —

Ի լուր պատկառելի անուան Հօրն Բրիստափորի՝ քաղցրացաւ ցասումն մօրն, և ասէ. « Ա՛ղեկ ըրեր ես, աղջիկ, բայց ինչո՞ւ մօրդ ալ չես պատմեցիր ատ ամեն բանը »։

Կրկին պատճառաբէն դատերն զօրաւորեր մի՝ զի չկամէր տալ մօրն արտմութիւն և երկիւղ, ուր չէր նմա հնարս չարեացն հայթայթել. և միւս կա՝ զի մի հուշակեացին իրքն, զորս ՚ի խոր լռութեան կամէր ընկղմել. մանաւանդ զի յոյսայր խափանել հարսանեաց անդէն ՚ի պղբան զգաչգի հալածանան։ Այլ յերկուց ասոկ պատճառաց զառաջինն ևեթ ասաց մօրն։ Եւ գարձեալ հայեցաւ առ պատանին ՚ի կերպ խնամուտ առնելոյ զբարեկամ՝ որոյ չկացեն իրաւունք, և ասէ.

« Իսկ քեզի ! պէտք էր ըսեի. աղեկ հասկըցար հիմայ »։ —

« Ուրեմն ինչ ըսաւ քեզի խոսովանահայրդ », հարցանէ մայրն։ —

« Ըսաւ որ քանամ, որչափ որ կարելի է, փութացընել հարսնիքը, ու ինչուան ան առեղը անդէն դուրս չելլեմ՝ որ հասկընայ իշխանը։ Ա՛ս յոյսն ալ ունէր՝ որ իշխանը գիս չխաեանեւ լով, ալ ետեւէս կգնայ »։ Եւ գարձեալ յայնժամ ՚ի պատանին՝ առանց զաչս ՚ի վեր առնելոյ, և չառագունեալ բոլորովին՝ ասէ.

« Ան առեղն էր որ սոխպուեցայ աներեսուԹիւն ընել, աղաչել զքեզ՝ որ չուտ մը որս

չուած առեւնէն առաջ ջանայիր լինցընելու պը-
սակը: Ո՞վ գիտէ ինչ անցուցիր ան առեւը մըտ-
քէդ իմ վրաս, բայց ես քու աղէկութեանդ
համար ըրի՝ խոստովանահօրս խորհրդովը, ու
սոյպ միտքս դրեր էի որ... բայց աս առտու
ամենևին մտքէս չէր անցներ »...: Աստանօր 'ի
բուռն ուղխից արտասուաց ոչ կա՛ր կարաց բար-
բառել: Իսկ պատանին գոչելով՝ « Ա՛յ անզգամ,
այ գժոխքի հոգի, այ աւազակ », երթևեկէր
'ի սենեկին, առեալ յերբահակալ դաշնակին
բուռն հարեալ: Անդուստ և մայրն հառաչանօք
ասէր. « Ո՛հ, տէր Աստուած, աս ինչ պռձոկ
բանի մէջ ինկանք »: Եւ յանկարծ զկայ առեալ
պատանին առաջի օրիորդին՝ որ արտասուէր,
հայեցաւ 'ի նա գորովանօք, և ընդ սիրուքիւն
և ընդ ղայրոյթ, ասէ. « Այս եղբն անօրէնու-
թիւնը ըլլայ ան անզգամին »:

Գոչեաց յայնժամ Լուչիա. « Ո՛հ, մի, հոգիդ
կը սիրես. Աստուած աղքատին օգնականն է.
բայց ինչպէս կուզես որ օգնէ մեզի, երբոր
մենք գէշութիւն ընենք »: —

Յաւել և Ագնէս. « Չէ, չէ, հոգիդ կը սի-
րես՝ չէ »:

Յայնժամ օրիորդն յուսալից դիմօք և խա-
ղաղագոյն խորհրդով ասէ.

« Ինձնոյ, դուն ձեռդ արուեստ ունիս, ես
ալ գիտեմ աշխատիլ, հեռու տեղ մը երթանք,
որ և ոչ լուրերնիս կարենայ առնել »:

Պատանին ասէ. « Ա՛հ, Լուչիա, եղբը! գեռ
պատուաճ չենք. ժողովրդապետը կուսաց մե-
զի վկայական չիկարգուած ըլլաշուս, անոր

պէս մարդը: Թէ որ պսակուած ըլլայինք, ան
ատենը ինչ որ է »... —

Օրիորդն անգրկեն սկսաւ արտասուել, և
կայնն երեքին ևս 'ի լուռ թեան, լուծեալ լը-
քեալ, որպէս զի տխուր իմն հակադրութիւն
էր անդ տեսանել հարսանեկան զգեստուց նո-
ցա ընդ կիրս սրտիցն:

Եւ ապա ասէ մայրն. « Մտիկ ըրէք որդիք,
ես ձեզմէ առաջ ծներ եմ, քիչ մը աւելի կը
ճանչնամ աշխարքս. պէտք չէ առջեւի վախ-
նաք, սատանան այնչափ տզեղ չէ որչափ որ կը
նկարուի: Մեղի պէս խեղճերուն՝ եւեղբօ խառ-
նուած կերևնայ թենճուկը, չենք գիտեր ծայրը
գանալ. երբեմն գիտուն մարդու մը կարծիքը,
մեկ խօսքը... զուրցածս գիտեմ, Ռէնցոյ՝ շուտ
մը Լէքքոյ պէտ, հոն փաստաբան մը կայ, ո-
րուն անունն է Ընձառ փոլտ. գիտը, ու պատմէ
երեն... բայց հոգիդ սիրես, աս անունը մի տար
երեն, ասիկայ մականուն մը անցուցեր են ի-
րեն. պէտք է ըսես՝ Սինեօռ տօթթօրէ: Ինչ է
բուն իրեն անունը՝ չեմ յիշեր. կեցիր... ա՛հ...
միտքս չիգար. ամենքը ան անունովը կը կանչեն
զինքը. հերիք է, հարցուր երկան տօթթօրը,
մորուքը կարճ, քիթը կարմիր, երեսին վրայ
մեծ կոծիծ մը: —

Պատանին ասէ. « Տեսած եմ զինքը, կը ճանչ-
նամ »: —

« Ա՛լ աղէկ », ասաց Ագնէս, և յաւել. « Ա-
նիկայ դլուխ ունեցող մարդ է. անանկներ տե-
սած եմ որ խծուծի մէջ ինկած ձագէ մը եւել
նեղը ինկել՝ դլխընին ուր զարնելը չէին գիտեր,

քիչ մը առեն Թնճուկ քակող փաստաբանին հետ միևնակ խօսելէն եառը (նայէ, չըլլայ Թէ ասանկ կանչես զինքը), ուրախ զուարթ դուրս ելեր են: Կեսկը, սա չ՚ըս հաւէրն որ ալիսի մորթելի կիրակուան համար, հետդ առ, տար երեն. վասն զի պարապ ձեռքով չերթը չուխը ան պարոններուն: Պատմէ երեն ամեն եղածը, կը տեսնաս որ մեկէն երկու ոտքի վրայ քեզի անանկ բաներ կըսէ, որ մեր միտքը չեն գար՝ տարի մըն ալ մտածելու որ ըլլանք »:

Մտածելու գոյնս ընկալաւ պատանին զայս խորհուրդ, օրհորդն ևս հաճեցաւ ընդ այն. և Ադնէս հպարտացեալ իմն ընդ խորհուրդն Թէ լաւ գրեալ, կալաւ մի ըստ միոջէ ղհնէք անաստնեական, և զուարճակ ոտս նոցին՝ ի մի ածեալ, որպէս զիւնջ մի ծաղկանց կապեաց չարիւ, և եառ՝ ի ձեռս պատանւոյն: Նորա առեալ և ընկալեալ քաջալերս, էլ ընդ պարտէզն՝ անտես՝ ի մանկաւարդ, որք զհետ նորա գիմէին ալաղաղելով փքեան է, ֆէսան է: Այսպէս անցեալ ընդ դաշտս, գնայր ընդ նեղուցս՝ յուշ ածելով զարհածան, և երկնեալ՝ ի մոռ որ ինչ ասելոցն էր առ փաստաբանն: Թողուա՛ ընթերցողին եւ բնաւակալել որ ինչ տառապեալ հաւիկն կրեին յուղոյ կապելոյ և գլխիվայր կախեալ զոտից՝ ի ձեռին պատանւոյն՝ որ յուզեալ՝ ի կրից՝ առնէր շարժուածս ըստ խորհրդոցն՝ որ ազմըկէին զմիտս նորա: Մերթ կարկառէր զբազուկ առ սրտմտութեան, մերթ ամբառնայր առ յուսահատութեան. էր զի տատանէր ընդ օդս ըստ պատեհի, և վեր՝ ի վայր զամենայն պէսպէս

ցնցմունս տայր ուժգին եղկելեացն, որք զմիմեանս կոչէին, որպէս յամաս՝ ի նմանավիշտ արկածս ըմբռնելոց պատահէ:

Հասեալ՝ ի գիւղանդր, եհարց զընակութենէ փաստաբանին, և ցուցին նմա. զուարթ անդր, այլ՝ ի մտանէն՝ զգայր ակնածութիւն իմն, զըրոյ գիտուն առնուն հեք անդրագիտիք առաջի աւագաց և գիտնոց, և մուտացաւ որ ինչ պատրաստեալն էր ասել. այլ յակնարկել՝ ի վառեահան՝ ոգի առեալ, եմուտ՝ ի խոհակերոցն, եհարց ցաղախինն՝ Թէ կարէր խօսել ընդ փաստաբանին: Նա՝ ի տեսանել զանանեական, քանզի սովոր էր ընդունել ընծայս այնպիսիս, բուռն եհար զնոցանէ, Թէպէտ և պատանին յետս նահանջէր՝ կամելով զի տեսցէ զայնոսիկ փաստաբանն, և գիտասցէ՝ զի ոչ ունայնաձեռն գայր: Եհաս՝ ի վերայ նա ինքն, մինչդեռ աղաղանին ասէր. « Տուր ինձի, ու վեր հրամիք »: Ինչպէս մատոյց նմա խոնարհ մեծարանս, և ընկալաւ զնա փաստաբանն ուրախալիապէս, ասելով. « Եկուր որդիս ». և եմոյծ զնա յընդունարան իւր, որ էր սենեակ մեծ, ուր յերկնից կողմանս կային՝ ի կախ զօրմովք կենդանագիրք երկոտասան կայսերաց. իսկ զհողին չորրորդ ծածկէր գարան մեծ վաղեմեաց փուշելից մահեկից, դրասեղան՝ ի միջի՝ լի վկայականօք, աղերսագրովք, բողոքագրովք և այլ գրուածովք, և շուրջ զսեղանոյն երեք կամ չորս աթոռք, և թիկնաթոռ՝ ի ձախատու՝ քառակուսի, բարձր յենարանաւ, յերկոսին անկիւնսն ունելով զարդ փայտակերտ՝ որ եղջերաձև ամ-

բառնային. և էր աթոռն պատեալ կաշւով. և շուրջ հաստատեալ պալատաձև սուսար քա-
ռօք՝ յորոց կէսք ՚ի վաղուց հետէ ՚ի բաց ան-
կեալ, թողուին զանկիւնս զերծ ՚ի կաշւոյն
գալարելոյ: Փաստաբանն զդեցեալ էր ՚ի ձև ա-
ռեւնական, պատմուճան բազմամեայ մաշեալ
յատենաբանելոյ ՚ի գնալն ՚ի Ա՛ւլան վան մե-
ծամեծ գաւից: Փակեաց զդուռնն, և քաջա-
լերեալ զպատանին ասէ. « Ի՞նչ է դիպուածդ
նայիմ, սիրելի »: —

« Ծածուկ բան մը ունիմ հրամանքիդ ըսե-
լու »: —

« Ըսէ, ըսէ »· ասաց փաստաբանն, նստեալով
՚ի Թիւինաթոռ իւր· և պատանին, զմի ՚ի ձեռաց
՚ի գագաթն գլխարկին եդեալ, և միւսովն չըրջ-
չըջելով զայն, սկսաւ·

« Հրամանքդ օրհնեմ կը հասկընաս, կուզէի
գիտնալ որ··· —

Ի վերայ էած փաստաբանն· « Ըսելիքդ
ըսէ »: —

« Պէտք է ներես ինծի· մինչ ողջմելիքս խօ-
սել չենք գիտեր, ուրեմն կուզէի գիտնալ»··· —

« Օրհնածներ, դուք ամենքդ ալ ասանկ էք·
եղածը պատմելու տեղ՝ հարցմունքներ կընէք,
առաջուց մոքերնիդ դրած էք ընելիքնիդ »: —

« Թողուենէն ըրէ, սիներօր ոսթեթօր· կու-
զէի գիտնալ որ ժողովրդապետ մը դէմ ոսպաս-
նալիք ընելը՝ որ պատճառ մը չօրհնէ, պատժոյ յան-
ցանք չէ՞ »: —

« Իմացայ », ասէ փաստաբանն ՚ի մտի, թէ-
պէտև չէր ինչ իմացեալ. և անդէն փոխեալ

դիէրալ ՚ի ծանրութիւն խառն ընդ կարեկցու-
թեան, սեղմեաց ղշրթունս՝ արտաբերելով ի-
մաստ ինչ անյօդ, զոր յայտնագոյն ասպա բա-
ցատրեալ՝ ասէ. « Դիպուածը ծանր է, որ-
դեակ, բայց չհմտածուած դիպուած չէ· աղեկ
ըրիր որ ինծի եկար· յայտնի դիպուած մըն է,
շատ հրամանագիրներու մէջ բացատրուած···
նաև հիմակուան քաղաքագետին անցած տարի
հանած հրամանագրին մէջ· հիմայ քեզի ձեռ-
քով չըչափել տամ »: Եւ զայս ասացեալ՝ յա-
րեաւ յաթոռոյ, և մուծեալ զձեռս ՚ի խառ-
նափնդոր թղթեանն, և վեր ՚ի վայր շրջչրջեալ
զնոսա որպէս ցորեան ՚ի գրուանի, Ո՞ր է,
դո՛ւրս էիո՛, դո՛ւրս, ասելով· անկարելի բան է, պէպէ
է որ հոս ըլլայ, վան պէ հարիւրը հրամանագիրը մըն է·
և յանկարծ ահա ահա, աո է ասելով, էառ զայն
և եբաց, հայեցաւ ՚ի թուականն, և ծանրա-
գոյն ղդէմսն յարդարեալ, բարձրաձայնեաց·
« Տասնըվինգ հոկտեմբերի 1627: Հապա՛, ան-
ցած տարուան հրամանագիրն է, գեռ նոփ նոր՝
որ աւելի սոսկում կը բերէ· կարգալ գիտես,
ուրդիս »: —

« Ֆինչ մը, սիներօր ոսթեթօր »: —

« Սղէկ է, եկուր, աչքովդ անցիր վրայէն ին-
ծի հետ »: Եւ կալեալ զհրովարտակն բաց ՚ի
ձեռին, սկսաւ ընթեռնուլ, ուրեք ուրեք սաս-
տիկ շտապաւ, և ուրեք զկայ առեալ ուժգին
հնչմամբ ըստ բանիցն պատշաճի· և էր պատ-
ճէնն հրովարտակին այս·

« Թէ և Ցերեան դքսին 1620, դեկտեմբերի
1 կին հրատարակած հրամանագրովը, որն որ

Ֆորտվէեան Ֆէրնանտէզ իշխանը նորէն հասատատեց, ատաղիկ դէղէրով դիմացը առնուած է հարստահարութեանց, զրկանաց, ու բռնութեանց, որոնցմով կը յանգգնին ամենք նեղել վերհափառ ինքնակալին հաւատարիմ հպատակները, այսու ամենայնիւ անզգամութեան ու չարութեան եւէնալուն համար՝ հարկաւորեցաւ քաղաքապետը ծերակուտին խորհրդոցը հրատարակել աս հրամանագիրը։

« Սկսաք բռնութիւններէն սկսինք. փորձով տեսնալով՝ թէ քալքիս մէջ և թէ գեղերը ... Կը լսե՞ս ... կերպ կերպ բռնութիւններ ակարնեբուն գիմ, առուտուրի, վարձելու, ու գաշնագիրներու մէջ ... ո՞ր ես, կը լսե՞ս ... հարմնիքը ըլլայ ըլլայ » կ՚ըսէ։ —

Աահ պատանին. « Հապա իմ գիսուածիս վրայ ! »։

Լռե, մարի ըրէ եթէ ինէն ալ. եպտը խոտգան պապիքանէրը։

« Վկայող ըլլայ ըլլայ, մկիը իր անէն ելլե չելլե, մկիը իր պարտքը վճարէ չվճարէ, մկիը զինքը նեղէ՝ չնեղէ, մկիը իր ազօրիքը երթայ չերթայ ». Աոնդ մը դիպուածին վերբերէր ... հա, հասանդ։ « Քահանան իր պատարագին պարտքը ընէ չընէ, թէ որ երկին չնկած բանը ընէ ». կ՚ըսէ։ —

« Կարծես որ աս հրամանագիրը ինծի համար չինած է »։ —

Չէ՞, էրա՛ էշ, ծագածն ալ մարի ըրէ. « Ուրիշ առնց պէս բռնութիւնները ալ որ ընեն երկիրը ունեցողները, աղնուականները, մէլքակ մարդիկ, հասարակ ռամիկը » ... Կը լսե՞ս, մեզը դուրս

էլնար, ամենքը կան հոս, ճշմարիտ դաշտն է։ Չկայ պապիքանէրը լսե.

« Աս ամեն ու ասոնցմանի յանցանքները, թէ և արդէնուած են, այսու ամենայնիւ հարկ է որ քաղաքապետը աւելի խստութեան ձեռք զարնէ. ուստի կը հրամայէ որ յանցաւորներուն գէմ, ով ըլլայ՝ ըլլայ, օրինաւոր գատաստան ըլլուի, ու պատժուին ուղղամիօք, յաքսոր կամ՝ ի թիկ գատապարտուելով, ինչուան՝ ի մահ ալ »... Մահ ալ հա՛, ինչ ըսենք պապիքա. « յանցանքին ծանրութեանը, անձին ու պարագաներուն համեմատ, քաղաքապետին ու ծերակուտին որոշելովը, առանց ա...մե...նև...ին ... թո... զու... թեան, սաստիկ խստութեամբ »։

Բառական բան ունինք հոս. ոսկրագրութիւնները ալ նայէ. Կոնսեալոս. Ֆէրնանտէզ, վրան ալ Փլաթօն. հոս ալ վկային անունը Ֆէրրիր. բան մը պակաս չկայ։

Բայց յիշենք եւ ուսանողին ուշ դնենք պատանին մեղմով՝ ի միս առնուլ զիմաստ բանին, և զսրբազան բառիցն՝ որ Թուրքին՝ ի նըպատաստ եւր։ Իսկ պատարագին տեսանելով զկաւորն նոր մոգիը քան երիկուա, զարմանայր և խորհէր՝ ի մտի՝ զի թերևս ուսեալ էր նորա զիմաստասիրութիւն, և ասէ ցնա. « Ձակտիդ մազերը կարել տուեր ես, խոհեմութիւն ըրիր ինծի գալէ. բայց երբոր գլուխդ ինծի պիտոր յանձնեիր, հարկ չկար կարել։ Իրաւ՝ գիպուածը ծանր է. բայց դեռ չես գիտեր որ պէտք եղած տեղը՝ ինչպէս սիրա կընեմ »։

Բայց առ՝ ի հասու լինել վերջին բանիցս այ-

սոցիկ վաստաբանին, պարտ է գիտել կամ հիշել ըլլի ՚ի ժամանակին յայնմիկ Քաջք և սրբ-կայք կրեին գիսակ ՚ի ձակատս, զոր և ածելին զդիմօք որպէս պահպանակ ՚ի յարձակէնէն ՚ի վերայ ուրուք, ուր հարկ էր յանձանօթս լինել, կամ ուր այնպիսի պատահէին գեպք՝ զի ընդ ջօրուԹեան պէտք էին և խոհեմուԹեան: Հրովարտակք ոչ լուսուԹեամբ անցանէին և զայս մանէ. « Հինոյողեան իշխանը կը հրամմէ, որ ձակատնին երկայն մազ ունեցողները՝ որ ինչուան ընքուինները կրնան ծածկել, կամ ականջնին առջին կամ եաւը, իրեքհարիւր քօշնաԹ տուգանք վճարեն. Թէ որ չկրնան վճարել, իրեք տարի գատապարտուին ՚ի Թիւ, առջի յանցանքին. իսկ նորէն որ նոյն յանցանքին մէջ կրնան, երկու պատիժն ալ եւելնայ իշխանին ուզածին չափ: Բայց իշխանը կը ընորհէ՝ որ հունտ գլուխ. ունեցողները, ու որոնք որ վերք մը կամ ագեղուԹիւն մը ունին ձակատնուն վրայ, կարենան առողջուԹեան կամ վայելչուԹեան համար երկայն մազ կրել՝ որչափ որ հարկաւոր է ծածկելու աս կերպ պակասուԹիւնները, բայց անկէց եւել չկրնան. Թէ որ չէ, իրենք ալ յանցաւորներուն պատիժը կը կրեն:

« Սափրիչներուն ալ կը հրամմէ, հարիւր քօշնաԹ տուգանք, կամ իրեք հարուած խաբազանի ամենուն առջին, կամ ինչպէս որ վերը ըսինք՝ աւելի ալ, իշխանին կամացը համեմատ, Թէ որ մէկու մը սովորականէն երկայն մազ Թողուն ձակատը կամ ականջին քովերը »:

Այսպ ուրիմն գիսակ ձակատուն ընդ ղրահս

համարէր՝ որպէս վահանակ երեսաց, և որպէս ցուցակ Քաջացն և սրիկայից, զորս այնուհետև սովորուԹիւն եղև գիսաւորս կոչել: Անուն այս դեռ ՚ի կեր ածի մեղմագոյն նշանակուԹեամբ ՚ի բարբառ գաւառային:

Պատասխանի եա Ներսէսյ. « Իրաւցընէ, ես ոչ երբեք ձակատս երկայն մազ կրեր եմ կենացս մէջ »:

Եա պատասխանին փաստաբանն, տատանելով ղղլուխն և ժպտելով խորամանկ և գժպիՀ ենն ձևով. « Նայէ, Թէ որ չես վստահիր ինձի, չենք կրնար բան առաջ տանիլ. ով որ սուտ կըսէ փաստաբանին, անխելք է. ինչուս որ եաքը պէտք կըլլայ երաւը ըսել գատաւորին: Պէտք է ամեն բան առաջուց յայտնի ըսել փաստաբանին, մեզի կկրնայ անոնք պարտըկելը: Թէ որ կուզես որ քեզի օգնեմ, պէտք է որ այլևս ինչուան և-օ-ՓՀն՝ ամեն բան ըսես անկեղծաբար ինչպէս խոստովանահօրդ, պէտք է որ հրամմեղն անունը ըսես. հարկաւորապէս ակնածելու անձ պիտոր ըլլայ. որպէս զի երԹամբ իրեն իմ մեծարանքս ընելու: Նայէ, իրեն չեմ ըսեր քեզմէ գիտնալս՝ որ իրմէ իրկուեր ես, վստահ եղիր. կրսեմ որ իր պաշտպանուԹիւնը խնդրելու գացեր եմ մէկ խելօք զրպարտեալ ազգս մը: Իրեն հետ ձարը կը մտածենք՝ որ գործքը ազեկ լլլնայ: Ազեկ հասկցար, ինքը զինքը խաբեսելով՝ զքեզ ալ կը խաբեսէ. իսկ Թէ որ սխալմունքը բոլոր քուկդ է, բան չկայ. ուրիշները աւելի խորունկ փոսերէ հաներ եմ... միայն Թէ մեծի մը դպած չըլլաս. իրար ազեկ

հասկընանք, խօսք հուտամ որ քեզ կը խալը-
սեմ, քիչմը ծախքով, անկախ կիմացուի։ Պէտք
է որ ըսես՝ ով է անիրաւութիւն կրողը։ Երեն
վկաները, իր ընտանութիւնը համեմատ կը
մտածենք, աւելի իր պաշտպանութիւնը խընդ-
րել, Թէ չանցաւոր բանել ջինքը, ականջին մէջ
լու մը կը ձգենք։ Վասն զի, նայէ, Թէ որ մէկը
հրամանագիրները աղէկ դարձընել գիտայ,
ոչ չանցաւորը չանցաւոր կըլլայ, և ոչ անմեղը
անմեղ։ Թէ որ ժողովրդապետը խելքով մարդ
է, լուռ կը կենայ. Թէ որ պզտիկ գլուխ ու-
նեցող է, անոր ալ ձայը կայ։ Ամեն փոսէ կըը-
նայ ելլըցուիր, բայց հանող պէտք է. քու
գիպուածդ ծանր գիպուած է, ծանր, նորէն ալ
կըսեմ ծանր. հրամանագիրը չայտնի կը պո-
ռայ. Թէ որ բանը արդարութեան ու քու մէջդ
առանձին պիտի որոշուի, բանդ դէշ է, բարե-
համաբար չայտնի կըսեմ. սխալմունքը պէտք
է վճարել. Թէ որ կուզես անվտանգ անցընել,
ստակ ու անկեղծութիւն պէտք է. վստահու-
Թեամբ չանձնէ ջքեզ անոր՝ որ քու բարիքդ
կը փնտռէ. հնազանդէ իրեն ինչ որ քեզի
կըսէ »։

Եւ՝ի խօսել փաստաբանին զայսոսիկ՝ պըռ-
ցեալ կայր պատանին հիացմամբ, որպէս գեղ-
ջուկ ոք կայ՝ի հրապարակի՝ ի շնին աճպար-
բարի, որոյ խաղդեալ՝ի բերան իւր խծուծս և
խծուծս և խծուծս, հանէ ապա անուն լարս և
լարս և լարս անսպառելի։ Այլ երբէք քաջ հա-
սու եղև որ ինչ փաստաբանն կամէր ասել, և
որպէս այլ ընդ այլոյ ջբանս իւր խմացեալ էր,

եհաս ջլարն՝ի բերանի նորա, և ասէ. « Խօսքս
աղէկ չես խմացեր, սիներօր տօթիթօր, բոլորո-
վին ներհակը հասկըցեր ես. ես մարդու սպառ-
նալիք չեմ ըրած, ես առանկ բաներ ընող մարդ
չեմ, բոլոր գեղին հարցուր, կը լսես որ ես ա-
մենևին առանկ մը հետ բան չեմ ունեցեր.
անիրաւութիւնը ուրիշը ինծի ըրաւ, հրամանա-
գիդ եկեր եմ խորհուրդ հարցընելու՝ որ ինչ-
պէս կրնամ անիրաւութեան դէմը առնել, ու
շատ գոհ եմ առ հրամանագիրը տեսնելուս »։

Յայնժամ փաստաբանին ընդարձակեալ
ջաչս, գոչէ. « Ի՛նչ խառնափնթոր բաներ կը-
նէք. ըսածս է, ամենքդ ալ առանկ էք. կարելի
բա՞ն է որ չիգիտնաք մէկ բան մը որշ ըսել »։—

« Բայց Թողութիւն կընես, առեն չիԹողու-
ցիր որ խօսիմ։ Հիմայ պատմեմ հրամանագիդ
ինչպէս եղաւ։ Ուրեմն գիտցիր որ այսօր պատ-
կառելի պիտոր ». առաջնոյ՝ի փղձուկ հարաւ
պատանին, « Պատկառելի պիտոր աղջկան մը
հետ, որուն ամբուրնէ՝ի վեր խօսք առած էի.
ու այսօրուան համար, ինչպէս որ ըսի, խօսք
առեր էր ժողովրդապետը զմեզ պատկերու։
Ամեն բան պատրաստ էր, մեյմեն ալ սկսաւ
պատճառ անդրներ տարակոյսներ դուրս հանել...
հերիք է, չիմանձրացընեմ զհրամանագդ, բայ
խօսել տուի իրեն, ինչպէս որ պէտք էր, խոս-
տովանեցաւ որ ջինքը մեռցընելու սպառնալեօք
արգելող եղեր էր՝ որ չխրատակէ զմեզ. ան բըռ-
նաւոր իշխանը Ռոտրիկ »...

« Ի լուր անուան իշխանին՝ ընդհատեաց ըզ-
խօսս նորա փաստաբանն, պռըստեալ յօնիւք,

խորչոմեալ զկարմիր ուռնդն, ծամածռեալ ըզբերան իւր, և ասէ. « Ինչ. դլուխս ցաւցընես ինձ եկեր ես առ առաստղեներովը. առ խօսքերը մեջերնիդ ըրեք, որ չէք դիտեր բերներ նեդ ելածը չափել. չէ թէ ինծի պես պատուաւոր վաստաբանի մը, որ առանկ խօսքերուն արժէքը գիտեմ. դնա, դնա, խօսածդ չես գիտեր. ես տղոց բաներուս մէջ չեմ խառնուիր. առանկ խօսքեր չեմ ուզեր լսել, պարապ խօսքեր » : —

« Պարապ խօսքեր ! երդուեմ կընեմ» ... —

« Գնա կըսեմ, ինչ վրաս պէտք է քու երդումդ. ես չեմ խառնուիր, ձեռքս կը լուամ» : Եւ չիկեր զձեռան ընդ իրեար, որպէս թէ արդարև զձեռան լուանալով. և յաւել. « Գնա խօսել սորվէ. առ կերպով յանկարծ պատուաւոր մարդու վրայ գալ չըլլար » : —

« Բայց մանկ ըրէ, բայց մանկ ըրէ », կրկներ պատանին 'ի զուր. վաստաբանն աղաղակելով վարեաց զնա 'ի դուրս. և արտաքսեալ զնա, ձայնեաց զաղախին իւր, և ասէ. « Մէկէն եաս առաւ առ տղուն բերածը, չեմ ուզեր, բան մը չեմ ուզեր » :

Բայց յորմէհետէ 'ի տուն անդր եկեալ էր աղախինն, չէր երբեք լռեալ հրամանն այսպէս. այլ այնու առաւել եաս նմա վաստաբանն զպատուէրն զայն, զի առանց ընդ բանս ինչ ածելոյ՝ հնազանդեցաւ աղախինն. և առեալ զհնէք անասնեակն եաս Ներկոյն, արհամարհօտ ինն կարեկցութեամբ հայեցուլ 'ի նա, և ասէ ցուլ. Պէտք է որ անհամ բան մը ըրած ըլլաս : Կամքը



Ի՜նցդ ոչ ըմբռնել զփաստաբանն, այլ նա եկաց անողոքելի. իսկ պատանին ապշեալ, և առաւել ևս զայրացեալ, հարկեցաւ առնուլ զբօբեանն զոհիկան մերժելոյ, և դարձաւ՝ ի գիւղ՝ պատմել կանանոյն զգեղեցիկ եղս արշաւանին։

Նոքա յետ գնալոյ պատանւոյն՝ ի բաց եդեալ զհանգերձս հարսանեաց, և զգեցեալ զսովորականս լուր աւուրց, մտեալ էին անդրէն ի խորհուրդ, դատերն հեկեկելով և մօրն հառաչելով։ Եւ յասել մօրն՝ « Ես փաստաբան նէն աղէկ խորհուրդ մը կը յուսամ». ասէ դուստրն. « Պէտք է որ ամեն կողմանէ օգնութիւն խնդրենք. Հայր Քրիստափորը չէ թէ միայն աղէկ խորհուրդներ կուտայ, այլ նաև ձիերայոր աշխատանքի՝ խեղճերուն օգնելու համար. հարկաւոր է որ իրեն ամեն բան լսացընենք »։ Եւ մայրն ասէ. « Աղէկ կըսես աղջիկ »։ Եւ խորհէին ո՛րպէս ազդ առնէլնմա. զի հեռի էր մենաստանն, և ոչ իշնէին երթալ անդր ինքեանք ի նմին աւուր, և ոչ ոք մատչի տայր նոցա խորհուրդ գնալոյ։ Եւ մինչդեռ խորհէին՝ բաղնեցաւ դուռնն, և լսելի եղև խոնարհ ին և յստակ բարբառ՝ որ ասէր. Ննո՛ր ըէ։ Գուշակեաց Լուչիա ոմր էր բարբառն, և դիմեաց բանալ զդուռնն. և ահա մանկէր եղբայր ոմն վեցտարեաւր մուրացիկ, որ սուզ ինչ խոնարհեալ ընտանեբար զգլուխն, եմուտ հանդերձ մանալուն՝ զոր ի ձախոյ ուս իւր կրեր, ունելով զբերան պարկին ոլորեալ և սեղմ յերկոսին ձեռս առ կրծովք։ Ձայնեցին մայր և դուստր ի միասին. « Եկուր եղբայր Կալխնոս »։ —

Պատասխանի եւս նոցա եղբայրն. « Ասուած հեռերնիդ ըլլայ. եկայ՝ ընկուզները առնելու »:

Ասէ մայրն ցդուստրն. « Գնա բեր, Լուչիա, իրենց համար պատրաստած ընկուզները »:

Յարեաւ Լուչիա գնալ ի միւս սենեակն. այլ յառաջ քան զմտանել անդր՝ ղկայ եւս յետս կոյս վեղարաւորին՝ որ նովին ձեւով կայր յոտն, և եդեալ մտան ի շրթունս՝ ակնարկեաց ի մայրն դորովագին և հրամայական ի՛մն աղեր սանօք չկայտնելոյ ղգաղտնին:

Մուրացիկն ի բացուստ անտի կծկեալ աչօք հայեցեալ յԱգնէս, ասէ. « Ինչպէս եղաւ պատկին բանը՝ որ այսօր պիտոր ըլլար. գեղին մէջը շիտիւթիւն մը տեսայ՝ նոր բան մը պատահածի պէս, ինչ է պատճառը »:

Պատասխանի եւս Ագնէս. « Ժողովրդապետը անհանգիստ է եղեր, ուրիշ օրուան ձգուեցաւ »:

Բայց եթէ Լուչիայի չէր ակնարկեալ, այլ աղջ արդեօք պատասխաներ մայրն. իսկ յայնժամ առ ի շրջել զնոսա յաւել. « Ինչպէս կերթայ ողորմութիւնը »: —

« Խիստ քիչ, խաթուն. բոլոր առածս հոս է »: Զայս ասացեալ, ի վայր եւս զմխաղն, և ոտուցեալ զայն ընդ օգս ի մէջ երկուցունց ձեռացն, ասէ. « Ինչերը հոս է, ու աս ոչ ինչ բանը ձեռք ձգելու համար, տասը դուռ պարկի »: —

« Բայց տարեկան բերքերը աղէկ չեն երթար, եղբայր Կալոնոս. հացէն անդին առաջ չերթար մարդուս ձեռքը »: —

« Աղէկ տարիները դառնալու համար՝ ինչ ճար կայ, խաթուն, բայց ողորմութիւն ընել. չէս գիտեր ընկուզներուն հրաշքը, որ խել մը տարի առաջ Հռոմայոս մօտ մեր վանքերուն մէկուն մէջը պատահեցաւ »: —

« Իրաւ որ չեմ գիտեր, պատմէ նայինք »: —

« Ան վանքը մէկ կրօնաւոր մը կար մեզմէն, սրբակեաց անձ մըն էր, Հայր Մակար էր անունը: Ձմեռուան օր մը նեղ ճամբէ մը անցնելու առեն՝ մեր բարերարներէն մէկուն երկիրը, որ ինքն ալ բարի անձ մըն էր, տեսաւ որ մեծ ընկուզի ծառի մը բով կեցեր էր բարերարը, չորս ալ գեղացիներ երեն հետ բրիչներն վեր առած՝ ծառին արմատը կը փորեին, ըսաւ. Ինչ կընես խեղճ ծառը:

« Պատասխանեց բարերարը. Հայր եմ, այլեւ պարի է որ ընկոյզ մը չիտար, հանել կոտրամ որ վատնեն »:

« Թողէ, ըսաւ Հայր Մակարը, աս տարի տեւեւէն եւել ընկոյզ պիտոր տայ: Բարերարն որ գիտեր կրօնաւորին պարապ խօսք չըսելը, հրամմեց որ հանած հողերնին նորէն արմատին վրայ լեցընեն. ու կրօնաւորն որ կերթար՝ կանչեց ու ըսաւ. Հայր Մակար, փաղեցու պտուղներնուս ձեռ չեր վնասին ըլլայ: Գուշակութեանը ձայնը տարածուեցաւ, ամենը կուգային ընկուզին ծառը տեսնելու. ու ինչպէս որ մարգարէացաւ, պարտեզն ընկուզներով լեցուեցաւ, տեսնողին ալ ընկուզներով: Ծառին բարեպաշտ տէրը չկրցաւ պատուղները վայելել, վասն զի քաղելէն առաջ ալքայուութիւն գնաց՝ իր ըրած ողորմութեանը վարձքը ըն-

դունելու: Բայց աւելի մեծ հրաշք մըն ալ ե-
ղաւ՝ որ հիմայ պիտոր ըսեմ. վախճանեալը
զաւակ մը ունէր, իրմէն բաղդատելի տար-
բեր. պատուղը քաղելու առեն, երբոր մուրա-
յեկ կրօնաւորը գնաց որ կէսը առնէ, անկայ
չկրնար զարկաւ հօրը խոստմունքը, ու
յանդգնաբար ալ ըսաւ. Չէի լսած որ վեղա-
բաւորները ընկոյզ ժողվեն: Գիտես ինչ եղաւ
եաքը. օր մը, (աս աղէկ մտիկ ըրէ) աս անպի-
տան տղան քանի մը երեն պէս բարեկամները
հրաւիրեր էր, կերուխումի առեն կը պատմէ
իրենց ընկուզենուն պատմութիւնը, կրծա-
ւորներուն վրայ ծիծաղելով: Ընկերները ու-
զեցին որ երթան տեսնան լերան պէս դիզուած
ընկուզները. դուռը կը բանայ, ինչ կը տես-
նես, դիզուած չոր տերեւներ ընկուզի: Աւելայ
խրատ եղաւ, ու վանքը կորսընցնելու տեղը՝
վաստկեցաւ. վան ալ անկէց եաքը այնչափ
ընկոյզ տուող եղաւ վանքին, այնչափ որ, բա-
րերարներուն մէկը մուրացողին կարեկից ըլ-
լալով, յաւանակ մը պարգեւեց վանքին՝ ըն-
կուզները դիւրաւ վանք հրելու համար: Այն-
չափ ալ ընկուզի եղ կը հանեինք, որ պէտք
ունեցող աղքատները՝ մեզմէ կառնէին. վան
ալ մենք ծուլու պէս ենք, ամեն գեաները հոն կը
վազեն, ու ծուլը նորէն իրենց կը դարձընէ »:

Յայնժամ դարձաւ Լուչիա, ի ընկուզիւնք ՚ի
գոգ իւր՝ մինչև չզօրել ծանրութեան բեռնին,
ունելով ղերկուց ծայրից զառիպածն ՚ի վեր՝
ձգաելով բաղիջք: Եւ մինչ Եղբայրն Կալտինոս
՚ի վայր առեալ զմախաղն եդ ՚ի գետին, և լու-

ծանէը զբերան պարկին՝ ընուլ ՚ի ներքս զողո-
մութիւնն առատ, գժկամակ իմն հայեցաւ Ագ-
նէս ՚ի դուստրն, զարմացեալ ընդ կարի իմն
առատութիւն նորա. բայց Լուչիա ակնարկեաց
՚ի մայրն՝ կամելով իմն զանձն արդարացուցա-
նել: Ակաւ վեղարաւորն կարգալ օրհնութիւնս
բարեմաղթութիւնս և շնորհակալիս. և ապա
ըստանձնեալ զպարկն, երթայր ՚ի բաց: Բայց
Լուչիայ ձայնեալ զնա անդրէն, ասէ.

« Կը բաղձայի, Եղբայր Կալտինոս, որ Հայր
Բրնատափորը մեզմէ մեզի հրամիքը, հարկաւոր
իսօք մը ունինք երեն ըսելու, աս շնորքը ընէ
մեզի պէս խեղճերուն, շուտ ընէ, ինքը հրամիք
գայ, մենք երեն չենք կրնար երթալ »:

« Ա՛ն է միայն ուզածդ. ժամ մը չանցնիր որ
Հայր Բրնատափորը կիմանայ խնդիրքդ »: —

« Կրնամ վստահ ըլլալ »: —

« Մ՚ի տարակուսիր »: Եւ զայս ասացեալ՝ էլ
՚ի բաց, փոքր մի աւելի կորացեալ, և տառապէլ
գոհ, քան յորժամ եկն:

Ախտ մի ոք ՚ի լսելն՝ զի աղքատ ոք օրհորդ
կոչէր այնու մաքրմութեամբ զկրօնաւորն, և
զի Եղբայրն մուրացիկ այնպէս դիւրաւ յանձն
առնոյր կոչել զնա առանց զարմանալոյ, համա-
րեցայ զՀայրն Բրնատափոր ՚ի հասարակ կրօ-
նաւորաց ոք, առ ՚ի վարել զնա ՚ի գործ. այլ
մանաւանդ պատկառելի էր յոյժ, և մեծարոյ
առ իւրան և առ շրջակայ բնակիչս առհասա-
րակ. բայց այնպիսիք էին վեղարաւորք, զի և
ոչ մի ինչ թուէր նոցա կարի ՚ի վայր կամ գեր
՚ի վեր քան զիւրեանց պայման. սպասաւորել

ստորայնոց և առնուլ սպաս ՚ի դերակայից, մոռանել յաղքունից և ՚ի խրճիթս նուիրն խոնարհութեամբ, գիտելով և՝ զի ՚ի նմին իսկ ատն մերթ առիթ ղբօսանաց լինիցին, և մերթ այնպէս արգոյք՝ զի առանց խորհրդոց իւրեանց չդործեր ինչ անդ. խնդրել ողորմութիւն ամենայն ուրեք, և ողորմել ամենեցուն՝ որոց դայիւնն ՚ի վանս առ ՚ի խնդիր, ասելոյ թէ նոցա պատահել իշխանի ումեք՝ որ յարգութեամբ ղբուան գօտւոյ նոցա համբուրէր զձայր, կամ ատահակ մանկաւոյ՝ որք կուիս ընդ իրեարս պատձառելով՝ շաղակս զմորուաց նոցա ցայտեցուցանէին: Անուն եղբայր զայնու ժամանակաւ և մեծարանաց էր անուն և թշնամանաց. և եղբարք վէրադրաւորք թերևս առաւել քան զայլ կրօնաւորս կրէին զայս ներհակ անուանակոչութիւն, զի ոչ ժառանգելով ինչ, և այլազգացոյն ՚ի հատարակաց կրելով ձև, և յայտնագոյն քան զայլս ՚ի վար արկանելով զնոմարհուածիւն՝ առաւելագոյն ձգտէին յանձնինս այսպիսի մեծարանս և թշնամանս յայլ և այլ կրից և յայլ և այլ ազգ խորհելոյ մարդկան:

Եւ ՚ի մեկնել եղբայր Կալինոսի, ասէ Աթենէս ցդուսաւն. « Այս ոչքան ընկուզ էր որ տուիր աս տարի »:

Պատասխանի եւս Լուչիա. « Թողութիւն ըրէ, մարիկ. Թէ որ մենք ալ ուրիշներուն պէս ըրած ըլայինք, խեղճ վէրադրաւորը ինչուան երկուն պիտոր պտըտէր՝ տոպրակը ուսը, ով գիտէ երբ պիտոր վանք գառնար առ խօս-

քերուին որ լսեցիր, ով գիտէ՝ միտքն ալ կը ձեռ »...—

« Աղէկ մտածեր ես, աղջիկ », ասէ մայրն. « վերջապէս ողորմութիւն ալ է ըրածնիս՝ որ միշտ չահաւոր է »: Զի հանդերձ թերութեամբն՝ էր նա կին բարեպաշտօն, և որպէս սովորութիւն է ասել՝ ՚ի հուր խակ յանձն առնոյր մտանել զանձն ՚ի սէր միամօր դատերին, սիրով սիրեցելոյ:

Յայսմ վայրի եհաս Ռիւնցոյ, և վհատագին զայրացմամբ արկեալ ՚ի վերայ սեղանոյն զտառապեալ հաւան՝ որոյ վերջին խոշտանգանք էին այն գայն օր, ասէ ցԱգնէս. « Ի՞նչ աղէտոր խորհուրդ մը տուիր ինծի. առ զարմանալի մարգուն խրկեցիր զիս, որ իրաւցընէ հօգնէ եղեր խեղճերուն »: Եւ պատմեաց զանցս՝ որ անցին ՚ի տան վաստաբանին: Ապշեցաւ կինն ընդ տխուր եղս իրացն, սակայն սկզբէր ՚ի ցուցանել՝ զի խորհուրդ իւր չէր լինչ անտեղի, այլ էր գիտացեալ պատանուոյն վարել որպէս պարտն էր: Դադարեցոյց Լուչիա զվէճն, ասելով. « Ինչ որ է, կը յուսամ որ ալ աղէկ կերպով դառնք »: Ի բանից աստի յոյս առեալ պատանւոյն, որպէս պատահէ անկելոց յանհնարինս, ասէ. « Բայց թէ որ Հայր Բրնատափորն ալ ձար մը չկրցանայ, ես գիտեմ ինչ կերպով կը դանամ »:

Այլ նոքա երկոքին յորդորէին զնա ՚ի խաղաղութիւն, ՚ի համբերութիւն և ՚ի խոհեմութիւն. և ասէ Լուչիա. « Հայր Բրնատափորը վաղը կուգայ. կը տեսնաք, անիկայ անանկ ձար

մը կընէ, որ մենք խեղճ ողորմելնքս և ոչ կըր-
նանք երևակայել»:

Եւ պատանին ասէ. «Կը յուսամ. բայց ինչ-
պէս որ ալ ըլլայ, միտքս դրած եմ, կամ ընել,
կամ ընել տալ իրաւունքս. վերջապէս արդա-
րութիւն չկայ էջ՝ աշխարքիս վրայ»:

Ի վերջալի խօսակցութիւնս և յերթևեկս
յայսոսիկ հանց տիւն այն, և սկսաւ նեմմանալ:
«Գիշեր բարի», ասէ Լուչիա ցպատանին, որ
կայր անդ տխուր, և չկամէր նմին մեկնել՝ի բաց:

Այլ և ինքն ասաց «Գիշեր բարի»:

Յաւել Լուչիա. «Սուրբերուն մէկը հարկաւ
կօգնէ մեզի, խոհեմութիւն ըրէ, Աստուծոյ
ապաւինէ»:

Յաւել և մայրն խրատս նոյնպիսիս, և էլ՝ի
բաց պատանին յուշեալ սրտիւ, կրկնելով ան-
դադար զգաստաւէն բան. Վէրջապէս աշխրհս
Էրայ արդարութիւն չունի էէ: Զի այր ըմբռնեալ՝ի
վիշտ, չգիտէ արդարև զոր ասէ:

ԳԼՈՒԽ Դ.

Մինչ չև էր արեգական ծագեալ ընդ ոլոր-
տըս, Հայրն Փրիստափոր էլ՝ի փէսքարենեան
վանաց գալ՝ ուր սպասէինն նմա: Եւ էր փէս-
քարէն գիւղ՝ի ճախակողմեան ափն Աստապ
գետոյ կամըճի, ոչ ինչ հեռի՝ի կամրջէն. և էր
գիւղն այն կոյս մի սնակաց, առաւելագոյն մա-
սամբ բնակեալ՝ի ձկնորսաց, և զարգարեալ
՝ի ցանցից և յուռկանաց յարագելոց՝ի ցամա-
քումն: Մենաստանն, որոյ գեռևս կանգուն
կան որմք, էր արտաքոյ գեղջն՝ի մուտս անդ,
և ուղ՝ի միջի՝ որ՝ի Էջքջոյէ ածէր՝ի Պէրկա-
մոյ: Ամենայն էր երկին, և ըստ երևելոյ արեգա-
կան տակաւ յեսակուսէ լերինն՝ ցոլանայր լոյս՝ի
ծագս հանդիսական լերանց, և լքանէր արագ-
արագ ընդ զառ՝ի վայրս՝ի հովիտն: Հողմիկ
աշնային զքամառամ տերևս թթենւոյ յոստոց

անոն առեալ թերեր արկանէր սուլ ինչ հեռի
'ի ծառոյն: Յաղ և յահեակ յայգեստանս 'ի
վեր՝ աճումնաձիգ ուռոց սերմիք կարմրեր-
փեանք փայլէին. և երկիր այն ինչ ակօսաբեկ
զանազաներ Թիւասիսլ 'ի մէջ խոզանեալ լնա-
գոյն անդոց, որ ցօղալնգաք փայլէին: Ջուարթ
էր տեսարանն. այլ որ ինչ երևէր անդ կերպա-
րան մարդկեղէն, ածէր սխրուԹիւն աչաց և
մտաց: Հանդիպէին երբեմք երբեմք մուրացիկք
հիւծեալք և պատառատունք, սովորք 'ի բա-
զում ամաց, կամ յայնժամառ կարօտուԹեան,
կարկառել ձեռս 'ի մոյր: Այնպանէին լուիկ առնն
Թեր Հօրն Քրիստափորի, հայէին 'ի նա գորո-
վով, Թէպէտև չյուսային ինչ 'ի նմանէ, ոչ կա-
րելով վեղարաւորի ունել ինչ արծաԹ. այլ
մատուցանէին նմա յարգանս, և շնորհակալս
վանն ողորմուԹեանցն՝ զորս ընկալեալ էր նոցա
'ի վանաց, կամ գնային անդր ընդունել: Հո-
ղագործական տաժանմանց և աշխատասւորք,
սփռեալք յանդաստանս, վչտալի լմն գործէին
տեսարան. կէսք խնայուԹեամբ և գժկամակ
արկանէին սերմանս ցանցառ, որպէս ոք զի ըզ-
կարևորն իւր պարէն 'ի վտանգ արկանիցէ.
այլք մշէին ձգամբ զերահ իւր ակամայ տապա-
լելով զգուղձ. գոարիկ նիհար ածէր տառամբ
զարջառ վախ երիԹասցեալ ընդ արօտ, որոնե-
լով հապճեպ ընդ երկիր գողնս 'ի ձարակ ըն-
տանեացն 'ի բանջարոց անտի՝ զորս սովոյ ու-
սուցեալ էր մարդկան և առնուլ 'ի ձաշակ:

Յաճախէին տեսարանքս այսոքիկ յամենայն
ոտնփոխս զախրուԹիւն վեղարաւորին, որ ան-

գըստին զգայր 'ի սրտի չարագուշակ ինչ ա-
ռաջիկայ:

Այլ առ ինչ այդչափ հոգ վասն օրհորդին, և
ընդ ընդ առնուլ զզեկուցումն ձեպել որպէս
'ի կոչ մեծաւորին, և ո՞ էր Հայրս այս Քրիս-
տափոր. պարտ է ինձ տեսանել զայս ամենայն:

Հայրն Քրիստափոր էր մերձ վեԹանամենի
քան յիսնամենի. գլուխ իւր գերծեալ, բայ 'ի
փոքրիկ պատակէ հերայց շուրջ զսկաւառակաւ,
որպէս վեղարաւորացն է կանոն: Յառնէր նա
երբեմք երբեմք զայրացեալ, այլ զինքնէր ան-
առ խոնարհուԹեան: Երկայնամորուսք սպի-
տակ՝ որ զայտան և զծնօտ նորա ծածկէին՝ երե-
էլի եւս առնէին զվերնոյ մասին գլխոյ նորա
զձև նշանաւոր, յոր պահեցողուԹիւն յաւե-
լեալ էր քան նուազեալ զազդուԹիւն: Աչք
նորա գոգաւորք՝ սովորաբար վայրահակք՝ ե-
ռանդունս յանկարծ չողային, որպէս երկնից
ամեհիք վարեալք յօդջէ՝ որոմ չկարեն ան-
ասատել, ուսեալք 'ի փորձոյ. և 'ի խեռնէն
պատժեալ ուժգին սանձահարին:

Հայրն Քրիստափոր ոչ միշտ այսպիսի էր
լեալ, և ոչ միշտ Քրիստափոր. զի 'ի սուրբ ա-
ւազանէն կոչէր անուն իւր Լուդովիկ. և էր
որդի վաճառականի ուրուսն, որ չետոյ մեծա-
ցեալ՝ վարեր կենցաղ բարեկեցիկ, միակ որդ-
ուոյն, զոր եա 'ի դաստիարակուԹիւն ազնուա-
կան ըստ այնմ ժամանակի. և որպէս օրէն էր
և սովորուԹիւն, կացոյց նմա վարժապետս
բանասիրական և աստուածական հրահանգաց.
և վախճանեաց զկեանս իւր Թողեալ ընչեղ
զպատանին:

Լուդովիկ սովորեալ էր ՚ի կենցաղ ազատա-
կան. և մարդահաճոյք, յորոց միջն էր զարդա-
ցեալ, վարժեալ էին զնա ՚ի մեծարանս: Այլ
երբէք կամեցաւ մոռանել յակումբ աւագանւոյ
քաղաքին, յոյժ այլազգ եդիտ ընդունելու-
թիւն, և գիտաց՝ զի առ ՚ի լինել ընդ նոսա կե-
նակից, որպէս ցանկայր, պարտ էր իւր հրա-
հանգել ՚ի համբերութիւն և ՚ի հլութիւն, զը-
պարտութիւն միշտ յանձն առնուլ, և ժոյժ
ունել լռիկ: Այլ այս ազգ կենաց ոչ համաձայ-
նէր, ոչ ընդ գաստիարակութեան իւրում, և
ոչ ընդ բնաւորութեան. վասն որոյ դժկամա-
կեալ՝ ՚ի բաց եկաց ՚ի նոցանէ, այլ կեսրը ու-
խտւր. զի կարէւոր թուէր նմա՝ կենակից լինել
նոցա, այլ կամէր զնոսա բարեհամբոյր: Այ-
սու յօժարութեամբ միանգամայն և հեռիւ ոչ
կարէր յաձախել առ նոսա ընտանեբար. սա-
կայն առ ՚ի կենցաղավարել ընդ նոսա, էտ
զանձն ՚ի շուք և ՚ի պերճութիւն, ելևէջս
առնելով զնոքօք, որով ձգեաց յանձն թշնա-
մութիւն նախանձ և ծաղր: Բնաւորութիւն
նորա համեստ միանգամայն և բուռն՝ արկեալ
էր զնա վաղ ՚ի ծանրագոյն մրցանս: Աւտեսեր ՚ի
բնէ զբռնութիւնս և զանիրաւութիւնս. յորոց
առաւել ևս սկսաւ զարշել, տեսանելով յա-
ձախ բռնացեալս և անիրաւեալս զայնոսիկ՝ ընդ
որս խեթիւ էր: Ան ՚ի հանդարտել կամ ՚ի
վար արկանել զայս ամենայն կիրս, մտադիւր
յանձն առնոյր պաշտպանել տկարի հարստա-
հարեալ, փառս իւր համարէր տալ անիրաւաց
հալ յօրէնս, և գտոից ՚ի գառս ձեռնարկէր,

մինչև տակաւ եկաց պաշտպան ղրկելոց, և
վրէժխնդիր անիրաւութեանց: Ծանր էր պաշ-
տօնն. և չէք երկբայել՝ զի հիքին Լուդովիկեայ
էին թշնամիք, և ընկճէր ՚ի հոգոց և յաշխա-
տութենէ: Ընդ արտաքին մարտս, կրէր տա-
ռապանս հանապազօր և ՚ի ներքին մարտից.
Թող և զանյաղող եղս ձգանցն: Զի առ ՚ի գլուխ
հանել զձեռնարկս, հարկ լինէր նմա հնարս և
բռնութիւն ՚ի կիր արկանել, ընդդէմ խղճի
մտաց իւրոց. պարտ էր նմա ունել զիւրև բազ-
մութիւն Քաջաց տպիրատից, և վասն ապահո-
վութեան և զօրաւորագոյն օգնութեան՝ ընտ-
րել ՚ի նոցանէ զդիմագրաւս, խմա զապիրա-
տագոյնս, և ՚ի սէր արդարութեան՝ կեալ ընդ
անօրէնս: Որպէս զի ոչ գոն ուրեք ՚ի ձախո-
ղել իրաց վհատեալ, կամ ՚ի հասանել վասն-
գի՝ տաղտկացեալ յանդադար զգուշութենէ,
և գարշեցեալ յայնպիսի ընկերութենէ, և վա-
րանեալ վասն հանապազօր ծախուց ՚ի բարե-
բարութիւն և ՚ի քաջութիւն, սակս մտաբե-
րէր կրօնաւորել, որ ՚ի ժամանակին յայնմիկ
յաձախ սովորութիւն էր՝ առ ՚ի զերծանել ՚ի
վտանգաց: Այլ որ Թերևս ՚ի ցնորս կենացն
գրէից էր, յորդիւնս եկին ՚ի ծանրագոյն որ-
կածից քինֆ որ դիպաւ նմա:

Ի միում աւուրց գնայ նա ընդ քաղաքն, և
երկուք ոմանք ՚ի Քաջաց ընդ նմա, առ Ֆրիս-
տափոր ոմն անուն, որ երբեմն համբակ ՚ի կըր-
պակի իւրեանց, և ապա հազարապետ տանն
կացեալ էր. և էր գրեթէ քսաւանամեայ, այլ
հաւատարիմ և սիրասէր Լուդովիկեայ՝ զորոյ

տեսեալ իսկ էր զծնունդ, և որ ընդ վարձ և ընդ պարգև տայր նմա ոչ միայն ապրուստ, այլ և բաւական առ՛ի ընուել զսիկս բազմութեան ընտանեացն: Եառս Լուդովիկ՛ի հետուստ զայր մի յանդուգն, որոյ գործ էր հարստահարել զոր կարս, ընդ որում չէր նորա խօսել եւ կեանս իւր, սակայն առեալ՛ն նմանել, ինքն և առեր զնա. զի մի՛ ի բարեմանութեանց աշխարհի այն է, անծանօթից առեալ զիրեարս և լինել միմեանց առելի: Արդ նա չորիւք՛ի ֆաղաց գայր սիգաքայլ ընդդէմ Լուդովիկեայ, բարձր՛ի գլուխ, պատրաստեալ՛ի սպառնալս և՛ի թըշնամանս: Երկաքանչիւր գնային առ որմով. բայց Լուդովիկ (քաջ միտ դիր) աջոյն քերէր առ որմով. և այս ըստ սովորութեան տայր նմա իրաւունս (տես մինչև ուր մեծին իրաւունք) չմեկնել յորմէ, չտալ տեղ ուժ և իջել. մեծ նշան համարէր այս՛ի ժամանակին: Միւսն ընդհակառակն որպէս ասացաք՝ իւր համարէր իրաւունս ըստ այլոցմ սովորութեան, և Լուդովիկայ անկ ընդ փողոցամէջն գնալ: Զի որպէս՛ի բազում այլ իրս պատահէ, կրկին սովորութիւնք էին հակառակք, և չէր սահմանեալ օրինաւորն. որով ապառումք ոմանք պատճառս առնուին գրգռելոյ ընդ միմեանս՛ի պատահելն նմանեաց իւրեանց, և հանգիչք իրերաց կցեալ կային յորմն որպէս անդրիկք բարձրաքանդակք: Արդ իբրև հասին դէմ ընդ դէմ, զննեալ միւսոյն յոտից ցգլուխ զԼուդովիկ, ասէ սաստիւ դժնեհայեաց.

« Մեկ դի գնա »: —

« Դուն դնա, աջակողմը իմն է »: —

« Քեզմէկնեերուածը չէ, իմն է »: —

« Քուկդ կըլլար, թէ որ քեզմէկնեերուն դառնոզութիւնը կանոն ըլլար »:

Իսկ ֆաջք ասոլ և անոլ յեակուսէ տեբանցն կային անշարժ, զայրագին՛ի միմեանս ակնկառոյգք, աջ՛ի սուսեր հաստատեալ, կազմէ՛ի մարտ: Ոչք ասոլ և անոլ գային անցաւորք, զկայ առեալ՛ի բացեայ՝ ելից իրացն կային՛ի զնին, և յերեսաց նոցա ևս քան զևս զայրանայր վէճն:

« Մէջէն քալէ, վատ գործաւոր. թէ չէ, կը սորվեցընեմ քեզի յարգել ազնուականները »: —

« Իրաւունք չունիս զիս վատ կանչելու »: —

« Դուն չունիս իրաւունք՝ զիս անիրաւի տեղ դնելու. թէ որ դուն ալ ինծի պէս ասպետ ըլլայիր, սուրովս քեզի կը հասկըցընէի որ անիրաւ ես »: —

« Սուրով խօսելը՝ պատճառ չէ »: —

Յայնժամ ասպետն առ իւրան գարձեալ ասէ. « Տղմին մէջը հրեցէք սա անիրաւը »:

Իսկ նա փոքր մի ընկրկեալ, և բուռն՛ի սուսեր հարեալ ասէ. « Տեսնանք »:

Պատասխանէ միւսն, մերկացեալ զսուր. « Քեզի պէս չանգուածը. սուրս կը կոտրեմ, երբոր քու անարգ արիւնովդ աղտոտի »:

Այսպէս չարձակեցան յերեսս, և թիկնապահք երկաքանչիւրոցն դիմեցին պաշտպանել տերանցն: Անհաւասար էր մարտն ըստ թուոյ, և վասն գուն գործելոյ Լուդովիկեայ խուսել մանաւանդ՛ի հարուածոց և զենուիկեց առնել

զոսոխն, քան սպանանել զնա. իսկ միւսն ամենայն ձգամբ կամէր զմահ նորա: Լուգովիկեայ ընկալեաւ էր յուժեմնէ 'ի Քաջայն վերս յաղեակ բազկին, և թեթև ինչ երդիծեալ 'ի դէմն. և 'ի պատրաստել ոսոխին զհաստոյլ հարուածն, Քրիստափորն սեսեալ զերեսին վանդ սեաւն իբրև, դիմեաց սուսերաւ 'ի վերայ ասպետին: Նա զամենայն զայրոյթ ջըրջեալ 'ի Քրիստափոր, հար սպան զնա սրովզայն սեսեալ Լուգովիկեայ, և խելայեղեալ ինն, մեաց զսուսերն իւր 'ի փոր սպանողին, և արկ զնա կիսամեռ, գոգցես 'ի միասին ընդ հիքին Քրիստափորի: Թիկնապահացն սեսեալ զմահ նորա, աճապարեցին 'ի փախուստ՝ կոչիւ ձեալք. սպասաւորքն ևս Լուգովիկեայ խոշտան գեալք և հարուածեալք, 'ի խուսել Թշնամեացն՝ ոչ կամեցով կալ յամբոխին՝ որ գայր խռնէը անդր, մեկնեցան 'ի բաց. և մնաց Լուգովիկ միայնակ երիզբուքք Թշուառ ընկերօքն 'ի խռան անդ:

Եւ էր լսել անդ բարբառ խառնաձայն. «Ի՞նչ պէս լինաւ. — Մէկ հոգի է մեռնողը. — Զէ, երկուք. — Փորը ծակեր է. — Ո՞վ է մեռնողը. — Գոռոզն է. — Ո՛հ, աս ի՞նչ երաք անցուած է. — Ընողը կը գանայ. — Մեկը ամենուն տեղը կը վճարէ. ան ալ գնաց. — Ի՞նչ վերջը, վերջով միայն լինցած չէ. — Բանը մեծնայ պիտոր. — Հապա մեկալ ողորմելին. — Խեղճ տեսարան. — Խաչըսկ անիկայ, խաչըսկ. — Այնոր բանն ալ լինցած է. — Նայէ ինչ վիճակի մէջ է. — Այժն գիւղն արիւն կը վազէ. — Փախիր, փախիր. —

Նայէ որ չիբռնուիս: Եւ այլ այսպիսի բանք, որ առաւելապէս լսելի լինէին 'ի խառնաձայն ազմիկն անդ, այսու առնէին զկարծիս հաստատակաց. հասին անդր և օգնականք: Մերձ կայր անդ եկեղեցի վեղարաւորաց, ապաստան անմասչելի առեղական պաշտօնէից: Անդր ածաւ սպանողն կարեվէր, դրեթէ և անզգայ. և կրօնաւորք ընկալան զնա 'ի ձեռաց ամբոխին, որ յանձն առնէր զնա նոցա, ասելով. «Աղէկ մարդ մըն է, անզգամին մեկը սպանեց, բայց զինքը պաշտպանելու համար հարկաւորուեցաւ ըսպաննելու»:

Լուգովիկեայ յառաջ քան զայն չէր երբեք հեղեալ արիւն. և թէպէտ սպանուելիւնք 'ի ժամանակին յայնմիկ այնչափ յաճախեալ, զի սովորեալ էին ականջք ամենեցուն 'ի լսել, և աչք 'ի տեսանել, սակայն տեսիլ սպանելոյն վասն իւր, և անկեալոյն 'ի ձեռանէ իւրմէ, ազգեաց 'ի նա նոր իմն զգացումն սաստիկ յոյժ: Անկուսն ոսոխին, այլակերպութիւնն դիմաց նորա՝ որ 'ի քթթել ական 'ի սպառնալեաց անտի և 'ի կատաղութենէ կործանեալ կայր անշարժ և անբարբառ, եղև նմա տեսարան այնպիսի՝ որ յեղաշրջեաց անդէն զսիրտ նորա: Զգեցեալն ածին զնա յանդգաստից 'ի վանս, և 'ի զգալ անձին գոսա 'ի մահիճս 'ի հիւանդանոցի ընդձեռամբ եղբօր ուրուսն վիրաբուժի, որպէս յամենայն վանս վեղարաւորաց է ոք. նա դարմաներ երիվարապահ զվէրսն զերկոսին ընկալեալս յոսոխէն արիւեալ ծիւ 'ի ներքս և ըսպեղանի: Մի 'ի Հարց, որոյ պաշտօն էր կալ

առընթեր ՚ի հոգեվարս, և յաճախ պատահէալ էր նմա սպասաւորել ՚ի վերայ Ճանապարհին, հոչեցաւ ՚ի տեղն մարտին: Եւ վայրկի մի յետոյ դարձ արարեալ՝ եմուտ ՚ի հիւանդանոց անդր, և մերձեալ ՚ի մահճին Լուդովիկեայ, ասէ. « Ախիթարուէ, դոնէ աղէկ մահ ունեցաւ, ու յանձնեց ինձի՝ որ քեզմէ լրեն համար Թողութիւն խնդրեմ, ինքն ալ քեզի կը ներէ »: Ի բանից ասոի բոլորովին զգաստացաւ եղիէլն, և առաւել ևս զարթեան յոգւոջ նորա ըղգայմունքն խոովելոյք և շփոթեալք, ցաւ ընդ մահ բարեկամին, սոսկումն և խիղճ մտաց ընդ հարուածն՝ որ եղ ՚ի ձեռանէ իւրմէ, և կարեկցութիւն դառնակսկիծ ընդ սպանեալն. և եհարց ցԵղբայրն. « Հապա մեկալը »: — Պատասխանէ Եղբայրն. « Մէկալը մեռած էր հասնելէս առաջ »:

Յայնմ վայրի ՚ի դրունս վանացն և շուրջանակի խռնէր ժողովուրդ հեռաքըրքիր. այլապաշ ոճեալք առնէին ցրուելոյն ղբազմութիւնն, և սակաւ լինչ հեռի ՚ի գրանէ, պահ ունէին, մի ումեք ելանել ՚ի ներքուստ անտեսաբար: Եղբայր մեռելոյն, երկուք ոմանք յազգականաց նորա, և հօրեղբայր ծերունի, եկին սպառազէնք բազմութեամբ Քաղաց, և շուրջ գային արքհամարհանօք և սպառնալեօք դէտ կալով եկաւորացն ՚ի զնին, որք թէպէտ ոչ իշխէին ասել, այլ ՚ի դէմս նոցա գրեալ էր. Պաթիծ առէր:

Լուդովիկ ընդ ժողովել լինէն զնորհուրդս իւր՝ հոչեաց զմի ՚ի Հարց առ ՚ի խոստովանել, և աղաչեաց զնա՝ գառանել զայրն Քրիստափորի,

խնդրել յանուն իւր Թողութիւն ՚ի նմանէ՝ զի պղնձիսկ աղէտս հասցց նմա, Թէպէտև ակամայ, և վստահ առնել զնա՝ զի յանձն առնոյր զՀոգ ընտանեացն: Եւ ապա զմտաւ ածեալ՝ ևս քան զևս յորդորեցաւ ՚ի խորհուրդ կրօնաւորելոյ, յոր երբեմն մտաբերեալ էր. Թողէր պատրաստեալ նմա ՚ի Տեառնէ Ճանապարհ, և ցուցեալ Աստուածոյ զկամն իւր, ածելով զնա արկածիւքն ՚ի վանս անդր, և հաստատեցաւ ՚ի խորհուրդն յայն: Կոչեաց զմեծաւոր վանացն, և յայտնեաց նմա զիղձս իւր. այլ նա խրատ ետ մի չտապել. և յաւել զի ՚ի յաբատևել իւրում ՚ի շնորհս կոչմանն՝ լինէր ընդունելի: Յայնժամ ետ ածել նօտար, և զի էին իւր տակաւին մեծութիւնք ոչ սակաւ, եթող այրեցն Քրիստափորի օժիտ մեծ, և զայլ ամենայն ինչս իւր բաշխեաց ուղիղացնց որդւոց նորա:

Խորհուրդ Լուդովիկեայ ՚ի դէպ գայր հիւրընկալացն, որ վասն նորա ՚ի տապնալի մեծի կային. զի արձակել զնա ՚ի վանաց՝ էր մտանել զնա յատեան՝ ի վրէժխնդրութիւն թշնամեաց, զոր և. ոչ միայն էր ածել նորա զմտաւ. էր և հրաժարել յարատևութենէ իւրեանց, և անդրադել զվանս առաջի ժողովրդեան. ձգել յանձինս զվեղարդեանս ամենայն վեղարաւորաց՝ որ ընդ տիեզերս, կորուսանելով զնուաստութիւնս. յարուցանել ընդդէմ իւրեանց զամենայն եկեղեցական իշխանութիւնս, խնամակալս իրաւանց այսոցիկ: Սակայն և ընտանիք սպանելոյն, որ հզօրք էին յոյժ, և կու-

սակիցք նոցա բաղումք, այնգէին խնդրել ըզ-
վրէժ, և Թշնամի իւրեանց չայտ առնէին՝ որ
ոք խափան արկանէը վրէժխնդրութեան նո-
ցա: Ոչ պատմի Թէ ցաւեալ լցէ նոցա ընդ մահ
սպանելոյն, և ոչ Թէ ուրուք 'ի նոցանէ հե-
ղեալ լցէ շնթ մի արտասուաց վասն նորա.
բայց միայն խնդրէին ածել զսպանողն ղբռամբ
կենդանի կամ մեռեալ: Այդ 'ի զգենուլ նորա
զձև կրօնաւորական, ամենայն հնձիւն լուծա-
նէը. զի անձամբ զանձն պատուհասէը չանցա-
ւորն, ապաշնարհս իւրով չանձն առնոյր,
խոստովան լինէը զմեզս իւր, հրաժարէը չամե-
նայն վիճից, և էր որպէս Թէ Թշնամի վէնընկէց:
Կարէին և աղգականք սպանողին, էթէ այսպէս
հաճոյ Թուէը նոցա, համարել և պարծել իսկ՝
զի չանցաւորն առ ահի սրոմոտութեան նոցա,
և առ յոտնահատութեան լցէ կրօնաւորեալ:
Եւ պարզաբար իսկ, մերկանալ 'ի զգեստ, գեր-
ծուլ զգէրս, բոկ գնալ, ննջել 'ի խշոի խոտո-
վէն, կեալ մուրոյութեամբ, Թուէը հատու-
ցումն բաւական խրոխտագունի ևս Թշնամա-
նէրց:

Մեծաւոր վանացն խոնարհութեամբ, այլ
համարձակ եղ ընդ առաջ եղբօր սպանելոյն, և
բաղում մեծարանօք խոստացեալ առնել որ ինչ
մարթէրն ըստ ըզձից նորա, պատմեալ զգէղջ
Լուդովիկեայ և զնորհուրդ կրօնաւորելոյ նո-
րա, և եցոյց նմա քաղցրութեամբ՝ զի կարէին
ինքն և ընտանիք իւր չատանալ այնուհիկ, և
ձ'արտասուեցեալ եւ նմա 'ի միտ առնուլ՝ զի
պարտ էր իրացն, Թէ հաճոյ և Թէ անհաճոյ,

պատճառ առնուլ վախճան: Եղբայր սպանելոյն
սկսաւ Թափել զզայրոյթ իւր. և վեղարաւորն
տեղւոյ տայր նմա, երբեք երբեք ասելով՝ « Իրա-
ւունք ածնիս »: Իսկ նա չաւել. « Մենք դիտեմք
ինչպէս պիտոյ առնեմք վրէժիս »: Բայց կրօ-
նաւորն ոչ ինչ ընդդիմաբանեաց, և ոչ չայտ
արար որ ինչ խորհէրն 'ի մտի: Ի վերջ պա-
հանջէը նա՝ մեկնել սպանողին 'ի քաղաքէն. և
Թէպէտ վեղարաւորին վաղ իսկ հաստատեալ
էր յղել զնա այլուր, սակայն ընկալաւ զպայ-
մանն՝ Թողեալ կարծել նմա առ հարկի զմեկնել
սպանողին:

Այդ երբև ամենայն ինչ այսպէս սահմանե-
ցաւ, հաճ գտան ընտանիքն՝ պահելով զպատիւ
իւրեանց, և վեղարաւորք գոհ ընդ ապրեցուցա-
նել զայրն, պահելով զարտաւնութիւն իւրեանց՝
առանց ձգելոյ չանձինս զքրիստոնէութիւն. գոհ
և ասպետք ընդ բարւոք ելս իրացն, գոհ և ժո-
ղովուրդն ընդ ազատութիւն առնն՝ որ սիրելի
էր իւրեանց, և զարմացեալ ընդ գարձ նորա.
առաւել քան զամենեսին գոհ և ինքն Լուդովիկ
կոս 'ի մէջ վշտաց, սկսանելով զկեանս ապաշ-
խարութեան և ծառայութեան, որով Թէ ոչ
փոխարինել՝ գէթ հատուցումն ինչ հայթայթել
մեզացն, և զգժոխմբեր խայթ խղճի մտացն
մեղմել: Բայց Թէպէտև վշտանայր՝ զի կար-
ծէին այլք չերկիւղ ածեալ զնա 'ի կրօնաւո-
րութիւն, այլ ընդ այն ևս անիրաւ գատողու-
Թիւն այլոց մխիթարէը, ընկալեալ զսյն 'ի պա-
տիժ և 'ի քաւութիւն: Այսպէս չերեսնամեայ
արկ զնատրաղն զանձամբ, և զի պարտ էր նմա

ըստ կանոնի փոխել և զանուն իւր, ընտրեաց կոչել Բրնստափոր, առ ՚ի յոյշ ածել հանապազ զասպաշտաւորութիւնն մեղայն:

Ի կատարել հանդիսի խարազնազեցութեանն, հրամայեաց նմա մեծաւորն գնալ ՚ի նորընծայութիւնն ՚ի մի ՚ի վանաց՝ հեռի անտի վաթսուն մղոնաւ, և ուղեւոյ լինել ՚ի վաղիւ անդր: Նորընծայն խոնարհեալ մինչև ՚ի յերկիր, խնդրեաց ընդ առն հին և ասէ. « Հայր իմ, թող առը որ նախ երթամ ուր որ խեղճին աբրնեը մնայ, ուր որ իր ընտանիքը անգթաբար վշտացուցի, գոնէ քիչ մը թեթևցընեմ իրենց վիշտը, ցուցընեմ իրենց իմ ցաւ՝ որ չեմ կրնար ընդ ամենայն վնասս փոխարինել հատուցանել, թողութիւն խնդրեմ եղբօրմէն. որպէս զի, թէ որ ատուած օրհնէ իմ դիտաւորութիւնս, չմեռնայ սրտին մէջ առեղութիւն »: Խորհեցաւ մեծաւորն՝ զի ոչ միայն բարի էր խնդիր նորա, այլ և հաշտ առնէր այնու զընտանիս սպանեալն ընդ վանս իւր. ջոգաւ առ եղբայրն սպանեալին՝ առաջի առնել նմա զխնդիր Եղբայր Բրնստափորի: Առ այս անակնկալ առաջարկութիւն, զգաց նա ընդ զարմանս և եռանդն սրտմտութեան, ոչ առանց լինչ ախորժանաց. և յետ վայրկի մի խորհելոյ, ասէ. Վաղը ետ գայ. և ժամագիր եղև նմա: Դարձաւ մեծաւորն պատմել նորընծային զհամակար հաւանութիւնն:

Ցայնժամ ուշ ՚ի կուրծս անկեալ աղնուականին, զի որչափ մեծահանդէս ընդունելը ընդհատուցումն, այնչափ յաճախելին փառք ընծայեցին առաջի ամենեցուն, և ըստ ոճոյ արդի պերճանաց՝ յաւելոյր եղ մի փառաւոր ՚ի պատմութիւն աղգատոհմին, աղդ արար փութանակի ամենայն ազգականացն, գալ ժողովել ՚ի վաղիւ անդր ՚ի միջօրէի առ իւր, ընդունել զհատուցումն թշնամանացն: Կայաւ պալատն ՚ի պայմանեալ ժամուն բազմութեամբ արանց և կանանց և էր սեանեալ անդ խառնիխուռն թիւիւ նոցա և ցցունս և վաղակաւորս, փողփատս գեղադանդաղ ողորկեալս, և արկանելիս ստորոտաքարշ սաղնեգործս արաբացիս ընդ միմեանս պատառեալ: Անդաստակը և գաւիթք և փողոցք շուրջանակի, լի էին սպասաւորօք և պատանդ մանկաւով, ամբոխիս Քաջաց և հետապրելիս որբոց: Եղբայրն Բրնստափոր ՚ի լսեանել զայն ամենայն պատրաստութիւնն՝ գուշակեաց զվան էրն. և վայրկի մի ազմկեալ, ասէ անդէն ՚ի մաէ. Աստի աղէկ է, սպանութիւնը այնչան առջին ըրի, պէտք է որ գայրակղութիւնն ալ այսպէդ վերջանայ ամենուն առջին: Եւ այսպէս զջայ ՚ի վայր արկեալ՝ եմռաւ ընդ գուռն ապարանիցն, անց ընդ գաւիթն ՚ի խաւան, որ անձայն կայր ՚ի զնկեն՝ գիտելով զնա յոտից ցգլուխ. եւ ՚ի վեր ընդ անդուռս, և ընդ հայլս ազատանաց՝ որ առնէր նմա ձանապարհ, ՚ի տեսիլ աչաց ամենեցուն պչրուցելոյ՝ էհաս առաջի տանուտեառնն, որ շուրջ պատեալ ՚ի կարևոր աղգականաց՝ կայր յոտին ՚ի մէջ դահլճին, յարեալ ՚ի գետին՝ այլ բարձր ՚ի գլուխ, յեց ձախումն ներախակալ առաջերին, և աջոյին զօձիս Թիկնոցին ՚ի կուրծս ձգելով:

Ի երբեմն՝ ալ ՚ի գէմն և ՚ի կերպարանս ուրուք այնպէս երևէին, և դոգցես զերանին կերք սրտին, ալ բազմութեան տեսողաց մի և նոյն պատահէ դառաստան։ Դէմք և կերպարան Եղբայր Քրիստափորի յայտնի առնէին տեսողաց, ալ ոչ առ երկիւղի մարդկան կրօնաւորեալ, և զնոնարհութիւնն զայն յանձն առնոյր։ առաւ սկիզբն եղև յանկուցանելոյ նորա յինքն զսիրտ ամենեցուն։ Եւ ՚ի տեսանել անդ զԹշնամանեաշն յիւրմէ, երագեաց զքայլս, էջ ՚ի ծունր առ ոտս նորա, և բազուկ զբազկաւս խաչանիշ ՚ի կուրծս եդեալ, և խոնարհեալ զգերծեալ գլուխ իւր, ասէ.

« Եղբօրդ սպանողն եմ. Աստուած գիտէ, որ իրեն կեանք տալու համար՝ արիւնս սիրով կը Թափեի. Թէպէտ աս բաղձանքս ուշ ու անգործ է, բայց կ՚աղաչեմ որ Աստուծոյ սիրոյն համար ընդունիս »։ Ամենեցուն աչք ՚ի նորընծայն, և առ որ խօսէրն՝ պշուցեալ կային ամենքին յակճիռս ՚ի լսել. և երբև լռեաց Եղբայր Քրիստափոր, չընկլուն ընդ դահլճէն գընայր գԹուԹեան և մեծարանաց։ Գժկամակ իմն քաղցրութեամբ, և ընկճելով զսրտմտութիւն Թիւն իւր կայր Թշնամանեալն, այլ յուզեցան գուժիք նորա ՚ի բանից անոի, և խոնարհեալ առ զղջացեալն՝ ասէ հառկչեալ ձայնիւ. « Ոաք եղիր... Թշնամանքը... իրաւ... բայց զգեստդ... աս ալ միայն չէ... այլ նաև քեզի համար... » Ոաք եղիր Հայր պատուական... Եղբայրս... չեմ կրնար ուրանալ... որ քիչ մը տաք գլուխս կը... ասպետ էր... քիչ մը յան-

դուգն էր... Բայց Աստուծոյ սրամագրութիւնն է. ասկէց ետքը չխօսուի աս բանիս վրայ։ Բայց Հայր իմ, ինչո՞ւ ոաք չես եղիր »։ Եւ կալեալ զձեռանէ, յոտին կացոյց զնա։ Իսկ նա յանկուցեալս խոնարհեալ զգլուխ, էառ պատասխանի. « Ուրեմն կրնամ յուսալ որ հրամանքդ լինի Թողութիւն տուիր. և Թէ որ հրամանքդ կատաս, ուրիշ ոչ չիտար. ո՜հ, ո՞ր էր որ մէյմը բերնէդ լսէի Թողութիւն տալդ »։ Եւնա ասէ. « Թողութիւն կատամ. կարօտութիւն չիկար որ ըսէի. բայց որովհետև ուզեցիր որ ըսեմ, իրաւցընէ Թողութիւն կատամ քեզի, ու լինի հետ ամենքն ալ »...

Յայնժամ աղաղակեցին ամենեքեան միաբարբառ. Ամէն՛ ալ, ամէն՛ ալ։ Եւ դէմք կրծնաւորին պարզեցան ՚ի շնորհասարտ զուարթութիւն. այլ ընդ զուարթ դիմաքն գեռ ևս էր տեսանել խոր և խնարհ զեղջ սրտի ընդ չարիսն, զոր չկարեր բառնալ ՚ի սպառ Թողութիւն մարդկան։ Այլն աղնուական յաղթեալ ՚ի տեսիլ նորընծային, և յափշտակեալ ՚ի գորովոյ ամենեցուն, անկեալ զպարանոցաւ նորա, համբուրեաց զնա, և ընկալաւ զհամբոյր նորին։

Հնչեաց դահլիճն առհասարակ ՚ի դրուատս. և ամենեքեան ՚ի գովք խանդաղատեալ, շուրջ եղեն խնդեցան զեղբայր Քրիստափորիս։ Հասին սպասաւորք մեծաւ սպասուք քաղցրաեներաց և ըմպելեաց. և ՚ի խնդրել նորա հրաժեշտ, ասէ ցնա տանուտէրն. « Հայր իմ, հրամմէ ընդունիմ քիչ մը բան, աս բարեկամութեան նշանը տուր լինի »։ Եւ ընդ բանին՝ մա-

տոյց նմա յառաջ քան այլոց ամենեցուն ՚ի ըս-
պասուց անտի, այլ նա հրաժարեալով ինն ան-
կեղծաբար, ասէ. « Ա՛լ ատ բանէրը ինծի հա-
մար չեն. բայց չեմ մերժեր հրամանքիդ ընդ-
դէմ. ես ձամբայ ելիւր, ընդհակ հայ մը
բերել տուր ինծի համար, որպէս զի կարենամ
ըսել՝ որ հրամանքիդ ողջմտութիւն ընդունե-
ցայ, հրամանքիդ հացը կերայ, ու ասկից ալ
ըլլայ տուած թողութեանդ նշանը »:

Ի գումթ չարժեալ այրն ազնուական, հրա-
ման եւս անդէն, և եկն ՚ի սպասաւորայ՝ բե-
րելով հայ ՚ի սկուառեղ արծաթի առ Հայրն
Բրիսատափոր: Որոյ ընկալեալ զայն ընդհակա-
լեօք, եդ ՚ի մխաղն իւրում, և առեալ հրա-
ման, և միւսանգամ համբուրեալ ընդ նմա, և
ընդ ամենեսին՝ որ մերձաւորագոյնք կային առ
նմա, և կարացին վայրկի մի ունել զնա, հաղիւ
կարաց ելանել արտաքս: Բայց և ՚ի նախասե-
նեակս և յանդաստանի հարկ եղև նմա ուժգին
զերծանել ՚ի բայ ՚ի սպասաւորաց անտի, և ՚ի
Քաջաց իսկ ոմանց, յորոց կէսք զքզանցս նորա
համբուրէին, այլք զչուանեայ գօտին, և կէսք
զվնդուղ նորա. ընդ փողոցս ածաւ ՚ի խառնէ
ժողովրդեան որպէս յաղթանակաւ մինչև ՚ի
դուռն քաղաքին, ուստի պարտ էր նմա ուղևո-
րել ՚ի նորընծայարան:

Եղբայր սպանելոյն և ազգականք նորա, որ
եկեալ էին ՚ի տխուր յափեցուումն գոռոզու-
թեան իւրեանց, լցան ընդհակառակն զուարթ
ինդութեամբ անյիշաչարութեան և բարեկա-
մութեան: Յամառաց ժողովէն ՚ի միասին ոչ սա-

կաւ ՚ի խօսակցել անսովոր ինն զուարթու-
թեամբ և մտերմութեամբ, որպէս ոչ ուրուք
խորհեալ էր յառաջագոյն ՚ի գալ անդր. Ճառս
արկեալ խօսէին, փոխանակ վրէժխնդրութեան
անիրաւութեան և սպառնալեաց, զՀաշտու-
թենէ զհեզութենէ և զգթութաւեաց կրօնաւո-
րելոյն: Ի լուծանել ժողովոյն՝ այրն ազնուա-
կան դեռևս առ գորովանաց յուշ ածէր զար-
մացմամբ որ ինչ լուեալն էր և տեսեալ, և ա-
սէր ՚ի մրմունջ, « Իրաւ որ ատ կրօնաւորը թէ
քիչ մըն ալ ուշանար ծնկան վրայ՝ գրեթէ գրե-
թէ ես իրմէն թողութիւն ալ ուզէի՝ եղ-
բայրս սպաննելուն համար »: Պատմութիւնն
յայտ առնէ, զի իշխանն այն մեղմեաց այնու-
հետև զսխտուն բերութիւն, և մարդասիրագոյն
գտաւ:

Հայրն Բրիսատափոր այնպիսի մխիթարու-
թեամբ գնայր, զորոյ չէր երբեք առեալ ըզ-
փորձ յետ այնր սոսկալի աւուրը, զոր յամե-
նայն կեանս իւր ապաշաւելոյ էր: Զըղութիւնն
հրամայեալ նորընծայիչ՝ պահէր առանց զգա-
լոյ, ընկղմեալ ՚ի խորհուրդս Ճգանց կարօտու-
թեանց և կորանաց, զորս պարտ էր նմա յանձն
առնուլ վանս յանցանացն: Զկայ առեալ ՚ի ժամ
Ճաշոյ առ ուսեցին ՚ի բարեբարոյ, հեշտալի ինն
ախորժիւ եկեր զմսոյն ինչ նկանակին թողու-
թեան, պահեալ զմիւս մսոյն ՚ի մսխաղն յան-
մոռաց յիշատակ:

Արտաքոյ առաջարկութեանս մերոյ է պատ-
մել զվանական կեանս նորա, ասացից ևեթ՝ զի
կատարելով նորա միշտ մտադիւր և մեծաւ խը-

նամով զպաշտօն քարոզութեան և կալոյ առնել թէը ՚ի հոգեվարս՝ որ սովորաբար յանձն էր նմա, ոչ վերջանայր յայլոց և երկուց պարտուց՝ զորս իւրովի առեալ էր յանձն, խաղաղել զվէճս, և պաշտպանել հարստահարելոցն։ Այս բերութիւն իւր մնանէր յանզգաստից և բազմամեայ սովորութիւն իւր ըստ մնանէ, և ինացորդ ինչ պատերազմական ոգւոյն, զոր խոնարհութիւն և ճգնութիւնք ոչ կարացին չնջուցանել՚ի նմա ՚ի սպառ։ Խոնարհ և հանդարտ խօսէր միշտ, այլ ուր զարդարութենէ և ճշմարտութենէ էին բանք, վառէր անդէն նախանձ եռանդեամբն, որ օգնեալ և բարեխառնեալ հզօր աղդութեամբ՝ զոր յաւելոյր սովորութիւն քարոզելոյ ՚ի նոյն, տայր լերդութիւն նորա առաւելութիւն իմն առանձին։ Դէմք իւր և կերպ յայտ առնէին մարտ ընդ երկար ընդ եռանդուն և բարկ բնաւորութիւն իւր, և ընդ ներհակ կամ՝ մշտայաղթ և միշտ կազմ, վաղեալ՚ի պատճառաց և յաղդեցութեանց գերակայից։ Մի՚ի կրօնակից բարեկամաց նորա, քաջածանօթ նորին, համեմատէր զնա բառից աղդուականաց, զորս բարեկիրթք իսկ ոմանք ոչ ամբողջ արտասանեն՚ի յորդել կրից, սակայն և՚ի թերութեան անդ հնչման յիշեցուցանեն այնոքիկ զնախնի աղդուութիւն իւրեանց։

Եթէ անծանօթ՝ իսկ ոք աղքատ օրիորդ, զոր կեալ էրև զՎուչխա, խնդրէր օգնութիւն՚ի Հայր Պրիստափորէ, դիմէր սա իսկոյն օգնել նմա. ոլչափ և առաւել փութացաւ յօգնու-

թիւն օրիորդին՝ զոր ճանաչէրն, և զարմանայր ընդ անմեղութիւն նորա. և վաղ իսկ՚ի հոգս կայր վասն վտանգի նորա, և սրամտեալ էր արդարատես ընդ հալածանան։ Դարձեալ և զի խրատեալ էր զնա մի ոմանք յայտնել ինչ՝ ընդուշանալով յառաւելագոյն չարեաց, խնդայր թէ գուցէ յայնժամ աղէտք ինչ՚ի խրատուցն պատահեալ լցեն, և՚ի բնածին եղբայրսիրութիւն իւր յաւելոյր խնդմ մտաց, որպէս յաճախ պատահէ լաւաց։

Բայց՚ի յամէնս մերում՚ի պատմութիւն իւրաց Հօրն Պրիստափորի, ևհաս նա և կայր առդուրս տան. եթող կանանչին գնչ և գկարժառ. և յարեան ամենեքեան գոչելով միաբարբառ. «Հայր Պրիստափորն է, օրհնեալ կրօնաւորը»։

Գ Լ Ո Ի Խ Ե·

Հայրն Քրիստափոր զկայ առեալ առ սե-
ծուքք, ընդ ակնարկել 'ի կանանին՝ ծանեաւ,
զի չէին վայրապար կասկածանք իւր. և եղա-
նակաւ լինն հարցման՝ ձնալով տխուր պատաս-
խանւոյ, և թեթեւաւին չարժմամբ գլխոյն վեր-
առեալ զմորուս, ասէ ցօրիորդն. Ո՞ւրէճ!: Իսկ
Լուչիա փոխանակ պատասխանւոյ՝ հարաւ յար-
տասուս. և մերն այն ինչ ասել սկսեալ՝ « Ներէք
համարձակութեանս »... վուխտացեալ վեղա-
րաւորին կարճատեաց զնոնարհական ձև խօ-
սիլն, և նստեալ անդ յաթոռակ մի եռոտանի,
ասէ. « Մի խռովիր խեղճ աղջիկ »: Եւ ապա
դարձեալ առ մայրն ասէ. « Ըսէ ինծի, ինչ
կայ »: Եւ 'ի պատմել կնոջն՝ որպէս և կարաց,
զաղետալի դէպսն, փոփոխեր ստեպ գոյն դի-
մաց կրօնաւորին, մերթ զաչս 'ի յերկինս ամ-

բառնայր, և մերթ ոտիւք տրոփիլը վերկիր. և ՚ի կատարել պատմութեանն՝ երկաքնումբք ձեռաք ծածկեալ վերբեաս, ասէ. « Տէր Աստուած »...

Այլ ոչ աւարտեալ վնասս, դառնայ անդրէն առ դուստրն և մայր, և ասէ. « Խեղճեր. Աստուած ձեզի խաչ խրկեր է. խեղճ Լուչիա »:

Եւ Լուչիա հեկեկալով ասէ. « Ջեռքէ մի թողուր զմեզ »:

Իսկ նա ասէ. « Ջեռքէ թողում ! Ինչ երեսով աստեղծմէ բան մը խընդրել, թէ որ ձեզի չօգնեմ, որ ասանկ խեղճութեան մէջ կինկեր էք, ձեզի՝ որ Աստուած ընծի յանձներ է. մի վախնաք, ինքը կօգնէ ձեզի. ինքը ամեն բան կը տեսնէ. ինքը կրնայ ընծի սէս տկար մարդու մը ձեռքով ալ խաղք ընել մեզ... տեսանք, մնացածնէք ինչ որ կարելի է ընել »:

Զայս ասացեալ, լեցոյց զարմուհին ձախոյ ՚ի ծունգն, խոնարհեցոյց զձախատ լուր յաին, և աջովն կալեալ ծնօտիւն հանդերձ զմերսա, և ժողովեալ լինքն զամենայն զօրութիւնս մտաց, խեղամուռ լինէր՝ քանի սոսկալական էր և պժռաբերն զերս երացն գտանել, և քանի երկբայելի և բազմավտանգ հնարք հայթայթանաց: Խորհէր ՚ի մտի, աղդել ամէն ՚ի սիրտ ժողովրդապետին, և խեղամուռ առնել զնա, որ սէս վերջանայր յերեսաց պատասց. բայց ապ մտի և պատաք ոչ ինչ զօրէին ընդդէմ երկիւղի: Ա՛հ արկանել ՚ի նա, և զմ՚ ած՝ որ յաղթել կարացէ երկիւղն նորա յատրճանակէ:

Ծանուցանել զամենայն արքեպիսկոպոսին, և կարգալ զնչխանութիւն նորա յօդնութիւն. այլ ժամանակն պէտք էին... և յայնմ վայրի !.. և ապա !.. և եթէ պատկեր կա էք և անմեղ օրիորդն, սանձահարէր այնու այրն ամէհի: Ո՛ գիտէ ցմր վայր հասանէր կատաղութիւն նորա:.. Իսկ զդմ՚ ունել. և ո՛րպէս: Եւ ասէր ՚ի մտի. « Ա՛հ, թէ որ կարենայի օգնական առնել ինծի՝ հոս կամ Միլան եղած կրօնակից եղբարքս. բայց աս բանը միաբանութեան չվերաբերիր, չեն օգներ ինծի: Ան մարդը բարեկամ ձեացած է վանքին, ու վերադարձորաց կողմն. երբեմն երբեմն կուգան ալ իրենները ոմանք մեր վանքը ապաւինելու. հարկ է որ մինակ կառնիմ, ու խոովարար անհանգարտ մարդ մը սեպուիմ. ալ դէշն ալ ան է որ խեղճ աղջիկը աւելի ծանր վտանգի մէջ կը ձգեմ »: Եւ կրնադատեալ երկուստեք զգուստ և զնչխաս, լաւ համարեցաւ գնալ ինքնին առ Ռոտրիկ, և փորձել կատեցուցանել զնա ՚ի վատ առաջարկութենէն ազաչանօք և երկիւղիւ ասօք և անօք կենաց. և ՚ի չյաջողելն, դէթ դիտել յայտնագոյն զամառութիւն նորա ՚ի ձեռնարկն գարշելի, և զդիտաւորութիւն նորա, որով մարթ էր խորհել ՚ի հնարս հայթայթանաց:

Եւ մինչդեռ Հայրն Քրիստափոր կայր ՚ի խորհուրդս յայսոսիկ, պատանին Ութնոյ՝ որ ըստ ամենայնի, որպէս է գուշակել, չկարեր կալ հեռի ՚ի տանէ անտի, եկն անդր: Եւ ՚ի տեսանել զՀայրն Քրիստափոր ՚ի վարանս, և

յակինարիկէ ժծրն և դասեր մի խոռվել վնաս, զկայ էառ անբարբառ 'ի սեամս անդ. և նորա 'ի վեր առեալ զդէմն՝ առ 'ի յայտանել նոցա ըզ-խորհուրդ իւր, էառես զպատանին, և ողջունեաց զնա ընդելական սիրովն՝ զոր յաւելոյր դուքթ գործոյ աղեւսին: Հարցանէ պատանին փղձկեալ.

« Պատմեցի՞ն... հրամանքդ... Հայր իմ»։—

« Կրնաս երկակայել. անոր համար եկեր եմ»։—

« Ի՞նչ կըսես առ անզգամին ըրածին»։—

« Ի՞նչ կուզես որ ըսեմ. հոս չէ որ ըսէ, ինչ օգուտ ըսելս: Բայց քեզի առ կըսեմ, սիրելի Ռէնցոյ. Աստուածոյ զքեզ յանձնէ, ինքը չիթողուր զքեզ»։—

Ռէնցոյ ասէ. « Բերանդ պագնեմ. հրամանքդ անոնցմէ չէս, որ միշտ աղքատին կուտան յանցանքը: Հապա ինչ կըսես, Հայր իմ, սա փաստաբանին ըրածին»...—

« Հիմայ առ բաները Թող, ուրիշ բանի չեն գար առնք, բայց փուճ տեղը կիրքդ չարժէ. լուր: Ես ողորմելի կրծնաւոր մըն եմ, բայց քեզի ալ կըսեմ ինչ որ ասոնց ըսի, որ ձեռքէս եկածին չափ պատրաստ եմ ձեզի օգնելու»։—

« Ո՛հ, հրամանքդ ուրիշ բարեկամներու պէս չես, որ միայն մեծ մեծ խոստումնք ընել գիտեն. Թէ որ հաւասալու խօսքեր ըլլային յաջողուր Թեան առեն ըրած խոստումնքնին, արիւնին ալ Թափելու կը խոստանային, զնս առտանային դէմ ալ պաշտպանելու: Իսկ հիմայ տեսնալու է որ ինչպէս հեռու կը պաղտին: Հերիք էր

որ տեսնայի Թշնամիս, կը հասկըցընէի ինքն»... Բայց յասելն զայս՝ էառես, զի խոռվեր կրծնաւորն, և զգաց զի անճահս խօսեր, և կամելով ջրջել զբանսն, չիսթեալ, ասէ. « Ըսել կուզեմ որ... այս ինքն... ան չէր միտքս... ըսելիքս առ էր»...—

« Հապա ո՞րն էր. ուրեմն կուզէիր աւրել իմ խորհուրդս. աղէկ որ առենին խմացար սխալմունքդ. դուն բարեկամներ կը փնտռէիր... Բայց ինտո՞ր բարեկամներ, որոնք ուզէին ալ չէին կրնար օգնել քեզի. ու զանոնք փնտռելով, կուզէիր կորընցընել զԱստուածդ՝ որ Թէ կրնայ, և Թէ կուզէ օգնել քեզի: Ձե՞ս գիտեր որ ինքն է միայն խեղճերուն օգնականը, անոր ապաւինէ. չե՞ս գիտեր որ ակարներըը պարապ տեղը կաշխատին ձանկերնին դուրս հանելու. կարենան ալ»... Եւ յասելն զայս՝ բուռն եհար ուժգին զբազկէ պատանւոյն, և 'ի սաստ դիմացն յաւելեալ ձև լինի ղջնական՝ խոնարհեցոյց զաչս իւր, նուաղեցաւ բարբառ նորա, և ասէ աղօտաձայն. « Թէ որ կարենան ալ, ո՛հ, ինչ վախնալու բան է: Ռէնցոյ, կը վստահիս ինծի... Ի՞նչ կըսեմ. էէ ինծի պէս ողորմելի մարդուն, հապա կը վստահիս Աստուծոյ»։—

« Ի՞նչպէս չվստահիմ. իրաւցընէ ինքն է տէր»։—

« Ուրեմն կը խոստանաս որ մեկու մը դէմ չընես, մեկը չիդրդռես քեզի դէմ, ըսածս միայն ընես»։—

« Կը խոստանամ»։—

Յայնժամ ոգի էառ օրհորդն, որպէս Թէ

բեռն ծանր բարձեալ՝ ի Թիկանոց նորա. և մայրն յաւել. Ապէս ուրեմն:

Եւ կրօնաւորն ասէ. « Մոխիկ ընկեր ուրդիք. այսօր կերթամ այն մարդուն հետ խօսելու. Թէ որ Աստուած խօսքերուս ուժ տայ, ու ա նոր սիրտը շարժէ, աղէկ. Թէ որ չէ, ինքը մեզի ուրիշ ճամբայ մը կը ցուցընէ. դուք հանդարտ եղիք. մի երկնչեք, պարապ խօսքերէ զգուշացիք, տուն քաշուեցէք: Ա՛ս երկուքն, կամ Թէ որ ուշանամ՝ վաղը առաւու կը տեսնուինք »: Զայս ասացեալ, և խափանեալ զամենայն ընորհակալիս և օրհնութիւնս, մեկնեցաւ. և հասեալ՝ ի վանս՝ ի ժամերգութիւն ճաշուն, և ճաշեալ, ուղղոյ եղև գնալ՝ ի խշտիգաղանին՝ զոր կամէրն ածել՝ ի զգօնութիւն:

Պալատն Թոտրիկի կառուցեալ էր դղեկաձև՝ ի կատար մեծ՝ ի բլրոց որ՝ ի լճեղեր անդ սփռեալ կան: Եւ էր վայրն այն վերագոյն քան զդիւղ խօսեցելոցն երբ մերձս երթս, և՝ ի վանաց անտի չորս: Ի ստորոտ բլրոյն՝ ի հարաւակողմն՝ որ հայի՝ ի լիճն՝ էր կոյտ մի անակաց, բնակեալ՝ ի գեղջկից Թոտրիկ իշխանի. և անդր էր երբ մայրաքաղաք փոքրիկ պետութեան նորա: Շատ էր անցանել ընդ այն, առ՝ ի ճանապհել զբարս և զհանգամանս երկրին. ակնարկեալ միանգամ՝ ի վայրապարկ սենեակս՝ ուր գտան զնէր դուռն ինչ՝ ի բաց. էր տեսանել՝ ի նոսա հրացանս, աւազափողս, բրիչս, փոցխ, գերձ խարկս յարդեայս, ցանցս, և եղջիւրս վառօդոյ խառն՝ ի խուռն: Որեարն՝ որ հանդիպէր անդ՝ էր յաղթանդամ և գժնեայ, և գիսակ մեծ վերս առեալ զգլխով, և փակեալ՝ ի ցանց. ծերք, որոց կորսուսեալ էր զժանիս, Թուէին կազմք՝ ի կրձնել զընտրս՝ եթէ երթեք փոքրս խրճք պերպեռէր զնոսա. կանայք առնակերպք, աճառուտք բազիջք, պատրաստք յօդնութիւն լերզուի, եթէ սա չէր բաւական. ի դէմս խոկ և՝ ի շարժմունս մանկտուց, որ խաղային՝ ի հրապարակս, էր տեսանել ըմբոստ ելեն և դիւրադրդիռ:

Հայրն Քրիստափոր էանց ընդ գիւղն, էլ ընդ ուղի գալարաձև, եհաս՝ ի սարահարթակ ուրեք առաջի ապարանիցն: Փակեալ կայր դուռնն, ՝ի ցոյց ճաշէլոց տանուտէառնն անվրդով: Պատուհանք, որ հայէին՝ ի փողոցն, փակեալ կային՝ ի տախտակափեղկից խարխարելոց և մեղելոց՝ ի բազմահոլով ամաց. բայց ամրացեալ երկաթի վանդակօք, և այնպէս բարձունք յերկրէ, զի հազիւ ոք հասանէր անդր՝ շալակեալ յայլմէ: Տիրէր անդ խաղաղ լռութիւն, և էր կարծել զայն տուն մի լքեալ՝ եթէ ոչ ապրն՝ նշանակ ընակութեան չորք ամանք զետեղեալք անդ կարգաւ, երկոքեան կենդանի և երկոքեան մեռեալ: Անդէնք երկու մեծամեծք սատանայ Թիւք, գլուխ՝ ի կախ, մին փետեալ և կիսակէր՝ ի ժամանակէ, միւսն դեռ ամբողջ և փետրաւոր, բնեռեալ կային մի մի՝ ի մի՝ ի փեղկից դրանն. և փաչք երկու ընկոզմանեալք յաջ և յահեակ՝ ի բազմոցի՝ կային՝ ի պահ, միաշրջ՝ ի կոչ առ՝ ի վայելս նշխարաց սեղանոյ եչխանին:

Զկայ հառ Հայրն Քրիստափոր բանալոյ դրանն սպասելով. այլ մի՝ ի փաչացն յարեաւ,

և ասէ. « Հայր, Հայր, առաջ եկուր, հոս չենք ազատեցըներ վեղարաւորները, մենք բարեկամ ենք վանքին. անգամ մը եկայ հոն, քանի մը վայրկեան դուրսը սպասել տուին. օդը յարմար չէր ինծի. թէ որ դուրսը չիբանային, գէշ պիտոր լմընար »: Ձայս ասացեալ բախեաց երկեցս Թաւուսն կախելով զդուռնն: Ի լուր բաղխմանն ական հաջել և կաղկանձել չունք և դամիռունք, և եհաս ղհետ քրթմնջելով մի 'ի ծերոց սպասաւորաց: Որ 'ի տեսանել ղՀայրն Քրիստափոր՝ 'ի խոր խոնարհեցաւ. և լուեցուցեալ սաստիւ և ձեռամբ զլռնան, եմոյծ ըզհնբն 'ի նեղքս 'ի գաւթի մի անձուկ, և փակեաց զդուռնն: Եւ ածեալ զնա 'ի սրահ ուրբք, և զարմանալով լմն և մեծարանօք հայեցեալ 'ի նա, ասէ. « Հրամանքդ չէս Հայր Քրիստափորը »: —

« Հա, ես եմ»: —

« Հրամանքդ հոս! ինչպէս կըլլայ »:

« Կը տեսնաս »: —

« Բարիք մը ընելու համար եկած պիտոր ըլլաս, ամեն տեղ ալ կրնայ ըլլալ»: Աչեր, և ոչ դադարեր 'ի քրթմնջելոյ ընդ քիմս յառաջնորդելն. և անցեալ ընդ երիւս և երիս սրահս մեծինս, հասին 'ի դուռն կոչնոյն: Հնչէր 'ի նեղբուստ խառնաձայն պատառաքաղաց, դանակաց, բաժակաց, պնակաց և դասատպերկաց, և աղաղակ բանակռուելոց՝ որ ճգնելին յաղթել միմեանց: Կրօնաւորն կամեր յետս կալ յանկեան ուրբք տան, մինչև յարիցեն 'ի սեղանոյ. այլ բացաւ յայնժամ դուռնն: Աստիւնոս

ոմն կոմս հօրեղբօրորդի տանուտեառնն, բազմեալ կայր հանդէպ նորին, զոր 'ի վեր անդր յիշատակեցաք՝ առանց անուանելոյ: Որոյ տեսեալ զձև կրօնաւորին և զգլուխն գերծեալ զգեաց զի բարեմտութեամբ գայր, և ձայնեաց. « Է՛, է, մի քաշուիր Հայր պատուական, հրամմէ, առաջ եկուր »: Իսկ լչլանն Ռոտրիկ թէպետև ոչ գիտեր զպատճառ գալստեան նորա, սակայն դուշակելով ինն զգուշանայր յընդունելոյ զնա եթէ չէր Աստիւեայ յանխորհուրդս կոչեցեալ զնա բարձրաձայն. վասն որոյ ոչ էս կարացեալ հրաժարել, ասէ. « Եկուր, Հայր, եկուր »: Յառաջ մատեաւ Հայրն Քրիստափոր, խոնարհեալ առաջի լչլանին, և ընկալաւ երկրագութիւնք ձեռաք զղջոյն կոչնականացն:

Հաճոյ է սովորաբար, թէպէտև ոչ ամենից, տեսանել զայր լաւ առաջի անօրինի՝ կացեալ պարզերես քաջասիրտ և համարձակախօս. բայց առ 'ի կալ այսպէս՝ խնդրելն ոչ սակաւ հանգամանք, որ դուն ուրեք պատահեն 'ի միասին: Վասն որոյ չեն ինչ զարմանք, զի Հայրն Քրիստափոր վկայութեամբ բարեաւ խղճի մտացն, հաստատուն մտօք ընդ արդարութիւն գաւթին՝ որոմ պաշտպանէր, և զգացմամբ լմն սոսկման և կարեկցութեան ընդ Ռոտրիկ, հայր զգուշութեամբ և մեծարանօք առաջի նորա, որ բազմեր գահագլուխ յատարանն իւր յիւրումն պետութեան, շուրջ պատեալ 'ի բարեկամաց և 'ի սպասուց լչլանութեանն, ահարկութեամբ լռեցուցանելոյ և զաղաչանս՝ Թոզ Թէ զխրատ և զանդիմանութիւն: Ցաջմէ նորա

բազմէր կոմսն Աատիլլոս, գործակից անկուանաց նորա և հարստահարութեանց, որ եւ կեաղն էր ի Միլանէ անդր առ ի զբօսանիլ ընդ նմա զաւուրս ինչ. ի ձախմէ ի միւս կողմն սեղանոյն կայր մեծարանօք, այլ աներկիւղ լինն վստահութեամբ գատաւորն, որում անկ էր ըստ արդարութեան՝ առնել լրաւունս Ռէնոցոյի պատանւոյն, և պատուհասել զՌոտրիկ ըստ վերագոյն հրովարտակացն: Հանդէպ գատաւորին բազմէր մեծերմագոյն և ի սերտ սրտէ յարգանօք վաստաբանն Թընճուկ քահօղ, սեաւ վերարկուաւն, և կարմրագոյն քան զընդելականն ուրնգամբ: Իսկ հանդէպ երկոցունց հօրեղբօրորդւոց բազմէին կոչնականք երկու աննշանք, զորոց ասէ պատմիչն՝ զի ոչ այլ ինչ առնէին, բայց ուտել, և խոնարհեալ զդլուխ՝ ժպտել և հաստատել որ ինչ ոք ի բազմականացն ասէր, առանց ուրուք ընդդիմաբանելոյ:

Եւ յասել իշխանին՝ « Ոաքի վրայ մի թողուք կրծնաւորը », ումն ի սպասաւորաց մատոյց նմա աթոռ, և Հայրն Իրիստափոր նստաւ՝ ասելով. « Թողութիւն կընես անյարմար առեն գալուս »: Եւ գաշն ձայնիւ յաւելու յոնկանէ իշխանին. « Հրամանքիդ հանդստեամբը կաըևոր խօսք մը ունիմ ըսելու առանձին »: —

Պատասխանէ Ռոտրիկ. « Աղէկ աղէկ, կը խօսինք. բայց հիմակու հիմս ըմպելիք բերէք Հայր պատուականին »:

Նա կամեր գնալ ի բաց. այլ Ռոտրիկ ամբարձեալ զձայն ի մէջ վերստին սկսելոյ ազա-

զակին, ասէ. « Զէ, չըլլար, մ'ըներ ինծի առ զրկանքը. եղած բան չէ՝ որ վեղարաւորը մը գայ առ առուր, ու առանց քիչ մը գինի խմելու, երթայ. ինչպէս և ոչ պարտաւոր մը առանց անտառիս փայտերուն համը առնելու »: Ընդ այս բան իշխանին քրքիջ բարձին ամենեքեան, և խափանեցաւ առ վայր մի կոչնականացն վէճ ուժգին: Մի ի սպասաւորաց բերեալ անդէն տպակեակ մի գինւոյ յափսէի, և բաժակ ի ձեռ սկսոյ, մատոյց վեղարաւորին, որ ոչ կամեցաւ հրաժարել ի թախանձանաց իշխանին, զի կարեւոր էր յինքն յանկուցանել զնա. և լցեալ զբաժակն, ըմպէր յուշիկ:

Սկսաւ վէճն անդրէն, և աղաղակէր կոմսն Աատիլլոս. « Թասոյին վկայութիւնը բանի չկրնար, յարգելի գատաւոր, մանաւանդ թէ քեզի դէմ է, վասն զի առ մեծ մարդը, առ հմուտ մարդը, որ ասպետութեան կանոնները աղէկ գիտէր, անանկ ըրաւ որ Արկանթին գեսպանը քրիստոնեայ ասպետները մեհամարտութեան կանչելէն առաջ՝ Պուլեոնէն հրաման խնդրեց »: —

Այլ առ ոչ ինչ նուազ աղաղակաւ ասէր. « Բայց առիկայ աւելորդ էր, բոլորովին աւելորդ, բանառաւեղծական զարդ մը. վասն զի դէսպանը ինքնիրեն ազատ է չէրառանց ապտոյ, առանն ալ կըսէ՝ դէսպանն անպարխ է: Առանձները, պարոն կոմս, ազգի մարդկան խմաստութիւնն է: Գեսպանին իր կոչմանէ բան մը չաւելցուցած, մեհամարտութեան հրաւէրքը միայն գրով տալն ալ »... —

« Բայց ԷՐԲ պիտոր ուղես հասկընալ՝ որ ան դեսպանը յաւանակ մըն էր, չէր դիտեր առ-ջի »... —

Ցայնժամ ընդվիզեաց իշխանն առ՝ի կաթ-ձել զվիճն, և ասէ. « Հայր Բրիատափորին թո-ղուանք որոշել խնդիրը. ինչ որ վճիռ տայ, ան ըլլայ »: —

« Աղէկ է, աղէկ է », ասաց Ատիլլոս՝ ո-րուան ախորժելի էր, զի վեղարաւոր ոք դա-տեսցէ զինդիրն ասպետական, ուր գատաւորն ջերմագոյն՝ի վիճն՝ ոչ հանդարտէր, և գժկա-մակ դիմօք Թուրը խաղ իմն մանկտւոյ համա-րել զայն:

Ասէ Հայրն Բրիատափոր. « Ինչ որ հասկը-ցայ, ինձի չերևաւ որ ատիկայ իմ գատաստան ընելու բանս ըլլայ »: —

Ռոտրիկ ասէ. « Ատանք վեղարաւորներուն սովորական խոնարհութեան խօսքերն են, բայց ատոնցմով չես խաբըսիր. դուն վեղարով չես եկած աշխարք, աշխարք ձանչցեր ես զքեզ: շուտ, շուտ. խնդիրը ատ է »... —

Եւ կոմսն աղաղակեաց. « Վիճը ասոր վրայ է »... —

Ի վերայ էած Ռոտրիկ. « Թող տուր որ ես պատմեմ, ես ոչ մեկ դիմեն եմ, և ոչ մեկուն դիմեն: Պատմութիւնը ատ է. սպանիացի ասպետ մը մեծամարտութեան կը հրաւիրէ մի-լանցի ասպետ մը. հրաւէրըն Թուղթը բերող, տունը չիգտնալով ասպետը՝ անոր եղբօրը կուտայ: Եղբայրը կը կարդայ, ու թղթին պա-տասխան՝ աղեկ ծեծ մը կուտայ Թղթաբե-րին »: —

Աղաղակէ Ատիլլոս. « Ծեծին բուն տեղը, անկէց յառմառ տեղ չէր կրնար ըլլալ. երկինք-քէն աղդեցութիւն մը եղած է իրեն »... —

Դատաւորն ասէ. « Ատանկայէն եղած է ատ աղդեցութիւնը. դեսպանի մը ձեռք վէրցընել! սրբազան անձի մը! Չըսանդդ ալ ըսէ, Հայր պատուական, ասիկայ ասպետի գործք է »: —

Գոչէ կոմսն. « Այ՛ ատանկ կը վայլէ ասպե-տի մը, Թող տուր որ ըսեմ, ես դիտեմ ասպետի մը վայլածը. Թէ որ ձեռքով զարկած ըլլար, ուրիշ բան. բայց վիրայը ձեռք չպատռեր. չեմ դիտեր ինչքա՛ն է առջի հոդդ մեկ արիկայի մը կռնակին համար »: —

Ո՞վ հրամանքիդ կըռնակի խօսք կընէ, պարոն կոմս. մոքէս չանցած խօսքերը բերանս կը դը-նես. իր պաշտօնին վրայ է խօսքս, չէ Թէ կռնը-կին. մանաւանդ Թէ ամեն ազդայ իրաւունքին վրայ է խօսքս: Ըսէ ինծի, խնդրեմ. ազդարար-ներն որ հռոմայեցիք մենամարտի համար կը խրկեին ուրիշ ազդայ, կը խնդրէին հրաման իրենց դեսպանութիւնը ընելու. գաիր ինծի պատմիչ մը, որ նուիրակ ծեծելու խօսք մը ընէ »: —

« Ի՞նչ վերաբերութիւն ունին հին հռոմա-յեցւոց ազդարարները մեզի հետ. անոնք ա-րաներուս մէջ հաւ էին, խոտ հաւ. անոնք հատ կը մանէին: Բայց հիմակուան կարգաւո-րեալ ասպետութեան օրինացը համեմատ, կը-սեմ ու կը հաստատեմ. Թէ որ դեսպան մը՝ ա-ռանց հրաման խնդրելու՝ մենամարտութեան հրաւէրք մը տայ ասպետի մը, յանդգնութիւն կընէ, ու արժանին արժանին է ծեծել »: —

« Բայց աս ձեռնարկութեանը տուր պատասխանի »։ —

« Չէ, չէ, չէ »։ —

« Հա, հա, հա. մանկ ըրէ. անզէն մարդ մը զարնել սպանելը մանուածքիւն է. իսկ արդ դեսպանը անզէն էր, ուրեմն »... —

« Կամաց եղուր, պարոն դատաւոր »։

« Ի՞նչ կամաց »։ —

« Կամաց կըսեմ. աղէկ նայէ ըսածիդ. մէկը եւս էն յանկարծ թուրով զարնելը, կամ կըռնչելն աստճանակ մը պատճառելը, մանուածքիւն է, թէ չէ. աս գիպուածին վրայ ալ կրնայ խընդիր ըլլալ. բայց խօսքերնիս չփոխենք. կընդունիմ որ ասիկա ալ սովորաբար կրնայ ըսուիլ մանուածքիւն. բայց չորս հատիկ վայտ սրիկայի մը կռնչկին իջեցընելու համար՝ ազատ բան մը կըլլար առաջուց ըսել, գիտէ՞ նէյիր, ֆէնպէտր ծեծեմ. ինչպէս որ թուրը ձեռքը կըսուի մեկու մը։ Բայց հրամանքդ պատուէրի պարոն փաստաբան, քիթիդ տակէն ժպտելու սէրը՝ որ իմ կարծիքիս ըլլալդ իմացընես, ինչո՞ւ չես օգներ ինծի քու օրէնքներովդ աս պարոնը հանցելու »։ —

Պատասխանէ փաստաբանն. « Ես. ես կը զուարճանամ աս ձեր գիտնական վիճաբանութիւնը լսելով, ուրախ ալ եմ որ առիթ տուի վիճելու աստանկ սէրուն հանճարներու. ասկէց ’ի գատ ինծի չկրնար վճիռը տալ, հրամանքնիդ արդէն ընտրեցիք դատաւորը »։ —

Ռոտրիկ ասէ. « Իրաւ է, բայց ինչպէս կուզես որ խօսի դատաւորը, երբոր դուք չէք դադրիր խօսելէն »։

Կոմսն ասէ. « Չեմ խօսիր »։ Եւ դատաւորն փակելով զբերանս, ձեռամբացի յայտ առնէ վճռաւանութիւն։

Յաւելու Ռոտրիկ ծանրութեամբ խառն ընդ ծաղր. « Հրամանքդ կիմայ հիմայ, Հայր պատուական »։ —

Պատասխանէ կրօնաւորն, դարձուցանելով գլուխն ’ի սպասաւորն. « Ես իմ պատճառս ըսի, առանկ բաներէն չեմ հասկընար »։ —

Երկոքին հօրեղբօրդիք աղաղակեցին. « Ըսած պատճառդ խիստ տկար է, վճիռ կոչելնք »։

Կրօնաւորն ասէ. « Թէ որ առանկ է, իմ տկար կարծիքս ես է որ՝ ոչ մեհամարտութիւն ըլլայ, ոչ թղթաբեր, և ոչ գաւազանաշարժութիւն »։

Բազմականք առհասարակ հայհոյեն ընդ միմեանս զարմացեալք, և կոմսն ասէ. « Անիկայ խոշորիկներնէն է. նեբէ ինծի, Հայր պատուական, կերևնայ որ հրամանքդ աշխարք չես ճանչնար »։ —

Ռոտրիկ ասէ. « Ի՞նքը, խնտալս կը բերես. աղէկ կը ճանչնայ, քեզի պէս։ Իրաւ չէ՞ ըսածս, Հայր պատուական. ըսէ, ըսէ, հրամանքդ ալ ան ճամբաներէն չես անցած »։

Հայրն Բրնատափոր փոխանակ պատասխանելոյ առ նշանն, ասէ յանդիմն. « Այս խօսքերը քեզի համար են, Բրնատափոր, բայց լսէ՛ք որ դուն քեզի համար չես եկած հոս. ինչ որ քեզի կը վերաբերի, հաշուի չեղար »։

Անդ հօրեղբօրդին. « Առանկ ըլլայ, բայց

Հայր պատուական, Հայր, Հայր ... ինչ է անունը »։ —

Ասեն. « Հայր Քրիստափոր »։ —

« Բայց, Հայր Քրիստափոր, յարգելի Հայր, առ հրամանքիդ կանոնավոր տակնուվրայ կըլլայ աշխարքը։ Առանց մեծամարտութեան, առանց ծեծի, պատիւ չմնար, սրիկաներուն ազատութիւն կը տրուի. աղեկ որ ըսածը անկարելի է »։ —

Յայնժամ Ռոտրիկ, որ չկրնայն միւտ դարձուցանել զվէմն յերկուց անոխ ոսխաց, ասէ ցփաստաբանն. « Քեզ նայիմ, դուն որ ամենուն ալ իրաւունք կուտաս, նայիմ առ բանիս մէջ ինչպէս իրաւունք պիտոր տաս Հայր Քրիստափորին »։

Փաստաբանն ուշնելով զպատասխանաքաղ ընդօգս ի վեր, և զերեսս ի կրօնաւորն դարձուցեալ, ասէ. « Իրաւցընէ խելքս չհասնիր որ ինչպէս Հայր Քրիստափորը՝ որ կատարեալ կրօնաւոր մըն է, ու միանգամայն աշխըրքն մարդ, չմոռածէց որ տուած վէրքը, թէ և մանր պիտնին վրայէն խիստ աղէկ, խիստ արդար, բայց ասպետներու վիճաբանութեան մէջ բանի չիգար, թողութիւն կընէ։ Ինքն ալ գիտէ, ու ինծմէ աղէկ, որ ամեն բան իր տեղն է աղէկ. կարծեմ որ ատ անգամ կուզէ կատակովմը խաչըսկել վէրոս տալէն։ Ինչ պատասխան կրնար տրուիլ անանկ ձեռնարկութեան մը, որ հաստատուած է ատանկ հին ու միշտ նոր առածի մը վրայ։ Ամենևին պատասխան չիտրուիր, ինչպէս որ ըրաւ Հայր պատուականը »։

Բայց իշխանն առ'ի խափանել զվէմն զայն, յարոյց միւս այլ, և ասէ. « Ան չէ, լսեցի որ Միլան խօսք մը եղեր է բանին մէջը գանալու »։

Չի'ի նմին ամի էր պատերազմ գայլորդութենէ դքսութեան Մանեթուայի, որ վասն անորդի մեռանելոյ վիսկոնտեայ Կոնձակային անցեալ էր'ի ձեռս դքսին Նիւերսի մերձաւոր ազգականի նորա։ Լուիճի ԺԴ, այսինքն կարգինալ Ռիշլիւ, պաշտպան կայր դքսին, իւրումն սիրելւոյ, որոյ ընկալեալ էր զերաշունս ընիկ գաղղիացւոյ։ Եւ Փիլիպպոս Դ, այսինքն կոմն Ոլիւարեայ, վասն այնորիկ խակ չկամէլով զինա, յարուցեալ էր ընդդէմ նորա'ի պատերազմ։ Եւ քանզի դքսութիւնն այն էր ընդ լինքնակալութեամբ, երկոքին ևս կողմանք դուն գործէին հնարիւք և աղերսանօք և սպառնալեօք առաջի լինքնակալին Ֆերտինանտեայ Բ. մին՝ վասն ընդունելոյ զդքսութիւն նորոյ դքսութեանն, և միւսն՝ զի մի տացէ նմա զայն լինքնակալն, այլ մանաւանդ օգնեսցէ առ'ի վանել զնա անտի'ի բաց։

Ասահլիսս ասէ. « Ինծի դժար չերևնար առ բանիս մէջը գտնալը, նշանները ալ ունիմ »։ ... —

Ի վերայ հած գառաւարն. « Մի հաւատար, պարոն կոմս, մի հաւատար. ես իմ առ պղտի անկիւնէս կրնամ առ բաները լսանալ. վասն զի սպանիայի բերդակալը՝ որ իր բարեբեխամբը քիչ մը սեր ունի վրաս, Ոլիւարի դքսին ձեռասունները մեհուն զաւակը ըլլալով ամեն բանի տեղեակ է »։ —

« Ես ալ կըսեմ որ՝ ամեն օր ինծի կը պատահի Մկլանոս մեծամեծաց հետ խօսիլ, ու ալիկ աւելայց գիտեմ՝ որ Պաղը ամեն կերպով խաղաղութեան հետևէ ըլլալով, առաջարկութիւնը ներ ըրեր է »... —

« Այսանկ պիտոր ըլլայ. ալիկն ալ ան է. սրբազան Պաղը իր պարտքը ըրեր է. պարտըկան է միշտ իրարու հետ հաշտեցընելու քրիստոնեայ Թագաւորները. բայց Ոլիւարի դքսին քաղաքագիտութիւնը ու »... —

« Ո՛չ, ո՛չ, ո՛չ, հրամանքդ գիտես, պարոն, ինչպէս կը մտածէ ինքնակալը աս մկրոցիս: Կը կարծես որ աշխրքիս վրայ Մանթուա քաղաքը միայն կայ. ուրիշ շատ բաներ ալ ունի մտածելու. օրինակ իմի՝ գիտես որ կայսրը մինչև ի՛ր ասպիճան կրնայ վտահիլ իր վալտիմանոյ եպիսկոպոսին, անուանը չեմ գիտեր ինչպէս կը հնչէն »: ... —

« Բուն գերմանացի անունն է վալդենսթայն, ինչպէս շատ անգամ ըսեր եմ սպանիացի բերդակալին զաւակն. բայց հանդիստ եղիր որ»... —

Ի վերայ հասծ կոմսն. « Չիմայ ինծի պիտոր սորվեցընես.: Այլ ակնարկեայ ՚ի նա Ոտարնկ, գաղտնել առ սէր իւր ՚ի վերէգոյ: Լռեաց կոմսն. այլ գաղտուրն, որպէս նաև խրեալ ՚ի զերծանելն՝ արագ ընթանայ հողմ ուռոյց առագաստիւք, այնպէս յառաջ ածէր զբանս իւր պերճ և ճոռոմ.

« Վալդենսթայնը ինծի հոգ ընելու բան չէ. գիտեմ որ Ոլիւարի դքսին աչքը ամեն տեղ է. ամեն բան կը տեսնայ. ու թէ որ Վալդենսթայնը

նը զինքը նեղելու ըլլայ, կրնայ անուշութեամբ կամ խստութեամբ ձեռքու բերել: Աչքը ամեն դի է, ու ձեռքնները երկայն, մեյմը որ գամը խոթէ, ինչպէս որ խոթեր է, ու աղէկ խոթեր է, շատ վարպետ է քաղաքագիտութեան կողմանէ, անանկ որ՝ Նիւերսկի գուքսը չկրնար Մանթուայի մէջ տեղ ընել, ու կարգինալն ալ ջուրի մէջ ծակ բանալու կաշխատի. խնամալու բան է կարգինալին ուզելը Ոլիւարի դքսին հետ խաղալ: Իրաւ որ կուզէի երկու հարիւր տարիէն աշխարք գալ, ըսելու՝ որ եռանին եկողները ինչ գտատատան պիտոր ընեն աստղաբոր պահանջմունքին վրայ: Նախանձը բանի չի գար, դլօխ պէտք է, ու գլօխ՝ Ոլիւարի դքսին դլխուն պէս, մեկ հատիկ է աշխրքիս մէջ»: Եւ յառաջ վարելով գատաստրին ըզբանս իւր որպէս աչողակ հողմով, զարմանայը և ինքն՝ ի ոչ ոք զգէմ ուներ, և ասէ. « Պարոններ, Ոլիւարի դուքսը, առանց իր մեծարանացը վնաս մը հասցընելու կրսեմ, ծեր աղուէս մըն է, որ կը մտլորցընէ՝ ով որ ալ ըլլայ եռանին ինկողը. աչ կողմը գառնալու որ ըլլայ, ապահով եղիր որ ձախ կողմը պիտի զարնէ. անոր համար է որ մեկը չկրնար անոր միտքը իմանալ. անոնք ալ որ ՚ի գործ պիտոր դնեն իր միտքը, անոնք ալ որ իր հրամաններէը կը գրեն, բան մը չեն հասկընար: Կրնամ քիչ մը բանը գիտնալով խօսիլ, վասն զի ան կարիճ բերդակալը մտերմաբար կը վարուի հետս: Ոլիւարի դուքսը ընդ հակառակն գիտե ուրիշ ալքեմնեայ պատուհերուն մէջ եփածը. ու ամեն ուրիշ մեծ մեծ քաղաքա-

դէմ նեերուն, որոնց մէջ ջուրացուելը որ վարպետորդիները կան, դեռ միաբերնուն մէջ բանը չորոշած, Ղևսարի դուքսը կը գուշակէ ան իր դևսովը, ան իր ծածուկ ձամբաներովը, ան իր ամեն դէ ձգած լարերովը։ Ան խեղճ կարդինալը, հոս կը փորձէ, հոն կը հուսըտայ, կը քրտնի, կը ջանայ. եաքը եաքը դեռնի տակէն ձամբայ մը որ կը բանայ, կխմանայ որ արդէն Ղևսարի դուքսը դիմացը առած է »։

Ո՞վ գիտէ քանի՛ յառաջ ևս խաղայը գատաւորն, բայց Ռոտրիկ՝ սակսկեալ յակնարկուածեանց ևս հօրեղբօրորդւոյն, գաղձաւ յանկարծ՝ որպէս ազդեցութիւն ի՛ւր ընկալեալ՝ առ մի՛ ի ապատաւորացն, և ակնարկեայ ածել միւս այլ ապակեակ գինւոյ, և ասէ. « Պարոն գատաւոր և տէրը իմ, Ղևսարի դքսին կենդանութեանը համնք. չեմ գիտեր որ գինին բաւական ազնիւ է անանկ մեծ մարդու մը բարեմաղթութիւն ընելու »։

Պատասխանի եա գատաւորն, մատուցանելով յարգութիւն՝ հանդերձ չնորհակալեօք. վասն զի որ ինչ՝ ի պատիւ դքսին Ղևսարի լինէին խօսք կամ ապատք, իւր համարէր ըստ մասին, և ասէ. « Երկան տարիներ ապրի, կեցցէ դուքսն Ղևսարի »։ —

Եւ գոչեն ամենեքեան. « Կեցցէ »։ —

Եւ ասէ Ռոտրիկ. « Հայր պատուականին ալ գինի տուէք »։ —

Իսկ նա պատասխանէ. « Թողութիւն կընէք, արդէն կարգէ դուրս էր ըրածս, ալ չեմ կրնար խմել »։ —

Ռոտրիկ ասէ. « Ի՞նչպէս, Ղևսարի դքսին կենացը համար է. կուզես ուրիշն որ գնդապետ Նաւարրէն կարծեն։

Զի զայս անուն նախատական տային յայնժամ հակառակորդք՝ կուսակցաց Գաղղիոյ, վասն իշխանացն Նաւարրայ սկսանելոյ սիրել ի՛ վերայ իւրեանց ընդ Հենրիկեայ Դ։ Վասն այսորիկ հարկ եղև ըմնել ամենեցուն. և կոչնականք առհասարակ, բայ ի՛ փաստաբանէն, Կեղծ գոչէին ներբողելով զդինին։ Իսկ փաստաբանն գլուխ ի՛ վեր առեալ անթարթ աչօք, կծկեալ շրթամբքը, յոյժ առաւել ձևոյն այնուիկ քան բանիւք յայտ առնէր։

Եւ ի՛ հարցանել Ռոտրիկեայ. « Հրամանքիդ ինչպէս կերևնայ, սինեօր ոօթեօռ », նորա ի՛ բաց առեալ ի բաժակէն կարմրագոյն ևս և առաւել փայլունակ զուսնգն, ասէ ազդուագոյն և յատակ հնչմամբ վանկից իւրաքանչիւր. « Կը սեմ, կը սահմանեմ, կը վճռեմ, որ ասկայ գինեներուն Ղևսարն է. գաղղական փնտռելեմբ վնոյն հապաղմ վճիռ, որ մեր ինքնակալն քառնուեր կու գաւառներուն մէջն ալ առանկ գինի չգտնուիր. Աստուած իրեն շատ օրեր տայ։ Կը սահմանեմ ու կը վճռեմ՝ որ Ռոտրիկ իշխանին ևս ընթրիքը կը յաղթէ Էլհոգաբալին սեղանատերուն ալ, ու սակ ըսուած բանը ևս պատահէն աքսորուած ըլլայ ի յաւիտեան, ամեն լեռնիւն հոս սիրէ »։

Ազազակեցին ամենեքեան. « Ազեկ ըսաւ, աղեկ սահմանեց »։

Այլ բառն այն սակ զոր փաստաբանն յան-

կարծ ՚ի մէջ էարկ, զարթոյց ՚ի միտս բոլորիցն ախորժութիւն, և ճառս արկեալ խօսէին զայնմանէ: Եւ Թէպէտ ամենեցուն համաճայն էին կարծիքք, գէթ ըստ կարևոր մասին, այլ մեծ ևս էր աղաղակն՝ քան եթէ էին տարաձայն. ամենեքին միանգամայն բարբառէին. ոմն ասէր. « Սուվ չիկայ, բոլոր մանրալաճառներուն ծագրապաշէրուն հնարքն է »: —

Միւս ոմն ասէր. « Հապա՛, հացագործներն են որ կը պահեն ցորենը, կախելու մարդիկ են »: —

Միւս ոմն. « Իրաւ կախելու է ցորենը, անխնայ »: —

Եւ գառաւորն գոչէր. « Խիստ քննութիւն »: —

Ուժգնագոյն ևս գոչէր կոմսն. « Ի՛նչ քննութիւն. արգարութիւն, մէկէն արգարութիւն. բռնել իրեքը՝ չորսը՝ հինգը՝ վեցը՝ որոնք որ աւելի ճանչցուած են, որոնք որ աւելի հարստացած, որոնք որ խածան չունեցողն են, ու մէկէն կախել »: —

Միւս ոմն. « Պատի՛ժ, օրինակ, առանց օրինակի բան չկրնանար »: —

Միւս այլ ոք. « Կախէ՛, կախէ՛, ան առենը դուրս կելլէ ցորենը »:

Որոց միանգամ յանդգնելն ընդ ածնավաճառութիւնք՝ լուեալ էին պնեւրդաշնակութիւն բազմութեան վաճառողաց, որ երդ ընդ մէջ յարմարեն զալիս նուագարանաց, ուժգնագոյնս որչափ կարեն գոչեցուցանել՝ առ ՚ի լսելի լինել ոյ ՚ի խառնաձայն խռանն առաւել քան զայլս, ընդդէմ համաճայնութիւն համարեցան ՚ի խօսս

այնր ակնթի: Ուր ոչ դադարէին և արգարացի գովութիւնք ազգի ազգի գինեաց, խառն ընդ վնասիս երաւագիտութեան և անտեսականին. որպէս զի ոչ ինչ առաւել լինէր լսելի որպէս խախտ է, գինի լէ՝ նկատ է:

Յայնմ վայրի Ռոտրիկ պշուցեալ հայէր ՚ի կրծնաւորն, որ լուռ ևթէ հայր համբերելով առանց ինչ ցուցանելոյ ձեռ, այլ յայտ առնէր լով վասն որոյ սպասէին, և չկամելով գնալ ՚ի բաց՝ չև խօսեցեալ ընդ իշխանին: Իսկ ինքն Թէպէտև կամէր զերթ նորա առ ՚ի զերծանել ՚ի լսելոյ զնա առանձին, այլ չէր ըստ օրինաց քաղաքապետութեան իւրոյ՝ արձակել ՚ի բաց զնա ՚ի վերարաւորաց առանց տալոյ նմա տեղի խօսելոյ: Եւ չկարացեալ խուսել ՚ի ձանձրութենէ անտի, կամեցաւ վաղագոյն զերծանել. յարեաւ ՚ի սեղանոյ, և ընդ նմա ակումբն ամենայն կարմրափայլ դիմօք, առանց դադարելոյ աղաղակին: Եւ հրաժարեալ ՚ի նոցանէ, մտեաւ յարդանօք առ վերարաւորն՝ որ անդէն յոտն եկաց, և ածեալ զնա յայլ սենեակ՝ ասէ. « Ի՞նչ կը հրամմես »:

ԳԼՈՒԽ Զ.

« Ի՞նչ կը հրամմես » ասաց իշխանն՝ յառին կացեալ ի մէջ սենեկին: Բանքն բարեճաք, այլ եղանակ ասացուածոյն այնպիսի՝ որպէս թէ ասէր. « Նայէ, որուն առջին կեցեր ես, ու խօսքերդ կշռէ, շուտ լսենցուր »:

Սա ի քաջալերել զՀայրն Բրնատափոր, ազդուազդոյն քան զամենայն ինչ էր խրոխտուելն. խորհէր նա որ ինչ ի դէպ էր ասել, և ազանեղով մատամբք ընդ հատս վարդապանին՝ զոր կրէր ի կախ զգօտւոյն, թուէր հետազօտել ի նոսա զսկիզբն բանիցն, և ընդ խրոխտ կեցուլ իշխանին յորդեցին ի չքնաւնս նորա բանք առատել քան զպէտս: Այլ զմտաւ ածեալ նորա քանի կարևոր էր չեղծանել զերս իւր, մանաւանդ թէ զայլոց, ամբաւց զբանս իւր, և ասէ զգուշաւոր խոնարհութեամբ.

« Աղքատութեան գործք մը եկեր եմ առա-
ջարկելու հրամանքիդ, ու շնորք մը կը խնդրեմ։
Քանի մը անկարդ մարդիկ հրամանքիդ աչխու-
անուշովը կը վախցընեն խեղճ ժողովրդապետ
մը, զինքը կարգիլեն իր պարտքը կատարէլէն,
ու երկու անմեղ անձանց զրկանք կընեն։ Հրա-
մանքդ մեկ խօսքով կրնաս խաղաղ ընել զիրենք,
աղքատութեան իր իրաւունքը տալ, ու պաշտ-
պանել խեղճերուն՝ որոնց դէմ ասանկ անո-
զորմ բռնութիւն կըլլայ։ Կրնաս, ու կրնաս
լսվդ... խղճմտանքդ, պատիւդ »... —

« Հայր պատուական, հրամանքդ խղճմտան-
քի վրայ պէտք է խօսիս, երբոր խոստովանանք
ըլլամ հրամանքիդ. իսկ պատուոյս պահապա-
նը, գիտցած ըլլաս որ ես եմ, ես միայն. ով որ
աս բանիս մէջ կը խառնուի, յանդգնութիւն
կընէ, պատուոյս կը դպչի »։

Հայրն Քրիստափոր խելամուտ եղե՛լ բանիդ
ասոի, զի հնարէը խլեանն կամակորել զբանն,
և չըրէել՛լ վէճ՝ առ՛լ չտալ տեղ՛լ նեղ արկա-
նելոյ զինքն. վասն որոյ առաւել ևս պնդեաց
զանձն՛լ համբերութիւն, ՛լ մոխ եդեալ երբ-
կայնամտել աւետեայնի՝ որ ինչ և հաճոյ իցէ նմա
ասել, և ասէ ցածութեամբ.

« Թէ որ հրամանքիդ անհաճոյ խօսք մը ըսի,
աներևելին իմ գիտաւորութեանս դէմ է, ուղ-
ղէ ու յանդիմանէ զիս՝ անվայել կերպով խօ-
սելուս համար, բայց շնորք ըրէ որ խօսիմ։
Վասն սիրոյն Աստուծոյ, որուն առջևն ամենքս
ալ պիտոր երևնանք »... Եւ յոսկէն զայս՝ ցու-
ցանէր խրոխտ իշխանին զգլխիկն վայտեայ՛լ

ծայր վարդարանին. « Մի մերժեր ասանկ գիւ-
րին, ու ասանկ պարտաւորութեան գործք մը
ընելու խելքերուն. մտածէ որ Աստուծոյ աչ-
քը միշտ անոնց վրայ է, անոնց բողոքը՝ անոնց
հառաչանքը կը լսէ. անմեղութիւնը խիստ զօ-
րաւոր է Աստուծոյ առջևն »... —

Ընդ-միջեաց Ռոտրիկ Թոռւաբար. « Հայր
պատուական, կը յարգեմ հագուստդ. բայց
թէ որ բան մը կայ՝ որ ինծի մոռցընել տայ յար-
գութիւնս, տեսնելն է՝ որ մեկը լստեսելու ե-
կեր է իմ տունս »։

Հուր բորբոքեցաւ՛լ դէմս Հօրն Քրիստա-
փորի ընդ այս բան. այլ որպէս ոք զի զդեղ
դառնագառն ըմպիցէ, նոյնպիսի գիմօք, յաւել.

« Հրամանքդ ալ գիտես՝ որ աս անուշը ին-
ծի չեյարմարիր. կը զգաս ալ սրտիդ մէջը՝ որ
վատ ու անարդ գործ մը չէ ըրածս։ Մտիկ ը-
րէ, Ռոտրիկ իշխան. Աստուած չընէ որ օր մը
զղջաս խօսքիս մտիկ չընելուդ վրայ։ Պատիւդ
մի դներ մարդկանց... աս պատիւը մարդկանց
առջևն կանցնի, բայց Աստուծոյ առջևն... —

Պատասխանէ Ռոտրիկ յաստմաբ, այլ ոչ ա-
ռանց քաջութեան.

« Գիտեմ. խելքս փչելու որ ըլլայ քարոզ
լսելու, ուրիշներուն հետ ժամ կերթամ »։

Եւ յաւել ընդ հենդն և ընդ ժպիտ բռնա-
զբօս. « Հրամանքդ զիս ինծմէ վեր կը դնես. տա-
նը մէջ քարոզիչ Թագաւորները միայն կունե-
նան »։

Հայրն Քրիստափոր ասէ. « Աստուած՝ որ
Թագաւորներէն իրենց արքունեաց մէջ լսած

քարոզներուն համարը կը պահանջէ, հրամանքիդ ողորմելով իր մէկ անարժան պաշտօնեային խրկերը է աղաչելու՝ որ ինծի ես խեղճ անմեղի մը... —

Ովարիկ որպէս զի բաց մեկնելով ասէ. « Կարճ ընենք, Հայր պատուական. չեմ գիտեր որուն վրայ է խօսքդ. ինչ որ կիմանամ՝ աղջկան մը վրայ է այդչափ հոգդ. գնա, որուն հետ որ կուզես ըրէ քու բարեհամուրճիւնդ. բայց իր պատիւը գիտցող անձի մը ձանձրութիւնդ մի տար »:

Եւ զի չարժել իշխանին առ ի գնալ, Հայրն Քրիստափոր կայր ընդդէմ, այլ մեծարանօք. և ամբարձեալ զձեռս իւր ի ձև աղաչանաց, կալաւ զնա վայրիկ մի, և ասէ. « Հրամմեր ես, շատ հոգ ունիմ իր վրան, բայց անկէց եւս հրամանքիդ վրայ. երկուքդ ալ հոգւոյս պէս կը սիրեմ: Տեր կամ, ուրիշ բան չեմ կրնար ընել հրամանքիդ համար, բայց աղօթք, ու սրտանց կընեմ. չէ մ'ըսեր ինծի, վախի ու տառապանաց մէջ մի թողուր խեղճ անմեղը. մէկ խօսքդ հերիք է »: —

Ովարիկ ասէ. « Աղէկ է, որովհետև մէկ խօսքս հերիք կըլլայ առ անձին, որովհետև առջևի հոգ ունիս առ անձին վրայ » ... —

« Ուրեմն ! » ասէ անձկութեամբ Հայրն Քրիստափոր, այլ բարւոյ խմիք ոչ աչն ունէր լալ՝ ի կերպարանաց իշխանին: —

« Ուրեմն, խորհուրդ առ աղջկանը՝ որ ինծի ապաւինի. բան մը չիպակսիր երէն անկէց առքը, մէկը չկրնդդնիր զինքը նեղելու. մէկը երէն նեղութիւն տալու որ ըլլայ, ես ապետ չըլլամ» :

Ընդ այս առաջարկութիւն իշխանին, սրտմտութիւն չօրն Քրիստափորի մինչև ցայնժամ նուաճեալ՝ թօթափեաց այնուհետև զսանձ. ամենայն առաջադրութիւնք խոհեմութեան և երկայնմտութեան ելին ի դերև. հին մարդն միաբանեաց ընդ նորոյն, ոստեաւ ի դուրս միւս այլ Հայր Քրիստափոր. ընկրկեցաւ քայլս կըրկնին, և ալ ի յաղդեր, կարկառեալ զձախ ի վեր, և ցուցամատն դնել ուղիղ ի Ովարիկ, գոչեաց. « Քեզի ապաւինի, հա՞. աղէկ որ բերնէդ ելաւ առ խօսքը, աղէկ որ առաջարկութիւնը ըրիր ինծի. չափը լեցուեցաւ, ալ չեմ վախնար » ... —

« Ա՛ա ինչ խօսուածք է, վկղարաւոր » ... —

« Ինչպէս որ սկիզբ է խօսիլ՝ Աստուծոյ երեսէն ինկած մարդու մը, որ ալ չկրնար դիմացիլ նը վախցընել. քեզի ապաւինի, հա՞. դիտէի որ այն խեղճ անմեղը Աստուծոյ ապաւինած է, ու Աստուծոյ պաշտպանութիւնը իր վրան է. բայց դուն հիմա ստոյգ խղացուցիր ինծի անանկ ըլլալը, ալ համարձակ կը խօսիմ հետդ. Լուչիան քեզի ապաւինի, հա՞. լսե՛ ինչպէս կուտամ իր անունը, ձակատս բաց, աչերնիս անկած » ... —

« Ա՛տ ինչ դուն. իմ տունս մէջ » ...

« Կը ցաւիմ քու տանդ վրայ, անէծքը տանդ վրայ կախուած կեցեր է. կը կարծեմ որ Աստուծոյ արդարութիւնը քու ջրոս պատերէդ ու ջրոս պահապաններէդ կը վախնայ. կը կարծեմ որ Աստուած երէն պատկերը անոր համար

սահեցեր է՝ որ դուն զինքը չարչարես։ Դուն Աստուծոյ քեզի ըրած ազգարարութիւնը արհամարհեցիր. դառնաստանը եղած է վրադ. Փարաւոնին սիրտը քուկինդ պէս խստացած էր, Աստուած փշրեց զանիկայ։ Նուչիան ապահով խալըսած է ձեռքէդ. ողորմելի կրծնաւորս եմ, որ քեզի կըսեմ. օր պիտոր գայ »... —

Մինչև ցայսվայր Ռոտրիկ ընդ կառաղութիւն և ընդ ապշութիւն կարկեալ կայր. այլ ՚ի լուր սպառնալեաց պատուհասից՝ յաւելաւ սոսկումն ՚ի նա. կալաւ զսպառնացող ձեռն Հօր Իրևստափորի, և ամբարձեալ զձայն իւր առ ՚ի կարճել զչարագոյժ անէծսն, գոչեաց. « Կորիր առջևէս յանգուշդն գեղացի, անարդ վերաբաւոր »։

Այս բան ցածոյց վայրկ մի զՀայրն Իրևստափոր. այնպէս ՚ի միտս նորա կցորդք էին ընդ նախատինս և ընդ թշնամանս համբերութիւն և լռութիւն, զի չնչաւ ՚ի նմա ամենայն զայրոյթ և նախանձ պաշտպանութեան անմեղին, և զարթեաւ առաքադրութիւն լսելոյ խաղաղութեամբ որ ինչ և հաճոյ Թուէր իշխանին յաւելուլ։ Վասն որոյ ամիրոփեալ մեղմով ըզձեռն ՚ի մաղլաց նորա, և խոնարհեալ զգլուխ, կայր անշարժ, որպէս յանկանել մրրկալից հողմոյ ուղիչք ծառոյ տատանելագ գառնան լինելոց կայս, ընդունիլ զկարկուտ երկնառաք։

Եւ յառաջ ածեալ Ռոտրիկայ զթշնամանաց բանն, ասէ. « Ինձի պէս գեղացութենէ դարձած քաղաքացին, որ գեռ գեղացութիւնդ չէս մոռցեր. գնա շնորհակալ եղիր զքեստիդ՝

որ քու սրիկայութիւնդ ծածկեր է, ու կազատէ զքեզ գաւազանէն՝ որ քեզի սպասվելոցն խօսել կը սորվեցընէ։ Ելիր աչքիս դիմացէն, ստերդ աս անգամ մի՛ տեր առած. եղբը տեսանիք »։

Զայս ասացեալ՝ հրամայական սաստիւ եղոյց նմա ելս հանդէպ դրանն, ընդ որ մտեալ էին։ Հայրն Իրևստափոր խոնարհեալ զգլուխ, եւ ՚ի բաց. Թողեալ Ռոտրիկայ երթևեկել արագ արագ ընդ ասպարէզ մարտին։ Եւ ՚ի փակել անդ զդուռնն զՀայ իւր, էառ ՚ի միւսում սենեկի՝ յոր մտանէր, զայր ոմն՝ զի մեկնէր լուսէնային քերեալ առ որմով, անտես ՚ի սենեկէ՝ ուր խոստակցութիւնն էր լեալ. և ծանեաւ՝ զի էր սպասաւորն այն ծեր, որոյ բացեալ էր նմա զդուռն փողոցին։ Այրս այս ՚ի քառասուն ամաց հնաւէ, մինչ չև էր ծնեալ Ռոտրիկ, կայր ՚ի տան անդ, մտեալ ՚ի ծառայութիւն հօր նորա, որ բոլորովին աննման էր որդւոյն։ Ի մեռանել նորա, նորոյ տանուտեառնն մերժեալ զամենայն սպասաւորս ՚ի բաց՝ զսա միայն կալեալ էր առ իւր վասն ծերութեանն, և զի դարձեալ՝ թէպէտև հակառակ ամենևին խնամոց նորա և բարուց՝ սակայն հրկիզն բարեմասնութեամբքն փոխասրիներ գժպհտութեանն. քանզի մեծարէր յոյժ զտունն, և քաջասիրտ էր սպասաւորութեան ընտանեաց՝ գիտելով ըստ ամենայնի զՀին սովորութիւնս տանն։ Զիշխէր հէք ծերուն յայտ առնել զսիրաճոռութիւն իւր ընդ անկարգութիւնս, զորս տեսանէրն հանապազօր. հազիւ երբեմն առ ծառա-

յակինթս իւր քրիստոնէէր զայնցանէ, այլ նոքա ծիծաղէին զնովաւ, և դրդռէին ևս զնա ասել առաւել քան զոր կամէրն, առ ի լսել ի նմա նէ զնախնի եղանակ կենաց որ ի տան անդ։ Ըստ ատանքնորա, հանդերձ ծաղրածութեամբ լսողացն, հասանէին յունկն իշխանին. և նա ինքն ծիծաղէր, առաջ զժկամակելոյ։ Իսկ յաւուրս կոչնոց, լուրջ և ծանր կայր ծերունին, որպէս կարևոր ոք ի տան։

Հայրն Քրիստափոր հայեցեալ ի նա յանցաւնէն, ողջոյն ետ նմա, և անցեալ գնայր. բայց ծերունին խորհրդաբար լինն մերձեալ ի նա, և մատն ի շրթունս եդեալ՝ նովին մատամբն նշանացն կոչեաց զնա յանձնաւկ ուրեք ուղի սենին։ Իբրև հասին անդր, ասէ ցնա ի մրմունջ.

« Լսեցի, հայր իմ, ձեր խօսակցութիւնը. պէտք է որ խօսիմ հրամանքիդ հետ »։ —

« Շուտ մը ըսէ, բարի ծեր »։ —

« Հոս չըլլար, վայ է լինձի թէ որ տեղս լսէ. բայց շատ բաներ ունիմ ըսելու, վաղը կը գանամ վանք գալու »։ —

« Խորհո՞ւրդ մը կայ, ինչ կայ »։ —

« Բան մը օգուտ մէջ կը պտըտի լինչ որ կրցայ իմանալ. հիմայ եռանդ եմ տուգելու. Թող տուր··· շատ բաներ պէտք կըլլայ լինձի լսել հոս ու տեսնել··· սոսկալի բաներ··· տան մը մէջ եմ որ··· բայց հոգիս կուգեմ փրկել։ » —

« Աստուած օրհնէ զքեզ »։ Եւ յասելն զայս դաշն ձայնիւ, Հայրն Քրիստոս փոր եդ զձեռն ի վերայ գլխոյ սպասաւորին, որ թեպետև ծերացեալ էր քան զնա՝ խոնարհեալ կայր առաջի նորա

որպէս որդի. և յաւել. « Աստուած զքեզ վարձատրէ, որ վաղը գաս լինձի, չխափաս »։ —

« Կուգամ, կուգամ. բայց հրամանքդ շուտ ըրէ գնա, հոգիդ կը սիրես, անուշ մի տար, մ'ըսեր մեհուն՝ որ հետս խօսեցար »։ Եւ զայս ասելով, և շուրջ ածելով զաչս, էլ ընդ միւս կողմն ուղղոյն ի սրահ ուրեք՝ որ ածէք ի դահլիճն, և գտեալ աղատ զասպարէզն, կոչեաց անդր զվեհապատուրն, եցոյց նմա զէնս. և նա առաւել այլոց ինչ բանիւ մեհենեցաւ ի բաց։ Եւ ձեռքէր ընդ զառ ի վայրն հրապեալ դիմաք և խռովեալ սրտիւ, որպէս է գուշակել վանն մեհենային, որ ինչ լուեալն էր և խօսեալ։ Բայց անակնկալ բանք ծերոյն սփոփեցին զնա. Թուէր նմա՝ զի երկինք տային նմա առհաւատչեայ պաշտպանութեան, և ասէր ի մտի. « Աստուած իր օգնութիւնը լինձի ան տանը մէջէն կը սկըսի, ան տանը մէջէն՝ որ մտքես չէր կըրնար անցնիլ. երբալ մը կերևնայ լինձի »։ Եւ ի խորհել նորա զայս՝ օրն տարաժամեր, արեգակն ի ծայրս լերանց հարկանէր. և Թեպէտ ի ծանուցից տաժանմանցն էր վաստակաբեկ, վտռեալայր ածէր զոյգ առ նոսա, որոց վանն յանձն առեալ էր վաստակել, և անտի ապա հասանել ի վանս նախ քան զգիշեր. զի ի խըստագոյն կանոնաց կարգին վեհապատուրաց մի և այն է, չգամել արտաքոյ վանաց քան զմնուտս արևու։

Բայց ի տան օրիորդին բաղում խորհուրդք ի հնարս հայթայթանաց յուզեալ էին, զորս ի դէպ է պիտեղ։ Ի մեհենել Հօրն Քրիստափորի՝

երեքին, որ մնացեալն էին, կացին առ վայր մի՝ի լուռթեան. Լուչիա պատրաստեր ճաշ, Ինիգոյ պատրաստ միշտ՝ի գնալ՝ առ՝ի հեռանալ յաջողագոյն սրտաբեկեալ օրիորդին, և Աքինէս պարապեալ՝ի հոլովել զկարժառ, այլ երկնէր՝ի մոլ խորհուրդ լինի. որ երբև թուեցաւ նմա բարեպատեհ, ելցծ զլռութիւն, և ասէ.

« Մանկ ըրէք, սիրելի որդիք. Թէ որ սիրտ կընէք, Թէ որ Ճարպկութիւն բանեցընելու ըլլաք, Թէ որ ձեր մորը խօսքին վստահիք », (այլ բառն այն չէր ոչ հաճոյ Թուեցաւ դըստերն,) « ես վրաս կառնեմ խալըսել զձեզ աս նեղութենէն, Թերևս աւելի աղէկ ու աւելի շուտ քան զՀայր Քրիստափորը, Թեպետ և ինքը գիտէք որ ինչ մարդ է »:

Լուչիա կարկեալ եկաց, պչրուցեալ՝ի մայրն հայեցիւք՝ որ զարմանս առաւել յայտ առնէր քան վստահութիւն ընդ այնպիսի խոստումն համարձակ. իսկ Ինիգոյ՝ի վերայ էած.

« Սիրտ ընել! Ճարպկութիւն բանեցընել! ըսէ կը ինդրեմ՝ ըսէ՝ ինչ որ պէտք է կընեմ »:

Աքինէս ասէ. « Թէ որ արդէն կարգուած ըլլայիք, բանը լմընցած կըլլար. անանկ չէ՞ »:

Պատանին ասէ. « Այնոր ալ կը տարակուսի. Թէ որ կարգուած ըլլայինք... բոլոր աշխարք քաղաք մըն է. ասկէ երկու քայլ անդին Պերհամցի երկիրը մեռաքսագործ կը փնտռուի. գիտէք քանի անգամ հօրեղբօրորդիս Պօրթօղոյ՝ ուզեց որ երթամ իրեն քովը, բայց ես իրեն պէս չընեմ. իրեն մոլի չըրի, ինչ կուզէք, սիրտս հոս էր: Կարգուած որ ըլլայինք, ամենքս

մեկտեղ կերթայինք, հոն կը հաստատուէինք, խաղաղ կեանք մը կանցընէինք, սա բռնաւորին կը խալըսէինք, չըներլու բան մը ընելու վտանգներէն ալ հեռու. անանկ չէ՞, Լուչիա »: —

Լուչիա ասէ. « Անանկ է, բայց ինչպէս »... —

Աքինէս ասէ. « Ինչպէս որ ես ըսի. սիրտ ու Ճարպկութիւն որ ընէք, գործը դիւրին է »: —

Աչեն երկոքին՝ի միասին. « Դիւրին! »... —

Աքինէս ասէ. « Դիւրին, Թէ որ գիտնաք ընել. աղէկ մոլի ըրէք, հասկըցընեմ ձեզի: Գիտցողներէն լսեր եմ, մանաւանդ Թէ տեսեր եմ ալ, որ պատկուելու համար՝ երբաւ ժողովըրդապետ պէտք է, բայց հարկաւոր չէ որ ինքը պատկէ, հերիք է որ հոն ըլլայ »: —

Պատանին ասէ. « Ինչպէս կըլլայատ բանը »: —

« Մանկ ըրէք որ ըսեմ ձեզի. պէտք է երկու վկայ ունենանք, անոնք ալ Ճարպկի, ձեզի համաձայն. երթաք ժողովրդապետին դիմացը, վարպետութիւնը հոն է՝ որ չանկարծ վկայ հանենք՝ որպէս զի չկրնայ փախչել. փեսան կըսէ. Տէր հայր, առիմ կինս է. հարսը կըսէ, Աւ եմ երէկս է: Հերիք է որ ժողովրդապետն ալ՝ վկաներն ալ լսեն, պատկը պատկ է, Թող ժողովըրդապետը պոռայ ու կանչէ, ինչ որ ընէ՝ պարապ է, երկի կնիկ ենք »: —

Գոչեաց Լուչիա. « Ատանկ բան կըլլա՞յ, մայրիկ »: —

« Ձըլլար, հա՛. կուզես որ երսուն տարի քուաչխարքը դալէդ առալ ծնած ըլլամ, ու քեզմէ երեսել բան մը չիգիտնամ. բանը ատանկ է, ամեն

նեւին ինչպէս որ ըսի. անանկ որ Ճանչցած ալ չնկնեբէս մեկը՝ ուղեղով առանց իր ծնողացը կամքին պսակուիլ, ասանկ ըրաւ, լմընցուց: Ժողովրդապետը կասկած ունենալով պատրաստ կեցեր էր վախչելու, բայց երկու վարպետորդիները անանկ առեն վրայ հասան, ու վերի ըսած խօսքերս ըսին, որ պսակը եղաւ լմընցաւ, թէ և երեք օրէն խեղճ աղջիկը զրկացաւ»:

Եւ խօսքը Ագնէս Ճմարտութեամբ. չի որք ըստ օրինի կամելով գործել, գտանէին ինչ արգել և խափան, դիմէին յայսպիսի հնարս. վանն որոյ ժողովրդապետք զգոյշ կային չերևնել դուռ ծակից, և՝ ի հանգիստել պատահեաց ոմանց՝ խոյս տային. որպէս Պրուտէոս յերբեսաց այնոցիկ, որ բռնի տային նմա գուշակել:

Յայնժամ ասէ պատանին աղերսական ի մեն ձևով յօրիորդն. «Թէ որ ասանկ է, ինչ կըսես Լուչիա»:

Ի վերայ ածէ Ագնէս. «Ինչ ըսէ որ, առաջ պէղ կը կարծես պատմածս. ես ձեր վրայ ցաւելիս կը խօսիմ, դուք չէք հաւատար. աղեկ է, ուրեմն դուք ուրիշ հնարք մը գտէք. ես չեմ խառնուիր»:

Պատանին ասէ. «Ո՛հ, չէ, մի Թողուր զմեզ. ինծի խիստ աղեկ հնարքը երևնալուն համար անանկ ըսի. քու ձեռքդ եմ, երբև Թէ բուն իմ մտքս ըլլայիր»:

Ա՛յս բանք ցածուցին զզաստութիւն Ագնեսի, և ետուն արկանել՝ ի մոռացօնս զսպառնալիսն՝ որ էին խակ՝ ի սրտէ ատելաւ:

Յայնժամ դուստրն խրատով ընդելական հրաժեշտ ասէ. «Հապա ինչո՞ւ աս բանը Հայր Բրնատոլին միտքը չեկաւ, մարիկ»:

Ասէ մայրն. «Մ'իտքը չեկաւ! կրնա՞յ ըլլալ որ միտքը եկած չըլլայ. չուզեց ըսելու»:

«Ինչո՞ւ». ասէն երկոքին միաբարբառ:

«Ինչու! կուզէք որ ըսեմ. վասն զի եկեղեցականները խրատելնէ աղեկ չէ, կըսեն, աս հնարքը բանեցընել»:

Պատանին ասէ. «Ի՞նչպէս կըլլայ որ աղեկ չէ կըսեն, երբոր ըլլալէն առաջ՝ աղեկ եղած կը սեպուի»:

Ագնէս ասէ. «Ի՞նչ կուզես որ ըսեմ. օրէնքը ասանկ դրուած է, մենք խեղճ ողորմելի ենք, ամեն բանի խելքնիս չհասնիր: Ա՛ս է մինակ... ըսէ ինծի. ծեծ մը որ տալու ըլլաս մեկուն, աղէկ բան է. բայց մեյմը որ տուիր, սրբազան Պապն ալ չկրնար տուած ծեծդ ետ դարձնել»:

Լուչիա ասէ. «Թէ որ աղեկ բան չէ, պէտք չէ ալ ընել»:

Ագնէս ասէ. «Ի՞նչ, կը կարծես որ Աստուծոյ դէմ ընելու խրատ կուտամ քեզի: Թէ որ ծնողացդ կամքին դէմ ինտսակար բան մը ուզիր ընել... բայց դուն իմ խօսքս նայէ. սա խեղճ աղուն հետ կարգուելուդ՝ ով որ աս աշխարհի արգելքը կը դնէ, անզգամ մարդ է. ժողովրդապետն ալ...—

Պատանին ասէ. «Ըսածը յայտնի է, ամեն մարդ կը հասկընայ»:

Ագնէս ասէ. «Բայց ընելէն առաջ բան մը

ըսելու չէ Հայր Քրիստափորին. խակ երբոր բանը յաջողի, ինչ կը կարծես որ ալիսի ըսէ քեզի. Ակընկիկ, խոչորկէկ է ըրածդ, բայց եղեր է ալիսոր ըսէ: Կրծնաւորները սառնկ պէտք է ըսեն. բայց հաւատա ինծի որ ինքն ալ գոհ կըլլայ ըրածիդ »:

Բայց Լուչիա Թէպէտև չգտաներ տալ բանին պատասխանի, սակայն չէր համոզեալ. խակ Ռէնցոյ խրախուսեալ, ասէ.

« Երբոր սառնկ է, բանը լմընցած է »:

Ագնէս ասէ. « Կամաց. հապա վկաները! երբ կու հոգի գտնալու է՝ որ ուզեն, ու գիտնան ալ առաջուց լուռ կենալ: Ու ժողովրդապետն ալ, երկու օր է որ տունը քաշուեր է, ինչպէս կըլլայ յանկարծ վրայ հասնիլ. Թէ և վրայի բեռը ծանրըկէկ է, բայց կրնամ ապահովել՝ որ սա կերպով զձեզ տեսնալուն պէս, սառնային օրհնած ջուրին վախչելուն պէս՝ անհետ կըլլայ »:

Յայնժամ պատանին 'ի վերայ սեղանոյն՝ որ պատրաստեալ էր 'ի ձաշ, հարեալ ուժգին դնդուփ՝ մինչև ընդոստուցանել ղբաժակս և ղսնակս, ասէ.

« Գոայ վկաները, գոայ » . և ասաց զայն Ագնեսի, և Ագնէս հաձեցաւ ընդ այն: —

Լուչիա ասէ. « Ծուռումուռ ձամբաներ են, շուտակ ձամբայ չէ. ինչուան հիմայ անկեղծութեամբ ըրինք ամեն բան, ասկէց էտքն ալ նոյն ձամբան բռնենք՝ Աստուծոյ յանձնելով զմեզ. ինքը կօգնէ մեզի. Հայր Քրիստափորը սառնկ ըսաւ, անոր հարցընենք »: —

Յայնժամ Ագնէս ասէ ցգուստոն սաստիւ. « Թող տուր որ քեզմէ եւել բան գիտցողը քեզի առաջնորդէ. ինչ պէտք է բանը ուշացընել, ուրիշներու հարցընել. անգործ կեցողին Աստուած չօգներ. Հայր Քրիստափորին կը պատմենք՝ բանը ըլլալէն լմընալէն եաքը »:

Ասկ պատասխան. « Լուչիա, մինակ մի Թողուր զնա, ամեն բան քրիստոնէաբար չըրինք քեզի հետ, արդէն պատկուած չըլլայինք պիտի. ժողովրդապետը պատկին օրն ալ չէր որոշած. ուրիշ քիչ մը խելք բանեցընելու որ ըլլանք, յանցանքը որոնէն է: Չէ, չէ, Լուչիա, մինակ չես Թողուր զնա »: Եւ աղջնեակը զօրիորդն 'ի ձև աղերսանաց, և զմայր նորա՝ որպէս խելացուա լեալ բանիցն, վեհնեցաւ ձեռով վասն վկայիցն, ասելով.

« Կերթամ ու չուտով կը գառնամ, պատասխանը բերելու »:

Տառապանք սրեն զմիաս. Ռէնցոյ, որ ընդ հարթ և ուղիղ ճանապարհ կենալ իւրոց ցայն վայր՝ չէր սոխպեալ խելս խառնել, այնպիսի ինչ 'ի գլուխ չայս խորհեցաւ, որ և օրհնագիտի չաճախէ պատիւ: Զոգաւ գնալ ուղիղ 'ի տունն Թոնեայ ուրուն, որ ոչ ինչ հեռի բնակէր, և գիտ զնա 'ի խոհանոցի, զի ծնգամբ միով չեց չասսիճան վառարանին խառնէր 'ի վերայ հրախառն մոխրոյ 'ի սանի զիսոխնդ: Մայր նոր ըս և եղբայր և կին չայնն առ սեղանով, և մանկունք երեք կամ չորս առ հարքն չոտին սպասէին ակնկառոյգք, ածելոյ փոխնդին 'ի սեղան: Այլ չէր անդ զուարթութիւնն այն,

որ սովոր է վաստակելոց ՚ի տեսիլ կերակրոյ. փոխինդն էր ըստ չափոյ նուաղուԹեան բերոյ տարբոյն, և ոչ ըստ Թուոյ և ըստ քաղցի բաղ մահանացն ՚ի սեղան. իւրաքանչիւր ոք ՚ի նոցանէ սովալլուկ աչօք յառեալ ՚ի կերակուրն հասարակաց, Թուէր խորհել յանդիմանակ իւր՝ որ չէր յադելոց ձաշուն այնուհիկ: Մինչդեռ Ռինոցոյ ողջունէր զընտանիս, երկիղ Թոնի ըզ փոխինդն ՚ի վերոյ կաղամախեայ սիտեղ, որ պատրաստեալ կայր առ այն ՚ի սեղանի, և Թուէր որպէս լուսին ՚ի դոլորշեայ շրջանակի մեծի: Սակայն հանապազ հրաւիրելոյն բարեձևուԹեամբ զՌինոցոյ ՚ի ձաշ՝ ասելով. « Կը հրամմիս քիչ մը »: Հրաւէր, զոր սովոր են առնել չինաՀանք Լամալամիոյ, և այլոց չինից, ձաշակից լինել ընդ իւրեանս, ԹէպԷտ և ՚ի ձոխից ոք և ցե հիւրն, և այն ինչ յարուցեալ ՚ի սեղանոյ, և ինքեանք ՚ի յառնել կայցեն:

Պատասխանի էտ Ռինոցոյ. « Շնորհակալ եմ. Թոնիին խոսք մը ըսելու եկեր էի. Թոնի, Թէ որ չես ուզեր ընտանիքդ անհանգիստ ընել, կըրնանիք պանդոկ մը երթալ ձաշելու, հոն կը խոսինք »:

Հաճոյ Թուեցաւ նմա հրաւէրն, որում ոչ աչն ունէր. ուրախացաւ և մանկանին՝ որ ՚ի մասինս յայսմիկ արագ զարԹնու ՚ի խորհել, զի պահասէր մին ՚ի ձաշակցաց, մանաւանդ որ առաւել կերոյն էր: Մեկնեցաւ հրաւիրեալն ընդ Ռինոցոյ, առանց ընդ բանս ինչ ածելոյ:

Հասին ՚ի պանդոկ դեղջն, և նստան ամենայն համաձակուԹեամբ, զի չէր ոք այլ. առ Թը-

շուառուԹեանն ժամանակին հեռացեալ ՚ի բերկրալից տեղւոջէն որոց յաձախէնն անդր: Ասացին բերել որ ինչ գոանէրն. և գաստրակեալ զասպակի գինւոյն, ասէ Ռինոցոյ խորհրդաբար ցԹոնի.

« Թէ որ կուզես պզտիկ ծառայուԹիւն մը ընել ինծի, ես քեզի աւելի մեծը կընեմ »: —

Պատասխանէ Թոնի. « Լաւ, լաւ, հրամմէ ինծի. կրակին ալ կը ձգեմ գիս քեզի համար »: —

« Դուն գիտեմ որ քանըհինգ լիրէ պարտք ունիս ժողովրդապետին, իր երկրին բոլոր անցած տարուան վարձքը »: —

« Ահ, Ռինոցոյ, ընելու բարիքդ աւրեցիր, ինչ բան հիմայ դուրս հանեցիր, զուարԹուԹիւնս գնաց »: —

« Պարտքիդ վրայ խոսելս անոր համար է որ, կէսը ես կուտամ վճարելու »: —

« Իրա՞ւ կըսես »: —

« Հապա, գո՞հ ես »: —

« Գոհին գոհը, սա ալ հարցընելու բան է. ուրիշ բարիք ալ որ չըլլար, սա ժողովրդապետին քիԹը բերանը ծռմըռիլըն, ու ամեն հանգըպելուն գլուխը շարժելըն, կը խալըսիմ. ամեն անգամ պիտոր կրկնէ Թոնի, չէ՞ Թոնի, երբ կը փեսոնոէնք. անանկ որ՝ քարող տալու տեղն ալ՝ աչըընելը վրաս կը անկի, գրեԹէ կը վախնամ որ ամենուն առջեւն ըսէ. Թոնի, փսանըհինգ լիրեն: Անիծած ըլլայ ան քսանըհինգ լիրէն. կնոջս մանեակն ալ էտ պիտոր տայ ինծի, այնչափ մըրացորեն կրնամ առնել անով. բայց »... —

« Բայց, բայց, Թէ որ ինծի սա պզտիկ ծա-

ռայուԹիւնը ընես, քսանըհինգ լիրեն պատրաստ է քեզի »։ —

« Շուտա ըրէ, ըսէ »։ —

« Բայց »... ասէ Ռինցոյ՝ խաչանիշ հնքեալ մատամբ զբերԹուննս։ —

« Հիմայ պէՏք է նորէն ապսպրելդ, չէս ճանչնար զիս։ —

« Ժողովրդապետը քանի մը անհամ պատճառներ կը հնարէ՝ հարսնիքս ուշացընելու համար, իսկ ես ըմընցընել կուզեմ. լսեցի ապահով, որ երկու նշանուածները ժողովրդապետին առջեն որ երԹան երկու վկայով ու ըսեն՝ աս իմ կինս է, աս իմ էնուս է, պահակը կը ըմընայ եղեր. հասկըցար »։ —

« Ուրեմն կուզես որ գամ վկայ ըլլալու »։ —

« Ուզածս ալ ան է »։ —

« Ամէն համար պիտի վճարես ինծի քսանըհինգ լիրեն »։ —

« Ամոր համար »։ —

« ԽենԹ ըլլամ որ չեգամ »։ —

« Բայց ուրիշ վկայ մըն ալ գտնելու է »։ —

« Գտայ, գտայ ՃերուաղԹոյ միամիտ եղբայրս, ինչ որ ուզեմ՝ կընէ. իրեն ըմսելիք մը կուտաս »,—

« Ուսեղիք ալ կուտամ; հոս կը բերեմք զինքը՝ ուրախուԹիւն մը ընելու մեկ տեղ, բայց կըրնայ պէՏՃերել »։ —

« Կը սորվեցընեմ իրեն. աղէկ գիտես որ՝ ասնոր ըղեղին պակասը իմ քովս է »։ —

« Ուրեմն վաղը »։ —

« Շատ աղէկ »։ —

« Իրիկուան դէմ »։ —

« Աղէկին աղէկը »։ —

« Բայց »... յաւել Ռինցոյ, վերստին խաչանիշ մատն ի ըղԹունն եդեալ։ —

Պատասխանէ Թոնի, խոնարհեալ զգլուխ յաջոյ ուս իւր, և ի վեր առեալ զձախ, կերպարանօք իմն որպէս Թէ ասէ. « Այ էիվայլեր առչափ տարակուսիլդ վրաս »։

« Բայց կինդ հարցընելու որ ըլլայ, ինչպէս անտարակոյս պիտոր հարցընէ, ինչ պիտոր ըսես »։ —

« Սոֆա կը պահի, կըսեմ քեզի համար որ պարտք ունիմ իրեն, չեմ գիտեր որ կրնամ վճարել, ասոր նման ուրիշ խօսքեր. վերջապէս բան մը կը յարմարցընեմ սիրտը հանգստացընելու »։

Ռինցոյ ասէ. « Վաղը առաւոտ նորէն կը խօսինք, ամէն բան աղէկ կարգի կը դնենք »։ Այսպէս ելլեն ի պանդոկէ անտի, Թոնի գիմացն ի տուն իւր, և Ռինցոյ առ ի պատմել զերկիւղացն։

Յայնմ վայրի Աֆնէս գուն գործէր համազէղ զգուստոր իւր, այլ ի զուր. նա առ ամենայն պատճառս ի գէմն ածէր հերքուն երկայրի. « Կամ աղէկ բան չէ ընելիքնիս, ուրեմն պէտք չէ ընենք. կամ գէշ բան չէ, ուրեմն ինչու՞ չհարցընենք Հայր Քրնատափորին »։

Եհաս Ռինցոյ յաղԹանակաւ, և պատմեալ զանցս իւր, կինքեաց բացագանչութեամբ. « Մարդ ալ որ կըսես, ես. ասկէց աղէկ բան կրնար մտածուիլ, որոնն միտքը կրնար գալ ». և այլ այսպիսի բանս։

Լուչիա տատանէր յուշիկ զգլուխ իւր. այլ երկոցուն ջերմացեալըն չէր ինչ փոյթ ընդ այն, որպէս սովորութիւն է առնել ընդ մանկան՝ զոր չէ մարթ խելամուտ առնել ամենայնի, և դիւրաւնաջք միայն կամ սաստիւ հնազանդի:

Յաւելու Աչքնէս. « Աղէկ է, ամեն բան աղէկ, բայց բան մը միայն չես մոռածած »: —

« Ի՞նչ »: —

« Հապա ժողովրդապետին աղախինը, փէր-փէթուանն. կը թողու՞ որ տունը մնան Թոնին ու Եղբայրը. կը թողո՞ւ ձեզի երկուքնուդ ալ, աղէկ մոռածէ. ժողովրդապետը իրեն հրամմած կըլլայ՝ որ ձեզի իր տունը չխմոտեցընէ, քան թէ տղաքը պարտիզին հասած պտուղներուն »:

Յայնժամ պատանին փոքը մի վարանեալ՝ ասէ.

« Ի՞նչպէս ընենք »: —

« Ես սանակ մոռածեցի. հետերնիդ կուգամ, դաղանիք մը ունիմ ձինքը որսալու. անանկ կընեմ որ և ոչ կիմանայ ձեր նեբս մանալը. կը կանչեմ ձինքը, ու անանկ թեվ մը կը զարնեմ որ կը տեսնէք »: —

« Օրհնած ըլլաս, միշտ ըսեր եմ որ ամեն բանի մէջ մեզի ճամբայ կը ցուցընես »: —

« Բայց աս ամեն հնարքը բանի չիպար, թէ որ Լուչիան չհամոզուի. միտքը դրեր է՝ որ մեզի է ասանկ բան ընելը »:

Յայնժամ և պատանին 'ի կիր էարկ զամենայն ճարտարախօսութիւն իւր, բայց Լուչիա չառնոյր յանձն, և ասէր. « Ձեմ գիտեր ինչ պատասխանեմ ձեր բերած պատճառներուն,

բայց կը տեսնեմ որ ձեր ըսածը յաջողելու համար՝ խել մը սուտեր զուցցելու է, խաբէութիւններ ընելու է, Ուինցոյ, սանակ չըսկըսանք. ես քու հարսըդ պիտոր ըլլամ. և վարէր պրպտիբերել զբառս պայ՝ առանց վտագոհելոյ. ես կուզեմ քու հարսըդ ըլլալ, բայց չիտակ ճամբով, Աստուծոյ վախովը, խորանին առջին: Աստուծոյ թողուն ք որ ինչպէս որ կուզէ, անանկ ընէ. կուզեմ որ Աստուած չիգիտնայ մեզի օգնելու կերպը, թէ որ մենք աս խաբէութիւնները ընելու չըլլանք: Ինչո՞ւ Հայր Քրիստափորէն ծածկենք ընելիքնիս »:

Եւ մինչգեռ այս բանք անցանէին, և ոչ դադարէր վէճն, լսելի եղև ոտնաձայն Հօրն Քրիստափորի, որպէս 'ի խրացեցն չառաչմանէ և 'ի խարազն զգեստուն առագաստաբար հովահարելով էր դուշակել: Լուծին ամենեքեան, և հազիւ կարաց Աչքնէս յունկանէ դառերն չընդել.

« Աղէկ նայէ, աղջիկ, բան մը չըսես իրեն »:

ԳԼՈՒԽ Է.

Հայրն Քրիստափոր հասանէը գայր որպէս քալ զօրավար, որոյ կորուսեալ զկարևոր ձա-
կատամարտ՝ առանց ինչ իւրոյ թերութեան, վչտանայ՝ այլ ոչ վհատի, վարանի՝ այլ ոչ ապշի, նահանջի՝ այլ ոչ փախչի, ընթանայ ուր կոչէ զնա հարկն, ամրացուցանէ զվայրս՝ ուր կցէ երկիւղ, գումարէ զկաց մնաց զօրուն, և տայ պատուէրս վերստին:

Ասաց՝ ի մտանելն. « Խաղաղութիւն ընդ ձեզ. ան մարդկն յոյսերնիդ կարեցեք. անոր համար առջինէն եւել պէտք է որ յոյսերնիս Աստուծոյ վրայ դնենք. արդէն իր օգնութեան նշանը ցուցուց »:

Թէպէտ և ոչ ոք յերեցունց մեծ ինչ յուսայր՝ ի փորձոյ Հօր Քրիստափորի, զի հզօրի կասել՝ ի բռնութենէ առանց սոսկելոյ՝ ի հար-

կէ խմէք, և զկնանել յանդիման ազաչանս, ոչ միայն գժուարին է՝ այլ և անլուր, սակայն և տխուր առուգրութիւն էրայն էվէ նոցա 'ի հա-
րուած: Մայրն և գուսաւոր խոնարհէցին զգլուխ-
այլ 'ի պատանին զօրացաւ զայրոյթ քան զլը-
քումն: Վաղ իսկ գառնացեալ 'ի բազում ար-
կածից 'ի վերայ հասելոց, 'ի գերև ելանելոյ
այնքանեաց ձգանց, 'ի պատրելոյ յայնքանեաց
աչխալուրթեանց, և 'ի լսումն վշտացն՝ անլսելի
լեալ 'ի հաստատուրթենէ օրիորդին, գոչեաց
կրձտեալով զատամունս, և ամբարձեալ զձայն՝
որպէս չէր նորա երբէք ցայնվայր արարեալ,
ասէ ցՀայրն Ֆրխատափոր. « Կուզեմ գիտնալ,
ինչ պատճառանք բերաս ան չունը պահանջէ-
լու որ իմ հարսս իմն չըլլայ: —

Պատասխանի ետ Հայրն Ֆրխատափոր հան-
դարտ և ողջմ բարբառով, և հայեցուք նմին որ
սիրողաբար յորդորէր զնա 'ի համբերուրթիւն,
և ասէ. « Խնդրէ Ռինցոյ. Թէ որ զօրաւոր եղողը
ուզէր իր ըրած անիրաւուրթեանը պատճառը
ըսել, բաները ատանկ գէշ չէին երթար »: —

« Ուրեմն ատ չունը կըսէ որ ջուզէը, վատ
ղի ջուզէը »: —

« Ատանկ ալ չըսաս. մեծ բան կըլլար, Թէ որ
անզգաւոնները առչափին ալ խոստովանէին՝ անի-
րաւուրթիւն ընելու ատեն »:

« Բայց հարկաւորապէս բան մը ըսաս ատ
գժոխքի հոգին »: —

« Իր ըսածները լսեցի, բայց չեմ կրնար ը-
սել. անզգամին խօսքերը կը խայթեն, բայց
կանցնին կերթան. կը բարկանան՝ վրանին կաս-

կածելուդ համար, բայց քու կասկածդ կը
հաստատեն, կը նախատեն ղքեզ, ու գուն
ինծի նախատինք ըրիր կըսեն. կարհամարհեն
ղքեզ, ու քեզմէ պատճառ կը վնտռեն. կը
սպառնան քեզի, ու կը գանգատին. աներեսու-
թիւն կըներեն, ու պակասուրթիւն չունեցող կու-
ղեն երևնալ: Ակէկ աւելին մի փնտռեր. ամե-
նևին սա անմեղին անունը բերանէն չէհանեց, և
ոչ քովիննդ, չուզեց ալ ցուցընել որ զձեզ կը
ճանչնայ. բան մը պահանջելը չըսաս. բայց ա-
ղէկ իմացայ որ սիրտը շարժելիք չունի: Ատոր
ամենայնիւ վտահ եղիք, որ Աստուած ձեզի
պիտոր օգնէ. խեղճեր, սրտերնիդ չկոտրի.
խեղճ Ռինցոյ, հաւատա ինծի որ գիտեմ զնս
քու տեղդ դնել, կը զգամ ինչ որ քու սրտիդ
կանցնի, բայց համբերուրթիւն. չոր խօսք մըն է
սա, լեզի խօսք մըն է անոնց համար որ հաւատք
չունին. բայց գուն... չէս ուզեր քանի մը օր
համբերել ինչուան որ Աստուած յաղթանա-
կել տայ արդարուրթեան. իրեն Թող տուր,
Ռինցոյ, ու գիտցիք ամենքդ ալ՝ որ արդէն
չուանին ծայրը ձեռքս է ձեզի օգնելու. հիմա-
կուհիմայ ատկէց եւել բան մը չեմ կրնար ը-
սել: Վաղը չեմ գար ձեզի, բոլոր օրը պէտք
է որ վանքը անցընեմ ձեզի համար. գուն,
Ռինցոյ, հոն եկուր. յանկարծ գուն որ չիկըր-
նաս գալ, հաւատարիմ մարդ մը խրկէ, խելքով
տղայ մը, որ իր ձեռքովը կարենամ քեզի իմա-
ցընել պէտք եղածը: Կը մնընայ, պէտք է որ
վանք դառնամ. սիրտ ըրէք, հաւատք ունեցէք,
ձեռք բարով »:

Զայս ասացեալ, փութացաւ եւ գնաց՝ ընդ նոյն կորաւոր եւ քարուտ ուղի, զոգեաս լինն արշաւասոյր, թէ գուցէ անագանեալ՝ կրեսցէ յանդիմանութիւն, կամ չար եւ՝ պատիժ, որ ծանրագոյն էր նմա, չկարել 'ի վաղիւ անդր գնալ անարգել, ուր կոչէին զինա պէտք եղիւք եացն պաշտպանելոց յիւրմէ:

Յայնժամ Լուչիա ասէ. « Լսեցիք ան խօսքն որ ըսաւ, չուանին ծայրը ձեռքն է մեզի օգնելու. պէտք է վստահինք իր խօսքին. անանկ մարդ մըն է որ երբոր տասը կը խոստանայ...—

Ի վերայ էած Ագնէս. « Պէտք էր որ աւելի պարզ խօսէր, կամ մեկիդի կանչէր զիս, ուր միտքը յայտնէր...—

« Պարապ խօսքեր են, ես գիտեմ ինչպէս կը լմընցընեմ», ասէ պատանին երթեւեկելով ընդ սենեակն. այնպիսի դիմօք և ձայնիւ՝ որ քաջայայտ առնէին զնմասա բանին:

Հառաչեաց Լուչիա. « Ա՜հ, Ռէնցոյ »:—

Ասէ հառաչանօք և Ագնէս. « Ի՞նչ կուզես ըսել »:—

« Ի՞նչ պէտք է ըսեմ, գիտեմ ինչպէս լմընցընել. Թող քանի սատանայ որ կուզէ՝ փորին մէջը ուռնեցայ, վերջապէս ինքն ալ միսէ ու ոսկորէ շինած է...—

« Զէ, Ռէնցոյ, Աստուծոյ սիրոյն համար ըլլայ, չէ »... սկսաւ ասել Լուչիա, բայց արտասուք հեղձուցին զձայն նորա:

Յաւել և Ագնէս. « Եւ ոչ կատակի համար ըսելու խօսքեր են ատոնք »:—

Գոչեաց Ռէնցոյ. « Կատակի համար! » և արձանացեալ առաջի Ագնեսի սիգաք աչաց, կըրկնէ. « Կատակի համար! կը տեսնաս կատակը »:

Հեգնականօք ասէ Լուչիա. « Ո՛հ Ռէնցոյ, ամենևին զքեզ ատանկ այլայլած չեմ տեսեր »:

Յաւել և Ագնէս հանդարտ ձայնիւ. « Հոգիդ սիրես, դուն ալ գիտես որ քանիներ պատրաստ կեցած են իր հրամանին. Թէ որ չըլլային ալ... Աստուած պահէ... խեղճերուն օգնականը արդարութիւնն է »:—

« Արդարութիւնը իմ ձեռքովս պիտոր օգնէ, ատենը հասաւ. գիւրին չէ, ես ալ գիտեմ. պահպանները ունի ան շունը, գիտէ իր սպահովութիւնը. բայց հաստատութիւնն ու համբերութիւնը կը յաղթէ... ատենը կուգայ..: Այո՛, արդարութիւնը իր տեղը կը գտնայ, կազատեմ գերը իր ձեռքէն, ամենքը գիս օրհնեն »...—

Ասկուճն օրիորդին 'ի յայտնագոյն բանից ասաի՝ յաղթեաց արտասուացն, և ետ նմա զօրութիւն խօսելոյ: Ի վեր էառ զարտասուալից դէմն իւր ծածկեալս 'ի ձեռացն, և սրտաբեկ՝ այլ անյողդողդ ձայնիւ ասէ ցպատանին. « Ուրեմն հարկ ըլլալը կամ չըլլալը հոգիդ չէ. իմ խոստմունքս երկիւղած փեսի մը հետ էր. բայց մեկին որ ասանկ... Թող ապահով ալ ըլլայ արդարութեան ձեռքէն, Թող չխնայեմ ալ վրէժխընդրութեան հոգմանէ, արքայորդի ալ Թող ըլլայ...—

« Ատանկ է », գոչեաց պատանին՝ ևս քան զևս այլանդակեալ դիմօք. « Թող ես զքեզ չուենամ, բայց ինքն ալ չուենայ. ես հոս առանց քեզի, բայց ինքը դժոխքին տակը...—

« Ա՛հ, մի, հոգիդ սիրես, մ՛ըսեր առանկ խօսք. առ ինչ աչքեր են. էհ, էհմ կրնար նայիլ վրադ առ վիճակին մէջ »։ գոչէր Լուչիա արտասուօք և աղերսանօք, բազկատարած. և Ադնէս ձայնէր և վերաձայնէր յանուանէ զպատանին, գգուէր զթիկունս նորա, զբաղուկս և զձեռս, առ՝ի հանգարտել զնա։ Եկաց նա վայրկի մի անշարժ և մտախոհ, յառեալ յաղաչաւոր դէմս օրիորդին, և ապա յանկարծ խուժող՝ի նա հայեցեալ, և ընկրկեալ յետս, ձգեաց ըզբազուկ իւր՝ ցուցամատիւն առ նա ուղղելով, և գոչեաց. « Ա՛ս կուգէ ինքը. հա՛, աս կուգէ. Թող սատկի անզգամը »։ —

Յայնժամ Լուչիա՝ի ծունր իջեալ առաջի նորա, ասէ. « Հապա ես քեզի ինչ ըրի որ քու պատճառաւդ մեռնիմ »։ —

Պատասխանի ետ Ինէնցոյ այլազգ լեզուի ցասմամբ, և ասէ. « Ինչ ըրիր! ինչ սէր է վրաս ունեցած սէրդ, ինչ սիրոյ ապացոյց առած ես ինձմէ. այնչափ աղաչեցի, պաղատեցայ. իսկ դուն միշտ չէ, չէ »։ —

Ի վերայ էած Լուչիա. « Հա՛, հա՛, վաղը կուգամ քեզի հետ ժողովրդապետին, հիմայ ալ Թէ որ կուգես. միայն Թէ քեզի եկուր »։ —

Յայնժամ այլափոխեալ Ինէնցոյ, մարգասիրագոյն ձայնիւ և դիմօք ասէ.

« Կը խոստանա՞ս »։ —

« Կը խոստանամ »։ —

« Աղէկ նայէ, խոստացար »։

Եւ Ադնէս կրկնակի ուրախ եղեալ, գոչեաց. « Փառք քեզ Աստուած »։ Ի սաստիկ բարկու-

Թեան իւրում չածէր արդեօք պատանին զմտաւ ղարգասիս երկիւղն օրիորդին, և չեցէ՞ իսկ նորա հնարս առ այս՝ի կիր արկեալ՝ յաճախել զարհաւիրս նորա։ Զգիտեալ ասէ զայն պատմիչն. լինի Թուի ղի և ոչ ինքն պատանին գիտեր զայն. այլ այն չայտ է, ղի սրամտուԹիւն նորա էր խակապէս ընդդէմ Ռոտրիկեայ, և ղի ըղձիւք ցանկալի հաւանուԹեան օրիորդին. այլ չաղաղակել երիւց բուռն կրնց՝ի սիրտ մարդոյ, ոչ ոք, և ոչ որ կրէն՝ կարէ միշտ զանազանել ղձայն միոյն՝ի միւսմէ, և գիտել ղհաւաստեաւն՝ որ քան զոր իցէ հզօրագոյն։

« Պատասխանէ Լուչիա սիրողաբար ինձ յանդիմանուԹեամբ. « Իրաւ է, խոստացայ. բայց դուն ալ խոստացար գայԹակղուԹիւն չեռալ ուրիշներուն, հնազանդիլ Հայր »։ ... —

« Թող տուր, հոգիդ կը սիրես, որուն սիրոյն համար այնչափ կատղեցայ, հիմայ խօսքդ ետ կառնես, կուգես որ չընեզրս բանը ընեմ »։ —

« Չէ, չէ »։ ասաց Լուչիա, վերստին սկսեալ երկնչել. « Խոստացայ, խօսքս ետ չեմ առներ. բայց ինչ կերպով բերնես խօսք առնելդ գիտես. Աստուած հետ ընէ »։ ... —

Ինէնցոյ ասէ. « Ինչո՞ւ չար դուշակուԹիւն կընես, Լուչիա. Աստուած գիտէ որ մեկուս մը չարիք չենք ըներ »։ —

Լուչիա ասէ. « Գոնէ խօսք տուր ինձի որ աս եռքինը ըլլայ »։ —

« Կը խոստանամ, բայց խղճա վրաս »։ —

Ադնէս ասէ. « Ա՛լ աս անգամ խօսքդ պահէ »։ —

Աստանօր պատմիչն խոստովանի չգիտել և զայն՝ թէ Լուչիա ժպտո՞ղ էր բոլորովին ընդ հաւանութիւն: Թողումք և մեք զներան յերկբայս:

Ոչինչով կամէր երկարել զխօսս, և սահմանել մանրամասնաբար որ ինչ՝ ի վաղիւ անդր հանդերձեալ էին առնել. բայց օրն տարաժամէր, և ոչ՝ ի դէպ թուեցեալ նոցա այլ ևս յամել նմա առ իւրեանս, հրաժարեցին ասելով « դիշեր բարի »:

Եւ արդարև բարի եղև գիշերն այն երեցունց ևս, որպէս պատահէ՝ ի դադարել յուզմանց և աղեխից, և ուր առաջի կայցէ՝ ի վաղիւ անդր գործ կարևոր՝ որոյ եղեալ էին անսասդ: Ոչինչով դարձաւ վաղ քաջ ընդ առաւօտն, և միաբանեցին՝ մանաւանդ ընդ Ագնեսի՝ որ ինչ ընդ երեկս առաջի կայր նոցա գործ մեծ. առաջարկելով միմեանց նախահոգ զգուշութեամբ և լուծանելով զդժուարութիւնս՝ բառնալով ըզխոչս, և մերթ միոյն և մերթ միւսոյն նկարագրելով զներան, որպէս թէ կատարեալ: Ունկն դներ Լուչիա, և առանց հաստատելոյ զայն՝ ընդ որ չկարէին հաւանել՝ ի սրտէ, խոստանայր առնել ըստ կարի, և ասէ ցպատանին.

« Հարկաւ կերթամ Հայր Քրիստափորին հետ խօսելու, ինչպէս որ երեկ լրկուն ըսաւ »:—

Եհարց և Ագնէս « Կերթա՞ս »:— Եւ նա ասէ. « Խելք չունիք, չէք տեսներ ինչ ատտանի աչքերը ունի, մկկէն դէմքիս վրայ գրածի պէս կը կարդայ որ կորկոտ մը ունինք եփելու. ու մեր մը սկսելու որ ըլլայ հարցմունքները ընել, չեմ կրնար խաբեպել ձեռքէն: Անկէց՝ ի զատ, ես պէտք է տունը կենամ, գործք տեսնելու. աղեկ կըլլայ որ ուրիշ մը խրկեք »:—

Ագնէս ասէ. « Մէնիկոն կը խրկեմ »:

« Աղեկ ». ասէ Ռինցոյ, և երթայ՝ ի գործ, որպէս ասացն: Եւ Ագնէս գնայ առ դրացին, խնդրել զՄէնիկոյ, որ էր մանուկ արթուն երկտասանամեայ, և որպէս քեռորդի իւր վասն խնամութեանն: Խնդրեաց զնա յազգականացն վասն աւուրն այնորիկ՝ ի ծառայութիւն, և ընկալեալ զնա՝ էած՝ ի խոհակերոց, ետ նմա նախաճաշ, և ասէ ցնա. « Մէնիկոյ, վեղարաւորը ներսն վանքը գնա, Հայր Քրիստափորը փընտռէ. պատասխան մը պիտոր տայ, աւ բէր. խմացար, Հայր Քրիստափորը, ան վտառաւոր ծերը, կը ճանչնաս ալ, երկայն մորուքը, որն որ ամենքը սուրբ կը կանչեն »:—

Պատասխանէ Մէնիկոյ. « Հասկըցայ, անկոյ որ միշտ կը շոյէ տղաքը, ու մեզի երբեմն երբեմն պահակը կուտայ »:—

« Այրիս Մէնիկոյ. թէ որ քեզ քիչ մը սպասել տայ, հոն կեցիր, վանքէն մի հեռանար, մ՚երթար լիճին քովը ընկերներուդ հետ ձկնորսները տեսնելու, պատերէն՝ չորցընելու համար կախած ցանցերուն հետ մի խաղար, մկիալ քու սովորական խաղդ հետ ալ մի ըլլար »...—

Գիտէրն է զի Մէնիկոյ ճարտար էր յոյժ՝ ի խաղն կոչեցեալ ընդոստս. արագ և մանկունք մըտագիւր պարապեմք յոր ինչ եմք աջողակք:

Մէնիկոյ ասէ. « Տղու տէղ կը դնես գլես մըր քուրիկ »։ —

« Աղէկ է, խելօք կեցիր, երբոր դառնաս պատասխանը բերելու որ ըլլաս, նայէ սա երկու աղուոր փայլուն դահեկանները, քուկդ են »։ —

« Հիմակուց ինչո՞ւ չես խոսր. նոյն բանը չէ՞ »։

« Չէ, չէ, կը խաղաս. գնա, խելօք որ կենաս, անկէց աւելին ալ կուտամ »։

Բայց դեպք ինչ յայնմ երկարատեւ առաւօտու պատահեալ յաւելին կասկածանս ոչ սակաւ մօրն և գաւեր։ Մուրացիկ ոմն, ոչ որպէս զայլս յաղբատոց ծնուրեալ ծնդեալ, և ոչ պատառատունս զգեցեալ, դէմք նորա ոչ ինչ անհնչան, եմուտ՝ ի խնդիր ողորմութեան, լսուեաբար այսր անդր ակնարկելով։ Եաուն նմա հաց, և ընկալեալ եդ՝ ի գրպանի կէղծեօք ինն անհոգութեան. և յամէր անդ առանց ակնածութեան, այլ տարակուսեալ ինն, առնելով հարցուածս, որոց պատասխանէր Աբգենս զհնգասունն ամենայնի՝ որ ինչ էրն։ Եւ ապա իբր թէ կամելով գնալ՝ ի բաց, և կէղծեալ սխալել ճանապարհ, եմուտ ընդ դուռն՝ որ ածէր՝ ի սրահ ուրեք, յածեցոյց և անդ զաչս ձեռ զձեռն որպէս կարէին. և՝ ի գոչել ուրուք զհետ նորա. « Ի՛, ի՛, ուր կերթաս. հոսկէց, հոսկէց », դարձաւ յետս, և ընդ որ ցուցին նմա, եղ՝ ի բաց՝ խնդրելով ներսուն խոնարհական ինն ձեռամ որ կերպարանաց նորա ոչ՝ ի ճահ պատահէր։

Զհետ նորա երևեցան ժամ՝ ի ժամ և այլք ոմանք դժկերպք, զորոց դժուարին էր դուշակել՝ ոյք ոմանք էին, այլ և ոչ մարթ էր կարծել զնոսա ուղևորս բարեկրօնս՝ որպէս կէղծէին երևել։ Էր որ մտանէր պատճառանօք ուսանելոյ զճանապարհն, և էր որ յանցանելն զառաջեաւ դրանն դանգաղէր, և գիտէր ընդ դաւթի՝ ի սենեակ անդր՝ որպէս ոք զի խնդրէ տեսանել, առանց տալոյ կասկածանս ումեք։ Դադարեաց ապա զմիջաւուրըն տաղտկալին այն երթեւեկ. և յառնէր երբեք երբեք Աբգենս, անցանէր ընդ դաւթին՝ ի դուռն փողոցին, հայէր յաջ և յահեակ, և դառնայր, ասելով. « Մարդ չերևնար »։ զոր լնքն խնդութեամբ ասէր, և դուստրն լսէր խնդութեամբ, այլ երկաքանչիւր անգիտանային զպատճառս խնդութեանն. և երկոքին ևս, մանաւանդ դուստրն, կային տարակուսեալ զերկոց երեկոյին։

Բայց առ՝ ի գիտել Աշգրատագոյն ինչ զգալոնածածուկ չընկանացն, հարկ է ինձ դառնալ վայրկի մի յետս առ Ռոտրիկ՝ զոր Թողաք յերկինն միայնակ յատարանս իւր՝ ի մեկնել Հօրն Քրիստափորի։

Երթեւեկէր նա ըստ նախասահմանեալ ժամ բանի՝ մեծաքայլ՝ ի սրահին, ուր կախեալ կային զրմոյ կենդանագիրք ընտանեացն և հաւուց նախնեաց։ Եւ՝ ի շրջել զաչս կողմանէ՝ ի կողմն, ետես զմի՝ ի նախնեաց իւրոց քաջ պատերազմող, ահարկու թշնամեաց և զօրաց իւրոց, դէմն նէհայեաց, ձաղկահեր, կորակռակ, ի պերևէշտս սլաքեալս, կանգուն յատին, պատեհազէն՝ ի առնապանս՝ ի բարձապանս՝ ի զրահ՝ ի բազպանս՝ ի ձեռս, երկաթիս առհասարակ,

զաջ ՚ի կող հաստատեալ, և զձախս յերախա-
կալ: Յառեալ եհաց Ռոտրիկ առ նովաս ՚ի զը-
նեն. և ՚ի գառնալ իւրում եառս միւս այլ ՚ի
նախնեաց իւրոց հանդէպ, գտաւաւոր գ-ժնեայ,
սարսափ գտտախաղից և վհատաբանից, բազ-
մեալ ՚ի Թիկնաթոռ մեծ՝ ծածկեալ ՚ի թաւիշ
կարմիր, արկեալ զիւրեաւս լօգիկ ընդարձակ,
և ամենայն ինչ յանձին նորա սեաւ, բայց մի-
այն փողպատ սպիտակ, օձիք կրկին լայնք, և
սամուրենի արտաքս շրջեալ առ ՚ի ցոյց, (նշա-
նակ գտտաւորաց, որպէս զգենուին ՚ի ձմե-
րայնի, վասն որոյ չիք ուրեք տեսանել կենդա-
նագիր գտտաւորի ամառնային զգեստուք): Էր
ինքն նիհար, կամարակերպ յօնիւք, ունելով ՚ի
ձեռին աղերսագիր յԱստնեբրցուսէ, և Թուխր
ասել պեցոսէ: Ի միւսում կողմանն տիկին ոմն՝
ահարկու նաժշտին, և յայլում աթոռ ոք՝ սուռ
կուսին միանձանց. և հակիրճ ասացեալ, ամենե-
քեան սոսկալիք, ՚ի տատակէ խոկ անտի ա-
հարկուք:

Առաջի այսպիսեաց յիշատակաց Ռոտրիկ ևս
քան զևս զայրանայր, և ամաչէր ընդ կշտամ
բանս վեղարաւորի ուրուք, որ ՚ի դէմս Նա-
թանայ եկեալ էր առ նա: Երկներ խորհուրդ
վրէժխնդրութեան, Թողայր զայն, և խորհէր՝
որպէս յապեցուցանել զկիրս իւր, միանգա-
մայն և զկարծեցեալ պատիւ իւր պահել. և ՚ի
լսել երբեմն երբեմն հնչելոյ յունկն իւր նախեր-
գանաց գուշակութեանն չարի, լքանէր, և ՚ի
բաց դնէր զխորհուրդ վրէժխնդրութեան: Յե-
տոյ ասպ կոչեցեալ զմի ՚ի սպասաւորաց,

յղեաց առնուլ հրաժեշտ ՚ի կոչնականաց, զն
էր զբաղեալ ՚ի գործ կարևոր: Դարձաւ սպա-
սաւորն, և ասէ.

« Ամենքն ալ երեսից բարեաը Թողուցեր, ու
գացեր էն »: —

« Կոմսն ալ », հարցանէ Ռոտրիկ՝ երթևեկիկ
լով միշտ: —

« Կոմսն ալ ան պարոններուն հետ գացեր է,
տէր իմ»: —

« Աղէկ. ուրեմն վեց հոգի եառէք գան շուտ,
քալէլու ելլանք. բերէք սուրս, վերարկուս,
դվնարկս, շուտ »:

Եվ սպասաւորն խոնարհեալ, և գարձաւ՝
բերելով զսուսերն մեծագին՝ զոր ած Ռոտրիկ
ընդ մէջ իւր, զվերարկուն՝ զոր էարկ զիւրև,
և զնոյնն ցցուհատարդ փեսորովք՝ զոր եդ գո-
ռոզաբար ՚ի գլուխ, զեռեղեաց զայն ՚ի հա-
րուած ափոյ որպէս ՚ի չնչել ալէկոծ հողմոյ.
և խաղաց ՚ի գնալ: Եգիտ առ գրան զվեցեսին
սրնկայս սպառազինս, որք խոնարհեալ մեծա-
բանօք ուղեղոյ եղեն ընդ նմա որպէս Թիկնա-
պահք: Իսկ ինքն առաւել ևս յոյնաժամ խոժո-
ռադէմ գոռոզ և բարձրայօն եղ ՚ի ձեմ, դէմ
եդեալ ՚ի Լեքբոյ: Ֆաղաքացիք և արուեստա-
ւորք ՚ի սեսանելն զնա՝ ընկրկէին առ որմունս, և
խոյր ՚ի վայր առեալ՝ խորին կորանօք մեծա-
րէին զնա. այլ ինքն և ոչ հայէր ՚ի նոսա: Խո-
նարհէին որպէս վհադուհի քան զինքեանս և
այնքան՝ որ ՚ի նոցանէ սեսողք անուանէին. զն
՚ի շրջակայս անդ մինչև ցհազար մարդ էր ոք՝
որ ընդ նմա հաւասարէր ըստ համբաւոյ, ըստ

Ճոխութեան, ըստ համախոհից, և ըստ ամե-
նայնի՝ որովք ցանկալին կալ դեր ՚ի վերոյ քան
զայլս. և սիգաբար վարեր ընդ ամենեսին:

Ոչ պատահէաց յայնմ աւուր բերդակալն
սպանիացն. այլ ՚ի պատահել նորին՝ երկու-
տեք հաւատաց լինելն խորին մեծարանաց. զի
երկոքին ևս հզօրք էին, և ոչ կարօտէին միմեանց,
այլ վասն բարեձևութեան մեծարէին զներեաս:
Ա՛ ՚ի կարճել զառաւօտն զայն, և առ ՚ի փա-
րատել՚ի մտաց այլազգ պատակերօք զպատակեր
վեղարաւորին՝ որ գրաւէր զմիտս նրա, եմուտ
Ռոտրիկ յապարանս ուրեք, ուր յաճախէր
որեար բազում. և ընկալան զնա մեծարանօք և
սպասուք, որպէս սովորութիւն է ընդունել
զսիրելիս և զերկիւղալիս. և ՚ի մուտս արևու
դարձաւ յապարանս նրա: Դարձեալ էր անդր
՚ի նմին պահու և կոմն Ատաւլեայ հօրեղբօրորդ-
դի նորա, և պաշտեցան ընծիրիք, ուր կայր միշտ
Ռոտրիկ մտախոհ, և խօսէր սակաւ: Ի կատա-
րել ընծիրացն, ՚ի բառնալ սպասուց ՚ի սեղա-
նոյ, և ՚ի գնալ սպասաւորաց ՚ի բաց, ասէ կոմն
Հարամոութեամբ նմին և ծաղրս յՌոտրիկ.

« Ան չէ, բռնած գրաւդ ՚ընդ պիտոր հատու-
ցանես նմին » : —

« Դեռ սուրբ Մարտինոսին ոսկը չհանցաւ » : —

« Բայց հիմակուց կրնաս տալ, վասն զի օրա-
ցոյցին բոլորը սուրբերուն ոսկերն ալ անցնին
պիտոր, ու.... —

« Հոս է տեսնելու բաներնիս » : —

« Դուն գաղտնիք կը ձևացընես բանը, այս-
պէս, բայց ես ամեն բան իմացայ. ու անտակ

ապահով եմ գրաւը վաստկիլելու՝ որ պատրաստ
եմ նորին ուրիշ գրաւ մըն ալ գնելու » : —

« Լսենք » : —

« Ան վեղարաւորը, Հայր... Հայր... անունը
չեմ դիտեր. զքեզ գարձի բերեր է եղեր » :

« Նորին քու առասպելներդ մի սկսիր » : —

« Դարձի եկեր ես, դարձի. կուրախանամ.
դիտես որ ինչ աղտոր տեսարան մը կըլլայ տես-
նել զքեզ զղջումի եկած, աչքըներդ խոնարհ-
հած. ինչ պարծանք ան վեղարաւորին. ինչպէս
ուռած ու փորը անկած տուն կը դառնայ: Ա-
սկիայ ամեն օր ու ամեն ցանցով բռնուելու
ձիներէն չէ. ապահով եղիր որ զքեզ օրինակ
պիտոր բերել հեռու տեղուանք առաքելու-
թեան որ երթայ. կարծես որ կը լսեմ տալու
քարոզը » : Ատաւնօր ընդ քիմս խօսելով, և
այլանդակ չարժմամբք ՚ի ձև քարոզի ասէ.
« Աշխարքիս մէկ կողմը տասէտ մը կար, դեռ
կենդանի է, անունը չեմ խաբ՝ արժանաւոր
յարգութեան համար, ասկիայ ճամբէ եկեր էր,
կինկինեբրս աւելի բարեկամ քան Թէ լաւ մարդ-
կանց, չարը բարին չնայողը. ասկիայ աչքը աղ-
ջկան մը վրայ » ... —

Կարճատեաց Ռոտրիկ զբանս նորա. և ընդ
քիմսն ժպտելով, և տաղտկացեալ ինն, ասէ.

« Հերիք է, հերիք. Թէ որ իրաւցընէ կուզես
նորին գրաւ գնել, ես ալ պատրաստ եմ » : —

« Վարպետորդի ես, չըլլայ Թէ դուն վեղա-
րաւորը գարձի բերած ըլլաս » : —

« Աշնոր վրայ մի խօսիր ինծի. խակ գրաւնիս
սուրբ Մարտինոսը պիտի որոշէ » : —

Շարժեցաւ ՚ի բանից ասոի հետաքրքրու-
թիւն կոմսին, և սկսաւ յաճախել հարցուա-
ծըս. բայց Ռոտրիկ ՚ի դէրև էհան զամենայն,
՚ի ժամանակէն օր միշտ ապաստանեալ ոչ կա-
մէր զով յայտնել միւսոմ կողման զնորհհաւդ
իւր, յոր չև էր ձեռնարկեալ, և ոչ քաջ սահ-
մանեալ զայն:

Ի վաղիւ անդր զարթեաւ Ռոտրիկ յառա-
ւօտուն՝ դարձեալ նոյն ինքն Ռոտրիկ երկիւղն,
զոր ազդեալ էր ՚ի նա բան վեղարաւորին՝ օր
պիպէ գայ ոչ, ՚ի մուտս օրոյն լեալ էր գիշերային
երազովք, և զայրոյթ ևեթ մնացեալ ՚ի սրտի,
յաւելեալ և յոմանց ընդ երկիւեան սուզ ինչ
տկարութիւն: Պատկերք նորանորք սիգաձեմ
յաղթանակին, ապաք մեծարանաց, հիւրըն-
կալութիւն, և ծաղրածուութիւն հօրեղբօրոր-
դւոյն, խրախուսեալ էին զնա անդրէն ոչ սա-
կաւ: Ընդ յառնելն՝ եւս կոչէլ առ ինքն զկրի-
ղոս:

Ասէ ընդ միտս ապաստաւորն՝ որ ընկալաւ ըզ-
պատուէրն: « Մեծ բան մը պիտոր ըլլայ՝ » զի
Կրիղոս էր գլխաւոր ֆալացն, որում յանձնէր
Ռոտրիկ զբազմամոտանդ և զանօրինադոյն դոր-
ծըս. հաւատարիմ առաւն իւրում և շնորհա-
պարտ, և առ շահ օգտի բոլորովին ՚ի նա ապաս-
տան: Որոյ ապանեալ զոք ՚ի տուէ ՚ի քաղա-
քամիջի, ապաւինեալ էր ՚ի պաշտպանութիւն
նորա, և զգեցեալ զձև ապաստաւորաց նորա,
կայր յակաստանի յամենայն հետազօտու-
թեանց առենին. և էր անվտանդ ՚ի գործել
զամենայն հրամանս անօրէնութեանց նորա:

Ոչ փոքր զօրավիգն էր նա Ռոտրիկեայ. զի
Կրիղոս ոչ միայն քաջագոյնն էր ՚ի սպասաւորս
նորա, այլ և ապացոյց զօրութեան նորա ընդ-
դէմ օրինաց. որպէս զի յաւելցոյր նուաճա-
րտղութիւն իւր իրօք և կարծեօք:

Ասէ ցնա Ռոտրիկ. « Հոս պիտոր երևնայ
քու քաջութիւնդ. վաղընկ առաջ առ Լուչիա
աղջիկը աս պալատը պիտոր գանուի »: —

Կրիղոս ասէ. « Մարդ չկրնար ըսել՝ որ Կրի-
ղոն բանի մը մէջ ետ կեցաւ իր վճռաւորութ-
իւնը ծառայելէն »: —

« Այո հետգ քանի հոգի որ պէտք է, ապըս-
պըրէ, կարգի դիր ինչ որ քեզի աղէկ կերևնայ,
հերկը է որ բանը յաջողի: Բայց ամեն բանէն
եւեղի նայէ՝ որ աղջիկանը վիրաս մը չըլլայ »: —

« Բայց քիչ մը վախցընել հարկ կըլլայ, որպէս
զի շատ աղաղակ չելլէ. առանց ասոր անկարելի
է »: —

« Վախցընել!.. կիմանամ... անկարելի է.
բայց մազ մը գլխէն չվիրթի պիտոր. մանաւանդ
ամեն կերպով իր պատիւը պահուի. խոս-
ցաը »: —

« Տէր իմ, պարտիզէն ծաղիկ մըն ալ կարելի
չէ բերել հրամանքիդ, առանց դպչելու անոր.
բայց կատահովեմ որ հարկաւորէն դուրս բան
մը չըլլուիը »: —

« Գնա խօսքիդ կը վստահիմ, բայց ինչպէս
պիտոր ընես »: —

« Մտածելու հետ եմ. աղէկ որ տունը գե-
ղին ծայրն է. տեղ մը պէտք է պահըտելու,
ասկից բախտով ունինք, անկէց քիչ մը հեռու

անբնակ ու խլխլած տնակ մը կայ դաշտին մէջ. ան տնակը... (հրամանքդ աս բանէրուս տեղեկութիւն չունիս)... ան տնակն որ քանի մը տարի առաջ այրեցաւ, ու ստակ չկար նորոգելու, երեսի վայ մնաց. կախարդ կինիկոբ կերթան կուգան հոն. բայց այսօր շաբաթ չէ, կը ծխախոտ վրանին: Գեղացիներն որ աւելորդ դասախօսութեամբ լցուած էն, ամենևին շաբթուն մեկալ օրերը հոն չեն մտներար, աշխարհս ոսկին երեց տալու ալ ըլլաս. ուստի կրնանք հոն կենալ ապահով, մեկը չիգար մեր գործքը աւրելու »: —

« Աղեկ է. եաքը »:

Այսպէս կրիզոյ առաջարկեր զնորհուրդս իւր, և Ռոտրիկ առարկեր դժուարութիւնն, մինչև սահմանեցին միւսան գեղանակ գործոյն, զի մի ձեռացեն հետք գործողացն. և հնարել յայլս չորել զիասկած՝ սուտ ցուցակութեամբը, լուեցուցանել զմայրն եղկելն, և այնպիսի արհաւիրս արկանել 'ի Ռէնցոյ՝ զի մոռացի զցաւս և զնորհուրդ դիմելոյ յատեան, և զկամն իսկ գանգատելոյ: Համառօտ ասել՝ խորհեցան զամենայն անօրէն հնարս 'ի յաջողութիւն մեծի եղեռանն: Թողեալ 'ի բաց զպատմութիւնն հրնարկին, որ չեն ինչ կարևոր 'ի խնդրոյս պատմութեանս, մատիւր ինայեցք զընթերցոյն 'ի տաղտկալի զրուցատրութենէ երկոցունց ապերասիցն:

Բայց 'ի գնալ կրիզոյն ձեռն արկանել 'ի գործ, կոչեաց զնա Ռոտրիկ և ասէ.

« Մոիկ ըրէ. թէ որ յանկարծ այն յան-

դուգն գեղացին ձեռքդ կխնալու ըլլայ աս իրիկուն, դէշ ջըլլար որ առաջուց աղէկ ծեծ մը տաս իրեն, որպէս զի վաղը յիշէ կերած ծեծը, ու հնազանդի, ձայն չհանէ. բայց եւևէն մ'կրնար զինքը փնտրուելու. հերիք է որ մեր կարևոր գործքը չաւրուի. հասկցար »: —

Պատասխանի եա կրիզոյ. « Ինծի թող տուր». և մեծարանօք խոնարհեալ, խրոխտանօք եղ'ի բաց: Ի վաղիւ անդր ընդ առաւօտն չջրեցաւ լրտեսել զդիւղն: Մ'ուրացիկն այն կեղծ՝ որ այնու օրինակաւ մտեալն էր 'ի տունն աղջկանն, էր ինքն կրիզոյ՝ որ գայրն առ 'ի բառնալ զնա անտի յայտնապէս. և կեղծ ուղևորքն էին ընկերք նորա արիւզք, որոց բաւական էր հաւանցել ծանօթութիւն տեղւոյն՝ առ 'ի կատարել զհրամանս նորա. և տեղեկացեալ վայրացն, ոչ ևս երևեալ էին, առ 'ի չտալ կասկածանս:

Իրրև գարձան ամենեքեան յատարանս անդր Ռոտրիկեայ, կրիզոյ եղոյց նոցա զնորհուրդ իւր, և սահմանեաց զգործ իւրաքանչիւր, մանաւանդ նոցա հրահանգս: Այլ զայս ամենայն չէր հնար առնել նոցա՝ առանց գիտելոյ ծերունւոյ սպասաւորին, որ արթուն աչօք և ուշադիր լսելեօք հետազօտէր զընդարս նիւթեալս 'ի նոցանէ. և մանրանալով ծանօթութիւն ինչ ասոի, տեղեկութիւն ինչ անոի, մեկնելով զնոսա ինչ նոցա միթինս, և գուշակելով զդաղտնի գըտնացս նոցա, գիտաց հաւաստեաւ որ ինչ յայնմ իշերի պատրաստեին գործել: Այլ մինչև եհաս նա 'ի գիտութիւն երացն, օրն տարաժամեալ

էր, և վաղ իսկ առաջապահք Քաջացն դարա-
նեալ էին ՚ի տնակն ամայի: Հէք Ծերուհին
Թէպէտ և քաջ գիտէր յորպիսի վտանգ դիմա-
դրաւէրն, սակայն ոչ կամեցաւ Թերանալ ՚ի
պարտուցն. պատճառանօք ոգի առնուլոյ եղ յա-
պարանից անտի, և չոգաւ Ձեպընթաց ՚ի վանս,
տալ Հօրն Քրիստափորի զնոստացեալն զեկու-
ցումն: Սուղ ինչ յետոյ մեհենեցան և այլ սրի-
կայք, ոչ ամենեքեան ՚ի միասին, զի մի ծանիցէ
գունդ գործել նոցա. զհետ նոցա գայր Կրի-
ղոս. գետակ մի Լեթ մնայր ածել ՚ի տնակ
անդր վանն օրիորդին, և ածաւ ՚ի տարաժամ
երեկոյի: Եւ իբրև անդ ՚ի մի վայր ժողովե-
ցան, յղեաց Կրիղոս զերիս ՚ի նոցանէ ՚ի պան-
դոկի գեղջն, միումն կալ առ գրան՝ գիտել որ
ինչ գնալք յուղւոջն պատահէին, և երք բնա-
կիչք առ հասարակ ՚ի տունս իւրեանց մեկ-
նէին. և երկուցն ՚ի ներքս անդ ղբօսնուլ ՚ի
խաղ և ՚ի գիներբուս, լսեսկզ որ ինչ ՚ի գեպ
էր. իսկ ինքն կայր գնդապետն ՚ի դարանի:

Հէք Ծերուհին Ձեպէր ընթանայր տակաւին,
և երեքին լսեաք հասին ՚ի կայս իւրեանց:
Աբէն ՚ի մուտս էր, և մեհեալ Ոչնցոյ ՚ի տուն
օրիորդին, ասէ.

« Թոռնին ու Ձերուազը գուբսը ինծի կը սպա-
սեն, հետերնին պանդոկը կերթամ պատառ մը
բան ուտելու, արևը մինալու առեղը կը գա-
նանք՝ ձեզ առնելու »:—

Յոգւոյ եհան Լուչիա, և ասէ. Աբէուբէն,
այլ ձայնիւն զկախառակն ցուցանէր:

Ի հասանել Ոչնցոյն երկաքսումբք ընկերօքն

՚ի պանդոկի անդր, եգիտ առ գրան արձանա-
ցեալ զպահանորդն, որ Թիկամբն յեց ՚ի գրան-
դին՝ զկէս մարմին խափանէր, բազուկս զմի-
մեամբք ածեալ առ կրծովք. և գիտէր յայլ և
յայլ հայեակ՝ մերթ զպալիտակ և մերթ զսեաւ արիւ-
նախանձ աչացն ցոլացուցանելով: Խոյր տափա-
րակ ՚ի Թաւիշ կարմիր, կիսովին գալարուն,
ծածկէր զկէս գիսակացն՝ որ բաժանեալ ՚ի
Թուխս ճակատուն՝ պատէին երկուսաւեք ընդ
ականջօք, և գանդրաձև զծոծրակաւն անկա-
նէին: Կրէր ՚ի կախ գաւազան մեծ, անզէն յե-
րևման. այլ էր գուշակել և մանկան ազայոյ,
զի էին նորա զէնք անտես ՚ի ներքոյ: Ոչնցոյ
դնայր առաջի, և իբրև ՚ի մուտս եղև, կայր պա-
հանորդն անշարժ ՚ի նա աչիկառոյց. իսկ պա-
տանին առ ՚ի խուսել ՚ի խօսից, որպէս սովո-
րութիւն է ՚ի գործս գժուարինս, չտեսանէ-
լոյն արար զայն, և առ միւս գրանդեաւն քե-
րեալ կողմնակի եմուտ ընդ միջոյն Թողեալ ՚ի
Հերմեայն *: Չարիք եղև և երկուց ընկերաց
զնոյն հոլովումն առնել ՚ի մուտս. և մտեալ ՚ի
ներքս, տեսին և զայլսն զորոց լսէին իսկ զձայն,
զերկուս սրիկայիցն ասեմ. որոց նստեալ անդ
առ սեղանով, խաղային մատնախաղ՝ միաձայն
գոչմամբ, որպէս խաղն պահանջէ. և ապակի
գինւոյ ՚ի միջի, յորմէ մերթ մին և մերթ միւսն
ըմպէր: Սոքա ևս հայէին ընդ նոր եկաւորան.
մանաւանդ միոյն ՚ի նոցանէ զննեալ զՈչնցոյ

* Հերմեայք կոչին խորխոր երկայնայոյտ, բերելով գլխաւորքն հարդիկեղէն, որպես առերեսաբար ՚ի դրանդիս ե պետանել:

յոտից ցգլուխ, ակնարկեաց առ ընկերը իւր, և ապա առ պահանորդ դրանն. և նա գլխովին նշանացի պատասխանեաց : Յորմէ Ռէնցոյ 'ի կատածանս անկեալ, հայէր տարակուսեալ 'ի հիւրս իւր, խնդրելով 'ի դէմս նոցա զիմաստ ակնարկութեանց սրիկային . այլ դէմք նոցա զբաղց ևեթ ցուցանէին : Հայէր 'ի նոսա պան-դոկապետն, ժպտալով հրամանի. եմուտ Ռէնցոյ ընդ նմա 'ի սենեակ ուրեք մերձակայ, և ասաց նմա պատրաստել ընթրիս : Եւ 'ի դառնալ նորա ծածկութիւն սեղանոյ և ապակեաւ գինւոյ, և հարց 'ի մխումնէ.

« Ո՞վ են աս մարդիկը » : —

Պատասխանի ետ պանդոկապետն պարզելով ձկտաւին.

« Ձեմ ճանչնար » : —

« Ի՞նչպէս, և ո՛չ մէկը » : —

Պատասխանի ետ՝ ձգտելով երկաքուսիք ձեռօք ղծածկոցն.

« Աղէկ գիտես որ մեր պաշտօնին առջի կանոնն է՝ ուրիշի բանին հետաքրքրութիւն չընել. անանկ որ մեր կնկաւքն ալ չեն ըներ. բաներ-նես դէշ կըլլար, թէ որ ասանկ չընէինք : Հոս այնչափ մարդ կուգայ կերթայ, նաւահանգիստ մըն է, այսինքն տարին բաւական յաշող որ ըլլայ : Հոգ չէ, կը դառնան նորէն աղէկ տարիներըը, մեզի հերիք է որ եկողներըը աղէկ մարդիկ ըլլան. ո՛վ ըլլալնին՝ ո՛վ չըլլալնին չենք նայիր : Հիմայ ձեղի մանրած մնով կերակուր մը բերեմ, որ կեանքերնուդ մէջը կերած չէք » : —

« Ինչպէս կրնաս խմանալ սըտոյց ո՛վ ըլլալը » : —

Իսկ պանդոկապետն, քանզի վուԹայր 'ի խոհանոց, ոչ կայ Էառ. և 'ի պատրաստել անդ կերակուրն 'ի պնակի, մատեաւ առ նա այրն՝ որոյ պնեալ էր յոտից ցգլուխ զՌէնցոյ, և հարցանէր դաշն ձայնիւ.

« Ո՞վ են աս մարդիկը » : —

Պատասխանի ետ խոհակերն, դնելով զկերակուրն 'ի պնակն : —

« Շատ աղէկ մարդիկ, աս գէղէն » : —

Նա վերստին եհարց անշնորհ լսին եղանակաւ.

« Աղէկ, աղէկ. բայց անուններն ինչ է » : —

Պատասխանի ետ պանդոկապետն մեղմով.

« Մէկուն անունն է Ռէնցոյ. չատ լաւ ուԹխելացի կարիճ մըն է, մեծաքանդործ, իր աբուէտոր աղէկ գիտէ : Մէկալը գեղացի մըն է, անունը Թոնի. աղէկ ընկերութիւն ընող ուբան զուարԹ. ախմոր որ հարուստ չէ. ատակ որ ունենար, բոլորն ալ հոս կը Թափէր : Իսկ երրորդը միամիտ մարդ մըն է, բայց ուտելը կախորժի երբոր տուող ըլլայ. բայց ԹողուԹիւն կընես »...

Ասաց, և էլ ձեռամբ ածել կերակուր 'ի սեղան : Ի դառնալ նորա եհարց անդրէն Ռէնցոյ :

« Ի՞նչպէս կրնաս գիտնալ աղէկ մարդիկ ըլլալնին, երբոր չերեսնէ չես ճանչնար » : —

« Գործքերէն, սիրելի. մարդ իր գործքովը կը ճանչցուի. անունը որ գինին կը խմեն առանց վար զարնելու, հաչիւը կը վճարեն. առանց

կարելու, չէն վիճեր ուրիշ եկաւորներու հետ, մեկը զարնելու միտք ալ որ ունենան՝ դուրսը կը սպասեն պանդոկին հեռու, որ պանդոկապետին ինծա մը չըլլայ, յայտնի է որ աղեկ մարդիկ են: Իսկ թէ որ աղեկ մարդը առաջուց կարենանք ճանչնալ, ինչպէս մենք իրար կը ճանչնանք, աւելի աղեկ է: Բայց ուսկից եկաւ քեզի աս հետաքրքրութիւնը. փեսայ պիտոր ըլլաս, ան չես մոածեր, ուրիշ բաներ կուզես գիտնալ. դիմացդ ալ աս կերակուրը, որ մեռելը կը յարուցանէ »:

Եւ զայս ասացեալ, դարձաւ ՚ի խոհանոց անդր:

Աստանօր պատմիչն յաղագս այլ եւ այլ ազգ պատասխանելոյ պանդոկապետին առ հարցուածս հիւրոցն՝ յաւելու, զի այսպիսի էր այրն, յամենայն խօսս իւր ցուցանէր զանձն բարեկամ լաւ որերոյ. այլ գործով յոյժ առաւել հաձեր զհամբաւեալսն ՚ի չարիս, քան զորս այնպիսիս ՚ի գիմացն էր գուշակել: Որպիսի՛ բնաւորութիւն նորանշան:

Զեղեն ընթրիքն ղուարթ. երիտքին կոչնականք ցանկային վայելել պարապով ՚ի նոյն, այլ կոչնատէրն մոայլ ՚ի խորհուրդ, որ ծանօթ են ընթերցողին, և նեղեալ ստգնապեալ ՚ի գժկերպ գնացից անծանօթիցն, փութայր եւ լանել ՚ի բաց. հարկ էր խօսել անձայն վտան նոցա, կիսահագագ և ակամայ:

Յայնժամ յանկարծ բացագանչեաց ձէ՛ բուազ.

« Ի՞նչ աղեկ բան՝ որ Ռէնցոն կարգուելու կուզէ ու աս պէտքն ալ ունենայաւ »:

Խոժոռ հայեցաւ ՚ի նա Ռէնցոյ. և Թոնի խըթեալ զնա ասմկաւ, ասէ.

« Լռէ, անխելք »:

Խօսակցութիւն նոցա էր ցուրտ մինչև ՚ի վախճան ընթրեացն. Ռէնցոյ ՚ի չափու կալեալ զանձն յուտել և յըմպել, զդուշանայր ևս վըկայիցն. այնչափ աւելի հրաւիրէր զնոսա ՚ի դիւ՛ ներբուս, զի առցեն խրախոյս առանց գինեհարելոյ: Յարուցեալ ապա ՚ի սեղանոյ, հատոյց պանդոկապետին զհաշիւն, այն որ նուազ քան զայլս էր ձաշակեալ. և հարկ եղև նոցա անցանել վերնոյն զառաջեաւ խոժոռագիմացն, որք ակնկառոյց կային ՚ի Ռէնցոյ՝ որպէս ՚ի մոանեղն: Բայց ինչ առեալ նորա արտաքոյ պանդոկին, հայեցաւ չետս և եռես, զի երկոքեան նոքա՝ որք կային բազմեալ ՚ի խոհանոցի՝ գային զհետ իւր, և զկայ էառ ընկերօքն, ասելով. Տեսանե՞ք ինչ ի՛ուղեն սըտո՞ք ինձ: Այլ նոքա իբրև գիտացին՝ զի չայտնի եղև հետևել իւրեանց, զկայ առին և ինքեանք, և խօսելով ինչ ընդ միմեանս ՚ի մրմունջ՝ դարձան չետս: Եթէ Ռէնցոյի մօտագոյն լեալ էր նոցա և լուեալ զխօսս նոցա, զարմանայր յոյժ. զի ասէր մին ՚ի նոցանէ. « Աղէտ պատիւ մը կը վաստըկինք, (բարի ձեռքը ինքիրեն կիմացուի), թէ որ պատառը գարձած առեննիս կարենայինք պատմել՝ սըտոր ոսկորները չախչախելնիս կրիզային գալէն առաջ »: —

Պատասխանի եւս միւսն. « Ու գլխաւոր բանը աւրելնիս. նայէ, կէս մը լմացաւ, ու կայնեցաւ. ո՞ւր էր որ քիչ մը աւելի ուշ ըլլար առե-

նը: Եւ դառնանք, ամեն դիէն մարդ կուգայ. Թողունք որ ամենքը իրենց հատնոցը քաշուին »:

Եւ արդարև լսելի լինէր չշնչունն այն և խըզըրտիւն, որ ընդ երեխա լսելի լինի 'ի չէնս, և վայրիկ մի յետոյ տեղն ասյ խաղաղութեան լուռ գիշերոյ: Կանանքն դառնայր 'ի գաշտէ՝ զլարանոցաւ բարձեալ բերելով ղողայս, և զմանկունս կալեալ ձեռանէ, տալով նոցա զերեկորին աղօթս ընդ իւրեանս կատարել. գային և արք՝ կրելով 'ի յուս զբահ և զբրիչ: Ի բանալ դրանց՝ երեքը աստ անդ հնոր վառեալ 'ի պատրաստութիւն աղքատին ընթրեաց, և զձանապարհային ողջունեալ նոցա զմիմեանս, խօսէին զնուազութենէ բերոց և զդժբաղդութենէ տարբոյն: Առաւել քան զնոսա լսելի լինէր հընչիւն զանգակի Թուխ և ուժգնին, որ ազդ առնէր զմուտս արեւու: Եւ իբրև եռաս Ոխնոյ՝ զի գարձան յետս ապառուսքն երկոքին, յառաջ նաղաց նսեմաբ, յիշեցուցանելով էր զի Թոռնեայ և էր զի եղբօր նորա, մերթ զայս ինչ և մերթ զայն, մինչև հասին 'ի տուն օրիորդին:

Ընդ խորհուրդ և ընդ ձեռնարկ երկիւղալի գործոյ, որպէս ոմն 'ի բարբարոսաց՝ ոչ առանց հանձարոյ՝ ասաց, երազ լինի է միջոցն լի ցնորբիւք և արհաւրջք: Լուչիա 'ի ժամուց հետէ կայր 'ի տագնապալի հանգոյն իրիք երազոյ. և Ագնէս իսկ խորհրդատուն կայր մտայոյզ, և գժուարաւ գտանէր բանս առ 'ի խրախոյս գառեբն: Այլ 'ի պահու անդ սթափելոյ յերազոյն, իմա ձեռնարկելոյ 'ի գործ, յեղաշրջին միաք. երկիւղն և արհուեստն՝ ընդ միմեանս

մարտուցելոց՝ յաջորդէ այլ նոյն երկիւղ խառն. ընդ խրախոյս. յանդիման լինի մտաց գործն այլակերպեալ. որ յառաջն Թուէր ահաւորագոյն, է ղի Թուի յանկարծ դիւրին, և է ղի ընդ առաջ ելանէ խոչ մեծ անակնկալ. երեւակայութիւն զարհուրեալ յետս ընկրկի, մասունք մարմնոյ Թուին անասատել, և սիրտ վերջանայ 'ի խոսանանել՝ զոր համարձակն խոսացնայր:

Ի բաղնել Ոխնոյի զդուռն մեղմիւ դողուն կալաւ ղԼուչիա. և առ ահին էդ 'ի մոմ՝ տանել ամենայն վշտաց, և զղրկուն նոյն իսկ 'ի պատանէդն յանձն առնուլ, քան զնորհուրդն զայն կատարել: Այլ յորժամ եմուտ պատանին և ասաց, Հոս եմ, երբանիս. և ամենեքեան ասացին, Պարբասա նիս, երբանիս. չէղև պարտ օրիորդին, և ոչ զօրութիւն հրաժարելոյ և բանս ընդդէմ դնելոյ. այլ որպէս 'ի քարշ ածեալ՝ կալաւ առջոյն զբազկէ մօրն, և ահեկաւ զբազկէ խօսեցելոյն, և գնայր ընդ բախտախնդիր օրերոյն:

Լուռ անմուռունչ գիշերապահնոցք եղեն 'ի տանէ, և կալան ուղղ արտաքոյ ջնոյն: Կարճոյ ձանապարհ՝ որ ածէր ուղղ 'ի տուն Ժողովրդապետին, էր ընդ չինամէջն. այլ նոքա ընտրեցին զայն ուղղ՝ առ 'ի գնալ անտեսաբար: Ընդ նեղ և անձուկ ճանապարհս, ընդ պարտէզս և ընդ դաշտս, հասին մերձ 'ի տուն անգր, և մեկնեցան 'ի միմեանց. Հարան և վեցապ ծածկեցան յանկեան միոյ մեծ տանն, և Ագնէս ընդ նոսա՝ տուղ ինչ յառաջ անցեալ, առ 'ի գտանել զաղախինն, և չինքն

յանկուցանել վնա։ Թոնի ընդ ձէրուաղէայ խօթամուն, որ ապիկարն էր իւրովի, այլ ա-ռանց նորա ոչ յաջողէին իրքն, հասին կայնն առ դրան և բաղխէին։

« Ո՞վ է աս առեն ». ձայնէաց ոմն 'ի պա-տուհանէն՝ որ բացաւ, և էր ձայն աղախնոյն. « Հիւանդ չկայ դէղին մէջ գիւցածս. ուրիշ ի՞նչ կրնայ ըլլալ. դժբաղդութիւն մը պատա-հեցաւ »։ —

Պատասխանի եռ Թոնի. « Ես եմ, եղբօրս հետ. ժողովրդապետին հարկաւոր խօսք մը ու-նինք ընելու »։ —

Ասէ աղախինն դժկամակութեամբ. « Ա՛ս ա-տեն խո՛ւք է ուրիշը անհանգիստ ընել, վաղը եկէք »։ —

« Մ՛ոխկ ըսէ, վաղը հա՛մ կը դառնամ, հա՛մ չեմ դառնար. ստակ բերած եմ, վճարելու ան պարտքն որ գիտես, քանըհինգ փայլուն դրամ։ Թէ որ հիմայ չըլլար, համբերութիւն. գիտեմ դրամներըը որո՛ւն տալս. երթոր նորէն կարե-նամ մեկդի դնել, ան ատենը կը դառնամ »։ —

« Կեցիր, կեցիր. հիմայ կերթամ շուտ մը կը խօսիմ ժողովրդապետին հետ. բայց ինչո՛ւ ատանկ ուշ ատեն եկար »։ —

« Ես ալ ո՛ւշ կրցայ առնել, ասկէց քիչ մը ա-ռաջ. մոռցեցի որ գինիերը քովս պահելու որ ըլլամ, վաղը առտու ո՛վ գիտէ ինչ մտքով կար-թընամ։ Բայց թէ որ ատենը ուշ է, չեմ գի-տեր ինչ ըսեմ. իմ կռմնանէս պատրաստ եմ հիմայ. թէ որ չես ուզեր, կերթամ »։ —

« Զէ, չէ, կեցիր քիչ մը. հիմայ կը դառնամ, պատասխանը կը բերեմ »։ —

Ձայս ասացեալ՝ փակեաց ղպատուհանն. յայնժամ և Ադնէս թողեալ ղդուստրն և ղպա-տանին՝ ասէրով. « Սիրտ ըրէ, Լո՛ւիա, վայր-կեան մըն է, ակռայ հանել տալու պէս է »։ մնուեաւ առ էղբարն էրկոսին, և սկսաւ խօ-սակցել ընդ Թոնեայ, որպէս զի 'ի դառնալ ա-ղախնոյն՝ կարծեսցէ ըստ դիպուածոյ հասեալ գնա անդր, և Թոնեայ կալեալ գնա վայրկի մի 'ի խօսս։

ԳԼՈՒԽ Ը.

Տէր Աստուածոյ բազմեալ՝ ի Թիկնաթոռ խըր, մատեան՝ ի ձեռին, խորհէր յանձին. « Կաբ-նէագէս՝ ոմ է սա կարնէագէսը »: Եմուտ ա-ղախինն խօսել ընդ նմա, և նա տակաւին խոր-հէր զկարնէագէսայ. « Ա՛ս անուշը անճանօթ չէ ինձի, կարգացեր կամ լսեր եմ, կարգացող մարդ մը պիտի ըլլայ, հին առենի մեծ կարգա-ցողներէն. անոնցմէ մէկն է, բայց ինսո՛ր մարդ էր »: Ա՛յսքան հեռի էր՝ ի մտաց նորա մըրիկն, որ Թղթայորդ՝ ի վերայ նորա պատրաստեր:

Գիտելի է՝ զի տէր Աստուածոյ զբօանոյսը յընթեռնուլ հանապազօր վայրիկ մի, և ժողովըր-դապետ ոմն մերձաւոր նմին, որոյ էր մատե-նադարան, տայր նմա՝ ի փոխ մի ըստ միջէ՝ ի գրեանց իւրոց՝ որ ինչ դիպէր առ ձեռին: Մա-տեանն՝ զոր յայնժամ ընթեռնոյր տէր Աստո-

ախոյ, այն ինչ վերծեալ 'ի աենդէ արհաւ-
բացն, և առողջ քան զոր կամէրն յայտ առ-
նել, էր ներբող 'ի սուրբն Կարոլոս, բաղում
Ճոռոմութեամբ արտասանեալ 'ի Կաթողիկէն
Միլանու, և կարի զարմացմամբ լսելի լեալ
զերկեամ մի յառաջ: Համեմատէր 'ի նմա ներ-
բողաբանն զսուրբն ընդ Աբբահեգեայ, և մինչև
ցայսմայր չգտանէր ինչ աեր Ապոնտիոյ դժուա-
րութիւն ինչ. եթէ զի Աբբահեգէս այնպիսի նո-
րանշանս արար, և այնչափ եա խօսել զինքինէ,
զի առ 'ի գիտել ինչ ընտանէ՝ չէին պէտք բա-
զում հմտութեան: Բայց գովասանն յետ Աբ-
բահեգեայ 'ի համեմատութիւն ածէր ընդ սըր-
բոյն և զԿարնեգադէս, յոր խրեալ կայր աեր
Ապոնտիոս. և յայնմ պահու մնեալ էր աղա-
խինն զեհուցանել նմա զգալուստ Թոնեայ:

Ջնոյն և ինքն աեր Ապոնտիոս, որպէս և բնա-
կանն էր, ասէ. « Ասանկ ո՞չ առեն. ինչ կու-
գէ »: —

« Ի՞նչ պիտոր ընես, խոհեմութիւն չու-
նին. բայց թէ որ թռչելու առենին չի բըռ-
նես »... —

« Աղէկ կըսես, թէ որ հիմայ չի բռնեմ զին-
քը, ո՞վ գիտե երբ կրնամ. ներս բեր. է, է.
բայց ապահո՞վ ես որ ինքն է »... —

« Աւշափ ապո՞ւշ եմ», ասէ աղախինն, և
բացեալ զդուռն ձայնէ.

« Ո՞ր ես Թոնի »: —

Յառաջ մատչի Թոնի, ընդ նմին և Աչնէս,
ողջունելով զաղախինն յանուանէ.

« Բարի լրիկուն, Փերփէթուա »: —

« Գիշեր բարի, Աչնէս. ուսկից կուգաս աս
առեն »: —

« Մօտիկ գեղէ մը կուգամ. թէ որ գիտնա-
լիր, քեզի համար ուշացայ »: —

« Խե՛ղճ Աչնէս, ինչքա՜ », ասէ Փերփէթուա,
և դարձեալ առ երկոսին եղբարս՝ 'ի ներքս
առնու զնոսա, ասելով. « Մտէք, հիմայ ես ալ
կուգամ»:

Պատասխանի եա Աչնէս. « Ինչու որ՝ կնկատց
մեկը, որ բան չիհասկընար ու խօսիլ կուզէ,
կը հաւատա՞ս, կը սիդէր որ դուն Սոլավէքեա
Պերէէն ու Լունկինեա Անսելմեին հետ չես
կարգաւէր՝ անոնց գլեզ չուզելուն համար. ես
կը սիդէի՝ որ դուն զանոնք չուզեցիր, ոչ մեկը
և ոչ մեկալը »: —

« Հապա՛, նայէ սա սուտղրուցին, սատիս-
սին սատիսօր. ո՞վ է սա չըլլալու կինկը »: —

« Հոգիդ սիրես, մի հարցըներ, չեմ ուզեր
բամբասանք ընել»: —

« Կըսես դուն, կըսես. ըսես պիտոր, սա
սուտղրուցը նայէ »:

« Չերթիք է, չես կրնար երևակայել ինչպէս
գժարս եկաւ որ բոլոր պատմութիւնը չէի պի-
տեր, զինքը խաղք խայտառակ կընէի »: —

« Տես որ ասանկ չընծու բան կրնայ ըլլալ»,
գոչեաց Փերփէթուա, և յաւել. « Պերէն ա-
մենքը գիտեն ու տեսան որ... Թոնի, վեր ե-
լիր, ես ալ հիմայ կուգամ»: —

Պատասխանեաց Թոնի 'ի ներքուստ. « Կել-
լեմ». և ինքն յառաջ ածէր զպատմութիւնն
սրտառուչ:

Հանդէպ դրան ժողովրդապետին ընդ մէջ երկուց անակաց գոյր ուղի անձուկ, որ ածէր ի գաշտ յեսկոյս անակացն. անդր ուղղէր Ատ-նէս զքնացս, որպէս թէ առ. ի կալ մեհեանի, և խօսել համարձակ: Եւ երբև խոտորեցան, և ոչ ևս կարէին տեսանել որ ինչ անկք առաջի տան ժողովրդապետին անցանէին, հազոց Ատ-նէս ուժգին, որպէս առաւել էր նշան: Լուաւ զայն Ռէնցոյ, քաջալերեաց զԼուչիա՝ ալենդ ունելով զթաղիէ նորա. և երկաքանչիւր մատեան յառաջ յոտն ի մեան լռիկ ինչիկ քե-րեալ առ որմով. հասին ի դուռն, հրեցին զայն մեզմով, և յուշիկ և զուսպ մտին յանցս՝ ուր կային ինային նոցա եղբարք երկոքին: Ռէնցոյ շրջեաց մեզմով զդուռն, թողեալ որպէս յա-ռաջն կիսաբաց, և չորեքեան ի միասին անձայն անմռունչ ելանէին ի վեր: Հասեալ ի հան-գիստ սանդղոցն, եղբարք երկոքին մատեան ի դուռն սենեկին՝ որ կայր ի կողմանէ, և խօսե-ցեալքն ամփոփեցան առ որմով: Զայնեաց Թո-նի յոտակաձայն.

« Տէր Հայր, հրամանդ կուտամ մտնալու: — Եկն բարբառ ի ներքուստ. « Հա՛, Թոնի, մտիր »: —

Եւ յայ Թոնի զդուռնն, որչափ բաւէր ի մուտս իւր և եղբօրն կենաց. և շող ճրագին՝ որ յանկարծ եղ ընդ բացուածն ի հանդիստ անդր սանդղոցն, սարսեցոյց զԼուչիա՝ որպէս թէ մտան լեալ ինքեանց: Իբրև մտին եղբարքն եր-կոքին, եկաց Թոնի յեսկոյս դրանն, և արտա-քոյ կային ինային խօսեցեալքն անշարժ ի մեանե

յակճիռս ի լուր, կալեալ և զլունչ. որպէս զի հղօրագոյն անդ հնչիւն էր բաղխելոյ սրտին Լուչիայի:

Ժողովրդապետն բազմեալ կայր, որպէս ա-սացաք, ի հնոտի թիկնաթոռ իւր, զգեցեալ սպիտնաւոր կարիատուն, գոտի ի գլուխ ա-կանջաւոր՝ որ Թուէր շրջանակ զերեսոքն յա-ղօտ լոյս կանթեղին, կծիկք հերոյ Թաւք և-րեալք երկուստեք գոտիին, յոնք երկու Թա-ւահերք, սերունչք Թաւք զընդովք, և փունջ մերուաց ի ծնօտին, ալեւորեալք առհասարակ, Թուէին սիզակոյտք՝ ձեամբ ծածկեալք ի Թուխ և ի խորշոմեալ դէմս նորա, որպէս ի ժայռի ընդ լուանահաւս: Փոխանակ ողջունի ձայնեաց ա՜, ա՜, և բարձեալ զակնոցն յաչոց, եդ ի մատենին: Խոնարհեցաւ Թոնի ի մեծա-բանս ժողովրդապետին, ընդ նմա և ձերբուազ, այլ անբարեձև. ասէ Թոնի.

« Հնազանդ, տէր Հայր, ըսես սիտի որ ուշ է-կայ »: —

« Անոր տարակոյս չկայ, ամեն կերպով ուշ. գիտես որ դեռ բոլորովին չեմ առողջացեր »: —

« Աֆսոս, տասը կը ցաւիմ »: —

« Հարկաւ լսած ես որ հիւանդ էի. չեմ գի-տեր որ ևրը սիտոր կարենամ դուրս ելլել... Բայց ինչո՞ւ գրանն եաւը կեցեր ես, տա քո-վինդ ոմն է »: —

« Ընկերութեան համար հետս եկաւ »: —

« Հերիք է. հաշտնես տեսանք »: —

« Գնանըհինդ սերընկէ բերեր եմ նոր, փայ-լուն, վրան սուրբ Աթթոսիոսը ձիաւոր տեսա-

կէն »։ Զայս ասացեալ, եհան ծրար մի 'ի քսակէն։

« Տեսանեք », ասէ տէր Աստուածոյ, և եդեալ զկնոց յաչս, առնու բանայ զծրարն, հանէ զպէսպիսինկս, հաշուէ, ընկէ, չորիցըն և գտանէ անթերի։ —

« Հիմայ, տէր Հայր, Թեկղի կնոջս մահեակը տայիր »։ —

« Իրաւունք ունիս », ասէ Ժողովրդապետն, և մատչի 'ի դարան, հանէ զբանալի 'ի քսակէն, և շուրջ հայելով որպէս թէ առ 'ի ծածկել յաչաց որ ինչ 'ի նմա կային, բանայ զսյն կիսովին, և կայ առաջի բացուածոյն, կարկառեալ 'ի ներքս անդր զդլուխն՝ առ 'ի տեսանել և առնուլ զմահեակն. վակէ ապա զդարանն, և տուեալ Թոնեայ զմահեակն, ասէ.

« Աղէկ է, ուրա՞ծդ է »։

Թոնի ասէ. « Այո, բայց հիմայ կը մնայ որ երկու տող դնես Թեղեի մը վրայ »։ —

Տէր Աստուածոյ ասէ. « Ա՞ն ալ պէտք է. ո՛հ, ինչպէս կասկածաւոր եղեր է աչխարքս. չէս վստահիր վրաս »։ —

« Ի՞նչ կըսես, տէր Հայր, ինչքա՛ն ալ ստոր չվստահիմ. ինծի նախատինք է առ խօսքը։ Բայց որովհետև տեսարակիդ ապխուս կողմը գրուած է անունս՝ պարտքկանները հետ, ու աչխատէր գրեր ես միանգամ անուշս, ասանկ ալ... վատն զի մահկանացու ենք »։ —

« Աղէկ, աղէկ », ասէ Ժողովրդապետն քըրթմընջելով, և ձգեալ զարկղիկ գրասեղանին՝ հանէ Թուղթ գրիչ և կաղամար, և գրէր երկրորդելով 'ի ձայն ղբառս հետզհետէ 'ի գրչէն։ Յայնմ վայրի Թոնի, և յանկարծակի նորա ձերբուաղ, կացին առաջի գրասեղանոյն, առ 'ի խափանել յաչաց Ժողովրդապետին ըզգուշութիւն. և որպէս թէ առ պարապոյ՝ գովչէին ղոտս ընդ գետին. այլ էր այն 'ի նշանակ կացեղոյն արտաքոյ 'ի մուտս. միանգամայն և ղոտնաձայն մոլոց նոցա խափանչէին այնուհետև։ Տէր Աստուածոյս ղբաղեալ 'ի գրչէ, ոչ այլ խիք ուշ ունէր. յայնժամ Ռինոցոյն առեալ ղբաղկէ խօսեցեալոյն ձգեաց զինա զչհետ իւր 'ի ներքս, պնդեալով ղբաղուկ նորա առ 'ի քաջալերել զնա դոզայր նա և ոչ կարէր գալ 'ի ներքս։ Մտին 'ի ծայրս ոտից քայլելով, անշուշչ անշուշչ, և ծածկեցան յետկոյս երկոցուն եղբարց։ Կատարեալ Ժողովրդապետին զգլուխն, ընթերցաւ զայն ուշն ուշով 'ի Թուղթն յառեալ, և ծալէր զայն ասելով.

« Ա՛լ հիմայ դո՞հ ես ». և բարձեալ միով ձեռամբ զակնոցն յաչաց, մատուցանէր միւսով զմուրհակն, 'ի վեր զդէմն առեալ։ Զգեաց Թոնի զալ իւր՝ ընդունել զայն, կալով մեկուսի, և ակնարկեաց եղբօր իւրում կալ 'ի միւս կողմն, և մնային 'ի միջի խօսեցեալքն երիցքն որպէս 'ի Թատեր։ Տէր Աստուածոյս 'ի սկզբան անդ նշմարեալ ինչ ընդ աղօտ, ապա ետրև և տես զնոսա ակն յայտնի, պակուցեալ, ապշեալ, յաստուցեալ, մինչդեռ խորհէր ինչ առնել 'ի վերայ հասն Ռինոցոյ. « Տէր Հայր, աս երկու վերկայից առջին՝ Լուչիան իմ կինս է »։ Եւ մինչդեռ բանքն 'ի բերանի նորա կային, տէր Աստուածոյս

պոնտիոս Եվթող զմուրհակին անկանել յերկիր, բուռն եհար ահեկաւն եւարձ զկանթեղն, և աջով զդուրգ դրաստղանդն յինքն ձգեալ, կոր ծանեալ յերկիր զմատեան զթուղթ զկազամար զաւազամանն, և ոստուցեալ ընդ աթոռն և ընդ դրաստղան, մատեաւ առ Լուչիա: Հէք օրիորդն, նուաղ և քաղցր ձայնիւն, զդոլանի հարեալ, հաղիւ սկսեալ էր արտաբերել. « Ռէնցոն ալ եմ»... և ահա առէր Պոնտիոս զարկ զնովաւ ամարդօրէն զդուրգն, ծածկեաց զդէմն նորա գլխովին, առ՝ի խափանել զձէն պատկին: Եւ Թողեալ անդէն զկանթեղն՝ զոր՝ի միւսում ձեռին ուներ՝ անկանել՝ի գետին, երկոքումբք ձեռամբ գուն գործեր ածել զգլխով նորա զդուրգն, հեղձամղձուկ առնել զբարբառ նորա. և գոչէր բերանալիր. « Փերփէթուա, փերփէթուա, հասիր, նենդուվթիւն կայ »: Պատրուդ կանթեղն առկայծեալ՝ի գետին, ցայտէր աղօտալոյս զօրիորդատն, որ չուարեալ՝ փորձել իսկ ոչ կարէր արկանել զդուրգն՝ի բաց, երևեալ որպէս արուճանակ անդրնդոյ կատեղին, անդրնդագործն արկեալ զնովաւ կատաղ խռնատուտ: Եւ՝ի շինանել լուսոյ բոլորովին՝ եհոդ առ Պոնտիոս զեզկեզին, և դընայր՝ խնդրելով առ խարխափ զդուռնն՝ որ ածէր՝ի սենեակ ներքին. եդիտ զայն, և եմուտ անդր՝ գոչելով անգադար. « Փերփէթուա, հասիր, նենդուվթիւն կայ. ելլենք աս անէն, դուրս ելլենք »:

Ի միւսումն սենեկի Ռէնցոյ խնդրելով ուներ զժողովրդապետն, և որպէս Թէ ընդ օդս ածէ-

լով Թևովք, հասեալ՝ի գուռն անդր, բաղխէր ձայնելով. « Բաց, բաց, մի պոռար »: Իսկ Լուչիա կոչէր նուաղ ձայնիւ զՌէնցոյ, և աղաչէր. « Հոգիդ սիրես, Ռէնցոյ, երթանք »: Թոռն դնչոյր յափսնթերս, աւել ընդ երկիր ածելով ձեւօք, գոանել զմուրհակն. իսկ ձերբուաղ աղաղակէր որպէս այսակիր, վազվազէր խըն դիր զդուռն սանդղոյն, էլանել՝ի բաց:

Զայսու ալիկաւ չկարեմ զանց առնել, առանց յուշ առնելոյ, զի Ռէնցոյ՝ որ այնչափ ւղմուկ՝ի տան պղոյ գիշերային յարուցանէր, որ յարամբն՝ի ներքս էր մնեալ, և զտանուտէրն ինքնին պաշարեալ՝ի սենեկի, երևէր հարատահարող, սակայն ինքն էր հարատահարեալ: Իսկ տէր Պոնտիոս գաւեալ հալածեալ և ահաբեկեալ՝ մինչգեռ պարապէրն խաղաղեցեալ՝ի գործ լուր, Թուի կրել անխրատուվթիւն, այլ իսկապէս ինքն էր որ անիրաւէր: Այսպէս յաճախ պատահէ յաշխարհի, այսպիսիք ասեմ յեօթնհատանեքորդումն գալոյ անցանելին պատահարք:

Պաշարեալն՝ի տէսանել զի ոչ գնայր ոտիւն՝ի բաց, երաց զպատուհան սենեկին՝ որ հայեր՝ի հրապարակ եկեղեցւոյն, սկսաւ կարդալ աղաչական օգնութիւն: Էր գիշեր լիալուսին, պատեր եկեղեցւոյն, և մանաւանդ զանգակատանն երկայնաձիգ՝ի չէշտ անկեալ, երևէր գոյն՝ի լուսափայլ կանաչագեղ գալարուոջ, և ամենայն ինչ յստակ լոյր՝ի տունջեան երևէր: Այլ ցորվայր կշռական հասանէր, չէրևէր ոք. բայց միայն առ որմով եկեղեցւոյն, որ հայեր

'ի տուն Ժողովրդապետին, էր անակ միանձուկ՝ ուր եկեղեցպանն բնակէր: Սա զարթուցեալ յայլանդակ աղաղակէն, էջ ընդոստ յանկողնոյ, եբաց զթաղթապատն պատուհան, և կարկառեալ արտաքս զդլուխ իւր ծանրարթուն աչօք, գոչեաց. « Ի՞նչ կայ »: Եւ Ժողովրդապետն աղաղակեաց.

« Հասիր, Աբբոս, օգնէ, տունս կոխեցին »: —

« Կոտգամ, հիմայ ». Եւ պատասխանի եկեղեցպանն, և առեալ 'ի ներքս զդլուխն, փակեաց զպատուհանն. և թէպէտ կիսարթուն և բոլորովին սարսափեալ, եգիտ ափ յափոյ հնարս առաւել քան զինդրեալն օգնականութիւն՝ առանց արկանելոյ զանձն 'ի վտանգ աղմկին: Յաճախակեաց զտափսան՝ որ կայր 'ի վերայ անկողնոյն, եհար ընդ անթով որպէս խոյր մի ոճոական, ոսոեաւ ընդ սանդուղն փայտեայ, բուռն եհար զսուսարագոյն տուանէ երկոցունց զանգակաց, և հարկանէր ուռնաձև ծնկ ծնկ ծնկ: Յաւնեին չինականք, կան 'ի նկատ յանկողնի. մանկտին ընկողմանեալ 'ի մարագի, կանգնի, չականջէ, հարցանէ. « Ի՞նչ կայ, ինչ կայ. ինչ կը նշանակէ սա կերպ զանգակի զարնուածքը. կրա՞կ կայ, գողե՞ր եկեր են, աւազակնե՞ր կոխեր են »: Կանանն ալաչէր զարս մի էլանել, այլ թաղուցայցոց գիմել արտաքս, կէաք յառնեն 'ի պատուհանս. հեղգագոյնք երբ համոզեալ յաղաչանաց՝ գառնան 'ի վայր. հետաքրքիրք և սրբասեայք էլանեն բուռն հարկանել յերկիժանիս և 'ի հրացանս, հասանել յալմուկ անդր. այլք 'ի չինն կան:

Այլ էև սոցա զդեցեալ և պատրաստեալ, թէ արդեօք և բոլորովին զարթուցեալ, հասեալ էր շուինդն յուսին պահանորդաց՝ որ կալմ և զդեցեալ հսկելին՝ ոչ ինչ անտի 'ի բացեայ. Քաջք 'ի մի կողմն, և Ագնէս ընդ աղախնոյն 'ի միւս կողմն կայեն: Սուղ ինչ նախ զԲաջայն ասացուք, զորս Թողաք 'ի անակի անդ և 'ի պանդոկի: Որք 'ի պանդոկի կայեն երեքքեան, 'ի սեսանելն զդրունս փակեալ և զփողոցս անմարդի, ելին ձնտով որպէս թէ յամեալ, փութալ կէզծելով 'ի տուն խաբեանց, շուրջ եկին ընդ շէնն՝ սեսանել թէ ևցէ՞ն ամենեքեան մեկնեալ 'ի բնակութիւնս խաբեանց, և արդարև ոչ գտին զոք արտաքոյ, և ոչ ձայնք թեթև լսելի լինէր 'ի շինին: Այցին լուսելայն և զառաջեաւ աղքատ անակին՝ խաղաղագունեալ քան զայլս առհասարակ, զի էէր անդ ոչ Ագնէս, ոչ Լուչիա, և ոչ այլ ոք: Զոգան ասա 'ի տուն անդր, ուր գտան նասէր, և պատմեցին Կրիզոյի զամենայն: Նա փութացաւ եդ 'ի գլուխ զնոցն անհետեւել, և արկեալ զնուրեաւ զջապկին մտմտեալ՝ կոքղնք 'ի կախ զնուաւ, և ցուպ ուխտաւորի 'ի ձեռին, ասէ ցնուրան.

« Երթանք, Քաջեր, առանց ձայն հանելոյ, խօսքին միայն ուշ դրէք »:

Եւ գնայր ինքն առաջի, այլք զհետ նորա. հասին խոչոյն 'ի տուն անդր ընդ այլ ճանապարհ հակառակ այնմ՝ ընդ որ մերս երթեալ էր կարաւան: Կրիզոյ կացոյց զգունդ իւր փողոց ինչ 'ի բացեայ, և ընթացաւ յառաջագոյն միայնակ առ 'ի լրտեսել: Եւ գտեալ խա-

ղաղ և անմարդի արտաքոյ, կոչեաց երկուս ո-
մանս 'ի սրբիկայից անտի, և պատուէր նա վեր-
ելակել սանդղովք անձայն ընդ որմ գաւթին,
ինչանել 'ի ներքս, դարանել յանկեան յեակոյս
Թաւ Թղենւոյն՝ զոր դիտեալ էր յառաւօտուն:
Եւ ասպա բազմեաց մեղմով զդուռնն, 'ի մոլ
եդեալ՝ ինդրել որպէս պանդուխտ մուրբեալ,
պատսպարել անդ մինչև ցայգ: Ոչ ոք 'ի ներ-
քուստ էր պատասխանի. բազմեաց միւսան-
գամ ուժգնագոյն, և ոչ ոք ձայն տայր: Յայն-
ժամ կոչեաց միւս ևս 'ի սրբիկայից, և էր նմա
ինչանել 'ի գաւթի անգը որպէս զայլն երկուս,
պատուէր տուեալ քահել անձայն զնիզ գրանն,
առ անհապան ունելոյ զել և զմուտ: Կատա-
րեցաւ ամենայն զգուշութեամբ և յաջողու-
թեամբ հրամանին: Յայնժամ կոչեցեալ և
զայլն, եմոյծ ընդ իւր 'ի ներքս, ծածկել ընդ
գաւթանամուտս. և փակեալ մեղմով զդուռն
փողոցին, կացոյց անդ երկուս ոմանս 'ի պահ,
և ինքն չոգաւ դէպ ուղիղ 'ի դուռն վայրա-
յարկին. բազմեաց և անդ, և սպասէր. և կա-
րէր խոկ մինչև 'ի սպառ սպասել: Փակեաց և
զդրանն այնօրիկ անչշուկ ամենևին զիսկանս,
և ոչ ոք ձայն տայր 'ի ներքուստ, ոչ ոք ասէր
«Ո՞վ է»: Էէր մարթ առաւելագոյն ունել յաջո-
ղութիւն: Հապա ձայնէ զծածկեալն առ Թը-
ղենեաւ, մոանէ նոքօք 'ի սենեակ վայրայար-
կին, ուր առաւօտուն ընկալեալ էր եղեռնա-
ւորին զկաց: Զգէ 'ի դուրս կայծքար պող-
պատ լուցկի և ծծումբ. լուցանէ լապտեր,
մոանէ 'ի սենեակն ներքին, տեսանել թէ լցե՞

ոք, և չէր: Պատնայ յետս 'ի դուռն սանդղոցն,
չականջէ, դիտէ. լուսթիւն և միայնութիւն.
Թողու երկուս այլս 'ի պահ վայրայարկին, կո-
չէ զկնէտ իւր զկրնեակոք, որ էր սերդամեան
Թաղին Ֆաջ, որում միայն էր սպառնալ, խա-
զաղել, հրամայել, և համոզել, որպէս զի ճար-
ատրիստութեամբ իւրով խելամուտ արասցէ
զԱգնէս՝ զի յայնմ կողմանէ դայր հրամանն:
Նովաւ առընթեր, և այլովք զկնէտ, էլանէր
Կրնզոյ յոչխի ընդ սանգուղս, յիշոցս 'ի սրտէ
արձակելով 'ի մի մի 'ի մատանց՝ որ ձանչէին, և
'ի մի մի քայլ սրբիկայիցն՝ որ ածէին ոտնաձայն:
Հատանէ 'ի գլուխ սանդղոցն. մղէ մեղմով զը-
դուռն նախասենեկին. տեղի տայ դուռնն.
հայի նա 'ի ներքս ընդ միջոց կիսաբաց դրանն
և դրանդոյն, և էր խաւար. ունկն դնէ ընդ
այն՝ լսել Թէ խորդայցէ՞ ոք կամ շնչեցէ՞. և
չլսէ ինչ: Հապա խաղայ յառաջ, չքէչ զլսա-
տերն՝ առ 'ի տեսանել անտես յոյժքէչ, բանայ
զդուռնն, տեսանէ անկողնն յարգարեալ, վեր-
մակ ածեալ զբարձիս: Կծկէ զթիկունս, դառ-
նայ առ իւրան, ակնարկէ գալ զկնէտ իւր յոչ-
չիկ 'ի միւսն սենեակ. մոանէ հետազօտէ և
անգ. և գտեալ զայն ևս միւսումն հանգոյն,
ասէ. «Զար սատանայ, մատնիչ մը եզած պէ-
տոր ըլլայ»: Ակսանէն ամենեքեան համարձա-
կագոյն որոնել ինդրել ամենայն ուրեք, վեր
'ի վայր զտուռնն հարեալ:

Մինչդեռ նոքա էին 'ի խնդիր, պահանորդք
երկոքին առ դրան փողոցին լսեն գընդիւն և-
կառոցայ չտապաւ. համարձին գալ անցանել

նոցա ընդ այն, և կան անչարժ՝ այլ կազմ և պատրաստ. գազարէ ոսնաձայնն առ դրան: Եւ էր Մենիկոյ յղեալ 'ի Հօրէն Ֆրխատափս, ազգ առնել մօրն և գաւառ՝ խուսել փուշ Թով 'ի տանէ, ապաստանել 'ի վանս, վանս զի··· Յայտ խակ է վանս էրն: Բուռն հարկանէ յըմբռնեսցէ Թակլեն առ 'ի բաղնել, և մնայ այն 'ի ձեռին եւրուզ խախտեալ և քակեալ. և ընդ միտս զարմացեալ, մղէ զգուռնն ահիւ. և 'ի բանալ դրանն, գնէ կասկածանօք ոտն 'ի ներքս, և ահա կալեալ զբաղկաց նորա յաջմէ և ահէ կէ պահանորդքն երկոքեան, սաստեննմա սպառնալից յուսկանէ.

«Զայն մի հաներ, թէ որ չէ կը սպանենք զքեզ»:

Նա ընդ հակառակն բառնայ աղաղակ. մի 'ի սրիկայիցն ինու զբերան նորա ձեռամբ, միւսն ձգէ սուսեր՝ ահ արկանել 'ի նա: Սարսի մանուկն որպէս տերև տատանեալ, և ոչ իշնէ ճիկ հանել. այլ յանկարծ փոխանակ մանկանն հնչէ ահագին ձայնիւ նախկին զօրանջ զանգակին, և տարափ բաղմանց ղէտ: Որ յանցաւորն է, կայ 'ի կասկածանս, ասէ առանն 'ի Մելոն. երկոցունց ևս սրիկայիցն Թուէր լսել զանուն իւրեանց և զմականուն. Թողուն զբազուկս մանկանն, ամփոփեն զիւրեանցն, բերան նաբաց ձեռնթափք հայեն յերեսս միմեանց, և վիմեն ուր էր գունդ իւրեանց: Իսկ Մենիկոյ արշաւասոյր դիմ 'ի զանգակատունն, ուր համարի գտանել անչուշտ զնք: Ջնոյն սուսկուսին էարկ ահարկու զօրանջ զանգակին և

յայլս 'ի սրիկայից. խուովեցան, խուճապեցան, հարան ընդ երեսս, խնդրելով զկարճայ ճանապարհ յերկս 'ի տանէն. բայց Թէպէտև էին նաքա առհասարակ արք ահեղիք, ոչ կարացին կալ ընդդէմ ահագնին մրրկին, որ առանց երբեք էլոյ 'ի բացէ եհաս 'ի վերայ նոցա: Սաստիցն Կրկըլոյ պէտք եղեն առաջնորդութեան, առ 'ի տալ նոցա նահանջել 'ի միասին, և մի ցրուել 'ի փախուստս: Որպէս գամիս՝ առաջնորդ երամակի խոզից՝ դիմէ այսր անդր, հասանէ 'ի վերայ օգտակոց, զմին խածեալ յունկանէ՝ ձգէ 'ի խոզեանն, զմիւսն մղէ կնճռոթաւ, հաջէ միւսմ յերս 'ի գնդէն. այսպէս ոխատուրն կէզծ՝ զոմն զվարսից յերս իւր կալեալ, զայլ ոք յեսկուսէ, վարէ ցպովիս մեծաւ զբէնալն յայլմէ կողմանէ, գոչէ առ այլ՝ որ սրանայիցն, ոչ դիտելով ուր, և զամենեսեան գումարեալ 'ի գաւթին՝ ասէ ցնոսա. «Շուտ ըրէք շուտ, հրացան առէք, սուրերնիդ պատրաստ, ամենքդ մէկտեղ, ասանկ կէրթանք. մի կուզէք որ մեզի գտչի, անհետքներ, մէկտեղ երթալու որ ըլլանք. զատ զատ մէկիկ մէկիկ որ ըլլանք, գէղացիներն ալ զմեզ կրնան բռնել. ամօթ է, եաւէս եկէք, ամենքդ մէկտեղ»:

Եւ կատարեալ զսուղ բանախօսութիւնն, խաղայ յառաջոյ նոցա՝ ինքն նախ էլեալ 'ի դուրս: Տուէն այն, որպէս ասացաք, էր 'ի ծայր չնին. Կրկըլոյ կալաւ զձանապարհ՝ որ ածէր արտաքս, և ամենեքեան գնային զհետ նորա կարգաւ: Թողցուք զնոսա 'ի գնացս, և դարձցուք առ Ակնէս և առփերփէթուա, զորս Թողաք յանձուկ ուրեք ուղեղ:

Ագնէս գուն գործէը հեռացուցանել զաղա-
խինն ՚ի տանէ ժողովրդապետին ըստ կարի. և
մինչև առ վայր մի յաջողեցաւ: Այլ նա յիշեաց
յանկարծ՝ զի գուռն տանն բաց էր մնացեալ,
և կամէր դառնալ յետս. էր մարթ արգելուլ
զնա. և հարկ եղև Ագնէսի, առ ՚ի չտալ նմա
կասկածանս, դառնալ ընդ նմա, խորհելով
թարթափեցուցանել զնա յետանդն պատմու-
թեան հարցանխուզութեանց իւրոց, որոց ան-
յաջող լեալ էին եղեր. և ցուցանէը լոյծ մեծ ՚ի
լուր բանից նորա, և երբեք երբեք առ ՚ի ցոյց
մտադիւր ունկնդրութեան իւրոյ, և վասն աղ-
ծարծանելոյ զչափաւորութիւն նորա, ընդմի-
ջէր. «Հապա՛. Այնպէս է. Հասկըցայ հմայ.
Տարակոյս չկայ. Եաքը ինչ եղաւ. Ինքը ինչ
ըսաւ. Գուն ինչ ըսիր»:

Այլ յասելն զայսոսիկ՝ այլ ինչ խորհէը ՚ի
մտի. և հաշուեալ զժամանակն, ասէը յանձին.
«Հիմայ կրնան եղած ըլլալ ժողովրդապետին
անէն. արդեօք դեռ հո՞ն են. ինչ անիսկեքու-
թիւն ըրինք իրեքնիս ալ՝ որ նշան մը չկրրինք
բանին յայտնելը խմացընելու. մեծ սխալմունք
ըրինք, բայց եղաւ. հիմայ ուրիշ ձար չկայ,
բայց բանել սըրկայ, ու որչափ որ կարելի է՝
ուշացընել. չաս շաս՝ քիչ մը տաեն պիտոր կոր-
սընցընեմ»: Ագյապէս մերթ երթեալ, մերթ
կայ առեալ, հասին մերձ ՚ի տուն ժողովրդա-
պետին, այլ ոչ տեսանէին զոյն վասն անկեանն
խափանելոյ զտեսութիւն: Մինչդեռ աղախինն
հասեալ ՚ի կարևոր ինչ կէտ պատմութեանն,
կայ առեալ էր անխափան, մանաւանդ թէ

յանդգնասոխ, ահա եհաս ՚ի բարձանց ընդ ան-
շարժ օդս լսին գիշերոյ նախկինն այն չնդնդն
անհետեւեթ բարբառոյ ժողովրդապետին, որ
կարդայր. «Օգնութի՛ւն, օգնութի՛ւն»: —

«Ի՞նչ կայ, ողորմած Աստուած», գոչեաց
փերփերթուա, և կամէր փութալ հասանել: —

Իսկ Ագնէս կալեալ զբղանցիկ նորա, ասէ.
«Ի՞նչ կայ, ինչ կայ»: —

Կրկնէ աղախինն, զերծանել ձգնելով. «Աս-
տուած պահէ. չկրնար»: —

«Ի՞նչ կայ, ինչ կայ», յաւելու Ագնէս,
կալեալ զթեւէ նորա: —

«Թող տուր», գոչէ աղախինն՝ մղելով զնա
՚ի բաց, առ ՚ի խլել զանձն ՚ի ձեռաց նորա, և
՚ի գնալն արշաւակի, հնչեաց ՚ի բացէ ուժգին
ևս յանկարծահաս աղաղակ մանկանն Մեհե-
կոյ:

«Ողորմած Աստուած». գոչէ և Ագնէս,
ընդոստուցեալ զհետ աղախնոյն: Այն ինչ ամ-
բարձեալ նոցա զոտս ՚ի գիմել, հնչեաց առաջին
բաղխիւն զանգակին, և ապա երկրորդ և եր-
րորդ անընդհատ: Մարակէին զնոսա հա-
րուածքն, եթէ էին նոցա պէտք մարակի: Փերփ
փեթուա կանխեալ վայրկ մի քան զԱգնէս,
մղէ զդուռն, և ՚ի բանալ դրանն՝ տեսանէ առ
տեսոմն զԹոռնի, զձիերուազ, զՈւենցոյ և զԼու-
չիա, որոց գտեալ զսանդուղս՝ կրկեալ էին ընդ
դոսա ՚ի վայր, և լուեալ զահաւոր հնչիւն զան-
դակին, ձեպէին հասցեսալ փրկել զանձինս:

Եհարց աղախինն հեռալով ցերկոսին եղ-
բարս. «Ի՞նչ կայ, ինչ կայ»: —

Նոքա փոխանակ պատասխանելոյ՝ խթեալ զնա ուժգին արկաւ, ՚ի բաց եկին: Եւ ասա հայեցեալ ՚ի Լուչիա և ՚ի Ռինդոյ, ասէ. « Հապա գո՞ք, ինչ բան ունիք դու »: Նոքա ևս առանց ինչ պատասխանելոյ եկին ՚ի դուրս: Փերփինեթուա առ չտապ տապնապի հասանելոյ՝ ուր կարևորագոյն պէտք էին, չհարց այլ ինչ. և մոեալ Ճեպով ՚ի գաւիթն, ՚ի սանդուղս անդր փութայր որպէս կարէր: Իսկ հարան և փեսայ, դեռևս խօսեցեալք ևեթ, պատահէցին Ադնէսի, որ հասանէր վազացեալ. և հազիւ կարելով խօսել՝ ասէ.

« Ո՞վ, դո՛ն էք. ինչպէս եղաւ, ինչ է աս զանգակը՝ որ ինձի կուգայ թէ լսեցի »... —

Ասէ Ռինդոյ. « Տուն երթանք, տուն երթանք, դեռ մարգ չհատած՝ տուն երթանք »:

Եւ ՚ի գնալ նոցա հասանէ մանուկն Մենիկոյ արշաւանօք, ճանաչէ զնոսա, կացուցանէ, և տակաւին դողալով, և կերկերեալ ձայնիւ ասէ.

« Ո՞ւր կերթաք, էս դարձիք սա ճամբէն դէպ ՚ի վանք »: —

Ադնէս ասէ. « Դո՛ն եկիր, տղայ »...

Ռինդոյ հարցանէ. « Ուրիշ բա՞ն ալ կայ, ինչ կայ »:

Իսկ Լուչիա յապուշ հարեալ, լուռ ևեթ կայր դողալով:

Պատասխանէ Մենիկոյ հատկիւեալ. « Տունը դժոխք դարձեր է, սպանանէ կուգէին զիս. Հայր Քրիստոփորը... (դո՛ն ալ հոս ես Ռինդոյ)... ըսաւ որ շուտ մը վանք հրամիքք. տե-

սայ, աչքովս տեսայ: Փառք Աստուծոյ որ ամենքդ ալ հոս էք. ետքը կը պատմեմ, դուրս որ եկինք »:

Ռինդոյ՝ որ զգաստագոյն էր քան զամենեսին, խորհեցաւ, զի ընդ որ և իցէ ուղի պարտ էր փութալ՝ մինչեւ հասեալ ամբոխին, և զի ապահովագոյն այն էր՝ որ ինչ մանուկն ահաբեկեալ ասէր, մանաւանդ թէ հրամայէր, և զերծեալք ՚ի վտանգէն, ապա զձանապարհայն լսել ՚ի մանկանէն զամենայն. և ասէ ցնա. « Աջնկնիս կնկիր ». և ցկարան ասէ. « Երթանք եւս ևեւէն »: Եւ գայնման, փութային յեկեղեցին. անցին ընդ հրապարակին՝ ուր չէ ևս ոք էր ըստ բաւականի. մանն յանճառին ուղի, որ էր ընդ մէջ եկեղեցւոյն և եկեղեցատան. և ընդ առաջին խարամատ ցանկի զոր դանն, անցեալ գնային ընդ արտօրայս:

Զի էր նոցա հեռացեալ քայլս երբ չիստուն, և ահա սկսանէր ամբոխն ՚ի հրապարակ անդր գիմել, և խռնէին հեազհեազ: Չայեկին ՚ի միմեանս, հարցանէին աննենքեան. ոչ ոք ասէր պատասխանի: Նախաժամանիք գիմէցին ՚ի դուռն եկեղեցւոյն, և էր փակեալ. փութացան ՚ի զանգակատուն անդր. և մի ՚ի նոցանէ եդեալ զբերան իւր ՚ի պատուհան մի փոքրիկ՝ երբ ՚ի ծակ արձակման հրազինուց, գոչեաց ՚ի ներքոս. Ինչ կայ: Ի լուր ծանօթ ձայնին, եմոզ Ամբրոս զբուան զանգակին, և ՚ի շշնջելոյ ամբոխին գիտացեալ՝ զի հասեալ էին յօգնութիւն էս պատասխանի. « Չիմայ կուգամ գուռը բանալու. և արկեալ զծնգովք զտափտան՝ զոր

ածեալ էր ընդ անթոռ, եկն ՚ի նեղբուստ ՚ի դուռն եկեղեցւոյն, և եբաց զայն: Հարցանէ որեարն.

« Ի՞նչ է սա իրար անցուածը. ինչ կայ. ո՞ւր է. ո՞վ է »: —

« Հարցընելու բան է ». ասէ Ամբոյա, միով ձեռամբ ունելով զթաղ դրանն, և միւսով զօձիս տափաստին՝ զոր շաապաւ էր զգեցեալ.

« Դեռ չիմացաք. Ժողովրդապետին տունը կոխեր են. շուտ ըրեք »: Դառնան հային առ նեբեան ՚ի ժամատունն անդր, մառչին բազմութեամբ, գիտեն ՚ի վեր, յակճիռս կան ՚ի լուր, և էր անդ խազազութիւն: Անյեղ ՚ի միւս կողմանէ գիմեն ՚ի դուռն, և գտանեն զայն փակ, որպէս թէ ոչ ուրուք ձեռնմխրճ լեալ յայն. հային և նոքա ՚ի վեր, և չէր և ոչ ի՛ ՚ի պատուհանաց բաց, և ոչ ձիկ լինէր լսելի. գոչեն.

« Ո՞վ կայ նեբսը, տէր Հայր »:

Ժողովրդապետն, որ ընդ խոսել յարձակէլոյն՝ ընկրկեալ ՚ի պատուհանէն, և փակեալ էր զայն, և վիճէր անձայն ընդ աղախնոյն՝ ման թողուլոյ նորա զինքն միայնակ յաղմկի անդ, հարկեցաւ ՚ի կոչ Ժողովրդեանն երկեալ անդրէն առ պատուհանաւն. և տեսեալ զայն ամենայն ամբոխ, սարքացաւ ընդ կարգալ իւր օգնութիւն: Լսէր զբարբառ յոգւոյն, որ աղաղակէին.

« Ի՞նչ պատահեցաւ. ինչ ըրին հրամանքիդ. ո՞վ են ընդոնեբը, ո՞ւր են »: —

« Մարդ չիմացայ. ընորհակալ եմ. ապրիք. տէր զերնիդ դարձիք »: —

« Բայց ո՞վ էին, ո՞ւր գնացին, ի՞նչ ըրին »: —

« Դէշ մարդիկ. անունք որ գիշերները կը պըտտին. բայց վախան գնացին. անհրնիդ դարձիք, բան չկայ. նորէն ընորհակալ եմ, որ դիքա, սրտանց ընորհակալ եմ »: Եւ զայն ասացեալ փակեաց զպատուհանն, մեկնեցաւ ՚ի նեբբս:

Սկսան անդ կէսք քրթմնջել, այլք ծաղր առնել, կէսք չիշոյս տալ, այլք կծկեալ զթիկունս դնալ ՚ի բաց. և ահա եհաս ոմն շնչասպառ, որ հազիւ կարեր յօգել զբարբառ: Սա բնակէր հանդէպ տան օրիորդին. և ՚ի լուր աղմկին հայեցեալ ընդ պատուհանն՝ տեսեալ էր ՚ի գաւթի անդ զփոթի սրիկայիցն, յորժամ կրնոյզ տաժանէր ՚ի գուռմարել զնոսա: Եւ իբրև ոգի հաւ, աղաղակեաց.

« Ի՞նչ կընեք, սիրելիք. գժոխքը հոս չէ, վարն է, Ճամբուն ծայրը, Ագնեսին տունը. հոն նեբսը զինքրով մարդիկ, կերևնայ որ ուխտաւոր մը կուզեն սպանել. ով գիտէ՝ սատանան ինչ կը խաղայ »: —

Յայնժամ սկսան Ժողով աղմկալից. « Ի՞նչ կըսես, ուրեմն պէտք է հոն երթալ, պէտք է տեսնել. քանի հոգի են. մենք քանի՞ հոգի ենք. ո՞վ են »...

Եւ տեսեալ յանկարծ զՀիւպատան, ասեն. « Հիւպատան է. հիւպատը »:

Պատասխանէ Հիւպատան ՚ի միջոյ խռան. « Հոս եմ, հոս. օգնութեան կարօտ եմ, մարկ ըրեք, շուտ ըրեք. ո՞ւր է ժամկոչը. զանգակ, զանգակ, շուտ մեկնեցիք Աբբայ վազէ, օգնութիւն խնդրէ. եկէք ամենքդ ալ »... —

Կէսք արշաւէն, այլ ոք ընդ այր և ընդ այր ընդոստուգեալ ընդհարկանէ. և մինչդեռ ազմուկն զայրանայր, եհաս այլ ոք, որոյ տեսեալ էր զմեհենել սրինկային շտապաւ, և աղաղակէ. « Վաղեցէք, սիրելիք. գողեր, աւազակներ կոխեցին, ուխտաւոր մը հետերնին, գեղէն դուրս եկան. եառնէն հասէք, եառնէն »:

Ի լուր խրախուսանացն, առանց մնալոյ հրամանի զօրապետին, խաղան բազմութեամբ, խառն ՚ի խուռն եջանեն ընդ ուղին, և ՚ի խաղալ կարաւանին՝ ոմանք յառաջապահից դանդաղեալ, թողուն այլոց յառաջ անցանել, և միջամուխ լինին ՚ի խուռն բանակին, և վերջապահք մնան զնոսա: Հասանի կարաւանն խառնամբոխ ՚ի սահմանեալն տեղի. հետք այն ինչ յարձակմանն էին ակներև, դուռնն լայնացաց, վահանքն քակտեալ. այլ յարձակեալքն չէին ՚ի միջի: Մտանեն ՚ի գաւթեն, գնան ՚ի դուռն վայրապարկին, բացեալ էր և այն նախապատրաստ. ձայնեն ՚ի ներքս.

« Ա՛գնէս, Լո՛ւչիա, ո՞ւր է ուխտաւորը, Սաթփանը կարծեմ երազ տեսեր է. — Զէ՛, չէ, ուրիշ մըն ալ՝ Փարլանտրէան ալ տեսեր է ուխտաւորը, — Ա՛գնէս, Լո՛ւչիա »: — Ոչ ոք պատասխանէ:

« Բռնած տարած կըլլան զկնիքդ, դուրս տարած կըլլան »:

Յայնժամ ոմանց ՚ի նոցանէ ձայն բարձեալ, խրատ տային զհետ մտանել կարծելոց յափըշտակողաց զաղջիկն, և ասէին.

« Անուն կոտրուքթիւն է գեղին, ամօթ է մեզի, թէ որ ամեն անգամ առանց պատժուելու, գայ առնէ տանի մեր աղջիկները՝ ինչպէս ուրուրը վառեահները ցորենի կալէն կը յափշտակէ »:

Նոր ժողով առաւել աղմկայոյզ. և մի ոմն (զոր չէղև մարթ գիտել թէ ո՞ւ) ձայնարկեաց անդ. « Ապնեան ու Լուչիան խալըսեր, տուն մը մտեր են »: Ալրագ ընթացաւ ձայնն, հաւատացեալ եղև. ոչ ևս բանք եղեն վախատէից զհետ մտանելոյ. և հրապարակին լուծաւ, իւրաքանչիւր ոք մեկնեցաւ ՚ի տուն իւր: Եւ էր անդ շշունչ և աղաղակ, բաղխելն դրանց և բանալ, երևեալ ճրագաց և անտես լինել, հարցանել կանանց ՚ի պատուհանաց և պատասխանել ՚ի փողոց: Եւ ՚ի դադարել ամբոխին՝ դեռևս տևէին զրոյցք ՚ի տունս, մինչև յօրանջք ընդհատեցին զայնս, այգուն անդրէն սկսանել: Բայց գագաթեցին աղմուկք. միայն ՚ի նմին առաւօտու կալով հիւպատոսին յանդի իւրում, ձեռն ՚ի ծնօտի, արմունկն յեց ՚ի մեղրս բրչին վարեալց յերկիր, և ոտն ՚ի մղձի նորին, մտախոհ ՚ի գաղտնիս անցից գիշերոյն, և որ ինչ պարտ էր նմա առնել վասն իրացն, հասին արք երկու հուժկուք, վարսք նոցա որպէս զարքայից նախնի Փռանկաց, և համանմանք երկուց սրինկայնին՝ որ յառաջ քան զաւուրս հինգ յարձակեալ էին ՚ի վերայ ժողովրդապետին, թէ արդեօք և նոքին ինքեանք: Սակայն ամարգագոյն օրինակաւ հրամայէին հիւպատոսին՝ զգոյշ կալ, մի վկայել յառեղի զանցից անցելոց, մի ՚ի հարցանելն՝ ասել զատոյգն, մի

չատախօսել, և մի զգեղջկացն տածել չազա-
կրատանս, եթէ օրհասիս ցանկայր վախճանել
զկեանս:

Իսկ վախատեայք մեր առ վայր մի ձեպըն-
թացք ՚ի լուռթեան, երբեմն երբեմն դառնային
հայեին յետս՝ թէ գայր ոք զհետ. և էին վաս-
տակաբեկք առհասարակ ՚ի վախատենէ, լը-
քեալք ՚ի խափանելոյ ասպատակին, վչտա-
գեալք ընդ անյաջող եղս նորին, և ահացեալք
՚ի կասկածանաց նորոյ երկիք անցեալ վտանգի:
Սատակագոյն ևս ահ ՚ի նոսա արկանէր անդա-
դար հնչիւն զանգակին, որ ՚ի հեռուստ որչափ
տկար և աղօտ՝ լինէր լսելի, այնչափ տխուր և
ջարագոյժ թուէր նոցա: Այլ յետոյ տպա
դադարեաց այն. և զի էին յանձնակ գաշտի,
և ոչ չշուխնք լսելի լինէր շուրջանակի, գնային
հանդարտաքայլ: Նախ Ագնէս ոգի առեալ՝ ե-
լոյծ զլուռթիւն, հարցանէլով զՈՒինցոյ զելից
երացն, և զՄենիկոյ զաղմկէն՝ որ լեալ էր ՚ի
տան: Ուինցոյ պատմեաց համառօտիւ զտխուր
պատմութիւն իւրեանց, և երեքեքին ևս դար-
ձուցին զաչս ՚ի մանուկն. և նա պատմեաց ձըշ-
դըրտագոյն զպատուէրն Չօրն Ֆրխատափորի, և
որ ինչ ինքն վտանգաւ կէնացն տեսեալ էր,
որ հասատատէին զբան բարոյ կրօնաւորին:
Ընդքա առաւել քան զպատմելոյն ՚ի պատան-
էդն ՚ի միտ առեալ՝ սոսկացան ընդ դէն. և
կարկեալ երեքեին միանգամայն, հայեին ար-
հաւրօք ընդ երեսս միմեանց. և յանկարծ երե-
քեան ՚ի միասին շարժեալ, ոմն ՚ի դլուխ ման-
կանն, այլք զուսովքն ձեռս ածեալ՝ գգուէին

զնա անբաւրաւ չնորհակալեօք, որպէս հրեշ-
տակ իւրեանց պահապան համարելով զնա. և
կարեկից լինէին ընդ տագնապ երկիւղին զոր
կրեալ էր վասն նոցա, և ընդ վտանգն՝ յոր ան-
կեալ էր վասն փրկութեան իւրեանց. և խըն-
դրելով լուն Թողութիւն ՚ի նմանէ, ասէ Ագ-
նէս. « Հիմայ տուն դնա տղաս, որ մնեցոց
սիրտը հանգարտի, մամառուք չընեն »: Եւ յի-
շեալ զերկուս դահեկանն խոստացեալս, ե-
հան երկուս ևս այլս ՚ի քսակէն, և ետ նմա ա-
սելով. « Ալօթք ըրէ մեզի համար, նորին տես-
նուելոս որ ըլլանք, ան առենը »... Ուինցոյ ևս
ետ նմա պէրլինկ մի նոր փայլուն, և խրատեաց
զնա, մի ուշիք պատմել զբան Չօրն Ֆրխատա-
փորի. և Լուչիա գգուելով զնա անդրէն ող-
ջունեաց զնա սրատեսիկեալ ձայնիւ: Եւ մանուկն
ողջունեալ զամենեսին խանդաղատանօք, դար-
ձաւ առ իւրան: Իսկ ինքեանք յուղի անկեալ
անդրէն գնային հոգւով. Ագնէս և Լուչիա յա-
ռաջոյ, և Ուինցոյ զհետ նոցա առ ՚ի զգուշու-
թիւն: Լուչիա ալինդ ուսնէր զբազիկ մօրն, հրա-
ժարեալ աջողակի և վայելչաբար յօդնութենէ
պատանւոյն՝ որ ձեռն մատուցանէր նմա ընդ
դժուարաւոտս: Ամթիսած ՚ի բնէ, և յաղմկի
անդ երբեք երբեք լեալ ընդ նմա առանձին
մտերմաբար՝ հանդերձեալ լինել նմա ընդ հուպ
՚ի հարմնութիւն, և յայնժամ ՚ի գերև եղեալ
գժբախտութեամբ իւր յերազի, սարքանայր
ընդ այնքան համարձակութիւն իւր. և ՚ի վե-
րոյ այլոց պատճառաց զգողանի հարկանելոյ,
յաւելոյր և ամթի, ոչ ՚ի սխուր գիտակցու-

Թենէ չարեաց, այլ անգէտ անձին՝ որպէս եր-
կիւղ տղայոյ, որ գողայ ՝ խաւարի՝ առանց
զվանեցն դիտելոյ։

Եւ ահա յանկարծ գոչեաց Աքենէս. « Հապա
առնեցինիս »։ Որչափ և կարևոր էր հարցուա-
ծըն, ոչ ոք տայր պատասխանի, զի չէր իսկ
մարթ պատասխանել ինչ անդորրիչ սրտի։ Յա-
ռաջ գնային լռութեամբ ընդ ճանապարհն.
և ընդ հուպ հասեալք ՚ի հրապարակ եկեղե-
ցւոյն՝ սպա սկսան բարբառել։

Ոչնցոյ մատեաւ ՚ի գուռն, մէկեաց մեղմով.
և ՚ի բանալ դրանն՝ ծագեալ ՚ի ներքս լուսնի,
երևեցոյց զգուշնատ դէմն և զարծաթափայլ
մօրուս Հօրն Քրիստափորի, որ ապասէր նոցա
յոտին։ Որոյ տեսեալ՝ զի չզակասէր ոք ՚ի նո-
ցանէ, ասաց. « Օրհնեալ է Աստուած »։ և ակն-
արկեաց նոցա մտանել ՚ի ներքս։ Կայր առջե-
թեր նորին միւս այլ վեղարաւոր, որ էր եկե-
ղեցւոյն եղբայր զոր Հօրն Քրիստափորի հա-
մրզեալ էր աղաչանօք ըստ հարկի երացն հսկել
ընդ լուր, Թողուլ զգուշն կիսաբաց, և պահ
ունել առ դրան, առ՚ի ժողովել զտառապեալն
զայնոսիկ վտանգեալս ՚ի մահ։ Եւ եթէ չէր ինչ
խանդութիւն և համբաւ սրբութեան Հօրն Քրիս-
տափորի, ոչ արդեօք զինքնէր եղբայրն վեղա-
բաւոր յանհնգիստ ՚ի վտանգաւոր և ՚ի պա-
րսկանն պահպանութենն։ Եւ իրրև մտին,
Հայրն Քրիստափոր չընչեաց զգուշնն յուշիկ։
Յայնժամ եկեղեցւոյնն եղբայր Փաւլոս ոչ
ևս ժոյժ ունելով էառ մեհուսի զՀայրն Քրիս-
տափոր, և ասէ ցնա յուսկանէ.

« Բայց Հայր պատուական, գիշեր աստէն...
ժամու մէջ, կնկատց հետ... գուռը գոց »...
ասէր և երերէր զգլուխ իւր։ Եւ մինչդեռ նա
զայսոսիկ բանս դժուարանայր արտաբերել,
Հայրն Քրիստափոր ասէր ՚ի մոլ. « Եկուր տես
հիմայ, աւարակ մը անմեղ աղջկան մը եւևէ որ
կնար, եղբայր Փաւլոսը ամենևին գժուա-
րութիւն մը չէր հաներ ազատելու զանիկայ
ան գայլուն ձանկերէն »։ և դարձեալ ՚ի նա,
առանց լիչելոյ զի չմտանայր նա զգրոց բար-
բառ, ասէ. « Գիտե՞ս որ Աքենայն ինչ սուրբ է սրբոյ
կըսէ Պօղոս առաքեալը »։ Այս վերջս, ասա-
ցեալ ՚ի գրոց բարբառ, արար ՚ի նա աղդեցու-
թիւն մեծ. ուր եթէ Հայրն Քրիստափոր
պատճառաբանեալ էր առ եղբայրն, ոչ պա-
կասէին նմա առարկութիւնք, և ո՛ գիտէ քանի
երկարէր խնդիրն. այլ անմտանալին այն նմա
բան խմաստալից վերջաբար ասացեալ՝ թուե-
ցաւ լուծիչ ամենայն երկբայութեանց եղբօրն.
և հանդարտեալ՝ ասէ. « Էրթիք է, հրամանքդ
ինծմէ աւելի գիտես »։

Իսկ Հայրն Քրիստափոր յաւել. « Վատահ
եղիր, մի վախնար, եղբայր Փաւլոս »։ Եւ առ
աղօտ լոյս կանթեղին, որ վառէր առաջի սեղա-
նոյն, մատուցեալ առ ապահովեալսն՝ որ մնային
երկմտութեամբ, ասէ. « Փառք տուէք Աստու-
ծոյ, որ զձեզ մեծ վտանգէ խալըսեց. կրնար
ըլլալ որ հիմայ »...

Եւ սկսաւ ասա բացատրել՝ վասն որոյ երաց
՚ի ձեռն մանկանն պատգամաւորի՝ ազդ արա-
րեալ էր նոցա. քանզի համարէր չգիտել նոցա

աւելի ինչ քան զինքն, և կարծէր Մենիկիսկի գտեալ ընտա առանին 'ի խաղաղութեան նախ քան զհատանել սրիկային: Ոչ ոք իշխեաց պատմել նմա զտոդգն, և ոչ Լուչիա՝ որ խղճէր 'ի սրտէ ընդ կեղծիան առ այնպիսի այր, այլ դիւրէրն այն էր գիշեր չիսթիկ և պատճառանաց:

Խօսեցաւ առ նոսա Հայրն Փրիստափոր և ասէ. « Կը տեսնաք, սիրելի որդիք, որ ալ աս տեղը ձեզի համար ապահով չէ: Ձերն է, վասն զի հոս ծներ էք, ու մեկուս մը վնաս չէք ըրեր. բայց Աստուած ասանկ կուզէ. խաչ մըն է, համբերեցէ՛ եւսին ելէնք է տանիք, առանց սրբութերնէը մէկու մը դէմ բան անցընելու, Աստուծոյ յանձնենք ձեզի, վատահ եղիք որ օր պիտի գայ, ուրբաթնաջը ելիտոր քաշածնուդ վրայ: Ես ձեզի ձեզի ապահով տեղ մը աս օրերուս համար, ձը յուսամ՝ որ շուտ կարենաք ձեր տունը դառնալ: Ընդդ ինչպես ալ որ ըլլայ, Աստուած ձեր բանը կը հոգայ՝ ձեր բարին կը յաջողէ. եւ ես ձը Քանամ անհոգ ջըլլալու իր շնորհքին՝ որ միս ընտրեց գործիք իր տառապեալ ծառայիցը օգնելու. »:

Եւ դարձուցեալ ղբանս իւր առ Ագնէս և առ Լուչիա, յաւել.

« Կերթաք ուր որ կըսեմ... ու հոն ամէն վտանգէ ազատ կըլլաք, միանգամայն ալ՝ շատ հեռու չէք ըլլար ձեր տունէն: Հոն հարցուցէք մեր վանքը, կանչել տուէք վանահայրը, տուէք իրեն ան նամակը, իմ տեղս կը բռնէ ձեզի համար: Դուն ալ, սիրելի Ռինցոյ, պէտք է որ հիմակու հիմայ ղբեզ ապահովես ուրիշի

կատաղութենէն, քուկինեդ ալ: Տար ան Թուղթը Միլան մեր վանքը Հայր Պոնաւենթուրային. ինքը քեզի հայրութիւն կընէ, քեզի ճամբայ կը ցուցընէ, քեզի գործ կը գըտնայ ինչուան որ հոս դառնաս խաղաղութեամբ: Գնացէք լճին եզերքը՝ Պիոն ջուրին վազած տեղին մօտ. հոն նաւակ մը կեցած կը գտնաք, կանչեցէք. ձեզի պիտոր հարցընէ՝ օրհնած համար. պատասխանեցէք՝ տուրը Ֆրանչիսկոսին համար. կընդունի ու կը տանի զձեզ մեկալ դին. հոն ալ կառք մը կը գտնաք, որ կը տանի զձեզ ինչուան »...

Աստանօր կարապասէ ոք ասել՝ Թէ ո՛րպէս վերադարձոր ոք կարէր անդէն պատրաստել կառս և նաւ ընդ ջուր և ընդ ցամաք 'ի ծառայութիւն, այլ ասաի 'ի միտ առնուլ է՝ յոր մեծամանս էր Հայրն Փրիստափոր վասն համբաւոյն սրբութեան:

Մնայր խորհել և զպահպանութենէ ատանցն երկոցունց. նա ինքն յանձն էառ աւանդել զբանալին՝ որոց կամէինն Ագնէս և Ռինցոյ: Ագնէս 'ի հանել զնոսն 'ի քսակէն՝ հառաչեաց 'ի խորոց սրտի, զմոռաւ ածել զի տունն ինայ ցեալ անփակ, և աղմուկն այն պատահեալ 'ի նմա, ո՛ գիտէ՝ մնայր ինչ անդ 'ի պահպանութիւն:

Յաւել Հայրն Փրիստափոր. « Բայց ճամբայ ելլելնէդ առաջ աղօթք ընենք՝ որ Աստուած հեռերնիդ ըլլայ միշտ, ու ձեզի այժ ու համակերպութիւն տայ իր կամացը »: Զայս ասացեալ, եդ ծունր 'ի մէջ եկեղեցւոյն, եղին և

ամենեքեան. և 'ի կատարել աղօթիցն՝ վայրկ
մի եղև լռութիւն. և ապա Հայրն Փրկչատիւր
դաշն՝ այլ յոտակ ձայնիւ յաւել. « Ընդունէ,
Տէր, մեր աղօթքը ան խեղճին համար ալ որ
զմեզ աս նեղութեանը հասուց: Աւրժանի չենք
ըլլար քու ողորմութեանդ, թէ որ իրեն հա-
մար ալ սրտանց աղօթք չընենք, որ այսչափ
կարօտ է աղօթքի. մենք մեր նեղութեանը մէջ
աս մխիթարութիւնը ունինք, որ քու ձամբուդ
մէջ ենք, կրնանք քաշածնիս քեզի նուիրել,
ու արդիւնք վաստկիլ. իսկ ինքը... ինքը թըշ-
նամի է քեզի, քեզի դէմ կը կռուի թշուառը:
Ողորմի՛ իրեն, սիրտը շարժէ, ղղջմամի բեր,
տուր իրեն ալ ամեն շնորք՝ ինչ որ մեզի համար
կը բաղձանք »:

Եւ ապա յարուցեալ յաղօթից՝ ձեռնէլով
ընոսա ասէ. « Շուտ ըրէք, սիրելի որդիք, կոր-
սընցընելու աաեն չիկայ: Աստուած պահպանէ
զձեզ, պահպան հրեշտակնիդ հետերնիդ ըլ-
լայ. երթաք բարով »: Եւ 'ի մեկնել նոցա, 'ի
յոյզս սրտի՝ որում պակասէ բարբառ, այլ
լռութեամբն առաւել ինչ յայտ առնէ, յա-
ւել Հայրն Փրկչատիւր խռովեալ ձայնիւ.
« Սիրտս ինծի կպղձի՝ որ շուտ պիտոր տես-
նուինք »: Եւ յիրաւի սիրտ մարդոյ, որ հա-
ղիւ զանցեալն յիշէ, ազդէ ինչ երբեմն նա-
խագուշակ ոյոց միտ դնեն:

Հայրն Փրկչատիւր, ոչ յամեալ 'ի լուր պա-
տասխանւոյ, մեկնեցաւ յաւանդատունն. եւ ին
ուղևորքը յեկեղեցւոյ, և եղբայրք Փապիոս վա-
կեաց զդուռնն, ասելով և ինքն այլաչեալ ձայ-
նիւ « Երթաք բարով »:

Գնային նոքա անմռունչ 'ի լեռնէն՝ ուր ասա-
ցաւ նոցա, դահն անդ զնաւակն պատրաստա-
կան, և ձայն տուեալ և ընկալեալ մահն անդր:
Նաւավարին մղեալ թիակաւ զցամաք, մեկնե-
ցաւ. և 'ի միան ևս բուռն հարեալ 'ի թիակ,
և երկոքումբք բաղկօք թիավարեալ 'ի խորս՝
ածէր զնոսա յայնկոյս: Ձէր ինչ և մեզմոյ օդոյ
շունչ. Ծովալեզն ողորկ և հարթադակ թուէր
հայելի, եթէ ոչ վէտ վէտ ծածաներ 'ի ջող
լուանի, որ յերկնից բարձանց ցոլանայր 'ի
ջուրս: Լսելի լինէին 'ի բացէ ծուխք բեկեալք
յափունս յօդելիկ ընդ աւազ, և բացագոյն ևս
խոխոջ ջուրց խորտակելոց 'ի խարխոս կամըր-
ջին, և ճողփումն 'ի թուաւոր բաղխիւն թև-
ձակացն երկոցունց՝ որ հատանէին զկապուտ
երեսս ըմէն. ամբառնային 'ի միասին կայլակա-
հոս, և մարձէին 'ի միասին, և ալիք հերձեալք
'ի դնացից նաւուն, կարկատեալք յետկուսէ
խելաց, Թողուին հետս դանդրահէտ՝ որ տակաւ
յափանց անտի հեռանային: Նաւորդք անբար-
բառ, դէմս 'ի յետս շրջեալ, կային 'ի զնէն լե-
րանց, և շնէին՝ զոր լուսաւորչէր ծագումն լուս-
նի, տառերս տառերս ասա անդ Թողեալ
հրաշապատ: Երևէին շէնք, տունք և հիւղք. և
պալատն Ռոտրիկի, որ հանդերձ տափարակ
աշտարակաւն ամբառնայր 'ի վերայ շէղջակու-
տի տնակաց՝ բնակելոց 'ի տոտրոտ հրուանդա-
նին, Թուէր գոռոզ ամեհի կանգուն 'ի խաւա-
րի՝ հակելով 'ի վերայ Թմբերելոց 'ի քուն, մտա-
խոհ յերեւեան: Եաես զայն Լուչիա, և ասափիճան
զտակերօքն գայր. լջոյց զաչս 'ի տոր ընդ զառ

'ի վայրն մինչև 'ի գիւղ Իւրեանց, և 'ի սպառուած նորին պչրուցեալ, եաես զանակ իւրեանց, նշմարեաց զթաւ Թզենւոյն ծայրս՝ 'ի վեր երևեալ քան զորմ գաւթին, և զպատուհան իւրոյ սենեկին, և 'ի ծոց նաւակին կալով 'ի նիստ, եդ զբաղուկ իւր 'ի ծնօտ նաւուն, և զձակատ իւր 'ի վերայ բազկին հանգուցեալ երբ թէ 'ի քուն, արտասուէր 'ի ծածուկ:

Բարեաւ մնայք լերինք ամբարձեալք 'ի ջուրց, յամպս վերացեալք. պագաթունք անհասասարք, ծանօթք՝ որոց 'ի միջն ձերում բնակին, և 'ի միտս նոցին ոչ ինչ նուազ քան զդէմս իւրեանցայոցն տպաւորեալք. ուղևք, զորոց ձանապէն նոքա զնոսին զձայնս ընտանեացն. գիւղք ընդ փեղկս լերին սրփռեալք, տպիտակափայլք որպէս զնաշխարհաքս, տպիտակափայլք որպէս զնաշխարհաքս անդ. մնայք խաղաղութեամբ: Քանի մնուր է հրաժէշտ՝ որոց 'ի մէջ ձեր աձեցեալ, մեկնին 'ի ձէնջ, 'ի սիրտ իսկ պնոցիկ՝ որ կամակր մեկնին ձգեալք 'ի յոյս յարդարելոյ պյուր գնեւրեանց բարեկենդանութիւն, ուր զանան յայնժամ երազք մեծութեանց. զարմանան նոքա ընդ խորհուրդն կալեալ, և յետս ընձալն լինէր նոցա կալ, եթէ ոչ յոյս ձմրուեռ Թեան մէջ գնոսա: Որչափ յառաջ ընթանան, այնչափ առաւել աչք նոցա յետս ընկրկին խնձք և գժկամակք ընդ միօրինակն տարածութիւն. օդք Թռչին նոցա մշակուսք և անառողք, յառաջ խաղան սխուր և անփոյթ ընդ բազմամբոխս քաղաքաց, ընդ խիտ առ խիտ տունս 'ի տունս յարեալ, և ընդ չինուածս

ծրս զարմանալիս յաչս հիւրոց. խորհին անձկով յածուածն փոքրիկ և 'ի տնակ՝ յոր 'ի վաղուց աչք իւրեանց կաթուղնէին, և վերստին զայն խնդրեն տանալ, դառնալ անդրէն 'ի լերինս հայրենիս:

Այլ որոյ էր անդր քան զայնս անցեալ իղձ, որ զամենայն խորհուրդս իւր ապագայս 'ի նոսա էր հաստատեալ, և վաղէ ընդքօք՝ մըղեալ յապառումս բռնութենէ. որ 'ի բաց ձգեալ 'ի սիրելագոյն սովորութեանց, և խափանեալ յըղձալի ախնկալութեանց, լքանէ զերկինս ծանօթս 'ի խնդիր անծանօթից՝ որոց ոչ երբէք իղձ ծանօթութեան 'ի սիրտ իւր անկաւ, և ոչ մտաբերել կարէ 'ի կեաս մի հատուած անդրէն դառնալոյ, եղե՞ւկ նմին: Մնա խաղաղութեամբ տուն հայրենի, յորում բազմեալ մտայոյզ՝ ուսաւ զանազանել զոտնաձայն ընդելական յախնկալեալ ոտնաձայնէ երկիւղ իմանալեաւ: Բարեաւ մնա և տուն օտար, յոր հարեանցի հայէր նա պատկառանօք, յորում խորհէրն գտանել խաղաղ և մշտնջենաւոր օթևան հարստութեան: Ողջոյն և ընդ քեզ եկեղեցի սուրբ, յորում հոգի իւր գտնայր ստեպ 'ի խաղաղութիւն՝ երկեղիլ օրհնութիւնս Տեառն, ուր պատրաստեալ էր նմա և խոստացեալ արարողութիւն սուրբ, ուր հառաչ սրտի օրհնելոյ էր հանդիսիւ, և սէր 'ի պարտս փոխեալ՝ սրբազանէր. մնա խաղաղութեամբ: Որ տայրն նմա բերկրութիւն այնքան՝ ամենայն իսկ ուրեք է, և ոչ խռովէ երբեք զնդութիւն որդւոյ իւրոյ՝ բայց առ 'ի պատ

բռասեալ նոցա զառաքելագոյնն և զանկասեալն:

Ա. յսալնսիք էին, եթէ ոչ այսոքիկ, խորհուրդք օրհնոլդին, ոչ ինչ ընդհատ և երկուց նժդեհ հակացոյն 'ի մեռեալ նաւակիւն յաջակողմեան եղը Աստոյ:

ԳԼՈՒԽ Թ.

Ի բաղխել նաւակին յայնկոյս լճին, ցնցեալ լուչիա, և սրբեալ ծածկաբար զարտասուս, 'ի վեր էառ զգլուխ իւր որպէս զարթուցեալ: Նախ Ռէնցոյի եղ 'ի ցամաք, և աչ մատոյց Աչնեսի. և Աչնէս էլեալ՝ աչ էառ գառեբն, և երեքեան ախթապին՝ շնորհս մատուցին նաւավարին: Իակ նա ասէ. « Ի՞նչ բանի համար շնորհակալ կըլլաք. պարարկան ենք օգնել իրա րու ». և ամիսոփեաց զչեռն իւր որպէս 'ի գոզնոյց, 'ի կամել Ռէնցոյի տալ նմա զմեան ինչ դրամոց՝ զոր ոչնեը առ իւր 'ի պարգև ժողովրդապետին, եթէ նորա ակամայ իակ սպասաւորեալ էր նոցա: Կազմ անգանօր կայը սայլն, և սայլորդին ողջունեալ զերեսին՝ որոց սպասէին, ընկալաւ զնոսա 'ի սայլն, և ձայն տուեալ դրասատուն և հարուածք, մեկնեցան:

Պատմիչն չասէ ինչ զգիշերախառն ուղևո-
րութենէն և ոչ զանուն՝ ուր Հայկն Քրիստա-
փոր ուղեկաւէր էր զգնացս ուղևորացն. այլ
մանաւանդ յայտ առնէ ճշմարիտ ասել զայն. և
պատճառաբ լուծութեանն յառաջիկայ պատմու-
թենէս գան ի յայտ: Արիածք օրհորդին ի
տեղւոջ անդ նահանջան ի գաղտնի հնարս չա-
րութեան ուրուն յաղգատոհմէ, որ ի ժա-
մանակի՝ յորում գրէր պատմիչն՝ հզօր էր
յոյժ. և առ ի տալ զգնացեալ առնն տեղեկու-
թիւն, ստիպի համառօտել զվարս նորա. և որ
պիսի ինչ տեսարան ընծայէ ազգատոհմին այն՝
տեսցի յառաջիկայս: Այլ զորս լուծ նա առ զգու-
շութեան, պէտ արարաք մեք գտանել այլուր.
զի պատմագիրն ոչ միշտ ունի, թէպէտ և լուեալ
զանուն նորա և զգեղջն, սակայն զգեղջին ասէ
ուրեք՝ թէ էր վաղիմի և անուանի, անուանքն
ևս թէ թերի ի գոլոյ քաղաք. և այլ ուրեք՝ զի
դեռահասէր ընդ այն Լամպրոյ, և այլուր գաղ
ձեալ՝ զի էր անդ աւագերէց: Ի բաղդատու-
թենէ երից այսոցիկ տեղեկութեանց ի միա
առնումք՝ զի էր այն Մոնցա: Ի բազմահա-
րուստ գանձս քաջահմուտ գուշակութեանց՝
նշեն իսկ խորագնացքն, այլ սաուգագոյն
քան զայս՝ ոչ ևս, որպէս ինձ թուի: Մարթ էր
ըստ հաւանագոյն գուշակութեանց յաւելուլ
և զանուն աղգատոհմին. որ թէպէտ և վաղ իսկ
չիջեալ, սակայն ի դէպ թուի մեզ լռել զայն,
զի մի ի վտանգ անկանիցեմք ազարտելոյ զվախ-
ճանելոյ իսկ համբաւ, տալով գիտնոյ պատ-
ճառս հետազօտութեան:

Արդ ուղևորքս մեր հասին ի Մոնցա ի ծա-
գել արեգական: Սայլորդն եմոյծ զնոսա ի
պանդոկի ուրեք. և զի էր տեղեակ գեղջն և
ծանօթ պանդոկապետին, խնդրեաց տալ նոցա
սենեակ, և ածէ զնոսա անդր: Ինչպէս ընդ ընդ-
հակառակ փորձեաց տալ ինչ նմա վարձս. այլ և
սա որպէս զնաւատարն, հեռագունի՝ այլ առա-
տագունի ակն ունելով վարձուս, հրաժարեաց
յընդունելոյ զայն, որպէս թէ փութալով սանձ
ձել զգրատան:

Յետ այնր տաժանաւոր երեկոյի՝ զոր նկա-
տագրեցաք, և գիշերոյն՝ զոր ամենայն ուժիւք է
ի միտ առնուլ թէ յորպիսի՛ չարատանջ խոր-
հուրդս էանց, յար կասկածանօք արկածից
առաւել քան զաշխատուցն մերոց, ընդոստ ըն-
դոստ ցնցմամբք անհանգիստ սայլին՝ որ ոչ նե-
րէր փակել զարտաւանուն ի նինջ, երազք
յայնժամ թուէին նոցա ի նստեն ի բազմոց
անչարժ, յորպիսում և էին սենեկի: Արարին
անդ հարևանցի նախաճաշիկ ըստ ներուկ սղու-
թեան ժամանակին, ըստ կարևորագոյն ծա-
խուց պատահարաց անատոդ առաջնկայից, և
առ ի չգոյէ ախորժակի: Զմոռաւ ածէին զվար-
սանեկան կոչնակս, զոր երկաւորք յառաջ
ճայր նոցա առնել, և յոգւոց հանէին: Կամէր
Ուէնցոյ կալ անդ գոնեա զայն օր, տեսանել
հանգարտեալ զգեղջս մօրն և գստեր, և հար-
կանել նոցա զնախկին սպասաւորութիւնն.
բայց Հօր Քրիստափորի պատուիրեալ էր նո-
ցա՝ արձակել զնա վաղագոյն ի տեղն իւր:
Վասն որոյ ընդ այլ բազում պատճառս ածեալ

և զպատուէրն զայն, և զի յամեցմամբն տեղի տային բամբասանաց, և վշտալի ևս ՚ի յամէնն լինէր բաժանուձն, և զի գարձեալ մարթ էր նմա դառնալ փութով տալ զանձինէ զոյց, և գիտել զևւբեանցն, յորգորելին զնա մեհենել, միաբանեալ յիւբեանս՝ որպէս մարթէր նոցա վեղարդոյն տեսանել զմիմեանս: Լուչիա ոչ ծածկեաց զարտասուս իւր. Ոչնցոյ գժուարաւ յոյժ կարաց ժոյժ ունել իւրոցն. և այնդեալ ուժգին զալ Ագնեսի, հեղձամղձուկ ձայնիւ ասէ՝ « Մնաք բարով, շուտով մեկզմեկ տեսնանք », և մեհենեցաւ:

Ի վարանս ծանուցին գտանէլին նոքա անօգնական, եթէ չէր սայլորդին՝ բարեբաւ առն՝ պատուէր ընկալեալ, ածել զնոսա ՚ի վանս վեղարաւորաց, և օգնել յամենայն պէտս նոցա: Յուղի անկան ընդ նմա գնալ անդր, և չէր լինչ հեռի ՚ի Մոնցայէ: Հասին ՚ի դուռն մենաստանին, ձգեաց առաջնորդն զզանգակն, ետ կոչել զվանահայրն. որոյ փութացեալ եկն, և ընկալաւ զնոսա ՚ի սեամն անդ: Եւ տեսեալ զեպիսկոպոսն նամակին՝ ծանեաւ, և գոչեաց. « Հայր Բրնատափոր »: Բարբառ նորա և դէմք յայտ առնէին, զի զմտերիմ բարեկամի արտասանէր զանուն: Ի դէպ է ասել՝ զի Հօր Բրնատափորն Լերմագոյնս ՚ի Թղթի անդ յանձն արարեալ էր զեկաւորսն, և բաղում սրտեռանդն կարեկցութեամբ պատմեալ զարկածս նոցա. զի յԸնթեռնուլ զդիւրն, զրդիւր վանահայրն տեսեալ ՚ի զարմանս և ՚ի զայրոյթ, և ՚ի վեր առեալ զաչս ՚ի Թղթոյն՝ հայէր ՚ի նոսա, յայտ առնելով կա-

րեկցութիւն և գութ: Եւ երբէք կատարեալ ընթեռնուլ զդիւրն, էկաց վայրկի մի մտախոհ, և ապա ասէ. « Զէ. ուրիշը չկայ անկէց յարմար, թէ որ ան խաթունը յանձն առնելու ըլլայ »...

Եւ առեալ զԱգնէս մեկուսի ՚ի հրապարակն առաջի մենաստանին, եհարց նմա ինչ ինչ, և ընկալեալ լիով զպատասխանին, դարձաւ առ Լուչիա, և ասէ ցնոսա. « Կը փորձեմ, սիրելիք, ու կը յուսամ որ ձեզի ապահով ու պատուաւոր տեղ մը գտնեմ, ինչուան որ Աստուած ձեր բանը հոգայ: Կուզէք գալ եռեւէս » : —

Նոքա ասեն յարգութեամբ. « Հրամմեր ես, կուգանք » : —

Վանահայրն ասէ. « Ուրեմն զձեզ կը տանիմ ան խաթունին վանքը. բայց քիչ մը հեռուէն եկէք, չատերը կը զուարճանան բամբասանք ընելէն. ով գիտէ ինչ խօսքեր կը հնարեն, թէ որ տեսնան վանահայր մը աղուոր աղջկան մը հետ... կնկոտց հետ ըսել կուզեմ » :

Զայս ասացեալ ընթանայր յառաջ: Լուչիա շառագունէր. սայլորդն ժպտէր՝ հայելով ԱԱգնէս, և ոչ Ագնէս կարէր բանաւորել զժբալիս: Ի մեհենել վանահօրն, անկան և ինքեանք զհետ նորա յուղի, հեռի ՚ի նմանէ իբր տասն քայլ: Յայնժամ հարցին ցսայլորդն, զոր չէր նոցա իշխեալ հարցանել ցվեղարաւորն. « Ո՞վ է տա ըսած խաթունը » :

Պատասխանի եւս սայլորդն. « Այս խաթուն ըսուածը՝ մարապետ մըն է, բայց ուրիշ մարա-

պետներու պէս չէ. ոչ աբբասուհի է, ոչ վա-
նամայր, լաւը եմ որ չատերէն ալ պզտիկ է,
բայց Ադամայ կողէն ելած է. իր ընտանիքը մեծ
մարդիկ եղած են, Սպանիայէն եկեր են՝ ուր
որ դեռ իրենց ազգականները կը հրամայեն. ա-
նոր համար ալ խաթուն կըսուի, բոլոր գեղը
ասանկ կը կանչեն զինքը. ինչու որ ասանկ անձ
մը չէ եկած ամենէն ան վանքը: Իր ընտանիքը
հիմայ ալ մեծ ուժ ունին Մելանու երկիրը.
միշտ իրենցն է երաւունքը: Մանաւանդ Մո-
ցայի մէջ. ինչու որ իր հայրը թէ և հոն չկեր-
նար, բայց հոն ամենէն մեծն է. ուստի ինքն
ալ տիրած է վանքին, դուսեցիք ալ շատ կը յար-
գեն զինքը. ու երբոր բան մը իր վրայ կառնէ,
առաջ կը տանի: Անոր համար ատ բարի կրօնա-
ւորը զձեզ իրեն որ կարենայ յանձնել, ու ա-
նկայ ալ յանձն առնելու որ ըլլայ, կրնամ ը-
սել որ խորանի մը վրայ դրուածի պէս ապա-
հով կըլլաք »:

Ի մեռել լուրում 'ի դուռն աւանին, առ ո-
րով կայր յայնժամ աշտարակ մեծ կիսաւեր,
և ամրոց հանգոյն նմին խարխարեալ, զոր թէ-
րևս ոմանց յընթերցողից տեսեալ լցէ կան-
դուն, զկայ էառ վանահայրն, և գարձաւ տե-
սանել՝ թէ գոյին ուղիկիցք իւր: Ապա մտեալ
գնայր 'ի վանս. և հասեալ անդր՝ եկայ անդրէն
առ գրան, ձնալով փոքրիկ կարաւանին: Պա-
տուէր էառ սպասաւորին դառնալ առ ինքն յետ
երկուց ժամուց՝ առնուլ պատասխանի. խոս-
տացաւ նա, և հրաժարեալ յերկոցունցն՝ որք
մատուցին նմա բաղումշնորհակալս, և յանձ-

նարարութիւնս առ Հայրն Քրիստափոր, գնաց
'ի բաց: Եմոյծ վանահայրն զԱգնէս հանգերձ
դասերաւն 'ի նախագաւիթ կաթողիկոսանին, 'ի
սենեակս անտեսուհւոյն, և ինքն մտեաւ մի-
այնակ՝ խնդրել զշնորհն: Եւ գարձաւ վայրիկ
մի յետոյ հրճուանօք, կոչելով զնոսա զհետ
իւր: Ի դէպ ժամանակի էր կոչն, զի մայրն և
դուստր չդիտեին որպէս զերծանել 'ի յոգնա-
թափանձ անլուծելի հարցուածոց անտեսուհ-
ւոյն: Անցեալ ընդ միւս և գաւիթ, էառ նոցա
վանահայրն հրահանգս՝ որպէս պարտ էր նոցա
վարել ընդ ասկնոջն, և ասէ. « Ինքը պատրաստ
է աղէկութիւն ընելու ձեզի. կընայ ալ ընել,
ուզելու որ ըլլայ: Խոնարհութեամբ ու յար-
գութեամբ խօսեցէք հետը, անկեղծութեամբ
պատասխան տուէք հարցմունքներուն. ու եր-
բոր գագրի հարցընելէն, ինձի թողուցէք »:

Մանն 'ի սենեակ ուրեք վայրապարկ, որ ա-
ծէր 'ի խօսարանն. և մինչև մտեալ անդր, վա-
նահայրն ցուցանելով նոցա զդուռն խօսարա-
նին, առ 'ի յիշեցուցանել նոցա զկրթասան, ա-
սէ. « Բանը հոս տեղն է »:

Լուչիա, որոյ չէր երբեք տեսեալ զկուսաս-
տան, 'ի մտանել 'ի խօսարանն չուրջ ածեալ
զաչս՝ տեսանէր զսիկնին, առ 'ի խնարհել մա-
տուցանել նմա յարգութիւն, ոչ զոք տեսա-
նէր անդ. և յապուշ հարեալ կայր, մինչև ե-
տես զմայրն ընդ կրօնաւորին՝ զի մտաչէին յան-
կիւն ուրեք սենեկին: Ետես յայնժամ պա-
տուհան մի նորաձև պատեալ 'ի կրկնակ եր-
կաթի վանդակաց՝ թզաւ հեռի յիրերաց, և

մայրապետ յեսկուսէ կանգնեալ։ Կերպարան նորա՝ յուշանէր զնա ամայ իբր քսան և հընգից ՚ի սկզբան անդ երևեալ գեղեցիկ. այլ Թարշամեալ գեղ նորա և գոգցես լիուն եղծեալ։ Ցօղ սեաւ ածեալ զգլխով, և ձգտեալ ուղիղ ՚ի ձագատուն, անկանէր երկուսեքէ ՚ի վայր՝ փոքր մի հեռի ՚ի գիմացն։ Ընդ քօղոյն պատէր կատարի սպիտակ զկէս ճակատուն, որ ոչ լինչ նուազ էր սպիտակ. Թեպէտ և այլազան սպիտակու-Թեամբ։ Մինս այլ կոտրի սպիտակ, խորշ զնորշնւ իջեալ ընդ այտն և ընդ ծնօտ զուլամբն ՚ի կուրծս, ծածկէր զօձիս ցփսեայ ըզդեստուն։ Խորշոմք ատեպ յաչամիջէն իբր ՚ի ցաւագին ձիմանէ չզայ անկանէին, և յօնքն սևաթոյրք երագաշարժ յիրեար մաուչէին։

Բիբքն քաջաԹուխք էր զի պչնուին ՚ի գէմս խորագնինք, և էր զի արագարագ խոնարհէին իբր ՚ի ինդիր Թագաւեան. և երբեմն որոց ուշիւն գիտէին՝ Թուէր ինդրել նշմ փոխագարձ և գորով, և այլ երբեմն Թուէր տեսողաց նըշմարել ՚ի նմա ատելուԹիւն լիուն հին նուաճեալ, և չգիտեմ որպիսի ինչ սպառնական և վայրագ։ Իսկ յորժամ անշարժ կային աչք նորա յառեալ անմոռագիր, էր կասկածել ՚ի նմա գժիամակուԹիւն լիուն արհամարհոտ, կամ անդամնուն գաղանից, և հոգս ընտանեկանս առաւել քան զբրջակայից նրոց։ Այտքն գունատեալք նշանէին ՚ի շրջածիր փափուկ և ակնահաճոյ, բայց այլայլեալ և նիհարեալ ՚ի չամր ծիւրմանէ։ ՇրԹունքն կարմրաշրԹիք և ՚ի ժժգունուԹեան իսկ անգ փայլէին. և չար-

ժուածք նոցա որպէս զաչացն էին երագունք, ամխոյժք, նշանականք և լեսխորհուրդք։ Սեաւ սարսահատակ անձամբ՝ եղծանէր զտեսիլ իւր անյարգար կերպիւն, և տգեղանայր չանկարծական անկանոն և գիւրաղատրատատ շարժմամբք, անճահաւոր կնոջ, ևս առաւել հաւատաւորի։ Ի զգեստս իսկ իւր էր ինչ չարդարուն և էր ինչ անշնորհ, չայտարար նորանչան միանձնուհւոյ։ Սպրկիկ լիուն աչխարհօրէն էր կերպ զգեցմանն. և ընդ պատանեաւ ճակատուն ընդ քունն մատն ինչ գիտակի սեաւ արատաքս երևեալ, նշանակ էր մուտացման կամ արհամարհուԹեան կանոնի կարգին՝ որ փոքրիկ հրամայէր զՀերա՝ չէտ միանգամ հերակարուԹեան ՚ի զգենուլն հանգիստս զձև միանձնական։

Ոչինչ զարմանային Աչնէս և Լուչիա ընդ այս ամենայն, ոչ գիտեալ նոցա առնել խոիր ընդ կուսան և ընդ կուսան. և վանահայրն զի ոչ այս նախկին նուագ էր տեսանելոյ նորա զտիկին, սովորեալ էր որպէս զայլս նորաձևուԹեանց չանձն և ՚ի կերպիլ նորին։

Կայր նա չայնմ վայրի, որպէս ասացաք, կանգուն չոտին չետոյ վանգակին՝ միով ձեռամբ չեց Թուղակի ՚ի նոյն, զսլսեալ մատուցան խոսնեալ ընդ խաղաղաման նորին. և պչուցեալ հայեր ՚ի Լուչիա՝ որ մատչէրն գողգողԹեամբ։ Աչխ վանահայրն խոնարհեալ, և ձեռն ՚ի կուրծս.

« Մայր պատուական, աղնիւ խաԹունիկ, ասս է ան ըսած խեղճ աղջիկս, որուն համար

յուսացուցիչ լինի հրամանքիդ պաշտպանուԹիւնը. ահա ալ անոր մայրն է »:

Երկոքին ընծայասէրքն մեծարանս բաղձան յայնժամ մատուցանելին նմա, և սիկիլին ակնարկեաց ձեռամբ դադարել, և զարձեալ առ վանահայրն ասէ. « Բախտաւոր կը սեպեմ զիս, Թէ որ կարենամ մեր սիրելի վերադարձուցը ծառայուԹիւն մը ընել: Բայց ինոքը ըրէ, աւելի յայտնի կերպով ըսելու լինի ատ օրիորդին զլուխն եկածը, որ մոռցեմ ինչ ձար կըլնայ ըլլալ »:

Շառագունեցաւ Լուչիա, և ակնկոթեաց. յայնժամ սկսաւ Ագնէս. « Մայր պատուական, պէտք է գիտնաս որ »... այլ կարձեաց վանահայրն ակնարկուԹեամբ զբանս նորա, և ասէ. « Ագնիս խաԹուն, ատ աղջիկը իմ կրօնակիցներուս մէկէն լինի յանձնուած է, ինչպէս որ ըսի հրամանքիդ, ինքը հարկաւորուեր է ծածուկ փախչիլ իր երկրէն՝ ծանր վտանգներէ խալըսելու համար. ու քիչ մը առեն համար կարօտ է ապահով տեղ մը քաշուելու, որպէս զի անծանօթ կարենայ կենալ, ու մէկը չիհամարձակի նեղել զինքը՝ երբոր իմացուի ալ »... —

« Ի՞նչ վտանգներէ, կը խնդրեմ յարգելի վանահայր, գոց մի խօսիր. գիտես որ մարդ պետերը տէրնիտէղքը կուզեն ամեն բան իմանալ »: —

« Այնտեղ վտանգներ են՝ որ մարդասպան մը մաքուր ականջին գոց կերպով ըսելու է »: —

Յայնժամ նա ոչ առանց չառագունանալոյ ՚ի վերայ էած.

« Ա՛հ, ճշմարիտ է »: Այլ պատկառանաց արգելք էին չառագունանքն: Եթէ նկատեր ոք զարագարագ ՚ի վերայ ածել նորա զայն պատասխանի, հանդերձ արհամարհանօք լիներ, կըլէր երկբայել ընդ այն. մանաւանդ ՚ի համեմատելն զայն ընդ գունոց պատկառանացոյ, որ առէպ յայտս Լուչիայ երևէին:

Պատասխանեաց վանահայրն. « Հերիք է ըսել՝ որ գոռոզ ասպետ մը... վասն զի ամեն աշխըրհիս մեծերը հրամանքիդ պէս չեն բանեցըներ Աստուծոյ ուրիշներուն աղէկութիւն ընելու... Գոռոզ ասպետ մը խել մը աս աղջկանը եռանի անվայել կերպով կ՚նայէին եղբը, սեռաւ որ ուզածը չէր յաջողիր, չամաչեց յայտնի հալածելու զինքը. ասնանկ որ խեղճը հարկաւորուեցաւ իր տունէն փախչելու »:

Յայնժամ սիկիլին միանձնուհի առ ցՂուչիա, կոչեալ զնա առ ինքն ձեռամբ. « Առաջ եկուր աղջիկ. գիտեմ որ վանահօրը ըսածը իրաւ է. բայց քեզմէն եւս չկրնար մէկը քու դլխէդ անցածը գիտնալ: Փեզի կկրնայ ըսելը՝ որ ատ ասպետին քու եռանէդ կ՚նայելը անհաճոյ էր քեզի »: Լուչիա հնազանդեալ առաջնուհին մտանի, յառաջ մատուաւ. բայց գժուարերը տակ պատասխանի երկրորդին: Հարցուած այնպէս, եթէ հաւատարիմ էս ուրուք էր արարեալ՝ չիսիթէը զնա. իսկ ՚ի բերանոյ միանձնուհւոյն չարամտուԹեան լին կերպիւ արտասանեալ, երբարձ ՚ի նմանէ զամենայն համարձակուԹիւն տալոյ պատասխանի, և Թոթովեր. « ԽաԹուն...

մայր պատուական »... և ոչ ապայր նշան ասելոյ պայ լինչ:

Աստանօր Ագնէս, որպէս սեղեկագոյն իրացն յետ դասերը իւրոյ, օրէն համարեցաւ օգնել նմա, և ասէ. « Աղիս խաթուն, կրնամ վկայել որ ան աստղեաը առելի էր աղջկանս: Ներէ աստանկ խօսելուս ան անձին վրայ. մենք բաբեմիա սորված ենք: Բանը հոն է որ աս աղջկիկը խօսք առած է կորիձի մը, որն որ մեզի պէս կրթուած առած է, Աստուածմէ կը վախնայ: Բանը աղէկ ճամբու մէջ էր, պատկուհին պիտոր, թէ որ ժողովրդապետը քիչ մը մարդկութիւն ունեցած ըլլար... այսինքն կուզեմ ըսել որ... գիտեմ որ հոգևոր հօր մը վրայ է խօսքս, բայց վանահօրը բարեկամը Հայր Բրիս ապտրոն ալ հոգևոր հայր է, բայց եղբայրասէր է. Թէ որ հոս ըլլար, ինքն ալ կը վկայեր խօսքիս »...

Ընդվզեաց միանձնուհին յաստամբ ինն և հպարտութեամբ, մինչև եղծանել գեղջ գեմաց նորա, և ասէ. « Աստանց քեզի բան մը հարցընող ըլլալու՝ պատրաստ ես խօսելու. դուն քիչ մը լուէ. մայրերը միշտ իրենք կուզեն խօսել զաւկընեընուն տեղը »:

Ագնէս վշտացեալ ընդ այն, ակնարկեաց դասերն՝ յայտ ինն առնելով, զի առ չգիտելոյ նորա խօսել՝ կրեր ինքն զայն կշտամբանս. վանահայրն ևս ակնարկեաց առ նա՝ դուն դադրեցուր զերծուցանել զմայրն'ի կրից անոի: Յայն ժամ ասէ Լուչիա.

« Մայր պատուական, ինչ որ մայրս ըսաւ, բոլորովին ճշմարտութիւն է. կարիքը՝ որ զիս կուզիր », (և ասա կարմրեցաւ օրիորդն,) « ես ալ իմ կամքս ուզեր էի զինքը. թշուառութիւն կրնես՝ թէ որ սիրեք եղած ակնածութեամբը չեմ խօսիր. բայց խօսքս անոր համար է որ, մեզ վրայ գէշ մտքի մը չերթըցուի: Իսկ ան ապտեսին, Աստուած ներէ, բայց աւելի կընտրեմ մեռնիլ, քան թէ իր ձեռքը խնայել. ուր թէ որ հրամանքդ ան ընորքը կընես՝ զիս ապահովելու, որովհետև հարկ եղաւ երեսիս սլընդայընել (Աստուածոյ կամքը օրհնեալ ըլլայ) ու նեղութիւն տալ հրամանքիդ պէս բարեբարի մը, գիտնաս որ ուրիշ մէկը չկրնար աստանկ սրտանց աղաչանք մը ընել հրամանքիդ, ինչպէս որ մենք խեղճ ողորմելիներս կընենք »:

Աստ ցնա միանձնուհին զինքնուհեալ զբարբառ իւր. « Ֆէզլի կը հաւատամ. բայց կուզեմ որ մէյմը առանձին խօսիմ հետդ. թէպէտև աւելի սեղեկութիւն մը հարկաւոր չէ, և ոչ աւելի պատճառ մը կը փնտռեմ վանահօրը ինդիրքը կատարելու »: Եւ դարձեալ 'ի վանահայրն, բարեձևութեամբ ինն ասէ. « Արդէն մտածեր եմ ընելիքս. ինծի ամեն բանէն աղէկը հիմ կուհիմայ աս կերթնայ. վանքերնուս անտեսուհին քիչ օր առաջ կարգեց իր եռքի ապջիկը. առանք կրնան կենալ անոր խուցը՝ որ հիմայ պարապ է, ու իրենք ընել ան մանրմունը ծառայութիւնները որ ինքը կընէր »... (և ասա ակնարկեաց վանահօրն մատչել 'ի վանդակ անդր, և յաւել դարձն ձայնիւ). « Իրաւ չընէ, աս տարեան բերքերը քիչ ըլլալուն հա-

մար՝ չէինք ուզեր անոր տեղը ուրիշը առնել, բայց կը խօսիմ աբբասուհիին հետ, խօսքիս չանգնիր, մանաւանդ հրամանքիդ խնամոցը հա- մար. վերջապէս բանը եղած սեպէ »:

Ականէը վանահայրն ընդհ ուներ, այլ խա- փանեաց միանձնուհին ասելով. « Քաղաքավա- րութիւն հարկաւոր չէ. ես ալ պէտք մը որ ու- նենամ, ձեղի կը դիմեմ. վերջապէս եղբայր ու քոյր չէ՞նք »: Բայց հեգնելով նմին և երդիծա- նօք ասէր զայս: Եւ ընդ բանին՝ կոչեցեալ զմի յաշխատաւոր քերոյն երկուց, որ տուեալ էին նմա ի մեծարանս յառաջնակաս սպասաւո- րութիւն, պատուէր եառնմա ազդ առնել զայս- մանէ աբբասուհւոյն, և միաբանել ընդ տնտե- սուհւոյն և ընդ Ագնեսի վասն ելոյն. և կա- լաւ առ իւր զԼուչիա, ի հրաժեշտի կացու- ցեալ և զվանահայրն: Զոգաւ վանահայրն ընդ Ագնեսի մինչև ի դուռն, և այլ ևս տուեալ նմա հրահանգս, մեկնեցաւ գնալ գրել առ Հայրն Քրիստափոր զբովանդակութիւն ելոյն, և ա- սէր յանձին ի գնալն. « Մեծ խելք, աս խա- թունին խելքը. երբա՝ նոր տեսակ կնիկ մըն է, բայց ովսր գիրքը գտնայ, ամեն բան ընել կու- տայ երեն: Հայր Քրիստափորը չէր սպասեր՝ որ ես ասանկ չօտա մը ծառայէի երեն. ինքը գործուներայ է, միշտ վրան առնելու բան մը կը գտնայ, ճար չկայ. բայց աղէկութիւն ընե- լու համար է: Աղէկ որ աս անգամ բարեկամ մը գտաւ՝ որ ձայն ձուն չհանած, առանց ի- մանալոյ, առանց չիմացուելուներ հանե- լու, բանը յաջողցուց մեկէն. գոհ կըլլայ պա-

տուական Հայրը, կիմանայ աշխոր մեր ձեռքէն ալ հոս բան կուգայ եղեր »:

Իսկ մայրապետն այն՝ որ առաջի ծերունւոյ վեղարաւորին ճգներ ի չափու ունել զբան և զգործ, ի միտն առանձին ընդ գեղջուկ և ան- փորձ օրիորդին՝ ի բաց ելդ զզգուշութիւն. և տակաւ յայնպիսի այլանդակ խօսս զառածա- ներ, զի փոխանակ պատմելոյ զայնս՝ հարկ լինի ինձ զառաջին վարս հիբին համառօտել. մա- այնչափ ինչ, որ բաւական եցէ տալ ի միտ առնուլ զնորանշան և զանխմանալի իրս՝ զորս տեսաք ի նմա, և զպատճառս առաջնակաց գնա- ցելոց նորա:

Էր նա կրասերագոյն յորդիս իշխանին... մի- լանեցւոյ ազատի, զոր մարթի էր համարել ընդ ճոխագոյնս քաղաքին: Այլ բարձրամտութիւն նորա ընդ դրուատանուն իւր՝ տայր նմա կար- ծել հաղիւ բաւական զգանձս իւր, մանաւանդ թէ պակաս քան զկարևորն առ աննուաղելի ունելոյ զշուք իւր. և զամենայն գործ գործէր, գէթ առ ի պահել որչափ ունէրն, մինչև ի սպառ: Զասէ Վինչ՝ պատմիչն՝ թէ քանի՞ որդիք էին նորա, բայց միայն ծանուցանէ՝ զի զամենայն որդիս և զդստերս իւր կրասէրս՝ սահմանեալ էր նորա ի կրօնաւորութիւն, առ ի պահել անդրանկին զամենայն մեծութիւնս իւր. որ- պէս զի կացցէ ազգատոհմին առ ի ծնանել որ- դիս ի թշուառութիւն իւր և նոցա: Էէքս այս դուստր չև ի լոյս եկեալ՝ սահմանեալ էր ի կրօնաւորութիւն. մնայր ևս գէթ սահմանել մի- անձն թէ միանձնուհի առնել զնա. ոչ գէթ

կամք նորա, այլ ծնունդ սահմանելոյ էր նմա զպայման կենաց: Ի գալ նորա 'ի լոյս՝ հայր նո-
րա, կամելով զարթուցանել 'ի նմա զպատակեր
կուսութեան, կոչեաց զնա Ձերթրուտ. և ա-
ռաջին խաղալիկք տուան նմա 'ի ձեռս պատճա-
ճապատանք 'ի ձև միանձնուհեաց. և ընդ ըն-
ծայեցս յաւելուին խրատք՝ մեծ և պատուա-
կան համարելոյ զնոսա, հարցանելով՝ Սէրո՞ն
էն, անահ չէ: Եւ յորժամ հայր նորա կամ՝մայր
կամ՝ անդրանիկն՝ որ միայն յուսատեաց մնահէր
'ի տան՝ կամելն գովել զդէղատեսիլ գաղթիկն,
չգիտանէին նմին այլ անուն գտանել՝ բայց կոչել
զնա աքբասահ: Այլ ոչ ոք ասէր յայտնապէս՝
Թէ պարտ էր նմա նուիրիլ 'ի կուսութիւն.
լռելեայն և իբր ըստ դիպուածոյ լինելին բանք,
'ի լինել խօսիլ զզարգացմանէ հասակի նորա:
Եւ յորժամ մանկիկն Ձերթրուտիկ անսա-
սէր՝ 'ի բնէ ունելով բերումն յայն, ասէին
ցնա. « Դուն դեռ պզտիկ ես, աս կերպը հե-
մայ չըլլար քեզի. աբբասուհի որ ըլլաս, ան
ատենը կը հրամիես, կը չէխես, կը ծեծես,
վանքը տակնուվրայ կընես »: Եւ այլ երբեմն
հայր նորա իշխանն յանդիմանելով զնա վասն
համարձակ և կարի ընտանեբար գնացելոյն՝ յոր
նոյնպէս էր դիւրամիտ, ասէր. « Է՛, է՛. աս
կերպը քեզի չվայլեր. Թէ որ կուզես օր մը
ակնածելի ըլլալ, պէտք է հիմակուց սորվիս
հասակեդ վեր ըլլալ. չիշե որ օր մը ամենէն վեր
պիտի ըլլաս վանքին մէջ. վասն զի մարգս իր
պաշտօնականութիւնը հեռը պիտոր տանի տեղ »:

Ամենայն այսպիսի բանք՝ տղաբարբիկն 'ի միտս
մանկանն՝ զի հասանէր նմա կրօնաւորել. այլ
բանք հօրն ազդէին 'ի նա առաւել քան զայլ-
սոյն ամենեցուն միանգամայն: Տիրաբար խըս-
կիւ վարէր նա ընդ որդիս իւր. և ուր բանք
էին զպպզպջալ կենաց նոցա, դէմք իւր և բանք
էին պատգամք վճռականք, որ ազդէին հրա-
ման անհրաժեշտ:

Ի վեցամեայ հասակի տուաւ գաղթիկն 'ի
դասախարակութիւն, մանաւանդ Թէ՝ 'ի վարժս
կրօնաւորական կոչման, հրամայելոյ 'ի վանս՝
ուր տեսաքն զնա, և ընթերութիւն վանից 'ի
կրթութիւն չեղև վայրապար: Խորհրդականն
Ադենէսն և դասեր նորա ասէր զՀօրէ Ձերթրու-
տայ՝ Թէ էր առաջին 'ի Մոնցա. արդ համեմա-
տելով զայս որպիսի և իսկ վկայութիւն ընդ
բանս ինչ անանուն պատմագրին՝ զորս անզգու-
շաբար ատ անդ ներկ իւրումն գրչի, կարելիք
ասել՝ զի էր նա և վճռակակաչ է բկրին: Իսկ այս
որպէս և է, այլ հրամայէր նա 'ի Մոնցա, և
խորհեցաւ՝ զի 'ի վանս անդ քան զայլ ամենայն
ուրեք ինամով և պատուով և ամենայն գգուա-
նօք ունելին զգուսաքն, որպէս զի ընթերասցէ նա
զվանս իւրեանց 'ի մշտնջենաւոր բնակութիւն:
Եւ ոչ վրիպեցաւ տեսութիւն իշխանին. զի ար-
բասուհին և ձեռնհասքն՝ 'ի կուսանաց անտի՝
յորոց 'ի ձեռս էր ուղղեակ մենաստանին, իբրև
դացին ընդ ընծայեալն գրաւական պաշտպա-
նութեան՝ որ կարևորն էր ինքեանց յամենայն
դէպս, և 'ի փուռս վանացն յամենայն ժամա-
նակի. և ընկալեալ զառաջարկութիւնն չնոր-

հակալէօք, լցին զակնկալութիւն իշխանին՝ զոր ցուցեալն էր ՚ի յանձնել նոցա զգաւրին, և որ ամենեւին համաձայնն էր ընդ իւրեանց։

Ձերթըօտա ընդ մտանելն ՚ի կուսաստան անդր՝ կոչեցաւ յարանուանաբար Տիդո. և ՚ի սեղանատան և ՚ի ննջարանի սահմանեցաւ նմա տեղի պատուական, և տուաւ նա յօրինակ այլոց կուսանաց։ Յաճախէին նմա քաղցրաւենիք և դգեստք և մեծարանք, հանդերձ ընտանութեամբ, որ գրաւէին զսիրտ մանկան ՚ի տեսանել զիշխանաբար գնացս մեծաւորաց ընդ այլ մանկան։ Իբր ոչ էթէ համախոհք էին ամենայն կուսանք ըմբռնելոյ զերկնելին յորդայթ. զի էին ՚ի նոսա և անկեղծք յոգւոյն, քաջ ՚ի բաց յամենայն հնարից չարաց, և գարշէին ՚ի խորհրդոց իսկ զրահելոյ զդստրին ցանկութեան չահուց։ Այլ ոտքս ամենեքեան պարապեալք ՚ի գործս իւրաքանչիւր, հեսք զիմանային զընթենգն, այլք ոչ ՚ի միս առնուին զջարութիւն իւրացն, հեսք զդուշանային ՚ի գաւելոյ, այլք լուռ եթէ կային՝ առ ՚ի չտալոյ գայթակղութիւն անօգուտ։ Էին և՝ որոց յուշ ածեալ զհանգոյն հնարս՝ որովք ինքեանք ևս ձգեալ էին ՚ի կուսաստան անդր և ապա սորջացեալ, կարճկից լինէին ընդ անմեղին, և սխալահաւն գործեանօք սիրտ էին զսիրտս իւրեանց։ այլ սոքա ևս ոչ կասկածէին նենդ ինչ ՚ի նեքին, և յառաջ խաղայր գործն անխափան. Թերևս և յաջողէր միշ ՚ի սպառ, եթէ նա միայն էր ՚ի կուսաստանին սան։

Բայց էին անդ ընդ իւր ՚ի գաւտխարակուսութեան աղջկունք հարմացուք, առ որս հրամայաբար խօսէր նա վարժեալ ՚ի բարձրամտութիւն որպէս հանդերձեալ աբբասուհի և տիրուհի մենաստանին. կամէր ամենայն իրօք լինել նոցա նախանձելի, և զարմանայր և դժկամակէր ընդ անսասեալ ոմանց ՚ի նոցանէ։ Զի առարկէին նոքա ընդդէմ վեր ՚ի վերոյ սին և անղօր իշխանութեան վանտոր զպէսպէս և զանխոխիտ փայլմունս հարսանեաց, զկոչունս, զերեկորեայ ակմբահոյլ ժողովս, զգիւղային զբօսանս, զսպասահարկուս, զհանդերձս մեծագինս և զկառս։ Պատկերքս այսոքիկ լինէին ՚ի միտս ձերթըօտայ, որպէս սակաւ մի դաւլոր ծաղկամբք եդեալ առաջի փեթակի մեղուաց։ Ընտանիք նորա և գաստիարակք տածեալ էին ՚ի նմա զընդաբոյս իշխանասիրութիւն նորա, առ ՚ի հաճոյ առնել նմա զվանս. և յարծարծանել սիրոյն ՚ի նմա զհամբոյս, կանագոյն կերպս, առաւելագոյն ըղձիւք և եռանգեամբ յարեցաւ ՚ի նոսա։

Այլ զի մի Թուեսցի յաղթահարեալ ՚ի բանից անոի ընկերացն, զինքանելով՝միանգամայն ՚ի նորագտից բերուածն իւր, ասէր ցնոսա.

« Բայց եթէ քաջք չկրնայ մեկը մարապետի լաչակը գլուխս անցընել առանց իմ հաւանութեանս. երբոր ուզեմ կարգուիլ, պալատի մէջ բնակիլ, աշխարք վայելել, իմ ձեռքս է. ամենէն ալ եւս կրնամ, թէ որ ուզեմ կուզեմ ալ»։ որպէս և կամէր իսկ իրօք։

Խորհուրդ կարևորութեան հաւանութեան իւրոյ՝ որ ցայնվայր որպէս թէ նիրհեալ էր ՚ի

նմա և յանկեան ուրեք մոացն ծածկեալ, զար-
թեաւ յայնժամ և ՚ի վեր երևեցաւ ամենայն
զօրութեամբն. յերկնէրն իսկ զայն յար ՚ի մուխ,
վայելել խաղաղութեամբ ՚ի պատկեր ախորժ
ասացուածոյ: Զհետ այսր պատկերի միւս այլ
յանգիման լինէր մոացն անվնաս, ժխտելոյ
զհատանուիթիւնն զայն առ հայր իւր, ուր սա
որպէս ՚ի ձեռին ունէր զայն, և որպէս ընկա-
լեալ յայտ առնէր: Ի խորհել զայս օրիորդին՝
հեռի յոյժ գտանէր ՚ի սուտգութենէն, յոր
պանծային բանիւք. համեմատէր յայնժամ
զանձն ընդ ընկերս իւր՝ որ վատահէն ընդ
բախտ իւրեանց, և նախանձէր ընդ նոսա վըշ-
տագին՝ որ յառաջն կարծէր լինել նոցա նա-
խանձելի, և առ նախանձուն առեալր զնոսա.
և առելութիւնն այն մերթ ՚ի թշնամանս, մերթ
՚ի տմարդութիւն, և մերթ ՚ի դառն երդե-
ծանս զառածանէր: Էր ղն նմանակցութիւն
յօժարութեանց և յուսոյ՝ թմբրեցուցանէր
զառելութիւն, և ծնուցանէր ՚ի նմա մուրթ-
մութիւն իմն վեր ՚ի վերոյ և հարևանցի. և էր
ղի առ ՚ի վայելել ինչ առ ժամն՝ բերկրեր ընդ
նախատպատուութիւնս՝ որ ընդհարէին նմա, և
պարծէր զայնցանէ առ այլս: Էր և երբեմն՝ ղի
ոչ կարելով տանել միայնութեան և երկիւղի
և ըղձից, խնդարհէր գնայր ՚ի խնդիր ընկե-
րացն՝ ընդունել ՚ի նոցանէ մուերմութիւն,
խորհուրդ, և քաջալերս:

Յողբալի ձգտումս յայսոսիկ ընդ անձին և ընդ
այլս՝ անցոյց նա զմանկութիւն իւր. և յառաջ
խաղայր ՚ի հասակն բազմավաստակ, յորում

թուի յաւելուլ ՚ի հոգւոջ անխմանալի ինն կա-
րողութիւն՝ որ ամբառնայ և կազդուրէ զամե-
նայն յօժարութիւնս և զևսորհուրդս, և երբ-
եմն յեղափոխէ և շրջէ զայնոսիկ ՚ի յեղա-
կարծ ասպարէզ: Ձերթիրսա միշէ ցայնվայր
յերազս ապագայիցն՝ տարփայր առաւելապէս
արտաքին փայլմանն և պերճանաց, և անթարգ-
մանելի ինն գորովոյ և խանդաղատանաց՝ որ ՚ի
սկզբան անդ ծաւալեալ ՚ի նմա որպէս ՚ի միջի,
սկսաւ ապա ՚ի վեր երևել և յաղթանակել ՚ի
միտս նորա: Յօրինեալ էր նորա ՚ի խորս սրտին
շքեղ մեհեան, ուր մեկնեալ ՚ի մերձակայից
իրաց՝ ընդունէր զերևելեաց ոմանց պատկերս,
նորաձև ինն կազմեալս յաղօտ լուշատակս
մանկութեան իւրոյ ՚ի սակաւուց անտի տեսե-
լոց յաչխարհն, և յայնցանէ զորս ՚ի խօսից ըն-
կերացն էր ուսեալ. կենակիցէր անդ ընդ նոսա,
անձամբ անձին ՚ի գիմաց նոցա տայր պատաս-
խանի. հրամայէր անդ, և ընդունէր սպաս մե-
ծարանաց: Երբեք երբեք գառնայեն ՚ի միտս
նորա կրօնք, խռովել զղայծառ և զուարճանա-
լուր հանդէսս. բայց կրօնք, որպիսի ուսուցեալ
էին հիքին, և որպէս ինքն ընկալեալ էր. կրօնք,
որ ոչ ՚ի բաց մերժէր զդառոզութիւն, այլ մա-
նաւանդ սրբազանէր զայն, և առնէր գործի
երկրաւոր երջանկութեան. որ զրկեալ յերա-
թեւեն՝ ոչ ևս էր կրօն, այլ սին երևոյթ: Ի վայր-
կեանս, յորս առաւերն այն կրօնից զրանայր
՚ի միտս նորա և յաղթանակէր, խռովեալ եղ-
կելին ՚ի խառն ՚ի խուռն արհաւրաց, և տղմըկ-
եալ ՚ի խորհրդոց պարտեաց, համարէր իւր

'ի մեղս զգժամակուԹիւն կրօնաւորելոյ. և զանսասուԹիւն ընդդէմ յորդորանաց ծնողացն յընտրուԹիւն կուսական կենաց, և խոստանայր 'ի սրտի յանձն առնուլ կամակոր ըզկրօնաւորուԹիւն:

Օրէնք էին ընդունել զօրիորդ յոմեից կուսուԹեան, չև քննեալ զմիտս նորա ուրուք յեկեղեցականաց՝ որ կոչէր վերատեսուչ կուսաստանաց, առ 'ի գիտել հաւաստեաւ զպատճառն ընտրուԹիւն կամաց նորա. և քննուԹեանն էր օրէն կանխել քան զամ մի՝ յետ յայտնելոյ նորա վերատեսչին զիղձս իւր ազերսագրով: Այնոքիկ 'ի կուսանաց՝ որոց յանձն առեալ էր ըզդժուարին պաշտօնն յորդորելոյ զձերԹուԹս 'ի պարտս մշտնջենաւոր կուսուԹեան, պատեհ առնն զմի 'ի վայրկենիցս ասացելոյ՝ առ 'ի տալ նմա օրինակել և ստուգագրել զպատճառսն, ոչ Թողեալ նմա պարապ գիտելոյ զոր առնէրն: Մանաւանդ առ 'ի դիւրաւ համոզել զնա, յեղյեղն զմի ձև ինչ Թարմաւոր էր այն (որպէս և էրն իսկապէս), և ոչ զօրէր լինչ առանց ուխտի՝ որ 'ի կամն նորա էր: Այսու ամենայնիւ մինչ չև էր հասեալ ազերսագիրն 'ի ձեռս վերատեսչին, սարջացաւ օրիորդն ընդ ձեռնարկ իւր յայն. և ապա գարձեալ զղջայր ընդ սորըն Քանս իւր, անցուցանելով զաւուրս և զամիս 'ի ներհակակիր յայս յեղաշրջուԹիւն:

Ծածկեաց և յընկերաց իւրոց ընդերկար զոր արարն, մերթ առ ակն արկանելոյ 'ի վրտանդ ընդդիմաբանուԹեանց զբարւոք առաջադրուԹիւնն, և մերթ առ ամօԹոյ 'ի յայտնել զվրիպակն: ՅաղԹեաց ապա իղձ սիրտուԹեան սրտի, 'ի խնդիր խորհրդոյ և քաջալերուԹեան: Հրամայէին միս այլ օրինք, չբնդունել զօրիորդ 'ի քննուԹիւն կուսական կոչման, առանց կալոյ նորա ամսօրեայ մի ժամանակ արտաքոյ կուսաստանին՝ յորում դաժնախարակէրն: Վաղ իսկ լցեալ էր ամ յետ տալոյ նորա զաղերսագիրն, և աղդ եղև ձերԹուԹոյ՝ զի ընդ հուպ պարտ էր նմա դառնալ 'ի տուն հայրենի, կալ անդ զամիան զայն, առ 'ի կատարել զամենայն կարևորս 'ի լրումն գործոյն՝ զոր սկսեալն էր: Իշխանն և ընտանիք նորա հաւասարն համարէին զնորն, և որպէս վաղ իսկ կատարեալ այլօրսաբ էին ամենևին խորհուրդք օրիորդին. զի փոխանակ յառաջադէմ առնոյց զքայլ, խորհէր նա զառեալն ընկրկել: Յայսպիսում անձկուԹեան սրտի՝ խորհուրդ կալաւ յայտնել զվիրս իւր միամ յընկերացն, որ համարձակագոյնն էր և պատրաստ տալոյ նմա միշտ խորհուրդս անեղկմիտս: Սա խրատեաց զձերԹուԹս՝ գրել առ հայր իւր զփոփոխումն մտաց իւրոց, քանզի չհամարձակէր յայտ յանդիման և արիաբար ասել վախմ: Յօրինեցաւ գիրն խորհրդով ջորից կամ հնգից մտերմուԹեաց, գրեցաւ գաղտ, յղեցաւ ճարտար հնարիւք. և սպասէր ձերԹուԹս անձկուԹեամբ մեծաւ պատասխանւոյ, զոր չէղև երբեք նմա ընդունել: Այլ յետ աւուրց ինչ գալեաց գնա աբբասուհին 'ի սենեակ իւր, և եզանակաւ լինն գաղտնուԹեան դժամակուԹեան և կարեկցուԹեան՝ զեկոյց նմա խրԹնա-

բանուԹեամբ զծանրացաւուածն զայրոյԹ հօրն ընդ վրիպակ ինչ անշուշտ գործեալ ՚ի նմանէ. սակայն քաջայոյս զնա առնելով զի ամենայն ինչ ՚ի մուտացնու անկանէր ՚ի զգօնանալ նորին: Խեղամուտ եղև օրիորդն, և ոչ ևս յաղնուհետև խնդրեաց ինչ:

Եկն ետաս յետոյ ուրեմն օրն երկիւղալի և անձկալի. և ԹԷպկէտ գիտէր ՁերԹրուա՝ զի գնայր ՚ի պատերազմ, սակայն ելանել ՚ի մեծատանէն, մեկնել ՚ի չըջապատէ՝ ուր զամն ուԹ վտակեալ կայր, սրանալ կառաք ընդ դաշտ արձակ, տեսանել վերստին զքաղաքն և զտուն հայրենի, աղաչելն ՚ի նա ուրախուԹիւն լինն ալմկալից: Խորհրդակցեալ էր եղկելացն ընդ մեծերիմն իւր վասն առաջիկայ մարտին, և պատրաստեալ որ ինչ լինցի տեսանել ընդ հուպ. խորհէր ՚ի մտի, և ասէր. « Կամ պիտոր սակաւն զնա, ամուր կը կենամ. խոնարհուԹիւն ու յարգուԹիւն, որչափ որ կուզեն. բայց հաւատ նուԹեան չըսպասեն. ջանան պիտոր հա մը ըսել տալ ինծի, չեմ ըսեր. և կամ անուշուԹեամբ ուզեն պիտոր զնս համոզել, ես ալ իրենցմէ եւեթ անուշուԹեամբ գէմ կը կենամ: կուլամ, կաղաչեմ, սիրաբերնին կը շարժեմ. վերջապէս ուզածս ուրիշ բան պիտոր չըլլայ իրենցմէն, բայց զնս չիզոհեմ»:

Սակայն որպէս յաճախ յայտնիսի գուշակուԹիւնս պատահէ, ոչ մին և ոչ միւսն գէպ եղև: Անցանէին աւուրքն, և չասէր ինչ հայրն զաղերսագրէն. և ոչ առաջարկուԹիւն ինչ լինէր նմա, ոչ գգուանօք, և ոչ սպառնալեօք.

Ընտանիքն կայէին լուրջ և տխուր և խոժոռ ընդ նմա, առանց զնմանէն յայտ առնելոյ. բայց միայն երևէր յայտնապէս՝ զի յանցաւոր հանդրէին զնա և անարժան: Որպէս բանադրեալ ոք զատուցեալ կայր ՚ի տան, այնչափ ևեԹ հաղորդէին ընդ նմա ընտանիքն, որչափ կարևոր էր առ ՚ի զգայուցանել նմա զպարտս հպատակուԹեան: Դուն ուրեք ՚ի սահմանեալ ժամ օրէն էր նմա երևել առ ծնողս իւր, և առ անդրանիկն եղբայր: Երևէր յերեսին ՚ի նոսա համախոհուԹիւն լինի, որ զգալի և առնէր նմա զմերժուԹիւն իւր. ոչ ոք խօսէր ընդ նմա. և ՚ի համարձակել նորա ասել ինչ, եԹէ չէր այն կարևոր, ոչ ոք լսէր, ոչ ոք տայր պատասխանի, բայց արհամարհանօք և խոսիւ՝ առանց հայեցոյ ՚ի դէմս նորա: Իսկ եԹէ ինքն, ոչ կարեցեալ տանել այսպիսեմ դառն անարգուԹեան՝ ընդելանէր խնդրել ՚ի նոցանէ գուԹ և սէր, անդէն ՚ի մէջ գայլին բանք պատ ՚ի պատք՝ այլ քաջայայտք զկոչմանէն. տայլն նմա ծածկատվէս ՚ի միտ առնուլ, զի միակ հնար այն էր գառնալոյ ՚ի շնորհս ընտանեացն: Իսկ նա, զի ոչ կամէր այնու պայմանաւ գտանել շնորհս առ նոսա, սակայն կալ ՚ի բաց, մերժել անդէն զսիրելուԹիւն նոցա՝ որոմ ցանկայն, և գառնալ ՚ի տեղի բանադրանացն՝ կալ մնալ անդ որպէս յանցաւոր:

Այս ամենայն վշտակրուԹիւնք էին հակառակ ամենևին զուարԹ երազոյն, զոր էսես նա և տեսանէր տակաւին ՚ի միտս իւր: Ցուսայր գտանել ՚ի հայրենի չքեղ ապարանս ՚ի

յաճախութեան եկաւորաց ճաշակ ինչ վայե-
լէից, յորս խորհէրն. այլ 'ի գերև եղեն խոր-
հուրդք իւր. անձուկ և անլուծանելի էր փա-
կարանն, որպէս 'ի մենաստանին. զեանեալոյ 'ի
ձեմ և ոչ բանք լինէին. վերնատուն՝ որ հայէր
'ի տանէ յեկեղեցին առընթերակայ՝ բառնայր
զկարի եղանելոյ արտաքս: Ընկերութիւն տըխ-
րագոյն էր անդ քան 'ի մենաստանին, սակա-
ւաւոր և անփոփոխ. 'ի բաղխել դրանն յեկա-
ւորաց, պարտ էր նմա եղանել 'ի վերնայարկ
տանն, կալ ընդ աղախնայս պառաւուննս, ուր
և ճաշէրն յորժամ կոչունք լինէին 'ի տան:
Սպասաւորք ևս միաբանէին 'ի խօսս՝ և 'ի գը-
նացս օրինակի և հաճոյիչ սերանցն. և օրիորդն,
որ քնաւորական բերմամբ կամեր վարել ընդ
նոսա սիրաբար ընտանութեամբ, և 'ի հանգա-
մանս՝ յորում գտանէր՝ ընդրկս լինն համարեր
ընդունել 'ի նոցանէ կարեկցութիւն որպէս
ընդ ծառայակից, և զկնէրն իսկ 'ի մոռանալ
զայն, վշտանայր ընդ յայտնի արհամարհանս
նոցա, թէպէտ և հանդերձ արտաքին սպասա-
հարկութեամբ: Բայց մի 'ի մանկանց սպասա-
ւորաց այլազգ 'ի նոցանէ մեծարեր զնա, և
կարեկից լինէր ընդ նմա, և ձերթուրս նկա-
տեր 'ի մանկանն նմանութիւն լինն ընդ սե-
սեալն 'ի ցնորս անդ մտաց: Բայց սակաւ 'ի
վեր երևէր էդիտեմ որպիսի ինչ նորանշան խա-
զաղութիւն յօրիորդն, և անձկութիւն այլազգ
յընդելականէն, և կերպ այնպիսի որպէս թէ
պահել զինդրելին, և կամելով պահել զայն
անկորուստ՝ անտես յայլոց: Դէպք 'ի վերայ

նորա հայցուցան. և մի յայսմիկանցն 'ի միում
աւուրց առաւօտու եռես զի ծալէր նա ձեռամբ
Թերթ մի, յորում լսել էր նորա գրեալ ինչ:
Ոչ ընդ երկար հետաքննութեամբ էանց գիրն
'ի ձեռս աղախնոյն, և եհաս առ իշխանն:

Զսարսափ ձերթերուցայ 'ի լուր ոտնաձայնի
հօրն, ոչ է մարթ բանիւ բացատրել, և ոչ պատ-
կերել 'ի մտի: Էր հայր նորա բորբոքեալ 'ի
զայրոյթ, և ինքն առաջի նորա մեղապարտ. և
իբրև եռես զնա գժնեգադէմ, և զգիրն զայն 'ի
ձեռին, ցանկայր 'ի խորս երկրի սուզանել,
Թող Թէ 'ի մենաստան: Հակիրճ եղեն հօրն
բանք, այլ ահագինք. վեհակեցաւ նա առ ժամն
'ի սենեկի, ընդ պահպանութեամբ հնոյն լըռ-
ութեան. այլ սիկղբն էր այս պատուհասին՝ որ 'ի
վերայ հայր անցայտ, վասն որոյ և առաւել սա-
հարիւր:

Սպասաւորն խոհոյն 'ի բաց արձակեցաւ, որ-
պէս պարտ իսկ էր, սպառնացեալ ահաւորա-
գոյն պատուհաս, եթէ իշխեր 'ի վեր հանել
զիրան: Յարձակիչն զնա 'ի բաց՝ եհասե նմա իշ-
խանն սպառակս երկուս ուժգինս առ յոտըն
կապելոյ նմա զգանցանն, և բառնալոյ 'ի նմա-
նէ զվտանգ պանծալոյ ընդ այն: Ոչ ինչ գժուա-
բեն էր գտանել պատճառանս առ 'ի պատրուա-
կել զարձակումն սպասաւորի 'ի բաց. իսկ ըզ-
գտաերէն լուր հանուս, զի հիւանդացեալ էր:

Եկաց մնաց նա անդ սրտաւորմամբ, ամենա-
պարտ, հարեալ 'ի խղճէ, յահի և յերկիւղէ
յերեսաց սպառնացելոյ պատուհասին, ընդ
հնոյն միայնում՝ որ առեալն էր նմա որպէս

վկայ յանցանացն իւրոց, և առնէր ապէսիցին՝ Աստեայր և նա փոխարէն ղձերթուստ, զի վասն նորա արգելեալ կայր անդ՝ առանց դիտելոյ մինչև ցերբ՝ ի տալակալն պաշտամանն, որպէս բանտապան և աւանդապահ վտանգաւոր գաղտնեացն մինչ՝ ի սպառ։

Աղմուկն նախկին իսուն՝ ի խուռն կրից՝ զիջանէր տակաւ՝ ի սիրտ ձերթուստայ. այլ տակաւ մի ըստ միջոյ դարձ ապաթեալ՝ ի միտս նորա, առաւարանային և զկայ առնուին՝ առ՝ ի տանջել զնա պարապով։ Զինչ արգելօք սպառնացեալն այն էր անյայտ պատուհաս. յոգումնք և զանազանք և գժնեայք երևութանային յեռանդուն և յանփորձ միտս նորա. որ առաւել հատանէր զին Թուէր նմա, էր գառնալ՝ ի կուսաստան անդր՝ ի Մոնցա, ոչ ևս որպէս ասկին, այլ որպէս յանցաւոր, և արգելեալ մնալ անդ՝ մինչև ցերբ, և յորպիսի հանգամանս. այլ առաւել քան զամենայն ինչ վշտալի նմա էր ամօթն։ Բանք և բառք և առորակէտք Թշուառ Թղթոյն այնորիկ գառնային՝ ի միտս իւր, և կշռադատէր այնոցիկ յանակնկալն վերծանողէ՝ այլազգ ամենևին յիմասակ գրչին. զմտաւ ածէր՝ զի և՝ ի ձեռս մերն և եղբօր հասանէր այն, և այլոց ևս՝ ո գիտէ որոյ. և առ այսոքիւք ամենայն չարիք Թուէրին նմա ոչ ինչ։

Միակ ապաստան խռովարարէտ և արդոյ երևէր նմա յոյնժամ կուսաստանն, ՝ի մտանել իւր անդր անմեկնելի. և ՝ի հաստատել իւրում յայս խորհուրդ, ոչ ինչ յերկուանայր ընդ յաջողութիւն ամենայնի, ընդ լսումն պար-

տուց իւրոց, և ընդ կերպարանափոխ լինել հանգամանաց անձին։ Չակառակ այսմ էանէին արգելօք խորհուրդք ամենայն կենաց իւրոց. այլ յերկարափոխեալ էր ժամանակն, և ՝ի խորս ուր անկեալն էր, և առ սպառնալեաց երկիւղին՝ զոր կրէր, քաղցր Թուէր նմա կեանք միայնական՝ յորում մեծարէին և հրամայէր։ Զդացմունք կրկին ներհակակիրք երբեք երբեք ամբքէին զառաջին գժկամակութիւն իւր ընդ այն. էր զի խիղճ յանցանացն, և եռանդն կրօնից, և էր զի գոռոզութիւն գառնացեալ՝ ի գնացից բանտապահին, որ ՝ի նմանէ իսկ գերգաւել վկայիցն լինէր, մերթ ահացուցանելով զնա սպառնալեօք պատուհասին, և մերթ յամեմ առնելով զնա յանցանացն։ Եւ ՝ի վերջին իսկ ընդ նմա մարգասիրագին, բերէր յանձին եղանակ իմն պաշտպանութեան չարագործն քան զիջնամանս։ Յայսպիսի այլ և այլ դէպս, յորս ձերթուստ ցանկայր զերծանել ՝ի ձեռաց նորա, և գեր ՝ի վերոյ կալ ցասման և գթոյ նորա, այնպէս վառեալ բորբոքէր ՝ի սրտի իւրում ցանկութիւնն այն, զի նախամեծար առնէր զանձնայն առ՝ ի հասանել ցանկալոյն։

Ցեա չորից կամ հնգից երկարատև աւուրց բանտարգելութեանն, ՝ի միում առաւօտուց տաղտկացեալ և գառնացեալ ընդ նոյնպիսի կինչ հակառակութիւն բանտապահին, մեկնեցաւ յանկիւն ուրեք սենեկին, և ծածկեալ զդէմս իւր ձեռօք, մինչդեռ կայր ՝ի սթափել զղայրոյթ իւր, զդաց հարկ անհրաժեշտ տե-

սանելոյ այլ դէմս, լսելոյ այլ բարբառ, և այլ ազգ ընդունելոյ ապաստաւորութիւն: Խորհեցաւ գնալ առ հայր իւր և առ ընտանիս. այլ միտք իւր ընկրկէին սոսկացեալ. ուշ՝ի կուրծս անկեալ՝ ալ՝ի կամն իւր էր դառնալ՝ի նոսա բաբելեամս, զուարթացաւ յանկարծ. և յետ այսր աղմկի հարաւ՝ի զեղջ անհնարին ընդ վըխ պակ իւր, վառեալ՝ի հանդոյն լինն լոյս քաւելոյ զոյն: Իբր ոչ եթէ հաստատուն ինչ էր առաջադրութիւն նորա, այլ ոչ երբեք այնու ևս ռանդեամբ շարժեալ էին կամք իւր յայն: Յաբեաւ մատեաւ՝ի գրասեղան անդր, հառ՝ի ձեռս զգրիչն ալնաաբեր, և գրեաց առ հայր իւր գիր՝ի խորոց սրտէ տորքանաք արտմութեամբ և յուսով՝ խնդրելով զթողութիւն, և՝ի վերանս տաբակուսին՝ ցուցանելով զանձն պատրաստ՝ի հաճոյս նորին:

ԳԼՈՒԽ Ժ.

Երբեմն զի սիրտ մարդոյ, մանաւանդ մանկտւոյ, դառնի յօժար առ ամենայն ինչ որ Թուի բարի, որպէս ծաղիկ դեռափթիթ՝ի տակաւ ծիլ իւր Թուլակի խոնարհեալ՝ տայ ըզբուրումն առ նախկին չունչ օդոյն՝ որ զիւրև փարի: Զայս վայրկեան, զոր այլք յարգեն զարմացմամբ, շահախնդիր խորագիտութիւն առնու՝ի պատեհ դերելոյ զանգգոյշ կամս:

Յընթեռնուլ եչխանին զգիրն զայն, էգիտ խրատատ՝ի մուտս, առ՝ի կատարել զչին և զանյողդողդ խորհուրդս իւր: Յղեաց առ դուստրն՝ գալ առ ինքն, և պատրաստէր՝ ծեծել մինչդեռ տաքն էր զերկաթ: Եկն ձերթրուտ, և առանց առնլոյ զաչս՝ի վեր՝ անկաւ՝ի ծունկս առաջի հօրն, և հաշիւ կարաց տալ՝ բողոքիւն: Ակնարկեաց հայրն՝ յոտն կալ, այլ ոչ՝ի ձև քաջալերելոյ զդուստրն, և ասէ.

« Թողութիւն խնդրելը հեղինք չէ. գիւրին ու բնական է յանցաւորի մը՝ որ պատժուելին կը վախնայ. պէտք է արժանի ըլլալ Թողութեան »:

Ասէ դուստրն խանարհութեամբ և դողալով. « Ինչ կը հրամայես »:

Իշխանն, զի ոչ ներէ սիրա իմ կոչել զնա աստ հայր, չէտ առ հարցուածն պատասխանեն, այլ յանդիմանէր զանցուածն նորա. և մորմոքեցուցանէր զսիրտ հնչելն, որպէս թէ բիրտ ձեռամբ ոք զվէրս չոչափիցէ, և յաւել. « Թէ որ միտք ալ ունեցած ըլլայի զքեզ կարգելէ, արդեօք մը դրիր՝ որ ասկէց ետքը կարելի չէ. վասն զի իր պատիւը գիտցող ասպետ մը սիրտ չընէր պատուաւոր անձի մը տալ աղջիկ մը, որ ատ փորձը տուած է »:

Ընդ գեանն մնանէր աղջկնն յամեհեղ. յայն ժամ իշխանն ամբարեալ անագան ուրեմն զձայն իւր և զբարբառ, ասէ.

« Ինչ որ է, ամեն սխալանաց դեղը կայ. քուկինդ ան սխալներէն է, որոնց դեղը յայտնի է. աս ցաւալի գիտուածոյը սորվեցար՝ որ աշխարքս քեզի համար վտանգաւոր է »... —

« Այո, այո ». հառաչեաց Ճերթրուտա յերկիւղէ և յամեհեղ, և՝ի յանկարծակի փըղձկմանէ: —

« Դուն ալ կիմանաս », ՚ի վերայ էած իշխանն. « Այղկ է, ասկէց ետքը անցած գացածնին վրայ չխօսինք, ամեն բան մոռցուի: Մէկ հատիկ պատուաւոր ճամբան սա է, քեզի յարմար. և որովհետև քու կամքդ կընարես քու վիճակդ, ինծի կվայնայ անուշցընել քեզի անիկայ ամեն կերպով՝ ինծի կվայնայ պատիւն ալ՝ արդիւնքն ալ բոլոր քուկդ ընել. իմ վրաս Թող տուր »:

Ջայս ասացեալ, եհար զղանգիկն՝ որ կայր՚ի վերայ գրասեղանոյն, և՚ի գալ սպասաւորին, պատուէր ետ կոչել զիշխանուհին և զանդրանիկն, և յառաջ ածեալ զբանս իւր առ դուստրն, ասէ.

« Թող գան, մանուկիկ ըլլան մեղմասրտեան. Թող ամենքը սկսին ասկէց ետքը ապահով վարուիլ հետդ ինչպես որ կը վայլէ. հօրդ խաոտութիւնը փորձեցիր, ասկէց ետքը իր սէրը պիտոյ փորձես »:

Ի լուր բանիցս այսոցիկ յապուշ հարաւ աղջկնն. էր զի խորհէր Թէ որպէս այն այն սահեալ՚ի չըթանց՝ այնչափ նշանակել կարէր. և էր զի խորհէր հնարս նահանջելոյ զոյն, և սեղմելոյ զնմանս նորին. այլ իշխանին համոզուածն այնպէս Թուէր լինուլ, այնպէս խնդրութիւն նորա նախանձալից, և քաղցրութիւն նորա պայմանաւոր, զի չէշնեաց և ոչ ասել ինչ՝ որ կարելոյ խոտվել զնա:

Վայրկի մի յետոյ եկին կոչեցեալքն, և առեալ զՃերթրուտա՝ հայեին՚ի դէմս նորա զարմացեալ և տարակուսեալ. այլ իշխանն զուարթ և սիրալիր դիմօք, որ և զնոսա յորդորէր՚ի նոյն, ասէ.

« Տեսէք մոլորած ոչխարը, ասկից ետքն խօսքս ըլլայ՝ յիշելու անցած գացած տխուր բաները: Ճերթրուտը ասկէ ետքը խորհուրդի

չիկարօսիր. ինչ որ մենք իր բարեյոյն համար կը բաղձայինք, ինքը իր կամքը կուզէ. իմացուց ինծի որ որոշեր է »... —

Աստանօր 'ի վեր առեալ գոտեւրն ղգէմն իւր, հայեցաւ 'ի հայրն աղերսահառն երկիւղիւ, ինդրելով նմն ցնայ առնուլ վայրկ մի, այլ նա չառաջ վարեր համարձակ ղբանան. « Իմացուց ինծի որ որոշեր է մարտպետ ըլլալ » : —

« Այրի » աղաղակեցին երկոքեան 'ի միասին, մայրն և եղբայր, և մի ըստ միոջէ դիրկս արկին Ձերթրուտայ, որ արտասուօք ընկալաւ զերգոտանն, այլ նոքա համարկին զայն արտասուս մխիթարուեան : Յայնժամ իշխանն պանծացուցանէր որ ինչ 'ի մարդ եղեալն էր առնել առ 'ի յարդարել զուարթի և պայծառ զբարեկենդանութիւն գոտեւրն : Յաւել որ ինչ պատիւ առաջի կայր նմա 'ի կուսաստանին, և արտաքոյ, զի որպէս իշխանուհի մեծարելոց էր անդ՝ բերելով ղգէմն ազգատոհմին. և զի այն ինչ 'ի հասակ լեալ՝ ամբառնալոց էր 'ի նահապետութիւն, առ ժամն անուամբ և եթէ կայեալ հպատակ : Իշխանուհին և իշխանորդի յերկերկին անդադար զինագակցութիւն իւրեանց և զգրուաթիս. և Ձերթրուտ կայր անդ որպէս յերազի :

Յայնժամ իշխանն ասէ. « Պէտք է ուրեմն օրը որոշել Մանցա երթալու, ու աբբատուհիին խմացընելու. ահ գիտէ ինչպէս պիտոր ուրախանայ. կրնամ ըսել որ բոլոր վանքը մեծ պատիւ պիտոր սեպէ Ձերթրուտին ըրածը... Բայց ինչո՞ւ այսօր չերթանք. Ձերթրուտն ալ քիչ մը օդ կառնէ » : —

Ասէ իշխանուհին. « Հապա՛, երթանք » : — Իշխանորդին ասէ. « Երթամ ըսեմ որ կառքը պատրաստեն » : —

« Բայց »... 'ի վերայ հաճ համեստաբար Ձերթրուտ : —

Եւ իշխանն ասէ. « Մի արտրար, թողուցէք որ ինքը որոշէ. կարելի որ է այսօր տկար է, ու վաղը կուզէ. ահ՛ղկիկ, այսօր կուզես երթալ թէ վաղը » : —

« Վաղը », ասէ դուստրն նուազ ձայնիւ. զի կամէր ժամ առնուլ, կարծելովելը ինչ երացն գոտանել :

Եւ իշխանն կրկնէ հրամայաբար. « Վաղը, վաղը. ասանկ կուզէ Ձերթրուտը, վաղը երթանք : Ես հիմայ կուսանաց վերատեսչին կերթամ, քննութեան օրը որոշելու » : Եւ զպէտ ընդ բանին եղ իշխանն, և երթայր առ վերաւեսուչն (ոչ փոքր ինչ զկնուն յանձն առեալ), և ժամադիր եղեն առնել յետ երկուց աւուրց քննութիւնն :

Զօրն զայն ցերեկ անցոյց աղջկին անհանգիստ. ցանկայր հանդչել վայրկ մի յայնքանեաց վըշտակրութեանց, և յոտակիզ զնորհուրդս իւր, տալ անձին համար զամենայնէ՝ զոր արարն և զոր առնելոց էր, և թուլացուցանել սուղ ինչ զմեքենայն, որ ընդ շարժելն՝ երագիր գահավիժաբար. այլ չէրև երբէք հնար : Գործք ըզգործս մղէին, ընկալաճէին յիրեար : Ընդ մեկնել իշխանին՝ ածաւ աղջիկն 'ի ննջարան 'ի սենեակ իշխանուհւոյն, որ էա նաժշտին իւրում առնդրել զնա և զգեցուցանել : Զև էր զգե-

ցեալ և պաճուճեալ, և ահա աղջ եղև ղի պա-
տրաստ էր սեղանն. Էանց Ձերթրուա ընդ մե-
ծարանս սպասաւորաց, որ խնդային ընդ ասե-
քինուին նորա. և եդիտ զամանս 'ի կարևոր
աղգականաց՝ զորս վաղընդվղի հրաւիրեալ
էին 'ի պատիս նորա և յուրախակցութիւն
ման երկոցունց բարեբախտութեանցն, գար-
ձի յառաջութիւն և յաջողելոյ կոչմանն:

Հարանուին, որպէս կոչէին զնորընծայեալս
'ի կուսաստան, և որպէս Ձերթրուա՝ ընդ ե-
րեւելն ողջունեցաւ յամենեցունց, դառաւ խոնջ
յընդունելութենէ մեծարանաց և սպասուց՝
որ տեղային ղնրա. զգայր ևս ղի շնորհակա-
լութքն հաստատեր զկարծիս նոցա, այլ զինչ
առնել էր: Յարեան ասա 'ի սեղանոյ, և եհաս
ժամ շրջելոյ կառաք. Ձերթրուա էլ 'ի կառս
ընդ մօրն և ընդ երկոսին հօրեղբարս իւր որ
հրաւիրեալ էին 'ի ճաշ: Եւ յետ սովորական
շրջանին, եղեն 'ի ճանապարհն ծովեզերեայ, որ
անցանէր ընդ վայրն՝ գրաւեալ արդ 'ի պար-
տէզ հասարակաց, և էր յայնժամ ձեմարան
ազատանոցին շրջելոյ կառաք 'ի գբօսանս: Հօր-
եղբարքն ևս ըստ աւուրն պատշաճի խօսէին
ընդ աղջկանն. և մի 'ի նոցանէ՝ որ Թուէր ա-
ռաւել քան զմիւսն ճանաչել զորեւար տեղւոյն
'ի կառաց նոցա և 'ի ձեռ զբօսուց սպասա-
ւորացն, ցուցանէր նմա անդադար զայս կամ
զայն ոք յաղատաց և 'ի տիկնայց. և դարձեալ
յանկարծ 'ի նա ասէ. « Իսկ դուն պղտի վար-
պետորդի, աս խաբեբայ բաները ոտքի տակ
կառնես, ու մեզի պէս խելքաշխարհականները

կը Թողուս կերթաս առաք փառաք արքայու-
Թիւն »:

Ընդ երեկս երբև դարձան 'ի տուն, փու-
Թայնն սպասաւորքը չահիւք ընդ առաջ, ազդ
առնելով զի հիւրքն բազումք սպասէին 'ի վեր
անդր: Հռչակեալ էր լուրն, և աղգականք և
բարեկամք գային կատարել զպարտս իւրեանց:
Մտին 'ի սրահն այգորելի, և էր հարանուին
ցանկալի ամենեցուն և բերկրալի. իւրաքանչիւր
ոք կամէր զնա առ իւր. էր որ խոստանայր յղել
առ նա քաղցրաւենիս, էր որ ասէր յայց ելա-
նել առ նա. այս ոք խօսէր զումեմիկ 'ի կուսա-
նայ ծանօթիկ իւրմէ, այն ոք զաղգականէ. ո-
մանք գովէին զօգա Մոնցայի, այլք խօսէին ա-
խորժանօք՝ Թէ որպիսի մեծարանս ընդունելոյ
էր անդ. և կէսք, զի չէ կարացեալ էր նոցա 'ի
խառն անդ մտանել առ նա, խնդրէին պարապ
ողջունելոյ զնա: Ի ընուլ ամենեցուն զնշան իւ-
րեանց, և 'ի լուծանել տակաւ ակմբէն, միայ
Ձերթրուա միայնակ ընդ ծնողս իւր և ընդ եղ-
բօրն: Յայնժամ իշխանն ասէ. « Վերջապէս աս
ուրախութիւնը ունեցայ տեսնելոս իմ գտարիլ-
կըս՝ որ իրեն արժանի մեծարանքը ընդունե-
ցաւ. բայց ըսելոս ալ է՝ որ ինքն ալ խիստ վա-
յելուչ կերպով վարուեցաւ, ու ցուցուց որ
դժար չըլլայ պիտոր իրեն՝ առջի պատիւը ը-
նել, ու ազգատոհմին փառքը պահել »:

Փութացան յընթրիս, առ 'ի հանդչել վա-
զագին, և լինել պատրաստ առաւօտուն: Բայց
Ձերթրուա տրամեալ և զառնացեալ, միանգա-
մայն և ոչ սակաւ ուռուցեալ յայնքանեաց մե-

ծարանաց, յիշէր որ ինչ կրեացն ՚ի բանտին. և տեսանելով զՀայրն յօժար ՚ի կատարումն ամենայն ըղձից նորոց, բայց ՚ի միջին, յօդուտ ՚ի կիր եառ զպատեհն՝ առ ՚ի սփոփել զնիչտ նէր, զոր կրեալն էր ՚ի բանտապահէն, և յայտ արար զգժկամակութիւն նէր կալոյ ընդ նմա, տրտնջալով զգնացից նորա ընդ նէր։

Ասէ նիշանն. «Ի՞նչ, պատուդ չիսպահեց. վաղը, վաղը, գլուխը լռեալ մը լռեամ որ սոր. վին. Թող տուր ինծի, հասկըցնեմ նրեն՝ ոմ էս դուն, ոմ է ինքը. աղջիկ մը, որուն վրայ էս այսչափ գոհ եմ, պէտք չէ որ իր քովը ա. տանի անախորժ կինիկ մը տեսնայ»։ Զայս ա. սացեալ, եաս կոչէր զայրոք ՚ի կանանց, և պա. տուիրեաց նմա սպասաւորել դասերն։ Բայց Ձերթրուտ չէգիտ ինչ այնուհիկ ըղձին յա. դուրդ. և որ առաւելն սիրէր վիշտ ՚ի սրտին՝ էր յառաջ խաղալ նէր այնչափ ՚ի նմին աւուր ընդ ուղի մենաստանին, և մտածութիւն զը. ժուարութեան կեաս ընկրկելոյ, առ որ առա. ւելագունի յոյժ զօրութեան կարօտէր քան աւուրքը յառաջ, և չզգայր յանձին զզօրու. թիւնն զոյն։

Կինն՝ որ տուաւ նմա սպասաւոր ՚ի սենեկին, էր մի ՚ի ծերոց տանն, և էր լեալ հոգածու իշ. խանորդւոյն անգսանին ՚ի խանձարրոց, և գա. կեսեալ նմա մինչև ՚ի պատանեկութիւն, և ՚ի նմա եգեալ զամենայն բերկրանս իր, զոյս և զիսառս. և յոյժ էր ուրախամիտ ընդ յանձ. նեալն սպասաւորութիւն, համարեալ իր զոյն ՚ի բարեբախտութիւն. և Ձերթրուտ բերկրեր

ընդ կետինն այն ուրախութիւն նորա, ընդ խորհուրդս՝ զոր մատուցանէր իր, և ընդ զոյցս՝ զոր առնէր զնախնի աղգականաց ոմանց իրոց՝ որ ՚ի մենաստանի գոհութեամբ կեցեալ էին, վասն աղնուականութեան տոհմին նախա. մեծար լեալ յամենայնի, և զի արտաքուստ էս յաճախէին նոցա սփոփանք, և ՚ի խոստանի անդ վանացն ընդունէին կահս ցանկալիս՝ որ. պիսիս ոչ էր տեսանել և ոչ ՚ի սրահս տիկնոյց մեծուհեաց։ Խօսէր առ նա և զայցելութեանց՝ զորս մնայր նմա ընդունել, և զինչնորդին էս յաւուր միում հանդերձ նորահարսամբն՝ որ անշուշտ ՚ի մեծուհեաց անտի օրհորդաց ըն. տրելոց էր. և յայնժամ ոչ միայն կուսաստանն, այլ և երկիրն ամենայն զղզդելոց էր։ Զայսոսիկ խօսէր պատուն յառնով զհանդերձս նորա և ՚ի հանգուցանել զնա ՚ի մահիճս, ոչ դադա. րեալ և ՚ի ննջել էս նորա ՚ի խօսելոյ։ Հասակ պա. տանեկան և վաստակ յաղթեալ էին հոգոց նո. րա. անանդորը էր քուն նորա և դառն, յու. զեալ երազովք, բայց սակայն ննջէր մինչև զոր. թոյզ գնա ձիչ պատուհն, որ կոչէր գնա ՚ի պատրաստութիւն գնալոյ ՚ի Մանցա. «Ելիր, հարսնուկ, երթանք. լուսցաւ, գիտես. ժամ մը չիքաւեր ինչուան որ հագուիս կապուիս ու սանտրուիս։ Խաթուն մարիկդ հագուեզու հետ է. եղբայրդ վար ինջաւ՝ ձիերը տեսնալու. ին. քը միշտ ամենէն առաջ պատրաստ է ձամբայ ելլելու. այծեամ կը նմանի արագաշարժ, տը. զայութենէ ՚ի վեր սանկ եղած է, գիրկս տա. րեր եմ զինքը, գիտեմ. պատրաստ եղած ա.

տեղն ալ՝ սպասել սաղ չըլլար. Թէ և ատանկ աղնուական է, բայց ան ատենը չհամբերեր, ձայն կը վերցընէ. խեղճին կարեկից պէտք է ըլլալ, բնութիւնն է: Ա՛ս անգամ իրաւունք ալ ունի, վասն զի հրամանքիդ համար աշխատու-թիւն չանձն առաւ. վայ է անոր՝ որ ան միջոցին դալչի իրեն. ո՛վ ըլլալը չնայիր, բայց՝ ի հօրմէն, մէկէ մը աչնածութիւն չըներ: Բայց օր մը ինքը պիտոր ըլլայ տանը մեծը. ուշ ըլլայ որչափ կարելի է, ո՛չ: Շուտ ըրէ օրիորդիկ, շուտ. ինչո՞ւ ատանկ զարմացած կը նայիս ինծի, աս ատեն անկողնինէն եկած պիտոր ըլլայիր »:

Ի պատկերէ անհամբեր իշխանուորգուհին ամենայն խորհուրդք՝ որ խանգեալ էին յարթնուն միտս Ճերթրուհւոյ՝ սրացան՝ ի բաց, որպէս երամ ճնճղուկաց՝ ի տես ուրուրի: Հնազանդեցաւ, զգեցաւ փութով, եթող յարդարել զգեստս իւր, և ել՝ ի սրահ անդր՝ ուր մնային նմա ծնողք իւր և եղբայրն. նստուցաւ՝ ի թիկն նաթոռ, և ածաւ նմա չեօքքօլաթ, որ՝ ի ժամանակին յայնմիկ համարէր՝ որպէս առ հռոմայեցիս զգեստուցանել պատանւոյ պատուոյ ձան այրական:

Իբրև աղգ եղև՝ զի պատրաստ կային կառք, էառ իշխանն մեկուսի զդուստրն, և ասէ ցնա. « Քեզ տեսանեմ, Ճերթրուհւ. երեկ քեզի պատիւ ըրիր, այսօր աւելի պիտոր ընես. առջի անգամ հանդիսաւոր երևնալդ պիտոր ըլլայ մարագանեղուն ու բոլոր տեղացւոց, որոնց առջևը ամենէն պատուաւորը պիտոր ըլլաս. ամենքը քեզի կը սպասեն »: (Յայտ իսկ է՝ զի

իշխանին յղեալ էր աւուրըք յառաջ աղդ առնել՝ ի վանս): « Ամենքը քեզի կը սպասեն, ամենուն աչքը քու վրադ պիտոր ըլլայ. ծանրութեամբ ու համարձակ երևցիր իրենց: Աբբասուհին կը հարցընէ քեզի որ ինչ կուզես. ձև մըն է առ հարցմունքը. կրնաս պատասխանել որ կուզես նորընծայ ըլլալ վանքին, ուր որ այնչափ սիրով զքեզ դաստիարակեր են, ուր որ այնչափ բարիք ընդուներ ես, ինչպէս որ իրաւ ալ է: Ա՛ս խօսքերը համարձակ կերպով ըսէ, որպէս զի չըլլայ Թէ կարծեն որ ուրիշներըը բերանդ դրեր են, ու ինքիրենդ խօսել չես գիտեր: Ան բարի մարգպետներըը եղածը չեն գիտեր. գաղանիք մըն է՝ որ Թաղուած պիտոր մնայ տանը մէջ. անոր համար զղջում երես ու տարակոյս մի ցուցընէր՝ որ չըլլայ Թէ կասկած մը առնեն: Ցուցուր իրենց քու աղնուականութիւնդ՝ քաղաքավար ու համեստ կերպով. բայց միաբդ պահէ որ հոն տեղը, ընտանիքիդ՝ ի զատ, մէկը պիտոր չըլլայ քու վրադ »:

Ասաց, և առանց մնալոյ՝ ի նմանէ պատասխանւոյ՝ մեկնեցաւ. և զՀետ նորա Ճերթրուհւ ընդ մօրն և ընդ եղբօր իջեալ ընդ սանդուղս, ելնէ՝ ի կառս: Ձհանապարհային ամենայն խօսք նոցա էին վերջանկութենէ միակեցական կենաց, մանաւանդ վասն աղնուական օրիորդաց. և իշխանն՝ ի մտնել կառացն՝ ի վանս, յիշեցոյց դարձեալ գաւերն զՀրահանգան առաքեալս, և զձև պատասխանւոյն կրկներ և երեքկներ: Ի մուտս Ա՛ռցոյ զդայր Ճերթրուհւ նեղութիւն

'ի սրտի. այլ առ փոքր մի ղբաղեցաւ ընդ ծա-
նօթս ոմանս՝ որք կացուցին զկառան առ 'ի պա-
տուասիրել զնա. և ապա գնային հանդարտա-
քայլ ընդ մէջ բազմութեան, որ դիմէին ամե-
նուստ 'ի տնին: Ի զկայ առնուլ կառացն առ
դրան մենաստանին, առաւելաւ նեղութիւն
սրտին: Եջ 'ի կառաց 'ի մէջ խռնելոյ երկուս-
տեք ժողովրդեան, զորս ընկրկէին ապատա-
ւորք. ամենեցուն աչք 'ի նա հայէին, և ձըգ-
նէր տառապեալն 'ի կալ վայելչապէս: Առա-
ւել քան զամենեցուն աչք հօր իւրոյ տային
նմա ակն ածել, որք թէպէտև ահարկու էին
նմա, սակայն չկարէր դադարել 'ի հայելոյ 'ի
նոսա, և նոքօք ուղղէր զղնացս իւր և զդէմն՝
որպէս յաներևոյթ սանձից վարեալ:

Անցեալ ընդ առաջին դաւիթն, եմուտ 'ի
միւսն, ուր ետես բացեալ զդրունս մենաստա-
նին, և ժողովեալ անդ զամենայն կուսանս: Ի
ձակատուն կայր աբբասուհին ընդ մարս ծե-
րունիս, և յետուստ խռնեալ կային կուսանք,
յոտն 'ի մատն յարուցեալք, և զհետ նոցա աշ-
խատասէր կուսանք կանգնեալք 'ի վերայ եր-
կայն նստարանաց: Երևեցին աստ անդ ընդ օգս
փայլեալ և աչխուժք ոմանք և դէմք ընդ մէջ
հանդերձից կուսանաց. զի աղօղակագոյնք և
արիագոյնք 'ի սանուց մտեալ և թափանցեալ
ընդ մէջ նոցա, գործէին ծակոյկ 'ի տնին: Ի
խառնիճ անտի հնչէին աղաղակք ցնծութեան և
դրատառեաց, և երևէին բազուկք յօգս տատա-
նեալք յողջոյն ընդունելութեան: Ձասին 'ի
'ի դրունս, և գտաւ ձերբեթրուտ դէմ առ դէմ

ընդ աբբասուհւոյն. և ողջունեալ նոցա ընդ մէ-
մեանս, էհարց ապա հրճուանօք աբբասուհին
ըստ ձևոյ պաշտամանն.

« Ի՞նչ է ուղածդ, ամեն խնդիրքդ կըլլուի »:

Պատասխանի սկսաւ տալ աղջիկն. « Ուրիշ
բան չեմ ուզեր, բայց »... այլ ոչ կարաց կա-
տարել զբանն՝ որ սահմանելոյ էր անդարձ ըղ-
պայման կենաց նորա: Վարանեցաւ վայրկի մի,
և պշրուցեալ կայր 'ի բազմութենն հանդիպա-
կաց. յայնժամ ետես անդ զմի 'ի ծանօթ ըն-
կերացն, որ հայեր 'ի նա կարեկցութեամբ
խառն ընդ չարամտութեան, և թուեր նմն ա-
սել. « Ախտս, կինայ ահա խեղճը »: Ան տես-
սիլ զարթոյց 'ի սրտի նորա զամենայն առաջին
զգայմունս, և դարձոյց 'ի նա փոքր 'ի շատե
զնախկին արիութենն. և հնարեր տալ որ ինչ
և ևցէ պատասխանի, ոչ քան հայրենի թելա-
դրութեանն. այլ զաչս 'ի վեր առեալ, ետես
'ի դէմն հօր իւրոյ յոտղուման այնպիսի և ցա-
սումն սպառնալից, զի առ ահին 'ի սոսկալի
տեսլենէն՝ կատարեաց զձև պատասխանւոյն.
« Ուրիշ բան չէ ուզածս, բայց նորընծայ ըն-
կալ աս վանքիս մէջ, ուր որ այնչափ սիրով
գաստիարակեցիք զիս »:

Ի վերայ հածն աբբասուհին. « Շատ կը ցա-
վիմ որ չեմ կրնար մեկին ուզածդ պատաս-
խանը տալ, վասն զի միաբանութեան հաւանու-
թենեն կը կախուի, ժողովքին քուէներէն, որն
որ առանց հրամանի մեծաւորաց չըլլըվը:
Բայց կրնաս դուշակել տալու պատասխանս,
գիտնալով ամենուն քու վրադ ունեցած սէրը:

Ուրիշ կողմանէ կանոնի դէմ չէ որ հիմակուց յայտնենք քեզի մեր ուրախութիւնը քու ըրած խնդիրքիդ համար »։

Աճան վաղվաղակի ափսեք մեծամեծք լի քաղցրաւենեաք, որ նախ քան զամենեսին մատուցան օրիորդին և ընտանեաց նորա։ Եւ մինչդեռ ոմանք ի կուսանաց ձգէին զնա առ Լուբեանս, և այլք ուրախակից լինէին ընդ մօրն, և կէսք ընդ Էշխանորդւոյն, յղեաց աբբասուհին հրաւիրել ի խօսարան անդր զԷշխանն, ուր ինայր նմա ընդ երկուս ի ծերագունից մայրապետաց։ և իբրև եկին, ասէ ցնա.

« Կանոնները պահելու համար, մեծանուն Էշխան, որպէս զի արարողութիւնը տեղը երթայ, թէպէտև աս դիպուածիս մէջ աւելորդ էր, բայց պարտական եմ լմնցընելու հրամանքիդ՝ որ երբոր աղջիկ մը կուզէ զգեստ առնել, նորընծայ ըլլալ, վանամայրը՝ որ ես դանուած եմ անարժանապէս, պարտական է լմնցընելու ծնողացը, որ եթէ յանկարծ բռնութիւն մը ըրած ըլլան իրենց զաւկին՝ մարտակոս ընելու համար զինքը, բանադրանքի մէջ կիյնան. Թողութիւն կընես »... —

« Շատ աղէկ, շատ աղէկ, յարգելի մայր. կը գովեմ հրամանքիդ կանոնապահութիւնը, շատ հարկաւոր ալ կանոն է. բայց ապահով եղիր որ »... —

« Ներէ ինծի, պարտքս ընելու համար ըսի. Թէ որ չէ »... —

« Գիտեմ, գիտեմ, մայր պատուական »։

Զայսոսիկ սուղ ինչ բանս ասացեալ, ողջու-

նեցին զմիմեանս, և մեկնեցան. զի ծանր էր երկաքանչիւրոց երկարել զհաստակցութիւնն զայն. և դարձան առ Լուբեանս, մին արտաքս, միւսն ի ներքս սեմոյ վանացն, ուր յաւել իշխանն.

« Ձերթրուաը աղէկ վայելէ պիտոր աս սիրուն ընկերութիւնը, որուն մենք բաւական նեղութիւն տուինք »։

Զայս ասացեալ, մատոյց մեծարանս աբբասուհւոյն. ընդ նմա և ընտանիքն մատուցեալ անդրէն մեծարանս, մեկնեցան ի բաց։ Բայց Ձերթրուա ի դառնալն չկարէր բանալ զբերթունս ի խօսել, սոսկացեալ ընդ որ արարն, ամաչեցեալ ընդ փոքրոգութիւն իւր, դժկամակեալ ընդ այլս և ընդ ինքն, և տխրութեամբ խնդրէր պարապ ժխտելոյ զհաւանութիւնն. այլ չեւս անկեալ էր ի մտաց նորա ցասումնն հայրենի։ Իբրև հասին ի տուն, հարկ եղև նմա վերստին յարդարել զանձն, և տալա ճաշ, տալա հիւրք ոմանք, տալա չքէղ կառաք, տալա աւկումբ երեկորին, և տալա ընթրիք։ Ի վերջկոյս ընթրեացն առաջարկեաց իշխանն զընտրութիւն կնքամօր. զի այսպէս կոչի տիկինն ընտրեալ ի ծնողաց օրիորդին, որ պահպանէ և առաջնորդէ նմա ի միջոցի անդ որ ընդ խնդիր մտիցն և ընդ մուտս նորա ի կուսաստան. յորում ժամանակի այց առնէ նա յեկեղեցիս, ի վայրս հասարակաց, յերեկորեայ ժողովս, ի պարտէզս, յուխտատեղիս, և յամենայն երեւելի վայրս քաղաքին և ի շրջակայս նորա, նախ քան զուխտադրութիւն. Ճանաչել յորոց ի-րաց առաջի կայ նմա հրաժարել։ Արդ ասէր իշխանն.

« Պէտք է ինքամոլը վթայ ալ մոռածենք, վասն զի վաղը վերատեսուչը կուգայ քննութեան ձևը ընելու, ու անմիջապէս անկէ ետքը ձերբերութեան վթայ քուէարկութիւն պիտոր ընեն մարապետները ժողովքով, զինքը ընդունելու համար »: Եւ յաջէն զայս հայերը խշխանն յիշխանութիւն, սկսաւ առաջարկել.

« Ինծի յարմար կերևնայ »...

Այլ խշխանն կարճեալ զառաջարկութիւն նորա, ասէ.

« Զէ, չէ, տիկին, պէտք է որ ինքամոլը հարսին ուղածը ըլլայ. թէ և սովորաբար ծնողքը կընտրեն, բայց ձերբերութեան այնչափ խելք ու խոհեմութիւն ունի, որ արժանի է աս բացառութեանը »: Եւ դարձեալ 'ի դուստրըն, յաւել որպէս չնորհ լինի առանձին թողուլ 'ի նա ընտրութիւնն, և ասէ. « Ամեն խաթունները՝ որ աս երկիրս կենցաղավարութեան համար եկան մեզի, քեզի պէս աղնուական օրիորդի մը ինքամոլը ըլլալու հանգամանքները ունին. մեկը չիկայ մէջերնին՝ որ իրեն պատիւ չիսեպէ աս ընտրութիւնը. ընտրէ ուրեմն անոնցմէ ով որ կուգես »:

Տեսանէր ձերբերութեան, զի ընտրութիւնն այն՝ վերատին հաստատութեան էր հաւանութեանն. բայց և առաջարկութիւնն էր այնպիսի, զի մերժել զայն՝ հանդերձ ամենայն խոնարհութեամբ՝ թուէր արհամարհութիւն, կամ գէթ կէզծ լինի հրաժեշտ: Յանձն էառ և զայն, և ընտրեաց զսիկինն՝ որ յայնմ երեկոյի հաճոյ քան զայլս

լեալ էր իւր, լսա զայն՝ որ առաւել գդուեաւն էր զնա և դովեալ, որ ընտանեբար սէր և խնամ ցուցեալ էր նմա՝ որպէս վաղ մտերիմ նորին:

« Շատ աղէկ ընտրեցիր », ասէ խշխանն:

Բայց սիկինն այնչափ հուրջ փարեալ էր զնոսա յայնմ երեկոյի, և այնպէս ընդ միտ մտեալ նմա, զի չէր մարթ օրիորդին զայլ ոք խորհել: Եւ բաղում այնչափ խնամք նորա չէին վայրապար. այլ 'ի վաղուց սիկինն այն ակն եդեալ էր յիշխանորդին, առ 'ի տալ նմա զդուստր իւր 'ի կնութիւն, և համարէր զսուտն զայն որպէս իւր, վասն որոյ և գորովէր 'ի սիրելին ձերբերութեան որպէս 'ի մի 'ի կարևոր ազգականաց:

Ի վաղիւ անդր զարթեալ աղջիկն մոայզ 'ի քնկէն՝ որ հանդերձեալ էր գալ. և մինչդեռ խորհէր առնուլ զկարևորն զայն պատահ գառնալոյ յեաս, և զորպէսն երկնէր 'ի մտի, կոչեաց զնա խշխանն առ իւր, և ասէ.

« Ինձ մեռանիմ, աղջիկս. ինչուան հիմայ ամեն կերպով աղէկ վարուեցար. այսօր պատկես պիտոր գործդ: Ինչ որ ինչուան հիմայ եղաւ, ամենն ալ քու կամքովդ էր. թէ որ ասկէց առաջ տարակոյս մը ունեցած ըլլայիր, կամ միաբդ վհոհուած ըլլար, կամ տղայական վախք մը ըլլար ունեցածդ, պէտք էր որ ըսած ըլլայիր. բայց հիմայ որ ամեն բան պատրաստուած՝ կարդի գրուած է, ալ տղայութիւն ընելու տեղն չէ: Այս երկիւղած քննիչն որ աս առտու պիտի գայ, քեզի հարցմունքներ կընայ ընել կոչմանդ վրայօք, արդեօք կամքդ մարա-

պետ կուզես ըլլալ, ինչո՞ւ կուզես, ինչպէս կուզես։ ու ասոնց նման հարցմունքներ։ Թէ որ տա-
րակուսելով պատասխանես, ո՛վ գիտէ՝ ո՛րչափ
կերկննայ խօսքը, փուճ տեղը կը ձանձրանաս,
կը տանջուիս. ու տարակուսիլդ ծանր հետե-
ւանք ալ կրնայ ունենալ։ Բանը այսչափ ամե-
նուն բերանը կ՚ընկալէն եղբը, ամեն պզտիկ տա-
րակոյս քու կողմանէդ որ տեսնուի, իմ պա-
տիւս մէջ կերթայ. կը կարծեն որ քու մէկ Թէ-
Թէ կերթով մը մոքէդ անցածը՝ հաստատուն
որոշման տեղ դրեր եմ արտորնօք, կամ Թէ
ինչ գիտնամ... Ան տունն երկու սուրի մէջ
կ՚ընկնամ. կամ Թողուլ որ ամենքը գէշ համար-
մունք ունենան քանած ճամբուս վրայ, որն որ
իմ անձիս համար ունեցած պարտքս չվճա-
ղուր, և կամ յայտնել քուն պատճառը քու
ըրած որոշմանդ »...

Բայց տեսնելով իշխանին զարհուրումը դէս-
տերն, զուռնուլ աչացնորա, զնուազել գիմացն
որպէս գծագիկ Թառամեալ ՚ի մրրկէ, եհատ
զխօսս իւր, և պարզեալ զերեսս, ասէ. « Թո-
ղումնք աս խօսքերը, հիմայ քեզմէ կը կախուի.
խելք չունիս չէ, գիտեմ որ եւէրջք ալ ունիս.
տղայ չես որ չվնասդ աւրես. բայց ինծի պարտք
էր նախատես ըլլալ, առաջուց ըսել քեզի,
ինչ որ կրնայ հանդիպիլ։ Ալ չխօսուի աս բա-
ներուս վրայ. մոքերնիս մէկ է, այսինքն հա-
մարձակ պատասխանելդ իրեն, որ տարակոյս
չձգագի մոքին մէջ »։

Աստանօր Թէլադրեալ դաստերն և պատաս-
խանիս ինչ հաւանականագոյն հարցուածոց,

դարձոյց զբանս ՚ի վերայ բերկրութեանց և
վայելից՝ որ մնային նմա ՚ի մենաստանի, և Թար-
Թափեցոյց զնա յայսպիսի խօսս, մինչև եհաս
սպասաւորն ազդ առնել զդալոնաս երիցուն։
Կրկնեաց յայնժամ իշխանն զկարևորագոյնս ՚ի
խրատուցն, և եթող զդուստրն միայնակ ընդ
նմա ըստ կանոնին։

Փննիչն դայր աներկմիտ զսոցդ կոչմանէ
օրիորդին որպէս իշխանին ասացեալ էր նմա ՚ի
հրաւիրելն զնա։ Ճշմարտիւ երէցն պատուա-
կան, որ գիտէր զի մի ՚ի կարևորաց պաշտամանց
իւրոց էր կասկածել, պարտ անձին վարկանէր
յամր հաւատալ այնպիսեաց բանից, և զդոյշ
լինել ՚ի կանխակալ դատմանց, սակայն դուն
ուրեք պատահէ՝ վկայութեան արանց երևե-
լեաց ոչ չյաջողանել փայլմամբն իւրեանց
զմիտս լսողաց։

Յետ պատուասիրական ողջունի, ասէ երէցն.
« Աղջիկ, ես քեզի սատանայ ըլլալու եկեր
եմ, տարակոյսներ հանելու քու աղերսագրիդ
վրայ. եկեր եմ աչքիդ առջևը դնելու խել մը
դժուարութիւններ, որպէս զի ապահով ըլ-
լամ՝ որ անոնց վրայ աղեկ մտածեր ես։ Ու-
րեմն դժարդ չիգայ՝ որ քանի մը հարցմունք
ընեմ քեզի »։ —

« Ըրէ, խնդրեմ »։ —

Յայնժամ սկսաւ երէցն հարցանել ըստ օրի-
նադրեալ կանոնաց.

« Կը զգա՞ս որ մէջդ որ քու աղատ կամքդ
կուզես մարապետ ըլլալ. ամենևին սպառնալիք
մը կամ զքեզ համոզելու խօսքեր չե՞ն եղած

քեզի. հրամմել կամ վրադ իշխանութիւն բա-
նեցընել չէ՞ եղած, որ մարապետ ուղես ըլ-
լալ. ըսէ համարձակ ու անկեղծ. իմ պարտքս
է քու կամքդ գիտնալ, որ չկրկնայ սկիզբ ղբեղ
որ և իցէ կերպով տեսնել»:

Ձշմարիտ պատասխանի հարցուածոյս էին
խոհոյն՝ ի միտս ձերբեռուտայ, ահարկու բա-
ցայայտութեամբ. այլ առ՝ ի տալ զայն՝ պարտ
էր յայտ առնել որպիսի՛ ինչ սպառնալիք լեալ
էին նմա, և առնել զպատմութիւն երցոյն, ընդ
որ սոսկալը եղևելին. և առ՝ ի ղերծանել վազ
և անվտանգ՝ ի տանջանաց անտի, Թագուցեալ
զյոյզս սրտին՝ ասէ. «Իմ ուղեղովս մարապետ
կըլլամ»:—

Երէցն ասէ. «Ո՞րչափ առեն է որ աս մտքին
վրայ ես»:—

Աղջիկն յետ միանգամ առելոյ, համարձա-
կագոյնս յաւելոյ.

«Մինչ աս միտքը ունեցեր եմ»:—

«Բայց գլխաւոր պատճառը ո՞րն է ուղեղուդ
մարապետ ըլլալ»:—

Անգիտանայը բարեսիրտ երէցն՝ քանի՛ վը-
տանգաւոր էր հարցուած իւր. այլ ձերբեռուտ
բուռն արարեալ անձին՝ չերևեցուցանել՝ ի
դէմս իւր զյոյզս սրտին ընդ բանս նորա, ասէ.

«Պատճառը աստուածոյ ծառայել ուղեղս է,
ու ազատիլ աշխրքիս փորձութիւններէն»:—

«Զրլլայ թէ դժկամակութիւն մը ունեցած
ըլլաս, ներէ խօսքիս, կամ յանկարծական բան
մը ըլլայ ունեցած բազմանգդ. վասն զի երբեմն
անցաւոր պատճառ մը անանկ տպաւորութիւն

կընէ մարդուս սրտին՝ որ կարծես թէ միշտ
սիրտը տևէ. բայց եռքը պատճառն որ վեր-
նայ, սիրտը կը փոխուի. ու ան ատեն»...—

«Զէ, չէ, պատճառը ըսածս է»:—

Յայնժամ երէցն առ՝ ի ընուլ զպարտս իւր,
և ոչ՝ ի կարևոր համարելոյ, յաճախէը տակա-
ւին զհարցուածս: Այլ աղջկանն հաստատակամ
էր՝ ի մոլ պատրել զնա մինչև՝ ի սպառ. զի ոչ
միայն ծանր էր նմա յայտնել զտկարութիւն
իւր մեծարոյ և պատուական երիցուն, որոյ
բոլորովին այլազգ էին կարծիք զնմանէ, այլ
և խորհէր՝ զի թերևս մարթ էր նմա խափա-
նել զմեռս իւր՝ ի կուսասատան, սակայն ցայն-
վայր սահմաներ իշխանութիւն նորա. իսկ յետ
այնորիկ միայր ինքն միայնակ ընդ հօր իւրոյմ,
և որ ինչ՝ ի նմանէ կրեւոյն էր՝ ի տան՝ չկարէը
դիտել երէցն պատուական, և՝ ի դիտելն և՝
չկարէը ամենայն բարեսիրութեամբն այլ ինչ
առնել, բայց կարեկից լինել ընդ իւր այնու
անգործ և չափաւոր կարեկցութեամբ, զոր
ըստ վայելչութեան բերեն յանձին բարեսիրք
ընդ վշտակիրս՝ որոց պատճառս իւիք տուեալ
նցե վշտացն՝ զորս կրեն: Վաստակեցաւ քննիչն
՝ի հարցանելոյ, այլ եղևելին ոչ ևս՝ ի տեղոյ.
և՝ ի տեսանելն զի զնոյն միշտ հաստատէր աղ-
ջկին, ոչ կասկածելով ընդ անկեղծութիւն
նորա, չոչեաց զեղանակ բանիցն, խնդակից ե-
ղև ընդ նմա, խնդրեաց անբասիր առնել զպա-
տեցումն իւր՝ ի հարցուածս, և յորդորեալ
զնա յարատևել՝ ի բարւոք առաջադրութեանն,
հրաժարեցաւ՝ ի նմանէ:

Եւ ՚ի սրահի անդ՝ ընդ որ անցանէին, հանդիպեալ լչխանին՝ որ ըստ դիպուածոյ Թուէր և ինքն անցանել ընդ այն, ուրեմն եղև ընդ նըմա վան գաւերն յօժարութեան ՚ի կրօնաւորութիւն: Ի տագնապ տարակուսի կայր լչխանն ցայնժամ, և ՚ի լուր աւետեացն՝ ոգի հառ. և մոռացեալ զընդելական ծանրութիւն, գիմեաց առ գուսանն, եւլից զնա գրուաթեօք և գրուանօք և խոստմամբք, հրճուեալ՚ի սրտէ գորովանօք՝ որ առաւելագոյն մասամբ էր անկեղծ, ըստ խառն ՚ի խուռն կրից մարդկեղէն սրտի:

Ոչ կամիմ մանրասատում առնել զաթոռ բանս և զգբօսանս օրիորդին, և ոչ զանդագար յեղափոխութիւն կրից նորա ՚ի միջոյն անդ. զի մի լցցի լինձ յօրինել միօրինակ ինձն պատմութիւն ցաւոց և յուզմանց, համանման պատմութեանց ցարդ: Զուարճութիւն վայրաց և զանազանութիւն տեսլեանց, գբօսանք կառաւրշաւոյ այսր անդր ընդ արձակավայրս, գժպհի առնէին նմա զպատկեր տեղւոյն, ուր վերջին նուագ հասանէր իջանել ՚ի կառաց և ճոպ անդ մինչև ցկեանս: Խոցոտիչք ևս էին ազդմունք, զորս կրէր յակնբահոյլ ժողովս և ՚ի հանդէսս. և տեսիլ հարթանց, խակապէս յորջորջելոց, նաև հանճ արկանէր ՚ի նա և անձկութիւն սրտի դժոխըմբեր. էր զի և ՚ի տալ նմա երևելոյ ուրուք զանուն զայն, կարծէր պատրաստաբար առաջի իւր լուծն բարեբաստութեան. և էր զի պերճութիւնք պալատանց, փայլուն հանդերձանաց, աղմուկ չխինդն և խնծիրք ոսկւոյ

ազդէին ՚ի նա արբեցութիւն լինն և եռանդն այնպիսի բարեկենդանութեան, զի խոստանայր անձին յիւոս կալ ՚ի խոստմանէ, յանձն առնուլ զամենայն, քան դառնալ ՚ի ցուրտ և յանկենդան սառուցը մենաստանի: Այլ այն աստիճանն խորհուրդք յօդս ցնդէին ՚ի հանդարտ մտածութենէ դժուարութեան, և ՚ի տեսիլ աչեթ դիմաց լչխանին: Եւ էր զի գարձեալ՝ խորհուրդ հրաժարելոյ ՚ի սպառ ՚ի վայելից անտի, դառնացուցանէր նմա և զսուրն զայն ճաշակ. որպէս ախտաժէտ հայի դժկամակ ՚ի ջուր՝ դրգռալիս չափ շնորհեալ նմա ՚ի բժշկէ, և մերժէ նմա զայն:

Մինչ այս միջ այն, վերատեսուչն կուսանաց եռանոցա զկարևորն վկայական, և եհան հրամանի ժողով դատաբելոց յընտրութիւն ձերբեթրուայ. և որպէս էր իսկ դուշակել, եղ ՚ի ժողովն անդ կրկին երիս մանն գաղտնի վիճակաց, ըստ սահմանելոյ կանոնաց, և եղև ձերբեթրուա ընդունելի: Ինքն ևս խոնջ յընդերկար ճգանց, ինդրեաց վաղագոյն մտանել ՚ի վանս. և չէր իսկ ոք, որ կամեր հանդարտել զեռանդն նորա: Արբոյն զկամս նորա, և հանդիսիս մեծաւ ածեալ ՚ի կուսաստան անդր, զգեցաւ զձև կարգին. և յետ ամի նորընծայութեան, լի ըղձմամբ և ապաշաւանօք եհաս յօր ուխտադրութեանն, յորում պարտ էր՝ կամ ՚ի զարմացումն և ՚ի գայթակղութիւն ամենեցուն զանակնկալն ամենևին յայտ առնել ոչ, և կամ զբաղում անգամ յանձն առեալն այո: Այսոց վհատատականն, և գտաւ նուիրեալ ՚ի կուսութիւն յաւերժական:

Մի՛ ի յատուկ և յանհաղորդական կարո-
ղութեանց քրիստոնէական կրօնից է՝ ուղղել
և սիրափել զամենայն ոք, երբ, ցոր վայր և
դիմեսցէ առ նա: Եթէ անցելոյն գուցէ ինչ
դեղ բժշկութեան, սահմանէ և մատուցանէ.
տայ լոյս և զօրութիւն արկանելոյ զայն ի կիր՝
յանձն առեալ զամենայն. իսկ եթէ ոչ, հայ-
թայթէ հնարս կատարելոյ զառակն՝ որ խրատէ
պէրիաուրն առնել ի՛մասուր: Ուսուցանէ յարատե-
ւեալ խոնարհութեամբ, յոր ինչ թերեւսութե-
թեամբ իցէ ձեռնարկեալ. յորդորէ ընդդերձ-
կել, որ ինչ՛ի բռնութենէ իցէ ըսանձնեալ,
և զընտրութիւն անխորհուրդ՝ այլ անդադ՝
արթագործէ և խոնարհացուցանէ, և ասէլի իսկ
է համարձակ՝ զի տայ այնմ զամենայն բերկ-
րանս ձչմարիտ կոչման: Ի այն ձանապարհ այն-
պիսի, ուր յորմէ և իցէ բաւղէ կամ՛ի գահա-
վիժութենէ ոք հասանիցէ, կարէ յայնմհետէ
դնալ անվտանգ և կամաքար, և ժամանել ու-
րախութեամբ՛ի կէտն ցանկալի: Ըստ այսմ
օրինակի մարթէր ձերթերուտայ լինել կուսան
սուրբ և ուրախամիտ, որով և օրինակաւ և
էրն կրօնաւորեալ: Ա՛յլ նա հէք և թշուառ
ոգորէր և ընդ լծոնին, վասն որոյ և սաստկա-
գոյն զընկճումն և զծանրութիւն բեռինն զգայր:
Ա՛որմէք ընդ կորուստ ազատութեանն, դժկա-
մակութիւն ընդ կեանս՝ զոր վարէր, թափա-
ռել զհետ ըղձից՝ զորս չկարէր յագեցուցա-
նել, այսպիսի էին սրան նորա ծանրագոյն կիրք:
Որձայր զանցեալն գառնիւն, զմուսաւ ածէր մի
ըստ միոջէ զամենայն հանգամանս՝ որով գոտ-

նէր՛ի տեղւոջ անդ, և եղծանէր բիւրեցս խոր-
հըրդով՝ որ ինչ արարեալն էր գործով. եպե-
բեր զինորդութիւն և զայլոց բռնութիւն
և զնենդ, և խոցոտէր՛ի կրից ասոյ: Պաշտէր
և ողբայր զգեղեցկութիւն իւր, կոծէր զմանու-
կութիւն իւր գատապարտեալ յեղծումն յամր
վշտակրութեամբ, և նախանձէր իսկ երբեմն
ընդ ո՛ր և իցէ կինն, ևս և հասարակածին, որ
ազատօրէն և որով և իցէ օրինակաւ կարէր
վայելել զաշխարհ:

Տեսիլ այնոցիկ՛ի կուսանաց, որոց ձեռն
տուեալ էր՛ի ձգել զնա՛ի վանս, գժալի էր
նմա: Ցիչէր զընաթս և զարուեստս՝ զորս՛ի կիր
արկեալ էր նոցա առ այն, և փոխարինէր նոցա
տմարգութիւն և հեճուկս, և յայտնի իսկ կըշ-
տամբանս. և հարկ լինէր նոցա յաձախ կրել և
լռել: Զի ի՛շխանին թէպէտև բռնացեալ էր՛ի
վերայ գաւառն որչափ ինչ կարէր էր առ՛ի
մուծանել զնա՛ի վանս, այլ յետ այնորիկ ոչ
հանդուրժէր զի՛նեղէին զնա այլք. և եթէ հընչ-
էր ինչ ձայն արտաքոյ, կորուսանէին զՀզօր
պաշտպանութիւն իշխանին, և մարթ էր բա-
րեկամութեան նորա փոխել՛ի թշնամութիւն:

Թուի թէ ձերթերուտա զգայր ինչ յօժարու-
թիւն առ այլս՛ի քերց, որոց չէր լեալ հաղորդ
նեղութեանց հնարից, և որք առանց խնդրելոյ
զնա իւրեանց կրօնակից՝ սիրէին զնա. և բարե-
կրօնք պարապեալք՛ի գործս իւրաքանչիւրս, և
ուրախամիտք, ցուցանէին օրինակաւ իւրեանց,
զի մարթէր և՛ի վանս անդ՝ ոչ միայն կեալ, այլ
և բարւոք կեալ: Ա՛յլ սոքա ևս ըստ այլոցմ

մասին չէին նմա սիրելիք, զի բարեկրօնութիւն նոցա և դհոութիւն էր ՚ի կշռամբանս պժգոհութեան իւրոյ և անհամբոյր գնացից, և խընդրէր պարապ ծաղրելոյ ՚ի թիկանց զԼերմեռանգութիւն նոցա, և կծանեալոյ զնոսա որպէս կեղծաւորս: Սակայն ոչ այնպէս դժկամակէր ընդ նոսա, եթէ գիտէր կամ գուշակէր՝ զի գնասակքն սեաւք ժխտականք ՚ի նոցանէ արեալ էին ՚ի տուփ անդր քուէիցն ընդունելոյ թեան իւրոյ ՚ի կրօն:

Բայց սփոփէր երբեմն ՚ի հրամայել, յընդունել սպաս և մեծարանս ՚ի մեհենատանին, և այցելութիւն ՚ի հիւրոյ, ՚ի յաջողել չիրս ինչ յանձնեալս իւր ՚ի կարօտելոյ օգնականութեան, ՚ի շնորհել նոցա զպաշտպանութիւն իւր, և ՚ի կոչելն տիկին. այլ սփոփումն ոմն պէտ: Զի սիրտ իւր ոչ շահանայր նոքունքը, այլ առաւելագունն խնդք ցանկայր, վայելելոյ ընդ նոսին զսփոփանս կրօնից. այլ այսոքիկ ոչ չնորհէին, որոմ ոչն անփոյթ առնէ զպղտիզքն. որպէս նաւակոծեալ ոք առ ՚ի բուռն կարկառել զտախտակէ և զերծանել անվտանգ ՚ի ցամաք, պարտի Թողուլ ՚ի բաց զլօռ և մամուռ՝ բնաւորական բերմամբ ըմբռնեալ:

Սուղ ինչ յետոյ քան զսխտագրութիւն իւր՝ կացուցաւ Ձերթրուտ դասախարակ սանից. և է դիւրաւ ՚ի միտ առնուլ Թէ որպէս աղջկունքն կային ընդ հրահանգօք այնպիսւոյն: Մտերիմք իւր առաջինք եղեալ էին ՚ի բաց, այլ ինքն կրէր յանձին զկիրս այնը ժամանակի. և այսպէս կամ այնպէս պարտ էր առնել կրէլ

զծանրութիւն նոցին: Յածել զմաւս՝ զի յոգունք ՚ի նոցանէ հանդերձեալ էին կեալ յաշխարհի՝ ուստի ինքն վարեալ էր ՚ի բաց, զայր ՚ի սրտի հեռ ինն ընդգէմ անմեղացն, և խղճ վկայիցն ընդ ինքեան. ընկճէր զնոսա, խոտանայր առ նոսա, և տայր նոցա տուժել կանխաւ վասն հանդերձեալ վայելից: Եթէ ոք ՚ի դէպս յայսպիսիս լսէր զսաստ նորա վարժապետական ընդգէմ եղկելեացն վասն ընչեղնոց, կարծէր զնա կին մի վայրենի անխորհուրդ: Յայլ նշանս, գժկամակութիւն ընդ մեհենատան՝ ընդ կանոնս՝ ընդ հնազանդութիւն՝ մղէր զնա ՚ի ներհակ կիրս, և ոչ միայն անտես առնէր յայնժամ զանսաստութիւն սանիցն, այլ և գրգռէր զնոսա, խառնէր ՚ի խաղս նոցա, և յանկարգութիւն զնոսա զառածանէր, խօսակից լինէր նոցա, և անգր ևս քան զդիտաւորութիւն՝ ոտով սկսեալ էր նոցա զխօսս՝ մղէր զնոսա: Եթէ ոք ՚ի նոցանէ իշխէր բասրել զբան ինչ աբբատուհւոյն, հասլըէր ըստ նմանութեան խօսից նորին, և կատակերգէր, և ձևացուցանէր մերթ զնուրուք ՚ի կուսանաց զդէմս և մերթ զայլոց ուրուք զընկաց, քրքիջ բարձեալ. այլոչ զնաբաբանայր այնուհետև սիրտ իւր: Ա.յսպէս եկեաց նա զամս քանի մի, ոչ ունելով պատեհ աւելի ինչ առնելոյ, մինչև ըստ արկածից բախտին հասին նմա դէպք:

Ընդ այլ արատութիւնս չնորհեալ էր նմա կալ ՚ի բնակարան ուրոյն, փոխանակ զի չէ ևս կարեր լինել աբբատուհի: Ի կողմն յայն մեհենատանին յատկութեր ակից տան բնակէր պատանի

մի ապիրատ, մի յայնցանէ որ զայնու ժամա-
նակաւ միաբանեալ ընդ սրիկայս և ընդ անօ-
րէնս՝ էին զօրաւորք, և ծիծաղէին զօրինօք և
զաստենական պատուիրակօք: Պատմիչն անուա-
նէ զնա ԼՃխիոյ, առանց յաւելլոյ զմականուն
նորա: Սորա սեպեալ ընդ մի՛ ի պատուհանայ
կրօցն՝ որ հայէր ՛ի բակ բնակարանին այնորիկ,
զի անցանէր երբեմն Ձերթրուա ընդ այն, կամ
Թափառէր անդ անգործ, ՛ի միում աւուրց՝
հրապուրեալ քան երկուցեալ ՛ի վտանգէն և
յանօրէնութենէ համարձակութեանն, ձայ-
նեաց զնա. և հէքն ետ պատասխանի:

Ի սկզբան անդ զդաց ՛ի սրտի բերկրանս իմն,
ոչ արդարև անապակ՝ այլ եռանդուն. Թուէր
նա յանկարծ յեղափոխեալ, կանոնաւորեալ,
խաղաղ, դադարեալ ՛ի ծաղրէ և ՛ի քրքիջնա-
նաց, բարեհամբոյր և քաղցրախօս, որպէս զի
քերց ամենեցուն խնդակից ընդ միմեանս լինել
վասն բարեբաստիկ վոխոխութենն, զի չէր
նոցա մարթ դիտել զատդ պատճառս իրացն,
և ՛ի միտ առնուլ՝ զի կարծեցեալն այն բարու-
թիւն ոչ այլ ինչ էր, բայց կեղծաւորութիւն
յայլ յոռութիւնս նորա յաւելեալ: Սակայն
երևոյթն այն՝ որպէս որմն բռնեալ՝ չէզև երկա-
րատեւ, այլ փուճով անգրէն ՛ի վեր երևեցան
հեծուկք և խեղաթիւր բերմունք, դարձան անդ-
րէն անէնդք և թշնամանք ընդդէմ վանական
վականաց, և երբեմն ՛ի բարբառ անսովոր
սեղմոյն, և չըմեռոյ իսկ նորին: Բայց զհետ ևս-
բաքանչիւրոցս այսոցիկ խեղաթիւրութենց՝ հա-
սանէր զիրք և հոգ ՛ի մուտս տալոյ արիա-

նել զայնս ՛ի ձեռն քաղցրաբանութեան: Համ-
բերէին այսոցիկ եղելոյն ըստ կարի քորք, այ-
լանդակ և թեթևամիտ բնաւորութեան նորա
ընծայելով զամենայն:

Ոչ ոք անդր քան զայն մտաբերէր առ ժա-
մանակ մի. այլ ՛ի միում աւուրց բանակուեալ
նորա ընդ ումեմն ՛ի քերց աշխատաւորաց զրը-
նոյ խմբէ, հշտամբեաց զնա սաստիապէս,
և ոչ դադարէր ՛ի թշնամանելոյ: Նա համբեր
ընդերկար խածանելով զրթունս. այլ ՛ի սաս-
տել համբերութենէն՝ վազեաց ընդ զրթունս
նորա բանս այս զի ՛ի դէպ ժամու և ՛ի տեղւոջ
կարէր յայտնել զոր գիտէր: Յայնմհետէ ոչ
ևս հանդարտէր Ձերթրուա. անցին աւուրք
սակաւ, և չերևէր քոյրն այն առաւօտու ՛ի
պաշտամանն իւրում. գնան խնդրել զնա ՛ի սե-
նեկին, չէր անդ. կարդան զնա բարձրաձայն,
չտայր պատասխանի, և ոչ ուրեք գտանէր: Եւ
ո՛ գիտէ՝ քանի գուշակութիւնք լինէին, եթէ
ոչ ՛ի խնդրելն զնա՝ գտանէին խրամատ մի
յորմն պարսպին, որով հաստատեցան ամենե-
քեան՝ զի խոյս տուեալ էր ընդ խրամատն:
Խնդիրք բազումք արարան ՛ի Մոնսյա և ՛ի շըր-
ջակայս, մանաւանդ ՛ի Մեսա՝ ուստի էր քոյրն
այն. գրեցաւ յայլ և այլ կողմանս, և չեզև
հնար առնուլ ուստեք ծանօթս: Իր թերևս ա-
ւելի ինչ գիտել, եթէ փոխանակ խնդրելոյ զնա
հեռի, մնա ուրեք պեղլին: Յետ երկար զար-
մացման, զի ոչ ոք կարէր կասկածել զնմանէ
այնպիսի ինչ, և յետ բազում խօսից, կինքեցին
զի հեռի ուրեք երթեալ էր ՛ի տար աշխարհ.

և զի ուրուք 'ի քեզ ասացեալ էր յանկարծ վայրապար, « Անտարակոյս Հոգւոյս վախճած պիտոր ըլլայ », համարեցաւ առժամանակ մի 'ի վանս անդ և արտաքոյ, զի 'ի Հոգւոյս էր ա- պաստանեալ: Այլ ոչ նոյն կարծիք էին ձեր- Թրուտայ. իբր ոչ եթէ յոյժ առնէր չհաւա- տալ, կամ հակառակէր կարծեաց հասարակաց և պատճառս 'ի գէմն ածէր. զի եթէ էին նորա պատճառք, ոչ ուրեք երբէք այսպէս կեղծաւո- րեալ էր զանդիտութիւն, և ոչ 'ի գէպս ուրեք այսպէս մտադիւր հրաժարեալ 'ի հետաքննե- լոյ, և 'ի խնդրելոյ զնորս գաղտնեաց: Սա- կայն որչափ լռէր զայնմանէ, այնչափ առաւել խորհէր 'ի նոյն. քանիցս 'ի տուէ պատկեր կինոջն այնորիկ գայր յանկարծ երևէր նմա 'ի մտի և արձանանայր անվտանգի. քանիցս ցանկա- լի էր իւր տեսանել զնա կենդանի և անձնաւոր, քան զպատկեր նորա կրել հանապազ 'ի միտս, քան զտիւ և զդիշեր ունել առաջի աչաց զա- հաւորն զայն և զսին կերպարան. քանիցս մտա- դիւրագոյն կամէր լսել խոկալէ զբարբառ նորա սպառնալից, քան զյնորական շշուկն նո- ւին յիմանալի լսելիս, և զկրկնել անլռելի բար- բառոյն անհունջ և յամառ քան զամենայն ու- րուք կենդանեաց:

Այսու յետոյ քան զգեղս զայս լեալ էր գա- լուստ Լուչիայի առ անուանեալն այն տիկին, և խօսակցութիւն նոցա, ուր զկայ էառ պատ- մութիւն մեր: Յաճախէր նա հարցուածս զհա- լածանաց իշխանին Ռատրիկեայ, այնպիսեաւ մանրախոյզ և անվհատ հետազօտութեամբ,

ընդ որ զարմանայր Լուչիա, և պարտ խոկ էր նմա զարմանալ. զի էէր նորա ածեալ զմոռա- հետաքրքրութիւն այնպիսի 'ի մայրապետ ոք զերաց այնպիսեաց: Եւ գատողութիւնք, զորս խառնէր նա ընդ խօսս իւր, ոչ ինչ նուազ էին օտարացուցիչք. Թուէր ծաղրել զսոսկումն Լու- չիայի յիշխանէն, և հարցանէր՝ թէ երբ թերևս հրեշ իմն իշխանն այն այնչափ ահարկու. և Թուէր համարել անմիտ և անբանաւոր զդժխա- մակութիւն աղջկանն վասն ոչ նախամեծար առ- նելոյ զնա քան զՈւինոյդ: Եւ զայսմանէ էս առ- նէր հարցուածս այնպիսիս, ընդ որս չառա- գումնեալ յապուշ հարկանէր աղջիկն:

Զգացեալ ապա՝ զի կարի իմն համարձակեալ էր լեզուին հեռևել ցնորից մտացն, խնդրէր անբասիր առնել զաղաչափութիւն իւր, և բարւոյ մասին տալ նմա վարկանել զայն, այլ ոչ յայղողեաց նմա փարատել զդժտիւն տալըս- Թիւն աղջկանն և զամբարտաւան սոսկումն: Ի գառ- նալ նորա առ մայրն, երբայ նմա զսիրտ իւր. և Ակնէս, որպէս փորձ այսպիսեաց, ելոյծ առաջ բանիւ զզարմանս նորա և զիւրացն գաղտնիս, և ասէ. « Աղջիկ, մի զարմանար. երբոր դուն ալ ինծի չափ աշխարք ճանչնալու ըլլաս, կը տեսնես որ զարմանալու բան չէ եղեր լսածդ: Մեծերը, ոմանք աւելի՝ ոմանք պակաս, ոմանք մեկ դիւին՝ ոմանք մեկալ դիւին, ամենքն ալ խել- քի պակսութիւն մը ունին. պէտք է Թողունք որ խօսին, մանաւանդ երբոր կը կարօտինք ի- րենց. մինչ ընել ցուցընենք իրենց խօսքը, իբր Թէ խօսածնին իրաւացի ըլլար: Տեսար որ ինչ

պէս արդիլէց իմ խօսքս, որպէս թէ անվայել բան մը ըսած ըլլայի, իմ փոյթս չէրաւ. ամէնքն ալ ասանկ են: Այսօր ամենայնիւ փառք Աստուծոյ, կերևնայ թէ աս խաթիրը վրանիս գութ ունեցաւ, ու կուզէ պաշտպանել ղմեզ: Բայց թէ որ Աստուած կեանք տայ, ու մեծերուս հետ գործք որ ունենամ, աղքիկ, կը տեսնաս կը լսես կը փորձես ասանկ բաներ »:

Իշձ ընորհս ինչ առնելոյ վանահօրն, հաճոյք պաշտպանելոյ հարստահարելոյ, համբաւ բարերարութեան՝ որ ի տուրք պաշտպանուելնէ անտի լուր լինելը, կարեկցութիւն ինն ընդ նուչիս, և սիրտիւն սրտի ի բարերարել անմեղին, և ի սիրել զնեղեալս, չարժեալ էին զսիրտ սիմինոյն յանձն առնուլ զՀոգ երկոցունց վախատէից տառապելոյ: Ի ինդիր և ի ընորհս նորա տուաւ նոցա բնակութիւն ի տան անտեսուհւոյն առ երի կուսաստանին, և սիրտ նոցա ընորհէին որպէս սպասաւորաց վանային: Խնդակցէին մայր ընդ գաւեր վասն զբաղանելոյ իւրեանց այսպէս փութով ապաստան ապահով և պատուաւոր: Յանկալի էր նոցա կալանծանօթ յամենեցունց, այլ ոչ էր գիւրին ի վանս անդ. մանաւանդ զի փոյթ մեծ էր առնն հղօրի ունել զսոցա զաղջիանէն, և ի սիրտ նորա՝ ի վերայ ցանկութեանն և խրոխտանաց՝ յաւելեալ էր և զայրոյթ ընդ պատրանս իւր և ընդ ձգանն իւրոյ ելանել ի դերև: Արդ թողեալ աստ զՎգնէս ընդ գաւերն յակառանի, գարձցուք ի պալատ իշխանին ի պահուն՝ յորում մայր գիտելոյ զիւս եղեռնաւորս ասպատակին:

Գ Լ Ո Ւ Խ ԺԱ.

Որպէս վհմակ բարակաց հալածեալ ի զուրզմի ի նաալատակաց, գառնայ տխուր գլխակոր և ձեռ ի կախ առ որսորդն, այսպէս ի խռովայոյզ դիշերին գառնայր գումարտակ Քաջայն ի պալատ իշխանին Ոտարիկեայ: Ինքն երթևեկէր ի մեծն ի միւսմ յամայն սենեկաց ի վերնայարկի, որ հայէր ի գաշտն. և զկայ առեալ սահպ ունկն դնէր և դիտէր ընդ ձեղքուած ցեցակերը դրանց պատուհանին անհամբեր և խռովեալ, ոչ միայն ընդ անստոյգ էրս ասպատակին, այլ և ընդ հեռևանս կասկածելս. զի ծանր և վտանգաւոր էր գործն քան զամենայն ձեռնարկս իւր: Այլ քաջալերէր զանձն զդուշութեամբք, որովք զառաջս կալեալ էր զկասկածանաց գործոյն, և ասէր ի մտի. « Կասկածողներուն վրայ կը ծիծաղիմ.

ոմ կուզես որ համարձակի գալու հոս աղջիկ մը փնտռելու. Թող գայ, Թող գայ ան գեղացին, որ աղեկ ընդունելութիւն մը ցոնայ: Աբեղան ալ Թող գայ որ տեսնայ: Իսկ պատառը! անիկայ ալ Թող Պէրկամոյ երթայ: Հապա արգարութիւնը! ան ալ դատաւորին Թողունք, տղայ չէ, և ոչ խենթ: Հապա Մելան! հոն ալ որոշուն հոգն է անոնց վրայ, ոմ կը հասնայ երթնց, ոմ գիտե երթնց աչերքին վրայ ըլլալը, կորսուածի պէս են. ոչ տէր ունին, ոչ հոգացող: Թող տուր, մեկդի դիր, մոռցիր զայն: Բայց կոմսը վաղը առտու! կը տեսնայ, կը տեսնայ որ խօսք է Թէ գործը ըրածս: Իսկ Թէ որ յանկարծ դժուարութիւն մը ծագի, ինչ գիտնամ... Թէ որ Թշնամի մը առիթ գտնայ... բայց կոմսն ալ հօգնէ լինի, ինքն ալ մէջն է, բոլոր ազգատոհմին պատիւը մէջ կերթայ»:

Բայց ուր առաւելն հանդչէին միտք իւր, և գոանէր զլուծումն ամենայն դժուարութեանց և ձարակ սատակադունի ախտին, էին ողբանք և խոստմունք՝ զրոս խորհէր ի կիր արկանել առ ի քաղցրացուցանել զԼուչիա, և ասէր. «Շատ պիտոր վախնայ խեղճ աղջիկը՝ մինակ ձեալով ան անշնորք մարդկանց մէջը... ամենէն ընդքոլը մէջերնին, երբա որ ես եմ, լինի պիտոր գիմե. Թէ որ աղաչէ»...

Մինչդեռ յայսոսիկ խորհէր, լուաւ ոտնաձայն, գիմեաց ի պատուհան, եթայ սակաւիկ մի, հայեցաւ. «Անունք են. բայց դեսպակը! (ՌԷՃԷԼԷՆ!) չար սատանայ, դեսպակը ուր է. ի՞րեք, չորս, ութը. ամենքը հոս են, Կրիզոյ ալ հետերնին. դեսպակը ուր է, չար սատանայ, Կրիզոյին կը պահանջեմ»:

Եւ ի մտանել նոցա ի նեղքս, եդ Կրիզոյ յանկիան ուրեք ի վայրապարկ սենեկի զգուսան ուխտաւորի զնոյր և զգեգձեակ. և որպէս իւրումն պաշտամանն էր անկ, ընդ որ ոչ ոք անգ նախահաձէր, եւ ի վեր՝ տալ համար իշխանին զպաշտամանէն: Նա սպասէր ի գլուխ սանդղոյն. և ի տեսանել զբերու և զանհեդեդ գէմս սրիկային՝ որոյ ի գերե եւեալ էր ձիգն, գոչեաց առ նա. «Ո՞ր ծեաց մեծ մեծ ջարգելը նեղդ, պարոն մնասարծ, պարոն զօրագլուխ, պարոն լինծլեղոզ»:

Պատասխանէ եւս Կրիզոյ, գեռ այն ինչ ոտամբ միով զնախկին սանդղամատն կոխեալ. «Ծանր է մարդուս ամենայն հաւատարմութեամբ ծառայելէն եաքը, իր պարտքը ընելէն ու իր կեանքը վտանգի գնելէն եաքը յանդիմանութիւն լսել»:

Յաւել Ռոսրիկ. «Ուրեմն լսենք, ինչպէս եղաւ». և գնաց ի սենեակ իւր, և Կրիզոյ ըզհետ նորա, ուր պատմեաց նմա զամենայն՝ որ ինչ պատրաստեալ էր, որ ինչ գործեալ, որ ինչ տեսեալ, և որ ինչ անուս, որ ինչ լուեալ, որ ինչ կասկածեալ, և որ ինչ հնարս ջարեաց հայթայթեալ. և զայս ամենայն պատմեաց նովին կարգաւ, նովին խառն ի խուռն չխոթիւ, նովին յերկուանօք և ապշութեամբ, որ հարկաւ զմիտս նորա գրաւէին:

Իշխանն ասէ. «Իրաւունք ունիս, ինչ որ

կրնայիր՝ ըրեր ես. բայց ... լսեես մը եղած պիտոր ըլլայ, ինչ կըսես։ Թէ որ իրաւցընէ կայ, ու կարենամ գտնալ, ու կընամ, տեսնաս ինչ պիտոր ընեմ»։ —

Կրնզոյ ասէ. « Իմ մոքէս ալ անցաւատ կասկածը. ու թէ որ իրաւ ելլէ, ու ատ անօրէնը բռնուի, իմ ձեռքս պէտք է տաս զինքը։ Մէկն որ ինծի տանկ գիշեր մը անցընել տուաւ, ինծի կրնայ օր իրեն հասկըցընեմ։ Բայց ինծի կերևնայ որ տակը ուրիշ բան մըն ալ պէտք է ըլլայ, որ հիմակուան հիմայ չիգիտցուիր։ Վաղը, տէր իմ, վաղը ամեն բան դուրս կելլէ »։ —

Իշխանն ասէ. « Գոնէ կրցաթը ընել որ չիճանչնան զքեզ »։ —

Կրնզոյ ասէ. « Յուսամ որ կրցայ »։

Եւ խօսակցութեանն եղեն պատուէրքը երբ, զորս իշխանն ետ նմա վասն վաղուն, և ասէ. « Ինչպէս ինքնիրենդ ալ կրնաս մոռնալ, պէտք է նախ շուտ մը երկու հոգի խրկես հիւպատոն, որ իմացընեն իրեն »...

Եւ տեսաք ի վերոյ որ ինչ պատուէր ղտուշտուքեան տուաւ նմա։

« Երկրորդ՝ պէտք է որ երկու հոգի ալ տրնակը պահպանելու խրկես, որ չըլլայ թէ անդորձ մարդիկ հոն մտնեն, ու դեսպակը տեսնան, ինչուան որ աս գիշերը վերցուի անկէց. ուրիշ բան չընել, որպէս զի չի կարենայ մէկը կասկածի երթալ։

« Մէյմըն ալ՝ երթաս անձամբ, ուրիշ աչքաքաց ու խելքով մարդիկ ալ խրկես, ու ժողովրը

գետն մէջը խառնուիք, փնտռէք, որ աս գիշերուան եղած չիտթուտթեանը վրայ բան մը իմանաք »։

Զայսոսիկ պատուէրս երես տուեալ իշխանն, մեկնեցաւ գնալ՝ի նիներ. եթող և Կրնզոյն գընալ, բազում դովութեամբ՝ի հրաժեշտի կացուցեալ զնա. յորմէ քաջայայտ երևեր՝ զի փոխարինել կամեր նախատանացն, որովք ընկալաւն զնա, և ասէ.

« Գնա պատուէ, խելօք Կրնզոյ, պէտք է որ կարօտութիւն ունենաս քուն ըլլալու. բոլոր օրը յոգնեցար ինչուան կես գիշեր. թող տուր վտանգը գեղացիներուն ձեռքը խնալուգ, ու համեստ աղջիկ մը յափշտակողներու գեմ եղած վճռին տակը խնալուգ՝ ուրիշ անգամ ինկածներէդ՝ի զատ, ու հոգն ալ անանկ ընդունելութիւն գտնալդ. մարդիկ շատ անգամ անանկ հատուցում կընեն, ինչ պիտոր ընես։ Բայց աս առթիս մէջ տեսար որ արգարութիւնը մեկին ալ որ չիհասնի, հոգը հոգը աշխրքիս մէջ ալ կը հասնի։ Գնա պատուէ հիմիկուս հիմայ. կրնայ ըլլալ որ օր մը աս բանիս ուրիշ ապացոյց մըն ալ տաս մեզի, ասկէց ալ մեծ »։

Ի վաղիս անդր Կրնզոյ ելեալ էր անդրէն՝ի գործ. և իշխանն յայտուցեալ՝ խնդիր արար Ատաիլեայ կոմսէ. սա ընդ տեսանէլն գնա զուարթ գիմաք և ծաղուս իմն գոչեաց. « Սուրբ Մարտինոս է այսօր, գիտէ՞ս »։ —

Պատասխանի ետ Լոտարիկ. « Ձեմ գիտեր ինչ ըսեմ. խոստացած գրաւս կը հատուցանեմ. բայց ասոր վրայ չէ որ սիրտս կայրի. բան

մը չըսի քեզի ինչուան հիմայ. մոռածեցի որ առ առաւոտ ապչեցընեմ զքեզ: Հերիք է, հիմայ ա մեն բան պատմեմ քեզի »:

Կոմսն 'ի լսել զամենայն մոգրութեամբ, որպիսի չէր յուսալ 'ի թեթեւամիտ առնչէն, ասէ. « Վեղարաւորին մասը կայ աս բանիս մէջ. սաւկած կատուի պէս կը շարժի, անխելք խօսքեր կըսէ. բայց խորամանկ ու բան խառնող մարդ կերևնայ ինծի, թէ ն դուն իմ վրաս չես վստահիր, ու ոչ երբեք յայտնի ըսիր ինծի ինչ բանի համար եկած ըլլալը անցեալ օր, անտարակոյս խաբխըբելու զքեզ »: —

Յայնժամ պատմեաց նմա Ռոտրիկ զխօսակցութիւն իւրեանց, և կոմսն գոչեաց. « Իսկ դուն այդչափ համբերութիւն ունեցար հա՞, Թոզուցիր որ երթայ ինչպէս եկեր էր »: —

« Ի՞նչ կուզէիր որ ընէի, բոլոր Իտալիայի վեղարաւորները Թշնամի կընէի ինծի »: —

Կոմսն ասէ. « Ես քու տեղդ որ ըլլայի, չէմ գիտեր կը մոռածէի՞ որ աշխարհիս վրայ ուրիշ վեղարաւորներ ալ կան ան յանդուգն անզգամին 'ի զատ: Մի Թէ խոհեմութեան կանոններուն մէջն ալ չկա՞յ կերպ մը վեղարաւորի մը հասկընելու իր չափը: Պէտք է առնուն եւեղբը. նել քաղաքավարութիւնները բոլոր կրօնքին, ան առնէն կրնայ մարդ առանց վտանգի ազէկ ծեծ մը քաշել ան կրօնքէն եղող մեկին: Հերիք է. խալըսեր է պատժէն՝ որուն արժանի էր. բայց ես զինքը իմ վրաս կառնեմ, կուզեմ առ մինթարութիւնը ունենալ սորվեցընելու իրեն՝ ինչպէս պէտք է խօսիլ ուրիշի հետ »: —

Իշխանն ասէ. « Ա՛լ գէշ կըլլայ ինծի »: —

« Վստահ եղիր վրաս՝ որ ազգականի ու բարեկամի պէս կը ծառայեմ քեզի »: —

« Ի՞նչ կը մոռածես ընել »: —

« Դեռ չեմ գիտեր. բայց սորդ եղիր որ կը սորվեցընեմ երեն. կը մոռածեմ... Կոմս հօրեղբայրս ծածուկ ժողովքին անդամ է, ան կը լմընցընէ առ բանը. սիրելի՛ հօրեղբայրս. մրջափ կինըրախանամ, քանի որ իր ձեռքովը գործք առաջ կը տանիմ, անանկ քաղաքագէտ քիչ կը գտնուի: Վաղը չէ մեկալն օր Միլան պիտոր երթամ. առ կամ ան կերպով վեղարաւորը կը սորվի »:

Յայնմ վայրի ածաւ նախաձաշ, այլ ոչ խափանեցաւ կարևորն այն խօսակցութիւն: Բայց Թէպէտև կոմսն Ասոիլնոս խօսքը համարձակ 'ի նպաստ հօրեղբօրորդւոյն, որպէս պահանջէին բարեկամութիւն և հաւատարկաց պատիւ ազգատոհմին, և որպէս ինքն իմանայր զբարեկամութիւն և զպատիւ. սակայն երբեք երբեք չկարէր արգելուլ զժպիտս ընդ քիմս յաղագս եղից երայն: Իսկ Ռոտրիկ, զի զերաց իւրոյ առնէր դատաստան, և զի կարծելով պատրաստեալ հանդարտութեամբ մեծ լիմն հարուած և ոչ յաջողեալ վասն ազգին, յուզէր 'ի ծանուն կրից, և 'ի տաղակալի խորհուրդս ընկերեալ, ասէր.

« Սա չորս դիւս գեղերը ինչ լեզընուն պիտոր տան անպիտան գեղացիք. բայց հոգս չէ: Տէրութեան կողմանէ ալ կը ծիծաղիմ, ապացոյց մը չունին ձեռքնին: Աղէկ որ աս առաւո

հիւպատոսին խմացուցի որ զդուշանայ, եւա-
ծին վկայութիւն չեսայ. անկէց ալ բան մը չէլ-
լեր, բայց լեզուընուն պիտոր տան. երկան որ
քշէ, կը ձանձրանամ. հերիք է բարբարոսներու
պէս վրաս ծիծաղելնին:

Կոմսն ասէ. « Շատ աղէկ ըրեք եւ. բայց սա
քուկինն գտատուորդ... շատ կամակոր, շատ ան-
խելք, շատ ձանձրացընող... Թէ որ հաւատա-
բիմ մարդ մըն է, իր պարտքը գիտցող, ատանկ
մարդկանց հետ բան մը որ կռնանեցաս, պէտք է
նայիլ որ նեղութիւն չհատնի իրենց: Յանկարծ
գեղացի հիւպատոսը վկայութիւն որ տայ, գա-
տաւորը որչափ ալ բարեկամ ըլլայ՝ պէտք է
որ »...

Ի վերջայ էած ցատմամբ ինն Ռոտրիկ. « Բայց
դուն իմ գործքերս կաւրես սա քոնը անոր
դէմ խօսքերտիդ, Թողլ չիտալով որ խօսի, վրան
ծիծաղելով ալ երբեմն: Ինչ խօսք է սա, գա-
տաւոր մը որչափ ալ անխելք ու կամակոր ըլ-
լայ, չիկրնար հաւատարիմ ըլլալ »:

Յայնժամ կոմսն հայելով 'ի նա զարմաց-
մամբ, ասէ. « Գիտէս, սիրելի, կը սկսիմ հաւ-
տալու՝ որ գուն քիչ մը կը վախնաս. յոյզ ան
գատաւորին վրայ գրեր ես »... —

« Ինչ ըսել է, գուն չէիր ըսողը՝ որ վնասը
մարդու սեղ դնելու է »: —

« Ըսի, ու երբոր հարկաւոր գործք մը ունիմ
նամ հետը, կը ցուցընեմ քեզի որ տալայ չեմ.
կրնամ անձամբ երթալ, այցելութիւն ալ ընել
իրեն. որչափ կուրախանայ գիտէս. կրնամ ալ
Թողուլ՝ որ կէս ժամ դբսին վրայ խօսի, մեր

սպանիացի բերդակալին վրայ ալ, ու ամեն բա-
նի մէջ իրաւունք տալ իրեն, անխելք խօսքե-
րուն ալ: Չեմ պզտիկ խօսք մը կը ձգեմ հօրեզ-
բօրս վրայ, որ ծածուկ ժողովքին անդամներէն
է. գիտէս ինչ գործք կը տեսնայ ան պզտիկ
խօսքը իր ականջը ձգելս: Եարը եարը՝ ինքը ա-
ւելի կարօտ է մեր պաշտպանութեանը, քան
Թէ դուն իր հաւանութեանը. աղէկ մարդ
կըլլամ, կերթամ իրեն, ու վնասը կը պատրաս-
տեմ որ ուզէ աղէկութիւն ընել քեզի »:

Ձեռ այսց և այսպիսեաց բանից՝ եւ կոմսն
Աստիւնոս հեծանել յորս. իսկ Ռոտրիկ մնայր
դարձեալ Կրնզոյի: Եհաս նա անագան 'ի ժամ
ճաշոյ, տալ զերացն զրոյց: Ազմուկ այնր գիշե-
րոյ այնպիսի դղրդիւն գործեալ էր 'ի գեղջն,
և անհետանալ անտի երեցուն այնպիսի լեալ
էր պատահումն, զի ընտանորապէս ըստ խնամոյ
և ըստ հետաքրքրութեան հետաղօտութիւնք
լինէին ամենայն ճգամբք և փութով սնդու-
թեամբ: Եւ 'ի հակառակէն բազում էին իրա-
գէտք, և չէր մարթ միաբանել ամենեցուն 'ի
լուռթիւն: Ընդ երեւել փերփերեռայ առ
դրան, հասանէին 'ի վերայ նորա աստի և ան-
տի հարցանել՝ ոյր ուրուք այնպիսի արհաւիրս
արկեալ էր 'ի տէր իւր: Նորա յերկերելով 'ի
մտի զՀանգամանս իրացն, խելամուտ լեալ՝ զի
Ագինսի զնա քաղցրաբանութեամբ ընծռնեալ
էր 'ի պատրանս, այնչափ էր զայրացեալ ընդ
նենգութիւնն, զի կարօտեր սթափելոյ զջայ-
րոյթ իւր: Իբր ոչ երեւէ այսմ կամ այնմ ուրեք
արանչիայր զերազանակէ պատրանացն, զոր ծած-

կէր. այլ ղեւաւոյն նիւթելոյ առ տէր իւր չկա-
րէր լուել. մանաւանդ զի դաւն այն նիւթեալ
էր ՚ի բարեյոյսն, ՚ի գովելի պատանւոյն,
և յանմեղ աղջկանէն: Եւ իբրև տէր Ազոնաիոս
խաւիւ պատուիրէր նմա, և աղաչէր խոկ զնա
ջերմագոյնս, լուռ կալ և մի խօսել. նա պատաս-
խանէր.

« Ա՛տ ալ ըսելու բան է. յայտնի ու բնական
բան է որ պէտք չէ խօսիլ»: Բայց դաղտնիքն
այն մեծ և կարևոր էին ՚ի սրտի հէք աղախ-
նոյն, որպէս ՚ի հին և ՚ի տակաւ շրջանակեալ տա-
կառի գինի նոր, որ պղպջակէ, եռայ և զնկէ ՚ի
բաց ոստուցանէ, չէ շուրջանակի, վրփուռ ՚ի
դուրս արձակէ, և ընդ չերտին մածուած ՚ի
դուրս ծորեալ կայլակէ մինչև կարել առնուլ
զճաշակ նորին, և գուշակել որպիսի լինչ եցէ ՚ի
տակառն: Ձերուաց, որում ոչն Թուէր երբ-
եմն գոլ քան զայլս տեղեակ, ոչ փոքր լինչ
պարծանս իւր համարեալ զերկիւղն մեծ՝ զոր
կրեաց, և վասն ձեռնտու լինելոյ իւրոյ ՚ի գործ՝
որ չէր լինչ զերծ յերեռանէ՝ Թուէր յայնժամ
հաւատարեալ այլոց ՚ի մարդկանէ, և ուռնոյր
ցպայթումն յեռանդանէ պանծալոյ ընդ այն:
Թոնի և արտաքոյ մնացեալ յայնմ գիշերի ՚ի
տանէ քան զսովորականն ժամ, ՚ի դառնալ
իւրում անդր ձեպով և այլայլեալ դիմօք, և առ
յուզելոյ սրտին՝ պատրաստ ՚ի յայտնել զիրան
անկեղծաբար, չկարաց լուել զայն կնոջն՝ որ
չէր լինչ համր: Աւաւել քան զամենեսին գտաւ
խորհրդատահ մանուկն Մենիկոյ. զի ՚ի պատ-
մել իւրում ծնողացն զերթ իւր և զպատճառ

գնալոյն՝ այնպէս Թուէցաւ նոցա երկիւղալի
գործակից լինել որդւոյ իւրեանց առ ՚ի դերև
հանել զձեռնարկ իշխանին, զի հաղիւ Թողլն
մանկանն կատարել զպատմութիւնն, և սպառ-
նալեօք պատուիրեցին նմա՝ մի ումեք ասել ինչ.
և ոչ այնու համարեալ զանձինս յապահովի,
խորհեցան ՚ի վաղիւ անդր, և զաւուրս ինչ,
ունել զնա ՚ի տան: Այլ զի՞նչ. ինքեանք խոկ
ապա չազակրատեալ ընդ բնակիչս գեղջն, ա-
ռանց կամելոյ ցուցանել զի ահեղի լինչ քան
զնոսա գիտէին, ՚ի լինել բանից զգիտախտանէ
երեցունց եղկելեացն ոչրպէս, վասն էր, և ոչ.
յաւելուին որպէս յայտնի լինչ զպատահիլ
նոցա ՚ի վանս ՚ի Փէսքարէն. և այս ևս մասն
գաղտնեաց ընծայեալ ՚ի բերանս ամենեցուն:

Յամենայն մասանց ասոի ծանօթութեանց
կցորդելոյ ՚ի մի, որպէս է սովորութիւն, և ՚ի
ծոպից և ՚ի վերջաւորաց բնականապէս չուրջ
ածելոյ, յօրինեցաւ պատմութիւն այնպիսի
ստոյգ և պարզ, մինչև հաւատարիմ լինել և առ
խիստ քննաբանս: Այլ ասպատակն այն սրիկ-
կայից, կարի ծանր և քաջայայտ մասն յարա-
կից պատմութեանն, աղօտ մնացեալ՝ չփոթէր
զամենայն պատմութիւնն: Մխաբանէին ամենե-
քեան ՚ի բամբասել զՈտարիկ, այլն ամենայն
էր մեծին և գուշակութիւնք այլև այլ: Բազում
բանք լինէին զերկոցունց սրիկայիցն, որք երե-
ւեցան ՚ի տարաժամ երեկոյի յուղղոջ, և ըզ-
միւսմէն՝ որ կայր առ դրան պանդոկին. այլ
զնոր լոյս կարէր տալ գործ այսպիսի աննչանակ:
Հարցանէին ցպանդոկապետն՝ Թէ ո՞ լեալ էր

առ նմա յերկիւեան երեկոյի. այլ նա ասէր չէ-
չէլ իսկ Թէ տեսեալ էցէ զոք յայնմ երեկոյի,
և ինքէր՝ զի էր պանդոկն որպէս նաւահանգիստ
՝ի ծովու:

Աչառել քան զամենայն ինչ չիտնէրը զմիտս,
և աղմիկը զգուշակութիւնս, ուխտաւորն այն՝
զոր կամէին սրինկայք սպանանել, և երթեալ
էր ընդ նոսա, կամ ածեալ ՝ի նոցանէ ՝ի բաց:
Եւ առ ինչ եկեալ էր. ասէին Թէ էր ՝ի հոգւոց
քաւարանի, երևեալ յօգնութիւն կանանցն:
Էր ուխտաւոր կենդանի, զոր կամէին սրինկայք
սպանանել՝ Թէ գուցէ ազատեսցէ զբենակիսն: Էր մի ՝ի նոցունց իսկ սրինկայից,
ծպտեալ ՝ի ձև ուխտաւորի: Էր այս ոք, էր
այն ոք, և այլ ինչ բազում, զոր ամենայն ճար-
տարմութիւն և փորձ Կրնղոյն չբաւէր ՝ի
գուշակել Թէ ո՛ եւեալ էցէ, եթէ չէր նորա ՝ի
միտ առեալ զայս մտան պատմութեան ՝ի բանից
այլոց: Այլ որպէս յայտ է ընթերցողաց, այն
որ չիտնէրը զայլս, քաջայայտ քան զամենայն
էր նմա, և որպէս բանալի ՝ի ձեռին նորա,
որով մեհենը զայլ տեղեկութիւնս առեալս իւ-
րովի կամ ՝ի ձեռն այլոց՝ որք ՝ի ձեռանէ նորա
հետազօտէին. և գիտաց կալմել նոքօք պատ-
մութիւն վասն Ռոտրիկեայ պարզ ըստ բաւա-
կանին: Փակեցաւ ընդ նմա անդէն ՝ի սենեկի,
և ծանոյց նմա զգաւ երկոցունց եղկելեացն խո-
սեցելոց, որով՝ի յայտ գայնն պատճառք գա-
տարկ գտանելոյ ատանն, և հարկանելոյ զանգա-
կին, և զի էր հարկ մտան լինելոյ ուրուք՝ որ-
պէս ֆաչքն երկոքին ասէին: Ծանոյց և զիա-

խոսսա խօսեցելոցն, զորոյ էէր լինչ գԺուարին
գիտել զպատճառս, զի երկնչէին ըմբռնեալք
՝ի յանցանս. և զի աղգ ևս լեալ էր նոցա ՝ի
յայտնել յարձակմանն և ՝ի գլորգել գեղջն:
Յաւել ևս՝ զի ՝ի փէնքաբէն էին նոքա ապաս-
տանեալ. անդր քան զայն ոչ անցանէր գիտու-
թիւն նորա:

Հաճոյ Թուեցաւ Ռոտրիկեայ՝ զի էէր ոք
լեալ մատնիչ, և ՝ի ծածուկ միայր գործ իւր.
այլ հաճութիւնն այն եղև հարեանցի ինչ և վեր
՝ի վերոյ: Իսկ զվախճուցելոցն գոչեաց. « Ո՞ւ
բեմն փախան, հա՛, մեկուսել. անզգամ վեղարա-
բաւորն ալ, հա՛ »: Այլ յեռինս այս բարբառ՝
կերկերաձայն և ծայրատ եղանէր ընդ չրթունս
նորա, և ընդ ատամունս՝ որովք խածանէր ըզ-
մատն. և դէմք իւր տպել՝ հանդոյն չարախոս-
ի վատ կրեցն. « Ան անզգամ վեղարաւորը պա-
տիժը պիտոր գանէ: Կրնղոյ, ես լմն չեմ՝ քանի
որ չեմ գիտեր ուր ըլլալնին. կուզեմ գիտալ,
կուզեմ որ գտնամ . . . ան իրկուն ան, կու-
զեմ գիտալ ուր ծածկուած ըլլալնին, սիրտս
հանգիստ չէ. մեկէն գնա փէնքաբէն, փնտռէ
գտիր, քեզի չորս քօլնաթ մեկէն, ու իմպաշտ
պանութիւնս միջ. ատ իրկուն կուզեմ գիտ-
նալ: Իսկ ան անզգամ վեղարաւորը »!...

Ելանէ Կրնղոյ անդրէն չատպարէզ. յայնմ
իսկ երեկոյի կարաց նա ածել առ Ռոտրիկ ըզ-
ցանկացեալն տեղեկութիւն, այսպէս.

Մի ՝ի բերկրանաց կենցաղոյս է բարեկա-
մութիւն, և մի ՝ի բերկրանաց բարեկամու-
թեան՝ կարել վստահել ՝ի բարեկամ ոք զգաղտ-

նիս: Այդ բարեկամք չէն հանգոյն խօսեցեալոց զոյդ մի ևեթ, այլ սովորաբար խրատքանչիւր ոմանք են բարեկամք առաւել քան զմի որպէս չղթայ, զորոյ չէ ումեք գտանել զծայր: Ապա ի գտանել ուրուք զբերկրութիւնն զայն հաւատալոյ ումեք զդաղտնիս իւր, յանկալի առնէ ունել և նմա ընդդէմ բերկրութիւն: Աղաչէ զնա՝ մի ումեք յայտնել զդաղտնիսն, այլ որ ըզպայմանն զայն Հնդբիա ըստ բառիցն խմանալ կամիցէ, հատանէ զձեզ յաջողութեան բերկրանացն: Հոտաբակաց սովորութիւն հրամայէ ի հաւատարիմ ևեթ բարեկամ հաւատալ զդաղտնիս, ի վերայ եդեալ զայն պայման: Այսպէս մտերիմ ի մտերմէ ընծայեան գաղտնիք ընդ չղթայ անեղականն՝ մինչև հատանիցեն յոյնքն այնորիկ, զոր չկամէր որ առաջին յայտնեցոյց զդաղտնիսն: Պարտ իսկ էր յամել գաղտնեացն ընդհերևոյթ յընթացս, եթէ իւրաքանչիւր ումեք չէին բարեկամք առաւել քան զերկուս, այսինքն յորմէ լսէ և որում յայտնէ ծածկաբար. այլ են բարեբաստիկք ոմանք, որոց բիւրաւորք են բարեկամք. և ի յայտնել գաղտնեացն յոյնքն միոյ ուրուք ի նոցանէ՝ այնպէս սրընթաց և բազմապատիկ առնուն չղթան, զի չէ մարթ հատանել զչեռ: Զերև պատմագրին ստուգել՝ ընդ քանի բերան անցին գաղտնիքն, զոր Կրիզոյն պատուէր առեալ էր հետաքննել. էլք իրացն եղեն, զի այրն բարեմիտ՝ որ ածեալն էր զԱդնէս և զՂուչիա ի Մոնցա, ի դառնալ իւրում ընդ երեկս սայլիւն, նախ քան զհասանել ի տուն՝ դիպաւ ի փէս-

քարէն ումեք ի մտերիմ բարեկամաց, և պատմեաց նմա ընդ խիստ գաղտնեօք զբարեգործութիւնն՝ զոր արարեալ էր, և որ ի կարգին. և կարաց Կրիզոյ յետ երկուց ժամուց հատանել պատմել Ռոտրիկեայ՝ զի Լուչիա ընդ մօրն ապաստանեալ կայր ի վանս ուրեք ի Մոնցա, և Ինէնցոյ յառաջ անցեալ մինչև ի Մելան:

Ռոտրիկ զդաց եղեռնաւոր նմին բերկրութիւն ընդ բաժանումն խօսեցելոցն, և յոյս անօրէն ըղձիցն հատանելոյ: Խորհէր զմեծ մասն գնչերոյն յեղանակ հնարիցն. և վաղվաղորոյ եղև՝ խորհուրդք կրկին ի մուխ. մին հատատաւեայ, միւսն երկնեալ: Առաջինն էր յղել խնդրն զԿրիզոյ ի Մոնցա, առնուլ ստուգագոյն զոյացս զաղջկանէն, և գիտել՝ թէ եցէ՞ մարթ փորձ լինել փորձել: Կոչեաց անդէն զԿրիզոյ ընդ հատատարիմն իւր, և եդեալ ի ձեռս նորա զերբեսին քօլօնաթան, և գովեալ զձարտարութիւն նորա՝ որով արժանի լեալ էր մրցանակին, ետ նմա զպատուէրն՝ զոր էր խորհեալ»:

Կրիզոյ վարանեալ ընդ այն, ասէ. «Տէր»...—

«Ի՞նչ է, էնկրցայ որոշ հասկըցընել»: —

«Թէ որ կարելի է, ուրիշ մը խրկեիր»: —

«Ինչո՞ւ»: —

«Մեռնելու ալ պատրաստ եմ տիրոջս համար, իմ պարտքս է. բայց գիտեմ որ ինքն ալ չուզեր իր հպատակներուն կեանքը վտանգի դնել»: —

«Ադեկ է. ուրեմն»: —

«Տէրութիւնդ գիտէ որ արդէն քանի մը հապարտութեան վէիս կայ վրաս. հոս հրա-

մանքիդ պաշտպանութեանը տակն էմ, ու պզտի գունդ մըն ենք. գատաւորը տանը բարեկամ է, բռնողներն ալ ահնածութիւն կրնեն ինծմէ. ես ալ... Թէպէտ պատիւ մը չէ ինծի, բայց հանդիստ ապրելու համար աղէկ կերթամ հետերնին. Մէյնառու մէջ հրամանքիդ ծառանեբուն նշանաղգեստը ծանօթ է. բայց Մունցա քաղքին մէջ ընդհակառակն ես ծանօթ եմ: Գիտէ տէրտուքիւնդ, (պարծելու համար չէ ըսածս), որ գլխս տէրտութեան ձեռքը մտանողը, համ գլուխս իրենց տանողը, ինչ մեծ վարձք ունի. Հարիւր հատիկ քօշնաթ իրարու վրայ, ու իշխանուհութիւն՝ երկու մահտապարտ խալըսելու »: —

« Ի՞նչ կըսես. ուրեմն գունդն հիմայ վախկոտ չան մը պէս եղեր ես, որ դրանն առջևէն անցնողներուն ոտքը միայն կը խածնէ, եաւնը նայելով որ անեցիք պաշտպանեն զինքը, ու չհամարձակիր քիչ մը հեռանալ »: —

« Կարծեմ որ, տէր իմ, բաւական վորձ տուած եմ »...

« Ուրեմն »:

Յայնժամ Կրիլոյ ի վորձ արիւրթեան եւ գեալ, ասէ համարձակ. « Ուրեմն! սեպէ որ աս խօսքերս ըսած չըլլամ. պատրաստ եմ երթալու, առիւծի սրտով, նապաստակի ոտքերով »:

Իշխանն ասէ. « Բայց ես չըսի քեզի որ միտնակ երթաս, երկու հոգի ըլլայ՝ հետդ մտ կարիձնեբրէն, Աֆրէձեաթեան ու Թիւռաւրիթեան. ու գնա արիաբար Կրիլոյի պէս: Սատանէն ականջը խուր. երբեք ձեզի պէս կարիձնեբ՝

որ ձեր գործին կերթաք, ոչ չիթողուր որ անցնիք երթաք: Մունցայի յանցաւոր բռնողները խիստ ձանձրացած պիտոր ըլլան իրենց կեանքէն՝ որ հարիւր քօշնաթի համար առանկ վտանգաւոր խաղ մը խաղան: Ակէկ ի զատ՝ չեմ կարծեր ալ որ այնչափ անծանօթ ըլլամ անոնց, որ իմ մարդս բանի տեղ չիդնեն »:

Այսպէս սակաւիկ մի ամաչեցուցեալ զԿրիլոյ, ետ նայ ասպա յոգունս և մանրամասն հրամանս. և առեալ Կրիլոյի զերկուսին ալ ակիլեցս՝ մեկնեցաւ զուարթադէմ և խրոխտ, այլ ի սրտէ նղովելով և զՄունցա, և զձիուս գլխատպարտուԹեան, և զիշխանս, և զխեղաթիւր կամս տէրանց. և ընթանայր որպէս գայլ տովալըճկ, որ կծկեալ ի փոր, ոսկերաց կողերն ի չայտ եկեալ, իջանէ ի ձիւնախաղաղ լերանց կատարձագին ի գաշտ, երբեք երբեք զկայ առեալ ոտն ի կախ, տատանելով զգին թաւամազ, ընդդամբքն ի վեր հոտոտելով զայրը չողզողզ. եթէ երբեք զհոտ մարդոյ կամ զերկաթոյ առնիցէ, ցցէ զականջս, և չորչորէ զարնիւնուշտ ականջիս, յորոց եռանդն աւարի ցայտէ և ահ ոստրգին:

Մինս այլ ինչ՝ զոր երկնէր Ռոտրիկ, էր գըտանել զեղանակ խափանելոյ զՌինդոյ՝մի գարշ առնել առ Լուչիա, մի և զերկիր գեղջն կոխել: Աւ այս խորհէր զպատառնալեաց և զգարանաց հանել լուր, որ ի ձեռն բարեկամաց ի լսելիս նորա հասեալ՝ ահ արկցէ ի նա չգառնալ անդրէն. ապահովագոյն ևս համարէր տալ զնա տարագրել ի սահմանաց պետուհեանն: Եւ

առ 'ի յաջողել 'ի նոյն, խորհէը 'ի ձեռն արդարութեան քան բռնութեան գոն գործել: Մարթ էր ածել 'ի ձև եղեռան զգաւն գործեալ 'ի նմանէ 'ի տան ժողովրդապետին, նըկարագրելով զայն որպէս յարձակումն, և 'ի ձեռն փաստաբանին զկուսանել գատաւորին՝ զի օրէն էր վան այնորիկ առաքել ձերբակալ առնել զՌէնցոյ: Այլ ոչ 'ի կուրծս անկեալ՝ զի չէր արժան զլռանգաւոր դէպն հռչակ հարկանել, առանց աչխատ առնելոյ զմիտս իւր՝ խորհուրդ կալաւ յայտնել փաստաբանին Թըլնձուկքակողի որչափ ինչ կարևոր էր առ 'ի տալ նմա 'ի միտ առնուլ զկնճռս իւր: Սակը 'ի մոխ. « Բանը այսչափ ձանձրոյցաւ, փաստաբանը ապ չէ, կրնայ մոռածել ինծի օգտակար բան մը, Թիձուկ մը կը գտնայ ան դէղացին մէջը ձգելու. Թէ որ չէ, անուշը կը փոխեմ»: Բայց որպէս ոչ գոն ուրեք պատահէ, մինչդեռ նա խորհէը 'ի փաստաբանն որպէս յայր աղօղակ 'ի ծառայել յօգուտ իւր 'ի մասնիս յայսմիկ, այլ ոք (և ո՞ կարծէը) նա ինքն Ռէնցոյ ծառայէը նմա աղօղագոյն և գիպղագոյն, քան զոր մարթ էր խորհել փաստաբանին:

Տեսանէի յաձախ մանուկ մի սիրելի, առաջել խակ քան զարժանն սեթափ, և փոյթ 'ի հաստատիմ յամենայնի զանձն ընծայեցուցանել. տեսանէի զնա յաձախ՝ զի պատուէը ընդ երեսս մուծանել ընդ յարկաւ զհնդիկ խոչքոբակս, զոր Թողոյը ազատս 'ի տուընջեան 'ի պարտէզ մի փոքրիկ: Կամէր զամենեսեան 'ի միասին վարել զնոսա 'ի ներքոս, այլ 'ի զուր

ձգնէը. մին յաջ միւսն յահեակ խուսափէը. և մինչ հովիւն փոքրիկ դիմէր զհետ միոյն վարել զնա յերամակն, այլք երկու և երեք օգտէին ասոի և անոի 'ի բաց. մինչև Թողեալ զնոսա 'ի կամս իւրեանց, որք առ գրանն կային՝ մղէը նախ զնոսա 'ի ներքոս, և ապա երթայը այլոցն զհետ՝ ուռնել մի և երկուս կամ երիս, որպէս կարէին: Խաղ լիմն այսպիսի անկ է և մեզ առնել զհետ մերոյ օրերոյս. պատապարեալ զՎուչիա, եղեալք զհետ Ռաբրիկեայ. և արդ պարտ է մեզ Թողուլ զնա, առ 'ի դիմել զհետ Ռէնցոյի՝ զոր Թողաք անտես:

Յետ տխրագին բաժանմանն, զոր պատմեցաք, գնայր նա 'ի Մոնցոյէ 'ի Մելան. և որպիսի սրտիւ, մարթ է ամենեցուն դիւրաւ ածել զմտաւ: Մեկնել 'ի տանէ, Թողուլ զձեռնարուհւոս իւր, և մանաւանդ հեռանալ 'ի խօսեցելոյն, անկանել յուզի՝ առանց գիտելոյ ուր հասանէը նմա հանդչել, և այս ամենայն վասն անօրէն լչխանին: Ի խորհել զմի կայացանէ կամ զմիւս՝ ընկղմէը խորասոյզ 'ի զայրոյթ և 'ի վրէժ խնդրութիւն. այլ գառնայր ապա 'ի միտս իւր՝ որ ինչ վասն նորա ընդ բարւոյ վերադարձոյն ազօթս մատուցին յեկեղեցւոջն 'ի Փէսքարէն, և զչաստասանայր: Զարթնոյր 'ի նմա գարձեալ զայրոյթ. այլ տեսեալ պատկեր ուրեք նկարեալ զորմով, զկայ առնոյր վայրկ մի, և բացաւ գլխով աղօթէը գարձեալ վասն նորա. որպէս զի առաւել քան զքան անգամ 'ի ձանապարհին յայնմիկ սպան և յարոյց 'ի սրտի իւրում զՈտորիկ: Երկուստեք ձանապարհին

էին Թուման՝ բարձունք, և չաւիղ՝ ի միջի ոզղմուտ և քարուտ, ահաւասիկ յանուանէ՝ ի խոր, որպէս զի չէտ անձրևաց Թուէին ահաւքն այնորիկ որպէս առուք և վտակք. և ուրեք ուրեք՝ ի գնաստադին վայրս լճանայր ուղին նաւարկելի: Ի վայրս անդ վերելք փոքրիկ սանդղաձևք՝ ի Թուման՝ ցուցանէին չաւիղ ընդ դաշտս ապարեալ յայլոց ուղևորաց: Եւ Ռէնոյ ընդ միւ՝ ի վերելից անտի՝ ի Թուման, հասս անտի զերկնաբերձ կաթողիկէն մայր եկեղեցւոյն, ոչ երբ՝ ի քաղաքամիջի ամբարձեալ՝ այլ որպէս յանապատի ուրեք. և մուտացեալ զամենայն ազէտս իւր, կայր անդ հեռուստ՝ ի գնին ուխտաւորդին այնորիկ հրաշակերտի, զորմէ անդստին՝ ի սրբոյ տեղ ուխտ լուեալ էր յաճախս խօսելոյ: Եւ դարձեալ յհաս՝ ի սուղ վայրկենի, հասս ընդ ոլորտս երկրին զարս սղոցաձև գագաթանց Լերանց. և՝ ի տեսանելն՝ ի նոսա բարձրագոյն և յոտակ գնացն Ուհսեհան, հուաց արիւն՝ ի սրբոյն. եկաց վայրիկ մի ակնարկելով՝ ի կողմն յայն ակնկատելոյ, և ապա գարձուցեալ տխրագին զդէմս, գնայր յառաջ ընդ ուղին: Տակաւ գալ յին յերևան զանգակատունք և աշտարակք, գմբեթք և յարկք տպաւորանից. էր յայնժամ՝ ի ճանապարհն, և այլ ևս ընթացեալ ոչ սակաւ, իբրև մտ եղև՝ ի քաղաքն՝ մտաբեր առ մի յուղևորաց, և ողջունեալ զնա ամենայն քաղցրութեամբ, ասէ.

« Շնորք երկ, պարոն »: —

« Ի՞նչ կը հրամմես, կարիճ պատանեակ »: —

« Կրնա՞ս ցուցընել ինծի ամենէն կարճ ճամ

բան՝ վերադարձելոյ վանքը երթալու, ուր որ է Հայր Պոնաւենթուրան »:

Այլն, առ որ մատեաւ Ռէնոյ, էր բարեկեցիկ ոմն՝ ի բնակչաց շրջակայ վայրաց, որոյ երթեալ յայնմ առաւօտու՝ ի Մելան զգործոց ինչ իւրոց, դառնայր ձեռնով մեծաւ՝ ոչ ինչ վճարել կարացեալ, և փութայր հասանել՝ ի տուն՝ առանց ուրեք յամելոյ. սակայն ոչ ինչ ցուցանելով նմա դժկամակութիւն, պատասխանի ետ մարդասիրապէս.

« Սիրելի որդեակ, վանքեր շատ կան հոս, պէտք է որ աւելի որոշ ըսես՝ ո՛րն է ուզած վանքդ »:

Յայնժամ Ռէնոյ հանեալ՝ ի ծոցոյ զգիր Հօր Քրիստափորի, ետոյց նմա. և նորա ընթերցեալ յերեսագրի անդ՝ Ա՛ռ աբՆէնէան դրան, դարձոյց՝ ի նա զդիրն՝ ասելով.

« Բախտաւոր ես, կտրիճ տղայ, ուզած վանքդ քիչ հեռու է ասկից. ձախ կողմդ առ պզտիկ ճամբան բռնէ՝ որն որ ամենէն կարուճն է, քիչ վայրկենի մէջ կը հասնիս երկայն ուցած շինքի մը անկիւն, որ քաղքին լուսարձակն է. անոր շրջանակի փոսին եզերքէն գնա, դիմացդ կելլէ արևելեան դուռը: Մտիր, ու երբ կամ չորսհարիւր քայլ որ առնես, հրապարակ մը կը տեսնես՝ չորս գին աղտոտ կնճնինեերով (ֆաթա աղամ). հոն է վանքը, չես կրնար սխալիլ »:

Եւ կինքեալ զբան իւր բարեաձև հրաժեշտիւ, մեկնեցաւ՝ ի բաց: Յապուշ հարաբ Ռէնոյ, շինեալ ընդ մարդասիրութիւն բնակչաց քաղաքին ընդ շինականս, ոչ գիտեալով զի էր օրն այն

սր անսովոր, յորում Թիկնոցք խռնարհէին առաջի բաճկոնաց։ Գնաց ընդ ցուցեալն ուղի, և գտաւ ՚ի գուռնն արևելեան։ Ոչ է պարտ ընթերցողին, ՚ի լսել զանուն դրանս, համարել զայն որպիսի այժմ է. ՚ի մտանել Ռիւնցոյի ընդ այն, ձանապարհն արտաքին ընդ երկայնութիւն ևեթ լաղարէթին էր ուղիղ, և ապա գնայր ազամուղ և անձուկ՝ ցանկապատս երկուսեանք։ Իսկ գուռնն այն կազմեր յերկուց աղիւսակերտ քառակուսի սեանց՝ բերելով ՚ի վեր քիւ նեղ ՚ի ծածկոյթ փեղկից դրանն. և առընթեր կայր մաքսանոց։ Պատուարք ևքառնէին խեղաթիւր, և երկիրն էր խորտակուրտ ՚ի բեկտելոց խեցեղինաց խառն ՚ի խուռն անդր արկելոց։ Ուղին, որ մտելոցն ընդ այն բանայր առաջի, էր դոգաւս որպիսի ե տեսանել արդ զգուռնն Թոզա։ Փոս նեղ անցանէր ընդ մէջ ցեայր սակաւ ինչ հեռի ՚ի դրանէն, և բաժանէր յերկուս կամարս գետս վոշխելոցս կամ ըստ եղանակաց տղմալից։ Ի սեղեաց, ուր էրն և ե իսկ արդ Պորկեթեթոյ ուղի փոքրիկ, կամարէր փոսն ՚ի լուսլիս։ Անդ էր սիւն մի, կոչեցեալ սրբոյն Դիոնիսեայ, խաչ ՚ի ծայրին բերելով. յայնմ և յահեկէ էին պարտէզք և ցանկապատք, և անակք ընդ մէջ՝ բնակեալք գրեթէ առ հասարակ ՚ի Թաւիշաց։

Եմուտ Ռիւնցոյ ընդ այն և էանց, առանց ուշադրութ ՚ի մաքսաւորաց հայելոյ ՚ի նա. ընդ որ զարմացաւ, զի ՚ի սակաւուց անտի գիւղակացոյ՝ որոց էր պանծալ ընդ երեթ խրեանց ՚ի Մլէան, լուեալ էր մեծամեծս գՀետաղօտու-

Թեանց և գՀարցուածոց՝ որոց ներքոյ անկանէին եկաւորք ՚ի շինից։ Ուղին էր այնպէս անմարպի, զի եթէ ոչ շնչիւն ինն աղօտ լսելի լինէր ՚ի հեռուստ՝ որ ցուցանէր գղջիւն մեծ ՚ի քաղաքին, Թուէր նմա մտանել ՚ի քաղաք անբնակ։ Եւ ՚ի գնալն յառաջ ոչ գիտեալով զինչ խորհել, հասեա ընդ երկիր հետս ինչ սպիտակ և կակուղ որպէս գՀեան. այլ ձիւն ոչ չաւղաձև անկանի, և ոչ յայնմ եղանակի տօնորաբար. խռնարհեցաւ, ընկեաց, չօշափեաց, ծանեաւ գի էր սպիւր, և ասէ ընդ միտս. «Շատ առատաբերիւն պիտք է ըլլալ Մլէանոյ երկիրը, որ ասանկ կը փճացընեն Աստուծոյ տուած բարիքը. հաքը կուգեն հասկըցընել մեզի՝ որ ամեն գի սով կայ. ասանկ կընեն որ խեղճ գեղացիք ոտք կելլեն»։

Սակաւիկ միւս ևս յառաջ խաղացեալ առ սեամբն, հասեա ՚ի ստորոտս նորին այլ ինն առաւել անսովոր. գի զաստիճանօք խարսխին սփռեալ կային որպէս քարինք ՚ի հեղեղատէ, որ էին քարինք. և եթէ էին ՚ի սեղան ուրեք հայագործի, ոչ ոք կարեր երկայել թէ չկայեն նկանակք. բայց Ռիւնցոյ չկարեր հաւատալ աչացն, գի նորանչան ինչ էր տեսանել նկանակս անդ ընդ երկիրը, և ասէ զարձեալ ՚ի մտի. «Տեսնելք ինչ բան է». մատեաւ ՚ի սիւն անդր, և խռնարհեալ հաւ գի կայնցանէ. և էր արդարև նկանակ բոլորչի գերման, որպիսի հաղիւ ՚ի ոմնո ձաշակէր Ռիւնցոյ. և առ զարմացման՝ ասէ բարձրաձայն. «Իրաւ հաց է երէր. ուրեմն աս երկիրը բանի տեղ չեն դներ

հացը, ասանկ առեն ալ. աշխատանք կը սեպեն ծռիլ՝ ինկածներն ալ վերցընելու. կարծես որ Ֆռանքանեայի երկիրն է հոս »:

Յետ ընթանալոյ մղոնս ասան, 'ի զով առաւօտու, 'ի տեսիլ նկանակին, ընդ զարմացման զարթեաւ 'ի նա ախորժակ, և խորհէր յանձին. « Ա՞նենմ թէ չառնեմ. հացերը հոս շատ ներուն ձգեր են, ալ ազէկ չէ՞ որ խեղճ քրիստոնեայ մը ուտէ. հոգը հոգը տէրն ալ որ ելլէ, կը վճարեմ» : Ասէ և դնէ 'ի քսակին ընկանային՝ զոր ունէր 'ի ձեռին. և առնու միւս այլ, դնէ և զայն 'ի միւս քսակին. և միւս ևս առեալ՝ սկսանի ճաշակել. և դնայր առաւել ևս տարակուսեալ, ցանկալով զվան երթել: Եւ երբ տես 'ի գնալն՝ զի գային մարդիկ 'ի քաղաքէն, և առաջինք 'ի նոցանէ այր մի և կին, և ղհետ նոցա պատանի մի. երեքին ևս բեռամբ՝ առաւել քան զկար իւրեանց ծանուր. երեքին ևս 'ի ձև այլանդակ. ձորձք նոցա կամ ցնցոտիք ալեբաթաթաւ, և դէմք նոցա ընդ ալերը հրացեալ և խեղաթիւրեալ. և գնային կորակոր վանն բեռինն, և կոչկոճեալք 'ի ցաւոց: Այրն հազիւ զօրէր կրել զուսովք զքուրձ մեծ ալեր ծակոտեալ, ուստի ցանէր փոքր 'ի շատէ ալիւր յոտղտոլ, մանաւանդ 'ի գայթելն և 'ի չարժիլ 'ի հաւաստարակչութիւն բեռինն: Այլանդակագոյն տեսիլ կնոջն էր, երան անհեգեգ մեծափոր, բաղուկք կրկին որպէս սափորոյ մեծի ունկուածք՝ յուլանկ 'ի փորն կորացեալք, և բարձք երկոքին յոտից ցծուռնկս բոհանիք՝ որ գեղեաւալ տատանէին 'ի գնացս: Բայց Ովհաննէս

ուշիւ հայեցեալ 'ի նա, ետես զի անհեգեգն այն երևեալ իրան՝ էր չըշաղգեստ կանացի, զոր 'ի վեր չըշեալ ունէր կինն զգեստոյց լի ալեբք, որչափ ինչ կարէր տանել գոգն լայնատարը, փոքր մի ևս աւելի. որպէս զի յամենայն քայլափոխս ցնդէր ինչ 'ի բաց հողմավար: Իսկ պատանեակն ունէր երկոքումբք ձեռօք 'ի վեր զգեստով սակաւի զի հացիւ. այլ զի բարձք նորա կարճագոյնք քան զծնողացն էին, յետս մնայր սուղ ինչ, և յերկայնել երբեմն երբեմն զքայլսն առ 'ի հասանել զհետ նոցա, կորտեամբ հասարակչութեան սակաւուոյն՝ անկանէին նկանակք ինչ 'ի բաց: Ասէ ցնա մայրն.

« Բանի մը չես իգար, անպիտան. հացերը դուրս կը թափես »: —

Պատասխանէ պատանեակն. « Ե՞ս կը թափեմ. ինչ ընեմ, ինքիրենուն կ'իյնան »: —

« Ազէկ որ ձեռքս բան կայ », ասէ կինն՝ տատանելով զկուռփս. որպէս թէ առ 'ի հարկանել զհէնք պատանեակն. և 'ի չարժմանէ անտի ցնդեցաւ 'ի բաց առաւել քան որչափ ինչ ալեբք էր պիտոյ առ 'ի գործել զերկոսին նկատնական անկեալս 'ի սակաւուոյն: Յայնժամ ասէ այրն.

« Բան չկայ. կը գառնանք կառնենք ինկածները, կամ ուրիշ մը Թոզ գտնայ առնէ. այսչափ առեն է որ նեղութիւն կը քաշէնք հացի պակսութենէն, հիմայ որ առատութեան առեն է, գոհանանք »:

Յայնմ վայրի գայն և այլք 'ի դրանէ, և ոմն 'ի նոցանէ մատուցեալ առ կինն, հարցանէ. « Ո՞ւր է հաց առնելու տեղը »: —

« Ալ առաջ », ասէ կինն. և իբրև հեռացան քայլը իբր տասն, յաւել քրթմնջելով. « Ա՛խ անպիտան գեղացիները հիմայ կուգան պարպելու ամեն փուռերն ու ամպարները, մեզի բան չմնար » :—

Ասէ ցնա այրն. « Ինչ մը մկուռն, քիչ մը մեկալին. մարդուն նեղութիւն կուտաս. քիչ մը առատ եղիր, առա՛ » :—

Յայսցանէ և յայնց այսպիսի իրաց՝ ղորս տեսանէր և լսէր Ոխնցոյ, ՚ի միտ էառ՝ զի հասեալ էր ՚ի քաղաք մի բարելից, և զի օրն այն էր օր շահելոյ. այս ինքն զի ամենայն ոք որչափ կամէրն և զօրէր՝ կարէր առնուլ, կուտէիս փոխարէն հատուցանելով: Բայց թէպէտև ցանկամ դովել ընծայեցուցանել զգեղջուկն մեր հնէք, սակայն անկեղծութիւն պատմութեանս հարկ առնէ ասել՝ զի առաջին զգացումն նորա եղև հաճութիւն ընդ այն. այնչափ ոհաճ էր նա ընդ սովորական դնացս իրաց, զի յօժարէր ընդ յեղափոխութիւն նոցին որով և իցէ օրինակաւ: Եւ զի չէր նա առաւել ինչ քան զբաւար ժամանակին, համարէր և ինքն ըստ կարծեաց կամ ըստ կրից հասարակաց, զի պակասութեան հայցի չարեացասպարտք կին մանրավաճառք և հացագործք. և արդարացի կարծէր զամենայն հնարս բառնալոյ ՚ի ձեռաց նոցա ըզպարկէն, զոր ըստ այմ՝ կարծեաց՝ զանպիտին նոքա անգթաբար սովելոյ ժողովրդեանն: Սակայն խորհուրդ կալաւ հեռի կալ յաղմկէ. և ինդայր ընդ յանձն լինել վեղարաւորի՝ որ կարէր գտանել իւր պատսպարան, և հոգալ զինքն հայրաբար:

Յայսոսիկ խորհելով, և տեսանելով այլ ևս յափշտակողս՝ որ գայլին լի աւարաւ, արար զինացուած ուղեգոյն մինչև գնան:

Ուր յառնէ արդ պատան հոյակապ հանդերձ բարձր պատշգամաւն, էր անդ յայնժամ, և սակաւ ամօք իսկ յառաջ՝ հրապարակ, և ՚ի սպառուած նորին՝ եկեղեցի և մենաստան վերաբերից, ինձնիք քառակի մեծամեծք զառաջեաւ: Ինդակիւց եմ, ոչ առանց նախանձու, ընդ ընթերցողս իմ՝ որոց չիցէ տեսեալ զերս որպէս կինն յայնժամ. զի պատանիք են, և չէ նոցա լեալ պարապ մերօրեաթանց բազմից:

Ոխնցոյ չոգաւ գէպ ուղիղ ՚ի գուռն մենաստանին, եդեալ ՚ի ծոց իւր զինացեալ կէս նըշանակին. Էհան զնամակն, և կալեալ զայն պատրաստ ՚ի ձեռին, ձգեաց զզանգակ դրանն: Բացաւ գռնակ պատուհանին, զորով կայր վանգակ երկաթի, և երեւեալ Եղբայրն դերնատան, ասէ.

« Ո՞վ է » :—

« Մէկն որ կարևորթուղթ մը բերած է Հայր Ֆրիստափորէն առ Հայր Պոնաւենթուրա » :—

« Տուր ինծի », ասէ դռնապանն, եդեալ զձեռն ՚ի խաղաղամ վանգակին :—

« Չէ, չէ », ասէ Ոխնցոյ. « Ես իրեն ձեռքը պիտոր տամ » :—

« Հոս չէ » :—

« Թող որ ներս մտնամ, կը սպասեմ իրեն » :—

Պատասխանէ Եղբայրն. « Ըսածս ըրէ, գնա ժամը սպասէ. քիչ մը աղօթք ըրէ ինչուան որ գայ. հիմայ վանքը չխմոցուիր » : Այսց և վա-

կեաց զդռնակն։ Եւ մնաց Ռէնցոյ՝ նամակ ՚ի ձեռին. արար քայլս ինչ՝ գնալ յեկեղեցին ըստ խրատուս դռնապանին. բայց անկաւ ՚ի միտս նորա՝ այլ առնել նախ աղմկին միւսանգամ. անց ընդ հրապարակն, չոգաւ ՚ի ծայր ուղւոյն, և եկաց անդ՝ բաղուկ զբազկաւ ածեալ խաչանիշ ՚ի կուրծս. և հայեր ՚ի ձախակողմն ՚ի խորս քաղաքին, ուր առաւել էր աղմուկ շփոթին և աղաղակ։ Յորձանք ձգեցին զնա անդր, և ասէ.

« Երթամ տեսանեմ». և ձգեալ ՚ի դուրս ըզկէս նկանակին, կրծելով զայն՝ երթայր յայն կողմն։ Այլ Թողցուք զնա ՚ի գնացս, և կարճ ՚ի կարճոյ ըստ կարի ասացցուք զսկիզբն և զըզպատճառս զաղմկին։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Այն երկրորդ ամ էր նուաղումն թերոց երկրի. յառաջնումն, որ ինչ յանցելոց ամաց յաւելեալ էին համբառք, լցին ՚ի մանիզմիերին. և ժողովուրդն ոչ յաղ և ոչ սովեալ, այլ անպաշար ամենևին, եհաս ՚ի հունձս 1628 ամին, զորմէ պատմուածս է։ Արդ հունձքս այսոքիկ ուխտեալք ըղձալիք՝ պատահեցին Թըշուառագոյնք քան զհերուին. կէս՝ յարկածից եղանակաց, ոչ միայն յերկրին Միլանոյ՝ այլ և ՚ի շրջակայ գաւառս մինչև ցհեռաստան. և կէս՝ յեղեռանէ մարդկան։ Աւեր և ապականութիւն, զոր էած պատերազմն զարմանալի՝ ՚ի վեր անդր ՚ի մեզ յիշատակեալ՝ եղեն պատճառք, որով կալուածք բաղումք մերձաւորագոյնք այնմիկ՝ առաւել քան զօրէն հանապազօր թողան անգործ ՚ի գեղջկէից, որք փոխանակ

հայթայթելոյ անձանց և այլոց վաստակօք իբրեանց հաց՝ սահմանեցան մուրանալ զայն։

Ասացեալ զանց զօրէն հանապազօր. զի հարկք անտանելիք արկեալք երկրին ՚ի հանդոյն լինն զօշաքաղութենէ և յանխնայութենէ, գնայք սովորականք՝ ևս և ՚ի խաղաղութեան ժամանակի՝ դադարելոյ ՚ի կողմանն յայնոսիկ զօրականին, զոր վէպք ազետաւորք աւուրցն այնոցիկ հաւասարեն գնացից ասպատակի թշնամեաց, և այլ ևս պատճառք զորս չէ տեղւոյս յիշատակել, վաղ իսկ պատրաստէին յուշիկ երկրին Միլանու սխուր արգասիս. վանն որոյ աղէտքն՝ զոր պատմեմք՝ էին յեղակարծ լինն զայրացուածն յաբեւացն այնոցիկ։ Չասին որպիսի և իցէ հունձքն այն. այլ չէ ևս շահեմարանեալ, պարէն զօրուն, և անանձրեւութ յայնմանէ վտանուածն, այնպէս սպառեցին զհամբարս, զի անդէն սկսաւ սովն, և ընդ սովոյն անհրաժեշտ թանկութիւն, վերապրեալ այլ փրկաւէտ։

Յետանել թանկութեան ըստ ջուր, ծնանին միշտ ՚ի յոգւոնս կարծիք՝ զի ոչ ՚ի նուազութենէ պատճառաբերութեան երկրի իցէ այն. ՚ի մեռացեալս յայնժամ անկանին երկիւղ և կասկած չարագուշակ. համարի թէ կայցէ յօրէսն բաւական, և զի ՚ի չվաճառելոյ զայն ըստ չափու պիտոյից՝ յառաջ գայցեն չարիքն։ Կարծիք անդրեղի, այլ չարթուցանեն զղայրոյթ և զբոյս մթերիչք յօրենոյ սոդոմ կամ կարծեցեալ, տեսիլք կալուածոց՝ որ փոքր ՚ի շատէ վաճառեն, հացարարք առգնողք, և ամենեքին իսկ՝ որ շատ և որ սակաւ վաճառականք իցեն կամ

համարիցին յօրենոյ, ամբաստանին պատճառք սովոյն և թանկութեան, և նշաւակք արձանացեան արանձնացս հասարակաց, առեալք մեծ և փոքր։ Գուշակին որպէս հաւաստի ատենդմթերանոցք և չտեմարանք յօրենոյ զեղուածք և պաշարապինդք, պատմի թէ անհամար քրձից յօրենոյ լեալ, հաւատարիմ առնի ամբաւութիւն համբարոց ՚ի տար աշխարհս յղելոյ, և համբաւի նոցին հաւատեալ՝ իբր թէ անսխալ գայցէ յօրէսն ՚ի Միլան։

Յառաջիկէ աղերս առ դատաւորս վանն խնամոյ՝ որ կարևոր թուին կամ գէթ թուէին ցայնժամ ժողովրդեան, կարևորաց առ՚ի գարձուցանել զառաւտութիւն. և խնամ ՚ի գործ առնեն դատաւորք։ Այլ քանզի ամենայն խըղճմտութիւն, որչափ և հզօրք էին, ոչ զօրեն ընդդէմ ղեկոյս պարենից, և ոչ ՚ի տարաժամու հայթայթել յօրէսն, մանաւանդ զի ոչ ՚ի ձեռս նոցա էր տալ ածել համբարս ՚ի կողմանց՝ ուր էր առատութիւն, առնէին և յաձախէին ազէտք, և ժողովրդեան համարէր զայն ՚ի չգոյէ կամ ՚ի ակարութենէ խնամոց, և դրդռէր ՚ի բողոք զանդգնագոյնս և զդիմադրաւս. և ըստ արկածից բախտին եղիտ զոք ըստ սրտի ելբուամ։

Մինչդեռ քաղաքապետն Ֆերնանտէզ Պոտուովեան, որ հրամայէրն ՚ի պաշարման Մոնսէրբաթոյի, չէր անդ ՚ի Միլան, փոխանորդէր ՚ի տեղի նորա տաճնադպրին մեծ Աղտոն Ֆերրէր, և ինքն սպանիացի։ Որ իբրև եառեալ, (և ո՞ չտեսանէր զայն), զի տեղեալի ամենեցուն էր սակ

հացի, խորհեցաւ՝ այլ սխալեաց յոյժ, շատ համարել զպատուէր առ այն, և սահմանեաց զսակ հացի։ Գինքն սահմանեալք ի նմանէ լինէին արգաւ, եթէ սովորաբար գրիւ յորենոյ վաճառէր երեսուն լիտրայից. այլ վաճառէր այն յայնժամ մինչև ութսուն լիտրայից. և էր որպէս թէ պատուոյ այլայլել զթուական մկրտութեանն, առ ի դառնալ ի մանկութիւն։

Հրամանք ոչ այսչափ անխորհուրդք, և ոչ այսչափ անիրաւք, մեայնի անգործք վասն իրացն անտեղութեան. այլ ի կատարումն սրբին հսկէր Ժողովուրդն։ Որոյ տեսանելով զնոչս իւր յետոյ ապա յօրէնս եղեալ, ոչ նեղէր համարել զայն ի կատակ։ Դիմեաց անդէն ի հացանոցս խնդրել հաց ըստ օրինադրեալն սակի, և խնդրել սպառնալեօք և ուժգին, որպէս պատահէ՝ ուր կիրք և զօրութիւն և օրէնք միաբանին։ Սաստէին հացարարք ընդդէմ ամբոխին, որոյ խառն ի խուռն լինէ լուեալ՝ զի պարտ էր բռնի առնուլ հաց, պաշարէր հանապազ զՀացանոցս՝ առ ի վայելել յառաջութիւն որչափ կարէին։ Սակայն փութային ի թրել ի զանգել յարկանել ի փուռն և ի հանել անդադար. վաստակել ասեմ և ընդ քրտան գալ առաւել քան զօր հանապազ ի ոյժ իւրեանց. որ թէ լցէ լինէ ախորժելի, չիք ոք որ չդիտեցէ։

Բայց ասաի գառաւօրք հաց հրամայէին հասուցանել, անաւ Ժողովուրդն խնդրէր հաց. և ի յամել ուրուք ի հացարարաց ոտիկէր և քրթմնջէր մեծաձայն, և սպառնայր առնել

իւր իրաւունս, որ չարագոյն քան զամենայն եղերունս աշխարհի է. և չէր այլ հնար, հարկ էր թրել եփել և ածել ի վաճառ։ Այլ առ ի հանապազորդել յայն՝ չէր բաւական հրամայել և սպառնալ, պարտ էր՝ զի և հրամանն գոյր հնարաւոր, որ եթէ փոքր միւս ևս տևէր, լինէր անհնարին։ Յուցանէին գառաւորաց հացագործք՝ զի անիրաւ և անտանելի էր բեռնն ի վերայ իւրեանց եդեալ, յայտ առնէին ի փուռն արկանել զթէ և ի բաց գնալ. և յամէին ևեթ յոր վայր կարէին, յուսալով զի տէր ուր ուրեմն մեծ առենագլխին տացէ իրաւանց։ Բայց Ֆէրրէր անյողդողդ պատասխանի առնէր՝ զի հացարարք շատ իսկ և շատ շահեալ էին յանցեալ ամս, և զի շատ իսկ և շատ շահելոց էին ի գառնալ առաւօտեան. և դարձեալ՝ զի տեսցի, զի խորհեսցի առնել նոցա Թերևս փոխարէն ինչ ի յապառնի։ Ի բաւացի արդեօք Թուէին նմա պատճառքս այսոքիկ ի դէմ ածեալք, կամ զի տեսանելով յարդեանց իրաց զանհնարութիւն պինդ ուներ զիրողական իւր՝ կամէր Թողուլ այնց զբաշխումն նորին առնել, (զի ո՞ կարէր տեսանել զինուս նորա), կալաւ հաստատուն զոր ինչ սահմանեալն էր։ Ցեղոյ ապա տանուլտքաք (իշխանութիւն ազատ որերոյ, որ տևեաց մինչև ցննսուն և վեցերորդ ամ անցելոյ դարուն) դրեցին առ քաղաքապետն՝ յորում վանդիկ կայր քաղաքն, երս ինչ իրացն խնդրելով ի նմանէ։

Կանճալոս խորատուղեալ ի գործ պատե-

բազմին, արար որ ինչ ընթերցողն ինքնին կարէ դուշակել. կարգեաց առեան ինչ, առաւել նմա իշխանութիւն՝ սահմանել այլ սակ հայոյ, որով մարթ էր կեալ երկաքանչիւր կողման: Ժողովեցան առնականքն, և յետ ողջունիլ՝ մեծարանաց, նախերգանաց, հառաչանաց՝ յերկառանց՝ անընչանակ խօսից և խոսափմանց, ձգեալք առ հասարակ 'ի մի վճիռ՝ կարևոր դառեալ 'ի բնաւից, և գիտելով զի խաղ ինչ դեռ ժողովրին խաղային, խելամուտ լեալ զի ոչ դոյր այլ հնար, ինքեանն յաւելուլ զդինս հայի: Ոգի առին հայագործք, այլ ժողովուրդն զայրացաւ:

Ընդ երեկս նախ քան զօր հասանելոյ Ռէնոյի 'ի Մելան՝ ժողոյք և հրապարակք եռային բազմութեամբ մարդկան, որք վառեալ սրտմտութեամբ, յորդեալ 'ի նոյն խորհուրդս, ծանօթք և օտարք, առանց ազգ առնելոյ իրերաց, յանդգնասոյց լինն ժողովելին, որպէս շնթք անձրևոյ 'ի նոյն զառ 'ի վայր անկեալք: Ամենայն բան յաւելոյր հատատութիւն զխորհուրդս մտաց նոցա, դրգռել զկիրս լսողաց և զխօսողաց. էին 'ի նոսա և ցուրտք արեամբ, որք բաղում ախորժանօք կային 'ի զինն պղտորելոյ ջրոյն, և դուն դործելին պղտորել զայն և ևս պատճառաբանութեամբք և պատմութեամբք՝ զորս դիտէն ձարտարել խորագէտք, և ոգիք զայրացեալք յօժարին 'ի հաւատալ այնց. և յորդորելին զմիմեանս որպէս ինչ 'ի նմա, մինչ չև յատակեալ ջրոյն: Յոդունք, չև ևս հատատեալ ինչ 'ի մտի՝ բայց միայն զի պարտ էր դործել ինչ,

գնային 'ի հանգիստ: Նախ քան զլուսանալ աւուրն ծածկեցան անդրկն ճանապարհք 'ի խաւարե. արք և կանայք, ծերք և տղայք, դորձաւորք և աղքատք, խառն 'ի խուռն ժողովեալ կային. ուրեք շշունջ խառնաձայն 'ի բազմաց լսելի լինէր, այլ ուրեք այլ ոք հրապարակախօսէր, ծափս հարկանելին ուննդիրք. սա հարցանէր մեռակային զայն ինչ լուեալն յոմեքէ. նա երկրորդէր զաղաղակ ազդեալ յայլմէ լիւր լսելիս. ամենայն ուրեք տրտունջ սպառնալիք և զարմանք. նոյն սուղ բարբառ էր 'ի բերանս ամենեցուն:

Դէպք ևեթ պակասէին, և թեթև ինչ մըղումն, առ 'ի բանից անցանել 'ի գործ. և այս ոչ յամեաց: Ելանէին 'ի հացանոցաց պատառնիք կողով 'ի թիկունս՝ ածել հաց 'ի տունս հանապազօրեայս. միոյ 'ի պատանեացն չարաբաստից պատահումն 'ի մի 'ի ժողովոց անտի՝ եղև որպէս լուցկի անկեալ 'ի վառօդ. աղաղակեցին բիւրաւորք միաբարբառ. « Տեսէք որ հաց կայ թէ չէ »: Եւ մի 'ի նոցանէ ասէ. « Հապա, մեր բռնաւորներուն՝ որ առատութեան մէջ կը լողան՝ ու կուզեն որ մենք անօթութենէ մեռնինք, կայ ու կայ »: Եւ մերձեալ 'ի պատանին՝ արկ ձեռն 'ի ծնօտ կողովոյն, և ձգեալ զայն ասէ. « Թող տեսնամ »: Կարմրի, դեղնի, զդողանի հարկանի պատանին, համբուրվ լինն ասել. « Թող որ երթամ »: այլ լեզուն 'ի քիմն կցի, և թուլացուցեալ զբազուկս, ձգնի հանել 'ի փոկոց կողովոյն: Գոչեն այլք. « Վայր առ կողովը »: և թուռն հարեալ արկանեն զայն յերկիր. ձգեն

ընդ օդս ղծածկոյթն կտաւի, բուրումն եղիկ շուրջ ծաւալի։ Ասէ մին. «Մենք ալ վոյ ուն նինք, մենք ալ պէտք է ուտենք»։ Եւ առեալ զմի ի նմանակաց՝ ամբառնայ ի վեր, և ցուցեալ զայն ամբոխին, խածանէ։ Եւ ահա ձեռք ամենեցուն ի կողոպել, նմանակք ընդ օդս, և ի քթթթել սկան սպառեալ հայց ի կողովի։ Եւ որոց չէր ինչ անկեալ ի ձեռս, հրապուրեալք ի տեսիլ աւարի այլոց, և խրախուսեալք ի դիւրութենէ աւար հարկանելոյ, գիմեն խըմբովին ի խնդիր այլոցն կողոպոց, և դատարկեն որքանեայց և պատահեն։ Զէին իսկ պէտք յարձակելոյ ի վերայ կրելեացն, զի որք ըստ արկածից բախտին շուրջ գնային՝ Թողլն կամակար ղբեռն ի Թիւնց, և վախեան։ Սակայն գարձեալ՝ որք ունայնաձեռն էին մնացեալ, որոց անհամեմատ առաւելագոյն էր Թիւ, որք չէին լցեալ բազում աւարաւ, և որոց խորհուրդ ի մոլ էր մեծագոյն յոյժ յաւրուցանել աղմուկ չիոճի, ի հայհոյս ի հայհոյն զայն աղաղակէին։

Ի փողոցն կոչեցեալ Ֆորխա պէ սէրվէ, էր և է իսկ ցարդ՝ հացանոց, ընդ որ բերելով անուն՝ որ ի բարբառ Իտալական նշանակէ ոսկի ֆոյփոպոնց, այլ ըստ միլանեցւոցն բարբառոյ այնպէս խաւարաձայն և վայրենի, զի այրուբենիք չկարեն յօդել զայն։ Ցայն կողմն խուժեաց ամբոխն. առաջք կրպակին հարցանէին զպատահանին՝ որ դառնայր անբեռն. նա ահաբեկ և խռովեալ, Թողովելով զարկածս իւր պատմէր. և ահա լսելի լինի ոռնաձայն և աղաղակ, զայրանայ և մծոի, երևին կարտպետք խուժանին։

Կէսք աղաղակեն՝ Գոյէ, գոյէ ըռա ըէ. այլք փութան խնդրել օգնութիւն ի հարիւրապետէ զօրաց. վակեն այլք շտապաւ զկրպակն, և նեցուկս յեռակոյս դրանցն հաստատեն. խռնել սկանի ամբոխն և աղաղակել՝ հայ, հայ, բոյէ, բոյէ։

Վայրկ մի, և հասանէ հարիւրապետն գումարտակաւ ոտիպաւորաց. ի բայ, ի բայ, ի գունա ի՞պանի՞ը, գոյ անդս հարիւրապետին ևս պիգաւորաց. գոչէ ինքն և զօրք իւր։ Ամբոխն, որ չէ ևս յոյժ էր խռնեալ, տայ սուղ ինչ տեղի. և մտանեն ոտիպաւորք, զկայ առնուն, Թէ ոչ ըստ կարգի, այլ համագունդ առ գրան հացանոցին։

Խօսի հարիւրապետն առ ամբոխն. «Ի՞նչ բան ունիք հոս, սիրելիք, աներկիւղ գայեք. Աստուածմէ չէք վախնար. ինչ կըսէ Թագաւորը լսելու որ ըլլայ։ Ձեզի ինաստեր ձեղ, աներկիւղ գարձէք, ձեզ նայիմ. ինչ կուզէք հոս այսչափ բազմութիւն. գէշ կընիք հոգիներնուդ ալ մարմիններնուդ ալ. աներկիւղ, աներկիւղ»։

Բայց Թէպէտև որք տեսանէինն զգէմս հարիւրապետին և զձայն նորա լսէին՝ կամին հնազանդել, սակայն զնաքրդ կարէին մեկնել գընալ ի տուն՝ մղեալք ի յետուստ, և որք մղէինն՝ ոտիպետք յայլոց, որպէս ալիք յալեաց և նորա գարձեալ հետզհետէ մինչև ի վերջ ամբոխին՝ որ երթայր և յաւելլոյր։ Հարիւրապետն հեղձամղձուկ ի խռանէն՝ պատուէր տայր զօրացն, «Եռև քշեցէք բազմութիւնը՝ որ շունչ կարենամ առնել, բայց մեկուն մի ինաստէք. Թէ որ կընանք՝ կրպակը մնանենք, դուռը գարկէք, եռև քշեցէք մեկալնանք»։

Եփ՛, եփ՛, գոչեն զինուորքը, և անկեալ ՚ի միասին ՚ի վերայ առաջնոց՝ մինչեն զնոսա սիգա-բինիւ յետս։ Նոքա ձչիւ ընկրկին ըստ կարի, թէ-կամեք ընդ հուրծս հարեալ, արմաւ ընդ փորս, գարշապարօք ընդ ոտս. որոց չկեցան գալին. և այնպէս ընկճէին զմիմեանս և խոխէին, զի որոց ՚ի միջն կային՝ ցանկալի էր յանձն առնուլ զա-մենայն ապՓ առ ՚ի վերծանել այլեսբ։ Հազիւ ուրեմն եղև զինուորաց բանալ առաջի գրան անձուկ ինչ վայր. բայեկ հարիւրապետն սակս կոչէ բանալ զդրսունս։ Որք ՚ի ներքս անդ կային՝ տեսեալ զնա ընդ պատուհանն, լինանեն անդէն և բանան։ Մտանէ հարիւրապետն, կոչէ զզին-նուորս, մտանեն և նոքա՝ ի ըստ միոջէ սողոս-կեալք ՚ի ներքս, արկելով յետնոց զամբոխն սիգօք։ Եւ իբրև մտին ՚ի ներքս ամենեքեան, և եդան նիզակ և նետուկք դրանն, եւ վազվա-զակի հարիւրապետն, և երևեալ ՚ի պատու-հանէ՝ գոչէր բարձրաձայն. « Տներնիդ գացէք, սիրելիք, ով որ շուտ մը կերթայ, չնպաս-ժուբր »։

Ո՛վ, որպիսի՛ աղմուկ չիտնի. ամենեցուն աչք ՚ի նա հայեին. և ՚ի խառնաձայն գոչիւն աղա-զակին՝ զոր ամբոխն արձակէր ՚ի պատասխա-նի, ոչ այլ ինչ լինէր լսելի, այլ հա՛յ, հա՛յ, բա-յեփ բայե՛փ։

Յաւէտ ապա հարիւրապետն. « Խելքնիդ գլուխնիդ ժողովեցէք, գարձէք գացէք անդր նիդ. հայ կունենաք, բայց ունենալըն կերալը սա չէ։... Է՛, է՛, ինչ կընէք հոս գրան տակը. կը սեսնամ, գիտէք, ըզածնիդ, խենթուքիւն

մ՛ընէք, աղէկ ձայեցէք, մեծ յանցանք է ը-զածնիդ, հիմայ հուգամ վար գրէք սա էր-կաթները, գադրեցէք, ամօթ է։ Դուք միւսն-ցիկը, որ ձեր աղէկութեամբը անուանի էք բո-լոր աշխարք, մանկ ըրէք, դուք միտ խելօք զաւկրներ եղած է։.. Հայ անզգամներ »...

Այսը յանկարծ փոփոխութեան բարբառոյ պատճառ եղև այն, զի մի՛ ի խելօք պատուոյ անտի ձգեաց քար ՚ի ճակատ հարիւրապետին, և ե-հար զնախատողին։

Նա ՚ի փակել զպատուհանն, և յընկրկել յետս ձեռով, գոչէր տակաւին. Հայ անզգաները։ Եւ թէպետ կոկորդիլը ամենայն զօրութեամբ գոչէր, բանք նորա գովասանականք և նախա-տականք ընդ օդս ցնդէին ՚ի խառնաձայն ազա-զակէն, որ հնչէր ՚ի ստորուստ։ Իսկ զոր տեսա-նէին ասէր, էր ճիգն՝ զոր առաջինք ՚ի փողոց անդր սպրդեալք՝ գործէին վիմօք և երկա-թով, առ ՚ի խորտակել զդրսունս և խլել զեր-կաթի վանդակս պատուհանաց, և գործն էր յաւաջագէմ։

Յայնմ վայրի տեսլը և համբակ կրպակին, որ կային ՚ի պատուհանս վերնայարկաց մեծ-բիւք վիմաց, զորս հայթայթեալ էր նոցա թե-րևս քահկիով զքարայատակ միոյ ՚ի գաւթից, կանչէին կոչէին ցուցանէին ստորակայից ըզ-վիմն ձգել ՚ի նոսա սպառնալով։ Եւ տեսեալ զի էր ընդունայն, սկսան զսպառնալս յար-գիլս ածել, և ոչ մի ՚ի վիմաց ՚ի վրէպ անկա-նէր. քանզի այնքան էր խուռն ամբոխին, զի և հաս կորեկան չանկանէր ՚ի գետին։ Աղաղա-

կէին կահանաւ ՚ի նեղբուստ. « Զալ անդամ ներ, աս էր մեզի պէս խեղճերուն տալու հացերնիդ, հիմայ, հիմայ կը տեսնաք »: Կէսք կոչհոձեցան ՚ի քարանց, և մանկունք երկու սպանան. կատաղութիւն յաւել զօրութիւն ամբոխին, գրուն խորտակեցան, վանդակք երկաթիք խլեցան, և ուղիս բազմութեան խուժեաց ամենուստ ՚ի նեղբս: Որք ՚ի նեղբս անդ կային, տեսանելով ահա հասեալ զչարիս, փախեան ընդ առաստաղօք, հարիւրապետն և տիգաւորք, և ոմանք յընտանեաց ամրացան ՚ի տանին, այլք ընդ լուսանցոյցս յարկին եղեալ հանգոյն կատուոց ընդ կղմընտեղս գնային:

Ի տեսիլ աւարին մոռացան յաղթողք զխորհուրդ արիւնահեղ վրէժխնդրութեան. յարձակեցան ՚ի մեծիս նկանակաց, սպառեցաւ հաց ՚ի գողնս: Այլոք գիմեալ յարկղ դրամոց, քակէ զփականս, առնու բռնալիր, ընու զքըսական, և ծանրաբեռնեալ արծաթով ելանէ գնայ, առ ՚ի գառնալ ապա ՚ի յափշտակութիւն նկանակաց, եթէ մնայցեն: Սփռի ամբոխն ՚ի շտեմարանս քրձից, ածէն զայնոսիկ ՚ի քարշ և կործանեն. է որ առեալ մի յայնցանէ ՚ի մէջ բարձից՝ քակէ զայն, առնել բեռինս տանելիս, և ցնդէ մանն ինչ. և է որ գոչէ ՚ի ձէ՛ր ՚ի՛ր, և խնարհեալ ընու անտի զառիւծն կամ զվենջակ կամ զվայր. մին գիմէ ՚ի տաշտ խմորոյ, առնու անտի զանգուած մեծ, որ հոսեալ երկայնեալ ասաի և անտի զերծանի ՚ի ձեռաց. այլ ոք անտի յափշտակեալ զնքոյր, բերէ ընդ օդս զաւար իւր. ումն գայ, ումն գնայ, կանայք,

մանկունք, կէսք մղեն, կէսք մղին, ձիք, աղաղակ, և փոչի ալեր ծածկէ զամենայն, ամբառնայ ընդ ամենայն, սպիտակէ և սքօղէ զամենայն: Կարաւանք երկու երթևեկեն արտաքոյ, ընդհարկանին միմեանց, խառնին ընդ իրեար, մին ելանէ աւարաւ, մին մտանէ աւար առնուլ:

Մինչդեռ հայանոցն այն վեր ՚ի վայր հրկանէր, և ոչ մի յայլոց՝ որ ՚ի քաղաքի անդ էին՝ էր անվտանգ ՚ի խաղաղութեան. այլ ոչ ուրեք եղև այնպիսի ամբոխ բազմութեան, առ ՚ի կարող լինելոյ յանդգնիլ այնքան: Յոմանս՝ առեալ սերանցն օգնութիւն, կային ՚ի պահ. յայլս՝ ընդ սակաւուց յարձակեցոյն գային սերբք ՚ի դաշինս, և բաշխեին հաց սկսեալոցն խռնել առ կրպակաւն՝ զի երթիցեն ՚ի բաց. իսկ նոքա զբնայնն իրը ոչ եթէ չառեալք, այլ զի տիգաւորքն և կալանաւորքն ելեալ ՚ի սոսկալի հայհոյեն անտի փայտատանց, երևեին բաւականք ՚ի նուաճել զգունդս ապստամբաց սակաւս առս: Բայց երթայր և յաճախէր ազմուկ յաղաչանաւն անդ ՚ի թշուառս հայանոցի. զի որոց ձեռք մարմաջէին ՚ի մեծ ինչ աւար, անդր դիմէին՝ ուր հզօրագոյնք էին օգնականք, և աղաւորութիւն ՚ի պատժոյ աներևոյթ:

Այս իրք էին ՚ի պահուն՝ յորում Ռիչըդոյ սպառեալ զինեանակ իւր, դայր ընդ արձակավայր արևելեան դրան, և մերձենայր յանդիման ՚ի բուն անդր ազգին: Մերթ ձեալընթաց, մերթ յամրագնաց առ խոտան, դիտէր նա և չհանգչէր, գուշակել ՚ի խառնաձայն շչնջիւնէ անտի

ստուգադոյն ինչ. և այսքիկ էին բարբառք, զորս կարաց լսել զՀանապարհայն.

Էր որ ազաղակէր. « Հնմայ իմացուեցաւ անզգամներուն ստախօսութիւնն որ կըսէին Թէ հայ չկայ, ալիւր չկայ, ցորեն չկայ. հիմայ բանը դուրս եկաւ, անանկ յայտնի եղաւ՝ որ ասկէց ետքը չեն կրնար վճռ խաբել. կեցցէ առաւտուրնիւն »:

Եւ այլ ոք ասէր. « Ես կըսեմ որ աս ամեն բան պարապ է, ջուրի մէջ ծակ բանալ մըն է. հացը կաժընցընեն, բայց մէջը Թոյն կը խառնեն, խեղճ քաղքընկիքը ձանձերուս պէս մեռցընելու համար. արդէն կըսեն որ խնաս չտացեր ենք, ժողովքին մէջն ալ զուրցեր են աս խօսքը, ըսած դիտեմ. ականջալուս լսեցի հինգամօրս բերնէն, որ բաբեկամ է ժողովքին մէջ եղողներուն մէկուն մնակ լուացողին »:

Այլ ոք աղաղակէր դեգեղեզով ընդ քրձիս մեծաւ ալեր. « Շնորք ըրէք, բացուեցէք, ձամ բայ տուէք խեղճ հօր մը, որ հինգ զաւկընեբուն կերակուր կը տանի ». և ամենայն ոք ընկրկէր՝ բանալ նմա ուղիւ:

Մինս այլ ոք ասէր ցընկէր իւր ի մրմունջ. « Ես կը զգուշանամ, գլխէս շատ բան անցած է. գիտեմ որ աս բաները ուր կը լմընեան. աս անխելքներն որ հիմայ այսչափ իրար անցում կընեն, վաղը մկիսն օր սարսափած՝ աներկնին կը քաշուին: Քանի մը դէմք տեսայ արդէն, քանի մը երեսներ լաւ երեցած պարոններ, որոնք տգէտ օտարականներ ձեռնալով կը դիտեն՝ ով կայ ով չկայ: Երբոր ամեն բան դադրի, ան առենը հաշիւները դուրս կելլեն, վճաբելը որուն որ կկրնայ՝ կկրնայ »:

Լսելի եղև և բարբառ ինն ուժգնին, որ ազդեայ յոյժ ի լսելիս Ոչնցոյն, զի ասէր. « Հացադործներուն պաշտպանը՝ համբարապետան է »:

Մի ի մերձակայից անտի ասէ. « Ամենքն ալ խարեբայ են »:

Յաւելու առաջինն. « Անանկ է, բայց անկայ ամենուն գլուխն է »:

Համբարապետան, զոր ամ ըստ ամէ ընտրէր քաղաքապետան ի վեցեցուն ազնուականաց առեներն ոստանպետաց, կայր նախագահ սոցին և առենի ժողովոյն՝ որ յազնուականաց երկոտասանից դարձեալ կազմեր ի տեսչութիւն համբարոց, ընդ այլ և յանձանձանս իրաց: Արդ ի ժամանակի սովոյ, և անգիտութեան պատճառաց նորին, հարկ էր համբարապետին լինել կատածելի որպէս չարեացապարտ, եթէ չառնէր որ ինչ արարն Ֆերբեր, զոր Թէ խորհէր իսկ՝ չունէր իշխանութիւն առնելոյ:

Այլ ոք անդուստ աղաղակէր. « Անզգամները ասկէց գէշ բան կրնայի՞ն ընել. ինչուան ընսին որ մեծ առենագլուխը Ֆերսութենին ցնդեր է. որպէս զի անոր մտիկ ընող չըլլայ, իրենք միայն հրամմեն. պէտք էր մեծ հաւնոց մը շինել, ամենքն ալ մէջը դնել, ու հաւերուն կուտերէն տալ երենց, ինչպէս երենք կուզեին մեզի ընել »:

Եւ այլ ոք փութալով ի տուն՝ ասէր. « Հացը ասանկ կըլլայ հա. օխանոց քարեր՝ որ երկու

կու ձեռքի մէջ էին սղմիլ՝ կարկուտի պէս կը
Թափին, մարդուս ոսկորները ջալջլանելու·
վայրկեան մը առաջ տուն հասնիլ »։

Ինչպէ՛ որ լուր բանիցս այսոցիկ, յորոց գիւ-
տաց ինչ արդեօք Թէ մանաւանդ և ևս չիտեմ-
ցաւ՝ չունիմ ասել, մինչև՛ որ խառնի՝ մինչև՛ ի
հայանոց անդր եհաս։ Սկսեալ էր ամբոխն
լուծանել, և կարաց նա տեսանել զարգասիս
այն ինչ անցելոց էարեացն, զաւերս որմոց ի
քարանց և յաղիւսոց ձգելոց, և զխորտակումն
դրանց և պատուհանաց, և ասէ ՛ի մտի· « Ասիս
կայ խիստ գէշ բան· բոլոր փուռերն ասանկ
ընելու ըլլան, հաքը ո՞ւր կերթին հայը, ջրհո-
րի՞ն մէջը »։

Ելանէին ՛ի հայանոցէ անտի երբեմն երբեմն,
որք ածէին ինչ անտի ՛ի բաց· որ բեհեզ արկել,
որ հայս, որ նքոյր, որ Թրիչ, որ սեղան, որ կո-
ղով, որ հաշուեգիր, և որ այլ ինչ, գոչելով
յանցանելն ընդ մէջ ամբոխին՝ Ջի՛դի՛, Ջի՛դի՛, և
ամենեքեան ՛ի նոյն կողմն երթային ՛ի սահմա-
նեալ ուրեք վայր։ Ինչպէ՛ որ տեսանէր զայն՝
դարձեալ ասէ ՛ի մտի· Աւ ալնուր բան· և գնայ
զհեռ ուրուք ՛ի նոցանէ, որ տանէր արցակ մի
շերտից և բեհեզոց տախտակի ՛ի Թիկունս, ընդ
նոյն ուղի՝ ընդ որ այլք գնային, որ անցանէ ըզ-
հիւսիսային կողմամբ մայր եկեղեցւոյն, և կոչի
յանուն սանդղոյն՝ որ կայրն երբեմն անդ, և
արդ ոչ ևս են։ Իղձք տեսանելոյ զհեռս անցից
ոչ կարացին խափանել զլինականն ՛ի կալոյ ՛ի
գնին, յորժամ բացաւ առաջի նորա հոյակապն
շինուած, և ՛ի հայելոյ բերանաբաց ՛ի վեր։

Ձեպեաց ապա հասանել զհեռս, որուն որպէս
Թէ առաջնորդէին իւր. և շրջեալ ընդ ան-
կիւնն, ակնարկեաց և ՛ի Ճակատ կաթողիկէին,
որ Թերի էր յայնժամուն մեծի մասին, և քաջ
՛ի բացեայ յայժմուս կատարելութենէ. և երբ
Թոյլ միշտ զհեռս նորին ՛ի հրապարակին
անդր։ Եւ ընդ յառաջադէմն գնալ՝ Թանձրա-
նայր ամբոխն· այլ բեռնակիրն բանայր նմա
ճանապարհ, հերձեալ զալիս ժողովրդոց· և
Ինչպէ՛ անմեկնելի ՛ի նմանէ՝ եհաս ՛ի միջակէտ
խառնին, ուր էր սակաւ ինչ վայր գատարկ, և
՛ի միջի կայծակունք հրոյ և բեհեզըք գործեաց՝
զորս ՛ի վեր անդր ասացաք· և շուրջ զնովաւ
կայքեք ձեռաց և ոտից և աղաղակք յաղթա-
կանք և անէծք։

Որ զորեցաւ փայտիցն բերէբ, արկ զայն ՛ի
կրակեղ անդր, և այլ ոմն կնասրեաց Թիով
զհուրն խառնեալ արծարծանէր· Թանձրա-
նայր ծուխն և դիզանէր, ծաւալէր բոյն և ամ-
բառնայր, և ուժգին ևս ընդ նմին յառնէր ա-
ղաղակ· « Կեցցէ առաւտուԹիւն, կորսուին սո-
վուն պատճառ եղողները, կորսուի սղուԹիւ-
նը, կոտրտին ամպարտները, գետինն անցնի ցո-
րենի վրայ եղող ժողովուրդը, կեցցէ հայը »։

Պատչէն խորտակումն նքուրից ալէր և տաշ-
տից խմորոյ, աւերս փոանց և արհաւիրք հայ-
արարաց, ոչ ինչ օգնեն յառաւտուԹիւն հայի,
այլ հայս նրբուԹիւն իմանալի ոչ հասանեն
միտք ոմանից։ Սակայն և առանց նրբամտու-
Թեան հասանէին ՛ի սկզբան խնդրոյն· վէճք
ևԹ և բանակռուտուԹիւնք արարին զայն ապա

անհասանելի: Եկն ի միտս Ինճոյին խորհուրդն առաջին զոր ասացաք, և դառնայր անդրէն անդադար, այլ նա կալաւ զայն առ իւր, զի յայնքան դիմաց ոչ ոք Թուէր նմա Թէ ասիցէ. « Եղբայր, Թէ որ իրաւունք չունիս, չհակէ ծուռ կարծիքս, ընորք կընես ինծի »:

Վասն շինջանէր բոյն անգրէն, ոչ ևս գայլն այլք ածել ձարակ հոյն, և ամբոխն սկսանէր ձանձրանալ. այլ լուր եղև զի ի Քորտուանիոյ, հրապարակ փոքրիկ կամ կինք երկուղեաց ոչ ինչ հեռի անտի, պաշարեալ էր մի ի հայցանոցայ: Բազում այն է զի ի դէպս յայսպիսիս համբաւ ևԹէ իրաց ինչ, պատճառս տայ գալոյ այնոցիկ յարգիւնս: Ի լուր համբաւոյն կամէին բազումք գիմել անդր, ոմն ասէ. Ես կերթամ. միւս ոմն Ես ալ Ժամ. ասէն ամենեքեան՝ Երթանք. և դառնայ ամբոխն ի կարաւան: Բայց Ինճոյ յետս ձեպով յամրագնաց, ուր խուռն ամբոխն ոչ մնէր զնա յառաջ, և տարակուսեալ կայր՝ երանէ՞ ի բաց յաղմկէն, գնա՞ ի վանս ի ինդիս Հօրն Պոնաւենթուրայի, Թէ երթալ ի զնին այնր ևս տեսարանի: Զօրացաւ ի նա անդրէն հետաքրքրութիւն. բայց խորհուրդ կալաւ մի մտանել ի խուռն ամբոխին ի խորտակումն ոսկերացն, և ի չարագոյն ևս վտանգ. այլ ի բացէ կալ ի զնին: Եւ փոքր մի յընդարձակ ձակի լեալ, եհան ի քսակէն և զմիւսն նկատնակ, և խածանելով զայն, գնայր յետոյսէ բազմախռով կարաւանին, որ ի հրապարակէ անտի մտեալ էր ի փողոցն կարճ և անձուկ հին ձկնարանին, և անտի ընդ կամարաւն խո-

տորեալ ի հրապարակ վաճառականաց: Եւ յայժ սակաւք այնոքիկ էին, որք յանցանէլ առ խորշին ընդ մէջ կամարակաւ պատշգամաց շինուածոյն՝ որ կոչէր յայնժամ վարդապետաց, ոչ հայէին յանդրէն՝ որ անդ արձանացեալ կայր Փիլիպպեայ Բ. և կարեմ ասել՝ զի վնմորդեայ իսկ՝ ահ արկանէր, և բազկաւն կարկառելով Թուէր սաստել խառնաղանձին՝ Թէ ահա դամ:

Անդրէն այն ոչ ևս է ըստ յեղակարծ արկածից. զի յառաջ քան զամն երբ հարիւր և եօԹանասուն, յետ ամին՝ զորմէ բանս է, ի միում աւուրց տեսաւ փոխեալ դլուխ պատկերին, բարձեալ յաջոյն գաւազանն արքունի, և եդեալ սուսեր ի նմա, և դրոշմեալ ի պատուանդանին Մարկոս Բրուտոս: Այսպէս անդրէն այն կերպարանափոխ եկայ զերկեամ մի. այլ ի միում առաւօտուց, ոմանք՝ որոց էր հաձոյ Մարկոս Բրուտոս, մանաւանդ զի պարտ էր նոցա հետիւ ընդ նմա գոլ, արկին պարան զանդրէսան, կործանեցին զայն, արարին նմա բիւր նախատինս, և ծայրատեալ զայն և գարձուցեալ յերան անկերպարան, ածին ի քարշ զաղաւաւ ընդ փողոց, մինչև վաստակաբեկ եղեալ՝ ընկեցին զայն, ոչ գիտեմ ուր: Ո՞ այսպիսի ինչ դուշակել կարէր ի ժամանակի, յորում Անդրեաս Պիզի քանդակէրն զայն:

Ի հրապարակէ անտի վաճառականաց եմուտ խառնաղանձն ընդ կամարաւ ի փողոցն կոչեցեալ Ֆաստիանեայ, և անտի սփռեցաւ ի Քորտուսիոյ: Ամենեքեան ի մուտս անդ գարձու-

յին զաչս՝ի յուշեալն հայանոց. այլ փոխանակ բաղմութեան բարեկամաց՝ զորս համարէին գտանել անդ, տեսին զմանս՝ զի կային անդ տարակուսեալ հեռի՝ի կրպակէ անտի, որ էր փակ, և՝ի պատուհանս նորա կային արք զի-նեալք՝ի պահ: Ընդ այն տեսիլ՝ կէսք զարմանային, այլք յիշոցս արձակէին. էր որ ծի-ծաղէր, և էր որ եկաւորացն հեռագնեաց ազգ առնէր զերացն պատահումն, կէսք անդ զկայ առնուին, այլք խորհէին յետս դառնալ, էր որ գոչէր՝ առաջ երթանք, առաջ: Եւ էր անդ կոխումն միմեանց և ձիգն սկսեալ կալոյ, և չշունչ խառնաձայն հարցուածոց և վիճից: Յաղմկի անդ էզև բարբառ անիծապարտ. « Հոս մօտիկ է համբարապետին տունը, երթանք իրաւունք պահանջենք, փուռը կոխենք »: Համախոհութեան Թուեցաւ բարբառն այն, քան հաւանութեան ընդ առաջարկութիւնն. և ոչ այլ ինչ լսելի լինէր, բայց « Համբարապետին տունը, համբարապետին տունը »: Շարժեցաւ ամբոխն միահամուռ դէպ ուղիղ՝ի փողոցն, ուր էր տունն նորա՝ի չարադէսն սեղանոյ:

ԳԼՈՒԽ Ժ Գ.

Համբարապետեան Թշուառ կայր յայնժամ նեղեալ՝ի գժուարահալ ձաշոյ, զոր տխուր և անախորժ էր ճաշակեալ, մնալով երկիւղալից ակնկալութեամբ եղից մըրկին. այլ ոչ կասկած էր անկանելոյ զիւրև ահագին վտանգին: Ոմն՝ի բարեկամաց կանխեաց ձեռընթաց քան զամբոխն, զեկուցանել զհասեալն վտանգ: Ի չունդն ազմկին վազ խակ ինքեալ սպասաւորք՝ի դրունս, հայէին ահ ընդ ահ ընդ երկայնութիւն փողոցին՝ի կողմն, ուստի գայր մեծաձայն աղաղակ. և մինչդեռ կային՝ի լուր գուժկանին հասելոյ, երևեցան առաջապահք կարաւանին. եկին սպասաւորք չտապաւ և զայրացմամբ, ազդ առնել տեառն իւրեանց: Եւ մինչդեռ նա խորհէր՝ի հնարս փախստեան, հասս միւս այլ գուժկան, զի տարաժամ էր

խորհել՝ի փախուստ. հազիւ սպասաւորք փա-
կել կարացին դրունս. և նիպս և նեցուկս յա-
ւելեալ, դիմեցին՝ի փակել և զպատուհանս.
որպէս յորժամ մթագնի երկին և սպառնայ
կարկուտ երազահաս: Շանթն զայրացեալ որ-
պէս բռնկիւն որոտման ի՛նքեր՝ի գաւթին, և
ընդ խորչս տանն հնչէին արձագանգք. և ընդ
մեծի խառնաձայն աղաղակին՝ լսելի լինէին հա-
րուածք վիմաց՝ի դրունս, և բարբառք.

« Համբարապետը կուզինք, բռնաւորը, ըզ-
մեզ սովին մեռցընողը, ողջ կամ մեռած կու-
զինք զինքը »:

Իսկ հնչն այն երթևեկեր՝ի սենեկին մեռե-
լատիպ ընչասպառ ձեռնամած կարգալով առ
Տէր, աղաչէլով զպատասխանս պինդ կալ, գտա-
նել հնարս զերծուցանելոյ զինքն փախստեամբ:
Այլ որպէս, և ոՀր. էլ՝ի վերնայարկ անդր ընդ
առանձինս, հայեցաւ ընդ ծակ մի յուլին, և տե-
սանէ զայն լի բազմահոծ՝ի կատաղելոյ, և
լուաւ զբարբառ խնդրելոյ նոցա զանձն իւր
՝ի մահ. և ևս քան զևս ահաբեկեալ, խոյս ետ
՝ի ներքսագոյն խորչս ծածկեցաւ. և կայր անդ
կծկեալ ունկնդիր՝ի լուր՝ եթէ երբեք մեղմա-
նայր աղմուկն սպառնալից, եթէ երբեք տեղի
տայր վայրիկ մի ամբոխն: Այլ՝ի լսելն զի և ևս
զայրանայր աղաղակն ահագին, և խիտ ընդ խիտ
բազխիւն գրանն, խառնեցաւ անդրէն յոգի
իւր, եթէից զլսելիս, և խելայեղեալ լինի, կրճը-
տելով զատամունս, հնձիւն՝ի դէմս, և կալ-
կառեալ զբազուկս, որպէս թէ կռուիս յետ-
կոյս գրանն յեցուցանելով՝ ունել զայն ամուր-
փակ:

Իր յայնժամ Ոհնցոյ՝ի խռան ամբոխին, ոչ
ևս միեալ յայլոց՝ այլ կամակար միմամբս
լեալ: Ընդ նախկինն առաջարկութիւն արեան՝
խռովեցաւ սիրտ իւր. խակ զաւարհարութիւն
չկարեր ընտրել՝ բարի՛ իցէ թէ չար ըստ ի-
րաց ժամանակին. այլ՝ի սպանութենէ գարշէր
և սոսկայր: Եւ թէպէտ, ըստ բազմավտանգ
պատրաստութեան սրտի յուզելոյ՝ի կրից առ-
՝ի հաւատալ բանից այլոց՝ի նայն կիրս ըմբռնե-
լոյ, համարէր չարեացասպարս սովոյն և թշնամի
աղքատաց զհամբարապետն, սակայն՝ի սկզբ-
բան յուզելոյ ամբոխին դէպ լինել նմա լսել
զբանս ինչ ոմանց՝ որ կամէին գուն գործել՝ի
կեցուցանել զայն, խորհուրդ կալեալ էր օգ-
նել և ինքն նոցա, և առ այս եկեալ էր մինչև՝ի
գրունս անդր ընդ այլս՝ որ զամենայն ձիգն գոր-
ծէին՝ի խորտակել զայն: Կէսք զբեւեռս փա-
կանացն բակլսէին վիմօք առ՝ի քակել զայն,
այլք բրովք և թրովք և ուռամբք ըստ օրինի
աշխատս լինէին. այլք ևս առ՝ի էգոյէ գործեաց
բուռն երկաթովք և քարամբք, բևեռօք և
ցպովք և հզնգամբք զծեփ որմոյն աւերեալ,
գուն գործէին խլել զաղիւսս, և խրամատել
զբրմն: Խակ որ չկարէին ձեռն տալ նոցա, խրա-
խուսէին զնոսա ազաղակաւ, այլ կալով անգ և
կոխելով զվիմեանս՝ խափանէին մանաւանդ ըզ-
գործն, վազ խակ՝ի խառն՝ի խուռն ձգանց
աղմկեալ. զի և՝ի չարիս, ըստ յաղողելոյ նա-
խանձմունքեան, պատահէ երբեմն որ ինչ
յաճախ՝ի բարիս, ծայրայեղ եռանգեան խա-
փան լինել գործոց:

Աւեղնակալք ՚ի լուր աղմկին առաքեցին փութանակի առ հրամանատար բերդին՝ խնդրել օգնութիւն, և նա յղեաց ջոկատ մի զօրաց: Այլմինչև հասին պատգամաւորքն, մինչև առաւ պատուէր գնդապետին, մինչև գումդն կազմեցաւ, մինչև յուղի անկեալ խաղաց գնաց, պատեալ պաշարեալ էր տունն ՚ի խառնէ, և հարկ եղև գնդին կալ ՚ի բացեայ յետակոյս ամբոխին: Գնդապետն ջղխտեր զինչ գործել. ՚ի դէպ է ասել զի էր անդ ամբոխ նման այլայլահառն ազանց և կանանց, ծերոց և տղայոց, որ կային ՚ի զինեւ. և առ հրաման գնդապետին մեկնեալ ՚ի բաց, և տեղի տալոյ, չշուխՀ խորին և երկայն լսելի լինէր ՚ի պատասխանի, և ոչ ոք չարժէր ՚ի տեղւոջէն: Հուր ՚ի վերայ խոժոժանին արձակել, ոչ միայն անգթութիւն թուէր զոքապետին, այլ և լի վտանգաւք, զի ապիկարք մատնեալ ՚ի մահ, և բռնագոյնք ևս քան զևս դրգռէին, և զի դարձեալ չէր ընկալեալ նորա հրահանգ այնպիսի: Բանալ զամբոխն ընդ մէջ, մղել զինս յայլ և յայնկակ, և հասանել ՚ի դրուններս, տալ պատերազմ ընդ դիմամարտս, թուէր լաւագոյն, այլ դործ էր յայլոզել ՚ի նոյն: Կարէին արդեօք զօրքն սակաւաւորք կազմք ըստ օրինի յառաջ խաղալ. եթէ փոխանակ էնոյ զամբոխն՝ ինքեանց դէպ լինէր ցրուիլ յամբոխին, մատնէին ՚ի ձեռս նորա յետ գրգռելոյ զնա ՚ի զայրոյթ: Տարատամուքիւն զօրապետին և անշարժ զկայ առնուլ զօրացն, իրաւամբ համ յանիրաւի, թուէցաւ երկիւղ: Որք մերձն կային, հայէին աւեղ ՚ի նոսա անփոյթ. որ հեռագոյնքն կային, ոչ դադարէին ՚ի դրդռելոյ զնոսա ծաղրս և կատականօք. իսկ ՚ի հեռաւոյ քան զնոսա սակաւք գիտէին զդալոցսա դնդին, և չէր իսկ փոյթ նոցա զայնմանէ: Բայց որք զնրամատն գործէին, ոչ դադարէին յաւերածոյ որմոյն, յայլոզել վաղագոյն ՚ի գործ. իսկ այլք ՚ի քայքայերելոյ զնոսա աղաղակաւ:

Երևելի ՚ի նոսա էր ծեր ոմն չարաբարոյ դէմքնէատեսիլ, որ զնօրափոր և զհրացայտ զաչսն ընդարձակեալ, և խորչոմեալ զդէմս ՚ի ժպիտ դիւական բերկրանաց ընդ չարիս, զձեռս ՚ի վեր քան զնախատալից ալիսն ամբարձեալ, տատանէր ընդ օդս ուռն մեծ և տոռն և բևեռս չորս սաուարատուրս, սպառնալով բևեռել զհամբարատեան գիակնացեալ ՚ի դրանդիս տանն:

Ի լուր բանիցս այսոցիկ, և ՚ի տեսիլ գիմացն այլոց բազմաց՝ որք հաւանէին ընդ այն, սոսկացեալ Ինճոյ գիմեաց ՚ի մէջ. և քայքայերեալ ՚ի տեսանել զայլս, որք Թէպէտ կարկեալ կային, այլ ցուցանէին զնոյն սոսկումն ընդ այն, ասէ.

« Այոմի չէ մեղն. գահիճ կուզենք ըլլալ, ուսպանանել խեղճ մարդը. հոքը կուզէք որ առանկ անօրէնութիւն ընեինուս համար՝ Աստուած մեզի հաղ տայ. հացին տէրը՝ կայծակ կը թափէ վրանիս »:

Ցայնժամ մի ՚ի նոցանէ, որոց լուեալ էր ՚ի խառնաձայն աղմկին զբանս Ինճոյի սուրբս, հայեցեալ ՚ի նա գիւաբախ դիմօք, գոչեաց.

« Ինչն պէս չունը, ու հայրենեաց մատնիչը.

կեցիր կեցիր որպահիժդ գտնաս : Ասիկայ համր բարեպաշտին ծառանեցին յՄիքիր պիտոր լսոյ, գեղացիկ զգեստ հագած. լսեաս է. զարկէք, զարկէք »:

Եւ հնչեցին շուրջանակի բարբառք. « Ի՞նչ է, ո՛վ է. համբարպաշտին ծառան է. լսեաս է. համբարպաշտը գեղացիկ հագուստով կը փախչի. ո՞ր է. բռնեցէք »:

Կարկեցաւ Ութնոյ, կծկեցաւ, կամեր անտես լինել. ոմանք՝ ի մերձակայից տանն գնա՝ ի մէջ, և բարձր ձայնիւ և ազաղակաւ խնդրելն խափանել զձայն Թէնամեայ և ապանողայ. այլ առաւել օգնեաց նմա բարբառ հնչեալ՝ ի մտոյ. « Մի՛կ դի կեցէք, մի՛կ դի. օգնութիւն հասաւ, հոս է »:

Եւ զի՞նչ էր օգնութիւնն այն : — Ամենդուղք Լեհ երկայն, զոր ածէին ոմանք՝ յեղուցանել յորմ տանն, և՝ ի ներքս ընդ պատուհանն մտա նել: Այլ ըստ բախտի, այն որ զմուտն՝ ի ներքս գործելոց էր դիւրին, ինքն չէր դիւրին՝ ի գործ ածելն: Զի որք կրնկնն զայն յերկուց ծայրից և յայլմէ և յայնկէ, ընդհարեալ խա փանեալ և բաժանեալ՝ ի խառնէն՝ դանդաչէին. ոմն մուծեալ զգլուխ ընդ մէջ երկուց սանդ ղամատանց, ուս՝ ի ներքոյ բնկոյն եդեալ, և ընդ ծանու լծոյին ընկճեալ մնըն՝էր՝ ի չարժելն, այլ ոք մղեալ վարէր՝ ի բաց՝ ի բեռանէն, և զբեռն՝ ի բաց Թողացուցեալ՝ բաղխէր զայրոց զուս զԹիկուհս և զկոզս. և՝ ի միս առ զաղաղակ՝ որոց բաղխմունքն գիտէին: Այլք օգնէին՝ ի վեր ուռնել զայն ձեռամբ, մտանէին ընդ նո

վաս, յեղուցեալ զայն՝ ի Թիկուհս գոչէլով Հա՛պա, երկնի՛ք, ո՛ւշով: Եւ անաղմիկն մեքենայ խաղայր յառաջ ընդոստ ընդոստ, յաջ և յահեակ տատանելով. և՝ ի գնալ ժամանակի ե հաս՝ խռովել և ցրուել զԹշնամին Ութնոյն. և նորա պատեհ գտեալ զաղմուկն և զչփոթ, ՝ի սկզբան Թաքթաքուր, ապա՝ ի հարուած արմատն, և գոչէլով « Այ՛ չեմ կրնար գիմա նալ », խոյս ետ՝ ի տեղւոջէն՝ ուր հեղձամղձուկն լինէր, գուն գործելով վաղագոյն եղա նել՝ ի բաց յամբոխէն. երթալ յայնժամ սկսաւ առ Հայրն Պռնաւենթուրա:

Եւ ահա յանկարծ աղմուկ նոր սկսեալ՝ ի միջէ՝ ի ծայրից ծաւալէր ընդ ամբոխն, և բարբառ բերանոյ՝ ի բերան՝ Ֆէրրէր, Ֆէրրէր: Զարմանք, խնդութիւն, ցայրոյթ, յօժարութիւն և հակառակութիւն զարթնոյր ամենայն ուրեք, ուր և անուն այս հասանէր. կէսք բարձրաձայնէին զայն, այլք հեղձուցանէին. կէսք հաստատէին, այլք ժխտէին. կէսք օրհնէին զայն, այլք անիծանէին:

« Ֆէրրէ՞ր է: — Զէ, սուտ է, ան չէ: — Հա՛, հա՛, ան է, կեցցէ Ֆէրրէր, ան որ հացը աժան յօշ: — Զէ, չէ: — Հա՛, հա՛, հոս է, կառքին մէջն է: — Ի՞նչ փոյթ երնիս է, ինչ կը մտնայ ինքը, մեկուն չենք կարօտիր: — Կեցցէ Ֆէրրէր, աղբատներուն բարեբարը, համբարպաշտը բռնելու, բանտը գնելու կուգայ: — Զէ, չէ, արդարութիւն կուզենք, Թող երթայ, Թող Եա գառնայ: — Հա՛, հա՛, Թող գայ Ֆէրրէրը, Թող գայ. համբարպաշտը բանտ երթայ »:

Եւ ամենեքեան յոտն ի մտան յարուցեալ կային դէտակն ի կողմն, ուստի լսելի լինէր անակնկալն գալուստս. և թէպէտ ի բարձանց անտի ոչ ինչ առաւել տեսանէին քան ի յերկրի կացեալ, սակայն առհասարակ յայնժուս կային: Եւ ահա ի ծայր ամբոխին, ի հանգիստ զօրականին, եհաս ի կառս ֆէրրէր, առեւնադլերն մեծ, որ հարեալ՝ որպէս թռավ ի խղճէ, վասն պատճառս տալոյ աղմկին անպատեհ հրամանաւն, և յամառելով ի նոյն, գայր ողբալ զամբոխն, և կամ դէթ զառաջս առնուլ զահադին և զանհրաժեշտ հեռանացն, գայր ի հաստուցանել զսիրելուհիսն ժողովրդեանն չարաչար ստացեալ:

Ի խառնուածիսն ժողովրդեան սակաւաւորք ոմանք են միշտ, որ յոտքեալ ի կրից, կամ ի մոռահաճութենէ, կամ ի չարամտութենէ, և կամ յանիծասարտ խառնակիրութենէ, զամենայն գուն գործեն ի մէջ ի չար անգր գնաց, առաջարկեն և յառաջ վարեն զանողորմ խորհուրդս, արծարծանեն զհնուր առակայծեալ մերձ ի հնձանել. չեք կարի ինչ վասն նոցա. չկամին չափ և վախճան աղմկի: Սակ ի կշռոյ հաւասարութեան՝ են և այլք, որք հանգոյն եռանդեամբ և նովին ոգւով սիդուածեան ձգնին ընդհակառակն. կէսք առ բարեկամութեան և հաւասկցութեան վտանգելոց, այլք բնաւորական և կրօնական բերմամբ սոսկացեալ յարենէ և ի գժնդակ եղերանց, արժանաւորք երկնաւոր օրհնութեան: Ցերկաքանչիւրսունն ևս կողմն, առանց յառաջագոյն համախոհութեան՝

համակամութիւն միայն կազմէ առժամայն միաբանութիւն ի գործ: Իսկ ղեկավարութիւն, որ նիւթական մասն է աղմկին, համախմբէ պատահական խառնուրդ մարդկան՝ որք առաւել կամ նուազ ի մի կամ ի միս կողմն միտեն. կէսք ջեռեալ ի կրից, կէսք խորագիտաբար, ոմանք յօժարակամ յարդարութիւն ըստ մտի իւրեանց, այլք ախորժելով առանել նորանոր եղերուն, և այլք զուգամէտք յանգիութիւն և յողորմութիւն, ի գովութիւն և ի գարշանս ըստ իւրաց ժամանակի՝ առ ի յայտ ածել զայս կամ զայն կիրս, յանկալով ժամ ի ժամ գիտել ինչ մեծ, կամ հաւատալ իւրաց մեծաց, և չկարելով ժոյժ ունել ազազակի, և ծափս հարկանելոյ, և կերկերելոյ ի գոչմանէ ինչ կամ ճառի, պատրաստք և ի լռել եթէ չիցէ ոք որ զնոսա դրգռեսցէ, պատրաստք և ի մեկնել ի բաց՝ ի համաձայնել բազմաց և յասել՝ էրնանփ, պատրաստք և ի դառնալ ի տուն՝ ասելով միւսանց, բան լիկայ եղէր:

Եւ քանզի ամբոխին յառաւելագոյն բազմութեան է զօրութիւն, և այլ զայն որում կամ, կողմն երկաքանչիւր զամենայն հնարս ի վար արկանէ առ ի յինքն ձգել զմիւսն և տիրել նմա. և են որպէս հոգիք կրկին թշնամիք միմեանց՝ որ պայքարին մտանել ի մարմին անդր անհեթեթ առ ի չարժել զայն: Վիճին ընդ իրեարս՝ թէ ո՞ կարիցէ ուժգնագոյն բառնալ աղաղակ առ ի յուզել զվիրս, և ուղղել զչարժմունս յօգնութիւն այսմ կամ այնմ կողմանն. թէ ո՞ կարիցէ հնարել զայսց գիպուած ի բոր-

բոքել ղէայրոյթ կամ յողոքել, ՚ի զարթուցա-
նել զոյս կամ զերկիւղ, թէ ո՞կարէցէ գոանել
բարբառ, որ ՚ի բազմագունից և հզօրագոյնս
յեղյեղեալ՝ վկայեսցէ միանգամայն և կացուս-
ցէ զվարկ առաւելութեան միոյ կամ միւսոյ
կողման: Զայս ամենայն հարկ եղև ինձ երկա-
րել՝ առ ՚ի կարող լինելոյ կնքել, զի ՚ի մարտի
երկուց կողմանց՝ որ վիճէին զառաւելութենէ
խառնեալ առ սամբ համբարատեսին՝ երևումն
Ֆերրերի ՚ի քթթել ականց զօրացոյց զկողմն
մարգասիրագունից որ սակարացեալն էր, և
փոքր միւս ևս երէկ յամէր օգնութիւնն այն,
՚ի պարտութիւն մատնէր: Ֆերրեր հաճոյ լեալ
էր ամբոխին՝ սակիւն այնուհետև ՚ի նպաստ գնոցա,
և անյողդողդ պնդութեամբ ընդդէմ ամենայն
հակառակութեանց: Ոգիք վաղ իսկ յօժարք ՚ի
նա, առաւել ևս յայնժամ վառեցան ՚ի սէր
վանն արիական վտահութեան ծերունւոյն՝ որ
առանց թիկնապահաց, առանց հանդերձանաց,
գայր դիմագրաւ զայրացելոց մերկալից ամբո-
խին: Եւ յոյժ առաւել ՚ի լուր բարբառոյն՝ թէ
գայր ածել զհամբարատեան ՚ի բանս: Ըստ
այսմ օրինակի զայրոյթն, որ չար ևս ընդդէմ
նորա մղեգնելոց էր՝ եթէ խոտութեամբ վա-
րեր ընդ ամբոխին և ոչ ինչ ընդրկեր նմա,
խոստամանէն այնուհետև, արկանելով սակր ՚ի բե-
ռան նորա՝ զնշաւ առ փոքր մի, և տեղի ետ հա-
կառակ կրից՝ որ ՚ի սիրոյ առաւելագունից
յառնէին:

Կուսակիցք խաղաղութեան ոգի առեալ,
օգնէին Ֆերրերի ամենայն իրօք. որք միանգամ

մերձ առ նմա կային՝ ծափաձայն գրուատեօք
ի բերանց ստէպ զհատարակայն շարժէին, գոն
գործելով տալ ամբոխին ընկրկել բանալ անցս
կառացն. իսկ հեռագոյնք կրկնելով և յեղյե-
ղելով զդրուատիս՝ լսելի առնէին այլոց զբանս
նորա, կամ որ ինչ թուէր քաջագէպ. և խա-
փանէին զձայն յամառելոցն կատաղեաց, ընդ-
ջելով ընդդէմ նոցա զնոր կիրս յեղյեղուկ
ամբոխին, և ասելով. « Ո՞վ է չուզողը որ կեցցէ
Ֆերրեր լսուի: — Քառ ուզածդ ալ ան չէ՞ր որ
հացը աժան ըլլայ: — Անզգամ են, չեն ուզեր
... տառնել պէս իրաւունք ըլլուի. մէջեր-
նէն ոմանք ալ ուրիշներէն եւել կը կանչըւա-
տեն, որպէս զի համբարատեսը փախչի: —
Համբարատեսին բանս. կեցցէ Ֆերրերը. ձամ
բայ բացէք Ֆերրերին »:

Եւ ՚ի յաւելուլ տակաւ բարբառոյ սոցա՝
նուաղէր ամբոխ խրոխտացելոց. մինչև առաջ-
նոցն՝ ՚ի բանից անցեալ ՚ի գործ, հարկանել
զձեռն այնոցիկ՝ որ քակէին զորմն, և վարել
զնոսա ՚ի բաց՝ կորզեալ զգործիս ՚ի ձեռաց
նոցա: Նոքա մերընչէին, սպառնային, զանային
դառնալ ՚ի գործ. այլ աղաղակ սպանութեան
դադարեաց, և ոչ ևս լսելի լինէր բարբառ, բայց
միայն՝ Բանք, էքսուռնէ, Ֆերրեր: Եւ յեա վայրկ
մի հակառակելոյ պարտեցան նոքա, և սոքա
սիրեցին դրանն, պաշտպանել զայն յայլոց
յարձակմանց, և պատրաստել մեռաս Ֆերրերի
անդր. և ոմն ՚ի սոցանէ ձայն արար ՚ի ներքս
առ ընտանիս ընդ ծախս գործելոցս յորմն, զի
հասեալ էր օգնութիւն, և զի պատրաստեսցի

համբարապետն. « Թող պատրաստուի խեղճը... բանտ երթալու. հասկըցա՞ր ըսածս »:

Յայնժամ Ուխտոյն յոռի լեալ սառագրօրն Թիւն Ֆերրէրի, զոր վաստաբանին ցուցեալ էր նմա ՚ի ներքոյ հուչակաւոր հրամանագրին և գոչեցեալ յունկանէ, եհարց այլեւս ումեք որ մերձ կայր նմա. « Ա՛ն ան Ֆերրէրն է որ հրամանագիրներուն տակը անունը կը դնէ »:

Պատասխանի եառ այրն, « Հապա՛, մեծ առնադիրը »: —

« Աղէկ մարդ է, անանկ չէ՞ »: —

« Աղէկ մարդ ըսելն ալ խօսք է. ան է որ հացը աժընցուց, ուրիշներըը չէին ուզեր. հիմայ կուգայ համբարապետը բանտ տանելու, անիրաւութիւն ընելուն համար »:

Ոչ է հարկ ասել՝ զի և Ուխտոյն խոհոյն յարեցաւ ՚ի Ֆերրէր. կամեր գնալ դէպ ուղիղ ընդառաջ նորա, և էր դժուարին, այլ մղմամբք և արմկիւն խթամամբք ըստ լեռնաբնակացն օրինի եբաց իւր ուղի, և եհան յառաջին կարգ ամրոխին առընթեր կառացն, որ ՚ի խուռն անգր միջամուխ՝ զկայ առեալ էր յայնժամ առ միւսմ յանհրաժեշտ խափանաց, որ ստէպ յընթացս անդ ընդ առաջ էլանէին: Ծերունին Ֆերրէր մերթ ընդ մի և մերթ ընդ միւս դուռն կառացն էրևէր զուարթադէմ և խոնարհ, որպիսի երեւէրն միայն յանդիման փիլիպպեայ Պ. այլ հարկ եղև նմա և ասա զնոյն դէմն յանձին բերել: Թօսէր և այլ ՚ի շրինդն բարբառոյ ամբոխին, և ՚ի ձայն դրուատից կէրջէ գոչէլոյ, աղօտ և սակաւուց յոյժ լսելի լինէին խօսք նորա. վասն

որոյ չարժուածովք ընդոյ զԹէրրին, մերթ ըզձայրս ձեռաց ՚ի բերան ածեալ՝ և առեալ համբոյր ՚ի շրթանց սփռէր յաջ և յահեակ, ընդունելով զսիրոյ հասարակաց. և մերթ ընդդրուճս կառաց արտաքս զձեռս կարկառեալ յուշիկ տատանէր տեղւ տալ խնդրելով յանցս կառացն. և մերթ բարեձևութեամբ իմն ըզձեռս վայր ՚ի վայր տատանէր, լռել խնդրելով: Եւ երբև տակաւ լինչ լինէր լռութիւն, մերձաւորագոյնք կառացն լռեալ զբանս նորա, կրկնէին առ հեռաւորս. « Իրաւունք ընելու կուգամ, հաց ու առատութիւն բերելու. ընորք ըրէք, քիչ մը բացուեցէք, ճամբայ տուէք »: Ընդհակառակ տպա և հեղձամղձուկ լեալ ՚ի խառնաձայն աղաղակէն, և ՚ի տեսիլ բազմութեան դիմաց, և աչաց՝ որ չինքն հայէին, ընկրկէր յետս վայրկի մի ՚ի կառս անդ, և ընդեալ թռալ լեր, ասէր յանձին. « Իրաւացընէ շատ բազմութիւն »: Կէսք աղաղակէին. « Կեցցէ Ֆերրէրը, չկախինայ. աղէկ մարդ է. հաց, հաց »: Պատասխանի տայր Ֆերրէր, աչ ՚ի կուրծս ածեալ. « Հա՛, հա՛, հաց, առատութիւն »: Եւ ՚ի վերայ ածէր. « Ինչ մը ճամբայ բացէք. զինքը բանտ տանելու կուգամ, երեն արժանի պատիժը տալու »: Այլ յաւելոյր ՚ի մրմունջ, ըստ որ չանգստ է: Եւ խոնարհեալ առ կառավարն, ճեպէր զնա ասելով. « Առաջ քշէ, որչափ որ կրնաս »: Եւ կառավարն ժպիտ ՚ի դէմս իշխատնարար հայեր յամբոխն, և շնորհիւ իմն տատանէր յուշիկ յաչ և յահեակ զկառարացանն, խընդրելով ՚ի մերձակայից ընկրկել կետս ամբոխ-

փել. « Շնորք ընէք, պարոններ, քիչ մը տեղ բացէք, քիչ մը, քիչ մը, այնչափ որ կարենայ կառքը անցնիլ »:

Փրագոյնք 'ի բարեկամաց դուն գործելին առնել նմա զչնորհն, այնու բարեձևութեամբ հայցեալ. կէսք առաջի ձիոցն չեռս ղրեարն մղելին, բաղցր բանիւք, ափ 'ի կուրծս եդեալ նոցա՝ մեղմիկ մղելով. « Փիչ մը ետև, պարոններ, քիչ մը ձամբայ »: Եւ այլք երկուսեան կառաց զնոյն առնէին, ղի մի անիւք զոտս կոխեսցեն, և կառք քերեալ առ դիմաք՝ զպերեւեւոյս եղծանիցեն. և մի վտանգեսցին շնորհք Ֆերրէրի առ ժողովրդեան:

Ոչնոյ չեռ վայրիկ մի կալոյ բերկրանօք 'ի զնին պատկառելի ծերոյն, նեղեալ 'ի խառնէն և վաստակաբեկ, այլ ժրացեալ 'ի ձիգն և զբաղթացեալ 'ի չոյս զերծուցանելոյ զՖերրէր չօրհատական տագնապէն, 'ի մոռացօնս էարկ 'ի սպառ զնորհուրդ դարձի. 'ի մոխ եդեալ օգնել նմա, և մի մեկնել 'ի բաց՝ մինչեւ ըղձիցն պատահէալ: Խառնեցաւ անդէն ընդ այլս՝ բանալ անցս կառացն, ոչ նուազեալ քան զնոսա 'ի գործ, բացաւ ձանապարհ. Աւաջ էք, առաջ էք, ասէին կէսք ցկառավարն՝ չեռս ընկրկելով, և կէսք չառաջընթաց հորդելով ուղի: Աւաջ էք, ըռա ըէ, պէռըռնեմբ, ասէր և նոքն Ֆերրէր: Կառքն չարժեցան, և 'ի մէջ տղջուկին՝ զորս շուայլէր առ ամբոխն համօրէն, մատուցան նէր առանձինն 'ի ձև ընորհակալեաց 'ի ժպիտ զուարթագէմ սրոց ձգնէին վասն իւր: Ի շնորհակալեաց ասոյ դէպ եղև ընդունել և Ոչնոյ

ցոյն ըստ արժանեաց. զի չայնմ աւուր ծառայէր նա մեծի առենադպրին առաւել քան զամենայն քարտուղարս նորա. և Թուէր չննական պատանուոյն, զմոյլելոյ 'ի բարեչնորհուԹիւն առենադպրին, խառնել ընդ նմա բարեկամուԹիւն:

Կառքն այնուհետև առաւել կամ նուազ ընԹանային, այլ ոչ առանց ուրեք ուրեք զիայ առնլոյ: Չէր ինչ ուղին աւելի քան զձիգ հրապզնի, այլ Թուէր երկարաձիգ ուղևորուԹիւն չոյն չոտալ տագնապի առենադպրին մեծի: Կոծէր ամբոխն չայ և չահէակ, առաջի և զնին կառացն, որպէս կոհակք չուրջ զնաւաւ 'ի սաստիկ մրրկի. և չննդն առատանօք առաւելել էր չոյժ քան զալէկոծուԹեան, խառնաձայն և խլացուցիչ լսելեաց: Ֆերրէր մերթ չոյսկոյս ակնարկեալ և մերթ չոյնկոյս չարժմամբք խնդրէր լսել ինչ, առ 'ի պատասխանել ըստ պատչաճի, կամէր խօսակցել ըստ կարի ընդ գոնդ բարեկամացն այնոցիկ, այլ էր դիժաւարին, և գժաւարագոյն Թերևս քան զամենայն գործառնուԹիւնս՝ որ չամենայն առաւօտս մեծի առենադպրուԹեանն էին նմա պատահեալ: Սակայն բառք ինչ և բանք, երբեք երբեք չեղչեղեալ 'ի խռնելոյ չանցս խուռ լսելի լինէին, որպէս 'ի հրապուռնասական խաղուց ՃայԹմունս՝ սաստկագունիչ ոմանց ձայնք հրապզնուց. և ինքն հնարէր մերթ հաճոյական տալ պատասխանիս, և մերթ ըստ իրացն պատչաճի կրկնէր զբանս՝ զորս գիտեր նոցա ընդունելիս, կամ ըստ ժամուն պիտոյից խօսէր և ինքն ընդ

ամենայն Ճանապարհն, և ասէր. « Հա, անանկ է պարոննեը, հաց, առաւտուԹիւն, կը հոգամ. ղինքը բանտ կը տանիմ, պատիժը կը գանայ... ՌՆ որ յանդուգն է: Հա՛, հա՛, կը հրամմեմ որ հացը աժըննայ. անանկ է. Թագաւորը չուզեր որ իր հաւատարիմ հպատակները սովէն նեղուին: (Պէտրոս, աղէկ նայէ, քեզի կըսեմ, զգուշուԹեամբ քշէ): Ա՛ւտաւուԹիւն, լուսԹիւն. քիչ մը Ճամբայ տուէք, կը խնդրեմ. հա՛ց, հա՛ց. բա՛նտ, բա՛նտ »:

Յայնմ վայրի մի ոմն յամբոխէն ընդ պատուհան կառացն 'ի նեըքս կարկառեալ տալ ինչ խորհուրդ. կամ աղերս մատուցանել կամ դրուատիս, և այն ինչ Ֆէրըէրի սկսեալ հարցանել « Ի՞նչ կուզես », չկարաց նա և զինն լսել, ձգեալ յետկուսէ, և հազիւ զերծաւ յանկանելոյ ընդ անուօք:

Ընդ մէջ մըմնջս այսոցիկ և աղաղակաց, ընդ մէջ անլսելի դոչման դրուատից, և Թըշնամանաց ինչ ևս բանից՝ որ ասոի անոի լսելի լինէին և հեղձանէին անդէն, հասին կառքն հանդէպ դրան տանն, բարեկամացն Ֆէրըէրի օգնականուԹեամբ: Ա՛լք բարեբէրք, զորոց ա՛սացաքն, պատրաստեալ էին անդ և պատրաստէին վայր արձակ. ալէբսէին, յորդորէին, մղէին, և զամենայն գուն գործէին, արծարծեալք յետանդն և զօրացեալք 'ի տեսիլ էլից իրացն մերձենալոյ: Ցետոյ ոտա յաջողեաց նոցա բաժանել զբազմուԹիւնն յերկուս, և մղել յետս զերկոսին ամբոխն, որպէս զի ընդ դուռն տանն և ընդ կառս՝ որ եկաց յանդիման,

էր միջոց ազատ: Ուինցդ, որ որպէս ռահվիրդ և առաջնորդ 'ի միասին ընդ կառն հասեալ էր անդր, կարաց զկայ առնուլ 'ի միում յերկուց Ճակատուց բարեկամաց՝ որ երկուստեք կառացն կազմէին ուղի և Թումբ ընդդէմ երկոցունց ուղևորացն, և հուժկու Թիկամբքն օգնեալով այլոց առ 'ի պինդ ունել զմի կողմն, զբազաբ 'ի դիպող տեղւոջ առ 'ի տեսանել զՖէրըէրը:

Ոգի էառ Ֆէրըէր 'ի տեսանել զարձակավայրն, և վաղ զդուռնն. փակեալ սաեմ, զի ոչ էր բացեալ. այլ ծղնիկք քակեալ էին, դրանդիք աւերեալ, դրունք կոզկոձեալ և բանաբանեալ, և փեղկք դրանց անկցորդք ընդ երեսաբս 'ի համբոյր՝ ընդ բացուածն երևէր սողնակն կորացեալ և դրեթէ խլեալ, որ միայն գոգեսունէր զայնոսիկ 'ի կից: Մի 'ի լաւաց անոի մատուցեալ 'ի բացուած անդր՝ ձայնէր բանալ զդուռնն, և այլ ոք փութայր բանալ զդռնակ կառացն. եդ ծերունին զգլուխ իւր արտաքս, և կալեալ աջով զՀեռանէ առնն, եղ կոխեաց յատակադակ կառացն: Ա՛մբոխն ասոի և անոի յոտն 'ի մտան յարուցեալ կայր 'ի զնին. գէմք բիւրաւոր, մ՛րուսք ընդ օդս, հեռաքրքրուԹիւն և մտադրուԹիւն՝ արարին վայրկի մի լռուԹիւն հասարակաց: Ֆէրըէր կացեալ յասպանդակի անդ, և չուրջ հայեցեալ, ետ օրջոյն մեծարանաց բազմուԹեանն որպէս 'ի բեմէ, և ածեալ զահեակ 'ի կուրծս, գոչեաց. « Հաց ու իրաւունք ». և աղատ համարձակ էջ յերկիր 'ի ծափաձայն դրուատեաց՝ որ հչեին յաստեղս:

Յայնմ վայրի որք ՚ի ներքս կային՝ բացին զդրունս, կամ մանաւանդ բովանդակեցին ըզբացուածն, ձգեալ զնիկն ՚ի բաց հանդերձ նգաւ կաշըքն խարխարելովք, և լսելեցին զբացուածն որչափ բաւէր առ ՚ի ներքս ընդունել զհիւրն ցանկալի, որ ասէր. « Շուտ ըրէք շուտ, որ կարեմամ մանալ. ու գուք կարճնէք, եւ բռնեցէք բազմութիւնը, մի թողուք որ գան եւէս, հոգինիգ սրբէք, քիչ մը լայն տեղ, քիչ մը շունչ առնենք »: Եւ առ որս ՚ի ներքս անդ կային, ասէր. « Է՛, է, պարոններ, քիչ մը առեք... դրան փեղկերը... թողէք որ անց նեմ... կողերս, կուրծքս, ալեկ նայեցէք... ալ հիմայ դուցեցէք:... Զէ, գեռ չէ, վերարկուս, վերարկուս »: Եւ արդարև ՚ի մէջ փեղկին արգելեալ մնային քղանցք վերարկուին, եթէ չէր նորա աջողակի ձգեալ զայն որպէս զառուն օձի հալածելոյ՝ որ ՚ի խշոլ իւր սողկի:

Փակեցան անդրէն դրունքն, և նենգուկք յետ կուսկ յաւելան ըստ ժամուն փութոյ. և արաքոյ Թիկնապահք ֆերրերի աշխատ եղեն ուսոյք, բազիւք, և ազաղակաւ, ունել ազատ յամբոխն զհրապարակն, ինդրելով ՚ի Տեառնէ՝ վաղագոյն առնել վախճան իրացն: Եւ ինքն ֆերրեր ՚ի ներքս անդ ՚ի գաւթին. « Շուտ ըրէք շուտ » ասէր ցսպասաւորս՝ որ կային վերև հեալով և ազաղակելով: « Օրհնած ըլլայ պարոն համբարապետը, ո՛հ պարոն համբարապետ »: Եւ ոչ դադարէր ֆերրեր ՚ի կրկնելոյ. « Շուտ, շուտ. ո՛ւր է սա օրհնած մարդը »:

Իջանէր յայնժամ համբարապետն ընդ սանդուղս դեղեբլովածեալ ՚ի սպասաւորաց, սպիտակ որպէս զձորձ Թափեալ: Եւ իբրև եհաս զջնուելիւնն եկեալ հասեալ, ոգի էառ մեծահառաչ, գարձաւ ՚ի նա զարկ բազկին, զորացան սակաւիկ մի ոգք իւր ՚ի գնացս, արիւն փոքր մի յայտս ետրա եղեւեցաւ. փուքթայր, որպէս կարծէրն, առ ֆերրեր՝ ասելով. « Ա՜ստուածոյ ու քու ձեռքդ եմ. բայց ինչպէս սիտոր էլլենք ասկից. ամեն դին լեցուն է, ամենքը կուզեն սպաննել զիս »: —

« Հեռս եկուր, սիրա ըրէ. հոս գուրսը դրանն առջին է կառքս. շուտ ըրէ, շուտ », ասաց ֆերրեր. և կալեալ զձեռանէ, ած զնա ՚ի դուռն անդր՝ քաջալերելովանդադար, այլ ընդմիսս ասելով. « Բանը հոս է, օգնէ ինձի »:

Բանան զդրունս. էլանէ նախ ֆերրեր, և զհետ նորա համբարապետն կծկեալ յարեալ մածեալ ՚ի վերարկուն կեցուցիչ, որպէս տղայ ՚ի քոթանակն մայրենի: Ոգք զհրապարակն կալեալ էին ազատ, ՚ի վեր առեալ յայնժամ զձեռս և զկոյրս, կազմէին ցանց լսի և ամպ՝ առ ՚ի դողանալ զհամբարապետն ՚ի բազմավտանգ տեսութենէ ամբոխին. յառաջեաց էմուտ նա ՚ի կառս, և ամփոփեցաւ յանկեան: Ելապա անդր և ֆերրեր, և փակեցաւ դռնակն: Եհես բազմութիւնն և դիտաց, և գուշակեալ զկրան, ամբարձ ազաղակ խառնաձայն գրուատեաց և անիծից: Սնացորդ ճանապարհն Թուէր գժուարագոյն և վտանգաւոր. այլ կարծիք հասարակաց ՚ի յայտ եկեալ էին ըստ

բաւականին ղբանտարկուԹենէ Համբարտպե-
աին. և 'ի գկոյ առնուլ կառացն բաղուՀք 'ի
նոցանէ՝ որոց տեղի տուեալ էր Ֆէրրերի ,
գուն գործէին պատրաստել և նմա ուղի ընդ-
մէջ ամբոխին, մինչև կարել կառացն զոյս եր-
կրորդ անգամ գնալ անդ-ձնդաղ և անգուլ. և
ըստ յառաջագՀին մտածել՝ ամբոխն ընկրկեալ
երկուստեք դարձեալ միանայր զՀետ կառացն:
Ֆէրրէր ընդ բաղմէն 'ի ներքս անդ՝ խոնար-
Հեալ 'ի համբարտպետն, ազդ առնէր նմա ամ-
փոփել 'ի փորս կառացն, և ասէր. « Ներս քա-
շուէ, Հոգիդ սիրես, մի երևնար »: Այլ ըն-
դունայն էր ազդ առնել նմա. Ինքեան մանա-
ւանդ պատ էր երևել՝ առ 'ի ձգել յինքն
զաչս Հասարակաց , և գրաւել զուշ նոցա :
Վասն որոյ ընդ ամենայն ձանապարՀն, որպէս
'ի գալ նորա, խօսէր ընդ յեզդեզուկ ամբո-
խին անդուլն, կցկտուր բանս. « Ձա պարոնայք,
Հայ, երաւունք, բերդ, բանտ, իմ ձեռքս
սակը: ՇնորՀակալ եմ, շատ շնորՀակալ. չէ,
չէ, ձեռքս չկրնար փախչիլ »: Զայս ասէր,
մրմնջելով 'ի բարբառ սպանիացի յունկանէ ան-
երևոյթ ուղեկցին՝ Պարո է ըղձալ ղբռսա: « Ի-
րաւունք ունիք. կը քննենք, կը տեսնենք. իմ
ուզածս ալ ձեր բարիքն է. սատակիլ պատիժ մը
տալու է. արդար գինն է, պատշաճ գինն է.
սովին պատճառ եղողները պատիժ արժանի
են: Շնորք ըրեք, մեկզի քաշուեցեք. Հա, Հա,
ես ժողովրդեան Հաւատարիմ բարեկամին եմ.
Թող պատժուի, իրաւունք է, անզգամ է, չա-
րագործ է »: Մրմունջ առ ուղեկիցն. (Թողու-

ՌԻՒՆ ԸՐԵ, ՆԵՐԵ ԽօսՓԻՕ): « ԳԻՀՀ պիտոր ըլլայ իր
բանը, գՀՀ պիտոր լմընայ» ... (Թէ որ յանդուգն է):
« Հա, Հա, Հայհոյածներդ կարգի կը բերենք.
կեցցէ Թագաւորը, կեցցեն իր Հաւատարիմ
Հպատակներդ՝ ալիսիս միլանցիք »: Եւ առ ու-
ղեկիցն. Զօրացիր, գրեթէ դուռս կոտ վանգէն:

Զի անցեալ խակ էին ընդ առաւելագոյն
խուռն ամբոխին, և մերձ էին երկանել յընդար-
ձակ: Անդ Ֆէրրեր, մինչդեռ սկսանէին Հանգ-
ՀԱԼ առ վայր մի յաշխատութենէ խօսելոյ, ե-
տես զօդնականութիւնն Հասեալ 'ի Փիլպիչ՝
ղզօրականն ոտանեաց, որոց գալուստ 'ի վերջ
կոյս ազգին չէր լեալ ընդունայն. զի զօրա-
ցեալ և առաջնորդեալ 'ի քաղաքացոց ոմանց,
դործակից լեալ էին զկէսս յամբոխէն խաղա-
ղութեամբ արձակել 'ի բաց, և ունել ազատ
զձանապարՀն յանցս Ֆէրրերի: Ի Հասանել
կառացն՝ կացին նոքա երկուստեք, և ողջունե-
ցին զինուք զառնեագոլիրն մեծ. և ինքն եւս
ողջոյն յայլ և յայհեակ, և առ զօրապետն, որ
մերձ մատուցեալ ողջունէր զնա, ասէ 'ի բար-
բառ ոտանեացն՝ չարժելով զաչն. Ձեռք կը
պագնեմ. զօրոյ ծանեաւ զօրապետն զընդիկ խմա-
ցուածք, իբր Թէ ասէր. ՇնորՀակալ եմ, շատ մեծ օգ-
նութիւն ընէիր ինձէ: Յայնժամ և ինքն միւսանգամ
ողջունեաց զնա, կծկեալ զերկինս՝ 'ի ձահ
պատահելով անդ բանին. Տեղի փոյեն զԼեռ պապ-
մոռճանի: Այլ 'ի պահու անդ միտք Ֆէրրերի էջ-
կարկեն յուշ ածել զվկայութիւնս, և 'ի զուր
խակ էր ածել, զի ոչ իմանայր զօրապետն զգրոց
բարբառ:

Բայց կառավարին, յանցանել անգ ընդ մէջ ղինուորաց, երկուստեք կացելոց՝ որք մեծա-բանաք 'ի վեր առնուին զղէնս, դարձաւ արիու-Թիւն 'ի սիրտ, յինքն եկեր, յիշեաց ւ էր և զմ-ածէր, և 'ի բաց, 'ի բաց, աղաղակելով առ ամ-բոխն վաղ խոկ ցրուեալ և նուազեալ՝ ոչ ևս յաւելլով բանս մեծարանաց, հարեալ զձիան՝ յամրոց անդր երագեր 'ի դարձ:

Յայնժամ Ֆերրեր առ Համբարապետն, որ 'ի դագաթեցոյ աղաղակին և յերագ ընթացից կառացն ոգի առեալ էր, ասէ. « Ելիր, ելիր, խալըսեցանք վտանգէն »: Ֆայլաւերեալ 'ի բա-նից անտի Համբարապետն, եղ յանկիւնէն, յառաջ կոյս շարժեցաւ, յարեաւ, և սակա-ւիկ մի զգաստացեալ՝ ընդհակառակս բաղումն մատուցանէր ազատչին: Իսկ սա կարեկից լեալ ընդ նմա վասն վտանգին, և խնդակից վասն փրկութեանն, սակայն ծեծէր զգլուխ իւր ոա-նայն 'ի խելաց և դուէր. « Վայ ինձ, ինչ պե-տոր ըսէ հիմայ իշխանը՝ որ արդէն զայրացեր է անիծած անակին վրայ, որ չուզեր հնազան-դիլ, ինչ պիտոր ըսէ գուքսը, որ տերմնեբուն քիչ մը եւել շարժելէն՝ կասկածներու կեր-թայ. ինչ պիտոր ըսէ Թագաւորը, որ հար-կաւ պիտոր իմանայ ասա իրարանցումը. ու ար-դեօք բանը հոս կը լմննայ, Աստուած դիտէ »:

Համբարապետն ասէ. « Ասկէց ետքը ես բա-նի մը չեմ խառնուիր, ձեռքս կը քաշեմ. իմ պաշտօնս քեզի կը յանձնեմ. կերթամ, այրի մը մէջ կը քաշուիմ, լեռան մը գլուխ ձգնաւոր կըլլամ, հեռու հեռու ասանկ անբան մարդիկ-ներէ »:

Պատասխանի եա ծանրութեամբ առենա-դպիրն մեծ. « Զէ, ինչ որ պատշաճ կը տես-նես՝ ըրէ Թագաւորին ծառայելու համար »:

Կրկնեալ անգրէն համբարապետն ասէ. « Բայց Թագաւորը իմ մեռնելս չուզեր. այրի մը մէջ, լեռան մը գլուխ, հեռու հեռու սը-ռնցմէ »:

Բայց որպիսի՛ ինչ եղեն երք առաջադրու-թեան նորին՝ ոչ յաւելու պատմիչն, որ չեա հասանելոյ նորա յամրոց անդր՝ ոչ ևս ինչ յի-շատակէ զնմանէ:

ԳԼՈՒԽ ԺԴ.

Աքմէոնն յետս մնացեալ սկսաւ ցրուիլ յամէ
և յահեակ՝ի փողոցս. կէսք չոգան՝ի տուն և
՝ի գործս իւրեանց, այլք՝ի բաց մեկնեկին չուէնչ
առնուլ յընդարձակի, հեղձամղձուկ լեալ
ժամն ձիգս յանձկի, և կէսք գնային՝ի խնդիր
բարեկամաց, խօսել զանցից անցելոց յաւուրն
յայնմիկ: Նոյնպէս և ընդ միւս բերան փողոցին
վարատէր մնացորդ ամբոխին, որպէս զի կա-
րել դատարտակի սպանիացւոյ զօրականին
գնալ անխափան, կալ՝ի պահ տան համբարա-
պետին: Անդ առընթեր կայր տակաւին, գոգ-
ցեալ մրուր աղմկին, ժողով ապիրատից, որ դըժ-
կամակք ընդ ցուրտ և ընդ թեղի եղս մեծի
պատրաստուվեանն, կէսք քրթմնջէին, այլք
լիշոցս արձակէին, և կէսք խորհէին ընդ մի-
մեանս՝ փորձ փորձել անդրէն, եթէ էր հնար.

հարկանէին մէկին զդուռնն խարխարեալ՝ զոր վերսաին նգոք և նեցկոք ամբաստանեալ էր ըստ կարի: Ի հասանել զօրուն՝ ամենեքեան նոքա, կէսք խնդային, այլք դանդալատգոյնս՝ գԺկամակք գնացին 'ի բաց՝ Թողեալ զինուորաց ասպարէզ արձակ, զկայ առնուլ անդ 'ի պահ տանն և ճաշ նապարհին: Բայց 'ի փողոցս չուրջանակի ատ անդ երկուք և երեք, երեք և չորք, և այլ ուրեք քանիս չափ, կային խօսակիցք. ոմն մեկներ գնայր 'ի բաց, այլք խաղային 'ի միասին, որպէս ամենք յետ մըրկի ընդ կապուտակ երկինն սփռեալ յածին, և որք հային 'ի նոսա՝ չէ և ևս զմրրկին անցեալ համարին 'ի սպառ: Եւ է գուշակել որ ինչ խառն 'ի խուռն լինէին անդ ըստ ոյժ, էր որ պատմէր աղջղագոյն որ ինչ ուրեք էր տեսեալ, էր որ պատմէր որ ինչ իւր նախ էր գործեալ. կէսք խնդակից լինէին ընդ աջող եղս երից, և գովեին զվերբերը, գուշակելով աղէտս համբաստանեսն. այլ ոք ասէր ծիծաղելով. « Մի վախնաք, չէն մեռցըներ զինքը, գայլը գայլուս միս չուտեր »: այլք զայրացին քրթմնջէին՝ ոչ ըստ կարգի զկրան գործեալ, զի 'ի պատրանս կային, և զի էր անմտութիւն՝ յետ այնքանց աղմկին ուշացնաձեռն ծաղր կալ:

Ա՛տեալ էր վաղ արեգակին, էր ամենայն ինչ միագոյն. և յոգունք վաստակաբեկք յաշխատանաց տունէնան, և ձանձրացեալք 'ի խօսելոյ 'ի մէնան, 'ի տունս իւրեանց դառնային: Պատանին մեր յետ օգնելոյ կառացն ցոր վայր էին պէտք օգնութեան յանցս, անցեալ և ինքն

յէտիկոյս կառացն, գնայր ընդ զօրականին յաղթանակաւ, բերկրեալ 'ի սէրկ անխափան և անվտանգ ընթացիկ կառացն. և առ վայր մի գնացեալ 'ի մէջ ամբոխին, էլ արտուզ՝ փոքր մի ոգի կշռնել համարձակ: Սուղ ինչ ապա յառաջ անցեալ, 'ի յոյզս այնքանեաց կրից և խառն 'ի խուռն պատկերաց այն ինչ տեսեալոց էրաց, զգաց զվէտս կերակրոյ և հանգստեան, և հայեր 'ի վեր յայսկոյս և յայն՝ տեսանել նշանակ ինչ պանդխի, զի տարաժամ էր գնալ 'ի վանս վեզարաւորաց: Եւ 'ի գնալ իւրում 'ի վեր հայելով, գտաւ 'ի մի 'ի ժողովոց՝ ուր խօսէին գուշակիչքն խորհուրդ 'ի մէջ առնուին վասն վաղուին: Եկաց վայրկ մի 'ի լուր, և չկարաց լսել որ ինչ և ինքն խորհէր, ոչ համարեալ յանդգնութիւն առաջարկել ինչ՝ որ այն քան ճիգն էր գործեալ: Եւ յամենայնի, զոր յաւուր յայնմիկ տեսեալն էր, խնամուտ լեալ՝ զի առ 'ի գործել ինչ՝ չատ էր հաճոյ ընծայել զայն յածելոցն ընդ փողոցս, գոչեաց 'ի ձև նախերգանաց. « Պարոններ, ես ալ ձեզի իմ տկար կարծիքս ըսեմ. իմ տկար կարծիքս ան է որ հացն կոլմանէ միայն չէ՝ եղած չարիքներըը որ կը քաշենք. հիմայ խնացուեցաւ որ ձայներս նիս լսել տալով կրնանք իրաւունքնիս ձեռք բերել. պէտք է որ ատ կերպով առաջ երթանք ինչուան որ ձար մը ըլլայ ատ ամեն անկարգութեանց, ու քիչ մը քրիստոնէութիւն ըլլայ աշխարհս վրայ: Իրաւ չէ որ խել մը բռնաւորներ Աստուծոյ տասը պատուիրանքներըը ոտքի տակ առնեն, ու կուզեն որ ժողովուրդը ձայն

չհանէ՝ որպէս զի իրենք ուզածնին ընեն, ու միշտ իրաւունքը իրենց ըլլայ. մանաւանդ երբոր սուտորականէն մեծ չարութիւն մը կընեն, աւելի կը բարձրացընեն զայն ինքզինքնին մեծցածն ալ ընելու: Մինչտեւ մէջ ալ պէտք է ուշնեան ասոնք իրենց գործակիցներ »: Եւ լսելի եղաւ բարբառ.

« Տարակոյս չկայ »:

Յաւել Ռէնցոյ յառաջ վարել ըսելոն. « Գիտէի եա, մեր կողմերն ալ կը խօսուի, ինքիրեն ալ բանը յայտնի է: Սակայն որ մէկը քիչ մը Մինչեն՝ քիչ մը դուրսը կենայ. թէ որ դուրսը սատանայ է, ինծի կերեւայ որ հոս հրեշտակ չկրնար ըլլալ: Հիմայ ըսէք ինծի, պարոններ. ասոնցմէ մէկը սեռած է քանոի մէջ: Ակնեց դէշն ալ կրնամ ապահով ըսել, ան է որ հոս հրովարտակներ տպած ու պատերուն վրայ կպուցած են իրենք զիրենք պատժելու. ու անկասկած հրովարտակներ չեն, այլ խիստ բացատրած, որոնցմէ ալէկը չիգանուիր. ամեն չարութիւն անոնց մէջը յիշատակուած է ճիշդ՝ ինչպէս որ կը լսուին, ու ամեն մէկուն պատիժն ալ, ինչ որ ըլլայ չարագործը: Հիմայ գնացէք ըսէք ան օրէնսգէտներուն, գալիրնեբուն ու փարիսեցիներուն, որ իրաւունք ուրգաթութիւն ընեն՝ ինչպէս որ հրովարտակները կը պուտան: Ո՞վ է մեկ ընողը. մարդուն գլուխը կը գառնայ: Յայտնի է ուրեմն որ թագաւորը, ու որոնք որ կը հրամմեն, կուզեն որ չարագործները պատժուին, բայց պատժուող չկայ. ըսել է որ ամենքը իրարու հետ խօսք

դրած են. ուրեմն պէտք է ոսոք ելլալ, պէտք է վաղը առաւու Ֆերրէրին երթալ, անիկայ ալ կէկ մարդ է ու ընտանի. տեսանք այսօր՝ ինչպէս գոհ էր խեղճ Ժողովրդեան հետ տեսնուելուն, ու անոնց դանգատները լսելու. ինչ շնորքով ալ կը պատասխանէր ամենուն: Պէտք է Ֆերրէրին երթալ, ամեն բան տեղնիսեղջը լմացընել. ես ալ իմ կողմանէս կրնամ աղէկ բաներ պատմել իրեն, ինչ որ աչքովս տեսայ, հրամանագիր մը՝ ձակատս խել մը հինքներով, որն որ իրեք իշխաններէ ստորագրած ու սրպուած էր, ատոնց մէկն էր Ֆերրէրը, աչքովս տեսայ: Այս հրամանագրին մէջը բաներ կային՝ որ ինծի արդար կերեւան. ու փաստաբանի մը լսի որ ուրեմն իմ իրաւունքս անով պաշտպանէ, ինչպէս որ իրեք իշխաններըը կը հրամմէին, որոնց մէկն էր Ֆերրէրը: Այս փաստաբանը՝ որ ինքը ինծի ցուցուց ան հրամանագիրը, որն որ խիստ ազնիւ էր, խենթի խօսք սեպէց ըսածս: Զեմ տարակուսիր որ ան սիրելի Ֆերրէրին լսելու որ ըլլայ ատ ազնիւ բաները, որոնք ինքը հիկրնար բոլորն ալ գիտնալ, մանաւանդ դուրսի բաները, չուզէ պիտոր որ ատկէց հոգը ատանկ բաներ ըլլան, ու ձարը կընէ: Դուք ալ որ հրամանագիրը մը հանէք, կուզէք որ ամենքը հնազանդին անոր. արհամարհէլ մըն է ձեր ստորագրութիւնը՝ անիկայ բանի տեղ չդնելը. թէ որ իրենց վրայ վստահացող մարդիկ դրուխնին չխոնարհեցընեն ու խենթութիւն ընեն, մենք կեցեր ենք ձեզի օգնելու, ինչպէս այսօր ըրինք: Զեմ լսեր որ ին-

քը կառքով պտըտի՝ ամեն չարագործները, գէմ կէցողները, բռնաւորները, բռնելու բանտ դնելու, Նոյայ տապանը պէտք կըլլար անոր. հապա պէտք է որ ինքը հրամմէ որոնց որ կ'ինայ, չէ թէ միայն Մէլանուզ մէջ այլ ամեն տեղ, որ հրամանագիրները պահանգին, ու խիստ քննուելիւն մը ըլլայ չարագործներուն, որուն որ բանտ կըսէ՝ բանտ երթայ, որուն որ թէ՝ թէ. դատաւորներուն ալ հրամմէ՝ որ երբք ատանկ ընեն, թէ որ չէ՝ իշխանութենէ կ'ինան, երբոնց տեղը ուրիշներ գրուին: Մենք ալ, ինչպէս որ ըսի, կօգնենք: Փաստաբաններուն ալ հրամմէ որ մեկ ընեն խեղճերուն, ու պաշտպանեն անոնց երաւունքը: Ալէկ է ըսածս, պարոնները »:

Այնպէս սրտեռանգն զայս ամենայն խօսեցաւ Ինճոյ, զի անգամին 'ի նախերգանաց առեներանութենան մեծ մտան ժողովոյն լռեալ՝ զաչս 'ի նա գարձուցին, և կայնն ամենեքեան յակճիռս 'ի լուր, և ծափաձայն գրուատեօք պատասխանէին. « Կեցցէ, անանկ է, երաւունք ունի, հապա՛ »: Բայց էին և՝ որ սոգտաչնէին. էր որ ասէր. « Ուրեմն ասկէց ետքը գեղացիներո՞ւն ալ մեկ պիտոր ընենք, ամենքն ալ աաենաբա՞ն եղան ». և երթայր 'ի բայ: Այլ ոք քրթինջէր. « Ա՛լ հիմայ ամեն գռեհիկ ալ իր ուզածը պիտոր առաջարկէ, ու ուրիշ բաներ պ՞ըռաքելով, աժան հայ պիտոր չիգըտնանք՝ որուն համար ոաք ելանք »: Բայց Ինճոյ զգրուատիս ևթէ լուաւ՝ և 'ի գնալն 'ի բայ՝ կէսք կալեալ զաչս նորա, այլք զձախոյ,

ասէին. « Վաղը նորէն տեսնուինք »: — « Ո՞ր »: — « Մեծ ժամուն հրապարակը »: — « Շատ աղէկ »: — « Հան մը կը յաչողցընենք »:

Յայնժամ ասէ Ինճոյ. « Ա՛ս կարծէ պատրաստեն ռվ ինծի պանդոկ մը կը ցուցընէ, որ պատառ մը բան ուտեմ, ու խեղճ ոզորմելիս հանդչիմ »:

Մի ոմն, որոյ լուեալ ուշիւ զբանախօսութիւն նորա, և չև ևս ինչ խօսեցեալ էր, ասէ. « Պատրաստ եմ քեզի պէս կարճի ծառայելու. քեզի յարմար պանդոկ մը կը տանիմ ըզքեզ, ու կը յանձնեմ պանդոկապետին, որն որ իմ բարեկամն է, ու շատ աղէկ մարդ »: — « Մօտիկ է հոս »: — « Բիչ հեռու »:

Լուծաւ ժողովն. և Ինճոյ, յետ բազմաց անծանօթ ձեռաց ալ տալոյ նմա, չոգաւ զհետ անծանօթին՝ շնորհ ունելով նմա:

Իսկ նա ասէ. « Ի՞նչ բանի համար շնորհակալ կըլլաս. մեկ ձեռքը մեկալը կը լուայ, երկուքը մեկ տեղ երեսը. պարտական չե՞նք օգնել իրարու »: Եւ ուղեկցելով ընդ Ինճոյին, մերթ զայս ինչ հարցանէր ցնա 'ի ձև խօսելոյ, և մերթ զայն, և ասէր. « Կարծեմ շատ յոգներ ես, հետաքրքրութեան համար չէ հարցընելս, բայց ուսկից կուգաս »: —

« Ինչուան Էքբըյէն »: —

« Ինչուան Էքբըյէն ! Էքբըյլի ես »: —

« Էքբըյլի, այս ինքն Էքբըյլի մեուերլէն »:

« Խեղճ կարճ. ինչ որ քու խօսքերեդ կերցայ իմանալ, շատ բան քաշած պիտոր ըլլաս »: —

« Ո՜հ, սիրելի բարեկամ, պէտք եղաւ որ քիչ մը կառավարութեան վրայ խօսիմ, իմ քաշածներս ուրիշներուն չկրցանելուս համար... հիւրիկ է... օր մը կը յայտնուի. ան առենը:... Բայց պանդոկի մը նման կը տեսնամ. հաւատա ինծի որ ակիկց անդին երթալ չուզեր սիրտս »։—

« Չէ, չէ, եկուր ուր որ ըսի, մնակի է. հոս հանգիստ չես ըլլար »։ —

« Թող տուր, ես ան պարոններէն չեմ՝ որ փափուկ վարժած են. կտոր մը սիրտս բռնեցաւ բան, ու խոտէ անկողին մը, հերիւք է ինծի. հարկաւորը ան է որ երիկուքն ալ շուտ գոնամ, Աստուած տայ »։

Եւ զայս ասացեալ՝ եմուտ ընդ դուռն մի հընոտի, զորով կախեալ կայր նշանակ լիալուսին. և առաջնորդն ասէ. « Ակնկ է, հոս մըտնենք, երբոր հոս կուգես ». և եմուտ ընդ նորա անդր։

Յաւել Ռէնոյ. « Զեմ ուզեր աւելի աշխատցընել զքեզ. բայց միայն հրամմէ, գաւաթ մը գինի խմէ, ինծի ընորք մը կընես »։ —

« Կընդունիմ ընորքդ », ասաց նա. և քանզի տեղեկագոյն էր ատեն, յառաջեաց քան զԻնոյ ընդ գաւիթն, մատեաւ ի դուռն՝ որ հանդիպ ի խահանոց, ի վեր էառ զգնահատեակն, երաց և եմուտ անդր ընդ ուղեկցին։ Կանթեղք երիւր աղօտալոյսք կախեալ կային վերիւզ ձողոց հաստատեալոց ի գերան յարկին. նստէին անդ բազումք, ոչ անդորձք, յերկայն բազմոցի՝ երիւեսակք անձուկ և երկայն սեղանոյ, որ ուղիղ վկոլնի մի սենեկին գրեթէ ողջոյն, և ի վերոյ չարեալ վէնջակք և պնակք, չարեալ և նարտք և թուղթք ի խաղ, և ամենայն ուրեք սրուակք գինւոյ և բաժակք։ Էր տեսանել անդ և դրամն ի դնացս, որոց թէ եր լեզուս և բարբառ, պատմէին արդէօք լեալ յառաւօտուս ի փայտեայ պնակի հացագործին, կամ ի քահակի ուրուք յայնցանէ որ կային ի վնին աղմկին՝ տեսանել վեղս երից հատարակաց, ի մառայսն սրկեալ զառանին երից յանձանձանս։

Մեծ էր անդ աղաղակ, դիմիր համբակ սպասաւորք յառաջ և յետոյ, ձեռով և շուսալաւ, պաշտել սպաս և տապալել. պանդոկապետն բազմիր յաթոռակի առ կրակեաեղ, երբ թէ ձևս ի մնիրի յօրինելով ընդ խաղ, պէտ երջ ուշ գներ ամենայնի՝ որ ինչ անդ անցք անցանէին։

Ի ձայնէ գռնափակին յարեաւ, գնաց ընդառաջ նորոյ եկաւորացն. և երբև եաես զառաջնորդ պատանւոյն, ասէ ընդ միաս. « Անիծածը միշտ գիմացս պիտոր էլլէ չուզած ատենս »։ Եւ ապա հայեցեալ ի Ռէնոյ, ասէ գարձեալ ի մոի. « Զեմ ճանչնար զքեզ, բայց ասանկ որսորդի մը հետ գալէդ կը դուշակեմ՝ որ կամ շուն կամ գայլ պիտոր ըլլաս, երիւս խօսքդ որ լսեմ, կիմանամ ով ըլլալդ »։ Այլ ոչ ինչ ի խօսիցն երևեցաւ ի գէմս նորա, որ անշարժ ամենևին կայր որպէս կենդանադիր, գէր և պայծառ գիմօք, թաւ և կարճմորուք, կարմրագեղ, փայլուն և պշուցեալ աչօք. և ասէ բարձրաձայն.

« Ի՞նչ կուգեն ատ պարոններըը »։ —

Պատասխանի եւս Ռինդոյ. « Նախ մեծ ա-
ման մը զուտ գինի. եւթը պատառ մը բան »: Զայս ասացեալ՝ արկ զանձն 'ի բազմոց անդր 'ի ծայր սեղանոյն, և այնպէս ուժգին չունչ ա-
ռեալ, որպէս թէ ասէր՝ « Ա՛յսչափ երկան ա-
տեն ոտքի վրայ աշխատեցէն եւթը՝ քիչ մը հանգչինք »: Ա՛յլ յիշեաց անդէն զսեղանն՝ ուր 'ի յեսեին նուագ նստաւ ընդ Լուչիայի և ընդ մօր նորա, և հառաչեաց: Եւ չարժեալ ասպա զդլուխ իւր՝ որպէս թէ հալածելով 'ի մտաց զխորհուրդն զայն, եաես ղև ածէր պանդոկա-
պետն զսրուակ գինւոյն: Ռինդոյի լցեալ ան-
դէն ղբաժակ, մատոյց ուղեկիցն՝ որ բազմեալ կայր հանդէպ իւր. և միւս ևս լցեալ բաժակ, էարբ 'ի մի ումեք: Եւ ասէ ցպանդոկապետն.

« Ի՞նչ պիտոր տաս մեզի ուտելոյ »: —

« Խորված ունիմ, կուզե՞ք »: —

« Շատ աղէկ, խորված բերը »: —

« Հիմայ », ասէ պանդոկապետն. և պատուիր բեալ համբակին՝ պաշտել հիւրոյն զխորտիկ, գնայր 'ի բաց. այլ յանկարծ ուշ 'ի կուրծս անկեալ՝ դարձաւ և ասէ. « Բայց հաց չունիմ այսօր »:

Ռինդոյ ասէ բարձրաձայն և զուարթագին. « Այսուհաց տուաւ մեզի հաց ». և հանեալ 'ի քսակէն զերբորդն նկանակ, զվերջին 'ի ժողո-
վելոցն առ խաչին սրբոյն Դիոնիսեայ, 'ի վեր հառ զայն ընդ օդս՝ գոչելով. « Ահա Աստուծոյ տուած հացը »:

Ի ձայն անդր ընկերին բազումք զաչս. և տե-
սեալ զնկանակն յօդս, յարձանակաւ գոչէին. « Կեցցէ ժիտուքիւն հացի »:

Եւ Ռինդոյ ասէ. « Ի՞նչ ժիտուքիւն, ձրիուք-
թիւն ձրիուքիւն »:

Եւ նորքա գոչեն. « Ա՛լ աղէկ, ա՛լ աղէկ »:

Յաւել Ռինդոյ. « Բայց չեմ ուզեր որ գէշ մտքի երթաք. պարտներ: Չէ թէ յափշտակե-
ցի, այլ գէտինը գոայ աս հացը. ու թէ որ տէրը գանամ, պատրաստ եմ գինը տալու »: —

« Ա՛լրիա, տալրիա », աղաղակեցին նորա. այլ ոչ ոք հաւատայր՝ թէ ձշմարիտ ասիցէ:

Եւ ասէ Ռինդոյ ցուղեկիցն. « Կը կարծեն որ կատակ կընեմ, բայց իրաւ է ըսածս »: Եւ կէ-
րեալ զայն յերիս կամ 'ի չորս պատառս, էարբ միւս ևս բաժակ՝ ասելով. « Առանց Թրջելու՝ վար չէրթար. կոկորդս ասանկ ցամքած չունէր, շատ պուռացի »:

Եւ ուղեկիցն ասէ ցպանդոկապետն. « Աղէկ անկողին մը պատրաստեցէք աս կորիճ պա-
տանուն, հոս կուզէ պառկիլ »: —

Եւ պանդոկապետն մատուցեալ 'ի սեղան անդր՝ հարցանէ ցպատանին. « Չո՞ւս կուզես պառկիլ »:

Ռինդոյ ասէ. « Կայ ու կայ. անկողինը ինչ-
պէս որ ըլլայ՝ փոյթս չէ. բայց սատանները լուացած ըլլան. աղքատ եմ, բայց մաքրու-
թեան * վարժած »: —

« Անոր վրայ մի տարակուսիր », ասաց պան-
դոկապետն, և գնայ 'ի գրասենեանն՝ որ էր յան-
կեան միւամ խահանոցին, և գարձաւ՝ կալաս-

* Երկրիդ ի բառն իտալեան, ի pulizia նշանակի մաք-
րութիւն և սեսչութիւն, և ըստ չեզին նշանակութեանն ի
եմանալ պատասխանի պանդոկապետին:

մալ և գրկէ՛ի միւմ ձեռքին, և՛ի միւսում Թուղթ սպիտակ։

Ոչինչ կանեղով զպատառ խորտիկին՝ զոր համբակին ածեալ էր, և ծիծաղելով զարմացմամբ, ասէ. «Ի՞նչ է ձեռքինդ, մաքուր սաւանները առո՞ք են»։

Իսկ նա առանց պատասխանի տալոյ՝ եդ ըզկաղամարն և զթուղթ՛ի վերայ սեղանոյն, և յերեսցեալ՛ի սեղան անդր զձախոյ թեւն, և զարմուհին աջոյ, և գրէէ ընդ օդ, դէմք՛ի Ոչինոյ, ասէ. «Շնորք ըրէ, ըսէ ինծի, անուանդ մականունդ ու հայրենիքդ»։

Ոչինոյ ասէ. «Ինչո՞ւ. առ հարցմունքդ անկողնին հետ ի՞նչ վերաբերութիւն ունի»։

Պանդոկապետն հայհոյով յերեսս առաջնորդին՝ ասէ. «Պարոնքս կընեմ. մենք պարոնիկներ ենք համար տալու տերութեան. ամենուն որ կուգան հոս կենալու, անուններին, մականուններին, ազգերին, արուեստներին. ինչ որ վրանին գրեմ ալ ունին, ու պրլտ ապեր առ գաղտը պիտոր կընան. հրովարտակին խոսքերն են ասոնք»։

Ոչինոյ նախ քան զտալ պատասխանի՝ քաշեաց միւս ևս բաժակ երրորդ. այլ կասկածեմ գի ոչ ևս այսուհետև կարացից զայլս ածել՛ի համար. և. ապա ասէ. «Հէ, հէ. ունինս հրովարտակին օրինակը. ես օրինագէտ եմ, գիտեմ հրովարտակներուն ուժը»։

Պանդոկապետն ասէ, հայհոյով միշտ յանմեռանչ ուղեկիցն պատասխանէն. «Կատակ էէ ըսածս, գիտես»։ Եւ մատուցեալ անդրէն՛ի դրասեղանն, եհան յարկեղէն Թերթ մեծ զնըդրիա օրինակ հրովարտակին, և եկին բացատրել զայն առաջի աչաց պատասխանոյն։

Ոչինոյ՛ի սեսանելն զայն՝ ՛ի վեր առեալ միւս ևս բաժակ լի, և արբեալ զայն խոկոյն, և տարածեալ զբազուկն ահեակ ցուցամատիւն՛ի հրովարտակ անդր, ասէ. «Հա, հա, կը ճանչնամ սա մեծ Թերթը, ուրախակից եմ քեզի. վասյն հինքն ալ կը ճանչնամ, գիտեմ սա այլանդակ դէմքն ալ՝ վիզը շղթայով ինչ կը նշանակէ»։ (Զի՛ ՛ի ճակատ հրովարտակայ գնկին յայնժամ զկնիք քաղաքապետին. և էր՛ի նմա հինք Կորտովեան Ֆերնանտէզի, բերելովդըսիա Թագաւորի հնդկի, շղթայ զպարանոցաւ)։ «Ա՛ս դէմքը ըսել կուզէ, որ ոչ ոք կրնայ՝ կը հրամմէ, ու ոչ ոք կուզէ՝ կը հնազանդի։ Ուսասի երբոր սա դէմքը ցուկանաւ խրկելու ըլլայ մի գիտցած անուններս իչխանը, ինչպէս որ ուրիշ սաոր նման մեծ Թղթի մը մէջ կը սպառնայ. ու անանկ ընէ որ համեսա կորնի մը ու համեսա աղջիկ մը՝ որոնք իրար կուզեն՝ կարենան կարդալու սա սաեղը՝ չէ Թէ միայն անուններս կըսեմ, հապա նաև կը պարզեմ գինքը։ Մեծ պատճառներ ունիմ անուններս չըսելու. սա աշխոր բան, անզգամ մը որ ձեռքին սակը ուրիշ անզգամներ ալ ունենայ, որովհետև մինակ որ ըլլայ»... և սակս չարժուածով իւիք կրճատեաց գնմասս բանին. և յաւել. «Թէ որ անզգամը ուզէ ուր ըլլալը գիտնալ, որպէս գի որոգայթի մէջ ձգէ գնա, սա այլանդակ դէմքը կօգնէ ինծի, կը հարցընեմ։ Ի՞նչ պարտականութիւն ունիմ իմ գործքս ուրիշի ըսելու. սա աշխոր բան. սեակ որ խուզ

տավանանք ըլլալու եկայ Միլան. բայց կուզեմ վեցարաւոր խոսաւանահօր մը խոսաւանիլ, չէ թէ պանդոկապետի մը »:

Լուռ եւեթ կայր պանդոկապետն, և ոչ գա-դարեր 'ի հայելոյ յառաջնորդն, որ ոչ ինչ 'ի դէմս իւր ցուցանէր. խնդ Ուինցոյ, գժկամա-կիմ ասել, քամեալ միւս ևս բաժակ, յառաջ էած ձբանան. « Պատճառներդ միկը ըսեմ քեզի, սիրելի պանդոկապետ, որ խելքդ պառ-կի. Թէ որ քրիստոնեից նպաստաւոր հրամա-նագիրները չէն ղօրեր, մեկալները ինչ օգուտ կրնան ընել անոնց. ուրեմն մեկդի դիր առնք, ու ուրիշ չնչէ մըն ալ գինի բեր, ասկից կուգ-րած է » ասելով էհար զբրուտն յօդիւք մա-տանց, և յաւել. « Մոխի ըրէ, ինչպէս ճաթա-ծի ձայն կը հանէ »:

Զայս ևս նուագ պատանին Ուինցոյ առ սա-կաւ սակաւ լինքն յանկոյց զսեղիս, որոյ շուրջն կային, և ծափաձայն դրուատիս ընկա-լաւ յոտնկոչդրայ:

Յայնժամ պանդոկապետն հայելով յառաջ-նորդն, որ չէր իւր անծանօթ, ասէ. « Ուրեմն ինչ պէտք է որ ընեմ »:

Աղաղակեցին բազումք յընկերաց անտի. « Մեկդի ձգէ, մեկդի ձգէ, իրաւունք ոչնի կարիձը. ամենն ալ բռնութիւն, որոգայթ ու արդելք են. հիմայ նոր օրէնք պէտք է, նոր օրէնք »:

Յաղաղակի անդ առաջնորդն սոգտանօք լեմն ակնարկեալ 'ի պանդոկապետն, վասն կարի յայտնապէս հարցուածոյն, ասէ. « Թող տուր իր կամացը, պատճառ մի տար »:

Իսկ պանդոկապետն ասէ 'ի ձայն. « Ես իմ պարտքս ըրի ». և 'ի մբմունջ, « Կռնակս պա-տին տուած եմ »: Եւ էառ զհրովարտակն, զԹուղթ, զգրիչ և զկալամար, և զբրուտին գինեայ դատարկ, տալ համբակին:

Եւ ասէ Ուինցոյ. « Նոյն գինեն բեր, խիստ աղէկ է. առջինին պէս պառկեցընէք զինքը՝ առանց հարցընելու անունն ու մնակտունը, ոչ՝ ինչ ազգէ ըլլալը, ոչ՝ ինչ բանի համար գալը, և ոչ՝ ծրչափ տաեն հոս կենալու միտք ունենալը »:

Յաւել և պանդոկապետն ցհամբակին՝ տալով նմա զբրուտն. « Նոյնէն բեր ». և գարձեալ նստեալ առ կրակարանին, խաղալով ընդ մա-խրին, ասէր յանձին. « Ինչ նպատաստակ ա-նանկի մը ձեռք կենկեր է որ... Իշու կաոր, Թէ որ գուն խղդուիլ կուզես՝ խղդուէ. բայց ես քու խենթութեանդ համար լեցուն լուսընկայով ինք զինքս վտանգի մէջ չեմ դներ »:

Ուինցոյ ընորհակալ եղև առաջնորդին և ա-մենեցուն, որ օգնական եղեն նմա, և ասէ. « Կը տեսնամ որ աղէկ մարդիկ կրարու կօգնեն, ու կռնակ կը կենան »: Եւ ապա հարեալ զձեռն 'ի սեղան, և գարձեալ 'ի ձև տաեննախօսի ասէ. « Մեծ բան. որունք որ բանի գործի վրայ են, ամենքն ալ միշտ կաղտմար գրիչ ու Թուղթ կը վճռտեն. միշտ գրիչ ձեռնընին. եռանդ մը գրիչ գործածելու »: —

Անդուստ մի ոմն, յաղթական 'ի խաղն, ա-սէ. « Կարիձ չիւր, կուզես անոր պատճառը գիտնալ » —

« Լսենք » : —

« Այնոր պատճառը աս է որ, ան պարտիզներն են որ սագ կուտեն, հարկաւ վերաբնելը բանի պիտոր բերեն » :

Բրքիչ բարձին ամենեքեան, բայ 'ի պարտէզըն 'ի խաղն :

Ուենցոյ ասէ. « Իրաւ որ բանաստեղծ է աւիկայ. ուրեմն հոս ալ բանաստեղծներ կան, յայտնի է որ ամեն տեղ ալ կը գտնուին: Իմ բանաստեղծութիւնս ալ երբեմն կը բռնէ. բայց բաները յաջող որ երթան » :

Աւ՛լ առ լսնացուած ծաղրաբանութեան հէք պատանւոյն, պարտ է գիտել՝ զի առ ռամիկն Միլանու, մանաւանդ առ չքնաղկայս, բանապետ ոչ նշանակէ որպէս առ կիրթ որեարն՝ հանճար քերթողական, բնաւիկ Պինդեայ, ան Մոսայից. այլ խելացեղ եմն և խորթաբարոյ, որ 'ի խօս իւր և 'ի գործս է կծու և նորանշան քան բանաւոր: Յանգուգն ոգեռութիւն ռամկին այսպէս և զբաւս աղաւաղէ, և ոտ նոցա նշանակել ամենևին օտար խմաստ. զի զինչ իրք լսեն քերթողն ընդ խելայեղն :

Եւ յաւել Ուենցոյ. « Անոր բուն պատճառը ես ըսեմ. անունը գրիչը ձեռնբնին բռնած, ինչ որ իրենք կը խօսին՝ օդը կը ցնդի, իսկ ինչ որ խեղճ պատանի մը կըսէ, շուտ շուտ օգուն մէջէն կը ժողվին գրիչով թղթի վրայ կը գամեն. առեղն ալ՝ տեղն ալ՝ աղէկ գիտեն իրենց շահուն գործածելու գրածնին: Ուրիշ չարութիւն մըն ալ ունին. երբոր կուզեն նեղը խօթել պատանին՝ որ ուսումնչիգիտեր, բայց քիչ

մը ունի... ըսածս աղէկ գիտեմ » ... (աստանօր առ 'ի տալ խմանալ զմիտս իւր, բազմեր ծայրիս յուցամաշին զձակատ իւր), « ու կիմանան որ կը հասկընայ իրենց վարպետութիւնը, մէկէն գրաքառ խօսքեր կը խառնեն, կը կոըտեն խօսքերնին, որպէս զի չիոթեն անոր միտքը: Հերիք է, պէտք է որ ոճերնին փոխեն: Ինչ որ է, այսօր ամեն բան աշխարհաբառ լմընցաւ, առանց գրիչ կաղամար ու թուղթ գործածելու. վաղը աւելի ազէկ կերթայ՝ թէ որ ըստ կարգի վարուինք, առանց մէկու մը մտքին դպչելու, ամեն բան արդարութեամբ » :

Յայնմ վայրի կէսք լընկերաց անտի սկսեալ էին անդրէն խաղալ, այլք ձաշել, բազումք առաջակեալ, ոմանք գնային 'ի բաց, այլք հասանէին, և պանդոկապետն գիտէր զամենեսին, այլ ոչ ինչ յայտնեի պատկանի 'ի պատմութիւն մեր: Փութայր և առաջնորդն անծանօթ գնալ 'ի բաց, թուէր թէ չկայ ինչ նորա գործ անդ. բայց կամէր ինչ խօսել նախ առանձինն ընդ Ուենցոյի: Դարձաւ 'ի նա, և եմոյծ անդրէն զրոյցս զհայէ. և յիտ բանից ինչ՝ որ յաճախն յաւուրց հետէ 'ի բերանս ամենեցուն, 'ի նեղըս ածեալ զնորհուրդ ինչ իւր, ասէ. « Թէ որ ինծի կրնար հրամանը, ձորը կը գըտնայի՝ որ ամեն բան կարգի մտնար » :

Եհարց Ուենցոյ. « Ի՞նչպէս կընկիր » . և հայէր 'ի նա բոցակնագոյնս, չեղեալ զբերթուն՝ իբր առ 'ի լսել ուշիւ :

Իսկ նա ասէ. « Ի՞նչպէս կընկիր. կուզէի որ ամենքը հայ ուներնան, աղքատն ալ հարուստն պէս » : —

Ուխտյոյ ասէ. « Ի՞նչ աղէկ կըլլար » : —

Միւսն ասէ. « Նայէ ինչպէս կընէի. արդար դէն մը կը դնէի՝ որ ամէնքն ալ կաբենային ապրիլ. եաքը բաժնել կուտայի հայը ամէն մէկ ընտանեաց Թուրն հաւեմատ. վասն զի որկրամոլներ կան՝ որ բոլորը կրնեն կուզեն, կառնեն կը յափշտակեն կուտեղով, եաքը աղքատներուն հայ չմնար : Ուրեմն պէտք է հայը բաժնել. բայց ինչպէս. հոս է բանը : Ամեն մէկ ընտանեաց Թղթիկ մը կը տրուի՝ հաւեմատ կրնոց Թիւին, անով կրնոյ պէտք եղած հայը կառնեն փուռէն. ինչպէս կնիքի պէտք է Թղթիկ մը տան տանէ. Ամբոխ ՝ Ցուզէլլա, Նուր էֆշոդ, էր ինոչմէլը ոտ լըր պուիվ, ամէնն ալ հայ ուզելու փարիզը հասած, (աղէկ ուշ դէր), էլլեն փռուի այուլի հայ, կամ Նուդ ՀՀարեն այուլի ուզի : Բայց արդարութեամբ կատարելու համար՝ միշտ ընտանեաց բազմութեան համեմատ : Ա յսպէս օրինակի համար, քէղի ալ Թղթիկ մը... անուն դ ինչ է » : —

« Լօրենցոյ Թրամալեինոյ » . ասէ պատանին, որոյ հառնեալ յոյժ ընդ խորհուրդն՝ ոչ էդ ուշ դի էր առ այն կաղամար գրիչ և Թուղթ . և վասն այնորիկ հարկ էր առնուշնախ զանուանս ընտանեաց :

« Շատ աղէկ » , ասէ անծանօթն . « բայց կրնոյ ուր գալիքնեը ալ ուզիս » :

Պատանին ասէ . « Պէտք էր ունենայի... զանակ չունիմ... խիստ շուտ է... բայց կրնոյ... Թէ որ աշխարք ինչպէս որ պէտք է, անանկ էրթար » : . . —

« Ուրեմն Թէ որ մինակ ես, համբերութիւն, բաժինդ պզտիկ կըլլայ » : —

« Արդար է . բայց Թէ որ քիչ առնեն, ինչ պես կը յուսամ... Աստուծոյ օգնութեամբը... հերիք է... երբոր ես ալ կրնոյ ունենամ » : —

« Այն առեն Թուղթդ կը փոխուի, բաժինդ կաւելնայ, ինչպէս որ ըսի, միշտ համեմատ անձանց » : Ասաց, և յոտն եկաց անծանօթն :

Իսկ Ուխտյոյ գոչեաց . « Ասանկ աղէկ է » . և ոչ դադարէր ՝ի գոչելոյ, հարկանելով զձեռս ՝ի սեղան, և ասէր . « Ուրեմն ինչքա՞ն ասանկ օրկնք մը չեն գներ » : —

« Ի՞նչ կուզես որ ըսեմ. դիշեր բարի. ուշացայ, կինս զաւկընեբս ինծի կը սպասեն » : —

« Կաթիլ մըն ալ, կաթիլ մըն ալ » , գոչէր Ուխտյոյ լսեալ զբաժակ նորա, և յարուցեալ կալեալ զվերարկուէ նորա ուժգնին, զի մի գըշնայէ ՝ի բաց . « Կաթիլ մըն ալ, ատ տհաճու Թիւնը մի տար ինծի » :

Ա յլ բարեկամն ցունց տուեալ՝ զերծաւ, ոչ անսացեալ Թախանձանաց և դանդաղանաց պատանւոյն, և մեկնեցաւ ՝ի բաց՝ ասելով դարձեալ « Դիշեր բարի » : Եւ ՝ի գնալ նորա՝ ոչ դադարէր պատանին զՀետ նորա ազաղակել, մինչև ապա արկ զանձն յաթոռ անդր. և ակնկառոյց ՝ի բաժակն լի, տխասնելով զՀամբանկն՝ զի անցանէր առ սեղանովն, ակնարկեաց զկայ առնուլ՝ որպէս Թէ ուներ ասել ինչ նմա. և ցուցեալ նմա զբաժակն , արտասանելով յամր և յատակ, ոլորակելով զբառս ՝ի ձև նոր օրինակ, ասէ . « Այս գաւաթն որ կը տեսնաս լեփլեցուն , բարեկամաբար պատրաստեր էի առաւօտ մարդուն, բայց չուզեց . երբեմն ոմանք

զարմանալի մտածութիւններ ունին. ես չեմ պահանջեցայ բարեսրտութիւնս ցուցընելու իրեն. բայց որովհետեւ ինքը չընդդունեցաւ, պէտք չէ որ պարտաւոր երթայ»: Ձայս ասացեալ քաշեցաւ ի մի ուսմէ գրաժանին:

«Հասկըցայ», ասաց Համլտին. և անցեալ դնայր:—

«Դուն ալ ուրեմն հասկըցար», ասէ Ռէնցոյ. «ուրեմն իրաւ է, երբոր իրաւունք է»...

Կարեւոր է ատանօր ի սէր ճշմարտութեան չլսել և որ ինչ առաւերածս ածէ պատուոյ այնմ՝ որ գլխաւոր, մանաւանդ թէ առաջին անձն է առաջարկեալ վնասացս: Այլ պարտ է մեզ և ըստ նմին անկողմնապահ ճշմարտութեան յայտ առնել, զի առաջին նուագ էր Ինճցոյի պատահարս այս. և այս անսովոր զառանցանք նորա երեւեցաւ պատճառք ալեւոից նորա: Բաժակը քանի մի, զորս ի սկզբան անդ էարբ հետ զհետէ ըստ ոչ իւրումն սովորութեան, կէս առ պապակման, կէս յայլայլութենէ սրտի՝ որ ոչ ներէր նմա կալ և յայլ երս ի չափու, անդէն և անդ արբեցուցին զնա, որ զվարժելոց ի գինեբերքոս բուժելն հեթ արդեօք զծարաւ: Ձայսմանէ անանուն պատմիչս մեր առնէ տեսութիւն ինչ, զոր ի կիր առնեմք աստ. համարեսցի զայն որպէս ոք և այլ խորժէ, զի ասէ. Սովորութիւն բարեխառնութեան և չափոյ զայս ևս ածէ օգուտ, զի որչափ հնանայ և արմատանայ ի մարդ, նոյնչափ դիւրաւ ղայ զվատորել իւր անտի, մինչ զայն ընդհակառակ. և զառանցանք իւր լինին նմա ի խրատ:

Իջէ այս որպէս և է. այլ յորթենալ պատանւոյն՝ բաժակք և բանք գնային ի վայր և ի վեր առանց չափոյ և կարգի, և ի պահուն՝ ուր թողաք զնա՝ ոչ կարէր լռել. մարմնջէր ի խօսել, և ունկնդիրք նմա ոչ պահասէին, կամ հասկնալ, և ունկնդիրք նմա ոչ պահասէին, կամ հասկնալ նա զորեւարն որ անդ՝ ունկնդիրս: Զառաջինն խօսք ի չրթանց նորա բղխէին ինքնօրէն, ոչ խակ առանց ինչ կարգի: Այլ տակաւ դժուարանայր յամբակ ղնմանսառ ածել. և խորհուրդք յստակ և պատրաստ ի միտս եկեալ, նսեմանային և ցնդէին խակին. և բարբառ յամր եկեալ ի հնչուն, ոչ ի գեպ գայր իմաստից: Յանձկութենէն յայսոսիկ մի ի վրիպակ բերմանց, որք բազում մտամբք ապականէն ըզմարգիկ, այն էր՝ զի գիմեր յանիծապարտն սրուակ. որ ի հանգամանս անդ զինչ ի նմա ներգործէր՝ քաջայայտ է մտացեաց: Ի բազում խօսից անակ, զորս ի Թշուառ յայնմ գիշերի ճառատեաց, ածից այսր փոքր ի շատէ, Թողեալ ի բաց զանպատեհս, որ ոչ միայն անիմաստք՝ այլ և ոչ նշմարանս բերեն իմաստից, որպէս խնդրի ի տպագիր մատենի:

«Ա՛հ պանդոկապետ», ասէր չքնէլով զաչս զսեղանով և զկրակարանաւն, և մերթ սկսուցեալ ուր չէրն նա, և խօսելով միւսի ի մէջ խառնաձայն բարբառոյ երախանին. «Դուն որ պանդոկապետ ես, չեմ կրնար կըլլել ան խօսքըդ՝ անուն մեկնուն ու արուեստ. ինծի պէս զաւկի մը... աղէկ չըրկիր... ինչ ուրախութիւն, ինչ գինի, ինչ համ... խեղճ զաւկի մը

անունը թղթի վրայ գրել։ Ալեկ չէմ ըսեր, պարոններ. պանդոկապետները ակռաք էր խեղ-ճերուն կռնակ կենային... մեկ ըսեր, մեկ ըսեր, պանդոկապետ. օրինակ մը կուզեմ բե-րել... անոր համար որ... կը ծիծաղին հա... քիչ մը զուարթացած ակռաը ըլլամ... բայց պատճառներս ալեկ կը բերեմ... ըսե՛ք ինձի, ո՛վ է որ խանութդ կը գործընկե. խեղճ ազա-քը, անանկ չէ՞... Նայէ՛ք որ ան հրամանագիր-ները լինող պարոններէն մեկը կուգայ հոս՝ գաւաթ մը գինի խմելու »։—

Ո՛ն, յարոց անդ կային, ասէ. « Ամենքը ջուր կը խմեն »։—

Ա՛յլ ոմն ասէ. « Ինքնիշխանն կը խմեն, սու-տը աւելի համարձակ ըսելու համար »։—

Գոչէաց Ռենցոյ. « Հա՛, հիմայ է որ բանաս-տեղծը խօսեցաւ. ուրեմն դուք ալ կը հասկը-նաք պատճառներս. պանդոկապետ, պատաս-խան տուր. Ֆերրեբեն որ ամենէն ազնիվն է, հոս եկած ունի՞ մեկուն կենաց համար գինի մը խը-մելու, ըսառակ մը ձգած ունի՞ հոս։ Ու ան չու-նը, աւազակը... անունը չըսեմ. չխօսիմ, ինչու որ ըղեղս քիչ մը... Ֆերրերը. Հայրը... եր-կուքն ալ ազնիվ մարդիկ են. քիչ են ազնիվնե-րը. ծերերը երիտասարդներէն գէշ. երիտա-սարդներուն գէշն ալ՝ ծերերէն գէշ։ Բայց գոհ եմ որ արիւն չեղաւ. մինչ բարբարոսութիւն, դահիճներու ձեռք մնանէ։... Հա՛յ... ո՛հ, աս է հարկաւորը, հա՛, աս է։... Հիմըշտըկուեցայ իրաւ, բայց ես ալ հիմըշտըկեցի... մեկդի՛...

առաւօտեան... կեցցէ՛։... Բայց Ֆերրեբեն ալ... քանի մը խօսք գրաւառ... անիծած ախտ։... Ողջ կենայ արդարութիւնը... հայ... ասոնք են ըսելու խօսքերը։... Հոն պէտք էին ան մարդիկը, երբոր սկըսաւ ան անիծած ձայ-նը թըն թըն թըն, էտքը նորէն թըն թըն թըն. ան ա-տենն ալ չէինք փախչեր հա՛։ Հոն պէտք էր բռնել ժողովրդապետը... դիտեմ ո՛վ »։

Եւ յաւելն ցայս՝ խոնարհեցոյց ղէբեհն, եկաց առ վայր մի՛ որպէս յափշտակեալ՝ի խորհուրդ ինչ, և ապա յոգւոց հանեալ, ՚ի վեր հառ ղէմն իւր փղձկեալ աչօք, լքեալ ինն, և այնպէս այլանդակեալ և անհեթեթ, զի սոս-կայր եթէ ոք յայնցանէ՝ որ պատճառս առեալ էին՝ տեսանէր զնա յայնժամ։ Ա՛յլ որք սկսեալն էին ղբօսնուլ ՚ի լուր սրատառոչ և խառն ՚ի խուռն ճարտարախօսութեան նորա, առաւել ևս ղբօսնուին ՚ի տեսիլ դիմաց նորա։ Որք մերձն կային, ազդէին այլոց հայել ՚ի նա. ա-մենեքեան կային ՚ի զնին, և խաղալիկ լինէր նոցա պատանին։ Իբր ոչ եթէ նոքա ՚ի ղպատու-թեան կային, կամ ՚ի սովորական միտս իւ-րեանց. այլ ոչ ոք ղգլխեալ որպէս զհնչեն Ռին-ցոյ. որ զի չինական ևս էր, մերթ այս ոք և մերթ այն գրգռէին զնա խօլական և թանձրամիտ հարցուածովք, և խաղ առնէին զնովաւ։ Իսկ նա՝ էր զի գժկամակէր, և էր զի համբերէր ՚ի կատակ, մերթ ջնջէր առնէր, և այլ ընդ այլ բարբառէր, մերթ հարցուածս և մերթ առ-նէր պատասխանի, միշտ ընդոստ և անյարմար։

Ըստ բախտի ՚ի ցնորս անդ յարատևէր ՚ի նմա ղգուշութիւն չանուանել զոք. որպէս զի և որ խորագոյնս ՚ի մոլի նորա սևեռեալ կայր անուն, չէր ընդ շրթունս նորա. որ և մեզ լինէր արդեօք ՚ի վիշտ, եթէ սիրելի և մեզ իսկ ոչ սահաւ մեծարոյ անունն այն, ծանր լինէր ՚ի բերան յոռիս և ՚ի լեզուս ժանտաժուռս:

ԳԼՈՒԽ ԺԵ.

Եւ յերկարել խաղուն՝ մատեաւ պանդուխտն առ Ոչնոյ. և նախ զայլս բարեձևութեամբ աղաչեալ՝ մի նեղել զպատանին, շարժէր ապա զբազուկ նորա, յորդորէր զնա, հրաւիրէր ՚ի սենեակ անդր ՚ի քուն: Իսկ նա դարձեալ վերստին կրկնէր և յեղյեղէր զհրովարտակս, զանուն և զմականուն, և զբարի մանկան: Յետոյ ուրեմն անկողնի և քուն ստեպ յունկն նորա հնչէցեալ, զգացուցին նմա ուժգին զվէտս անկողնոյ և զքնոյ՝ սթափեցուցեալ զնա վայրկի մի. և վայրկին այն զգաստութեան ծանոյց նմա զչիզուսն լուսոյ մոայլ իւրոյ, որպէս գրեթէ ՚ի վախճան հանդիսի լուսաւորութեան՝ յեաւնն ձրագ գեռ անշէջ զայլոցն ցուցանէ զնաւարուսն: Բուռն արար անձին, կարկառեաց յետոյց զձեռս ՚ի

սեղան անդր, փորձեաց երկիցս յառնել, հա-
ռաչեաց, տատանեցաւ, և յերրորդումն նուա-
գի՝ օգնեալ 'ի պանդոկապետէն յոտն եկաց:
Որոյ կալեալ զձեռանէ նորա, անցոյց զնա ընդ
միջոց սեղանոյն և բազմոցին, ձրագ 'ի ձախուսն,
մերթ ձգելով զնա աջմէն, և մերթ օգնելով
նմա, էած զնա 'ի դուռն սանդղոյն: Անդ Ռին-
ցոյ, յաղաղակել ամենեցուն զչէտ նորա 'ի
ձայն ողջունի, գարձաւ առ նոսա յանկարծ. և
եթէ չէր պանդոկապետին երագեալ՝ ուռնել
պինդ զբազկէ նորա, թաւալգլոր անկանէր:
Դարձաւ, և միւսով աղատ բազկաւն տատանէր
զչեռս՝ ողջոյն լեմն 'ի ձև սողոմոնեան* կնքոյ
ընդ օդս գծագրելով:

Յայնժամ պանդոկապետն ձգեալ զնա՝ ասէ
լով. « Անկողնի երթանք, անկողնի », եմոյծ ընդ
դուռն սանդղոյն. և ձգամբ մեծաւ հանեալ
զնա 'ի վեր, ած 'ի սենեակին պատրաստեալ
նմա: Ուրախացաւ պատանին 'ի տեսանելն զը-
մայիճս, հայեցաւ սիրողաբար 'ի պանդոկա-
պետն գարձուցեալ 'ի նա զաչս՝ որք մերթ լու-
սանչոյլ վայլէին, և մերթ աղօտանային որպէս
կայծոռիկս: Ձգնեը 'ի կլիս ուռնել զանձն յո-
տին, և կարկառեալ զաջ 'ի դէմս պանդոկապե-
տին՝ կամեր գգուել զծնօտ նորա 'ի ցոյց բա-
րեհամութեան և չնորհակալեաց, այլ չկարաց
հասանել. ասաց ևս. « Ալրիս պանդոկա-

* Կնիք + սողոմոնեան կոչի ձևս այս , զոր և արևե-
լեայք կոչեն զայն նոյնպես Մխոհէ-ըէ սէ-լեյման :

պետ, հիմայ իմացայ՝ որ աղէկ մարդ ես եղեր,
բարեգործութիւն է անկողնի տալ բարի զաւ-
կի մը. բայց աղէկ չըրեր անուն ու մականուն
խառնելդ, անկէց աղէկ մարդու խօսք չէր.
Թէ որ քիչ մը աչքաբաց չըլլայի »...

Պանդոկապետն, որ ոչ կարծեր Թէ կարաս-
չէ նա տակաւին այսչափ ինչ տրամաբանել, և
որոյ ընդերկար զփորձ առեալ էր՝ զի գիւնեհա-
րեալք գիւրագոյն յեղաշրջին, խորհեցաւ առ-
նուլ 'ի ճահ զվայրկի մի զդասատուութեան նորա
առ 'ի փորձել զնա միւսանգամ, և ասէ քաղ-
ցրութեամբ և ամենայն բարեձևութեամբ.
« Սիրելի որդիս, քեզի նեղութիւն տալոյս հա-
մար չըրի, և ոչ քու գործդ հետաքրքրելու
համար. ինչ ըսեմ, օրինք է, պէտք է որ ձնա-
զանգինք. ամենէն առաջ մինք կը պատժուինք.
ալ աղէկ է գոհ ընել զիրենք. վերջապէս ինչ
ալ է ուզածնին, ոչնչ. երկու խօսք: Անոնց
համար չէ, հապա ինծի ընդրք մը ընելու հա-
մար. քեզ նայիմ. հոս մեր մեջը լմնցընենք. ըսէ
անուն, ու հանգարտ սրտով մտիր անկո-
ղինդ »:

Գոչեաց յայնժամ պատանին. « Ինչպէս պէտ
անզգամ, քեզի պէս նենդաւորը, նորէն ատ
խօսքերը բերան կառնես՝ անուն մականուն ա-
րուեստ հա՞ »:

Պանդոկապետն ասէ. « Չէ, չէ. ձայն մի հա-
ներ, պառկէ »:

Բայց պատանին ատատկագոչ ևս յառաջ ա-
ծէր զբանսն. « Հասկըցայ, դուն ալ անոնցմէն
ես եղեր. կեցիր, կեցիր, կը սորվեցընեմ քեզի »:

Եւ դարձուցեալ զդէմն 'ի սանդուղս, սկսաւ աղաղակել ուժգին. « Խարեհամեր, պանդոկապետն ալ անոնցմէ »...

« Կատակ ըրի » դոչէր և պանդոկապետն յե-բեսս նորա, մղելով զնա 'ի մահիճս, « կատակ էր ըրածս, չհամացա՞ր » : —

« Կատակ էր ըրածդ հա՞. կատակ էր ըսե-լովդ՝ կատա՞կ կըլլայ » . ասաց և անկաւ 'ի վերայ մահճացն : —

« Շուտա ըրէ, հանուէ » , ասելով օգնէր նմա պանդոկապետն, զի կարօտ իսկ էր օգնականու-թեան : Եւ երբև մերկացաւ զզգեստն ոչ սա-կաւ աշխատութեամբ, առեալ զայն պանդո-կապետին ձեռօվ, որոնէր 'ի քսակին՝ թէ էր ինչ արծաթ. և 'ի գտանելն ածեալ զմոտ՝ զի 'ի վաղիւ անդր պարտ էր հիւրոյն ընդ այլս ու-նել հաշիւ քան ընդ իւր, և անկանէր արդեօք արծաթն այն 'ի ձեռս՝ ուստի չէր մերթ պան-դոկապետի հանել զայն, խորհեցաւ դէթ յայսմ մասին յաջողել, և ասէ.

« Դուն բարի զաւակ մըն ես, պատիւդ դիտ-ցող, անանկ չէ՞ » : —

« Բարի զաւակ, պատիւս դիտցող, տարա-հոյս չեմայ » . կրկնեաց պատասխանն , մրցելով տակաւին ընդ ձարմանդս բաձկոնին՝ զոր չև էր կարացեալ հանել : —

« Ո՛րբեմն , չէս կրնար հիմակուց վճարել զգուի հաշիւդ, վասն զի վաղը առաւոտ կանուխ դուրս պիտի երթամ հարկաւոր գործերուս համար » : —

« Իրաւունք է , սատանորդի եմ, բայց պա-

տիւս գիտեմ: Բայց ատակ! հիմայ ո՞ր փնտը-ռեմ ըսատակները » : —

« Հոս են » , ասէ պանդոկապետն , և գուն գործեալ, և զամենայն երկայնմտութիւն և ձարտարութիւն 'ի գործ արկեալ, յաջողեցաւ կատարել զհաշիւ իւր ընդ պատանւոյն , և առ-նուլ զվարձան : Եւ ապա ասէ պատանին . « Օգ-նէ ինծի որ հանուելս լմընցընեմ. ես ալ կը զգամ որ սատակ քունն ունիմ» :

Օգնեաց նմա պանդոկապետն. և զետեղեալ զնա յանկողնի, ծածկեաց վերմակաւ. և նե-ղեալ ինն ասաց նմա գիչէր էրէ յորժամ սկը-սեալ իսկ էր նա խորդալ: Եւ ապա հանգոյն ինն որպէս հայն ոք 'ի գժպհի ինչ կամ 'ի սի-րելի, ընաւորապէս բերմամբ առ 'ի զգալոյ որ ինչ 'ի սիրտ իւր ազդի, զկայ էառ վայրիկ մի 'ի նկատել զհիւրն լեալ իւր տաղտկալի, 'ի վեր էառ զաչսն, մատոյց 'ի դէմն նորա, որպէս գրեթէ նկարի փսիքի 'ի զնին դիմաց անծանօթ փետայն 'ի ծածուկ. և ասէ անձայն առ հնէք պատանին նկրհեալ. « Բեզի պէս անխելքը, որ քեզմէն քու չարիքդ վնտռեցիր. վաղը կխմա-նաս, վաղը համը կառնես... քեզի պէս խեն-թը, որ աշխարք պտըտելու եկեր ես՝ առանց դիտնալու որ արեւը ո՛ր կողմէն կելլէ, ու զքեզ ալ՝ ուրիշներուն ալ քեզի հետ վտանգի մէջ կը ձգես » :

Զայս ասացեալ՝ էառ 'ի բաց զշրջազգն, մեկ-նեցաւ եւ 'ի սենեկէն, և փակեաց զդուռնն բանալեաւ. և 'ի գլխոյ սանդղոցն ձայնեալ ըզ-կէն իւր, ասաց թողուլ աղախնոյն զմանկունս,

և լքանել ՚ի խոհանոցն փոխանակ ելք. « Ինչ-
չու որ ես պէտք է գուրս ելլեմ օտարականի
մը պատճառաւ. չեմ գիտեր ո՛ր սատանան իջը-
կեց զինքը հոս իմ գժբաղդութեամբս »: Եւ
պատմեալնմա համառօտիւ զտաղտկալն գէպն,
յաւելը. « Աչք ունեցիր ամէն բանի վրայ, ու
մանաւանդ խոհեմութիւն ատանկ վտանգաւոր
օր. վարը խել մը անկարգ մարդիկ, կէս մը խը-
մելէն, կէս մը լեզուներն չիբանելէն, ամէն կեր-
պով բերնեբերնուն կուտան: Հերիք է. Թէ որ
մեկը յանդգնի »... —

« Հերիք է, աղայ չէմ. ես ալ քիչ մը գիտեմ
ընելիքս. կարծեմ ինչուան հիմայ բան մը ե-
ղած չէ որ »...

« Այո՛, աղէկ է, աղէկ է, նայե՛ որ վճարեն, ու ան
ամէն խօսքերը որ կըներն համբարապետին վրայ,
քաղաքապետին վրայ, Ֆերըբէյին վրայ, տաս-
նապետներուն վրայ, ասպետներուն վրայ, Սպա-
նիայի ու Ֆրանսայի վրայ, ու ասոնց նման ու-
րիշ խենթութիւններ բաներու վրայ, չիլսկլու
զարկ, դէմ զուրցել չըլլար, ան ատեն բանը
դէշի կերթայ. իսկ խօսքերնուն իրաւունք որ
տաս, հաքը գէշ կը լմննայ. գուն ալ գիտես
որ երբեմն սատիկ խօսողները... բաւական
է.. երբոր անանկ խօսքեր կըլլան, պէտք է
գլուխ գործընել երթալ, հիմայ խոփամ ըսելով
իբրև Թէ մեկալ դիէն ուրիշը կը կանչէ: Ես կը
ջանամ որ չուշանամ, շուտ մը գառնամ»:

Այս ասացեալ՝ էջ ընդ նմա ՚ի խոհակերոցն,
շուրջ հայեցաւ տեսանել Թէ էր ինչ նոր. Հաս
՚ի սեղոյ վրայր իւր և զլերարկու առկախեալ, և

զգուշ յանկեանէ. և ակնարկեալ միւսանգամ
՚ի կինն՝ յիշեցուցանել նմա որ ինչ եան հրա-
հանգս, մեկնեցաւ: Այլ ՚ի յամելն յայսոսիկ՝
յուշ եղեն նմա որ ինչ առ միաշաբք հէք պա-
տանւոյն սկսեալ էր եպերանս, և լսումն առ-
նելով այնոցիկ զճանապարհայն, ասէր. « Կա-
մակոր լեռընցն », (զի Թէպէտև ծածկէր Ին-
ցոյ զամառութիւն իւր, այլ ինքնին այն ՚ի
յայտ գայր ՚ի բանս նորա ՚ի ձև խօսելոյն ՚ի կեր-
պարանս և ՚ի շարժմունս նորա). « ատանկ վը-
տանգաւոր օր, քաղաքագիտութիւն ու խելք
բանեցընելով կը խաղըսկի վտանգէն, գուն
լմննալու տեղը եկար բանս ալ բերեցիր. պան-
գոկ կը պակսէր Մ՚ինանու մէջ, որ խմինս միաբե-
եկաւ գալ. գոնէ մինակ եկած ըլլայիր, մեկ
աչքս կը գոցէի աս իրիկուան համար, ու վաղը
խելքդ կը պահեցընէի. իսկ գուն ընկերով
եկար, ու անանկ ընկերով մը՝ որ բանտընկերուն
մեծն է, որպէս զի խաղըսկելը անկարելի ըլ-
լայ »:

Եւ ամենայն ուրեք ՚ի գնալն պատահէր ան-
ցաւորի ումանց, կամ միայնակ գեգերելոյ, կամ
երկուց ոմանց, կամ խմբելց, որ գնային քըրթ-
մընջելով: Եւ ՚ի խօսելն այսպէս անձայն, հաս
զի գումարտակ մի զինուորաց գայր, և եկայ
մեկուսի՝ առ նոցա անցս գիտեալ զնոսա ծայ-
րիւք ականց, ասէ. « Խենթ պատժաղները կու-
գան, խենթ պատանի, քանի մը հոգի ոտք ե-
լած տեսնելով, կարծեցիր որ անոնց կանչելու-
տեղը՝ աշխարք պիտոր փոխուի. ու աս զար-
մանալի վատնութեամբը զբեղ կործանեցիր,

զիս ալ կուզէիր կործանել. ինչ խելք: Ամեն
Ջանք ըրի զքեզ խաբեբայ. իսկ դուն, անմիտ,
քիչ մնաց որ տակնուվրայ սիտոր ընէիր բոլոր
պանդոկը. հիմայ քեզի կ'ինայ զքեզ խաբեբա-
լը, ես զիս կը հոգամ: Կարծեցիր որ հետաքըր-
քրութեան համար կուզէի անունդ գիտնալ,
ինչ վրաս պէտք է գիտնալ որ անունդ Թա-
գէոս է եղեր կամ Բարթողիմէոս: Ես ալ կա-
խարժիմ գրիչ ձեռքս առնել, դուն միտակ չէս
որ ամեն բան քու խելքիդ չափովը կուզես:
Ես ալ գիտեմ, հրամանագիրներ կան՝ որ բան
մը չեն ածէր, կարօտ չեմ գեղացիէ մը սորվե-
լու. բայց դուն չես գիտեր որ հրամանագիր-
ները պանդոկապետներուն դէմ կը զօրեն: Կու-
զես աշխարքը պտըտիլ, բերնիդ եկածը խօսիլ.
բայց չես գիտեր որ աշխարքը քու խելքիդ չա-
փովըընելու, ու հրամանագիրները վար ձգե-
լու համար, առջի հարկաւոր բանը՝ անունդ
վրայ զգուշութեամբ խօսիլն է: Խեղճ պանդո-
կապետի մը, որ քու խելքիդ չափովըելով է-
կողներուն անունը հարցնելու որ չըլլայ, գի-
տէ՞ք գլուխը ինչ կուգայ. Ո՛ր Ե՛նչ պանդոկապետ
ֆամ խոհակիր, աս յանդգնիս մէջ որ էդնոյ, էբեփհարիւր
փօլընաքի փոփանի վճարել. կըսես հրամանագիրը. ո-
ռվ-որ էիկոբենայ վճարել, հինգ փարի ըլի փալեր պոփ-
ծոսի, ֆամ ոբիշ մարմնաւոր պոփիկ մը իրէ, ինչ որ փող-
փոպէիը կը սահմանէ: Ի՞նչ մեծ շնորք »:

Եւ յաւելէն զայն՝ եհաս պանդոկապետան 'ի
գատաստանարան անգը. և էր անդ և չամե-
նայն գիւանս գործառնութիւն մեծ. ամենայն
ուրեք տայլն հրամանս կարեւորս 'ի զգուշու-

թիւն վաղուին, առ 'ի բառնալ զպատճառանս
և խափանել զանդգնութիւն մտաբերելոցն
վերստին յալմուկ, և զօրացուցանել զձեռս
հրամանատարաց: Յաւելան զնուագըք զուռմբ
համբարապետին, փակեցան գլուխք ուղեաց
գերանօք և սայլիւք. սփռուէր տուաւ ամե-
նայն հացագործաց գործել հաց անգադար.
արձակեցան սուրհանդակք 'ի քաղաքս շրջա-
կայս, պատուէր տալ հաստուցանելոյ ցորեան 'ի
մայրաքաղաքն, և կարգեցան վերատեսուչք
յաղատանուց՝ գնալ վաղ քաջ ընդ առաւօտն
'ի հացանոցս, հսկել 'ի բաշխս նկանակաց, և
առնել զնուագիչս սաստիւ և ողջախոհ: Բայց
առ 'ի հարկանել, որպէս օրէն է ասել, մերթ
զտակառ և մերթ զշշեանակ, և առ 'ի զօրացու-
ցանել զվրատս փոքուս խիւք ահարկուածեամբ,
ձերբակալ եղեն հնարիւք կէսք 'ի խռովչաց,
առաւելապէս 'ի ձեռն զօրապետին, զորոյ դիւ-
րաւ էր գուշակել զմիտս զաղտամբութենէ
և զաղտամբաց, գանաճեծ զատորին կողմանս
նոցա առնելոյ: Խարակքնորս որսականք արձա-
կեալ էին անդաստին 'ի սկզբանէ աղմկին, և կռէ-
ցեալն այն Ամբրոսիոս Ֆուզելլա, ըստ ասացե-
լումն պանդոկապետին էր մի 'ի կալանաւորա-
պետաց ծպտեալ, որ շրջէր դարանիր ձանա-
չել զոք անդէն 'ի յանցանս, և զբռամբ ածել
'ի խաղաղ գիշերի կամ 'ի վաղորդայն: Եւ
լուեալ սուղ ինչ յպտնութենէն Ռինո-
ցոյի, ակն եդեալ էր 'ի վերայ նորա· զի թուէր
պարզամիտ ոք յանցաւոր՝ որպիսի ոք խընդ-
բէրն: Եւ գտեալ զնա անտեղեակ երկրին ա-

մենեվին , փորձեալ էր տալ նմա զՀարուածն Ճարտար՝ ածել զնա խոչոյն ՚ի բանս որպէս յապահովագոյն պանդոկ , այլ անկաւ հա- րուածն ՚ի վրէպ , որպէս տեսաքն : Սակայն կա- րաց ածել ՚ի տուն տէղեկութիւն անվրէպ զա- նուանէն նորա և զմականունն և զհայրենեացն , և բազում այլ ինչ գեղեցիկ ծանօթութիւնս ՚ի կարճ . որպէս զի ՚ի հասանել անդր պանդոկա- պետին՝ ասել որ ինչ գիտէր զՈՒինդոյէ , գի- տէին գաղտաբար առաւել քան զնա : Եմուտ նա ՚ի սենեակ անդր ամբաստանութեան , և պատմեաց որպէս հիւր ոմն հասեալ ընդ- ՚ի պանդոկին , էր կամեցեալ յայտնել զա- նուն իւր :

Անդ մի յաւետնագրացն Թողեալ զգրիչ ՚ի ձեռանէ , ասէ . « Պարտքդ զրիչ խմացընել գա- ղտաբարին , Թէ և գիտեինք եղածը » :

Ասէ պանդոկապետն ՚ի մոխ . « Ի՞նչ աղէկ գաղտնիք , մեծ խելք պէտք է » :

Յաւետնագրին . « Գիտեինք ալ իր պա- տուհասի անունը » :

Ասէ գարձեալ պանդոկապետն ՚ի մոխ . « Ի՞նչ պէս անուններն ալ իմացեր են սատանորգիները » :

Աւետնագրին ասէ , « Բայց դուն անկեղծա- բար ամեն բան չես ըսեր » : —

« Ի՞նչ պէտք է ըսեմ ասկէց աւելի » : —

« Հա , հա , աղէկ գիտենք որ խել մը գողցած հաց բերաս անիկայ քու պանդոկդ , չէ Թէ միայն գողցած՝ այլ յափշտակած , աւարառու- Թիւն ու խռովութիւն ընելով » : —

« Քանակէն հաց մը Տանէց , ես ինչպէս կրնայի

գիտնալ ոսկիէց աւելը էր : Կրնամ ըսել մեռնե- լոս առենս ըսելու պէս , որ մէկ հացէն աւելի չիտեայ » : —

« Միշտ ասանկ պատճառաբանութիւններով զձեզ կարգադարացընէք . ձեզի մսիկ դնելու որ ըլ- լանք , ամեն ձեր պանդոկը եկողը աղէկ մարդ է . ինչպէս կրնաս ցուցընել որ ան հացը գող- ցած չէր » : —

« Ինչ պարտիւան եմ ցուցընելու . ես առ բանին մէջ ինչ կը խառնուիմ , ես պանդոկա- պետ եմ , գաղտաւոր չեմ » : —

« Բայց չես կրնար ուրանալ՝ որ առ քու Ճանչնաւորդ սերունդեան հրամանագիրներուն դէմ խօսքեր ըսած չըլլայ , ու քաղաքապետին կնիքը անարգած չըլլայ » : —

« Թողութիւն կընես , ան իմ Ճանչնաւորս չէ , առջի անգամ էր որ զինքը տեսայ . մեղայ մե- ղայ , սատանան խրկեց զինքը իմ պանդոկս . Թէ որ Ճանչնայի ըլլար , անունը չէի հարցը- ներ » : —

« Բայց քու առջիդ , քու պանդոկիդ մէջ , ա- տանկ ապստամբական յանդուգն ու խռովա- րար խօսքեր եղեր են , պռոաչներ , կանչէներ ու արտունչներ » : —

« Ի՞նչպէս կուզես հրամանքդ որ ես ան գո- ռոզմ գոչոցին մէջ լսեմ ինչ խօսէնին . ես իմ շահս կը նայիմ , անոր ուշ կը դնեմ խեղճ ողոր- մելիս : Հրամանքդ ալ գիտես որ լեզուներն եր- կայն եղողներուն՝ ձեռքերնին ալ երկայն է , մա- նաւանդ երբոր չափաւոր են » : —

« Հա , հա , Թող որ խօսին ու ընեն ուզած-

նին. վաղը կը աեմնես, վաղը, ան խօսքերուն պատուղը. ինչ կը կարծես »։ —

« Բան մըն ալ չեմ կարծեր »։ —

« Կը կարծես որ խառնիճաղանճ ռամիկը հրամանի պիտոր Միլանոս »։ —

« Ո՞վ կըսէատ խօսքը »։ —

« Կը աեմնես, կը աեմնես »։ —

« Աղէկ կը հասկընամ որ Թագաւորը միշտ Թագաւոր է. բայց ով որ չհնազանդիր, ինքն է անհնազանդը. զաւկըներուս սէր եղողը՝ քնա-կան է որ չսպասամբիր. հրամանքնիդ ջինք ու-նիք ձեռընիդ, ձեզի կհյնայ »։..

« Դեռ շատ մարդ ունիս պանդոկը »։ —

« Շատ մարդ »։ —

« Ատ քու հիւրդ ինչ կընէ հիմայ. կը շա-րունակէ պոռալ կանչելը, ուրիշներըը ոտք հա-նելը, գրգռելը՝ որ վաղը խռովութիւն հա-նեն »։ —

« Ան օտարականը ըսել կուզես հրամանքդ. պառկեր կը քնանայ »։ —

« Ուրեմն շատ բազմութիւն ունիս... հերիք է, նայէ որ վինքը չխփահոցընես »։ —

« Ինչ, ես բանտապան պիտոր ըլլամ». ա-սաց ի մոր, առանց յաւելլոյ՝ այո կամ ոչ։

Աաեհագործն ասէ. « Տեղդ գարձիր, բայց խելքդ գլուխդ ժողվէ »։ —

« Իմ խելքս գլուխս է միշտ. հրամանքդ ա-ղէկ գիտես որ ամենևին ամբաստանութիւն մը չէ եղած վրաս »։ —

« Ու մի կարծեր որ աաեհանը իր ուժը կոր-սընցուցած ըլլայ »։ —

« Եթե ատանկ կարծիք ունենամ. հոգիդ սի-րես, ես ատանկ բաներ չեմ գիտեր, պանդոկս կը հոգամ»։ —

« Սովորական լեզուս. ուրիշ խօսք մը ջունիս ըսելու »։ —

« Ուրիշ ինչ ըսեմ. ձշմարտութիւնը մեկ է »։ —

« Ինչ որ է. հիմակու հիմայ սեպհնիք որ ըսիր ամեն բան. բայց պէտք որ ըլլայ, աւելի տեղ-նիտեղօքը պէտք է ըսես, ինչ որ ատեանը հար-ցընէ քեզի »։ —

« Ուրիշ ինչ պիտոր ըսեմ, ուրիշ բան չեմ գիտեր. հաղիս իմ գործերուս կրնամ ուշ դնել»։ —

« Նայէ որ չխփահոցընես վինքը »։ —

« Յուսամ որ զօրապետը գիտէ հոս գալս իմ պարտքս ընելու։ Մնաս բարով, ձեռքդ կը պագնեմ»։

Ի ծագել առաւօտու մինչդեռ հէքն Ռինոցոյ խորդայր ի քաղցրադոյն հանգիստ քնոյ զեօթն ժամու, զգայ երկիցս խթուածն ուժգին ի բազուկն, և լուաւ բարբառ Էքինոյ Թրամա-քինոյ։ Զարթեաւ ամփոփեաց յինքն զբա-զուկն, երաց զաչս ծանրարթուն, եաես յա-նոսիոց այր մի սևազգեաց, և վինեալս երկու յաջմէ և յահեկէ բարձին։ Ընդ քուն և ընդ ապշութիւն և զարթնուամ ի ծանօթ արբե-ցուներնէն, եկայ առ վայր մի որպէս անգգայ՝ երազել կարծելով, և տագնապեալ՝ շրջէրջէր յանկողնի, թօթափել զքուն։

Ասէ ցնա այրն սևազգեաս, որ էր նոյն ինքն

առենադպիրն երեկոյին. « Լօրենցոյ Թրամալենոյ, եկիր, քեզ նայիմ, հետս եկուր » : —

Ասկ Ռէնցոյ. « Լօրենցոյ Թրամալենոյ! ինչ ըսել է: Ի՞նչ կուզէք ինձմէ, ոնի ըսաւ ձեզի իմ անունս » : —

« Զայնդ վար քաշէ, շուտ ըրէ ». ասէ մի՝ ի վնեցոյ արանցն՝ որ կայնն երկուստեք, կա-լեալ զբազկէ նորա :

Գոչեաց Ռէնցոյ, յինքն ձգելով զբազուկն. « Ա՜ս ինչ բռնութիւն է. պանդոկապետ, պանդոկապե՜տ » :

Ասկ գարձեալ նոյն վնասուն հայելով յառենադպիրն. « Տանինք վնաքը կիսամերկ ի շապիկս » :

Եւ առենադպիրն ասէ ցՌէնցոյ. « Լսեցիր, անանկ կըներնք, թէ որ շուտ մը չես եկեր, հետերնիս գալ » : —

« Ինչո՞ւ » : —

« Ինչուն հան գառաւորէն կիմանաս » : —

« Ես. ես պառաւաւոր մարդ եմ, բան մը ըրած չունիմ ուրիշն, ու կը զարմանամ» ... —

« Ա՛լ աղեկ քեզի համար. երկու խօսքով բանդ կը լմընցընես, ու բանիդ գործքիդ կերթաս » : —

« Չիմակուց Թողուցէք զիս. ես գառաւորի հետ բան չունիմ» : —

« Եկիր, լմընցուր » . ասէ մի՝ ի վնեսուրացս : —

« Աչնեկք առնինք իրաւցընէ », ասէ միւսն : —

« Լօրէնցոյ Թրամալենոյ » . ասէ առենադպիրն : —

« Հրամանքդ ինչպէս գիտես իմ անունս » . ասէ Ռէնցոյ :

« Պարտքերնիդ ըրէք » ասէ առենադպիրն ցվնեսուրս. և նոքա ձեռն արկին իսկոյն՝ ի պատանին ձգել զնա յանկողնոյ :

Ռէնցոյ ասէ. « Ի՛նչ, մի գպչիք իր պատիւը գիտցող մարդու, ինքնրենս կրնամ հագուրել » —

Առենադպիրն ասէ. « Ուրեմն շուտ ըրէ, հագուէ » :

Ռէնցոյ ասէ. « Հա կը հագուիմ ». և ժողովէր զձորձս իւր սիրեալս՝ ի վերայ մահճացն, որպէս բեկորնաւու բեկելոյ՝ ի ծովեզեր : Եւ՝ ի զբենուելն՝ ոչ գադարէր յասելոյ. « Բայց ես չեմ ուզեր գառաւորին երթալ, անոր հետ ինչ բան ունիմ. աս անիրաւ նախատանացը համար՝ որ ինծի ըրին, Ֆերրերին կերթամ. անիկայ կը ճանչնամ, գիտեմ որ աղեկ մարդ է, ինծի ալ երախտապարտ է » :

Առենադպիրն ասէ. « Հա, հա, որդեակ. զքեզ Ֆերրերին կը տանինք » :

Յայլ դէպս ծիծաղէր արգեօք ընդ խնդիր նորա, այլ անդ ոչ էր ժամ ծիծաղելոյ. վասն որոյ ի գալ իւրում տեսեալ էր շարժմունս՝ ի վողոցս, և չէր մարթի գիտել՝ մնացորդք էին աղմկին եւ՝ ի սպառ հանգարտելոյ, թէ սկիզբն նորոյ աղմկի. հանգիստել իրեարց, խառնել և գուժարտակս կազմել. և յայնժամ առանց ինչ յայտ առնելոյ, կամ գէթ ևիամբելով յայտ առնել, չականջէր, և թուէր նմա՝ զի զպրաստայր ընդունել, և փութայր զերծանել անվտանգ, այլ ածելով՝ ի բաց զՌէնցոյ սիրով և խաղաղութեամբ. զի՝ ի գալն ընդ նմա յայտնապէս՝ ի կռիւ, կասկածէր զի զՀանապարհային ոչ ևս

ճայր մի ընդդէմ երից. և ակնարկէը զնուա-
րաց՝ համբերել և մի զայրացուցանել զպատա-
նին. և ինքն ևս գուն գործէը համոզել զնա
ողջամտօք : Բայց պատանին մինչդեռ յուշիկ
յուշիկ արկանէը զձորձս զիւրև, յուշ ածելով
ըստ կարի վերինկեան անցս, գուշակէը ինն՝ զի
հրովարտակք և անուն իւր և մականուն էին
պատճառք չարեացն. այլ զարմանայր թէ ո՛ր
պէս գիտացեալ էր նոցա զանուն իւր. և զինչ
՛ի գիշերին յայնմիկ էր պատահեալ, ուստի ա-
տեանն քաջալերեալ՝ յղեալ էր ձեռն արկա-
նել ձերբակալ առնել անդիմախոսս զմի՛ ի հա-
ւատարիմ որդւոց, որոց աւուրըք յառաջ այն-
պէս հզօր էր վարկ՛ ի ժողովի, և չէր մարթ ա-
մենեցուն նոցա թմբրեալ կալ, զի և ինքն Ռինէ
ցոյ ոչ անդիտանայր զասատկանալ չընչնացն
ընդ փողոցս : Նկատեալ ապա զդէմս առենա-
գպետին՝ տեսանէը ՛ի նմա յուզմունս, զոր ՛ի
զուր ձգնէր նա անյայտ առնել. վասն որոյ առ
՛ի ստուգել զգուշակութիւնս իւր, և իբր առ
՛ի լրտեսել զերկիր, և յերկարաձգել զնրան,
և փորձել զհարուած, ասէ. « Կիմանամ ա-
մեն բաներուն պատճառը ինչ ըլլալը. անու-
նն ու մականունի կուիւ է. երեկ գիշեր իրաւ-
ցընէ քիչ մը զուարթացած էի, պանդոկապետ-
նէրը երբեմն նենգաւոր գինիներ կուտան, ու
երբեմն ինչպէս որ ըսի, յայտնի է որ վար գը-
նացած գինին է որ կը խօսի : Բայց թէ որ ա-
տոր վրայ է միայն ինդիրը, պատրաստ եմ կամ
քեզնիդ ընելու : Այս ալ կայ որ արդէն անուանս
գիտէք : (Ո՞ր սատանան ըսեր է իրենց) : —

Յայնժամ առենագպետին ասէ ամենայն քաղ-
ցրութեամբ. « Ապրիս որդեակ, ապրիս. կը
տեսնամ որ խելք ունիս. հաւատա ինծի, վասն
զի արուեստէն եմ. գուն ամենէն խելացին ես :
Այս բաներէն շուտ ու բոլորովին խաբըսեբու-
կերպը սա է. երկու խօսքով բանդ կը լըմընց-
նայ, ու կազատիս : Բայց իմ ձեռքս կապուած
է, կուզեմ զքեզ հոս Թողուլ, բայց չեմ կըր-
նար. զօրացիր, շուտ ըրէ, մի վախնար, հետս
եկուր. երբոր խմանան ոմ ըլլալդ, ես ալ կը
խօսիմ, ինծի Թող... բաւական է... մի տըն-
տընար » : —

« Ոչխեին չես կրնար հա՛, հասկըցայ » . ասէ
Ռինէցոյ, և զգենու իւրովին, մերժելով զնե-
նուորս՝ որ կամէին օգնել նմա առ ՛ի ձեռ : Ե-
հարց ապա ցառենագպետին. « Մայր եկեղե-
ցւոյն հրապարակէն անցնի՞նք պիտոր » : —

« Ոչսկեց որ կուզես. բայց ամենէն կարճ
ճամբէն երթանք որ չշուտով խաբըսիս » , ասէ
առենագպետին, գժկամակելով ՛ի սրտի՝ զի տես-
պի լռել զխորհրդաւոր հարցուածոյ պատան-
ւոյն, զորմէ մարթ էր բազումս հարցանննել :
Եւ ասէր ՛ի մտի. « Մեկը Թշուառ որ ծնանի...
ինծի պատահեցաւ... ամեն բան գուբս կու-
տայ. քիչ մը արծաթոյ ոսկենական հարցաքննի մեր-
մանան խօսակցութեան ձևով՝ ամեն բան գիւ-
րաւ ըսել կուտաս իրեն. մարդ մը՝ որ կրնաս
բանտ չնհատած ամեն բան առնել բերնէն, ա-
ռանց իրեն իմանալուն. անանկ մարդ մը կար-
ծես որ ինծի պահուածք էր՝ առանկ վտան-
գաւոր առեն : Էհ, ազատուեմ էնկայ » : Եւ ՛ի

խորհեցաւ զայսոսիկ՝ ուղղեալ զականջս ՚ի լուր, և զգլուխ ՚ի Թիկունս միաեալ, ասէր ՚ի մտի. « Ճար չկայ, կը վախնամ որ այսօր երեկուընէ դէզ պիտոյ ըլլայ »: Զայս այսպէս ասէր նմա ածել զմաւր շուինդն անսովոր՝ լսելի լեալ ՚ի փողոցէն. և ոչ կարաց ժողովուրդն, երայց ըզպատուհան՝ հայել արտաքս. և եռես գումարատակ մի քաղաքացւոց, որք առ աղգ դնդի գիշերապահաց ՚ի ցրուել՝ հակառակ կացեալ ՚ի սկզբան Թշնամանաց, և ապա բաժանելն ՚ի միմեանց քրթմնջելով. և նշանակ օրհասական Թուէր առաջնադպրին, զի աղերսանաց ազդէին նոցա զնուռորդք: Փակեաց զպատուհանն, և ՚ի տարակուսի եկաց առ վայր մի, ածէլ զգործն ՚ի գլուխ, Թէ Թողուլ զՈՒհնցոյ ՚ի պահ երկոցունց զնուռորացն, և գիմել առ առաջնադպան, տալ համար զանցեցին անցելոց. այլ ՚ի վերայ էած, « Ինձի պիտոյ ըսեն որ բանի մը չէս իգար, վախկոտ ես, պէտք եր քեզի արուած հրամանը ընկիր: Պարը մոռնաք, պէտք է ցաթքը տանիք. անիծած կատաղութիւն. անիծած արուեստ »:

Յարուցեալ և զգեցեալ կայր Ուհնցոյ, և զնուռորդք առ նմա երկուսանեք. ակնարկեաց առաջնադպրին առ նոսա՝ մի վարել ընդ նմա կարի բռնութեամբ, և առ նա ասէ. « Գնալ նպիտի, որդեակ, եկուր մէզի հետ, լմընցուր »: —

Լսեր և ինքն Ուհնցոյ, տեսանէր և խորհէր. և երբ նա զգեցեալ զամենայն ձորձս իւր բաց ՚ի վերարկուէն, զոր կալեալ միով ձեռամբ, միւսոյն ինդրեր ինչ ՚ի քսակն. և ապա ուժգին հայ

յեցեալ յատենադպրին, ասէ. « Չոս ատակ ուշ նամակ մըն ալ կար. ոՀր է »: —

Ատենադպրին ասէ. « Ամեն բան կը պրուի քեզի, քանի մը կարդ կանոն տեղը երթալէն առքը. երթանք երթանք »:

Ուհնցոյ ասէ տատանելով զգլուխն. « Զէ, չէ, տա չեմ ընդունիր, իմ բաներս կուզեմ. գործերուս համարը կուտամ, բայց բաներս կուզեմ »: —

« Կուզեմ իմանաս որ կը վտահիմ վրադ. առ բաներդ, բայց շուտ ըրէ ». զայս ասացեալ՝ եհան զայնոսիկ ատենադպրին ՚ի ծոցոյ իւրմէ, և էտ նմա, յոգւոց հանելով: Եւ Ուհնցոյ էգ անգրէն զայնոսիկ ՚ի քսակ իւր քրթմնջելով. « Ի՞նչ զարմանք, այնչափ գողերու հետ կը տեսնուիս, որ անոնց արուեստը քիչ մը սորվեր ես »: Ոչ ևս կարէին զննուորքն ժողովել. այլ ատենադպրին բռնադատեր զնոսա ակնարկութեամբ, և ասէր յանձին. « Մէյմը ոտքդ դնեն դուրս որ դնես, շահովը պիտոր վճարես »:

Յարկանել պատանւոյն զվերարկուն, և յառնուլ վնասուն, ակնարկեաց առաջնադպրին միւսմ ՚ի զննուորացն՝ յառաջ անցանել ընդ սանդուղս, առեալ զհետ զՀերբակային, տպա զմիւս բարեկամն. և երբև իջին ՚ի խոհանոց անդր, ասէ պատանին. « Օրհնած պանդոկապետը ոՀր է »: Մխսանգամ ակնարկէ ատենադպրին առ զննուորս, և նոքա կալեալ զոջ և զահեակ պատանւոյն՝ կապեն արագ արագ գործեօքն, որ պարկեշտական ձևով յեռակող կոչեն: Գիակա-

աղէկութեանդ համար. հաւատա ինծի, վասն զի ասանկ բաներուն տեղեակ եմ. Ճամբան չիտակ քալէ, ապիս անդին մի նայիր, մի ցուցըներ զքեզ. ասանկով մարդ չինայիր քեզի, բան չի մնար, ասանկով պատիւդ կը պահես: Մէկ ժամէն ազատ ես. այնչափ բան ունին ընելու՝ որ կարատորան չուտ լմընցընել քու բանդ. եւ ալ կը խօսիմ...: Կը խալըսես, բանիդ գործիդ կերթաս, մէկը չիմանար որ ատեան կանչուեր ես »: Ապա դարձեալ՝ ի վնասուց՝ խիստ գիմօք ասէ. « Զգոյշ կեցէք՝ ձեռս մը չընելու իրեն, ես եմ իր պաշտպանը. ձեր պարտքը պէտք է որ ընէք, բայց յիշեցէք որ պատուաւոր անձի մը հետ է բաներնիդ, կրթուած երիտասարդի մը հետ, որն որ քիչ ատենէն պիտոր ազատի, հարկաւ իր պատիւը կուզէ: Անանկ վարուեցէք՝ որ մէկը չիմանայ իր ոմ ըլլալը, իբրեթէ իրեք խաղաղասէր անձինք մէկուրդ կերթաք »: Եւ հրամայական եղանակաւ և սպառնական յօնիւք յաւելը. « Հասկըցաք » : Եւ ապա դարձեալ՝ ի Ռէնոյ, զուարթագէմ որպէս բարեկամ, ասէ անդրէն. « Խելքով, քաջածին պէս ըրէ, հանգարտ ու քու բանիդ ուշ դնելով քալէ. վստահ եղիր անոր որ քու բարիքդ կուզէ. երթանք » : Եւ ուղղոյ եղեն:

Բայց Ռէնոյ և ոչ միայն յայնքանեաց բարեքիչ բանից առենադպրին հաւատաց, ոչ՝ զի նորա առաւել փոյթ էր զնուրաց քան զընտանեաց, ոչ՝ զի ընդ համբաւ իւր հոգայր, և ոչ՝ զի արդարև կամէր օգնել իւր: Այլ առ ահի թէ գուցէ դիպեսցի իւր յուղղոյ պատեհ փա-

մակութեամբ պարտիմ, ըստ ոչ արժանի ծանրութեան վիպասց՝ մանրապատում առնել առ՝ի կարևորն պարզութիւն, զի էին ձեռակատքն տուռնք՝ փոքր ինչ երկայնագոյնք քան զբերջան ուղղական դաստակի, ունելով՝ ի ծայրն ձողս փոքրիկս: Պատէր առնն զդաստակ ըմբռնելոյն. և ձողքն անցեալ ընդ միջնամատն ըմբռնողին և ընդ մատնէմատն, մնային փակեալ՝ ի բուն. որպէս զի կալանաւորին չըրնկելով զայնս ըստ կամի՝ այնդէր զկապն, և ոչ միայն ունէր անփախուստ ըմբռնեալն, այլ և չարչարէր զնա՝ ի ստահակելն. և առ այս՝ հանգուցիք էր տառն վարակեալ:

Դրդուի պատանին և ազաղակէ. « Ներգուժիւն է ըրածնիդ, պատուաւոր անձի մը »:.. Բայց առենադպրին, որում ոչ պակասէին բանք ողջախոհք առ ամենայն բռնութիւն, ասէր. « Ինչ մը համբերէ, պարտքերնին կընեն. ինչ ընեմ, կարգ կանոնը աս է. մեր սիրտն ալ չէ քաշեր աս բաները ընել, բայց պարտքական ենք ընելու: Թէ որ չընենք հրամայածնին, մեր բանը ձերինէն գէշ կըլլայ. համբերէ » : Եւ յաւել նորա զայս, երիտքին դահճքն չըրնկին զձողան: Որպէս երիվար ամէհի ատնձահարեալ՝ գոչեաց Ռէնոյ. « Չամբերուիմ » :

Եւ առենադպրին ասէ. « Ապրիս որգեակ, աս է կերպը խալըսելու. ինչ ընեմ, անտանելի բան է, ես ալ գիտեմ. բայց խելքով որ վարուիս, շուտ մը կը խալըսիս: Տեսնելով՝ զքու համբերութիւնդ, սիրտս կը չարժի քեզի օգնելու. ուրիշ խրատ մըն ալ տամ քեզի՝ քու

խըստեան՝ առաջի առնէր գեղեցիկ պատճա-
ռանս, վասն չըջելոյ զմիաս իւր ՚ի բաց՝ առ ՚ի
չկարել ՚ի կիր առնուլ զայջողուԹիւն: Որպէս
զի այն ամենայն յորդորանք ոչ առ այլ ինչ օգ-
նեցին՝ բայց առ ՚ի հաստատել զպատանին ՚ի
խորհուրդ զհակառակն ամենևին դործելոյ:

Ահա սկսալէ ոք, եԹէ կարծեցէք՝ Թէ առեն-
դակերն նորահարժ և անփորձ էր ՚ի խորագի-
տուԹեան. զի էր նա պատկառ յարուեստս
խորագիտուԹեան, ասէ պատմիչն՝ որ ՚ի Թիւս
բարեկամաց իւրոց ունէր զնա. այլ ՚ի պահու
անդ առենադպիրն ՚ի յոյզս մտաց կայր: Զի ՚ի
խաղաղուԹեան մտաց՝ ծիծաղէր արդեօք և
ինքն, եԹէ ոք առ ՚ի հաւանեցուցանել ուամբք
կեղակարծ ինչ՝ Թեղադրէր նմա զայն, և սրտե-
ռանդն կրկնէր և յեղյեղէր զնոյն, ոլորմէլն կեղ-
ծեօք առոյց նմա բարեկամաբար խորհուրդ ան-
կողմնաւոր: Ի բերուն ինչ ընական՝ հաստա-
կաց մարդկան, զի յորժամ խռովեալ և նեղեալ
կան, և տեսանէն զի կարէ ոք զերծուցանել
զնոսա ՚ի նեղուԹենէ անտի, աղաչեն զնա ըս-
տեպ Թախանձանօք և ամենայն աղդի աղդի ա-
ղերսաբանուԹեամբք: Սմին բնաւորական օրի-
նաց ՚ի նեղելոյն կան և խորագիտք ՚ի նեղուԹեան
և ՚ի յոյզս մտաց. վասն որոյ ՚ի դէպս յայսպիսիս,
բաղում այն է՝ զի լինին նոքա ծաղրելի. քան-
զի զիւրաքանչիւրս և զյարարուԹիւնս հնարս
դեղերեսեալս, որովք սոսկ են յաղԹանակել,
և լեալ են նոցա դոգիս երկրորդ բնուԹիւն,
որք ՚ի դէպ ժամանակի եդեալ ՚ի դործ, և խա-
զաղուԹեամբ ոգւոյ և պարզուԹեամբ մտաց

կարևորօք յառաջ վարեալ՝ այնպէս քաջ և ան-
տեսաբար կշռեն զՀարուած, և ՚ի յայղոնել և-
րան ձանաչեն և դրուատին, վաստչուԹիւք ՚ի նե-
ղուԹեան չտապաւ և աղմկաւ՝ ամարդուԹեամբ
առանց չնորհաց ընդոնս ՚ի գործ արկանեն: Որ-
պէս զի ՚ի տեսանել ուրուք զնոցին զպնդիսկ
հնարս և զՀնդիկն, չարժի ՚ի ծաղր և ՚ի կարեկ-
ցուԹիւն. և նա ՚զոր կամին նոքա արկանել ՚ի
պատրանս, Թեպետև նուազ քան զնոսա խո-
րագէտ, հասու լինի խաբէուԹեան նոցա, և
՚ի հնարիցն նոցա խրատուն ընդդէմ նոցա: Վասն
որոյ չէ մարԹ ըստ արժան բաւականին յոր-
դորել զխորագէտս ՚ի գործել առանց կրկից, և
մանաւանդ ՚ի զգուշանալ ՚ի վտանգաց:

Արդ Ոչնցոյ ընդ անկանելն յուղի՝ սկսաւ
շուրջ ածել զաչս, տատանել չալ և չահեակ,
և սրել զսեղևս ՚ի լուր. այլ չտեսանէր ամբոխ
՚ի փողոցս քան զօրէն հանապազօր, ամենե-
քեան գնային զՀանապարհ իւրեանց, և չերե-
ւէր ինչ աղմուկ: Ասէ առենադպիրն ոչ գադա-
րեր ՚ի մրմնջելոյ յոտնին նորա ՚ի յերուսա-
« Խելքդուլ, ազայ, խելքդուլ. պատիւդ պահէ,
պատիւդ »: Այլ նորա տեսեալ՝ զի երեք ոմանք
գային հրացեալ դիմօք, և լուեալ էա՝ զի խո-
սելն զՀայանոցէ, զալերի Թագուցելոյ և զարդ-
դարուԹենէ, սկսաւ ակնարկել առ նոսա, և
հազալ՝ այլ ինչ ամենևին նչանակելով քան ըզ-
հարբուխ: Չայեցան նոքա ՚ի պատանին, և զկայ
առին. ընդ նոսա և այլք հասեալք զՀետ, և
որք յառաջ անցեալ էին, դարձան ՚ի չրուընչ
անդր, յարեցան ՚ի նոսա:

Յաւելլոյը առենադպիրն անդադար յեղյեղել ՚ի մրմունջ. « Առջևդ նայէ տղայ, խելքդ գլուխդ ժողվէ, գէշ կընես քեզի, բանդ կաւրես, պատիւդ անունդիկը կոտրես »: Իսկ Ինճոյ յաւելլոյը ՚ինոյն. խորհրդակցին վինուորք հայելւոք ընդ միմեանս, (սխալել ամենայն ումեք է) և սկսին զձեռակապս աղաղակել առ ցաւոց պատանին, ա՛յ ա՛յ. խռնի ամենայն ուստեք ամբոխն, խափանի կարաւանն. և ասէ առենադպիրն ցայնոսիկ՝ որ սկզբնէն զնա յետակուսէ. « Ձամբայ առէք, էարագործ է, գող է, գողնալոյ առենը բռնուեցաւ, պատժուելոյ կերթայ »: Յայնժամ պատեհ գտեալ պատանեայն, և առեալ զդեմս վինուորացն սպիտակացեալս կամ գեթ գունատեալ, խորհեցաւ յանձին. « Չիմայ որ սիրտ չբնեմ, ա՛լ գէշ կըլլայ բանս ». և աղաղակեաց ՚ի ձայն մեծ. « Ձիս բանտ կը տանին, բարեկամք. հայ, արդարութիւն. ուրիշ յանցանք չունիմ, պատիւս գիտեմ, մի թողուք զնս »:

Շշունչ նպաստաւոր, ձայնք պաշտպանութեան ազդոլոգոյնք հնչեցին ՚ի պատասխանի. վինուորք ՚ի սկզբան անդ սաստկին, ապա խընդրեին, ապա ազաչէին զմերձակայս կալ ՚ի բաց, բանալ ճանապարհ. իսկ ամբոխն ևս քան զևս թանձրանայր, մինչև կոխել զվիմանս: Տեսեալ վինուորաց զձախողակի պատրաստութիւնն, թողին զձեռակապս, և չկոգային այլ ինչ՝ բայց խառն ՚ի խուռն յամբոխն լինել անտես: Ձնոյն և առենադպիրն ցանկայր առնել, բայց չկարէր եղկելին վասն սեաւ կրկնոցին՝ զոր կրէր. և

ահաբեկ գունատեալ, կծկէր ամբոխէր փոքրըկանայր գնայր աղամող, էլանել ՚ի խառնէն ՚ի բաց. և չկարէր ՚ի վեր առնուլ զաչս, առանց տեսանելոյ զբազմացն ՚ի վերայ իւր: Գուն գոր ծէր երևել հիւր ոք օտարական ըմբռնեալ պատահմամբ որպէս շիւղ ՚ի սառնի՝ ՚ի խուռն ամբոխին՝ յանցանելն ընդ այն. և պատահեալ գեմ ընդդեմ ընդ ումեք՝ որ գժնեագոյն քան զայլս պշուցեալ հայէր ՚ի նա, յարդարեալ զբթունս ՚ի ժպիտ, եհարց որպէս ախմար ոք. « Ի՞նչ կայ, ինչ կայ »: Նա ևս պատասխանի. « Գեղի սէս գարշելի ագռաւը ». և հնչեաց շուրջանակի « Գարշելի ագռաւ ». և ՚ի գոչիւն անդր յաւելան մրմունջք և խթմունք, որով կէս ընթացիք և կէս յարմկանէ այլոց՝ եհաս վաղ որում յանկայրն յայնժամ, զերծանել ՚ի խառնէ անտի:

ԳԼՈՒԽ ԺԶ.

Ամենայն ուսմանէ գոչէին զհետ Ռէնցոյի. «Փախիր. աղնիւ կարէ՛, փախիր, ապիս ահա վանէք մը, անդին ժամմը. փախիր ապիէն, փախիր անդինէն»: Ըստ մասին փախստեան կայուածոյ՝ զի չէին նման պէտք յորդորանաց. այլ ընդ նշողել՝ ի միտս նորա յուսոյ վերծանելոյ՝ ի մագլցս անտի զնուռորաց՝ սկսեալ էր խորհել, և հաստատեալ էր՝ ի մոռ, ՝ի յաջողել փախըստեանն՝ գնալ՝ ի բաց, ոչ միայն՝ ի քաղաքէ անտի, այլ և՝ ի սահմանաց տէրութեանն. զի ասէր՝ ի միտս. «Անուշնա մէյմը գրեցին երբեմն անպիտան գրքին մէջ, ուսկից որ խմացան՝ խմացան. ասկէ հետքը երբեր կուզեն, անուշնովս ու մանանուշովս կը գտնան զիս»: Իսկ ապաստանիլ չկամէր ուրեք, եթէ ոչ հալածեալ՝ ի զնուռորաց, և ասէր. «Անտառի Թուչուն ալ

ըլլայի, վանդակ մտնել չէի ուզեր»: Վասն որոյ եդեալ էր ի մոլ դնալ՝ ի սահմանս Պերկամոյ, ուր հօրեղբօրորդի իւր Պորթողոյ բնակէր. և որպէս ի վեր անդր ասացեալ, բազում անգամ հրաւիրեալ էր ընտ առ նմանէն. այլ դիժաւարին այն էր՝ գտանել զճանապարհ: Զի էր նա յանծանօթ ուրեք կողման քաղաքին գոցեալ անծանօթի վասն իւր, և չգիտէր իսկ ընդ որ դուռն ելանել առ ի գնալ՝ ի Պերկամոյ, և եթէ գիտէր իսկ զայն, սակայն չգիտէր ի դուռն անդր գնալ: Կայր նա ի հարցանել ուրեմք յաղագաց իւրոց զճանապարհն. ի տագնապ պահուն անկաւ ի միտս նորա սուսերադործն բարերար, հայր էրլից որդւոց, այլ ոչ կամեցաւ յայտնել զմիտս իւր առաջի բազմաց՝ յորս մարթ էր յայտնելոյ ուրուք գտանել. և հաստատեցաւ փութալ մեկնել ի տեղւոջէն, և ապա հարցանել զճանապարհն ուր ոչ ոք ճանաչէր զինքն, և ոչ զպատճառ հարցուածոյն: Ցայնժամ առ աղաւնիս իւր ասելով «Շնորհակալեմ, օրհնած ըլլաք», եկ յընդառաջ՝ ընդ որ նորա բացին նմա ուղի, և երթալեալ զընթացս՝ մեկնեցաւ ի բաց. գնայր աշուշասոյր, և ոչ գիտէր յո՞ երթայր: Եւ իբրև Թուէր նմա հեռացեալ ըստ բաւականին, մեղմեաց զընթացս, և դիտէր յայսկոյս յայնկոյս առ ի հարցանել զայնպիսի ոք՝ յոր մարթ լցէ վստահել. այլև ասա ընդ առաջ ելանէր կրճիմն, զի կեղակարծ էր հարցուածն, ժամանակն ստիպող, կալանաւորք այն ինչ զերծեալք ի Թէթև վանդէն՝ զհետ մտանէին անշուշտ վախասէին.

և լուր վախստեանն հասեալ էր արդեօք մինչև անդր: Հարկ եղև Ռինցոյի առնել զննութիւնս բազմամբ խորագիմայականս առ ի գտանել զոք ի դեպ: Անդ ոմն մարմնեղ կանգուն ի սեամն կրպակի իւրոյ կայր՝ լայնեալ զբարձս, ձեռս ի յեսս, փոր ի դուրս կարկառեալ, ծնօտ ի վեր, շնչի սաստաւար ի կախ, որ անգործ մերթ ի ծայր ոտին և մերթ ի գարշապար՝ փոխանակաւ յաչ և յահեակ զդողդոջուս բեռնն մարմնոյն յենոյր, Թուէր չաղակրատ ոմն հեռաքրքիր, որ փոխանակ տալոյ պատասխանի՝ հարցուածս առնէր: Միւս ոմն՝ որ գայր ընդառաջ սլշուցեալ աչօք, չզննեալ ի դուրս անկելովք, ոչ թէ ցուցանել այլոմ ճանապարհ ուղիղ, այլ զիւրն անգիտանայր: Եւ մանուկ ոմն՝ որ արդարև Թուէր սթափ, այլ երևէր չարամիտ, և ախորժէր արդեօք ախորժ լիմանական՝ ցուցանել օտարականի հիբի զհակառակն ուղւոյն, զոր խնդրէր: Զի առն՝ որ կայ ի տագնապի՝ ամենայն ինչ յաւելուած տագնապ: Եաես ապա զի գայր ոք ձեպընթաց, և խորհեցաւ՝ զի ուսնելով նորա գօրծ կարևոր, պատասխանէր Թերևս խակոյն՝ առանց երկայնաբանելոյ, և լսելով զի խօսէր ընդ ինքն, համարեցաւ զնա անկեղծ ոք, և մատուցեալ առ նա ասէ. «Շնորք ըսէ, ո՞ւրկից կերթցուիս դէպ ի Պերկամոյ»: —

«Դէպ ի Պերկամո՞յ. արևելեան դռնէն կերթցուի»: —

«Շնորհակալ եմ. բայց արևելեան դրան ճամբան որ՞ն է»: —

« Ձախակողմեան ճամբան բռնէ, մայր եկե-
ղեցւոյն առջեւ հրապարակը կելլես. եռբը »...—

« Հերիք է պարոն, անկէց եռքինը գիտեմ.
Աստուած վարձատրէ հրամանքդ » :

Եւ խոտորեցաւ 'ի ձախակողմն. իսկ միւսն
հայեցեալ 'ի նա լեռս, ասէ.

« Կամ մեկուն չարիք մը ըրեր է, կամ ուրիշ
մը նրբեն » : —

Եհաս Ոխնցոյ 'ի հրապարակ անդր եկեղեց-
ւոյն, անց ընդ այն, և դառաւ առ աճիւնախառն
չինքանուա կայծակամիջ, մեացորդօք հրաւառ
հանգիստն, որուամ յերկինն լեալ էր ականա-
տես, և քերեալ առ ասակձանօք եկեղեցւոյն՝
առանէ զհայցանոց վայոտոտանցն կիսաւերս և
պահպանեալ 'ի զինուորաց, և գնայ ուղիղ ընդ
ճանապարհ՝ ընդ որ եկեալ էր ընդ խառն, և
հասանէ 'ի վանս վերաւորաց. ակնարկէ 'ի
հրապարակ անդր և 'ի դուռն եկեղեցւոյն, և
ասէ 'ի մտի. « Թայց աղեկ խրատ մը առաւ ե-
րեկ լինէի ան վերաւորը, ժամը կենալ սպա-
սել, ու քիչ մը աղօթք ընել » : Եւ զկայ առեալ
անդ վայրկի մի, հայէր ուշիւ 'ի դուռնն՝ ընդ
որ անցանելոց էր, և առեալ անդ 'ի հեռուստ
ամբոխ և պահապանս, և զի վառեալ կա էին
միտք նմա, (ընդ որ պարտ է կարեկից լինել, զի
էին իսկ այնմ պատճառք), զքաց դժկամակու-
թիւն իմն դիմագրաւ լինելոյ անդր : Գոանէր
առաջի նմա առեղ ապաստանի, ուր ընծայա-
կանաւն 'ի ձեռին լինէր սիրով ընդունելի, յոր-
դորեցաւ յոյժ մտանել անդր. այլ իսկոյն սըր-
տապնդեալ, ասէ. « Թոչդուն անտառն, քանի

որ կրնամ. ով գիս կրնայ ճանչնալ. գինուորնե-
րը կտոր կտոր չըլլան պետոր որ ամեն դրան
առջեւ լինի սպասեն » : — Դարձաւ հայեցաւ
թէ դայլն երբեք յայնմ կուսէ, և չետես՝ ոչ
գնոսա, և ոչ զրաք 'ի ինդիր եւր : Յառաջ էանց,
Թուլացուցեալ զտոն երագունն՝ որ արշաւել
միշտ կամէին, ուր 'ի դէպ էր գնալ ևեթ, և
յուշիկ յուշիկ՝ 'ի սոյլ կիսաճայն՝ եհաս 'ի
դուռնն :

Էին անդ առ դրան մաքսաւորք բազումք, և
զորք Թիկնապահք սպանիացիք. այլ կային ա-
մենեքեան դէտակն 'ի դուրս՝ չԹողուլ ումեք
մտանել 'ի ներքս, որք 'ի լուր աղմկի գիմեն որ-
պէս ագռաւք 'ի տեղի ճահաստամարտի 'ի գիա-
կոյտ անկելոց. որպէս զի Ոխնցոյ 'ի կերպ խա-
զաղասիրի, աչք 'ի խոնարհ, որպէս ուղիղ ոք,
և որպէս ոք զի 'ի գբօսանս ելանիցէ, եւ 'ի բաց՝
առանց ուրուք ասելոյ լինչ նմա, այլ սիրտ նո-
րա տրոփիւր 'ի ներքուստ : Եւ տեսեալ յաջմէ
ուղի անձուկ՝ եմուտ անդր, խոյս տուեալ յա-
րահետ ճանապարհէ, և խազաց յառաջ առանց
յետս հայելոյ :

Աչցանէ գնայ ընդ մակաղատեղիս և ընդ
գիւղս, առանց զանուանման հարցանելոյ. և
վտահ ընդ հեռացումն 'ի Մխլանէ, չատ հա-
մարի առ ժամն մտեալ 'ի Պերկամոյ : Երբեք
երբեք գառնայ հայի յետս, զինէ և չիհ մերթ
զայս և մերթ զայն գաստակս բազկի դեռ ըն-
դարմացեալս, բերելով զչետս ձեռակապիցն
իբր զլար կարմիր : Մինչ իւր յուշէին, որպէս
է գուշակել 'ի խառն 'ի խուռն կիրս ստրջա-

նաց, վիճեց, ցասման և գորովոյ. գուն գործէր յուշ ածել զերեկոյեան բանն և զգործս, գիտել որ ինչ վճռալն անցք անցեալ էին ընդ իւր յանգէտս, և մանաւանդ որպէս անուն իւր եկեալ էր ի յայտ: Կասկածէր զսուսերապուծէն՝ որում յիշէր յայտնեալ զայն, և խորհէր՝ թէ որպէս որսացեալ էր զայն ի չրթանց իւրոց, և զամենայն հնարս նորա և զխոստումունս՝ որ միշտ ի հետազօտել յանկ ելանէին, և փոխէր կասկած իւր գոգցես ի հաւատոմս: Բայց յիշէր և, զի և յետ մեկնելոյ սուսերապուծին՝ չէր իւր դադարեալ ի շատխօսելոյ, այլ ընդ ուժ և զորոյ նրոց՝ չկարէր գիտել անխորհուրդ պատանին. քանի և զիտոն քննէր, չկարէր այլ ինչ վկայել՝ բայց զի չէր յայնժամ ի տան: Փոխեալայր եղկելին ի հետազօտելն զայսոսիկ. Թուէր որպէս ոք, որոյ Թերթս բաղում անգիտս առորագրեալ, և աւանդեալ ուժգին իբրև մտերիմ բարեկամի, և ապա ծանիցէ ըզխաբէութիւն նորա, և նստիցի քննել զնշանս իւր. զի՞նչ ի խառնակութեան անդ գիտել կարիցէ:

Միւս ևս խորհուրդ ստժանաւոր այն էր՝ սահմանել ինչ զառաջիկայսն, որ չիցէ անհնարաւոր կամ վճռալի. այլ ստժանաւորագոյն նմա յայնժամ էր զնանապարհն գիտել: Ցետ ոչ սակաւ ընթանալոյ՝ ուր դէպք ինա ածէին, եռես զի չէր իւր մտրթ գտանել զերդ ճանապարհին, այլ դժկամակէր բան ինչ ընդ ուժգին առնել զՊերկամայ, կասկածելն և օտարացուցեալ վարկուցեալ զայն. սակայն հարկ էր առնել:

եդ ի մտի հարցանել, որպէս արարն ի Միլան, որոյ ուժգին ուղևորի լինել իւր նախ հանդիպել, որոյ դէմք ի ճահ Թուէսցին. և արար այնպէս. և ասէ ուղևորն. « Մոլորեր ես, բարեկամ»: Եւ վայրիկ մի խորհեալ, ապա բանիւք և ձեռօք ետոյց նմա որ ինչ շրջան պարտէր առնել՝ առ ի գտանել զարահետն: Շնորհս կալաւ նմա պատանին. և որպէս թէ ըստ խրատուն նորա առնելով գնայր ընդ այն կողմն, այլ ի մտի եդեալ մտաել ևեթ յարահետ անդր, և մի գնալ ընդ այն: Դիւրին էր խորհուրդս այս ի միտս, այլ ոչ և ի գործ առնել. եղք իրացն եղեն, զի գնալով նորա յաջ և յահեակ պատ ի պատ, մերթ հեռևեալ խրատուց այլոց՝ զորս համարձակեցաւ ուրեք ուրեք հարցանել. մերթ ըստ մտի կալեալ ուղի, և մերթ ուր ձանապարհն ածէր, արար պատանին վախճաեայ մղոնս իբր երիսուսան, ոչ աւելի ինչ քան զմղոնս վեց հեռացեալ ի Միլանէ. և յար ևս, զի յետս ընդդէմ ի Պերկամայ էր գնացեալ: Խորհեցաւ՝ զի և այնու օրինակաւ էր մարթ նմա յաջողել և մտաբերեր յայլ հնարս. յուշ եղև նմա գիտել հնարիւք զանուն իրիք ի սահմանակից քաղաքաց, յոր մարթ էցէ գնալ ընդ արտուղի ճանապարհ, առ ի կարող լինելոյ խնդրել զայն, առանց հարցանելոյ ամենայն ուրեք զՊերկամայ, որում մարթ էր տալ կասկած վախճաեան կամ աքսորանաց կամ եղեռնագործութեան:

Եւ մինչդեռ որսայր զտեղեկութիւնս զայսոսիկ աջողակի, եռես ուղէշ վհիւղիս նշանակ

պանդոկի մերձ՝ ի գիւղ ուրեք. զքայր Լա վաղ զալեաս հատատաեալց զսիրտ իւր. և ածեալ ըզմտաւ՝ զի մարթ էր նմա անդ զերկոսին Լա լըզնուլ զալեաս, եմուտ անդր: Զէր այլ ոք՝ ի հիւզի անդ, բայց կին մի պառաւ, մանոյ ընդ անթով, իլ՝ ի ձեռին: Խնդրեաց՝ ի նմանէ ուտել ինչ. և կինն էած պանիր և գինի ընտիր. ընկալաւ նա զպանիրն, և եթող զգինին՝ լեալ առեալ վասն երեկոյեան արարեալ խաղոյն: Եդ զայն պառաւն՝ ի սեղանի, և սկսաւ յաձախել հարցուածս ցհիւրն, գիտել թէ ո՛ էր, և զինչ՝ ի Միլան անցեալ էին անցք, որոց լուր հասեալ էր մինչև՝ ի գիւղ անդր: Գիտաց պատանին ոչ միայն՝ ի հարցուածոց անտի խուսել ճարտարութեամբ, այլև յօգուտ իւր՝ ի կիր առեալ զհետաքրքրութիւն պառաւոյն՝ որ հարցանէր ցնա զգեմ ուղւոյն, ասէ.

« Շատ տեղ պիտոյ էրթամ, ու Թէ որ քիչմը առէն դանամ, կուզեմ անցնիլ նաև Պերկամոյին ճամբուն վրայ եղած մեծ գեղէն՝ որ սահմանապլնին մօտ է Միլանու տէրութեան մէջ... անունը միտքս չկայ »: Խորհէր՝ ի մտի զի այնպիսի ինչ գիւղ լցէ անդ:

Պառասխանի ետ պառաւն. « Կորկոնցոլա գեղը ըսել կուզես »: —

« Հա՛, Կորկոնցոլա », ասէ պատանին՝ իբր առ՝ ի լսել լաւ ևս զանուն գեղջն, և յաւելու. « Ակռեց հեռո՞ւ է շատ »: —

« Աղէկ չեմ գիտեր, բայց տասը տասուերկու մղոնէն եւել չկրնար ըլլալ. Թէ որ զաշկընես մեկը հոս ըլլար, ձիշտ կը ցուցկեր »: —

« Կրնամ ասա աղւոր Ճամբանեըրէն երթալ, առանց մեծ Ճամբէն երթալու, ուր շատ փոշի կայ, ու ինչ փոշի, շատոնց է որ անձրև չիգար »: —

« Ինծի կուգայ որ կերթըցուի, ասկէց երթալու առենդ՝ աջ կողմդ՝ առջի գիղն որ կը հանդիպիս, կրնաս հարցընել »: Յաւել և պառնուն գեղջն: —

« Աղէկ է »՝ ասէ պատանին և յառնէ. և առեալ զմանն նախանակին՝ որ յաւելեալն էր՝ ի չորաբեկ նախաճաշէն, յոյժ այլազգ՝ ի նախնականէն՝ զոր աւուրբք յառաջ գտեալ էր առատորոտով խաչի արբոյն Գիմնիսեայ, եկ ընդ աջակողմեան ուղին: Զերկարեմ զպատմութիւնս. յեղյեղելով պատանւոյն զկորկոնցոլա, գիւղ՝ի գեղջէ հետս անդր զմիով ժամաւ էլ կոյին: Վաղ զնանապարհայն խորհուրդ կալեալ էր, զկայ առնուլ վայրիկ մի և անդ, և ճաշակել ինչ հատատագոյն: Անորժելի էր նմա և քուն. այլ առանց կազդուրելոյ զմարմին, անկանէր ներթեալ՝ ի ճանապարհն: Կամէր տեղեկանալ՝ ի պանդոկի անդ՝ որչափ հեռի էր անտի Աստա, և գիտել հնարիւք արտաւղի ինչ ճանապարհ գնալոյ անդր, և անտի ապա ուղղոյ լինել ընդ առնուն զօրութիւն: Մնեալ և անեալ յերկրորդումն ազբեթական գեղոյն՝ լուեալ էր յաձախ, զի՝ ի տեղւոջ ուրեք ընդ ոչ սակաւ ինչ երկայնութիւն բաժանէր գետն այն զսահմանս երկրին Միլանու և Վենետայ. զտեղին զայն և զերկայնութիւն ոչ գիտէր ճշդիւ այլ կարևորագոյն առ ժամն էր անցանել

յայնկոյս ընդ ուբը և լեգէ: Եթէ ոչ առ օրին յա-
ջողեր նմա, հասատատեալ էր ի մոլ հետևակել
ցօրըստվ ժամանակին և զօրութիւն իւր նեբելին
նմա, և մնալ այդուն ի դաշտի ուբեք կամ յա-
մայոջ, ուբ և ցուցցէ նմա տէր, այլ ոչ ևս ի
պանդոկի:

Բայց քայլափոխս լինէ ի Կորկոնցոլա արա-
բեալ, եառես ուղէշ նշանակ, և եմուտ անդր.
և ի գալ պանդոկապետին ընդ առաջ, խընդ-
բեաց ի նմանէ կերակուր և սակաւիկ մի գինի.
մինչ և ժամանակ մեղմեալ էին ի նմա զծայ-
բայել և զմոլեկան առեբութիւն, և յաբել.
« Կը խնդրեմ որ շուտ ընես, վասն զի հարկ է
որ մեկին ճամբայ ելլեմ»: Զայս ասէր, ոչ մի-
այն զի յիրաւի ուղէշ լինելոց էր, այլ և առ
ահի՝ թէ գուցէ կարծելով պանդոկապետին
գիշերօթեայ նմա անդ, հարցցէ զանուն իւր և
զմականուն, և ուստի գայր, և առ ինչ... Թող
անդր ի բաց:

Պատասխանի էտ պանդոկապետն. « Շատ
աղէկ »: և նստաւ Ռինցոյ ի ծայր սեղանոյն
մերձ առ դրան ի յետին տեղւոջ: Էին ի սե-
նեկի անդ անդրծք ոմանք, որք վիճէին և մեկ-
նէին զմեծամեծ լուբս երիկեան անցից Մելա-
նու, և ըղձիւք ցանկալին գիտել ինչ զելից ի-
բացն. մանաւանդ զի առաջինքն այնոքիկ լուբք
զարթուցանէին զհետաքրքրութիւն քան ընուշ
զիղձս գիտելոյ. ապատամբութիւն ոչ նուա-
ճեալ և ոչ յաղթական, թերի քան վախճա-
նեալ ընդ գիշերոյ, կրճատեալ, և որպէս վերջ
տեղեան լրիւք ի թատեր քան թէ վախճան

թատրերգութեան: Մի ի նոցանէ մեկնեալ
յայլոց՝ մատեաւ առ պատանին և եհարց.

« Միլանէ՞ն կուգաս »: —

« Ե՛ս », ասէ պատանին խռովեալ առնուլ
պարապ ի պատասխանել:

« Հրամանքդ, թէ որ անպատշաճ չէ հարցը-
նելը »:

Յայնժամ պատանւոյն տատանելով զչուխս
իւր, կծկելով զշրթունս, ասէ կիսահագագ.
« Ինչ որ լսեցի, երթալու տեղ չէ աս օրերս,
բայց եթէ մեկը մեծ հարկաւորութիւն մը ու-
նենայ երթալու »: —

« Ուրեմն դեռ կը շարունակէ խռովութիւ-
նը », ասէ միւսն առաւել ևս հետաքրքրու-
թեամբ:

Պատանին ասէ. « Գիտնալու համար՝ հոն
պէտք է ըլլալ »: —

« Բայց հրամանքդ Միլանէն չէս գար »: —

Յայնմ վայրի պատանին պարապ առեալ ի
խորհել, անդէն ի վերայ էած.

« Լիսկաթէն կուգամ». զի և գայր խակ ան-
ա՛ն՝ անցեալ ընդ այն, և ուսեալ խակ էր զա-
նուն գեղջն յուղևորի ուսեմնի՝ որոյ ցուցեալ
էր նմա զգիւղն, ընդ որ պարտ էր նմա անցա-
նել՝ առ ի գնալ ի Կորկոնցոլա: Եւ յաբել.
« Բայց Լիսկաթ խօսք մը չէր ըլլար Միլանու
վրայ »:

Յուզուց էհան այրն, որպէս թէ ասելով.
« Ի՛նչ աղէկ կրլլար՝ թէ որ անկէց եկած ըլլա-
յիր, համբերութիւն »: և յաբել. « Բայց լիս-
կաթցիք բան մը չէին գիտեր Միլանու վրայ »:

« Կրնայ ըլլալ որ ոմանք գիտնային, բայց ինծի բան մը ըսող չեղաւ »։ —

Զայսոսիկ պատանին լսելէն ետքը ինքնիրմով զբաղած ատեր. և դարձաւ հետաքրքիրին 'ի աեղն իւր։ Եւ ահա դայր պանդոկապետն պատրաստել սեղան. և պատանին հնարց նմա անձայն՝ լսելու ծանրացեալ 'ի քնոյ, որպէս և այլոցն եղեւ մեզ տեսանել, և ասէ. « Այսէկ մինչև Աստուա որ֊չափ հեռու է »։

Պանդոկապետն ասէ. « Մինչև Աստուա, անցնելու համար »։ —

« Այս ինքն... հա... ինչուան Աստուա »։ —

« Պատանոյն կամրջէն անցնիլ կուզես, թէ կանոնիկոսներուն լատաէն »։ —

« Ուսկից որ ըլլայ... հետաքրքրուելու համար հարցուցի »։ —

« Կուզեմ ըսել որ աս երկու տեղաց կանցնէն երբեց պատուիրը գիտցող անձինք »։ —

« Շատ աղէկ, բայց որչափ հեռու է »։ —

« Թէ մէկը, և թէ մէկալը, վեց մղոնի չափ »։

« Վեց մղոնի՞ չափ, առջափ չէի կարծեր »։ ասէ Ոչնցոյ, և անփոյթուելու ձեւով մը, մինչև 'ի բաց ելանել 'ի բնական եղանակէ, յաւելէ. « Բայց ձամբան կարճցընելու համար՝ ուրիշ անցնելու տեղ ալ կան հարկաւորապէս »։

« Կայ ու կայ »։ ասէ պանդոկապետն, սչշուելով 'ի նա սիգաբ աչօք, և չարամիտ հետաքրքրութեամբ. որ բաւական եղեւ 'ի կարճել զայլ ևս հարցմունս, զորս պատրաստեալ էր պատանին։ Լաւ գիտնան առաջի իւր, և հայեցեալ 'ի սրոճակ գինւոյն՝ զոր պանդոկապետն եգեալ էր 'ի վերայ սեղանոյն, ասէ. « Զո՞ւտ է գինին »։ —

Պանդոկապետն ասէ. « Ոսկիի պէս զուտ է. հարցուր ամեն գեղացոց ու մնա ընակողնեբուն. աղէկ կը հասկընան, համին ալ կիմանաս »։ Զայս ասելով, դարձաւ յերթալոյն։

Մրմնջէր Ոչնցոյ յանձին. « Անխծած սանդոկապետներ, երթալէ գէշը կելլէ գիտցա »։ Սակայն մեծաւ ախորժակաւ սկսաւ ճաշակել, ուշն դնելով լսելեացն՝ իմանալ ինչ, և գիտել գինչ խորհէին անդ զանցելցն ծանուցանց անցեալոց 'ի Մելան, որոց ոչ սակաւ մասնակից էր ինքն. և գիտէր՝ զի 'ի նոսա՝ որք խօսէին՝ լաչ֊ չաւ ոք, որուն կարելիչ եղիւելի պատանին հարցանել ճանապարհ՝ առանց երկիւղի 'ի նեղ անկանելոյ, և բռնադատելոյ խօսել գերթոց իւրոց։

Աստ մի 'ի նոցանէ. « Կերևնայ որ աս անգամ աղէկ չարժէցան միլանցիք։ Հերիք է, վաղը էանցնիք՝ բան մը կիմանանք »։ —

Միւս ոմն ասէր. « Դէշ ըրի որ աս առաու Մելան չիգայի »։

Եւ այլ ոք անդուստ. « Թէ որ վաղը կերթաս, հետդ կուգամ». ապա այլ ոք, և ապա այլ։

Եւ յաւել առաջինն. « Կուզէի գիտնալ որ միլանցիք կը մտածէն խելօք գեղացիներն ալ, թէ միայն երբեց համար օրհնաբեր հանել կուսան. գիտեք ինչ մարդիկ ըլլալնին. հալարտ քաղքցիք, զերեզք միայն մտածող, ուրիշներըը չեզածի պէս կը սեպեն »։

Միւս այլ ոք դաշն ձայնիւ՝ որչափ էրն յան-
դըգնախօս, յաւել. « Մենք ալ բերան ունինք,
թէ ուտելու, թէ խօսելու, բանը քիչ մը որ
առաջ երթայ »։.. Այլ լաւ վարկաւ չկատա-
րել զբանն։

Իսկ երբև այլ ոք խորամանկ և չարամիտ սկը-
սանէր՝ « Պահած ցորեն չէ թէ մինակ Միլանոս
մէջ »,.. և ահա լսելի եղև ոտնաձայն երիվարի՝
որ գայր. և ծանուցեալ ղվերեւեաւն, ելին նմա
ընդ առաջ։ Էր նա վաճառական՝ ի Միլանէ, որ
երբեմն երբեմն՝ ի տարւոջ դնալով՝ ի Պերկամոյ
չառ և տուր, սովոր էր՝ ի պանդոկն անդ երե-
կօթելոյ. և քանզի գոանեղր անդ դրեթէ միշտ
զնոյն որեար, ճանաչէր զնոսա։ Շուրջ եղեն
զնովաւ, ոմն զանձուց, այլ ոք ղաստպանդակէն
բուռն հարեալ, ասկին ամենեքեան. « Բարով
եկար, բարով »։ —

« Բարի տեսանք »։ —

« Աղէկ ճամբորդութիւն ունեցա՞ր »։ —

« Շատ աղէկ. դո՞ւք ինչպէս էք »։ —

« Աղէկ, աղէկ. ինչ լուր ունիս Միլանէն »։ —

Այն վաճառականն լինչանեղն՝ ի ձեռն, Թո-
ղեալ զայն ձիավարին. « Լուր փնտռողները
գ տանք »։ Եւ մտանելով՝ ի միասին ընդ դուռնն
փոքրիկ, յաւել. « Բայց ինչուան հիմայ թէ-
սեա դուք ինծմէ եւել խմացած էք եղածը »։ —

« Իրաւ որ բան մը չենք գիտեր », ասացին
բազումք ալ՝ ի կուրծս եղեալ։

Վաճառականն ասէ. « Կարելի բան է. ու-
րեմն պիտոր լսէք աղէկն ալ դէշն ալ։ Ո՞ւր ես
նայինք, պանդոկապետ, սովորական անկողնա-

պատրաստ է. իմ գաւաթ մը գինիս ու պա-
տառ մը հացս շուտ ըրէ, վասն զի մեկէն կու-
զեմ անկողին երթալ, որպէս զի վաղը առտու
կանուխ ճամբայ ելլեմ, որ կարենամ իրիկուան
Պերկամոյ հասնիլ՝ կերակուրս հոն ուտելու։
Եւ բաղմեալ հանդէպ Ինճոյին, որ լուռ ևեթ
ուշ դներ, յաւել. « Իսկ դուք չէ՞ք գիտեր ե-
րեկուան եղած խռովութիւնները »։ —

« Երեկուանը գիտենք »։ —

« Ուրեմն ըսածս է որ եղածները գիտէք,
ու հոս կեցեր՝ անցնող դարձողը կը լսետնէք »։ —

« Բայց աս օրուանը չենք գիտեր. այսօր ինչ-
պէս լմընցաւ »։ —

« Ո՛հ, այսօր. այսօրուանը չէ՞ք գիտեր »։ —

« Ամենևին, մեկը հասկց չանցաւ »։ —

« Ուրեմն թողէք որ բերանս թրջեմ, եաքը կը
պատմեմ ձեզի այսօրուան եղածը. կը լսէք »։
Եւ լցեալ ղբաժակն, էառ զայն աջով, և երկո-
քումբք առաջնոյն մատամբք ձախոյ ձեռին
ղընչացս՝ ի վեր ամխոփեալ, և յերիւր ածեալ
ափով գմորուան, էարբ և ասէ.. « Սիրելի բա-
րեկամներ, քիչ մնաց որ այսօր ալ երեկուան
պէս ու երեկոյնեկ ալ գէշ օր մը պիտոր ըլլար.
երազ կերևնայ ինծի հոս ձեզի հետ խօսելս,
վասն զի ամենևին միտք չունէի ճամբայ ելլե-
լու, որպէս զի կենամ խելք խանութս պահ-
պանեմ »։ —

« Ի՞նչ սատանայ մտաւ մէջը », ասէ ոմն՝ ի
նոցանէ։

« Իրաւցընէ սատանայ, հիմայ կը լսէք »։ Եւ
հատեալ զխօսուկն՝ զոր պանդոկապետին ե-

դեռալ էր առաջին նորա, Ճաշակելով յառաջ ա-
ծէր զղայուն[ութիւն]: Երախանն ասոր անոր
սեղանոյն յոտին կացեալ, լսէր բերանաբաց.
և Ռինոցոյ կիւրասյ տեղւոջ կայր ուշնինգիր
որպես ոչ իւրոց ինչ անգիր, Թէրևս աւելի
քան զայլս ուշիւ, ի ծամել զվերջին պատառս
Ճաշոյն:

« Ուրեմն աս առաւոտ, ան անզգամներն որ
երէկ ան սոսկալի խռովութիւնը ըրեր էին,
ժողովեցան որոշած տեղերնին. վասն զի ամեն
բան առաջուց մեկտեղ որոշեր էին, ու սկսան
նորէն պալտիլ Ճամբէ Ճամբայ պոռալով կան-
չելով որ ուրիշներն ալ իրենց հետ միացընեն:
Գիտէք ինչպես. ինչպես որ առնը ասկէրտս ա-
տեն, խօսքս ամեն, աղաւորութիւնները եր-
թալով կհետևէնան: Երբոր բազմութիւնը իրենց
հերիք երևցաւ, Ճամբայ ելան գէպ ի Համբա-
րատեան առունը, երբու թէ երեկուան անոր
գէմ ըրած բռնութիւնին չէր բաւեր, անանկ
պատուաւոր մարդու մը. ահ, ինչ անզգամներ:
Իսկ իրեն գէմ ըսած խօսքերնին՝ բոլորն ալ
զրպարտութիւն: Անանկ ազէկ ու խօսքին վրայ
կեցող մարդ. աս կրնամ ըսել, անկեղծութիւն
իր հանգերձատեան եմ, ասանը լաթերնիս ուրիշ
հոգացող, ծառաներուն նշանագրեսաններըը չի-
նել առուր: Ուրեմն գէպ ի իր առունը գացին.
տեսնելու էր ինչ խառնաշփոթ մարգիկ, ինչ
գէմքեր. մտածեցեք որ խռովութիւս առջևէն
անցան, գէմքեր որ... զԲրիսաոս չարչարող
Հրէաներըը անոնց քովը բան մը չեն: Իսկ բեր-
ներնին ելած հայհոյութիւններըը, չկսկելու

անկաճ գոցելու խօսքեր, Թէ որ Ճանչցուելու
վտանգ չըլլար: Ուրեմն կերթային բարի գի-
տաւորութեամբ առունը կողոպտելու. բայց »...

Աստանօր ամբարձեալ զձախոյ ձեռն, եդ
զղուցայնան ի ծայր աբնգանն:

Կրկնեցին գրեթէ ամենեքեան. « Բայց »... —

Եւ ինքն յաւել. « Բայց Ճամբան գոցած գը-
տան գէրանոներով ու սայլերով. ու արդելքնե-
րուն հետը չարուած կեցած ալեր գունդ մը
զինուորներու, հրացաններնին չհանած, զի-
րենք ընդունելու՝ ինչպես որ պէտք էր: Երբոր
աս պատրաստութիւնը տեսան... գոնէ որ ըլ-
լայիք՝ ինչ կընեիք »: —

« Եա կը գառնայինք »: —

« Հարկաւորապէս. իրենք ալ անանկ ըրին:
Բայց տեսէք որ իրաւցընէ սատանան չէր զի-
րենք չարժողը: Ետոտուզիոյ կեցած՝ տեսան ան
փուռը, որն որ երեկ կուզէին թալնել. ինչ
կըլլար հոն. հաց կը բաժնէին եկողներուն.
ձիաւորներ կային հոն, ու ընտիր ձիաւորներ,
որոնք պահպանութիւն կընեին՝ որ խռովու-
թիւն մը չելլայ: Իսկ իրենք, (որոնց փորը սա-
տանայ մտեր էր ըսի, ու գրգռողներ ալ կային
զիրենք), յօսասհատած՝ գոռն կառնէր, էս կառ-
նէմ, աչք գոցելու ու բանալու տեսին՝ ձիաւոր-
ներն ալ, հացագործներն ալ, հաց առնողներն
ալ, հաց, սեղան, կոնք, տապրակ, ամպար,
մաղ, թեփ, ալիւր, խմոր, ամեն բան տակնու-
վայր ըրին »: —

« Հապա զինուորներըը »: —

« Զինուորներըը համբարատեսին առունը պահ-

պանուԹիւն կընէին. ով կրնայ մէկուեղ ԹՀ
Երգել, ԹՀ խաչը տանիլ: Աչք գոցել բանալ
մը եղաւ. ա՜ա, վերջա՜ը, բանի եկող ինչ որ կար,
աներևոյԹ եղաւ. Եսքը նորին երկնաւան գիւ-
ղը, այս ինքն ինչ որ մնացեր էր, հրապարակը
տարին, կրակի տուին: Ու երբոր կը սկըսէին
անզգամները դուրս քաշել նեբսի եղած բա-
ները, լրենցմէ եւել անզգամին մկը գլուխէն
ինչ աղտոր խորհուրդ մը տուաւ »: —

« Ի՞նչ »: —

« Ամեն բան վըայէ վըայ գիզել, կրակ տալ,
տունն ալ մկուեղ, ու պրեալ: Ըսածը մկկին
կընէին »... —

« Ի՞նչ, կրակը տուին »: —

« Կեցիր՝ գրացիներէն քրիստոնէին մկը Ա-
տուծմէ չարժեալ, վեր վազեց, խուցերուն
մկկին խաչելուԹիւն մը փնտռելէ գտաւ, պա-
տուհաններուն մկունն կամարէն կախեց. ու
անկողնի մը գլխէն երկու օրհնած մում առաւ
վառեց, պատուհանին շեմին վրայ դրաւ խաչե-
լուԹեան երկու կողմը: Ամենքը վեր նայեցան.
Իրաւ ըսելու է, Մելանու մէջ Աստուծոյ
վախը կայ, ամենքը ինքնիրենուն եկան, շատը
ըսել կուզեմ. բայց տեսնալով որ բազմուԹիւ-
նը իրենց մտքին չէ, հարկաւորեցան ԹողուՀ,
ու հանդարտ կենալ: Հիմայ ով կը կարծէք որ
յանկարծ վրայ հասաւ. մայր եկեղեցւոյն բո-
լոր կանոնիկոսները. Գերապայծառ ՄաղխենԹա
աւագերէցը մէկ գիւէն, մեկալ գիւէն Գերա-
պայծառ Սեբաստիոյ ազգասիրահայրը, մեկալ
կանոնիկոսներն ալ սկըսան իրար տալ. Որդիք,

ինչ կընէք. ատանկ բարի օրինակ կուտաք զաւ-
կըներնուդ. չուտ ըրէք, տներնիդ դարձէք. էֆէ
գիտեր որ հացը աԺընցաւ, առջինին ալ եւել.
գացէք տեսէք, ծանուցումը վողոցներուն
անկիւնը կըպցուցած է »: —

« Իրաւ էր ըսածնին »: —

« Ատ ինչ հարցմունք է. կուզէք որ մայր Ե-
կեղեցւոյն կանոնիկոսները փիլոններով գան,
տուտ ղրկըցին »: —

« Հապա բազմուԹիւնը ինչ ըրաւ »: —

« Ինչ քիչ ցրուեցան, անկիւնները գացին,
որոնք որ կարդալ գիտէին՝ հացին գինը գրած
գտան. մոռծեցէք մէյմը. հացին օխան մէկ
ղրուշ »: —

« Ինչ ԺամանուԹիւն »: —

« Աղէկ բան, ԹՀ որ տեսէ. գիտէք, երեկուը-
նէ մինչև այսօր սրջափ ալիւր փշացաւ. երկու
ամիս կը բաւէր բոլոր քաղքին »: —

« Մելանեցին դուրս եղողներուն համար ալ ա-
ղէկ օրէնք մը գրուեցաւ »: —

« Ինչ որ Մելանու համար եղաւ, ամենուն
ծանեքը քաղքին է. ձեզի համար չեմ գիտեր
ինչ ըսեմ, ձեզի ալ Աստուած ինչ որ ուզէ, ան
կըլլայ. խոտորուԹիւնը դեռ չէ գադրած: Բայց
ամեն բան չըսի, հիմայ պիտոր ըսեմ ամենէն
աղէկը »: —

« Ո՞րն է նայինք »: —

« Ան է որ երեկ իրիկուն, կամ աս առաու-
շառերը բռնուեցան, ու չուտ մը իմացուեցաւ՝
որ գլխաւորներէն չորսը պիտոր կախուին: Ա-
լուրն որ տարածուեցաւ, ամենքը տուներնին

քաշուեցան կարճ ձամբով որ չըլլայ թէ իրենց ալ անանկ բան մը պատահի: Մելան քաղաքը, դեռ ես հոնկէց չէլած, վանք մը դարձեր էր »: —

« Բայց երբ ըլլայ ան չորս հոգին պիտոր կա խէն »: —

« Կը տարակուսիք, ու չուա պիտոր կա խուին »: —

« Բազմութիւնը ինչ պիտոր ընէ ». ասաց ո րոյ ղէարցուածն արարեալ էր:

Վաճառականն ասէ. « Բազմութիւնը տես նելու պիտոր երթայ: Այնչափ կը բաղձային՝ մէկը կախուած տեսնալու անզգամները, որ կուղէին համբարապետին ընել աս հանդէսը: Անոր տեղը չորս անօրէն պիտոր տեսնան ամէն հանդիսով, վերարաւորները մէկ տեղ, ու Բարի մահուան եղբայրութիւնը. արժանի էին աս հանդիսին: Գիտցիք որ Աստուծոյ նախախնամութիւնը ըրաւ աս բանը, հարկաւոր էր: Սկսեր էին արդէն խանութները մնալու, ու զածնին առնելու, առանց քսակ բանալու. Թէ որ ասանկ երթար, հացէն եառը կարգը գինին կուգար, եառն ալ կարգաւ ուրիշ բաներու. երևակայեցէք որ ասանկ շահաւոր սովորութենէն ետ կը կենայինք ինքիրենուն: Կըսեմ որ խեղճ խանութպանի մը շատ մտմտալու բան էր »: —

« Իրաւցընէ » ասաց ումն յունկնդրաց, և այլք առհասարակ կրկնեցին, « Իրաւցընէ »:

Եւ վաճառականն, սրբեալ ծածկութիւն սեղանոյն զնորսան, յաւէլ. « Աստուծոյ պատրաստած էին աս ամեն բան, ալէկ գիտցիք »: —

« Աստո՞ւց »: —

« Աստուծոյ. ամեն բան նէնկոութեամբ պատրաստած էր եւրոպացի տաճկըներէն, ան գաղղիացի կարգինալէն. կիմանաք ով կուզեմ ըսել, որն որ կէս տաճկերէն անուն մը ունի, ու ամեն օր նոր հնարք մը կը մտածէ Սպանիայի Թագաւորութեան դէմ. ու խելքը միտքը Մելանու վրայ է, վասն զի գիտէ խորամանկն որ Թագաւորին մեծ զօրութիւնը հոն է »: —

« Անանկ է »: —

« Աստր մէկ ապացոյցը կուզե՞ս. աւելի խռովութիւն հանողները օտարականներն էին. Մելանու մէջ չիտեանուած դէմքեր կը պարահէին. մանաւանդ մուցայ ըսելու ստոյգ լինճ պատմածնին, որ անոնցմէ մէկը պանդոկի մը մէջ բանուեր է »...

Ինչպէ՞ որ ամենայն վանկից վաճառականին ուշ դնեը, ընդ հարկանել նորա զայս՝ լար՝ հաբաս՝ ի սարսուռս, և յանդգնասիպ՝ ի վեր վազեայ. այլ ոչ ուրուք երազդայ լեալ, յառաջ վարեաց վաճառականն զպատմութիւն իւր.

« Դեռ չիգիտցուիր որ բանուողը ուսկից եկած է, ով իրկեր է զինքը, ինչպէս մարդ է. բայց գլխաւորներէն մէկը ըլլալը ստոյգ է: Երեկուան խռովութեանը մէջ գժոխք ըրեր է. ու ասչափ վազ գոհ չէ եղեր, սկսեր է գրգռել ուրիշները, պզտի խորհուրդ մը առաջարկեր է՝ սպաննել բոլոր մեծերը: Անդգամը, ինչպէս կրնան սպրիլ աղքատները, թէ որ մեծերը չըլլան: Տերութիւնը էտէն մարդիկ դեռ էր, բանեցին զինքը, խել մը նամակներ գտան քո-

վը, ու բանտ կը տանէին զինքը: Բայց ինչ բանտ. իր ընկերներուն որ պանդոկին չորս դին պահպանութիւն ընելու կը պարտաւէին, բազմութեամբ վրայ հասան, խալըսեցին անզգամը»: —

« Եաքը ո՞ւր վախաւ »: —

« Չիգիտցուիր. կամ գուբս վախած է, կամ քաղքին մէջ տեղ մը պահըտած. անանկ մարդիկ են որ ոչ տուն ունին, ոչ ծածք. ուր ըլլայ՝ տեղ մը կը գտնան բնակելու կամ ծածկուելու, ինչուան որ սատանան կարենայ ու ուզէ օգնել իրենց. բայց եաքը եաքը չիկարծած աուենին ձեռք կ'իյնան, տանձը երբոր կը հասնի, պէտք է որ իյնայ: Հիմակու հիմայ ատոգ իմացուեցաւ՝ որ նամակներըը պերսութեան ձեռքն են, ու անոնցմէ ամեն ծածուկներն իմացուած է. կըսուի որ շատերը մէջ պիտոր խաղան: Թող իրենք մտածեն որ տակնուվայր ըրին Մկլանը, ու ալ դէշ կուգին ընել: Կըսեն որ հացագործներըը անզգամ են. ես ալ գիտեմ; բայց գատաստանով պէտք է կախել զիրենք: Ծածկած ցորեն կայ. ո՛վ չիգիտեր. բայց որուն որ կ'իյնայ, պէտք է աղէկ լուսեաններ դնէ, ու գուբս հանէ ցորենը, ու պահողներըը հացագործներուն հետ սգը խաղցընէ: Իսկ թէ որ հրամմողներըը չիշարժին, պէտք է որ քաղաքը բաղաքէ. թէ որ տէրն անգամուն մխիկ չընեն, նորին պէտք է բաղաքէ, եաքը եաքը ուզածը ձեռք կը բերէ՝ բաղաքելէն չիգադրելով. չէ թէ տանկ անօրէն տովորութիւն խոթել խանութները ու մեքեանոցներըը մտնալու, ու յափըշտակելու անպատիժ »:

Տակաւին այն ճաշ, զոր կերեալ էր պատուէրն, դարձաւ նմա 'ի Թոյն. Թուէր նմա հազար ամ յամել վայրկի մի 'ի պանդոկի անգ և 'ի գեղջ. և ասէր ցանձն. « Երթանք, երթանք », և ոչ գադարէր յասելոյ « երթանք »:

Այլ երկիւղ կասկածելի լինելոյ բռնացեալ 'ի միտս նորա, չներէր նմա ելանել 'ի բաց. սակայն 'ի վարանս անդ՝ թէ գուցէ չազակրաւին այնորիկ բանք լինքն յանկիցեն, խորհուրդ կալաւ ելանել անտի 'ի սկսանել նորա խօսել վերստին:

Յայնժամ մի ոմն յոհաննիգրաց ասէ. « Անոր համար ես գիտնալով որ ուր կը լսենան ատ բաները, ու ինչպէս խռովութեան առեն լսեմ մարդիկ մէջ կերթան, հետաքրքրութեանս յաղթեցի, ու անէս գուբս չելայ »:

Եւ այլ ոք ասէ. « Ես ալ տեղէս չիշարժեցայ »: —

Միւս այլ ոք ասէ. « Իսկ ես թէ որ յանկարծ Մկլան գանուած ըլլայի, ամեն գործերս անկատար կը թողուի, ու տուն կը գառնայի. կին ու զաւկըներ ունիմ. երաւցընէ ալ՝ խռովութիւն չեմ սիրեր »: —

Յայսմ վայրի պանդոկապետն, որ և ինքն կայր անդ 'ի լսել, էանց 'ի միս ծայր սեղանոյն՝ տեսանել որ ինչ վաճառականն առնէր: Եւ պատանւոյն զայն պատեհ գտեալ, կոչեաց զնա ակնարկութեամբ առ ինքն, և խնդրեաց գՀաչիւ. և առանց ընդ այլ ինչ բանս ածելոյ, էլ անց ընդ սեամս, և ուղղոյ եղև ընդ հառակ կողմն ուղղոյն՝ ուստի եկեալն էր, 'ի ինամս երկնից ապաստան:

ԳԼՈՒԽ Ժ Է·

Բազում այն է՝ զի մի միայն խղճ շատ է առ՛ի տաղնապ արկանել զոք, իսկ զինչ, եթէ կրկին՛ ի նմա խղճք իցեն հակառակք երեցաց: Ցայտ իսկ է՝ զի Ռէնցոյ, հէքն և Թշուառ, վաղ իսկ կրեր՛ ի սրտի զխղճ՛ ի փախուստս դնալոյ, և խղճ նա՝ կալոյ՛ ի Թագաւոր. և ձախողական բանք վաճառականին յաւելին՛ ի նմա զերկոսին նա առաւել քան զառաւել: Անցք՝ որ անցին ընդ նա՝ հոչակեալ էին, և ինդիր էր զնմանէ. ո գիտէ քանի՛ ինդրակք վհետ նորա շրջէին, քանի՛ պատուէրք առեալ էին ինդրել զնա ամենայն ուրեք՛ ի գիւղս՛ ի պանդոկս և՛ ի ճանապարհս: Խորհէր նա զի երկուք հեթանոսք ճանաչէին զինքն, և ոչ զանուն իւր կրէր դրոշմեալ՛ ի ճակատին. այլ զմոռաս ածեալ որ ինչ լուեալն էր զփախստեից ծանուց-

ցեղոց և ըմբռնելոց անսովոր պատահարութիւն, ան-
կարծելի նշանակութիւն, և՝ ի կասկածաւոր դի-
մային, խիթայք յամենայնի: Եւ թէպէտ՝ ի
մեկնելն՝ ի Կորկոնցոլայ՝ տարաժամեալ էր օրն,
և խաւարն առաջնակայ նուաղէր տակաւ զվը-
տանգս, ծակայն դժկամակութեամբ եւ նա
յարահետ արքունի, եդեալ՝ ի մոլ խոտորել
ընդ գառանելն արտուղի՝ ի գետն կոյս: Ի սկզբ-
բան անդ հանդիպեր ուղևորաց, այլ տապնա-
պեալ՝ ի չարաչար կասկածանս՝ չիշեր հար-
ցանել ումեք զճանապարհն, և ասէր՝ ի մոլ.
« Վէց մղոն կայ ըսաւ մարդը. բայց գնենք որ
գրսի ճամբաներէն երթալով ուրիշ կամ տասը
մղոն ըլլայ, ինչպես որ ինչուան հոս կրցայ քա-
լել՝ մինչև հոն ալ կը քալեմ. աս ստոյգ է որ
դեպ՝ ի Մ'լհան չեմ երթար, ուրիշն դեպ՝ ի
գետը կերթամ. Աստային ձայնը ամուր է, եր-
բոր մտեներամ՝ ճամբայ ցուցընողի չեմ կարօ-
տիր. Թէ որ նաւակ մը գտնամ, դիմաց կանց-
նիմ. Թէ որ չէ, դաշտի մը մէջ, կամ ճնճղուկի
պէս ծառի մը վրայ կը կենամ ինչուան որ առ-
տու ըլլայ. ալ աղէկ է ծառի վրայ քան Թէ
բանտի մէջ»:

Եւ ահա տեսեալ ուղղի փոքրիկ ընդ ահեակ,
եմուտ անդր. եթէ պատահէր ումեք յայն-
ժամ, ոչ ևս այնչափ զդուշանայր՝ ի հարցանե-
լոյ զճանապարհ, այլ ոչ զոք էտես. և գնալով
ուր ածէր ուղին, յեղյեղէր՝ ի մոլ.

« Ես դժոխք ըրի հա՞, ես սպաննել ուզեցի
մեծերը հա՞. խել մը նամակ քովս գտնուեցաւ
հա՞, ընկերներս պանդոկին չորս դէն պահպա-

նուելուն ընելու կը պըտրտէին հա՞. վարձքը կը
հատուցանէի աս վաճառականին, Թէ որ գէմ
առ գէմ հանդիպէի երբեն Աստային մեկալ
դին. (ո՜հ, երբ պիտոր ըլլայ որ անցնիմ օրհ-
նած Աստային անդին կողմը): Կը կեցունէի
գինքը, կը հարցընէի երբեն՝ որ ուսկից առեր էր
ան աղտոր լուրերը: Գիտցիր հիմայ՝ սիրելի պա-
րոն, որ ասանկ եղաւ. դժոխք ընելս՝ Ֆերրե-
րին օգնելու համար էր, երբոր Թէ իմ եղբայրս
ըլլար. գիտցած եղիր որ ան անզգամներն որ
դուն իմ ընկերներս կը սեպես՝ մէկ խօսքիս հա-
մար, որն որ ձշմարիտ քրիստոնէի մը խօսք էր,
կուզէին ինծի չարաչար ծառայութիւն մը ընել.
գիտցիր որ երբոր դուն կեցեր էիր խանութդ
պահպանելու, իմ կողերուս ոսկորները կը կո-
տըրտէին՝ համբարատպեալ խալըսելու, որն որ
ոչ տեսեր էի և ոչ ճանչցեր. սպասէ որ մեյմըն
ալ տեղացս չարժիմ մեծերուն օգնելու հա-
մար:.. Իրաւ է որ պէտք է օգնել Աստուծոյ
համար, անոնք ալ մեր եղբայրքն են: Իսկ ան
խել մը նամակները որոնցմէ ամեն ծածուկ ի-
մացուեր է, ու հիմայ տէրութեան ձեռքն են
եղեր, ինչպես որ դուն ստոյգ իմացեր ես,
խօսք կուտամ աչքիդ դիմացը դնել առանց
կախարդութեան, ինչ կը խոստանաս ինծի.
կուզես տեսնալ ան խել մը նամակները. ահա,
հոս են... Մէկ հատ է միայն... Այո՛ պարոն,
մէկ հատ է, և այս է միայն. և Թէ որ կու-
զես դրուղն ալ գիտնալ, բարեպաշտ քրիստո-
նեայ մըն է, որ քեզի քրիստոնէական վարդա-
պետութիւն կրնայ տալ երբ որ ուզես.

բարեպաշտ քրիստոնեայ մը՝ որուն մորուքին մեկ թելը քու բոլոր մորուքդ ծախու կառնէ, ու աղէկ նայէ, ուրիշ երկնաշունչ քրիստոնեի մը կը դրէ, անանկի մը որ... Տես ան իմ անզգամ բարեկամներս որոնք են, ու խօսիլ սորվի ուրիշ անգամ, մանաւանդ երբոր ուրիշի վրայ կը խօսիս »:

Ա՛յլ սուղ ինչ չեռոյ, այսքիկ և սոցին հանդոյն մոածուելիւնք դադարեցին ի նմա, և ամբողջակայք գրաւեին զմիտս առաւոտեղոյ նժդեհին: Երկնաւոր ի վերայ նոր հասանելոյ խնդրատակաց, և ի յայտ գալոյ, որ այնչափ դառնացեալ զուարճութիւն նորա ի տուէ, դադարեալ նմին էր յայնժամ: Այլ քանի՛ այլ ինչ վշտալի ևս առնէին զդիչերապահսոյ փախուստ նոր: Խաւարն, միայնութիւն, վաստակ ճանապարհին առաւել տաժանաւոր և վշտալի, հողմ ցրտաշունչ անընդհատ և թափանցիկ ընդ ձորձս, զորս պատանւոյն զգեցեալ էր առ ի գնալ յօրհնութիւն պահակին և դառնալ անդէն յաղթանակաւ ի տուն: Եւ քան զամենայն ինչ ծանրագոյն նմա այն էր՝ գնալ ըստ բախտի, և առ խաբխափ, խնդրել տեղի հանգստեան անվտանգ: Եթէ հասանէր նմա ընդ գիւղ ինչ անցանել, գնայր յուշիկ, գիտելով թէ էր ուրբեք տակաւին գուռն բաց. այլ ոչ ուրեք տեսանէր այլ ինչ նշան արթնութեան, բայց ճրագ մի ընդ թղթափակ պատուհանս աղօտալոյս թափանցեալ: Ընդ անբնակ ճանապարհս ուրբեք ուրեք գիպ առեալ ունէին գնէր լսել ղընչաձալի կարկաչիւն Ատտայ, այլ ի զուր. ոչ այլ

ինչ լինէր լսելի, բայց կաղկանձիւն շանց ի հիւղից բայօթեից, ողբաձայն միանգամայն և սպառնական. և ի մօտել անդր, փոխէր կաղկանձն ի հաչիւն արագ արագ և կատաղի. և յանցանել առ դրամբն, տեսանէր զդամիկ՝ ցուռկ ի ձեղքս դրանն արտաքս եղեալ, սաստկագոյնս ոռնալով. որպէս զի գագաթէր ի խորհրդոց բաղխելոյ զդուռնն և ինդրելոյ պատըսպարան: Թերևս և առանց իսկ չանցն երկիւղի չիշխէր բաղխել, թէ գուցէ հարցցեն ի ներքուստ՝ « Ո՞վ է, ինչ կուզես առ առեն. ինչպէս եկար հոս. ձանչցուը ոչ ըլլալդ. պանդոկ չիկայ կենալու »: Եւ ասէր ընդ միտս. « Աղէկ ալ երթայ բանս, առնք են լսելու խօսքերս՝ դուռը զարնելու որ ըլլամ. իսկ թէ որ ներսը վախկոտ մըն ալ ըլլայ՝ որ սկսի պոռալ, Հասէք օգնութիւն, գող կայ, պէտք կըլլայ մեկէն որոշ պատասխան մը տայ, ինչ կրնամ պատասխանել: Ով որ գիչերը ձայն մը կը լսէ, ուրիշ բան չի դար միտքը բայց գող, աւազակ նենգաւորը. մեկուն մտքէն չանցնիր որ գիչերը առեն աղէկ մարդ մը առանկ տեղուանք պտըտի, միայն առանց պէտի պէս մեկը կառքով կրնայ անցնիլ »:

Եթող ապա զնորհուրդն զայն ի վերջին հարկ, և յառաջ խաղայր յուսով գէթ տեսանելոյ զգեհեն, եթէ չյաջողէր անցանել ընդ այն ի գիչերին, զի մի ի տուէ լինի նմա չըջել ի խըճիթ: Խաղաց և խաղաց յառաջ մինչև եհաս ուր դաշտօրայք մշակեալք յանկէն ի անկախուս չամբից և ցախից, որ ցուցանէին նմա եթէ ոչ հաւաստիս՝ այլ նշանակ ինչ մերձաւորութեան

գեւոյ: Եմուտ անդր ընդ շաւիղ՝ որ անցանէր ընդ այն. և քայլափոխս ինչ արարեալ, ևկաց ՚ի լսել, այլ դեռևս ընդունայն: ՏալտկուԹիւն ուղևորուԹեան յաճախէը ՚ի վայրենուԹենէ տեղւոյն, և՝ ի չտեսանելոյ և ոչ ԹիԹենի մի կամ որթատունկ, և ոչ այլ ինչ հետս մշակուԹեան, որ գոգցես իմն ընկերելին նմա ցայնվայր: Սաստկայն խաղայր յառաջ: Ականելին յայնժամ զարԹնուղ ՚ի միտս նորա պատկերըք պատմուԹեան երևմանց ինչ տպաւորեալք ՚ի միտս նորա ՚ի մանկուԹենէ. և առ ՚ի մերժել զայնոսիկ ՚ի մտաց և հանդարտել զմիտս իւր, առնէր աղօԹս զՀանդարտարհայն վասն ննջեցելոց:

Ապա տակաւ եհաս ՚ի մացառախիտս, և վրեալ յառաջ մեծաքայլ՝ տեսանէր ծառս ինչ ՚ի մէջ մացառաց ընդ նոյն շաւիղ, և ծանեաւ զի հասանէր յանտառ: Երկինչէր մտանել անդր, բայց յաղԹեաց երկիւղն, և գժկամակուԹեամբ իմն յառաջ մտեաւ. ըստ խորամուտն լինել ՚ի նեըքս՝ յաճախէը երկիւղն, և տագնապէր զնա: Այրիք, զորս ՚ի հեռուստ տեսանէր, անսովորք տեղք և այլանդակք երևէին. նէ՛ զէին զնա տառուեըք գազաթանցն տատանելոց, որ շարժէին ընդ երկիրն լուսաւորեալ ՚ի լուսնոյ, և խարշափ իսկ տերևոց ցամաքելոց՝ զորս կոխէին կամ վարէը ՚ի գնալն, գժպհի իմն հնչէը ՚ի լսելիս նորա. ծառնկք նորա դիմէին ինքեանս յընթացս, և ԹուէԹին միանգամայն կիԹտել: Սիւք գիշերոյ ցրտաշունչ և ինաստակար քաղխէը զՀատատ նորա և զերեսս, ընդմտաննէը ընդ ձորձս և ընդ մորմին, և Թափանցէը

խստագոյն յոսկերան վաստակաբեկս, և չիջուցանէը զբեռն մնացուածս զօրուԹեանն: ԹափաԾուԹիւնն այն և սոսկումն տարտամ, ընդ որոյմ պատերազմէը ոգի նորա ցայնվայր, ԹուէԹ իմն յայնժամ ընկճել զինա, և մերձ էը ՚ի վհատել ՚ի սպառ. այլ յերկիւղէ իւրմէ առաւել քան յամենայն իմքէ երկուցեալ, զարԹոյց ՚ի սիրտ իւր զառաջին զօրուԹիւնն, խրատեաց զանձն, և ոգի առեալ վայրկի մի՝ խորհուրդ կալաւ և հաստատեաց դառնալ խակայն ընդ նոյն ուղի, և գնալ դէպ ուղիղ ՚ի գիւղն յեսայի ընդ որ անցեալն էր, երևեալ մարդկան, խնդրել պատսպարան, ևս և ՚ի պանդոկի: Այրդ մինչդեռ յայսմ խորհրդի կայր, գազրեաց ընդ ոտիւք նորա չընչին տերևոց, չուրջ զնովաւ էր լուսԹիւն, և լսելի ևեԹ լինէր յառնիկն նորա կարկաջ ջուրց, ձայն սլեաց. շանկնչէ. ատուգէ, գոչէ. Ապա է գա: Եղև նմա այն՝ որպէս գտանել զբարեկամ զեղբայր և զփրկիչ. մռայաւ զպարտաւել իւր, գարձաւ ՚ի նա զարկ բազկին, զգայ զանխափան ընԹացս արեանն յորգելոյ ընդ երակունս, յաւելաւ վստահուԹիւն ՚ի նմա, փարատեցաւ մեծաւ մասամբ տարտամուԹիւն իւր և աղջամուղջ մտաց, ոչ ևս յերկուանայր յառաջ անցանել ՚ի խորս անտառին զհետ բարեբար ձայնին:

Յետ սակաւ միոյ եհաս յեզը խորաձորոյ, և հայեցեալ ընդ մացառախիտս՝ որ ծածկէին զայն, եռես զփայլուածն և զգնացս ջուրց. և զայն ՚ի վեր առեալ եռես յայնկոյս զլայնածաւալ ընդարձակուԹիւն և զհամասփիւռ ՚ի նմա

գիւղորէս, և զհետ նոցին բլուրս, և ՚ի միում
յայնցանէ անտառ մեծ ընդգոյն, որ Թուխը
նմա քաղաք, և անշուշտ Պերկամոյ: Էջ փոքր
մի ընդ զառ ՚ի վայրն, փեռնկելով և բանալով
ձեռօք և թևովք զմացառս, դիտեալ Թէ իցէ
ինչ շարժումն նոտակի ընդ դէտն. ունկն դնէր
լսել զբաղխիւն Թիակաց, այլ ոչ ետես ինչ և ոչ
լուաւ. և եթէ չէր այն Աստուա, իջանէր ար-
դեօք փորձել հուն ընդ այն, այլ դիտէր քաջ
զի չէր վտահել Աստուա:

Ականաւ յայնժամ խորհել յանձին հանդարտ
տրամադրեամբ զինչ պարտ էր առնել: Եթէ սողոս-
կէր ելանէր ՚ի մի ՚ի ծառոց՝ մնալ անդ այդուն
լինելոյ երբ ժամն վեց ՚ի պարզի ընդ եղեմամբ,
Թէթև ևս զգեցեալ, երկնանայր կարկամէր
՚ի ցրտոյ: Երթևեկել անդ զայն ամենայն ժա-
մանակ՝ էր բռնադբօսել զոտս յառաւել քան
զկար, որոց վաղ խակ արարեալ էր զկարելին:
Յուշ եղև նմա՝ զի տեսեալ էր մերձ ՚ի դաշտ
անդր անմշակ զմի ՚ի յարդածածուկ հիւղից,
կազմելոց բնովք և ոստովք ծառոց, ծեփեալս
կաւով, յորս շինականք երկրին Միլանու սո-
վոր են յամարայնի մերելել զբերս ժողո-
վելս, և պատսպարեալ կալ ՚ի պահ, խակ յայլ
եղանակս Թողուլ զայնոսիկ ամայի: Եդ ՚ի մտի
գիշերել անդ. զկայ էառ, դարձաւ ընդ ան-
տառն, և ընդ մացառս, և ընդ դաշտավայրն
խոպան, և գնայր դէպ ուղիղ ՚ի հիւղ անդր:
Ետես դուռն կիսափակ, բոստոտակեր խարխա-
փեալ՝ առանց նգի և փականաց. երաց զայն,
եմուտ անդր, և ետես ընդ օդս մահճաձև իմն

՚ի կախ, հասատատեալ ուղիշխեալ հիւսեալով-
այլ էջուկ ինչ փոյթ նմա ելանել՚ի վեր: Ետես
ընդ երկիր սակաւ ինչ խոտ, և խորհեցաւ զի
մարթ էր և անդ վայրկ մի հանգչել քաղցր
՚ի քուն:

Այլ էր ընկողմանեալ՚ի խշոկ անդր յաս-
տուածային իմն տեսչութենէ պատրաստեալ,
էգ ծուխր և գոհացաւ զտեառնէ վասն այն և
վասն ամենայն բարերարութեանցն՝ զորս յա-
հագին ատուրն յայնմիկ արարեալ էր ընդ իւր:
Աւրար ապա զառաջնական աղօթս իւր, յաւել
խնդրել և զթողութիւն յանցանաց իւրոց, զոր
յառաջնումն երեկոյն էր արարեալ, կամ որ-
պէս ինքն ասէր՝ զօրէն անբանիկ երթեալ էր
՚ի քուն: Եւ եդեալ զձեռան զերկոսին՚ի յար-
դէն, և յերեսս՚ի վայր անկեալ՝ յաւել: «Աչող
համար աս առաւոտ ասանկ ձախորդ սկսաւ լին-
ծի»: Եւ ժողովեալ զինացուած յարդին շուրջ
զիւրև, արար իւր որպէս թէ վերման՝ պատրս-
պարել՚ի ցրտոյն, որ և՚ի ներքս անդ էր յոյժ
զգալի, և կծկեցաւ ընդ նովաւ՝ լինել՚ի քուն,
զոր ծանրագնի յոյժ համարէր ստացեալ: Այլ
՚ի վակել անդ զաչս իւր՝ սկսաւ՚ի միտս նորա
երթևեկ խորհրդոց այնպիսի խառն՚ի խուռն
և անդադար, զի հարկ եղև նմա հրաժեշտ տալ
քնոյ: Վաճառականն, տաճնագպիրն, կալանա-
տորակապք, տուսերագործն, Ֆերրէր, համբա-
րատեան, երախանն՚ի պանդոկին, ամբոխն՚ի
փողոցի, տէր Ապոնեայ, իշխանն Ռոտրիկ, և
ամենեքեան՝ ընդ որս իրք ինչ լեալ էին պա-
տանւոյն:

Երեք ինչ միայն գային ՚ի միտս նորա առանց դառն յիշատակի, զերծ յամենայն կսկածանաց, ամենայնիւ սիրելիք. մանաւանդ երկու յայնցանէ զանազանեալք յոյժ ՚ի միմեանց, այլ սերտիւ կցորդեալք ՚ի սիրա պատանւոյն: Յիշատակ սեաւ վարսից և սպիտակ մորուաց ածէին նմա սիրտուման, այլ ոչ անխառն ՚ի սըրտմտելեն և անխռով: Ի յիշել զվերադարձն՝ ամաչէր յոյժ վասն զառանցանաց իւրոց, վասն արբեցութեան վասն անառաստութեան առ հայրենի խրատս նորա: Իսկ յածել զմտաւ զվրէջեալ՝ որ ինչ զգայրն, էն խեմ բացատրել. ընթերցողն ինքնին կարէ նկատել ՚ի մտի: Որպէս կարելր անյիշատակ առնել և զառաւպէսն Ադենէս. զԱդինէս՝ որոյ ընտրեալ զինքն ՚ի վեհապետ իւր, և համարելր որպէս մի ինչ ընդ միտսն գտաելր իւրում, ընդ որում չէ մտրակոչ ՚ի ներմանել լեալ՝ խօսելր որպէս ընդ որդւոյ, սիրելր զինքն որպէս որդի, և արգեամբք ցուցանելր իւր գութ և գորով: Այլ նովին իսկ առաւել վշտանայր ՚ի խորհել իւրում, զի եղիցին այն վասն սիրոյ իւրոյ և վասն խնամոյն ՚ի բարերարել առ ինքն, կայր իբր ՚ի նժդեհութեան, անասպագ զհանգերձելոց, և կրելր վիշտ և տառապանս վասն բարերարութեանցն՝ որովք յուսայր գտանել հանգիստ և բարօրութիւն ՚ի կեանն ամ կենաց իւրոց: Որպիսի գիշեր. հեք պատանի, հինդերորդ յետ հարսանեացն հանդերձեալ էր լինել գիշերն այն: Զինչ սրսկապան, զինչպիսի առագաստ, և յետ որպիսեաց աւուր, և առ ՚ի մնալ որպիսիմ վաղուն և կար-

գի աւուրց: Այլ առ այս ամենայն խորհուրդս, որ առաւել նեղէին զինս, տայր նա պատասխանի. « Աստուած ինտոր որ կուզէ, Աստուծոյ կամքը օրհնեալ ըլլայ: Իր ուզածն է աղիկը, նաև մեզի համար. մեղքերուս Թողութեան համար ըլլայ: Լուչիան անմեղ աղջիկ մըն է, Աստուած զինքը ձեռքէ չենթողուր, չենթողուր, չենթողուր »...

Ի խորհուրդս յայսոսիկ մտայոյզ, ոչ ևս յուսացեալ ՚ի քուն լինել, և զի յուրան ևս քան զևս նեղէր զինա՝ մինչև դողալ և կափկափել զատամունս, հառաչէր և ցանկայր լուսանալոյ աւուրն, և զամրընթաց ժամս Թուէր և չափէր անհամբեր. զի զամենայն կէս ժամու ՚ի լայնատարր լուսնթեան անդ հնչէցուցանէր ուժգին ժամացոյցն, որպէս կարծեմ, Թրէցոյ քաղաքի. և յառաջնումն նուագի անակընկալ ժամահարին, առանց գիտելոյ նորա ուստի ձայնն այն հնչէր, այնպիսի խիտ խորհրդաւոր և հրաշալի Թուեցաւ նմա, որպէս Թէ ազդեցութիւն ինչ լինէր նմա յաներևոյթ անձնէ ումեքնէ ՚ի բարբառ անծանօթ: Իսկ երբև անտգան ուրուն եհար ուռնն ժամ մեռանան, որ սահմաներ յառնել պատանւոյն, յաբեաւ գրեթէ ընդարմացեալ ՚ի ցրտոյ, եդ ծունր, և սրտեռանդն քան զորէն հանապազօր մատոյց զառաւօտեան աղօթս: Ապա յօրանջեալ ձգտեալ վերկոյս և ՚ի կոյս, Թօթափեցաց զթիկունս և զանձն իբր առ ՚ի զետեղել զանդամս յիւրաքանչիւր կայս, փչեաց յաչ և յահեակ ձեռս, չփեաց ընդ իրեար. և բացեալ

զգուան հիւղին, հայեցաւ այսր և անդր՝ տե-
սանել թէ իցէ՞ ոք, և ոչ զոք տեսեալ դիտեաց
զուղն երեկոյին, ծանեաւ զայն խոկոյն, և գը-
նայր ընդ այն:

Խոստանայր երկին օր գեղեցիկ. լուսին դուշ
նատ և անձառագայթ փայլէր ի կապոյտ յամ
բաւածաւալ դաշտի, և ընդ արևելս կոյս ի
խոնարհ տակաւ լննանայր յաղօտ ձիակարա-
միր: Եւ խոնարհագոյն ընդ ոլորտ երկնից կա-
յին ամպք սակաւք, անհատասար սփռեալ
քղանցս ընդ կապուտակ և ընդ մթին, ժամա-
ւինեալ ի տատրնագոյն եղերս իւրեանց ի ծիր
հրեղէն որ երթայր և տատկանայր ի կարմիր
ակնախտիղ: Ի միջօրէայ կուսէ այլ ամպք թե-
թևք և փափուկք ընդ միմեանս ծրարեալք,
երկին երկին յանբայատրելի երանգս երգուս
նէին զերկին լոմպարատական այնպէս գեղեցիկ
ի պարզութեան, այնպէս ջինջ և խաղաղ, զի
եթէ Ումնոյ ելանէր անդ ի ձեմ, զարմանայր
արդեօք հայեցեալ ի վեր ընդ պայծառութիւն
նորին այնպիսի՝ այլազգ ամենևին յերկինէ ան-
աի՝ զոր սովոր էր զլերամբք խրտվիլ տեսանել.
այլ ուշ ունէր նա ձանապարհին, և մեծաքայլ
ընթանայր՝ չեռնուշ և վազ ժամանել: Անցանէ
ընդ դաշտորայս, անցանէ ընդ երկիլն խոսան,
անցանէ ընդ մայառախիտս և ընդ անտառս,
շուրջ դիտելով և ծառը ընդ ամեն խառնելով
ընդ որ սակաւ մի յառաջ կրեալ էր սոսկումն.
և յարտևան գետեղերն կացեալ, հայեցեալ ի
ստոր, տեսանէ ընդ մէջ ոստոց նաւակ մի ձըկ-
նորսական՝ որ յուշիկ խաղայր ընդդէմ հոսա-

նաց առ ափամբ քերեալ: Իջանէ խոկոյն ընդ
կարճոյ ուղի ընդ մէջ մայառաց մինչև ի գետ-
ափն, ձայն տայ մեղմիկ առ ձկնորսն, որպէս
թէ թեթև լինչ խնդրելով սպասաւորութիւն,
այլ յանդգնասուց ի ձև աղաչանաց ակնարկէ
մատչել: Նա աչս ածեալ ընդ երկայնութիւն
գետեղերն, դառնայ հայի կետս ընդ ալիս որ
գնան, և ուղղեալ զառաջս նաւուն ի Ումնոյ՝
մատչի ի ցամաք: Ումնոյ՝ որ ի հուսկ եղը գե-
տոյն կայր՝ միով յոտիցն գրեթէ ի ջուր, բուռն
հարեալ զծայրէ նաւուն՝ ոստնու անդր ասե-
լով. « Կրնա՞ս անդիւս կողմն անցընել զիս »:
Նորա գուշակեալ վազ խոկ չըշէր զինաւակն
յայնկոյս. և տեսեալ պատանեօն միւս այլ
թիակ ի մէջ նաւակին, խոնարհի առնուլ զայն.

« Կամաց, կամաց », ասէ ձկնորսն. այլ ի տե-
սանելն՝ ի բը աջողակի առնոյր պատանին զքին,
և պատրաստեր ի վարել, յաւելու. « Կար-
ծեմ արուեստին ես »: —

« Ինչ մը », ասէ պատանին, և ձեռնարկէ թիա-
վարել ուժգին և ճարտար ի վեր քան զեղա-
նակ առ ի ղբօսանս թիավարելոյ: Եւ անդուլ ի
ճգանէ՝ երբեք երբեք դառնայր հայեր յափն
կոյս, ուսոսի հեռանային, և դարձուցանէր ան-
ժոյժ զաչս իւր ապա ի յայնկոյս՝ ուր երթա-
յին. եռայր սիրտ նորա ի յամել անդր վասն
սրընթաց գետոյն հոսանաց ի տեղւոջ անդ,
ընդ որ չէր մարթ անցանել ուղղակի ընդ կար-
ճոյ ուղի, և պարտ էր նաւուն մերթ ընդդէմ
հոսանաց և մերթ ընդ հոսանս հորդել չաւիղ
արամանկիւն: Եւ որպէս յամենայն խոկ ի գործս

պատահէ, ՚ի սկզբան անդ խառն ՚ի խուռն ՚ի միասին էլանէն արդեւք ընդ առաջ, և ապա մի ըստ միոջէ գան ՚ի գործելն ՚ի յայս, ՚ի յայլ-ղել պատանւոյն գրեթէ հասանել յայնկոյս, տապնապէր՝ ոչ գիտելով հաւաստեաւ զելս սահմանացն, և կասկածէր՝ զի ՚ի յայլեւել ա-ռաջնոյն գժուարութեան, միւս ևս եղիջ նմա ընդ առաջ: Զայնէ առ ձկնորսն, և ցուցեալ նմա ակնարկութեամբ զանտառն լինադոյն՝ զոր յերկնէան գիշերի տեսեալ էր ընդ աղօտ, և յայտնագոյն տեսանէր յայնժամ, ասէ.

« Պերկամոյ է սա երեցած քաղաքը »: —

Պատասխանի եւս ձկնորսն. « Չա, Պերկա-մոյ է »: —

« Ուրեմն Պերկամոյն սահմանն է գետէն անդին »: —

« Սուրբ Մարկոսի երկիրն է »: —

« Կեցցէ սուրբ Մարկոս », գոչեաց պատա-նէն. այլ չէտ ձկնորսն պատասխանի: Հասին ուրեմն յայնկոյս, և ոտեաւ Ութնոցն ՚ի ցա-մաք, և գոհացաւ լուելեայն զՏեառնէ: Եւ հա-յեցեալ ՚ի ձկնորսն, եհան ՚ի քսակէ պերլինկ մի, որ ոչ թեթև ինչ զկուսն էր նմա ըստ հան-գամանաց ժամանակին, մատոյց նմա: Նորա ակնարկեալ միւսանգամ ՚ի գետեզր անդր սահ-մանագլուխ երկրին Մելանու, և ՚ի վեր և ՚ի վայր գետոյն, և կարկառեալ զձեռն՝ ընկալաւ զընծայն, եդ ՚ի քսակին. և ապա փակեալ զբերանն՝ կնքեաց նշանաւ խաչի, և ազդու հայեցմամբ ՚ի նա ասելով. « Աստուած բարի ճանապարհ տայ », մեկնեցաւ ՚ի բաց: Եւ զի

մի ոք զարմասցի ընդ պատրաստ և ընդ հա-կիրճ շնորհակալիս ձկնորսին առ անծանօթ իւր, պարտ է լինել ասել զվանէրն. զի ձկնոր-սին այնորիկ յաճախ մատուցեալ էր զայս ըս-պասաւորութիւն վտարանդեաց այսպիսեաց, և ՚ի մաքսէ փախուցելոց, և սովոր էր յայն. ոչ այնչափ առ սէր գոյն և կեղակարծ չահուն՝ զոր անտի ունէը, որչափ առ ահի թշնամա-թեան այնպիսեաց. և առնէր զայն՝ յորժամ հարէրն անվտանգ, անտեսաբար ՚ի մաքսատե-բաց ՚ի կալանաւորաց և ՚ի լրտեսաց: Այսու օրինակաւ ոչ ընդ սուտ և ոչ ընդ նոսա առնէ-լով բարեկամութիւն, հնարէը հաճել զամե-նեսեան առանց կուսակցութեան, որպէս սո-վոր են առնել՝ որոց պարտ է սպասաւորել կի-սոց, և այլոց տալ ջհամար:

Ութնոցն վայրկ մի զկայ առեալ յերը գե-տոյն, նկատեր յայնկոյս զերկիրն՝ որ փոքր ինչ յառաջ տապնապէրն զնա. և ասէ ՚ի մոմ, « Փառք Աստուծոյ, խալըսեցայ սա երկրէն ». այս առաջին բան նորա: « Տեղդ կեցիր անե-ծած երկիր ». այս երկրորդ բան նորա: « Կե-ցիր բարով հայրենիքս ». այս յետին բան նո-րա, որ ակնարկէր յիւրան՝ զորս թողոյր անդ: Յայնժամ զձեռս ՚ի կուրծս եդեալ զմիմեամբք խաչանիշ, յոգւոյ եհան, և խոնարհեալ զաչս յալին՝ որ հոսէին առ ոտս իւր, ասէ. « Կա-մուրջին տակէն են անցեր ». այսպէս առա-սաբար ըստ սովորութեան երկրին կոչէր զը-կամուրջ Լէքքոյն. և յաւել. « Գեշ աշխարք. հերիք է. Աստուած ինչպէս որ կուզէ »: Եւ

Թիկունս առ ախթալի տեսիլն դարձուցեալ, ուղղոյ եղէ՛ ուշ եգեալ ՚ի լսանգոյն անտառ անդր ընդ զառ ՚ի վայր լերինն, առ ՚ի գտա-նել զոք ուղեցոյց: Այդ ամենայն համարձա-կութեամբ մատչէր առ ուղևորս, և առանց պատ ՚ի պատ բանից հարցանէր զնոսա բնա-կութեան հօրեղբօրորդւոյ իւրոյ: Առաջին ՚ի հանդիպելոցդ ուղևորաց ուսոյց նմա, զի ինն այլ ևս մղոնք առաջի կային նմա. և չէզև ուղևո-րութիւնն այն նմա ՚ի սիրելութիւն:

Ի վերայ ազեաւոյ՝ զորս ընդ իւր կրէր պա-տանին՝ ազնուանայր անդադար ՚ի տեսիլ վշտա-լի երից, յորոց ՚ի միտ առնոյր գտանել յեր-կրի անդ՝ յոր մտանէին, զնոյն կարօտութիւն և սոլ զոր ՚ի հայրենիս իւր Թողեալ էր: Ընդ ձանռապարհն ամենայն, և առաւել ևս յանգաս-տանս և ՚ի գիւղորեայս, յամենայն քայլափոխս պատահէր աղքատաց, որ չէին մուրայնկք, և բերկրին ՚ի դէմս իւրեանց քան ՚ի ձորձս զԹշուա-ռութիւն. չինահանք, լեռնաբնակք, ձեռա-գէտք, ընտանիք ամրողջ. և լսելի լինէր շշունջ խառնաձայն, աղաչանաց, ողբոց և հեծու-Թեան: Տեսիլն այն ՚ի կարեկցութիւն և ՚ի մխրճութիւն յաւելոյր և զհոգ առաջնակոյց իւ-րոց իւրոց, և ասէր յանձին. « Ո՞վ գիտէ, բանս յաջողի ակիաոր, գործ մի կարեմ՞ ակի-աոր գտնալ ինչպէս անցած տարիներըդ. հերիք է. Պօրթոլոն կը սիրէ զնս. աղէկ զաւակ մըն է. տակ վաստկեցաւ, քանի անգամ զնս հրա-վիրեց, ձեռքէ չթողուր զնս. ասկէց ՚ի զատ, նախախնամութիւնն ալ մինչև հիմայ օգնեց ին-ծի, ասկէց ետքն ալ կօգնէ »:

Յայնմ վայրի քաղցն, վաղ իսկ զարթուցեալ ՚ի նմա, սաստկանայր մղձն ՚ի մղձնէ. և Թէ-պէտ պատանին ՚ի զգալն զայն՝ համարեր տակաւ այնմ առանց ծանր նեղութեան ընդ այլ ևս երիւս կամ երիս մղձն՝ որ մնային նմա, սա-կայն խորհեցաւ՝ զի չէր լինչ ՚ի դէպ հասանել առ հօրեղբօրորդին որպէս մուրացիկ սովեալ, և փոխանակ ողջունի խնդրել կերակուր: Ե-հան ՚ի քսակէն զամենայն մեծութիւնս իւր, և համարեալ ծագիւ մատին չափ իւր, զի չէին պէտք մեծի համարոտական արուեստի, եգիտ զի առաւելուն բաւէր առ ՚ի ձաչ: Եմուտ ՚ի պանդոկի մի կաղդուրել զսիրտ, հատոյց ըզ-ծախսն, և մնային դեռևս դանկք քանի մի:

Յելանել ՚ի պանդոկէն՝ ետես առ դրան, (փոքր միւս ևս և գԹէր,) անկեալս յերկիր քան Թէ նստեալ՝ կանայս երիւս մին անցեալ զա-ւուրըք, միւսն մանկամարդ՝ մանուկ ՚ի գրկի, որ ՚ի զուր ջերկոսին ևս ծծեալ պակուհս մայ-րենիս՝ լայր, երեքին ևս մեռելատիպք. և առ նոսա կացեալ այր մի, յորոյ ՚ի գէմս և յան-դամս երևէին նշանք երբեմն զօրութեանն, ընկճելոյ և շնջելոյ յերկար վշտաց: Երեքին ևս առ պատանին՝ որ եշանէր ազատաբար և կազ-դուրեալ, լուռ ևեթ աչ կարկառեցին, զի և ոչ զօրէր ոք առնել աղաչանս: Ասաց պատանին. « Ահա Աստուծոյ նախախնամութիւնը », և անդէն հանեալ զքսակն, ետ զինացորդ դանկ-սըն ՚ի ձեռս մերձաւորագունին:

Կերակուր և բարեգործութիւն, (քանզի ՚ի հոգւոյ և ՚ի մարմնոյ եմք կազմեալ), զօրացու-

ցին և զուարթացուցին զնորհուրդս նորա։ Զի՛ ի տալն ի բաց և զլերկին դանկան, զպայր յանձին վառահուԹիւն գտանելոյ ի Տեառնէ տանտպատիկ. զի եԹէ վերնամեամ տեսցուԹիւն՝ առ ի կեցուցանել զաղքատան զայնոսիկ՝ որ ի գաւԹս անդ պակասելին ի կենաց՝ պահչեալ էր զբաժին գանկս օտարի ուրուք ի մահատէ՝ որ և ինքն զկենաց իւրոց կայր ի հոգս, զնաթդ ԹողոյՀ յերեսաց զայն՝ որով կեցոյցն զնոսա, և որում էտ կարեկցուԹիւն այնպիսի տատիկ և ազգուս և պատրաստ։ Զայսոսիկ գոգցես խորհէր պատանին, այլ գեռ աղօտագոյն քան զատացեալս։ Եւ՛ի մեացորդ ձանապարհին զառաջնիկայս իւր զմտաս ածեալ էր, որ յառաջագոյն ԹուէԼին նմա գժուարինք, գիւրանալին նմա։ Խորհէր նա՛ ի մտի. « Սղոս-Թիւնը կը վերջանայ, ցորեն հնձելոս առինը մօտ է. հիմակուս հիմայ հօրեղբօրորդիս ՊօրԹոլոն՝ ու աշխատանքէն չխափանչելս կօգնեն ինծի. բայ ասկեց՝ տունը քիչ մը ըստակ ունիմ, մեկէն բերել կուտամ. ամենևին յաջողուԹիւն մըն ալ որ չունենամ, անով օրերը առաջ կը քաշեմ մինչեան որ առատուԹիւնը գառնայ. առատուԹեան հետ գործերը կը շտանան, երկինը ունեցողները իրարու ձեռքէն կը յափշտակեն միանցի գործատէրոջ՝ որունք վարպետ են երկրագործուԹեան. միանցի գործատէրոջ գլուխնին վեր կառնեն, ով որ աղեկ աշխատասէր կուզէ, պէտք է որ վճարէ. իրենց ընտանեացը պէտք եղածէն եԹէ կը վատսրկին, քիչ մը բան ալ մեկդի կը դնեն. ընտանիքնին

ալ կը կանչեն աշխատելու։ Բայց ինչ պէտք է ինչուան ան առենը սպասել. քիչ մը պահչուն ունեցած-ինչս չէ՞նք կրնար առ ձմեռ ալ ապրիլ. առանկ հոս տեղը կանցընենք ձմեռը։ Ժողովըրդապետ ամեն տեղ կայ. կուգան երկու սիրելներս, հոս տուն տեղ կըլլանք. ինչ ուրախուԹիւն. քալելու կելլենք ամենքս մեկտեղ առ ձամբուն վրայ, սայլով ինչուան Աստուա կերԹանք, գետին քովը՝ բուն եղերքը նախաձաշնիկ կընենք, կը ցուցընեմ իրենց ուսկից որ նաւ մտայ, փշոտ Թուփերը՝ ուսկից որ ինձայ, ան տեղը՝ ուսկից որ նաւակը տեսայ »։

Եհաս ատա ուր ընակէրն ՊօրԹոլոյ հօրեղբօրորդի իւր. կէս ի մուտս քաղաքին, կէս ի նեղքս, էտես տուն մի բարձրաբերձ բազմայարկ, երկայնաձև պատուհանօք. ծանեաւ զի էր այն գործատան մանելոյ, եմուտ անդր, և ի ձայն բարձր ի մէջ չառաչման հոսանաց ջուրց և անուց եհարց. « ՊօրԹոլոյ ՖաԹանիէրի անուամբ մեկը հո՞ս է »։ —

« Պարոն ՊօրԹոլոն. ահա »։ —

« Պարոն ! աղեկ նշան »։ ասէ ընդ ինքն Ռինոյ, տեսանէ զհօրեղբօրորդին, և դիմէ առ նա։ Հայի նա, և ճանաչէ զպատանին. ասէ ցնա պատանին. « Տես որ եկայ »։ և էր անդ լսել ըզձայնս երկուսանեաց հրճուանաց, և տեսանել զերկախառնուԹիւնն՝ անկեալ զպարանոցաց միմեանց։ Եւ յետ նախընձայ ողջունիցն՝ ձգէ ՊօրԹոլոյ զպատանին մեկուսի՝ ի շառաչմանց և ի հեռաբերին զննուԹենէ տեսողաց յայլ սենեակ, և ասէ. « Ո՛րչափ ուրախ եմ զքեզ տես-

նալուս, բայց օրհնած ալայ մըն ես. այսչափ անգամ զքեզ հրաւիրեցի, չուզեցիր գալ. հիմայ դժար առենի մը հասար »։ —

« Պէտք է խոստովանիմ որ իմ ուզելովս չէ որ եկայ », ասաց Ռէնցոյ. և կարճ՝ի կարճայ՝ այլ ոչ առանց արտասուաց՝ պատմեցաւ նմա զվշտալի արկածս իւր։ —

« Զնկարծուելոս բան », ասէ Պօրթոլոյ, « խեղճ Ռէնցոյ. բայց որովհետև յոյսդ իմ վրաս ես դրեր, քեզ ձեռքէ չեմ թողուր. ի՛նչ որ հիմա գործաւորի կարօտուս Թիւն չունիմ, ուրիշ ամեն մարդ ալ հալնս իրենները կը պահէ՝ որպէս զի չկորսընցնէ ու գործարանը չդոցէ. բայց աչքս ալս կը սիրէ, հարուստ ալ է։ Ու (մէջերնիս ծնայ), ինծի շատ պարտական է, պարծելու համար չեմ ըսեր. ինքը դրամագլուխը դրած է, ես ալ իմ քիչ մը ձարտարութիւնս. գործաւորներուն գլուխն եմ հոս, գիտես, (մէջերնիս ծնայ,) ամեն բան ընողը ես եմ։ Խեղճ Լուչիա Մոնտէլլան, երէկուան պէս կը յիշեմ, աղէկ աղջիկ է. ժամուն մէջ ամենէն պարկեշտը. ու երբոր անակնկալ առջևէն կանցնէիր, ... աչքիս առջին է ան անակը, անմիջապէս քաղքէն դուրս. ան աղտոտ թզի ծառն ալ պարիսպէն բարձր »։ ... —

« Թող տուր, չխոսինք անոր վրայ »։ —

« Կուզէի ըսել՝ որ անակնկալ առջևէն երբ ալ որ անցնէիր, միշտ կը լսուէր կարժառնչէն (Էնճինէն) ձայնը, որ չէր դադրեր դառնալչէն։ Իսկ ան Ռոտրիկը արդէն իմ առենէս նոյն ճամբուն մէջն էր. ալ հիմայ ինչպէս որ կը տեսնամ, բո-

լորովին գիւտահարեր է, դժոխք կընէ, քանի որ Աստուած սանձը չձգաչէր։... Ինտոր որ կը սէի քեզի, հոս ալ քիչ մը նեղուելուն կուտայ սովը։... Ան չէ, անօթի ես »։ —

« Ճամբան քիչ մը առաջ կերակուրս կերայ »։ —

« Ըսաբկի կողմանէ ինչպէս ես »։ —

Ռէնցոյ ափ՝ի բերան մատուցեալ, փչեաց մեղմիւ ինն ընդ այն. և նա ասէ.

« Հոգ չէ, ես ունիմ, մի մտածեր. քիչ մը առենէն բաները կը փոխուին՝ թէ որ Աստուած ուզէ, պարագը վճարելէն ետքը՝ քեզի ալ կը մնայ »։ —

« Ինչ մը բան ունիմ տուներ, բերել կուտամ »։ —

« Աղէկ է, բայց հիմիկուս հիմայ ես կեցեր եմ. Աստուած տուաւ ինծի, որպէս զի ուրիշներուն բարիք ընեմ. թէ որ ազգականացս ու բարեկամացս չընեմ, որո՞ւն պիտի ընեմ »։

Յայնժամ Ռէնցոյ սիրողաբար պնդեալ ըզձեռն հօրեղբօրորդւոյն, գոչեաց. « Ես ըսի որ Աստուծոյ նախախնամութիւնը կը հոգայ »։ —

Յաւելի Պօրթոլոյ. « Ուրիշին տա տամեն խռովութիւնները եղան. ինծի քիչ մը խեղթուկ կերևան միլանցիք. արդէն հոս ալ չիսթուերեան ձայները ելան. բայց կուզեմ որ տեղնիտեղը պատմես հոն եղածները։ Ո՛հ, շատ բաներ ունինք խօսելու. բայց հոս, մտիկ ըրէ, աւելի հանդարտութեամբ կերթան բաները, քիչ մը աւելի խելքով։ Քաղաքը երկու հազար ըեռ յորեն գնեց վաճառականէ մը՝ որ վէնե-

ակ կը կենայ. տաճկաստանի ցորեն է, բայց ուտելու համար բարակ չննայուելը : Հիմայ նայէ հետևանքը. Վերոնայի ու Պրեշիայի քա-ղաքապետները ճամբան դողեցնին, ասկէց ցո-րեն չանցնելը ըսին, ինչ ընեն պերկամոցիք. Լոբենցոյ Թորքերը վճռեցին, մարդ մը՝ որ գիտէ խոսել. գնաց արտաքսնօք, Տօժին գիմացը եկաւ, ու ըսաւ. Ի՞նչ էլէյ ան փալափապէ-նէրուն խէյէը... անանկ ճառ մը՝ կըսեն, անանկ ճառ մը՝ որ ապէլու արժանի : Մէկէն հրաման գնաց որ Թոզուն ցորեն անցընեն. բայց պէտք է որ զօրք դնեն մէկտեղ, զօրքը ճամբան է : Գեղերուն վրայ ալ մուծուելցաւ : Յօհաննէս Պիաւա Պերկամոյի նուիրակը 'ի վճռեցին, (ան ալ մարդ մը լնտոր որ պէտք է,) հասկը-ցուց ծերակուտին՝ որ գեղերն ալ սովէն կը նե-ղվին. ծերակոյտը չորս հազար գրիւ կորեկ խրկեց, որ ան ալ հաց չնեղուի կուգայ : Եպէն ալ, կուզէ՛ս ըսել. հաց որ չըլլայ, ուրիշ ուտե-լիքները ողջ կենան. Աստուած տուաւ ինծի, լնտոր որ ըսի քեզի : Հիմայ զքեզ ալրոջս տա-նեմ. շատ անգամ քու վրադ խոսած եմ իրեն, տեսնաս որ աղէկ երես կը ցուցընէ քեզի. խիստ աղէկ պերկամոցի մըն է, հնեներեն, սիր-ուը լայն : Իրաւ է որ հիմայ չէր սպասեր քեզի, բայց երբոր պատմեցիւնդ լսե՛ս... Մէկմէն ալ՝ գործաւորներուն յարգը գիտե, վան զի սովը կանցնի, ու առուտուրը կը մնայ : Բայց ամենէն առաջ պէտք է քեզի ձան մը խմացընեմ. գիտես ատ երկրըցիկը ինչպէս կը կանչեն զքեզ ու բոլոր միւսնցիները » : —

« Ի՞նչպէս » : —

« Խենթուկ կը կանչեն » : —

« Շատ աղուոր անուն մը չէ » : —

« Բայց ինչ պիտոր ընես, ով որ Միլանոս սահմանը ծներ է, ու Պերկամոյի երկիրը կը բնակի, պէտք է որ սուրբը համբերութեամբ կընդնէ ատ անուանը, միւսնցիկ մը խենթուկ ըսե-լը՝ ազնուական կամ ատպետ ըսելու պէս է » : —

« Ձնանկ է նէ, ուզողին կուտան ատ անու-նը » :

« Սիրելի, թէ որ խենթուկ ըսուիլը կուշտ մը չնկընէս, հոս չես կրնար կենալ. պէտք է գանակը միշտ ձեռքդ ընդայ. գնենք որ երկուքը իրեքը չորս ըսպաննեցիր, եաևէն եկողը զքեզ կը սպաննէ. ինչ աղէկ Աստուածոյ գիմացը կեր-ես իրեք չորս արիւն հոգւոյդ վրայ » : —

« Բայց միւսնցի մը որ քիչ մը »... ատ մտան 'ի Ճակատ եդեալ որպէս արաբեացն էր 'ի Լիա-ւսին պանդոկի, 'ի վերայ Էած. « այսինքն մէկն որ իր բանը աղէկ գիտնայ » : —

« Նոյն բանն է, հոս ինքն ալ խենթուկ կը-սուի. գիտես իմ ակրս վրաս ինչպէս կը խոսի իր բարեկամացը հետ : Ան խենթուկը Աս-տուած խրկեց իմ գործարանիս համար. Թէ որ ան խենթուկը չսունենայի, նեղը պիտոր կրնայի : Ա տեղն սովորութիւնը ատ է » : —

« Բայց անիսկէք սովորութիւն. տեսնալով որ գիտենք արուեստը, վան զի ոչ բերաւ հոս ատ արուեստը, ոչ առաջ կը տանի, մենք չենք. կարելի բան է որ գետ չիխրատուին » : —

« Ինչուան հիմայ չեն խրատուած. ասկէ ետ

քը կարելի է, հիմակուան տղաքն որ մեծնան. ձար չկայ, մեյմը աս խաղը մտեր է, սովորու. Թիւննին վռնտել չեն ուզեր: Ի՞նչ ալ է եաքը եաքը ըրածնին, միլանցոց քեղի ըրածնուն քովը, ու ինչ ալ որ կուզեն ընել մեր սիրելի քաղքեցիները »: —

« Իրաւ է ըսածդ, երբոր ուրիշ գեղ բան մը չունին »... —

« Հիմայ որ համոզուեցար, ամեն բան կը յաջողի. եկուր, սիրտը երկցիր, քեզ նայիմ»:

Եւ արդարեւ ամենայն ինչ այնպէս յաջողեաց ըստ բանից Պորթոլլայի, զի աւելորդ համարիմք պատմել զայն. և յիրաւի խնամք Աստուծոյ եղեն ի վերայ պատանւոյն. զի որ ինչ կամ և դրամ թողեալ էր ի տան, տեսցուք զինչ կատարեալն օգնեալ նմա:

ԳԼՈՒԽ ԺԸ.

Ինմին իսկ աւուր յերեքտասան նոյեմբերի Էհաս հրեշտակ առ քաղաքապետն ի Լէքքոյ, և էած նամականի ի ղօրապետէն, յորում էր պատուէր՝ զամենայն ձիգն ի գործ արկանել, հետապօտել գտանել զպատանին Լորենցոյ Թրաշմալէնոյ վաճառագործ, փոխուցեալ ի յեւտանէ նորին ղօրապետի, և գտչիւրանել պնա յոյժ կամ գաղտնի ի գիւղ իւր. անձամբն, այլ պատգիս ի տահմանս Լէքոյի. և ի պատգել իրացն, զամենայն ֆոյլ կալցի փաղփապէին՝ յերբեակալ առնել պնա, և կալ և կապ ըստ օրինի, այսինքն ամուր ձեռակապօք, ունել պնա ի բանտի ընդ խիստ պահպանութեամբ, և ապա առանդել որոմ յղէսցի առնուլ պնա: Այլ ի գտանելն պնա և ի չգտանել, մագիցն փաղփապէին ի բնակութիւն նորա, և զամենայն ֆոյլ ի գործ արարեալ՝ որ ինչ գտցէ անդ՝ բերիցէ ի բաց, և առցէ պէղէհութիւն զէղէառաց նորա և ընչից և վճռմախուհից, զգործոց նորա և զբանից, զգե-

ւոց իրաց և պանգիւոփից, պոռնկաց և պիղծից, և փոյթ
ճշդիւ պահանջի վճռոյ:

Ֆազաքապետն յետ առաւօտեան ըստ կարի՝ զի չէր գարձ արարեալ Ներսոյ ՚ի գիւղ իւր, առաքէ կոչէ զՀիւպատա գեղջն, և առաջնորդեալ ՚ի նմանէ՝ գնայ սպասաւորօք նոտարիս և կալանաւորօք ՚ի տուն անդր: Փակ էր տունն, և որ զբանալիսն ունէր՝ չէր անդ, կամ էր ՚ի Թաքսաթ. բռնագատեն զիսկանս, մտանեն և առնեն զկարևորն հետացուսումնիւն, որպէս ՚ի նուաճեալ քաղաքի: Սփռի համբաւ ասպատակին վաղ ՚ի չորկոյս, հասանէ յունին Հօր Փրիստափորի. նա ապշեալ և վշտացեալ, հարցանէ զայս և զայն ոք՝ գիտել զպատճառս կեզակարծից իրացն, այլ գուշակութիւնս ևեթ անկրս լուեալ՝ գրէ իսկոյն առ Հայրն Պռնաւենթուրա, յորմէ յուսայրն ընդունել սպասեւեղկութիւն: Յայնմ վայրի ազգականք և բարեկամք Ներսոյ ընդունին եկակոչ վկայել որ ինչ գիտիցեն ՚ի պատանւոյն: Դիժբաղդութիւն ամօթ և եղեռն էր անդ՝ կրել զանուանն Փրամալեինոյ. գլորգեցաւ գիւղն, և տակաւ եկն ՚ի յայտ՝ զի վախուցեալ էր Ներսոյ յատեանէ ՚ի քաղաքամիջն անդ Մլեանոյ, և լեալ աներևոյթ. լուր ընծանոյ եղեռան իրիք գործելոյ ՚ի նմանէ, այլ որպիսի՞ ինչ՝ անգիտեր. այլք այլազգ ինչ պատմեն: Որչափ մեծ եղեռն ինչ պատմի, այնչափ առաւել լինի անհաւատալի ՚ի գեղջն՝ ուր բարւոյ պատանւոյ ՚ի համբաւ էր Ներսոյ: Առաւելագոյնք համարին և ՚ի լսելիս միաբանից քրթմնջելն, իչխանին Ռո-

սրիկի գոլ հնարս ՚ի կործանուածն պատանւոյն խօսեցեալոյ ընդ օրիորդին՝ իւրաւճն ցանկալւոյ: Փանի՞ ձմարիտ է, զի և զանօրինաց անիրաւառնի յաճախ գատաստան, յանգիտս իրացն սառնագոլեան:

Այլ մեք ապացոյց ՚ի ձեռին կարեմք հաստատել, զի թէպէտ և էր նորա ձեռն յաղէտս Ներսոյն, այլ բերկրեցաւ ՚ի գիտելն զայնոսիկ՝ որպէս թէ իւր էր նիւթեալ, և յաղթանակէր նոքօք առ մտերիմս իւր, մանաւանդ առ Աստիւեայ կոմսի: Սա ըստ առաջագրութեան իւրոյ պարտէր յայնժամ լինել ՚ի Մլեան. այլ ընդ լուր խռովութեան քաղաքին, և չարագործաց չըջելոյ ընդ ճանապարհս, այլազգ ամենեին յերկուցելոյ ՚ի վտանգէ դանածեծ լինելոյ, լաւ համարեալ էր կալ ՚ի գեղջ մինչև ցգադարել խռովութեանն. մանաւանդ զի թշնամանեալ էր նորա զբազումս, և ոչ վայրապար երկնչէր՝ զի ոք յայնքանեաց բազմաց, որք առ ՚ի չկարելոյ առնել ինչ՝ կային հանգարտ, կարէր խրախուսել ըստ իրաց ժամանակին, և ժամ պատեհ համարել խնդրելոյ վրէժ յամենեցունց: Այլ ոչ ընդհարկար ուրեմն երկիւղ նորա. պատուէրն եկեալ ՚ի Մլեանէ ընդդէմ Ներսոյն նշանակ էր գառնալոյ իրաց յառաջին կարգն. և գրեթէ առ օրին եղեն հաւասարք: Աստիւնոս մեկնեցաւ վաղվաղակի, քաջալերելով զինարիկ պինդ կալ ՚ի ձեռնարկ իւր առ ՚ի հասանել ըզձին, և խոստանալով օգնել նմա և ինքն, վերծուցանելով զնա ՚ի վերադարձորէն:

Ընդ մեկնել Աստիւեայ՝ եհաս Կրիզղ ՚ի Մոնցայէ ողջամբ, և պատմեաց տեառն իւրում որ ինչ կարացեալ էր գիտել. զի Լուչիա պատրաստեալ էր ՚ի հուսատանի ուրեք ընդ հովանեաւ սիկինոջ ուրուք. զի կայր անդ ՚ի Թաքտեան որպէս զմի ՚ի հուսանաց, ոչ ելանէր լավ երբեք ՚ի դուրս. զի եկեղեցականաց իսկ հանդիսից առաջի կայր ընդ պատուհանվանդակաւոր. և զի ոչ հաճոյ Թուէր այն բազմաց, որոց լուեալ ինչ ինչ յարկածից նորա, և մեծամեծս զդիմացն, ցանկային տեսանել զնա:

Ընդ այս լուր դիւահարեցաւ Ռոսրիկ, կամ մանաւանդ առաւել ևս չարացաւ զնն՝ որ ընդ կէր ՚ի նմա: Այնքան դէպք նպաստաւորք խորհրդոց իւրոց ևս քան զևս բորբոքէին զբոց բաղձից նորա, զփառասիրութիւնն զկատաղութիւն և զանարդ լոյծ, զորս կրէր խառն ՚ի խառն ՚ի սրտի: Ինչպէս կայր փախստեայ վտարանդի, և մարթ էր դործել ընդդէմ նորա զամենայն, և զհարստացու նորա համարել որպէս ստացուած վտարանդելոյ. և որ կամէրն և կարէր պաշտպան կալնմա, և որոյ ձայն լսելի լինէր և ՚ի հեռուստ աւազորերոյ, էր վեզաբաւորն զայրացեալ՝ որ և նա ընդ հուսկ չկարէր լինել խմիք խափան: Այլ ահա միւս այլ կրձիւն, հաւաստարակիւս, որ դրեթէ անպատան առնէր զայն ամենայն նպաստս: Կուսակիտան՝ ՚ի Մոնցա, առանց իսկ սիկինոջն պաշտպանութեան, էր ոսկր կարծրապինդ ընդ ատամբք Ռոսրիկի. և քանի ՚ի ցնորս մտացն շուրջ դայր զապաստանիւն, չկարէր գտանել

հնարս նուաճելոյ զայն, ոչ զօրութեամբ և ոչ գաւով: Մերձ էր ձեռնթափ լինել ՚ի գործոյն, և դառնալ ՚ի Միլան՝ երկայնեալ իսկ զձանապարհ առ ՚ի չանցանելոյ ընդ Մոնցա, և կալ ՚ի Միլան ընդ բարեկամն ՚ի զբօսանս, առ ՚ի մերժել ՚ի մտաց զնորհուրդն դժպհի՝ զուարթ զբաղմամբք. այլ ընդ բարեկամս փոխանակ զբաղման գտանէր արդեօք վիշտս. զի Աստիւեայ վաղ իսկ բարձրացուցեալ էր զիրդ, և զամենեսեան յակճիռս կացուցեալ ՚ի լուր. մինչդեռ ուստեք յամախէին հարցուածք զդէզ-ջուկ օրիորդէն. հարկ էր պատճառանս հայթայթել ՚ի պատասխանի: Յանկացաւ, հնարս հնարեցաւ, և զինչ ՚ի ձեռս կարաց բերել. ձեռն էարկ ՚ի գործ, ՚ի գործ արդարև անխուսնակ. այլ ոչ միշտ կարէ ոք զիղձս ՚ի չափու ունել. և ընդ զայնս գործ է դժուարին. և որպէս ելանել ՚ի դժուարութենէ աստի. ըզպարտութիւն յանձն առնուլ առաջի չինականի ուրուք և վեզարաւորի. Թող անդր ՚ի բաց: Ի բառնալ իսկ անակնկալ բախիւն զմին ՚ի միջոյ՝ առանց ջանից խօթամանին, և զմիւսն ձարտարի ուրուք բարեկամի, կորոյս խօթամիտն զպատեհ, և վատութեամբ ձեռնթափ եղև ՚ի գործոյն: Էին պատճառք աւելի քան զբաւական՝ մի ևս երևելոյ ՚ի մէջ ազատանոյն, և հանապազ սուր ՚ի ձեռին ունելոյ: Եւ Թող զայսքեր էր գառնալ նմա յամարատան իւր, կալ ՚ի գիշէ անդ, ուր անդագար ընդ յիշատակս գաւիւնս պարտ էր նմա կրել նախատինս վանվրիպելոյ հարուածոյն. ուր յաւելեալ առելու-

Թիւն հատարակաց, և նուազելը համբաւ զօրութեան իւրոյ. ուր՝ ի գեմս սրինկայից ամենեցուն, ևս և՝ ի սպաս մատուցանել նոցա իւր, լիներ նմա ընթեռնուլ երգիծանս՝ ի դեմս նոցա, «Օ՛ի ըլլայ, կըլլեցիր»: Ձանապարհ անիւրաւորեան, ասէ ատ պատմիչն, լայն է՝ այլ ոչ գիւր. են և անդ խոչք մեծամեծք և մացառք, են՝ ի նմա անցք տաժանաւորք՝ թէպէտև ղառ՝ ի վայր:

Որոյհետ ոչ՝ ի բաց կամաւ՝ ելանել անտի, ոչ յեաս գառնալ, և ոչ ունայ առնուլ, այլ էիարեալ յոմն յառաջ խաղալ անօգնական, ՝ի հնարս իմն մատաւերեաց, որով մարթ էր նմա յաղողել: Խորհեցաւ զայնպիսի ոք կարգալ յօգնութիւն, որոյ ձեռք հատանէին յաճախ, ուր այլոց էհատանէր տեսութիւն. զայնպիսի ոք, կամ մանաւանդ գէ, որոյ գժուարութիւն գործոյ էր՝ի մորակ ձեռնարկելոյ յայն: Բայց և խորհուրդս այս ձգէր զնէտ իւր գժպատեհս, և վտանգս այնչափ ծանուցնէ՝ որչափ զի էր մարթ գուշակել զայնոսիկ կանխաւ, և ոչ գիտել՝ զի մտանել միանգամ ընդ առնն այնմիկ՝ ի նաւ՝ յոր վայր զինքն ածէր, առաքնորդ արդարև հզօր, այլ ոչ ինչ նուազ վտանգաւոր:

Մինչդեռ խորհուրդք այսպիսիք ընդ բազում աւուրս ունէին զՈրոմրկ յերկբայս ընդ այո և ընդ ոչ, երկոքին ևս վարանակաք, եհաս գիր յԱտաւելայ՝ զի՝ ի գնացս կայնի գալոյնք և զնէտ փայլականն այնորիկ ձայնեցեալն չանթիք: Լուր եղե՝ զի Հայրն Ղրիստափոր մեկնեալ էր՝ ի Փէսքարէնեան վանից. այս յայնժամ ղուարթիւն բարեպատեհ, և գիր Աստիւեայ՝ որ խրախուսէրն զնա, և՝ ի հակառակէն սպառնայր նմա եպերանս, յանկուցին զնա՝ ի վտանգաւորն կայս, և մղումն յերթին եւս լուր անակընկալ՝ զի գարձ արարեալ էր Ադենէ՝ ի տուն, որով բառնայր մի՝ ի խոչից առ օրիորդին: Այլ զերկաքանչիւրոյ անցիցս պատս է ինձ առ տեղեկութիւն. յերկրորդէն սկսայց:

Այն ինչ պատպարեալ կայնի՝ ի վանս եղկելիքն այնոքիկ մայր և դուստր՝ ի Մանցա, լուր եղև խռովութիւնն մեծ գիպեալ՝ ի Սիլան. և զնէտ մեծի համբաւոյն՝ այլ ևս աղմուկք անհամրոյք մանուանք և պէսպէսք, որ երթային և գայրանային ժամ՝ ի ժամ: Տնտեսուհի վանացն, որոյ էր բնակութիւն ընդ փողոցն և ընդ մենաստան, զգոյցս լսեալս՝ ի նեղբուստ և արտաքուստ պատմէր հիւրոցն երկոցունց. «Երկու հոգի, ըսաս, վեց, ութը, տասը հոգի բռներ բանալ գրեր են, կախեն պիտոր եղեր, կէս մը Փայտոտան փռանն առջևը, կէս մըն ալ փողոցին ծայրը՝ ուր որ է համբարապետին տունը:.. Է՛ հ, աս ալ մոխկ ըրեք. Լեբբոցի մը կամ ան կողմերէն մեկը փախեր է, անունը չեն գիտեր. ուրիշ անցաւորի մը ան ալ կիմանանք, նայինք կը ճանչնանք»:

Բայց այս լուր, և հասանել Ռէնցոյի՝ ի նմին աղետալի աւուր՝ ի Միլան, խռովեցոյց զնոսա, մանաւանդ զԼուչիա. իսկ զինչ ապա՝ ի գառնալ անտեսուհւոյն և ասել. «Բոն ձեր գեղին է եղեր փախչողը, որ կախաւելէն խալըսելու համար կուռեր է. մեռաքսագործ մըն է եղեր, թրամալեհնոյ անունով»: —

Յայն բան Լուչիա, որ բազմեալ կայր անդ ՚ի խծպել ինչ, այլայլեցաւ յոյժ, և հատաւ գոյն երեսաց նորա. որպէս զի երազեկ արգեօք լինէր անտեսուհին, եթէ մերձ առ նմա էր. այլ կայր նա առ գրան ընդ Ագնեսի: Սա ևս խռովեցաւ, այլ ոչ որպէս զդուստրն, զի գիտաց ժոյժ ունել. և առ ՚ի տալ ինչ պատասխանի, ասէ. « Պզտի գեղի մը մէջ՝ ամենքը իրար կը ճանչնան. կը ճանչնանք զինքը, բայց չենք կրնար իմանալ ինչպէս եղած է առ բանը. վասն զի հանդարտ տղայ մըն էր »: Եւ յաւել հարցանել՝ թէ արդեօք և ուր էր փախուցեալ: —

« Ամենքը կըսեն որ փախեր է. բայց ուր փախչիլը չգիտցուիր. դեռ կրնայ ըլլալ որ բռնեն զինքը, կրնայ ըլլալ որ ապահով տեղ փախած ըլլայ. բայց ձեռք կրնալու որ ըլլայ քու ըսած հանդարտ տղադ »...

Ասս ընտ բախտ կոչեցաւ անտեսուհին, և չոգաւ ՚ի բաց. և է ՚ի միտ առնուլ զկիրս մերն և գտաւեր: Առաւել քան զոր ի կինն եղկելի և դուստրն տառապեալ տագնապէին ՚ի վարանս, երկաքանչիւր ՚ի սրտի կամ ընդ միմեանս յեղյեղով զսոսկալի բանս անտեսուհւոյն, գաշն ձայնիւ ըստ կարի, և ՚ի հեռւանս արկածիցն և ՚ի պատճառս չարեացն խորհելով:

Եհաս ապա յաւուր հինգշաբաթի ՚ի կուսաստան անդր այր ոմն ՚ի խնդիր Ագնեսի. և էր ձիաւարձառ Փէսքարէնի, որ գնայր ըստ սովորութեան իւրում ՚ի Մլկան վաճառել ձուկն, և բարեբար վերադարձն Քրիստափոր յանձնեալ էր նմա, զի յանցանէլն ընդ Մոնցա՝ երթեալ ողջունեսցէ ՚ի գիմաց իւրոց զԱգնէս և զդուստր նորա, և պատմեսցէ նոցա զաղէտալի արկածս Ռէնցոյի, յորդորելով զնոսա ՚ի համբերութիւն և յայսպիսնութիւն առ աստուած. և ասել՝ զի և ինքն հէք վերադարձն ոչ էր մոռացեալ զնոսա, խնդրէր պարապ օգնելոյ նոցա, և ոչ վերջանայր ՚ի ծանուցանելոյ նոցա յամենայն հոթենակի նովին պատեհաւ կամ այլազգ զրոյս իւր: Իսկ զՌէնցոյէ չկարաց բանբերն ասել ինչ նոր և սոյգ, բայց զի այց և խնդիր լեալ էր զնմանէ ՚ի տան, այլ ՚ի զուր, զի հաւատալ էր գնալ նորա կալ յակաստանի ՚ի պերպամական սահմանս: Ոչ է հարկ ասել՝ որպիսի սպեղանի եղև վիրաց օրիորդին այս առուգրութիւն. արտասուք նորա այնուհետեւ քաղցրագոյնք և գիւրահոս լինէին. սիրտքեր ՚ի բացատրել զլիչոս իւր ընդ մօրն, և ընդ աղօթս իւր խառնել միշտ գոհութիւն զՏեառնէ:

Կոչէր զնա Ձերթրուտ ասէպ ՚ի խօսարան իւր առանձինն, և խօսէր ընդ նմա երբեմն ընդ երկար, հաձեալ ընդ անկեղծութիւն և ընդ հեզութիւն տառապեալ օրիորդին, և ընդ չընորհակալս նորա և ընդ օրհնութիւնս անգադար: Պատմէր ևս նմա մանրամասն զանցս իւր ըստ անստգիտա մասին, որ ինչ վիչտս կրեալ էր և բռնութիւն առ ՚ի մոռանալ ՚ի մեղսասան անդր ՚ի վշտակրութիւն. որով առաջինքն կատարեալ զարմանք օրիորդին փոխէին տակաւ ՚ի կարեկցութիւն: Գոհանէր ՚ի պատմութեան նորա պատճառս առաւել քան զբաւական առ ՚ի մեկնել զօտարացուցիչ գը-

նայս ինչ բարեբարին իւրոյ, օգնեալ մանա-
ւանդ յազդաբարուվճռեն մօրն զնեելոց ազ-
նուականաց ոմանց: Եւ թէպէտև յօժարէր Լու-
չիա փոխարինել մեռեալն՝ որով վարէր
ընդ իւր ձերբերուա, այլ և ոչ ընդ միում իւր
անցանէր յայտնել նմա զարդի վիճաս իւր, կամ
թէ ո՞ մեռաքսագործն այն էր փախստեայ, զի
մի հռչակեսցի լուրն վճասալն և գայթակղելի:
Դարձեալ և ամենայն հնարիւք խոյս տայր ի
տալոյ պատասխանի հետաքրքիր հարցուածոց
նորա զանցելոց անցելոյ յառաջ քան զնոստաուին
իւր ի հարսնութիւն. բայց աստ ոչ պատճառք
խոհեմութեան խափանէին զնա, այլ զի դը-
ժուարին յոյժ էր հիքին անմեղ պատմու-
թիւնն այն առաւել քան զամենայն պատմու-
թիւնս զորս լուեալ էր ի նմանէ, և կասկա-
ծէր լսել: Զի ի սոսա էին բանութիւնք, որո-
գայթք, և տառապանք, տաւելիք արգարև և
վշտալիք, բայց դիւրապատուհք, իսկ հիւրուն
էր ինչ՝ որ թուէր նմա անասելի առանց սանա-
նելոյ պատկառանաց. ասեմ իսկ զտարփանս:

Էր իսկ երբեմն՝ զի ձերբերուա գժկամակեր
լիմն ընդ լուսութիւն նորա. այլ և յայնմ նչմա-
րեր զսիրելութիւն զպատկառանս զչնորհակա-
լիս, և և զվստահութիւն: Էր զի և ամթիխա-
ծութիւնն այն քաղցր զգուշաւոր և երկնչոտ
գժպհի թուէր նմա, մանաւանդ ըստ մասին
ինչ. այլ զամենայն անտես առնէր ախորժն
այն՝ զոր կրէր միշտ ի աեսիլ օրիորդին բարե-
բարելոյ հիւրմէ: Եւ հիրաւի, զի ոչ միայն
տուեալ նմա պատասպարան, այլ և ստէպ խօ-

սակցութեամբ և ընտանեբար դպուտանեօք սփո-
փեր զնա: Միւս այլ սիրուման էր Լուչիայի
աշխատել անդադար. և խնդրեր միշտ՝ զի տա-
ցի ինչ իւր գործ. և ի խօսարան անդր ածէր
ընդ իւր ձեռագործս, առ ի չխալել անգործ:
Բայց խորհուրդք վշտալիք որպէս ամենայն ու-
րեք սպրդին ի ներքս. ի պարապուէն խակ ի
կար՝ գայր ստէպ ի միտս նորա կարժառ իւր,
և զհետ կարժառին քանի այլ ևս խորհուրդք:

Ի միտուման հինդշաբաթի դարձաւ ձիու-
վաճառն, կամ այլ ոք բանբեր, բերեալ ողջոյն
ի Հօրէն Քրիստափորէ, հաստատել զայնո-
ղութիւն փախստեանն Ռենցոյի: Իսկ զարհա-
ծեց նորա չածէր ինչ զրոյց հաւաստի, զի որ-
պէս ասացաք ի վերոյ, Հայրն Քրիստափոր
յոտնայր առնուալ ինչ լուր ի կրօնակիցն՝ ո-
րոտմ յանձն արարեալ էր գնիենցոյ, այլ ըն-
կալեալ պատասխանի, զի չէր կրօնակիցն տե-
սեալ զնա, և ոչ զդիրն ընկալեալ, և զի էր տր-
գարև եկեալ օտար ոք ի խնդիր իւր, այլ ոչ
գտեալ զնկեր ի վանս՝ երթեալ էր ի բաց, և
ոչ ևս երևեալ:

Յերերորդումն հինդշաբաթի ոչ երևեցաւ ոք.
և ոչ միայն զնկեցան եղկելիքն ի քաջալերու-
թիւնէ անտի՝ որոտմ յոտնայինն և անձկայինն,
այլև անկան ի բիւր կասկածանս գառինս, որ-
պէս պատահէ վշտացելոց և նեղելոց ի դոյզն
խնդիք: Վազ խակ Ագնես խորհեր գառնալ մի-
անգամ ի տուն. և յեղակարծ յայտնութիւն
խոստացելոյ պատգամաւորին՝ հաստատեաց
զնա ի խորհուրդ իւր: Ծանր էր Լուչիայի բա-

Ժանեէ՝ ի մօրէն, այլ յաղթեաց անձուկ գիտե-
ցոյ ինչ, և ապահովութիւն իբր ի սրբազան ան-
մատոյց ապաստանին: Խորհուրդ կալան ի միա-
սին՝ մեկնել մօրն ի վաղիւ անդր, սպասել ձիկնա-
վաճառին յուղղոյ ընդ որ պարտէր նմա անցա-
նել ի գարձին ի Միլանէ, և խնդրել տեղի ի
սայլին, գնալ ընդ նմա ի լերինս բնակութեան
իբրեանց: Եգիտ զնա անգ և եհարց՝ զի Հօրն
Քրիստափորի չէր ինչ յանձնեալ նմա ուսն
իբրեանց. Նորա յերկին յայգուհէ ցերեկ որ-
սոց պարապեալ, յառաւօտուն ուղղոյ լեալ
էր՝ առանց տեսանելոյ զվերարարն: Խընդ-
բեաց ի նմանէ Ագնէս զընտրին, և ընկալաւ՝
առանց ինչ աղաչանաց. և տուեալ ողջոյն հրա-
ժարական ձերթերուսայ և գոսեր իւրում ար-
տասուօք, և խոստացեալ յղել զոյգ վաղվա-
զակի, մեկնեցաւ: Յաջողութեամբ արտրին ըզ
ճանապարհն, և զմսան ինչ գիշերոյն հանգու-
ցեալ ըստ սովորութեան ի պանդոկի մի զճա-
նապարհայն, ուղղոյ եղեն անդրէն, և վաղ-
քաջ ընդ առաւօտն հասին ի փէսքարէն: Էջ
Ագնէս ի հրապարակ մեհեստանին, և բաղում
չնորհակալեօք հրաժարեաց յառաջնորդէն:
Եւ քանզի առաջի վանացն կայր, կամեցաւ նախ
քան զգնալն ի տուն՝ այց առնել Հօրն Քրիս-
տափորի բարեբարին իւրում. եհար զղանգակ
դրանն, եկն եբայ Եղբայրն Կալաինոս ինդրակ
ընկուզաց. և իբրև եաես զԱգնէս, ասէ զար-
մացմամբ.

« Ո՞ր հովը զքեզ հոս բերաւ, խաթուն »: —

« Հայր Քրիստափորը տեսնալու եկայ »: —

« Անիկայ հոս չէ »: —

« Ափսո՛ս. շատ կուշանայ դառնալու »: —

« Ի՞նչ գիտնամ... բայց... » ասէ Եղբայրն՝
զոս ի վեր առեալ, ամիսփեալ զգլուխն
գերծ ի վերայն: —

Ագնէս ասէ. « Ո՞ւր գնաց »: —

« Ի Ռիմինի »: —

« Ի Ռիմինի »: —

« Հրամմեր ես, ի Ռիմինի »: —

« Ո՞ւր է ատ քաղաքը »: —

« Հեռո՛ւ, հեռո՛ւ, հեռո՛ւ », ասէ Եղբայրն,
ձեռամբ կարկառելով կարատեալ զոս ի ցոյց
հեռաւորութեան մեծի: —

« Վա՛յ ինծի. ինչո՞ւ ատանկ յանկարծ գը-
նաց »: —

« Վատն զի մեծաւորը ատանկ հրամմեց »: —

« Բայց ինչո՞ւ հոսկէց չարժեցին զինքն որ
այսչափ աղէկութիւն կըներ հոս, տէր ողոր-
մեա »: —

« Թէ որ մեծաւորները իրենց կարգադրու-
թեանցը պատճառները զուրցելու ըլլային,
ո՞ր կը մնար հնազանդութիւն, խաթուն »: —

« Իրաւունք ունիս, բայց կործանումէ ես ատ
ինծի »: —

« Գիտեմ ինչպէս եղած է. Ռիմինի աղէկ
քարող տուող մը պէտք եղեր է, (ամէն տեղ
քարոզիչներ ունինք. բայց երբեմն այն բանին
համար ծնած մարդ պէտք կըլլայ), անտեղի մե-
ծաւորը հոս տեղինին գրած է՝ ատանկ ատանկ քա-
րոզիչ մը ունիմ. ան ալ ըսած կըլլայ որ Հայր
Քրիստափորը պէտք է հոտտեղին. անտարա-
կոյս ատանկ եղած է »: —

« Մեր խեղճութեանը համար : Ե՛րբ ձամբայ էլաս » : —

« Երեկ չէ մեկալն օր » : —

« Տես. Թէ որ սրտէս անցածին մանկ ըրած ու քանի մը օր առաջ եկած ըլլայի, ինչ աղեկ պիտոր ըլլար : Չի գիտցուիր երբ գառնալը, գանէ մակաբերելով » : —

« Ո՛հ խաթուն, ինչ ըսեմ, մեծաւորը միայն գիտէ, Թէ որ ան ալ կրնայ նէ գիտնալ. երբոր մեր քարոզիչներէն մեկը կը թուչի, չիգիտցուիր ո՛ր ծառին վրայ կը թառի. հոսկէց կը կանչեն, հոնկէց կը կանչեն զինքը. աչխարհս չորս կողմն ալ վանքեր ունինք : Գիտէք որ Հայր Բրխատափորը Ռիմինի իր մեծպաքի քարոզները մեծ անուն հանէ. վասն զի միշտ առանց պատրաստուելու չիտար քարոզները, ինչպես հոս գեղացիներուն ու ձիւնորներուն կուտար. մեծ քաղքներուն ամպիոնէն ուրու համար գրած աղուոր քարոզներ ունի, ընտրած ծաղկներ : Զայնը կը տարածուի ան կողմերը աս մեծ քարոզչին, ու կուզեն՝ ինչ գիտնամ ուրկէց. ան առեն պէտք կըլլայ հոն խրկել զինքը, վասն զի մենք ինչպես որ բոլոր աչխարհս ողորմութեամբը կապրինք, ասանկ ալ պարտկան ենք բոլոր աչխարհս ծառայելու » : —

Յայնժամ գոչեաց Ագնէս արտասուախառն. « Ո՛հ աեր իմ, ինչ պիտոր ընեմ ես առանց ան մարդուն. անիկայ էր մեզի հայրութիւն ընողը. մեզի կործանուեմ եղաս » : —

« Մանկ ըրէ, խաթուն. Հայր Բրխատափորը իրաւցընէ մեծ մարդ էր բայց ուրիշներ ալ

ունինք անոր պէս, գիտես. եղբայրասէր, խելացի, ու գիտեն ինչպէս պէտք է վարուիլ՝ Թէ մեծերուն և Թէ աղքատներուն հետ : Նայէ, Հայր Ալթանաթը կուզես, Հայր Հերոնիմոսը կուզես, Հայր Զաքարիան կուզես. գիտես որ Հայր Զաքարիան ինչ մարդ է. մի նայիր, ինչպէս ապէտներըը կընեն, վարուժ ըլլալը, Հայնը ամէն չըլլալը, պզտի մրրուք ունենալը. չեմ ըսեր որ երևելի քարոզիչ մըն է, վասն զի ամեն մարդ իր ձիրքը ունի Աստուծմէ. բայց խորհուրդ տալու համար՝ գիտես ինչ մարդ է » : —

Յայնժամ Ագնէս ընդհակառակութեամբ լիու և անհամբերութեամբ, որ զարմանաս ՚ի սրտի յայտնիսի առաջարկութիւնս՝ չտրս է տեսանել զբարեսիրութիւն քան զբարեվայելչութիւն, գոչեաց. « Հոգիդ սիրես, ինչ հոգս է որ աս կամ ան անձը ըլլայ. բայց ան խեղճ մարդը՝ որ հոս չէ. մեր ամեն բանը գիտէր, ու ամեն բան պատրաստեր էր մեզի օգնելու » : —

« Ուրեմն ուրիշ ձար չկայ, պէտք է համբերել » : —

« Ա՛ա գիտեմ. Թողութիւն ըրէ տուած՝ նեղութեանս » : —

« Ի՞նչ նեղութիւն տուիր ինծի, խաթուն, քու վրադ է ցաւս. Թէ որ եաքը եաքը մեր կրօնաւորներէն մեկը ուզելու որ ըլլաս, վանքը հոս է, չիփախչիր : Ինչ առեն կը տեսնուինք ձեզմէն համար, մտրալու որ եղեմ » : —

Յայնժամ Ագնէս « Մնաս բարով » ասացեալ, մեկնեցաւ գնալ՚ի գիւղ իւր, որոտալ,

վարանեալ, չուարեալ, որպէս կոյր ոք՝ որոյ
կորուսեալ էին զգուշ իւր:

Այլ մեք փոքր ինչ աւելի քան զեղբայրն
Կալոնիոս իրավեկ լեալ, կարեմք սուրգպոյնս
ասել զերայն պատճառս: Ատոմլիոս՝ ի հաս-
նէին՝ ի Միլան՝ չոգաւ, որպէս խոստացեալն էր
առ Ռոտրիկ, այլ հօրեղբօր իւրեանց՝ որ էր
մի՝ ի խորհրդականաց գաղանի Ժողովին: Ժո-
ղովս այս կազմէր յերեքսասանից՝ սուր և
պատմուճան կրելեաց, զորոց լսէր քաղաքա-
պետն զկարծիս, և՝ ի մեռանել կամ՝ ի փոխել
քաղաքապետին՝ Ժողովն առ Ժամն վարէր զին-
խանութիւն: Հօրեղբայր նոցա կոմս պատմու-
ճանաւոր, մի յերկցադունից Ժողովոյն, որոյ
թէպէտ սակաւ էր զօրութիւն՝ ի Ժողովն անդ,
այլ՝ ի վարել զգայն և արդոյ առաջի այլոց ըն-
ծայեցուցանել, էր անզուգական: Խօսք նորա
երկդիմի, լռութիւն նշանաւոր, դագարել՝ ի
խօսից առանց վախճան առնելոյ բանից, ամ-
փոփումն աչաց իբր ասել չէմ կարող ցոյցել ըն-
դէից, ողորկել առանց խոստանալոյ ինչ, սպառ-
նալ՝ ի ձև սաստի. ամենայն՝ ի մի կէտ ուղղեալ,
ամենայն առաւել կամ նուազ օգտակար դի-
տաւորութեան իւրում: Որպէս զի ասել և
նորա երբեմն, ապ բանը ընելս կարողութիւն լսնիմ.
յեղանակէ ասէին լինելը չհատատալն, յաւե-
լեալ զվարկ զօրութեան նորա, և նուաւ զգօ-
րութիւն, որպէս տուփք, զորս է տակաւին
տեսանել՝ ի գեղանոցս ուրեք անխնամալի մա-
կագրօք: որ ունայնք՝ ի ներքոյ, զօրեն՝ ի յարգ
գեղարանին: Յարգ կոմսին հօրեղբօր, որ՝ ի

բազմաց հետէ յամրաքայլ յառաջ խաղայր,
յանկարծ յայնժամ հսկայաձև արարեալ
ոտնփոխս, տեսողը լիմն դիպուածով դնալոյ
նորա՝ ի Մատրիտ՝ պատգամաւոր յարքունեաս.
ուր որպէսի ընդունելութիւն լեալ էր նմա,
պարտ էր՝ ի նմանէ լսել: Թող զամենայն, կոմսն
Ոլիւարի մեծարեալ էր զնա մեծաւ հաճու-
թեամբ, և ընկալեալ զնա՝ ի մտերմութիւն
իւր, մինչև հարցանել զնա՝ ի լուր բազմու-
թեան արքունեաց՝ « Ախորժեցաք Մատրի-
տէն »: և այլ անգամ առանձինն առ պատու-
հանիւ ասել՝ « Միլանու մայր եկեղեցին, տէ-
րութեան ամէն եկեղեցիներուն առջինն է »:

Ատոմլիոս յետ պատուասիրելոյ զհօրեղ-
բայր իւր կոմս, և մատուցանելոյ նմա զվեճա-
րանս հօրեղբօրորգւոյ իւրոյ, լըմնութեամբ՝
զոր դիտէր ըստ ժամանակին բերել յանձին,
ասէ. « Կարծեմ օր պարտքս կը կատարեմ, ա-
ռանց Ռոտրիկին մտերմութեանն ալ գպչելու,
խմայընելով հրամանքիդ իր մէկ բանը, որուն
ձեռք դնելու որ չըլլաս՝ կրնայ ծանրանալ ու
դէշ հետևանքներ ունենալ »: —

« Աչառակոյս իր սովորականներէն մէկը
պիտոր ըլլայ »: —

« Պէտք է իրաւը ըսեմ, որ պատճառը իրմէն
է. բայց հրամանքիդ ուրիշը չիկայ, որ ձար մը
կարենայ ընել »: —

« Ըսէ նայինք » —

« Այն կողմերը վէղարաւոր մը կայ, Ռոտրի-
կին դէմ. բանը հոն հասած է որ »... —

« Ինչի անգամ ըսի, անոր ալ, քեզի ալ, որ

սա վեղարաւորներուն հետ բան մի՛ ունենաք, հերիք կը յոդնեցընեն որուն որ պարտքն է... որուն որ կ'ընայ »... Եւ սա Թէլագրէ. « Բայց գոն որ կրնաս իրարմէ հեռացընել զիրենք »... —

« Այս բանիս մէջ՝ պէտք է ըսեմ հրամանքիդ, սիրելի հօրեղբայր, որ Ռոտրիկը կը հեռացընէր զինքը՝ թէ որ կարենար. վեղարաւորն է՝ որ անոր դէմ է, ու ամեն կերպով զինքը կը գրգռէ » : —

« Կը զարմանամ որ ինչ ընդհիմութիւն ու նի սա վեղարաւորը եղբօրորդւոյս հետ » : —

« Նախ որ տաք գլուխ մարդ մըն է, ամենքը գիտեն սասնկ ըլլալը, գիտեն ալ որ ասպետ ներուն դէմ է : Պաշտպան, կառավար, ու չեմ գիտեր ինչն է գեղացի աղջիկ մը, որուն վրայ դուժ մը ունի, դուժ մը... չեմ ըսեր ախտաւոր, բայց դուժ մը նախանձաւոր, կասկածաւոր, դիւրաբաւ գրգռուող » :

« Հասկըցայ », ասէ հօրեղբայրն. և՝ ի վերայ քնածին բրտութեան գիմացն, զոր ծածկէր խաւ՝ ի խաւ քօղ քաղաքագիտութեան, փայլակնացեալ նշոյլ ինն էարամտութեան՝ ընծայէր տեսիլ նորանչան :

Եւ յառաջ ածել Ասոլէայ զբանն, ասէ. « Մ'ինքը գրեր է վեղարաւորը որ Ռոտրիկը չեմ գիտեր ինչ մտքեր ունենայ ան աղջիկը վրայ » : —

« Մ'ինքը գրեր է, միտքը գրեր է հա. ես ալ կը ճանչնամ Ռոտրիկը, քեզմէ վեր փաստաբան մը պէտք է, անիկայ սա բաներուն մէջ պաշտպանելու համար » : —

« Սիրելի հօրեղբայրս, չեմ ուրանար, կըրնայ ըլլալ որ Ռոտրիկ կատակ մը ըրած ըլլայ սա աղջիկը՝ Ճամբան հանդիպած առենը. կարճ պատանի մըն է, վերջապէս կրօնաւոր չէ. բայց պատռնք ոչինչ բաներ են, հրամանքիդ արդէլք չեն կրնար ըլլալ. մտածելու բան ան է որ վեղարաւորը սկսեր է Ռոտրիկին վրայ խօսել՝ սրիկայի մը տեղ դնելով զինքը, ու բոլոր դէղը անոր դէմ դրգռել » : —

« Իսկ ուրիշ վեղարաւորները » : —

« Անոնք չեն խառնուիր, գիտնալով որ անիկայ տաք գլուխին մէկն է. անոնք Ռոտրիկը կը յարգեն, բայց ան վեղարաւորը մեծ անուն ունի գեղացոց առջին, վասն զի սուրբ կը ճանայ, ու »... —

« Թերևս չիգիտեր որ Ռոտրիկը իմ եղբօրորդիս է » : —

« Չիգիտեր ! մանաւանդ գիտնալուն համար է որ աւելի կատղած է » : —

« Ի՞նչ, ինչ » : —

« Ինքը ամենուն կըսէ որ պիտի հասկըցընէ Ռոտրիկին՝ հրամանքիդ պէս զօրաւոր պաշտպան ունենալը. ու ցուցընէ պիտի՝ որ ինքը վեճերուն ու քաղաքագիտներուն վրայ կը ծիծաղի, ու սուրբ Ֆրանչիսկոսին չուանովը կը կապէ սուրբերը, ու »... —

« Նայէ սըւոր յանդգնութեանը. անունը ինչ է » : —

« Եղբայր Բրնատափոր » : —

Յայնժամ հօրեղբայրն՝ յարկեղէ գրասեղանին հանեալ զտետրակ յիշատակի՝ գրեաց ՝ի

նմա չէրլով փչէրլով զանուն եղկելոյն. իսկ Աստուածկլոս յաւէլ. « Մինչ աս բնութեանը տէրը եղած է ան մարդը, իր վարքը ամենքը դիտեն. երկու ստակ ունենալուն համար՝ ան կողմի աս պետերէն վեր ըլլալ կուզէր. ու չկրնալով անոնց յաղթել, կաւատաւութենէն մկը սպանեց, ու կախաղանին խալըսելու համար՝ կրօնաւոր եղաւ » : —

« Աղէկ է, շատ աղէկ. տեսնանք, տեսնանք », ասէր հօրեղբայրն, և ոչ դադարէր 'ի չէրլոյ և 'ի փչէրլոյ : Եւ Աստուածկլոս յառաջ վարէր.

« Իսկ հիմայ խնամ կատղեր է, իր մկ մեծ ջանքը պարապ ելլելուն համար. ասկէց կրնաս իմանալ անոր ինչ մարդ ըլլալը : Կուզէր ան աղջիկը կարդալ, կամ աշխարհս փորձանքներէն խալըսելու համար, կը հասկընաս, կամ ուրիշ պատճառի համար. դատ ալ էր փեսայացու մը՝ իր ձեռքին տակը մեծցած, որուն անունը Թերեւս, մանաւանդ Թէ առանց Ռէթէոլի, հրամանքդ ալ պէտք է ճանչնաս, վասն զի անտարակոյս դաղտնի ժողովքին մէջ խօսք եղած կըլլայ աս արժանաւոր վեսայացուին վրայ » : —

« Ո՞վ է որ » : —

« Մեսաքսագործ մը, Լորենցոյ Թրամալեհինոյ անունով, ան որ » ... —

« Լորենցոյ Թրամալեհինոյ ! շատ աղէկ, ինչ կարիք վերաբաւոր : Տարակոյս չկայ որ ... վասն զի ... Թուղթ մը ունէր մկկուն ... ախսոս որ ... բայց հոգ չէ, աղէկ է : Ինչու Ռոտրիկը աս բաներուս վրայ ամենևին խօսք մը չընէր ինծի. ինչու կը Թողու որ բաները այսչափ առաջ երթան, ու չխփէմ անոր՝ որ կրնայ ուզէ գինքը կառավարել ու պաշտպանել » : —

« Ասոր վրայ ալ ըսեմ. մկ դիէն կը քաշուէր աս նեղութիւնն ալ տալ հրամանքիդ, դիտնալով որ արջափ ղբաղմունք ունիս, ու արջափ մոմոուք : Ասկէց 'ի զատ, որպէս զի ամեն բան ըսեմ հրամանքիդ, արջափ որ կրցայ իմանալ՝ անանկ զայրացած է, անանկ գլուխը դարձած, անանկ ապուշ մնացած վերաբաւորին նախանձութենէն, որ աւելի կուզէ ինքիրեն կարճ կերպով անոր պատիժը տալ, քան Թէ կարգաւորութեամբ կերպով իր հօրեղբօրը խոհեմութենէն ու իշխանութենէն ընդունել : Ես չանացի կրակը մարել. բայց տեսնելով որ բանը դէպի կերթայ, ինծի պարտք սեպեցի ամեն բան պատմելու հրամանքիդ, որ գլուխ ու հաստատութեան ես մեր տանը » ... —

« Աղէկ ըրած կըլլայիր, Թէ որ քիչ մը առաջ չարժէիր » : —

« Իրաւ է, բայց կը յուսայի որ կրակը ինքնիրեն մարի. վերաբաւորին կամ խելքը գլուխը գալով, կամ ուրիշ վանք երթալով, ինչպէս կրօնաւորներուն սովորութիւնն է վանքէ վանք երթալ, ան առեն ամեն բան կը դադրէր. բայց » ... —

« Ուրեմն հիմայ ինծի կը ձեայ՝ բանը կարգի դնել » : —

« Ես ալ անանկ մտածեցի. ըսի ինքիրենս որ հօրեղբայրս իր խոհեմութեամբը ու իշխանութեամբը կրնայ աս դայթակղութեան առջևը առնել, Ռոտրիկին պատիւն ալ պահելով որ իր

պատիւն ալ է: Կըսէի մտքէս. սա վէրպատառորը միշտ սուրբ Գրանչիսկոսին չուանովը կը խօսի. բայց ան չուանը աղէկ գործածելուս համար հարկաւոր չէ որ մէջքը կապէ: Հրամանքիդ խոհեմութեան շատ մը հնարքները ես չեմ կրնար մտածել. միայն գիտեմ որ սա վէրպատառորնեբուն մեծաւորը արդար անձ մըն է, շատ ալ կը յարգէ Հրամանքդ, թէ որ պատշաճ կը սեպէ սա գիպուածիս համար՝ օգ փոխել տալ ան կրօնաւորին, մեծաւորը երկու բառով»...—

« Ասէ Հօրեղբայրն կոմս փոքը մի խօսիւ. « Աչքդ տուր կերպը, որուն որ կ'ընայ՝ ան մտածէ »: —

Սա որ Ատոկլիոս, տատանեցաւ սակաւիկ մի զգլուխս իւր, և ժպտելով կարեկցաբար ընդ անձին, ասէ. « Ես Հրամանքիդ խորհուրդ տալու մարդ չեմ, այլ մեր աղքատասիրին անուանը սէրն է՝ որ կ'ընծի խօսել կուտայ »: Եւ վարանական ելմն ձևով յաւել. « Վախնամ, ուրիշ սխալմունք մըն ալ ըրի. այս կնքն Ռոտրիկին անունը հրամանքիդ առջին կոտրեցի. սիրտս հանգիստ չըլլար, թէ որ պատճառ եղայ կորնչել տալու Հրամանքիդ՝ որ Ռոտրիկը չունենայ վրադ ան վստահութիւնն ու հպատակութիւնը, որն որ պարտական է ունենալոյ: Հապա, սիրելի Հօրեղբայրս, որ սա անկրաւորութիւնը թէ որ ըրի, նրաս որ »... —

« Ի՛նչ անկրաւորութիւն, երկուքնուդ մէջ ի՛նչ անկրաւորութիւն. բանդ գնա, դուք միշտ կրարու բարեկամ էք, քանի որ մեկեզնուդ խեղքը գլուխը չկիպայ: Սանձի չէք գար, միշտ

բան մը կը հանէք, ու ինծի պէտք կըլլայ ձարը ընել. հիմայ չըսուելու խօսք մը ըսել կուտաս ինծի. դուք երկուքդ աւելի մտմտուք կուտաք ինծի, քան թէ բոլոր սէրուրեան անիծած գործերը »: Եւ օրպէս փչեաց ասա, դիւրին է ածել զմտաւ:

Ատոկլիոս յաւել և այլ չքմեղանաս, խոստմունս, մեծարանաց բանս. և հրաժարեալ՝ էլ ի բաց, յեղյեղելով՝ « խելքընիս գլուխնիս ժողվենք », որ էր ձև բանի կոմսին ի յուղարկեղբօրորդւոյն:

ՎԱԽՃԱՆ ԱՒԱԶԱՆ ՀԱՏՈՐՈՑՆ



2747

2013